119

9(w)
Ч-62

1900

9(ռ)
Վ-62
Ափ
50
Printed in Turkey

„ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ".

ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

ՄԱՍՆ III.

ՆՈՐ ԴԱՐ

Կազմեց Պ. ՎԻՆՈԳՐԱԴՈՎ,
ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ.

Թարգմանեց եւ Հայոց պատմութեան յաւելուածով ճոխացրեց
Ն. ՔԱՐԱՄԵԱՆ.

Ռուսերէն բնագիրը լուսաւորութեան նախարարութեան գիտնական մասնաժողովն յանձնարարել է իբրեւ դասագիրք գիմնազիոնների համար:

ԲԱԳՈՒ.
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ".
1900.

38663-ար.

Дозволено цензурою. Тифлисъ, 29-го апрѣля 1899 г.

911
39

2012

21939-60

Printed in Turkey

2004

Յ Ա Ն Կ

Ներածութիւն։

Մասն առաջին.—Բարենորոգութիւն.[1])

Երես:

Գլ. ա. Բարենորոգութիւնը Գերմանիայում 1
Գլ. բ. Բարենորոգութիւնն արեւմտեան և հիւսիսային Եւրոպայում 32
Գլ. գ. Կաթոլիկական յետաշրջութիւն 42
Գլ. դ. Արուեստ, գրականութիւն և գիտութիւն 85
Յաւելուած. Հայոց վիճակը ԺԵ. և ԺԶ. դարերում 93

Մասն երկրորդ.—Հին վիճակ.

Գլ. ա. Անգլիա 96
Գլ. բ. Ֆրանսիայի գերակշռումն 119
Գլ. գ. Պրուսիայի բարձրանալը 138
Գլ. դ. Խորհրդարանական սուզիշխանութիւնն Անգլիայում և Ամերիկայի ազատութիւնը 151
Գլ. ե. Հին վիճակի հասարակութիւնը 166
Գլ. զ. Գրականութիւն և նրա ազդեցութիւնը 179

Մասն երրորդ.—Յեղափոխութիւն.

Գլ. ա. Միապետութեան անկումն Ֆրանսիայում 213
Գլ. բ. Ֆրանսիական հասարակապետութիւն 239
Գլ. գ. Նապոլէոն 258

Մասն չորրորդ.—Տասնեւիններորդ դար.

Գլ. ա. Յետաշրջումն և ազատականութիւն 287
Գլ. բ. Ազգային բարեփոխութիւնների դարաշրջան 339
Յաւելուած. Հայոց մահմետական լծից ազատման փորձերի շրջանը 376

---

[1]) Реформація—Réformation—Նորոգումն, բարենորոգումն, վերանորոգութիւն, նորակրօնութիւն, կոչւում է Լութերի ձեռնարկած կրօնական բարենորոգումն։ Ծ. Թ.

Printed in Turkey

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ։

Շուտով կը լրանայ մի կիսադարեայ շրջան այն օրուանից, երբ մեր հոգեւոր միջնակարգ դպրոցներում աւանդւում է ընդհանուր պատմութիւնը, բայց մենք չունինք դեռ եւս մի ձեռնարկ, որ տանք աշակերտներին իբրեւ ուղեցոյց։—Անձամբ փորձած լինելով թելադրութեամբ տաժանելի դասաւանդութիւնն եւ տեսած նրա բազմադիմի թերութիւնները, սիրայօժար հրճուանօք փութացի կատարել Նորին Վեհափառութեան, ամենայն հայոց Հայրիկի, հրամանը մի դասագիրք պատրաստելու այդ գիտութեան համար։ Թէպէտ եւ դժուարին չէր եւրոպական աղբիւրներից մի նոր ձեռնարկ յօրինել հայ պատանիների համար կամ նոյն իսկ թարգմանել, բայց շատ բանաւոր պատճառներ ստիպեցին ուսուցչապէս Վինոգրադովի դասագիրքն ընտրել թարգմանութեան համար, նամանաւանդ որ մեր թէ՛ խաղաղական եւ թէ՛ հոգեւոր դպրոցներում այժմ այս ընտիր դասագիրքն է ամենից գործածականը։ Աւելորդ է անշուշտ այս տեղ շեշտել, որ դասագիրքը լոկ անկենդան ուղեցոյց է միայն, որ կենդանութիւն պիտի առնի ուսուցչի բերանացի խօսք ու ազդեցիկ դասաւանդութեամբ։ Դասագրքի ծաւալն մի այսպիսի հարուստ նիւթի համար շատ փոքր է, որ սակայն ուսուցիչը պիտի ընդլայն է համաձայն սանիկների մտաւոր զարգացման, դասերի քանակութեան եւ դպրոցի նպատակին։

Դասագրքիս թարգմանութիւնը սկսեցի վերջին հատորիցս այն նպատակով՝ որ նախ ամենամեծ կարիքին դարման տարած լինիմ, որովհետեւ հնագոյն

պատմութեան համար մեր գրականութեան մէջ կան գոնէ մի երկու փորձեր, իսկ նորագոյնից գրեթէ բոլորովին զուրկ ենք: Առ այժմ այս չափով գոհանալով՝ ամբողջ գործի աւարտման ժամանակին եմ թողնում թարգմանութեանս միջոցին հետեւած սկզբունքներն պարզելու, իսկ այստեղ կարեւոր եմ համարում յառաջ բերել արգոյ հեղինակի սկզբունքները, որ հրատարակուել են բնագրի երրորդ տպագրութեան նախաբանում:

„Իմ նպատակս է եղել, ըստ կարելւոյն, նոր պատմութեան ամենից էական իրողութիւններն պատմել այն կարգով եւ ընտրութեամբ, որ պարզուի զարգացման ընդհանուր ընթացքն եւ գլխաւոր դէպքերի պատճառական կապը: Այս սեղմ կերպիւ պատմուած տեսութիւնը չէ՛ կարող եւ չը պէ՛տք է իսկ փոխարինէ զանազան շրջանների իրողութիւնների եւ գործիչների մասին կենդանի եւ մանրամասն պատմութիւնը. հեղինակն իր նպատակին հասած կը համարի իրեն, երբ երեւի՝ թէ դասատուներին յարմար է իւրեանց պատմութիւնն այս տեսութիւններից սկսելն, իսկ աշակերտների համար ծանրակշիռ՝ վերադառնալու սրան, որպէս զի ջանքերը մի ընդհանուր կարգի եւ միութեան վերածեն:

„Նոր ժամանակի պատմութիւնն աւանդւում է բարձր դասարաններում, ուստի եւ ես թոյլ տուի ինձ քանի մի խնդիրներ եւ իրողութիւններ շօշափելու, որոնց ըմբռնումն եւ իւրացումը բաւական մեծ զարգացումն է պահանջում: Ի միջի այլոց, ինձ անհրաժեշտ էր թւում աւելի մեծ ուշադրութիւն դարձնել ԺԹ. դարու անցքերի վրայ, քան թէ սովորաբար անում են: Տասնեւիններորդ դարը շուտով կը դառնայ „անցեալ դար“ եւ աւելորդ չէ այժմէն իսկ նրա վրայ նայել պատմական հայեացքից: Այսուամենայնիւ ես չը վստահացայ գիրքն աւարտել մեր դարու մտաւոր շարժման նուիրուած մի գլխով, ինչպէս որ այդ կը պահանջէր ընդհանուր ծրագիրը: Այդ շարժումը թէ՛ իւր ամբողջութեամբ եւ թէ՛ ի մասնաւորի դեռ շատ վէճերի առարկայ է, եւ, գոնէ այժմս, ես կարող չէի տալ նրա տեսութիւնը, որ պիտանացու լինէր միջնակարգ դպրոցի համար“:

Մի խօսք եւս թարգմանութեանս լեզուի մասին: Յայտնի է, որ պատմագրութիւնը շատ յաճախ զուտ կամ գեղեցիկ գրականութեան մասն է համարւում եւ իրաւամբ, բայց այդ չէ վերաբերում անշուշտ դպրոցական ձեռնարկին, որ սակայն իբրեւ աշակերտի ուղեցոյց պէտք է, երբ ոչ գեղեցիկ ու ճոխ, գոնէ կանոնաւոր ու սահուն լեզու ունենայ: Դժբախտաբար իւրաքանչիւր թարգմանութիւն ենթակայ է օտար լեզուի եւ մտածման եղանակի անխուսափելի ազդեցութեան, որից ըստ կարելւոյն զգուշացել եմ: Աշխարհաբար լեզուի քերականութիւնը դեռ եւս կանոնական չէ, ուստի եւ օգտուել եմ հայերէն լեզուի ձեւերի ճոխ բազմատեսակութիւնից, որ մատչելի պիտի լինի դպրոցականներին:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Բարենորոգութիւն.

ԳԼՈՒԽ Ա.

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ.

Ներածութիւն.

Միջին դարերու պատմութիւնը զբաղուած է երեք քաղաքակրթութիւնների—արեւմտեան Եւրոպայի, արեւելեան Եւրոպայի եւ արեւմտեան Ասիայի,—զարգացմամբ եւ մրցմամբ։[1]) Առաջնի հիմունքն էին կաթոլիկութիւնն եւ աւատականութիւնը, երկրորդինը՝ օրթոդոքսութիւնն եւ բիւզանդական ինքնակալութիւնը, երրորդինը—իսլամն եւ զինուորական ազնուականութիւնը։ Սակաւ առ սակաւ երեւան եկան միջնադարեան կազմակերպութեան մէջ խորին փոփոխութիւններ: Արեւելքում իսլամը յաղթանակ տարաւ Բիւզանդիոյ վրայ, եւ թէպէտ արեւելեան Եւրոպիոյ քաղաքակրթութիւնը գլխովին չ'անհետացաւ, բայց նրա մնացորդներն ապաստանարան գտան մի այնպիսի երկրում, որ մեկուսացած էր եւ միայն մերձաւորագոյն դրացիների հետ յարաբերութիւններ ունէր,—այդ ապաստարանն էր Մոսկուայի տէրութիւնը։ Արեւմտեան Եւրոպայի աշխարհակալութեան վտանգ չէր սպառնում, բայց նրա քաղաքակրթութեան բոլոր մասերն—տնտեսականը, քաղաքականն ու հոգեւորը—անդարձ կերպով այլասերւում էին։

Աւատական տնտեսութիւնը բնական տնտեսութիւն էր. իւրաքանչիւր գործաւոր ընտանիք ա՛յն էր արտադրում, ինչոր կարեւոր էր իւր պէտքերի, սննդի, հագուստի, բնակարանի համար. բարձր դասակարգերը, որ չէին աշխատում, անհրաժեշտ պէտքերը ստանում էին իրենց հպատակներից նիւթերով։ Փոքր առ փոքր այս բնական տնտեսութիւնը տեղի տուեց փոխանակականին. գործաւորներն սկսան աշխատանքը բաժանել իրենց մէջ. ոմանք կենդրոնացրին իրենց աշխատանքը

---

[1]) Հեռագոյն արեւելքի, հնդկական և չինական քաղաքակրթիւններն առանձին կեանք ունէին և մասնակից չէին ընդհանուր պատմական շարժման։

որեւէ արդիւնաբերութեան մշակման, այլ—մի ուրիշ արդիւնաբերութեան ճիւղի վրայ, եւ զանազան խմբերն սկսան փոխանակել միմիանց հետ իրենց վաստակների աւելորդները. փոխանակութիւնը դիւրացնելու համար առաջ եկան միջնորդներ — վաճառականներ, եւ միջնորդ արտադրութիւն — դրամ. բարձր դասակարգերն աշխատեցին գործաւոր բնակիչների բնական հարկերը փոխել դրամականի։

Աւատական իշխանութիւնը հաւասարուեցաւ կալուածատիրութեան։ Այսպիսի կալուածներից կազմուեցան թագաւորութիւններ եւ կայսրութիւններ, բայց այս մեծ միաւորութիւններն աւատական տեսակէտով հաւասար իրաւունքի տէր իշխանութիւնների դաշնակցութիւններ էին։ Եւրոպայի բոլոր կողմերումն հետզհետէ սկսաւ կռիւ ընդդէմ քաղաքական բաժանակութեան, քանի մի տեղերում կազմուեց զօրաւոր կենդրոնական իշխանութիւն, միւսներում — աւատաւոր իշխանների մէջ յառաջ անցան ամենից զօրաւորներն ու ջանացին ստորադրել իրենց մանրերին, տիրանալ դատարանին եւ զօրքին։

Կաթոլիկ եկեղեցին վարդապետում էր աստուածպետութիւն. պապը բարձր էր ո՛չ միայն եպիսկոպոսներից, այլ նաեւ աշխարհական իշխաններից. հոգեւորականութիւնը ձեռնարկեց առաջնորդելու մարդկանց հաւատքին եւ վարք ու բարքին, ուղղութիւն տալու քաղաքականութեան, իրաւունքին ու տնտեսութեան։ Բայց աստուածպետութեան մեծագոյն զինուորական ձեռնարկութիւնը—խաչակրաց արշաւանքը—անյաջող ելք ունեցաւ, ազգային տիրապետները գլուխ բարձրացրին պապի խնամակալութեան դէմ, տնտեսութիւնը, իրաւունքն եւ քաղաքականութիւնը սկսան անկախ եւ ինքնուրոյն կերպիւ զարգանալ, հակառակ հոգեւորականութեան հրահանգներին։

Միջնադարեան եկեղեցու ներքին կարգն հիմնուած էր հոգեւորականների հաւատացեալների միջից խիստ զատման եւ հոգեւորականութեան անպայման հեղինակութեան վրայ, հաւատոյ, եկեղեցական կազմակերպութեան եւ կարգապահութեան խնդիրներում, վերջապէս, պապի բարձրագոյն, վճռողական իշխանութեան վրայ։ Բայց նոյն իսկ հոգեւորականութեան մէջ երեւան եկան մարդիկ, որ սկսան հերքել այդ անպայման հեղինակութիւնը, ցոյց տալ հոգեւոր դասի ապականուած լինելը, պահանջել բարեփոխութիւններ եւ իբրեւ ուղե-

ցոյց առաջարկել ոչ թէ պապերից հաստատուած եկեղեցական աւանդութիւնները, այլ Սուրբ Գրքի ազատ մեկնութիւնը։

Միջնադարեան աշխարհն համոզուած էր, որ մարդուս բնութիւնը մեղանչական է. բարձրագոյն զերական (իդէալ) էր ճգնաւորական մրցումը բնութեան հետ. հաւատացեալն զգալով իւր թուլութիւնն ու մեղանչականութիւնը, փրկութիւն էր որոնում եկեղեցու բարեխօսութեան մէջ Արդար Դատաւորի առաջ։ Այս հայեացքների դէմ կռուի դուրս եկան նոր գաղափարներ—մարդկային բնութիւնը վերացուցանուում էր, իբրեւ Արարչի ազնուագոյն գործ. յոյս էին տածում մարդկային բանականութեան ու ուժերի մէջ լոյս ու երջանկութիւն գտնելու. աշխարհական մարդօգուտ գիտութիւնը (հումանիզմ) դուրս վանդեց միջնադարեան դպրոցականութիւնը (սքոլաստիքա)։

Յուզմունքն առաւել եւս աճեց քանի մի պատահական հանգամանքների շնորհիւ։ Վառօդի կիրառութիւնը զինուորական գործում նպաստեց զինուորական կազմի յեղաշրջման, տպագրութեան գիւտն անսովոր նշանակութիւն տուաւ գրականութեան. պորտուգալացոց եւ սպանիացոց յայտնագործութիւնները նորանոր ուղիներ բաց արին եւրոպական գաղթականութիւնների եւ ձեռնարկութիւնների համար։

Գերմանիան բարենորոգութիւնից առաջ։

Անցքը միջին դարուց դէպի նոր ժամանակն առանձնապէս հիւանդագին ձեւով տեղի ունեցաւ Գերմանիայում։ Այնտեղ չը կար զօրաւոր կենդրոնական իշխանութիւն. կայսրընտիրները, դքսերը, իշխանները, եպիսկոպոսները, աբբաները, կոմսերը, ասպետները, քաղաքները բաժանում էին իրենց մէջ բնակիչների վրայ տիրելու իրաւունքը։ Որովհետեւ կազմ տիրապետական կարգ գոյութիւն չունէր, ուստի երկպառակութիւններին և հալածանքներին վերջ չը կար։ Տիրապետներն ու իշխաններն աշխատում էին ծանրացնել հարկերն և, որ գլխաւորն է, առնել գեղացիներից ինչքան կարելի է շատ դրամ։ Դատարանների մէջ մտցուեցաւ ժողովրդին անհասկանելի հռովմէական իրաւունքը, և այդ օրէնքը գիտեցողները, իրաւաբանները, իւրեանց կնճիռներով ու չարահնարութիւններով, արժանացել էին վատ քըի-

ստոնէի անուան (Die Iuristen sind böse Christen)։ Մանր մարդիկ արդարութիւն գտնելու տեղ չ՚ունէին. յաճախ տեղի էին ունենում անկստամբութիւններ, գեղացիք աշխատում էին այնպիսի ազատութիւն ձեռք բերել, որպիսին ձեռք էին բերել քաղաքացիք, բայց այդ փորձերին վախճան էին դնում իշխաններն ու ասպետներն արիւնահեղ հատուցումներով։ Եկեղեցին չէր թեթեւացնում ժողովրդի վիճակն, այլ վատթարացնում էր. եկեղեցու գլխաւոր ներկայացուցիչներն իրենք իշխաններ էին և միւսներին հաւասար չափով նեղում էին իրենց հպատակներին։ Ծխական հոգեւորականութիւնն և վանական միաբանութիւններն անառակութեան, կոպտութեան և տգիտութեան օրինակ էին տալիս։ Հռոմի ու պապի ազդեցութիւնը զգացւում էր միայն շարունակ տեւող նուիրաժողովներով, որոնք այնու աւելի ևս զայրոյթ էին առաջացնում, որ դրամները ժողովւում էին աւելի և անխիղճ օտարերկրացիների համար։

Ջօրաւոր կրօնական զգացմունք ունեցող մարդիկ երես էին դարձնում հոգեւորականութիւնից, եկեղեցու խորհուրդներից ու ծէսերից, խորասուզւում էին իրենց մէջ, որոնում էին անմիջական հաղորդակցութիւն Աստուծու հետ։ Այս հոգւով էին գործում «համաքնակակից եղբայրութիւնները», որոնք սկիզբն էին առել հոլլանդացի Գերհարդ-դէ-Գրօտից (վախճ. ժդ. դ.)։ Այս միաբանութիւնների անդամները կարդում էին Ս. Գիրքը, զբաղւում էին աշխարհական գիտութիւններով եւ երիտասարդութեան դաստիարակութեամբ, իսկ գլխաւորաբար, միմիանց նեցուկ էին լինում դէպի մաւորական կեանքի ձգտումն։ Տասնեւհինգերորդ դարու կիսին դրանցից մէկն, Թովմաս Կեմպացին, գրեց մի գիրք, որ 2000 հրատարակութիւն է ունեցել, թարգմանուած է բոլոր եւրոպական լեզուներով եւ ցարդ չէ կորցրել իւր հոգեւոր նշանակութեանը։ Այս գիրքը կոչւում է «Յաղագս նմանութեան Քրիստոսի»։ Այդ գիրքը ներշնչուած է ճգնողական ոգւով, հրաւիրում է անդադար կռուելու մարդկային բնութեան հակումների դէմ, բայց

անփոյթ է եկեղեցու մասին եւ հազիւ յիշատակումէ հոգեւորականութիւնը։ Կեանքի կենդրոնը դառնում է աղօթքը. հաղորդութիւնն Աստուծու հետ. շրջակայ առարկաները, մարդկանց հանդիպումն, առօրեայ դիպուածերն եւ կեանքի հոգսերը—ամէնքն էլ նորանոր առիթներ են տալիս գլխաւոր զգացման շրջանառութեան, այսինքն՝ զարթուցանումն խորհրդաւոր[1]) սէր առ Աստուած։

Սակայն Իտալիայից գերմանացիների մօտ մի միայն պապական ագահ հասոյթ ժողովողները չէին գալիս։ Մարդօգուտ (հումանիստական) կրթութիւնը, որ լայնաբար ծաւալուել էր Իտալիայում արդէն ժդ. դարում, յաջորդ ժե. դարում անցաւ Գերմանիա։ Հարաւային գերմանական հարուստ քաղաքներում *հումանիզմը* գտաւ բազմաթիւ ու ոգեւորուած հետեւողներ։ Մաքսիմիլիան կայսրը հովանաւորում էր հումանիստներին և ինքն իսկ ներշնչուած էր աշխարհական գիտութիւնների և արուեստների սիրով։ ԺԶ. դարու սկզբում հումանիստներն այնքան ազդեցիկ էին, որ կարող եղան վերակազմել շատ համալսարաններում գիտութեանց դասաւանդումը, յետ մղել դպրոցական (սքոլաստիք) ուղղութիւնը, բարձրացնել հին հեղինակների ուսումնասիրութիւնը, երիտասարդութեան մէջ զարթեցնել սէր դէպի բանաստեղծութիւն և գեղեցիկ դպրութիւն։ *Այսպիսով գիտութիւնն եւ գրականութիւնն ազատւում էին աստուածաբանութեան խնամակալութիւնից*. միջնադարեան անձնուրացութեան և ան-

Գերմանական հումանիզմ

[1]) Բառս «խորհրդաւոր» (мистическій) ծագում է յունարէն միւստես իրագէտ, նուիրեալ բառից։ Խորհրդանուէր կոչւում էին Յունաստանում այն մարդիկ, որոնց յայտնի էին աստուածների պաշտաման գաղտնիքները, որանք հաւատում էին, որ այս պաշտօնների շնորհիւ մերձաւոր յարաբերութիւնների մէջ են մտնում աստուածութեան հետ և ճանաչումեն ճշմարտութիւններ, որոնք ծածուկ են ոչ նուիրեալներից։ Եւ այժմ իսկ միստիկ (խորհրդանուէր) կոչւում են այն մարդուն, որ փնտռում է առանձին անձնական հաղորդակցութիւն Աստուածութեան հետ և աշխարհաճանաչութեան մէջ առաջնորդւում է ոչ սովորական դիտողութիւններով կամ առողջ բանականութեան և գիտութեան ցուցումներով, այլ խորհրդաւոր ու գաղտնի սկզբունքներով։

ձնամեռուցման գերակայն (իդէալին) փոխարինեց մարդկային արժանապատուութեան և նրա դէպի երկրաւոր փառքն ու երջանկութիւնը ձգտման գաղափարը։

Ռէյխլին։ Դպրոցականներն ու հումանիստներն մի այնպիսի խնդրի առթիւ սկսան իրենց կռիւը, որ կատարելապէս արտացոլում է երկու կողմի յարաբերութիւնն եւ դէպի գիտութիւնը: Գիտնական բանասէր Ռէյխլինը, լատիներէն բառարանի յօրինողը, յունական լեզուի և գրականութեան քաջահմուտ հումանիստը, սկսաւ զբաղել եբրայական լեզուով և մշակեց նրա քերականութիւնը։ Նոյն իսկ այդ ժամանակում մի մկրտուած հրէայ, գրգռուած դէպի իւր ազգակիցներն ունեցած ատելութիւնից, Մաքսիմիլիան կայսրից ձեռք բերաւ քրիստոնէութեան ընդդէմ եղած եբրայական գրքերն ոչնչացնելու իրաւունքը։ Օգտուելով սրանից, մոլեռանդներն սկսան պահանջել ամբողջ հրէական գրականութեան ոչնչացումն։ Ռէյխլին պաշտպան հանդիսացաւ և սկսաւ ապացուցանել, որ այդ գրականութեան մէջ շատ թանկագին բաներ կան և որ կարգադրութիւնը վերաբերում է միմայն այն երկերին, որոնք ուղղուած են ընդդէմ քրիստոնէութեան։ Այն ժամանակ հաւատաքննական (ինկուիզիցիայի) դատարանը Կէօլնի ատեանը կանչեց նոյն ինքն Ռէյխլինին, մեղադրելով նրան իբրև տարածող հրէական կարծիքների։ Ռէյխլինը բողոքեց Լեւոն Ժ. պապին, և սա գործը խափանեց։ Մամուլի մէջ արծարծուող վիճաբանութիւնն և դատը յառաջ բերին կրթուած դասակարգի մէջ մեծ յուզումն, որի ժամանակ համալսարաններից մեծագոյն մասն Ռէյխլինի դէմ յայտարարեցին իրենց, իսկ նրան պաշտպան հանդիսացան հումանիստները։ Սրանցից մի քանիսը տարօրինակ միջոց հնարեցին մոլեռանդներին ծաղրելու համար։ Նրանք հրատարակեցին նամակների մի ժողովածու, որոնք իբրև թէ գրել էին Կէօլնի հաւատաքննիչներն և նրանց բարեկամները։ „Մութը մարդկանց նամականին“ (Epistolae obscurorum virorum) նմանեցրած են սովորական արտայայտութեան ձևերին և դպրոցականների անճոռնի լատիներէնին։ „Մութը մարդիկ“ հաղորդում են միմեանց իրենց գործողութիւնները, խորախորհուրդ կերպով դատողութիւններ են անում չնչին բաների մասին, ամեն մի քայլում ցոյց են տալիս իրենց կատարեալ տգիտութիւնն և կատաղի անհանբերողութիւնը։ Պատկերներն այնպէս ճարտարութեամբ էին նկարագրուած, որ հումանիստների թշնամիներից շատերը այդ նամակագրութիւնն իսկական համարեցին։ Այսու աւելի եւս մեծ եղաւ երգիծաբանութեան ազդեցութիւնը. նա դպրոցականներին աւելի վտանգաւոր հարուած տուաւ, քան նոյն իսկ Ռէխլինի մերկացումները։

Այդ ժամանակի ամենից երևելի հումանիստն էր Էրազմոս
Ռոտտէրդամցի Էրազմոսը։ Մանկութեան հասակում նրան տուել էին վանք, բայց նա թողել գնացել էր Փարիզ ուսանելու։ Փարիզում դասաւանդումը դպրոցական եղանակով էր։ Էրազմոսն իւրացրեց այդ եղանակի նրբութիւնները, բայց նա որոնում էր հարուստ և կենդանի բովանդակութիւն, ուստի սիրեց հին աշխարհն և արդէն այդ ժամանակից իսկ դարձաւ ճարտար լատինագէտ։ Յունարէն ուսանելու համար ուղևորուեց Անգլիա։ Անգլիական հումանիստները ոչ միայն ոգևորւում էին դասական լեզուններով և հին փիլիսոփայութեամբ, այլ նաեւ թափանցուած էին կրօնական հետաքրքրութեամբ ու եկեղեցու բարեփոխման յոյսերով: Այս ազդեցութիւնների տակ վերջնականապէս կազմակերպուեցաւ Էրազմի ուղղութիւնը։ Իւր կեանքի երկրորդ կէսը նա անցկացրեց Բազելում և համարւում էր առաջին հեղինակութիւնը գրական և գիտնական խնդիրներում։

Իբրև բանասէր Էրազմոսը չ՛ունէր իրեն հաւասար մէկը, նա խօսում էր և գրում միայն լատիներէն և յունարէն, իսկ հոլլանդերէն և ֆրանսերէն գիտէր միայն այնքան, որ կարողանում էր ծառաների հետ և փողոցում իւր միտքն յայտնել: Գիտութիւնը նա ձեռք էր բերում արագ ու դիւրին կերպով, և նրա բոլոր գործունէութիւնը կենդրոնանում էր մտաւոր պարապմունքների մէջ. նրա առողջութեանը թոյլ էր, և կենսական զուարճութեան սէրն արժէք չ՛ունէր նրա աչքում: Ժամանակակիցները խոնարհում էին նրա խելքի նրբութեան, քննադատական զգայունութեան և դատողութեան ճշգութեան նոյնպէս և շարադրութեան գեղեցկութեան ու սրամտութեան առաջև: Նա կարողանում էր գրել ոչ միայն գիտնականների համար, այլ նաև բոլոր կրթուած մարդկանց: Առանձին յաջողութիւն ունեցաւ հասարակութեան մէջ նրա „գովք յիմարութիւն“ կոչուող գիրքը: Յիմարութեան աստուածուհին ճառ է խօսում յիմարների մասին, որոնցով լի է աշխարհս: Կշտամբում է դիւրահաւան ամբոխը, որ կարծում է՝ թէ ուխտ գնալով և թողութեան թղթերով կարելի է փրկուել. բայց ամենից առաւել յարձակւում է ամբոխի առաջնորդների վրայ. դպրոցականները բաներ գիտեն, որոնց մասին նոյն ինքն Պօղոս առաքեալը գաղափար չ՛ունէր. աշխարհակազմութեան մասին այնպէս են դատում, որ կարծես թէ Աստուած խորհրդակցել է նրանց հետ, երբ աշխարհս ստեղծում էր, պարծենում են իբրև ամենագէտներ, իսկ ժամանակ չեն ունեցել Աւետարանը և Պօղոս առաքելոյ թղթերը կարդալու. կրօնաւորները Ահեղ Դատաստանի օրը պիտի ցոյց տան իրենց պահեցողութիւնից խանգարուած ստամոքսները, կեղտոտ վերարկուք, բայց Քրիստոս պիտի առաջարկէ նրանց նոր երկինք շինել իրենց համար, որովհետև չեն հետևել Աւետարանի պատուէրներին. պապերը փոխանակ Պետրոս առաքելոյ պէս ստացուածքից հրաժարուելու, ջանք են գործ դնում միայն, որ Պետրոս առաքելոյ կալուածները բազմացնեն և խեղաթիւրում են օրէնքն ու կրօնը:

Իբրև գիտնական, Էրազմոսը նուիրեց իւր անձն Նոր Կտակարանի և եկեղեցու սուրբ հարց երկերի հրատարակութեան, թարգմանութեան և մեկնութեան: Նա գրանով բացառապէս միայն գիտնական նպատակի չէր ձգտում, այլ կամենումէր Սուրբ Գիրքը բոլորին մատչելի կացուցանել և ազատել նրան խանգարումներից[1]):

Էրազմի ծաղրը տէրութեան և եկեղեցու մէջ տեղի ունեցած խեղաթիւրումների վրայ, նրա խրատն առ մարդիկ, որ դառնան Աւետարանին և եկեղեցու հին հայրերին, առիթ էին տալիս շատերին երազելու կրօնի և եկեղեցական կազմակերպութեան շրջանում յեղափոխութեան մասին: Բայց ինքն Էրազմոս ոչ մի այդպիսի բանի մասին չէր մտածում: Նա վախենում էր շփոթութիւններից, պատրաստ էր պահպանելու պապութիւնն և բոլոր եկեղեցական կազմը, յոյս ունէր միայն, որ եկեղեցին կը դադարէ ստիպել մարդկանց միակերպ մտածելու այնպիսի խնդիրներում, որոնց մասին կարող են զանազան կարծիքներ ունենալ: Նոր շարժման ղեկավարութեան համար պէտքէր մի աւելի զօրաւոր կամքի տէր անձն և աւելի ոգևորուող մարդ, քան Էրազմոսը:

---

1) «Ես կը ցանկայի», ասում է նա Նոր Կտակարանի հրատարակութեան նախաբանում, «որ տկար կանայք կարդային Աւետարանն և Պօղոս առաքելոյ թղթերը, կը ցանկայի, որ դրանք թարգմանուէին բոլոր լեզուներով, որ դրանց կարդային ու հասկանային ոչ միայն Շոտլանդացիք ու Իռլանդացիք, այլ նաև թաճիկներն ու սարակինոսները: Ես կը ցանկայի, որ մաճկալը երգէր Ս. Գրքի երգերն, արօրի յետևից գնալով, որ ոստայնանկը կրկնէր այդ կտորներն ձայնակցելով և ուղևորն ձանձրալի ճանապարհորդութեան ժամանակ զուարճանար Աւետարանի պատմութիւններով»:

Լութէր 1483 Թիւրինգիայի Այսլեբէն գիւղաքաղաքում 1483 թուին հանքագործ Լութերին ծնուեցաւ մի որդի, որին կոչեցին Մարտին: Նրա մանկութիւնն անցաւ աղքատութեան մէջ. ծնողները նրա հետ խիստ էին վարւում. սակայն հայրը նրան դպրոց տուաւ և հոգ տարաւ նրա կրթութեան մասին—յոյս ունէր, որ որդին փաստաբան կը դառնայ և կը լինի ազդեցիկ անձն: Մարտինը լաւ աւարտեց դրական գիտութիւնների ընթացքն, բայց չը մտաւ իրաւաբանական մասնաճիւղը, այլ ի վիշտ իւր հօր սրտի, մտաւ Օգոստինեանների վանքը: Նա բուռն կերպով մտնեց իւր անձը ճգնութեան, պահում էր, խարազանում էր իրեն, աղօթում էր ամբողջ օրերով: Բայց կեանքի այս եղանակը նրան հոգեկան հանգստութիւն չէր պարգևում: Ամենափոքր կանոնազանցութիւնը, ամենամանր մեղանչումը նրան անսահման յուսահատութեան մէջ էր ձգում. Քրիստոսին նա բարերար Փրկիչ համարելու փոխարէն, համարում էր Սարսափելի Դատաւոր:

Վանական միաբանութեան գործերի համար Լութերին Հռովմ ուղարկեցին: Նա զարհուրեց հռովմէական հոգևորականութեան անառակ կեանքը տեսնելով, բայց այդ զգացմունքը մի առ ժամանակ յետ մղուեցաւ շնորհիւ այն խորին ազդեցութեան, որ գործեցին նրա վրայ քրիստոնէութեան փառաւոր ժամանակի յիշատակարանները. հին տաճարներն ու նահատակների դամբանները: Գերմանիա վերադառնալուց յետոյ Լութերն իբրև ուսուցչապետ սկսաւ դասախօսել Սաքսոնիայի Վիտտեմբերգ քաղաքում նոր բացուած համալսարանում. Նա դասախօսում էր Սուրբ Գրքի մասին, աշխատելով ինչքան կարելի է չը հեռանալ բնագրից, փախուստ տալով դպրոցականներ՝ արհեստական մեկնութիւններից: Եկեղեցու սուրբ հայրերից առանձնապէս սիրով ուսումնասիրում էր ս. Օգոստինոսին, վերջին ժամանակի ստուածաբաններին—գերմանական *միստիկներին*: Վանքի մէջ ունեցած կասկածներն հետզհետէ սկսում էին ցրուիլ: Լութերին թւում էր, որ Պօղոս առաքելոյ ու ս. Օգոստինոսի հետևեալ խօսքերի մէջ ինքը գտել է փրկութեան բանալին. *մարդս չէ կարող փրկել իւր անձն սեփական գործերով եւ առաքինութիւններով, նրան կը փրկէ միայն հաւատն առ Փրկիչ Քրիստոս:*

Մինչև 1517 թիւը Լութերն եկեղեցու հետ կատարելապէս համաձայնութեան մէջ էր արտաքուստ, նրա վրայ հպարտութեամբ էին նայում իւր ընկերակից օգոստինեան կրօնաւորները, և նրա դասախօսութիւնները բազմաթիւ ունկնդիրներ էին գրաւում դէպի Վիտտենբերգի համալսարանը: Լութերի հայեացքների անհամաձայնութիւնը կաթոլիկութեան հիմնական վարդապետութիւնների հետ երևան եկաւ 1517 թուին մի դիպուածի առթիւ: Լևոն Ժ. պապին դրամ էր պէտք ս. Պետրոսի տաճարը վերանորոգելու համար: Նա յանձնեց հոգևորականութեան ժողովարարութիւն անելու ամբողջ կաթոլիկ աշխարհում, իսկ ժողովարարութեան աւելի մեծ յաջողութիւն տալու համար խոստացաւ նուիրատուներին եկեղացական պատիժների և քաւարանի տանջանց—ներումն. այդ ներումը տրուում էր թղթով (ինդուլգենցիա), վճարած գումարի քանակութիւննից էր կախուած պատիժների շատ կամ սակաւ մեղմացումը: Գերմանիայի սեղանաւորներից ամինից հարուստն անմիջապէս վճարեց պապին ի հաշիւ ժողովարարութեան մի մեծաքանակ գումար և ուղարկեց Գերմանիոյ ամեն կողմերն իւր գործակատարներին վարդապետների հետ միասին, որոնց պարտաւորութիւնն էր հաւատացեալներին հրաւիրել նուէրներ տալու: Վիտտենբերգի շրջակայքում քարոզում էր Ֆրանկիսկեան կրօնաւոր Տէցելը: Սա մի կոպիտ ու անտաշ

Վէճ թողութ. թղթերի մասին.

մարդ էր, որ տանց սեթևեթի գովում էր և ճարպիկ կերպով վաճառում իւր ապրանքը:[1]) Ինչպէս մի ժամանակ Հուսն, այնպէս էլ այժմ Լութերը հանդէս դուրս եկաւ բողոքելու ընդդէմ ապաշխարութեան և մեղքերի թողութեան հայհոյութեան: Համալսարանական սովորութեան համաձայն նա Վիտտենբերգում 95 խնդիրների ցանկ կախ տուաւ, որոնց մէջ դատապարտում էր թողութեան թղթերն ու հրաւիրում էր հակառակ կարծիք ունեցողներին վիճաբանութեան դուրս գալու իւր դէմ: Որոշեալ օրը ոչ ոք հանդէս չ՛եկաւ, բայց վիճաբանութիւնն սկսաւ մամուլի մէջ, և Լութերի յարուցած խնդրի վրայ ուշք դարձրին Հռոմում: Լութերն երկու անգամ ստիպուեցաւ բացադրութիւն ունենալու հռոմէական եկեղեցու բարձրաստիճան անձանց հետ, բայց սոքա համոզել չը կարողացան նրան, իսկ դրանց պապական հեղինակութեան վկայութեան կոչումներն ստիպեցին Վիտտեմբերգի աստուածաբանին տառել ուշադրութեամբ քննելու նոյն իսկ պապական իշխանութեան հիմնունքները, և շուտով արդէն դրանից յետոյ նա գրում է իւր մի բարեկամին. «ականջիդ եմ ասում. չը գիտեմ, պապին նեռն համարեմ, թէ նրա առաքեալը“: Լայպցիգում վիճաբանութեան հանդէս կազմեցին, ուր Լութերին ընդդիմախօսելու եկաւ աստուածաբան Էկկն, որ ստիպեց Լութերին իւր հայեացքները արդարացնելու համար մասնաւոր անհամաձայնութիւններից անցնելու ընդհանուր հիմունքների: Մի փոքր տատանմունքից յետոյ Լութերն յայտարարեց, որ պապի հեղինակութիւնը պարտաւորիչ չէ համարում, որ նոյն իսկ եկեղեցական ժողովը կարող է մոլորութեան մէջ ընկնել, որ Կոստանցի ժողովն արդարացի չէ դա-

---

[1]) Նրան էին վերագրում ի միջի այլոց հետևեալ ոտանաւորը.
So wie bas Geld im Kasten klingt,
Die Seele aus dem Fegefeuer springl
(Հէնց որ փողն արկղումն է զրընգում, հոգին քաւարանից դուրս է թռչում)

տապալել Հուսի վարդապետութիւնը, որի մէջ շատ բան բոլորովին ճշմարիտ է, և որ հաւատի միակ անսաս հիմունքը պէտք է համարել Սուրբ Գիրքը:

Լայպցիգի վիճաբանութիւնը ստիպեց Լութերին հրաժարուիլ ամենատեսակ տատանումներից ու խնդիրները լուութեան տալուց և ուղղակի խզել կապը հռոմէական եկեղեցու հետ: Նա հրատարակեց երեք մանր շարադրութիւն, որոնց մէջ բուռն խստութեամբ մերկացնում էր եկեղեցու խանգարումը և միևնոյն ժամանակ ցոյց տալիս կրօնական բարեկարգութեան հիմունքն: Առաջինը („գերմանական ազգի քրիստոնեայ ազնուականներին — այն մասին, թէ ինչպէս պէտք է բարելաւել քրիստոնէութիւնը“) կոչումն աշխարհականներին եւ ամենից առաջ կայսրին, իշխաններին ու ազնուականներին, եկեղեցին ուղղութեան բերելու, որովհետև հոգևորականութիւնն ընդունակ չէ ինքն իրեն ուղղելու: Պապը գլուխ է հոգևորականութեան, որի մասին ոմանք անմտօրէն ասում են, որ բարձրէ հրեշտակներից: Պապի շուրջը Հռոմում եռումեն իբրև որդներ անառակ մարդիկ, որոնք արդէն կերել, սպառել են շատ երկրների հարստութիւնը, իսկ այժմ ձեռնարկում են Գերմանիոյ հարստութեան: Այս աւազակութեան պէտք է վերջ դնել. Թո՛ղ դադարին Հռոմ ուղարկուող վճարները, թո՛ղ բոլոր եկեղեցական գործերը վերջնական վճիռ ստանան Գերմանիայի հոգևոր ատեաններում (կոնսիստորում), որին կը նախագահ է Մայնցի արքեպիսկոպոսը, թո՛ղ իւրաքանչիւր ծուխ ընտրէ իւր համար իբրև հովիւ մի բարեպաշտ քաղաքացի և իրաւունք տայ նրան ամուսնանալու, եթէ կամենայ: Պառակտումն Հռոմից:

Երկրորդ շարադրութիւնն („Եկեղեցու բաբիլոնական գերութեան մասին“) ուղղւում է կաթոլիկական վարդապետութեան խորհրդների դէմ: Լութերի

կարծիքով միայն երկու խորհուրդ կայ. մկրտութիւն և հաղորդութիւն: Հոգևորականութիւնը հնարել է միւս հինգ խորհուրդները, որպէս զի աւելի միջոց ունենայ իշխելու աշխարհականների վրայ: Սրա հետ միասին քահանան աւելի մերձաւոր չէ Աստուծուն քան թէ աշխարհականը, և կոչուած է ո՛չ թէ իշխելու, այլ ծառայելու: Պէտքէ խորհրդների մասին եղած սխալ հայեացքից հրաժարուիլ, նոյնպէս և ծէսերից ու արտաքին հանդէսներից, որոնք միտքը հեռացնում են գործի էութիւնից: Վերջապէս երրորդ շարադրութեան մէջ („Քրիստոնէի ազատութեան մասին“) Լութէրն ապացուցանում է, որ մարդս չէ կարող փրկուիլ բարի գործերի եւ ո՛չ մի քանակութեամբ, որ նա կարող է յոյս ունենալ փրկութեան միայն Քրիստոսի միջնորդութեամբ և այդ միջնորդութիւնը ձեռք կը բերէ հաւատով, բարի գործերը սակայն անհրաժեշտ են, բայց միայն իբրև հետևանք հաւատոյ առ Քրիստոս և սիրու դէպի մերձաւորը:

Ազդեցութիւնն անսովոր էր, ամբողջ Գերմանիայում այդ գրքերն իրար ձեռքից խլելով էին կարդացում. Լութերն արտայայտել էր այն, ինչ որ մութ կերպով եռում էր իր ժամանակիցների գլխներում: Պապի կոնդակի հրատարակումն, որ սպառնում էր բանադրելու „վայրի վարազն, որ աւերում էր Տեառն այգին“, չը փոփոխեց դրութիւնը. Լութէրն այրեց այդ կոնդակը Վիտտենբերգի ուսանողների աչքի առաջ:

Կարլոս Ե. 1519—1555 Լութէրն իւր քարոզը բարենորոգութեան մասին ուղղել էր աշխարհական իշխաններին, եկեղեցին իւր կողմից պահանջում է աշխարհական իշխանութիւններից, որ նրանք պաշտպանեն իւր հեղինակութիւնն ընդդէմ բացարձակ ապստամբութեան: Մէկ ու միւս կողմի դիմումն աշխարհական իշխանութիւններին այնու ևս նշանաւոր էր, որ հենց այն ժամանակ կայսրութեան մէջ

բարձրագոյն իշխանութիւնը փոխուել էր: Մաքսիմիլիանը մեռաւ 1519 թուին, և կայսրընտիրները յաջորդ ընտրեցին նրա թոռն Կարլոսին: Նորընտիր կայսեր ձեռքի տակ համախմբուած էին ահագին տարածութեամբ տէրութիւններ, որոնց մէջ, ժամանակակիցների ասածին պէս, արևն երբէք մայր չէր մտնում: Արական կողմից նա սերում էր Հաբսբուրգների տնից և դուքս էր Աւստրիայում, Կարինտիայում և Տիրոլում, նրա պապ Մաքսիմիլիանն ամուսնացած էր Կարլոս Համարձակի Մարիամ դստեր հետ և ստացել էր իբրև օժիտ Նիդերլանդիան և արևելեան Բուրգունդական երկրները (Լոթրինգից մի մասն և Ֆրանշ-կոնտէն), Կարլոսի հայր Փիլիպպոսն ամուսնացած էր Սպանիայի թագաւոր Ֆերդինանդի դուստր Ժուանայի հետ, ուստի և Կարլոսն ստացաւ Սպանիան, Նէապոլիսն, Սիկիլիան և Սարդինեան. իբրև Սպանիոյ թագաւոր, նա տէր էր Նոր աշխարհի, ուր սպանիացիք Կոլոմբոսից յետոյ նորանոր երկրներ էին յայտնագործել և աշխարհակալութիւններ արել. վերջապէս կայսեր աստիճանն երիտասարդ իշխանին Գերմանիոյ գլուխ էր դարձնում և տալիս էր նրան մի քանի տիրապետական իրաւունքներ հիւսիսային և միջին Իտալիայում: Իրապէս Կարլոսն աւելի թոյլ էր, քան թէ երեւում էր. նախ՝ նրա զանազան երկրների մէջ չը կար մի ներքին կապ և այդ զանազան երկրների բնակիչները միմեանց թշնամաբար էին վերաբերւում. երկրորդ՝ իւրաքանչիւր երկրում հին սովորութիւններն և հաստատութիւնները սահմանափակում էին թագաւորի իշխանութիւնը: Սակայն Կարլոսը ներշնչուած էր իւր մեծութեան գիտակցութեամբ. նա իրեն համարում էր քրիստոնեայ աշխարհի գլուխ, և ճգնում էր իրականացնել իւր բարձրագահութիւնը: Դանդաղկոտ, ծածկամիտ և տոկուն, իւր քաղաքականութիւնն յառաջ էր տանում իբրև մի բարդ

խաղ, ճարտարութեամբ օգտուելով իւր հպատակ ազ-
գերի այլասեռ շահերից, չը յարելով առանձնապէս նրան-
ցից և ոչ մէկին. իտալացիք, սպանիացիք, գերմանա-
ցիք, ֆլամանդները միօրինակ օտար էին նրան, և ինքն
իսկ օտար մնաց նրաց համար իւր երկար թագաւորու-
թեան ընթացքում։

Մրցումն Ֆրանսիայի հետ։

Կարլոս Ե-ի տիեզերական ծրագիրներն իրագործելու
արգելք էր հանդիսանում մի տէրութիւն, որ տարա-
ծութեամբ այնքան էլ մեծ չէր, բայց միացած զօրա-
ւոր իշխանութեամբ և զինուորական հայրենասիրու-
թեամբ, այդ էր Ֆրանսիան։ Իւր բոլոր նախորդներից,
—գերմանական, բուրգունդական, սպանիական—Կար-
լոս Ե. ժառանգել էր նախանձորդութիւն Ֆրանսիայի
դէմ։ Այն ժամանակից յետոյ, որ Լուդովիկոս Ժ.
յաղթահարել էր աւատառու իշխաններին, նրա որդի
Կարլոս Ը. Ֆրանսիայի հարուստ միջոցներն և ուժերն
սկսել էր գործ դնել արտասահմանեան ձեռնարկու-
թիւնների համար։ Բաժան բաժան եղած Իտալիան յար-
մար որս էր գաղղիացիների համար։ Կարլոս Ը. անցաւ ամ-
բողջ թերակղզու միջով և տիրապետեց Նէապոլսին։
Իտալական տէրութիւնները միաբանեցին նրա ընդդէմ և
Սպանիոյ Ֆերդինանդ թագաւորի ձեռնտուութեամբ
դուրս վռնտեցին նրան Իտալիայից։ Կարլոս Ը-ի յաջորդ
Լուդովիկոս ԺԲ. վերսկսաւ նրա քաղաքականութիւնը։
Նէապոլսում յաջողութիւն չունեցաւ նա, այնտեղ հաս-
տատուել էին սպանիացիք։ Դրա փոխարէն ֆրանսիացիք
տիրեցին Միլանին։ Ֆրանսիացոց դէմ կազմուած դաշ-
նակցութեան ոգին էր Յուլիոս Բ. պապը, որին, վեր-
ջապէս, յաջողուեցաւ օգնութեամբ Մաքսիմիլիան կայ-
սեր, Սպանիոյ և Անգլիոյ, դուրս քշել ֆրանսիացինե-
րին Միլանից։ Բայց այսու խնդիրը չը վերջացաւ։ Ֆրան-
սիայի դէմ ուղղուած դաշնակցութիւններն այն թերու-
թիւնն ունէին, որ շուտով լուծւում էին—դաշնակից-

ների մէջ անքակտելի բարեկամութիւն չըկար։ Երբ
Լուդովիկ ԺԲ-ի յաջորդ փառահեղ Ֆրանցիսկոս Ա. կր-
կին մտաւ Իտալիա, նրա առաջ դուրս եկաւ մի փոք-
րիկ զուիցերական գունդ, որ վարձել էր Միլանի դուք-
սը։ Մարինիանոյի մօտ, Միլանի շրջակայքում, զուիցե-
րացիք ջարդուեցան, և Ֆրանցիսկոս Ա-ի այս յաղթու-
թիւնը հռչակեց նրա անունը, որովհետև 200 տարուան
ընթացքում զուիցերացիք անյաղթելի էին համարուած։
Ֆրանսիացիք կրկին գրաւեցին Միլանը և նրանց թա-
գաւորը փորձեց նոյն իսկ կայսերական թագը ձեռք
բերել։ Մաքսիմիլիանի մահուանից յետոյ նա իբրև
թեկնածու հանդէս դուրս եկաւ Կարլոս Հաբսբուրգ-
եանի ընդդէմ։ Նա յաջողութիւն չունեցաւ, բայց ա-
մենքը հասկանում էին, որ Ֆրանցիսկոսի և Կարլոսի
վէճը կարող էր միայն զէնքով վճռուել։ Կարլոս Ե-ի
համար իւր թագաւորութեան սկզբում անխուսափելի
պատերազմը Ֆրանսիայի հետ գլխաւոր գործն էր։ Ինչ-
պէս Յուլիոս Բ-ի օրինակը ցոյց էր տուել, պապի մաս-
նակցութիւնը կարող էր ազդեցութիւն ունենալ զինուո-
րական գործողութիւնների ընթացքի վրայ։ Այս պատ-
ճառով կայսրը թանկ էր գնահատում ամեն մի դէպք,
որ կարող էր իրեն առիթ տալ զօրաւոր ազդեցութիւն
ունենալու պապի վրայ կամ նրան նեղը ձգելու։ Հէնց
այդ հայեցակէտով էին նայում և Լութերի քարոզու-
թեան վրայ Գերմանիայում Կարլոսն և իւր գործակից-
ները։ Նրա դեսպանը հռովմէական քահանայապետի
արքունիքում գրում էր, որ եթէ կայսրը օր և է շնորհ ցոյց
տայ Մարտին վանականին—այդ կարող է լաւ ազդեցու-
թիւն ունենալ պապի բռնելիք ընթացքի վրայ, որով-
հետև պապը շատ երկիւղ է կրում Մարտինից։

Իտալական պատերազմներն ազդեցութիւն ունեցան մի
քաղաքական գաղափարի զարգացման վրայ, որ մեծ դեր խա-
ղաց պատմութեան մէջ,—այդ է քաղաքական հաւասարակշռու-
թեան գաղափարը։ ԺԵ. դարու թագաւորներն ու տիրապետները

դաշնակցութիւններ էին կազմում եւ անցնում էին մի կողմից միւսին, որպէս զի թոյլ չը տան որ եւ է տէրութեան չափազանց զօրանալու ի վնաս դրացիների։ Յաճախակի բանակցութիւնները, միապետների տեսակցութիւնները, համաձայնութիւններն ու դաշնակցութիւնները սաստկացնում էին դիւանագէտների (դիպլոմատ) գործունէութիւնը։ Այդ դիւանագէտներն դեսպաններն եւ կամ յատուկ գործակալներն էին, որոնց զանազան տէրութիւններ յանձնարարում էին իբրեւ հաւատարմատարներ ներկայացուցիչ լինելու իրենց շահերի օտար տէրութիւնների մէջ։ Մերձաւորապէս այս ժամանակից սկսած եւրոպական տէրութիւնների միջեւ «դիւանագիտական յարաբերութիւնները» մշտական են դառնում։

Ազգաժողով Վորմսում 1521։

Կայսրն ուղեւորուեցաւ Գերմանիա իւր ընտրուելուց յետոյ 1521 թուին։ Գերմանական ժողովուրդը դիմաւորեց նրան մեծամեծ յոյսերով.—սպասում էին, որ նա դարման կը տանի իւրեանց ցաւերին, կ'ուղղէ քաղաքական և եկեղեցական կազմակերպութեան թերութիւնները։ Եթէ բուռն ցանկութիւն էլ ունենար, Կարլոսը կարող չէր ամենին գոհացնել, իսկ նա դեռ դիտաւորութիւն ունէր միայն օգտուելու Գերմանիոյ զօրութիւնից առաջիկայ պատերազմի համար։ Միջին Հռենոսի ափերին շինուած Վորմս քաղաքում ազգաժողով հրաւիրուեցաւ, ուր համախմբուեցան կայսրընտիրները, իշխանների մեծագոյն մասն և բազմաթիւ պատգամաւորներ քաղաքներից։ Կայսրն առաջարկեց բարեփոխութեան ծրագիրն, որ վերաբերում էր վարչութեան, դատարանին, ելեմուտքին ու զօրքին։ Բայց աւագանին քննում էր այդ ակամայից և խառնիխուռն կերպով. այդ ժամանակ Գերմանիայում ամէնքն հետաքրքրւում էին գլխաւորապէս եկեղեցական գործերով, հոգեւորականների դէմ ուղղուած բողոքներով, Լութերի ապստամբութիւնով պապի ընդդէմ։ Դասակարգերի ներկայացուցիչներին ի հաճոյս կայսրը Լութերին Վորմս կանչել տուաւ։ Այդ միջոցին պապը բոլորովին Կարլոսի կողմն էր անցել արդէն և սա էլ պա-

տրաստակամ էր պապի եկեղեցական հեղինակութեան պաշտպան հանդիսանալու։ Լութէրն աւագաժողովին ներկայացաւ ուրախութեամբ, նա յոյս ունէր, որ պէտք է բացատրէ ու պաշտպանէ իւր հայեացքները։ Բայց նրան առաջարկուեցաւ միայն մի հարցմունք, հրաժարուո՞ւմ է արդեօք եկեղեցուց դատապարտուած հերետիկոսական կարծիքներից, թէ ոչ։ Փառահեղ ժողովի տեսքը մի վայրկեան շփոթեց նրան, և նա ժամանակ խնդրեց, որպէսզի իւր պատասխանի մասին մտածէ։ Բայց միւս օրը սրտապնդուեցաւ և ասաց, որ չէ հրաժարւում ո՛չ մի բանից, որ գրել է ընդդէմ պապի և հոգեւորականների թերութիւնների։ Նրան արձակեցին Վորմսից, բայց կայսրն յայտարարեց, որ, ինչպէս ժառանգ գերմանական, սպանիական, բուրգունդեան և աւստրիական բարեպաշտ իշխանների, թոյլ չի տալ, որ յանդուգն վանականը խախտէ եկեղեցու հիմքն եւ հին հաւատքը։ Այս մտքով հրովարտակ յօրինուեցաւ ընդդէմ հերձուածի։

Բարենորոգութեան կուսակիցների բախտից կայսրը ժամանակ չունէր կատար ածելու այդ հրովարտակը—պատերազմը Ֆրանսիայի դէմ արդէն սկսուել էր, և Կարլոս Ե-ի բոլոր ուշքը նրանով էր գրաւուած։

Որպէս զի Լութերի անձին վնաս չը հասնի, նրա երկրի իշխանն ու հովանաւորը, Սաքսոնիոյ կայսրընտիր Ֆրիդրիկոսը, հրամայեց փախցնել նրան Վարտբուրգի դղեակը (Այզենախի մօտ, Թիւրինգիայում)։ Վերանորոգիչը մի ամբողջ տարի ապրեց այնտեղ ասպետի զգեստով և անուան տակ։ Նա շատ էր աշխատում, տասնեակներով տետրեր ցրուեցան նրա բանդարգելութեան տեղից ամբողջ Գերմանիայում։ Բայց որ գլխաւորն է, նա այդ ժամանակ սկսաւ Ս. Գիրքը թարգմանել գերմաներէն. Լութէրն իւր գործը կատարեց աննման ոգեւորութեամբ և ճարտարութեամբ։ Նա ծանօթ էր

Լութերականութեան

գերմանական գլխաւոր բարբառներին և ունէր լեզուի մէջ ստեղծագործութիւն անելու հազուագիւտ ընդունակութիւնը։ Լութերի թարգմանութիւնը դարագլուխ կազմեց ո՛չ միայն գերմանական ազգի կրօնի մէջ, այլ նաեւ նրա գրական լեզուի պատմութեան եւ ազգային գիտակցութեան մէջ:

Լութէրն ստիպուեցաւ ընդհատելու սկսած աշխատութիւնները, որովհետև նրա ականջին սկսան հասնել իւր կուսակիցների անկարգութեան համբաւները։ Այն անորոշ վիճակը, որի մէջ ընկան կաթոլիկ եկեղեցուց բաժանուած և ո՛չ մի ուրիշ կազմակերպութեան չը յարած մարդիկ, առիթ էր տալիս վէճերի և չափազանցութիւնների։ Լութէրը թողեց Վարտբուրգն ու կազմեց առաջին լութերական համայնքը Վիտտենբերգում: Հաւատացեալներն ընտրեցին իրենց համար հովիւ. աստուածպաշտութեան ձևերն ու ծէսերը, որ կապ ունէին խորհուրդների կաթոլիկական ըմբռնողութեան հետ, դուրս ձգուեցան, գլխաւոր նշանակութիւնը ստացաւ քարոզն ու եկեղեցական երգերի ամբողջ համայնքով միասին երգեցողութիւնը։ Լութէրն առանձնապէս հոգս էր քաշում այդ երգերի մասին և ինքն սկիզբը դրաւ դրանց շարադրութեան։ Նա միշտ այն հայեացքն էր արծարծում, որ կաթոլիկութեան աւելորդ խստութիւնը դէպի կեղծաւորութիւն ու անառակութիւն է տանում. նրա համայնքի մէջ վանականութիւն չէր թոյլ տրուում, և ինքն էլ ամուսնացաւ մի միանձնուհու հետ, որ թողել էր վանքը։ Մեծ ուշադրութիւն էր դարձնում դաստիարակութեան վրայ միջին ու ստորին դպրոցներում։ Այս մասի մէջ գլխաւոր առաջնորդն էր Փիլիպպ Մելանխտոնը։ Այս ամէն փոփոխութիւնները տեղի էին ունենում քաղաքային իշխանութիւնների ձեռնտուութեամբ, և Վիտտենբերգը դարձաւ կենդրոն, ուստի նոր կազմակերպութիւնն ու

աստուածպաշտութեան եղանակն սկսաւ տարածուել ամբողջ Գերմանիայում։

Ծայրայեղ ուղղութիւններ։

Ո՛չ ամէն տեղ և ո՛չ ամէն ժամանակ փոփոխութիւնները տեղի էին ունենում այսպէս խաղաղ։ Կաթոլիկութեան դէմ ոտքի ելած մարդկանցից շատերը չէին կամենում ճանապարհի կիսին կանգ առնել, և Լութերի բարեփոխութիւնը շատ չափաւոր էին համարում։ Նորադարձների եռանդը յաճախ արտայայտւում էր սրբոց պատկերների և արձանների խորտակումով, սեղանների աւերումով և եկեղեցական արարողութիւնների թշնամանելով։ Այս այն միտքը, որ Աստուծոյ խօսքը միակ հիմունքն է հաւատոյ, շուտով վտանգաւոր երևեցաւ. ոմանք Աստուծոյ խօսքն ա՛յսպէս էին հասկանում, այլք ա՛յլ կերպ։ Առաջ Աստուծոյ խօսքը մեկնում էր եկեղեցին, այժմ շատերը պարտաւորիչ չէին համարում Վիտտենբերգի վարդապետի մեկնութիւնն և առաջարկում էին իրենց սեփականը։ Երևան եկաւ «կրկնակնունքների» (անաբապտիստ) աղանդը, որոնք ընդարձակ ասպարէզ էին տալիս անձնական համոզման և պահանջում էին, որ մկրտութիւնը չը կատարուի մանկական հասակում, այլ չափահասութեան ժամանակ, երբ մարդս ընդունակ է գիտակցօրէն սեփականելու կրօնը։ Ուրիշ, աւելի ոգևորուածները, յայտարարեցին, որ Ս. Գիրքը անկատար է, սպասում էին անմիջապէս Աստուծուց ցուցումների, այդպիսի ցուցմունքներ էին գտնում յուզմունքի և յափշտակութեան մէջ, և այսպիսի յափշտակութեան զօրաւոր աստիճանն համարում էին մարգարէական ներշնչումն:

Ազնուականութեան ապստամբութիւնը։

Բացի կրօնական վէճերից ծագած շփոթից, Գերմանիայում նախապատրաստուում էր հասարակական յեղափոխութիւն։ Լութէրն ուզում էր Աւետարանի վրայ հիմնուելով բարենորոգել եկեղեցին, բայց նրա հետեւողների մէջ գտնուեցան այնպիսիք, որոնք աւելի

Հեռուն գնացին և մտածեցին Աւետարանի հիման վրայ քարենորոգել ո՛չ միայն եկեղեցին, այլ նաեւ հասարակական եւ տէրութեան կազմը: Բոլոր դժգոհներն ու զրկուածները գլուխ բարձրացրին, երբ սկսաւ Լութերի ապստամբութիւնն եկեղեցու դէմ, ամենքին այնպէս էր թւում, որ հասել է ուղղելու դարաւոր չարիքը։ *Դժգոհների մէջ աչքի ընկնող տեղ էին բռնում ասպետները:* Նրանք նախանձում էին իշխաններին, որոնք աւագ ասպետութիւնից տիրապետներ էին դարձել—ատում էին քաղաքացիներին, հարստացած գիւղացոց, որոնք աւելի լաւ և աւելի հարուստ կեանք էին վարում քան իրենք—նեղում էին գիւղացիներին, ջանալով պահպանել նախնի ճորտութիւնն և միևնոյն ժամանակ նոր ձևով դրամական հարկ առնելու։ Մեծ պատերազմի ընդունակ չէր այս ասպետութիւնը։ Ճակատամարտները վճռւում էին վարձկան հետևակազօրի (լանդսկնեխտ) խիտ առխիտ շարքերով։ Գրականութեան մէջ ասպետութեան ներկայացուցիչն էր Ուլրիխ Ֆօն Հուտտէն։ Նա թափառել էր ամբողջ Եւրոպայում, ծառայել էր իբրև զինուորական և կատարել էր դիւանագիտական յանձնարարութիւններ, եղել էր գրեթէ բոլոր համալսարաններում, սեփականել էր հումանիստների հայեացքները, ստացել էր Մաքսիմիլիան կայսրից բանաստեղծի պսակ և գրել էր շատ մերկացնող ոտանաւորներ և տետրակներ—ընդդէմ գերմանական իշխանների, պապի, Ֆրանսիացոց, դպրոցականների և մութը մարդկանց։ Նա ուրախութեամբ միացաւ Լութերի հետ, բայց բարենորոգութիւնը հասկանում էր իւր ձևով. բարենորոգութեան պաշտպանութեան նուիրուած տետրակին մի պատկեր էր կցել, որի վրայ նկարուած էր, ինչպէս նիզակը ձեռներին ասպետներն յարձակւում էին քահանաների և վարդապետների վրայ։ [1]) Վորմսի

[1]) Այս շարադրութեան բնաբանն (épigraphe) էր—Perrumpendum-est (Զարդուփշուր անելու է)։

աւագաժողովից յետոյ նա ամեն ինչ սպասում էր ասպետների ապստամբութիւններից, երազում էր ազգային միութիւն կայսեր առաջնորդութեամբ և առանձին յոյսեր էր դնում Ֆրանց Ֆօն Սիկկինգենի վրայ, որ զօրաւոր կայսերական ասպետ էր, [1]) սա յայտնի էր ո՛չ միայն աւառութիւններով, այլ և իւր յաջող միջամտութեամբ իշխանների քաղաքականութեան։ Սիկկինգեն իրօք յանկարծ յարձակուեց Տրիրի վրայ, բայց յետ մղուեցաւ արքեպիսկոպոսից։ Վերջինս օգնութեան շտապեցին դրացի իշխաններից մի քանիսը, և ընդհանուր ուժով աւերեցին Սիկկինգենի դղեակներն, վերջապէս ձերբակալ արին նրան։ Նա մերձ ի մահ վիրաւորուել էր և մեռաւ իւր թշնամիների առաջ։ Մի տարուց յետոյ վերջացրեց իւր աղմկայոյզ կեանքն և Հուտտէնը։

Գիւղացիք ոտքի կանգնեցին 1525 թուին։ Շարժումը սկսաւ Շուաբիայում։ Աւանդութիւնն ասում է, որ ապստամբութեան պատճառն այն էր, որ մի կոմսուհի ստիպել էր գիւղացիներին մի տօն օր խխունջ ժողովել։ Ապստամբներն իրենց պահանջներն յայտնեցին 12 յօդուածով։ Խնդիրը վերաբերում էր *ճորտութեան վերացման*, հարկերի և տուրքերի պակասեցման, յանցանքների համար պատիժներ որոշելուն, համայնքի քահանայ ընտրելու իրաւունքին։ Շուաբիայից ապստամբութիւնը տարածուեցաւ ամբողջ Հռենոսի երկարութեամբ և Թիւրինգիայում։ Հռենոսի ափերին ապստամբները ստիպեցին իրենց վրայ հրամանատար լինելու Գէօց Ֆօն Բերլիխինգենին, որ յայտնի էր իւր աւազակային սխրագործութիւններով. ուրիշ տեղերում գլուխ կանգնեցին կրօնական յափշտակութեամբ վառուած անձինք։ Թիւրինգիայում առանձնապէս աչքի ընկաւ Թոմաս Միւնցեր քարոզիչը։ Նա հրաւիրում էր աղքատներին կոտորելու Գիւղացիների ապստամբութ. 1525

[1]) Այսպէս կոչւում էին այն ասպետները, որոնք անմիջապէս ստորադրուած էին կայսեր։ Սրանցից շատ կային Հռենոսի և Վերին Դանուբի ափերին։

և ոչնչացնելու Հարուստներին ու առաջաւորներին, յայտարարում, որ ինքը մարգարէ է և խոստանում էր իւր հետևողներին հրաշալի օգնութիւն Աստուծուց։ Գիւղացիք, որ հետևում էին այսպիսի առաջնորդներին, այլևս չէին գոհանում 12 յօդուածներով, այլ պահանջում էին ստացուածքի բաժանումն, այրում էին դղեակները, տանջում և սպանում էին ատպետներին, որ իրենց ձեռքն էին ընկնում։ Գերմանական հասարակութեան բարձր դասակարգերն զգացին, որ ամէնքին էլ հաւասարապէս վտանգ է սպառնում,—կաթոլիկներն ու բողոքականները միացան ապստամբների դեմ: Լութէրը վախենում էր, որ գիւղական ապստամբութիւնը կրօնական բարենորոգութիւնը կը դարձնէ յեղափոխութեան, ուստի և քարոզում ու գրում էր ապստամբների դէմ։ Գիւղացիների խառնիճաղանճ ամբոխը կարող չէր դէմ դնել իշխանների զօրքի վարած կանոնաւոր պատերազմին, լանդսկնեխտներն ամէն տեղ ջարդեցին նրանց։ Արինահեղ դատաստան կատարուեցաւ ապստամբների գլխին—տասնեակ հազարներով կոտորեցին նրանցից։

Ահա 12 յօդուածների բովանդակութիւնը։

1. Իւրաքանչիւր համայնք ինքն է ընտրում իւր քահանային։

2. Հոգևորականների պահպանութեան համար տրուում է հնձի տասանորդ։ Եկեղեցու օգտին առնուող միւս հարկերը (օրինակ անասունների տասանորդը) ոչնչացուում է։

3. Գիւղացիք անձամբ ազատ են, ճորտութիւնը բարձուում է։

4. Ամէն ոք իրաւունք ունի ուր կամենայ գազաններ կամ որսի կենդանիներ որսալու, ուր կամենայ ձկնորսութիւն անելու։

5. Ամեն ոք իրաւունք ունի փայտ կտորելու, որ անտառումն էլ լինի։

6. Կալուածատէրերն իրաւունք ունին միայն այնքան տուրք պահանջելու, որքան առնում էին հին ժամանակը։

7. Եթէ գիւղացիք կալուածատիրոջ համար հին կարգից աւելի աշխատեն, իրաւունք ունին վարձ պահանջելու։

8. Եթէ տուրքերը չափազանց բարձր են, պէտք է հողի

արդարացի գնահատութիւն անել և պակասացնել տուրքերը։

9. Յանցանքների պատիժները պէտքէ ճիշդ որոշուին։

10. Համայնքների հողերը պէտք է վերադարձուին համայնքներին։

11. Կալուածատիրոջ իրաւունքը, որով մեռած գիւղացու ժառանգներից առնում էին ամենալաւ եզը? կամ մի այդպիսի բան—ոչնչացուում է։

12. Եթէ ապացուցուի, որ այս յօդուածներում որ և է բան հակառում է Ս. Գրքին կամ Աստուածային արդարութեան, այդպիսի որոշումները զօրութիւն չեն ունենալու։

Գիւղացիների ապստամբութեան ճնշումից 8 տարի յետոյ կրկին մի նոր ապստամբութիւն բռնկեց Միւնստէր մեծ քաղաքում։ Լայդենցի դերձակ Եանը գլուխ կանգնեց ապստամբներին, յայտարարեց որ ինքը Մեսսիան է, գլխին թագ դրաւ, պալատականերով շրջապատեց իրեն, և Հին Կտակարանի ձևով քաղաքի վերայ նշանակեց 12 ծերունիք և սահմանեց մի տարօրինակ կարգ, որի մէջ անտխապաշտութիւնը խառն էր անառակութեան հետ. կրկնակնունքները մարգարէութիւն էին անում և հրաւիրում էին անաստուածներին կոտորելու, բաժանում էին ստացուածքը, բազմակնութիւն էին սահմանել և ժամանակն անց էին կացնում խրախճանութիւնների մէջ։ Երբ հարևան իշխանները յարձակուեցան Միւնստէրի վրայ, քաղաքը լուրջ դիմադրութեան ցոյց չը տուաւ։

Հասկանելի է, որ ջերմեռանդ կաթոլիկներն և կայսրը կարող չէին անտարբեր նայել այս շարժմանը, որ փորում էր գոյութիւն ունեցող կազմակերպութեան հիմունքը, և ձգտում էին հերետիկոսների դէմ ընդհանուր «կայսերական» միջոցներ ձեռք առնել: Միւս կողմից, բարենորոգիչներն իրենք աշխատում էին շարժմանն օրինական ընթացք տալ, և մտցնել գործը կարգի և օրէնքի սահմանը։ Նրանք յոյս էին դնում մասնաւոր կառավարութիւնների օգնութեան վրայ։ Առաջիկայ

Բարենորոգութիւնն և աշխարհական իշխանութիւնները։

տարիների պատմութեան ուղղութեան տուին երկու հան-
գամանք. մի կողմից կայսերական իշխանութիւնն երկար
ժամանակ հնար չունեցաւ կռուի մէջ մտնելու հերետի-
կոսութեան հետ, միւս կողմից, գերմանական կառավար-
ութիւնների մեծագոյն մասը յարեցաւ բարենորոգու-
թեան համոզմամբ կամ շահու համար:

Կարլոս Ե.-ի պատերազմները:

Կարլոս Ե. մի վայրկեան անգամ չէր թողել վաղ
թէ ուշ Վորմսի հրովարտակին ընթացք տալու միտքը:
Բայց նա ստիպուած էր ծանր պատերազմ վարելու Ֆրան-
1525 ցիսկոս Ա.. դէմ: Ֆրանսիացիներին 1525 թ. այնպիսի հա-
րուած տրուեցաւ, որից ըստ երևութին դժուար էր կազ-
դուրուիլը: Ֆրանցիսկոսի անհնազանդ ստորագրեալը, Բուր-
բոն սպարապետը, կայսերական բանակի գլուխն անցած,
Պաւիայի մօտ ջարդեց Ֆրանսիայի թագաւորին և գերի
բռնեց: Բայց ֆրանսիացոց պարտութիւնն երկիւղ ազ-
դեց իտալացիներին. և Կղեմէս Է. պապը սկսաւ ջանք
գործ դնել դաշնակցութիւն խմբելու Կարլոսի դէմ: Կայ-
սերական զօրքը, որ կիսով չափ լութերականներից էր
բաղկացած, գրաւեց Հռոմը, կողոպտեց, սրբապղծեց
եկեղեցիք, թշնամանքի ենթարկեց ծէսերն ու եկեղեցի-
ները: Պապը խոնարհուեց, բայց Ֆրանցիսկոս Ա., որ
մի խայտառակ դաշնագիր էր ստորագրել, գերութիւ-
նից ազատուելու համար, հրաժարուեց իւր ստորագրու-
թիւնից և կրկին պատերազմ սկսաւ: Միևնոյն ժամա-
նակն արևելքից նոր վտանգ էր դիմում յառաջ: Սուլ-
թան Սուլէյմանը Բելգրադն առել էր, Մոգաչի մօտ
ոչնչացրել էր Հունգարիան և մերձենում էր Վեննային:
Նա Վեննան չը գրաւեց, բայց այդ ժամանակից սկսած
տաճիկները Գերմանիան և աւստրիական երկիրները մշտա-
կան երկիւղի մէջ էին պահում. Նրանք հաստատ նըս-
տան Հունգարիայում, և Կարլոսի ու Ֆերդինանդի բո-
լոր ուշքը միայն նրա վրայ էր, որ տաճիկներին աւելի
ևս առաջանալ թոյլ չը տան: Նոյն այդ միջոցին ան-

զուսպ Ֆրանցիսկոսը կրկին ու կրկին արշաւում էր Իտա-
լիա, դաշն էր կռում Սուլէյմանի հետ, մինչև իսկ Նպաս-
տում էր մահմետական ծովահէններին հիւսիսային Աֆ-
րիկէում, որոնք կողոպտում էին Միջերկրական ծովի
վրայ քրիստոնեաների նաւերը, աւերում էին Իտալիայի
և Սպանիայի ափերն և քրիստոնեայ գերիներին հազար-
ներով իբրև ստրուկ վաճառում էին: Կայսրն անխոնջ կեր-
պով կռիւ էր մղում. Նրա զօրավարները շատ անգամ
էին յաղթում Իտալիայում ֆրանսիացոց, իսկ ինքը մի
փառաւոր արշաւանք գործեց ծովահէնների դէմ և տի-
րեց Թունիսին: Այս պատերազմների ժամանակ հնար
չը կար ձեռնարկելու Վորմսի հրովարտակի գործա-
դրութեան Գերմանիայում:

Բարենորոգութեան քաղաքական ամրապնդումը.

Վեշտասաներորդ դարու քսանական ու երեսնական
տարիներին գերմանական գործերը թողնուած էին իրենց
սեփական ընթացքին: Բարենորոգութիւնն օգտուեցաւ
դրանից: Հասարակական կարծիքը բարենորոգութեան
կողմն էր, և այն երևում էր ոչ միայն ռամկական մարդոց,
այլ նաև իշխանների վրայ, — գերմանական կառավա-
րութիւնների համար բարենորոգութեան ընդունելու-
թիւնը մեծամեծ օգուտներ ունէր: Եկեղեցու հարստու-
թիւնը մեծ մասամբ աշխարհականացուում էր, այսինքն՝
անցնում էր կառավարութեան ձեռքը. նոյն իսկ հոգևո-
րական իշխանները (եպիսկոպոսները, աբբաները) կրօ-
նափոխութիւնն օգտակար էին համարում, որովհետև
նրանք ստանում էին իբրև անձնական ու ժառանգական
տիրապետութիւն այն իրաւունքները և արտօնութիւն-
ները, որոնցով առաջ օգտուում էին իբրև եկեղեցու
ներկայացուցիչներ: Սրա հետ միասին կաթոլիկ եկեղեցին
ինքնուրոյն և մեծ զօրութիւն էր, որի հետ որ և է
մանր իշխանի համար դժուար էր մրցել, իսկ լութերական
համայնքներն իրենք էին հովանաւորութիւն ու հպատա-
կութիւն խնդրում: Զարմանալի չէ, որ շատ գերմանական

կառավարութիւններ բողոքականութեան յարեցան։ Առաջին իշխաններն, որոնք պաշտօնապէս ճանաչեցին բարենորոգութիւնն իրենց երկրներում, էին Սաքսոնիոյ կայսրընտիրն ու Հեսսենի լանդգրաֆը. իսկ երբ Շպայերի աւագաժողովում կայսրն ու կաթոլիկները սպառնացին գործ դնել Վորմսի հրովարտակը, 5 իշխան և 14 քաղաք համարձակութիւն ունեցան բողոք ստորագրելու այսպիսի վճռի դէմ։ Այդտեղից ծագեց և բողոքական անունը, որ տալիս են մինչև այսօր այն եկեղեցեաց հետևողներին, որ բաժանուեցան կաթոլիկու-
1530 թիւնից ԺԶ. դարում։ Կարլոս Ե. 1530 թ. կրկին անգամ իրեն հերետիկոսների դէմ յայտարարեց Աուգսբուրգի աւագաժողովում, միայն թէ այս անգամ ցանկացաւ իմանալ նրանց կարծիքներից գլխաւորները։ Ֆիլիպպ Մելանխտոնը կազմեց նրա համար լութերական դաւանութեան համառօտութիւնը, որ և հրատարակուեցաւ «Աուգսբուրգեան դաւանութիւն» 1) անուամբ։ Աւագաժողովի սպառնալիքներն աչքի առաջ ունենալով՝ բողոքական իշխաններն հոգս քաշեցին յամենայն դէպս դաշնակցութիւն կազմելու և զինուորական ոյժ ունենալու մասին։ Նրանք միաբանեցին Շմալկալդենում (Թիւրինգիայում) միմեանց պաշտպան հանդիսանալու և կազմեցին ընդհանուր զօրագունդ։ Տաճկական պատերազմը և այլ ձեռնարկութիւնները կրկին ուրիշ կողմը դարձրին Կարլոսի ուշադրութիւնը։

Կարլոս Ե-ի կռիւը բողոքականների դէմ։ 1544

Կայսրը միայն 1544 թուին աւարտեց այն պատերազմը, որ արգելում էր նրան գերմանական գործերով զբաղուելու։ Անգլիացիների դաշնակցութեամբ նա մտաւ Ֆրանսիա և հասաւ գրեթէ մինչև Փարիզ։ Ֆրանցիսկոս Ա. ստիպուեցաւ խաղաղութեան դաշն—կռելու։ Կարլոս Ե-ին. թւում էր որ չափազանց երկար է համբերել

1) Այս դաւանութիւնը վերջնականապէս հաստատեց լութերականութեան վարդապետութիւնը։

հերետիկոսութեան զարգացման և հպատակների անհնազանդութեան, ուստի և վճռեց արմատախիլ անել բողոքականութիւնը, բայց նա համոզուած էր, որ այս կռուի համար պէտք է բացի սրից և կաթոլիկ եկեղեցու ուղղութեան գալը։ Այս պատճառաւ նա պնդեց, որ Տրիդենտում 1) եկեղեցական ժողով գումարուի։ Բողոքականները, որ վաղուց եկեղեցական ժողովի գումարումն էին պահանջում, հրաժարուեցան Տրիդենտի ժողովն ընդունելու, որովհետև պապն էր նրա գումարողն և պապի տեղակալներն էին նախագահել այնտեղ։ Նրանք զգացին որ հասել է ժամանակն իրենց դատը զէնքով պաշտպանելու, և Հեսսենի լանդգրաֆն առաջինն յարձակուեցաւ աւստրիական զօրքի վրայ։ Բայց բողոքականների մէջ համաձայնութիւն չը կար. Կարլոսը կարողացաւ շատերին բաժանել Շմալկալդենի դաշնակցութիւնից, ի միջի այլոց, սաքսոնական երիտասարդ դուքս Մորիցին։ Կայսրը ջարդեց բողոքական իշխաններից գլխաւորին, Սաքսոնիոյ կայսրընտրին, և գերի բռնեց նրան։ Դրանից յետոյ անձնատուր եղաւ Հեսսենի լանդգրաֆը։ Ծերունի Լութերը չը տեսաւ իւր հաւատակիցների պարտութիւ-
նը,—նա մեռել էր դեռ ևս 1546 թուին։ 1546

Կարլոս Ե-ի հրաժարումն։

Կարլոսը չորս տարի Գերմանիայում վարուեց այնպէս, ինչպէս վարւում են տիրապետուած երկրներում. միայն հարաւային Գերմանիայից 400 բողոքական հոգևոր հովիւ աքսորից։ Բայց այս գործերն յարուցին ոչ միայն բողոքականների զայրոյթը, կաթոլիկներն ևս համարում էին, որ կայսրն օրէնքի դէմ է գործում և սկսում է անձնիշխան դառնալ։ Ամենուրեք ընդդիմադրութեան էին պատրաստւում—պակաս էր միայն առաջնորդը։

Գործն սկսաւ վարել նոյն սաքսոնական Մորից դուքսը, որ դաւաճանել էր իւր հաւատակիցներին Շը-

1) Իտալական Տիրոլում (1545)։

մալկալդենի պատերազմում։ Դա մի խելօք, վճռական բնաւորութեան տէր և անխիղճ մարդ էր, որին ժողովուրդը Յուդա էր անուանում։ Կարլոսը նրա վրայ կատարեալ վստահութիւն ունէր. կարծում էր, որ Մորիցն ընդ միշտ խզել է իւր յարաբերութիւնները բողոքական իշխանների հետ։ Իսկ սա, ընդհակառակն, հաշտուեց բողոքականների հետ, մեծ բանակ ժողովեց և Ֆրանցիսկոսի յաջորդ Հենրիկոս Բ.ի հետ դաշն կապեց, որի զօրութեամբ ֆրանսիացիք պիտի յարձակումն գործէին կայսրութեան վրայ և ջլատէին Կարլոսի զօրութիւնը. այս ձեռնտուութեան փոխարէն Ֆրանսիան պիտի ստանար Մեց, Թուլ և Վերդէօն քաղաքները։ Բանակցութիւններն ու նախապատրաստութիւնները գաղտնի ու ճարտար կերպիւ էին վարում, և երբ Հենրիկոս Բ. մտաւ Բուրգունդեան նահանգը, Մորիցն արագութեամբ դիմեց Հարաւային Գերմանիա, ուր կայսրն էր գտնւում, ցրուեց նրա սակաւաթիւ զօրքն և քիչ մնաց, որ կայսրին էլ գերի բռնէ։ Կարլոս Ե. այս հարուածից յետոյ այլ ևս ոտքի չը կանգնեց։ Նա ինքն իրեն ծերացած ու յոգնած զգաց և ույժ չունեցաւ վերսկսելու այն անվերջ կռիւն, որ այնքան տարի վարել էր. նա վճռեց հրաժարուել քաղաքական կեանքից։ Սպանիան, Նիդերլանդները և Նոր Աշխարհը տուաւ իւր որդի Փիլիպպոսին, կայսրութիւնը և հաբսբուրգեան երկրները թողեց իւր եղբօր Ֆերդինանդին, իսկ ինքը քաշուեցաւ սուրբ Իւստի վանքն Սպանիայում։ Երկու տարուան ընթացքում, քանի դեռ կենդանի էր, նամակագրութիւն ունէր իւր որդու և եղբօր հետ, նրանց խորհուրդներ ու ցուցումներ էր տալիս, բայց խուսափում էր մարդիկ տեսնելուց և զբաղւում էր ժամացոյցներ ու ինքնաշարժ մեքենաներ շինելով։

Աուգսբուրգի խաղաղութ.

Դեռ ևս մինչև Կարլոս Ե-ի հրաժարումը Ֆերդինանդը համաձայնութիւն հաստատեց գերմանական բողո-

քականների հետ։ Աուգսբուրգի 1555 թուականի խա- 1555
ղաղութեան գլխաւոր սկզբունքն էր—cujus regio, ejus religio (որի երկիրը, նրա էլ հաւատը)։ Այդ նշանակում էր, որ կառավարութիւնները ազատ էին իրենց համար դաւանութիւն ընտրելու, իսկ հպատակները պէտք է հնազանդէին այդ ընտրութեան։ Բողոքական «աւագները» կայսրութեան կաթոլիկներից ոչ պակաս ջերմեռանդութիւնով կատար էին ածում աուգսբուրգեան օրէնքը։ Բողոքական իշխանների ու քաղաքների կոնսիստորներն ու տեսչապետները (սուպերինտենդանտ) ոչ մի բանով յետ չէին մնում վանականներից ու եպիսկոպոսներից, երբ խնդիրը վերաբերում էր այլադաւաններին հալածելուն։

Բարենորոգութեան քաղաքական հետեւանքներն երեւան եկան և պարզուեցան կրօնականների հետ միաժամանակ։ Կայսերական իշխանութիւնը մեծ չափով կորցրեց իւր հեղինակութիւնն ու ազդեցութիւնը. իշխանները զօրացան ի հաշիւ կայսեր, հոգեւորականութեան, ասպետութեան եւ քաղաքների. բողոքական իշխանները բացի սրանից յափշտակեցին եկեղեցական գործերի ղեկավարութիւնը։ Գերմանիան բաժին բաժին անող այլ բոլոր պայմաններին աւելացաւ մի նորն էլ— նա բաժանուեցաւ կաթոլիկական եւ բողոքական բանակների։

Բացի բարենորոգութեան մերձաւորագոյն հետեւանքներից պէտք է աչքի առաջ ունենալ և նրա ազդեցութիւնն Եւրոպայի մտաւոր կեանքի վրայ, որ ահագին էր։ Եթէ հումանիզմն ոչնչացրեց միջնադարեան իդէալներն ամենակրթեալ մարդկանց մտքից, բարենորոգութիւնը նոր գաղափարներ մտցրեց ժողովրդի մէջ. հումանիստները գիտնականներ ու գրագէտներ էին, բարենորոգութիւնը զարթեցրեց կրօնական զգացումը։ Անհատականութեան [1]) եւ ազատութեան սկզբունքները ամենից աւելի

---

[1]) Անհատականութիւնը կեանքի մէջ գլխաւոր նշանակութիւնը տալիս է „անհատի“, իւրաքանչիւր անձի, իրաւունքներին և ձգտումներին։

տարածուեցան բողոքական երկրներում, բայց չը մնացին առանց ազդեցութեան և այն տէրութիւնների վրայ, որոնք չարունակում էին հաւատարիմ մնալ կաթոլիկութեան։ Գիտութիւնն ազատ զգաց իրեն. ամեն տեղ առաջին կարգն անցան աշխարհական շահերն, ինքը կաթոլիկ եկեղեցին թոյլ տուաւ իւր կարգերը քննել և ուղղել և սկսեց սերունդ Եւրոպայում սկսաւ զօրանալ ի հնուց հաստատուած յարաբերութիւնների փոփոխման ձգտումն։

ԳԼՈՒԽ Բ.

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ։

Զուիցերիա․ Ցուինգլի․

Զուիցերիացոց յաջող մաքառումն Հաբսբուրգների և բուրգունդական դքսերի դէմ, նրանց արիասրտութիւնն ու ճարտարութիւնը պատերազմների մէջ, բացառիկ դիրք տուին նրանց։ Զուիցերական հետեւակազօրն երկար ժամանակ Եւրոպայում ամենից լաւ զօրքն էր համարւում. կայսրը, Փրանսիացոց թագաւորն և իտալական իշխանները վարձում էին նրանց մեծ գումարներով։ Կայսեր գերիշխանութիւնը ճանաչւում էր Զուիցերիայում անուանական կերպով, իրօք կանտոնները կառավարւում էին իւրաքանչիւրն ինքնուրոյն, իսկ մեծ գործերը վարում էր դաշնակցական խորհուրդը, որի մէջ բոլոր կանտոններն ունէին հաւասար թուով ներկայացուցիչներ։ Դաշնակցութեան մէջ գլխաւոր տեղն ունէին Բերնը, Ցիւրիխն և այսպէս կոչուող հինգ անտառային կանտոնները (Ուրին, Շուիցը, Ունթերվալդէնը, Լիւցեռնը և Ցուգը)։

Բարենորոգութիւնն սկսաւ Զուիցերիայում լութերականութեան Գերմանիայում տարածումից անկախ։ Առաջին զարկը տուաւ Ցիւրիխի քահանայ Ցուինգլին։ Սա, Լութերի պէս ծագում էր գիւղական ընտանիքից, բայց սրա ծնողները հարուստ մարդիկ էին, և երիտասարդ Ցուինգլին երբէք կարօտութիւն չէր քաշել։ Նա ոգեւորութեամբ յարեցաւ հումանիստական ուղղութեան, աւարտեց համալսարանական ընթացքը Վեննայում և առանձին եռանդով ուսումնասիրում էր Հոմերոսն ու Պղատոնը։ Ինքը մի զգաստ, խելացի, գործնական մարդ էր. որ չէ ունեցել հոգեկան ծանր կռիւ և չէր սիրում խորհրդաւորութիւն, բարեփոխութեան ճանապարհը պարզ էր նրա համար — պէտք էր բարենորոգութիւն մտցնել իւր կանտոնում, իսկ յետոյ առաջ գնալ, գրաւել միւս կանտոններն ու գերմանական երկրները։ Ցիւրիխի խորհրդարանը վիճաբանութիւն նշանակեց, ուր Ցուինգլին ախոյեան հանդիսացաւ թողութեան թղթերի, վանականութեան և կաթոլիկ եկեղեցու սնոտիապաշտ արարողութիւնների։ Խորհրդարանի աջակցութեամբ Ցուինգլին նոր ժամակարգութիւն սահմանեց, որ ամփոփում էր միայն երգեցողութիւն և քարոզ. հոգեւոր միաբանութիւնների ստացուածքը գրաւուեցաւ, վարչութիւնն ու հոգեւոր հովիւները հետամուտ էին, որ բոլոր բնակիչները կառավարութեան կրօնական կարծիքներին հետեւին. պատժի ենթարկւում էին ոչ միայն յանցանքներն, այլ նաև ցուինգլիականութիւնից և քրիստոնէական բարոյականութիւնից շեղումները և Ցուինգլիի բարենորոգութիւնը սկսաւ տարածուիլ թէ Զուիցերիայում և թէ հարաւային Գերմանիայում։ Գերմանական քաղաքներում ցուինգլիականները պատահում էին լութերականներին, և խնդիր էր լինում, թէ ինչպէս կը վերաբերին միմեանց այդ երկու դաւանութիւնները, որ բաժանուել էին կաթոլիկ եկեղեցուց։ Թէ մէկին և թէ միւսին յարձակումն էր սպառնում կայսեր և կաթոլիկ իշխանների կողմից. զանազանութիւնն երկուսի մէջ խորին չէր, — լութերականները հին հաւատից պահել էին քանի մի հայեացքներ և արարողութիւններ, որ մերժել էին զուիցերացիք։ Միութիւնը հնարաւոր և ցանկալի էր

երևում։ Բայց Լութէրը վճռաբար հակառակ յայտարարեց իրեն։ Մարբուրգում նա վիճաբանութիւն ունեցաւ Ցուինգլիի հետ այդ անհամաձայնութիւնների մասին. գլխաւորն էր հաղորդութեան խորհրդի հասկացողութեան տարբերութիւնը։ Ցուինգլին այդ համարում էր պարզապէս յիշատակ Փրկչի վերջին Ընթրիքի, իսկ Լութէրը պնդում էր, որ Քրիստոսի խօսքերը—«Ա՛յս է մարմին իմ, ա՛յս է արիւն իմ»—պէտքէ բառացի հասկանալ, որ կատարուում է մի խորհուրդ, որի զօրութեամբ հաւատացեալն իրապէս ճաշակում է Քրիստոսի Մարմինն ու Արիւնը։ Վիճաբանողներից իւրաքանչիւրն իւր կարծիքին մնաց. Ցուինգլին արտասուօք խնդրեց Լութերին ճանաչել երկու դաւանութիւնների միջև եղբայրական հաղորդակցութիւն, բայց Լութէրն հրաժարուեց վճռաբար։ Այսպէս սկսաւ հերձուածը բողոքականների կամ աւետարանականների մէջ, ինչպէս դրանք իրենց մեծ մասամբ անուանում էին։

Ցուինգլիականները, լութերականների պէս, ստիպուեցան զէնքով պաշտպանել իրենց համոզումները։ Բարենորոգութիւնն ընդունեցին երկու զօրաւոր կանտոնները, Ցիւրիխն ու Բեռնը, դրանց միացան և մի քանի ուրիշները։ Բայց անտառային կանտոնները յամառութեամբ հաստատ մնացին կաթոլիկութեան մէջ։ Զնչին պատճառով պատերազմ ծագեց, անտառային կանտոնների զօրքը դիմեց դէպի Ցիւրիխ, որ անպատրաստ էր։ Նրա սակաւաձեռն զօրագունդը պարտութիւն կրեց և կռուի խառն մէջ սպանուեցաւ ինքը Ցուինգլին։ Սակայն բողոքականները չվհատեցան, և շուտով երևեցաւ, որ ո՛չ մի կողմն անպայման գերակշռող զօրութիւն չ՛ունի։ Վերջացաւ նրանով, որ ամեն մի կանտոնին իրաւունք տրուեցաւ հաւատոյ խնդիրներում սեփական հայեցողութեամբ վարուելու։

Կալուին։ Աւետարանական քարոզութիւնը հետզհետէ թափանցեց այն տեղերն, ուր բնակիչները Ֆրանսիացիք էին, ի միջի այլոց, Ժընեւ։ Քաղաքը կառավարող ընտրական խորհրդականները կանչեցին Ֆրանսիացի քարոզիչներ, որ եկեղեցական բարենորոգութիւն մտցնեն։ Այս քարոզիչներից մէկն էր Յոհան Կալուինը, հիւսիսային Ֆրանսիայի բնակիչ։ Կալուինն առաջ եռանդով պարապել էր իրաւաբանական գիտութեամբ և դասական հեղինակների ուսումնասիրութեամբ, բայց արդէն համալսարանում ընկել էր նոր կրօնական ուղղութեան պատկանող մարդկանց ազդեցութեան տակ, և վերջապէս բողոքական էր դարձել։ Ֆրանսիայում վախենալով մնալ, անցել էր Զուիցերիա, ուր նրան էլ միւս քարոզիչների հետ կանչեցին Ժընեւ։ Կալուինն այն ժամանակ 25 տարեկան էր միայն, բայց շուտով զատուեցաւ միւսներից իւր մտքի պարզութեամբ, խօսքի համոզկերութեամբ, հաստատուն կամքով և ազդեցութեամբ մարդկանց վրայ։ Քարոզիչները յանկարծակի ձեռնարկեցին բարենորոգման և Ժընեւցոց սկսաւ ծանր թուալ նրանց խստութիւնը։ Կալուինը ստիպուեց թողնել Ժընեւն ու մի քանի տարի ապրեց հարաւային Գերմանիայում։ Բայց շուտով նրան յետ կանչեցին, և այդ ժամանակից նա մնաց հոգևոր առաջնորդ Ժընեւի մինչև իւր մահը։

Կալուինը յարեց բարենորոգութեան, երբ նրա հիմունքն արդէն դրուած էր։ Նա գործը չը սկսաւ պատերազմական տետրերով կամ քարոզներով մասնաւոր դէպքերի մասին, այլ համակարգեալ շարադրութեամբ—«քրիստոնէական հաւատոյ խրատներով»։ Հեղինակի նպատակն է ցոյց տալ, որ բողոքականութիւնը պատահական, փոփոխական կարծիքների գումարումն չէ, այլ ճշմարիտ և աստուածային եկեղեցու կազմակերպուած դաւանութիւն։ Մի այսպիսի խնդիր ամենից առաջ պահանջում էր մտքի հետևողականութիւն, և Կալուինն ի բնէ ստեղծուած էր դրա կատարման համար. նա պատրաստ էր

Լութերից ու Ցուինգլիից աւելի հեռու գնալու, երբ տրամաբանութիւնն այդ պահանջէր: Նա առանձին նշանակութիւն էր տալիս „նախասահմանութեան“ վարդապետութեան։ Լութերը պնդում էր՝ թէ մարդս փրկութեան է արժանանում ոչ իւր վաստակների շնորհիւ, այլ Աստուածային շնորհօք։ Կալուինն այդ միտքը ծայրայեղութեան հասցրեց. նրա կարծիքով, Աստուած ի սկզբանէ նախասահմանել է մի քանիսի համար փրկութիւն, առաքինութիւն և երանութիւն, միւսների համար անկումն ու կորուստ։ Նախասահմանեալները—արդարները, կազմումեն Աստուծոյ եկեղեցին, միւսները, թէև արտաքուստ Քրիստոսի կողմն էլ լինին, կռապաշտներից լաւ չեն. ընտրեալները չեն կարող հաշտուել մերժուածների հետ և իրենց բոլոր ուժով պիտի կռուին նրանց դէմ։ Ամէն մարդու համար մի սարսափելի խնդիր էր ծագում—ընտրեա՞լ է ինքը՝ թէ՞ մերժուած։ Այս խնդիրը վճռել կարելի էր միայն ներքին համոզմամբ, բայց նա, որ իրեն համարում էր ընտրեալ անդամ ճշմարիտ եկեղեցու, պարտական էր իւր վարքով վկայելու Աստուծու շնորհքի մասին։ Կալուինականներն իրենց վերայ էին առնում Ս. Գրքի մարգարէութիւններն Աստուծու ժողովրդեան վերաբերեալ, իսկ մեղաւորների և այլադաւանների վրայ նայում էին ինչպէս անօրէն փղշտացիների վրայ և վարուում էին նրանց հետ անողոք խստութեամբ։ Կալուինը ձգտում էր Ժընեւը դարձնել „սրբազան“ քաղաք. հոգևոր հովիւները, կոնսիստորը, ուր բացի քարոզիչներից բազմում էին և համայնքի ընտրուած աւագներն, վերջապէս, աշխարհական կառավարութիւնը հետևում էին բնակիչների վարքուբարքին, հալածում էին կարծիքների ամենափոքր շեղումները, ծաղրը, թեթևամիտ խօսքը, պատժում էին անբարոյականութիւնը, զուարճութեան, պարերին և խաղերին մասնակցելու համար։ Եւ պատիժները թեթև

չէին. չորս տարուան ընթացքում 15000 բնակիչներից 900 հոգի բանդը դրուեցան, 70-ից աւելի աքսորուեցան, 60 հոգի գլխատուեցան։ Յատկապէս անխնայ էր վարուում Կալուինն ազատամիտների հետ, այսինքն այն մարդոց, որոնք վստահանում էին կրօնական խնդիրներում որ և է սեփական կարծիք ունենալու—այդպիսիք նրա համար կաթոլիկներից էլ աւելի էին։ Այսպէս ազատ մտածողներից մէկը, սպանիացի Սերուետը, որ Բուրգունդիայումն էր ապրում, թղթակցութիւն սկսաւ Կալուինի հետ և ճգնում էր նրան համոզելու, որ Երրորդութեան վարդապետութիւնը սխալ է։ Կալուինը մատնեց նրան ֆրանսիական հաւատաքննութեան դատարանին և ներկայացրեց Սերուետի նամակներն ինկուիզիտորներին, որպէս զի քննութեան ժամանակ նրանց նպաստէ։ Սերուետը փախաւ և անզգուշութեամբ Իտալիոյ ճանապարհին Ժընեւ մտաւ։ Նրան անմիջապէս բանդարկեցին և Կալուինը նրա դէմ դատ սկսեց, որ վերջացաւ մեղադրուածին այրելով։ Կալուինը մի շարք այլ դատերով կորստի մատնեց իւր քաղաքական հակառակորդներին կամ այն մարդոց, որոնք նրա կարծիքների ու բարքերի քննութեան դէմ էին խօսում։ Շատ Ժընեւի ընտանիքներ քաղաքից հեռացան, բայց դրա փոխարէն այն տեղ դիմեցին հազարաւոր բողոքականներ, որոնք հալածուում էին Ֆրանսիայում։ Զուիցերիայի բողոքական համայնքներն աշխատում էին Ժընեւի շուրջն համախմբուել, և Կալուինը հաստատեց «Ցիւրիխեան համաձայնութիւնը», որ կալուինականներին ու ցուինգլիականներին միացրեց, որով կազմուեցաւ այսպէս կոչուող «բարենորոգչական» (reformatische) եկեղեցին։ Աստ հիմնուեցաւ մի ճեմերան ֆրանսիական երկրների համար քարոզիչներ պատրաստելու նպատակով։ Այս անհրաժեշտ էր, որովհետև, չը նայելով հալածանքին, կալուինականութիւնն արագութեամբ տարածուում էր

Ֆրանսիայում։ Երբ Կալուինը մեռաւ 1564 թ. Ժընեւն յիրաւի «սրբազան քաղաք» էր աւետարանական բողոքականութեան համար, նա մի օրինակ և դպրոց էր, որից թելերը ձգւում էին դէպի Ֆրանսիա, Գերմանիա, Հոլլանդիա և Անգլիա։

Անգլիա։ Բարենորոգութիւնն Անգլիայում ուրիշ ընթացք ունեցաւ, քան Գերմանիայում և Զուիցերիայում։ Անգլիացիք դժգոհ էին պապական կառավարութեան հարկաժողովներից, վանականների անգործութիւնից ու կեղծաւորութիւնից, հոգևորականների առանձնական կեանքից, որոնք, բնակուելով Անգլիայում, հպատակւում էին օտարերկրեայ պապական իշխանութեան։ Անգլիայում մարդիկ կային, որոնք ցանկանում էին բարքերի ուղղութիւն եկեղեցու մէջ և դարձ դէպի Սուրբ Գիրքը։ Սակայն լութերականութիւնը քիչ հետևողներ ունէր։
1509—1547 Հենրիկս Ը. (1509—1547), Հենրիկոս Է-ի որդին, ինքը գրեց հերքումն Լութերի դէմ և անողորմ կերպիւ այրում էր նրան հետևողներին։ *Քաղաքական պատճառները* ստիպեցին Հենրիկոսին խզելու իւր կապը պապի ու կաթոլիկ եկեղեցու հետ։ Առաջին զարկը տուին թագաւորի ընտանեկան յարաբերութիւնները, որոնց հետ խառն էին դիւանագիտական մակաբերութիւններ ևս։ Հենրիկոս Ը. իւր թագաւորութեան սկզբում գործում էր Սպանիայի և կայսրութեան հետ իբրև դաշնակից ընդդէմ Ֆրանսիայի։ Այս դաշնակցութիւնն ամրապնդուեցաւ Հենրիկոսի ամուսնութեամբ Կատարինէ Արագոնացու, Ֆերդինանդի և Իզաբելլայի դստեր և Կարլոս Ե-ի մօրաքրոջ հետ։ Երբ Հենրիկոս Ը. ձանձրացաւ սպանիական դաշնակցութիւնից, վճռեց բաժանուել Կատերինէից։ Նա յիշեց, որ իւր կինն երբեմն նշանուած էր իւր հանգուցեալ եղբօր հետ և պահանջեց, որ պապը լուծէ իւր պսակը։ Սա մերժեց։ Այն ժամանակ Հենրիկոս Ը. ընթացք տուաւ պապի և եկեղեցու դէմ եղած բողոք-

ներին։ Խորհրդարանը (պառլամէնտ) ոչնչացրեց պապական տարեոր հասոյթը, [1]) արգելեց եկեղեցական գործերի համար Հռովմ դիմելը. պապի գերիշխանութիւնն եկեղեցական գործերում անցաւ թագաւորին, որ 1534 թ. ընդունեց *անգլիական եկեղեցու գլուխ* տիտղոսը։ Կատերինէ Արագոնացու հետ ամուսնութիւնը լուծեց խորհրդարանը, և Հենրիկոսն ամուսնացաւ թագուհու նաժիշտ Աննա Բոլէյնի հետ։ Չը նայելով եկեղեցական կազմակերպութեան այսպիսի արմատական փոփոխութեան, վարդապետութիւնն ու ծիսակատարութիւնը քիչ վտանգուեցան, իսկ լութերականներին ինչպէս առաջ, այնպէս էլ այժմ շարունակում էին այրել։ Այժմ սակայն սկսան, բացի դրանից, պատուհասել և „պապականներին“։ Նախկին նախարարապետ Մօրը գլխատուեցաւ նրա համար, որ հրաժարուեց Աննա Բոլէյնին Հենրիկոս Ը-ի օրինաւոր ամուսինը ճանաչելու։

Պապական իշխանութեան վերացման յաջորդեց վանքերի ոչնչացումը։ Յանձնաժողովը, որ նշանակուած էր վանքերի կարգութիւնը հետազօտելու, զեկոյց, որ վանականների երկու երրորդը արատաւոր կեանք է վարում։ Վանքերը փակուեցան, իսկ նրանց ահագին հարստութիւնները մասամբ արքունիք գրաւուեցան, մասամբ գործ դրուեցան հողերով ապահովելու բարեգործական և դպրոցական հարստութիւնները և բազմաթիւ կալուածատէրերի հողերն աւելացնելու։ Հոգևորականութեան հետ սերտ կապ ունեցող համալսարանները ստիպուեցան փոփոխել իւրեանց դասախօսութեանց եղանակը։ Դպրոցականութիւնը դիմեց դէպի անկումն, Ս. Գրքի, յունական, լատինական և եբրայական լեզուների ուսումնասիրութիւնն առաջին տեղը գրաւեց։ Հոգևորականու-

[1]) Հռովմայ պապը ստանում էր մի տեսակ հարկ, որ կոչւում էր annat (տարեոր), այդ հարկը վճարում էին ռոճկով պաշտօն ստացողները, որոնք պարտական էին իրենց մի տարուայ ռոճիկը պապին տալու։ Ծ. Թ.

թեան վրայ պարտք դրուեցաւ կարդալու Ս. Գիրքն եկեղեցիներում և մեկնելու, և կառավարութիւնը հոգս տարաւ, որ Աստուածաշնչի անգլերէն թարգմանութիւնը տարածուի ժողովրդի մէջ։

Այս բոլոր ձեռնարկութիւնները մշակւում էին թագաւորի ազդեցութեան ներքոյ նրա նախարարների միջոցով և հաստատւում էին խորհրդարանից։ Այսպիսով բարենորոգութիւնը տեղի ունեցաւ խաղաղական իշխանութեան ճնշման եւ նրա հետեւանքներից մեկն եղաւ այդ իշխանութեան չափազանց զօրանալը։ Կառավարութիւնը չափում և ձևում էր եկեղեցական բարեփոխութիւններն իւր հայեցողութեամբ և խիստ կերպով հալածում էր ամէն մէկին, որ ցոյց տուած սահմաններից միւս կողմն էր անցնում։ Բարեփոխութիւնների գլխաւոր ղեկավարը, Թոմաս Կրոմուէլն ինքը, անյարմար ճանաչուեցաւ իբրև չափազանց հակամէտ դէպի բողոքականութիւն, և թագաւորն հրամայեց սպանել նրան։ Հենրիկոս Ը. առհասարակ երկար չէր մտածում դատական ձևերի ի չարն գործ դնելով՝ իրեն անհաճոյ անձինքներից ազատուելու մասին[1]։ Խորհրդարանն ու դատաւորներն անմռունչ կերպով կատարում էին նրա ցանկութիւնները։

Սակայն թագաւորի հաճոյքներն ու անգթութիւնը չէին կարող բարենորոգութիւնն արդարացնել—պէտքէր մտածել դրա տեսական ապացուցութեան մասին։ Հեր-
1547 րիկոս Ը-ի մահուանից (1547) յետոյ նրա անչափահաս Էդուարդ որդու խնամակալները յարաբերութիւն սկսան Կալուինի և գերմանական բողոքականների հետ։ Կէնտըրբերրի արքեպիսկոպոս Կրանմերն կազմեց անգլիկան եկեղեցու համառօտ դաւանութիւնը։ Դա միջին տեղն էր բռնում կաթոլիկութեան եւ բողոքականութեան. բացի պապին և վանականութիւնը մերժելուց,

[1]) Դրանց թւումն և երկու կանանցից։ Նա պսակուած էր 6 անգամ և գլխատել էր իր կանանցից երկուսին, իսկ երկուսից բաժանուել։ Մէկը մեռել էր բնական մահուամբ, իսկ վերջինը թագաւորից երկար ապրեց։

բացի թագաւորին եկեղեցու գլուխ ճանաչելուց, բացի Ս. Գրքին դառնալուց, անգլիկանները մտցրին հաղորդութեան երկու ձևով ևս, թոյլ տուին հոգևորականներին ամուսնանալ, ընդունեցին բողոքական վարդապետութիւնը հաւատով փրկութեան մասին. միւս կողմից, նրանք պահպանեցին եպիսկոպոսական իշխանութիւնը, թագաւորին տալով եպիսկոպոս նշանակելու իրաւունքը, պահպանեցին շատ կաթոլիկ արարողութիւններ և աշխատում էին եկեղեցու հին գաղափարը պահել, ընդունելով՝ որ շնորհի ժառանգականութեամբ նա կապուած է առաքեալների ժամանակի հետ։

Կալմարեան միութիւնը դժուարութեամբ էր պահ- Սկանդինաւեան երկրներ
պանւում Սկանդինաւեան երկրներում։ Որպէս զի շուեդական ազնուականութեան անկախութիւնը կոտրէ, Քրիստիան Բ. թագաւորը հրաւիրեց դրանց ներկայացուցիչներին Ստոքհոլմ խնճոյքի և հրամայեց նրանց կոտորել (Ստոքհոլմի արիւնահեղ բաղնիքը)։ Այսպիսի միջոցները միայն գայրոյթ էին յարուցանում, ուստի Քրիստիանը փորձեց օգտուել բարենորոգութիւնից, որպէս զի իւր իշխանութիւնը զօրացնէ. նա արգելեց գործերը Հռոմ ուղարկելը, թոյլ տուաւ հոգևորականներին ամուսնանալ։ Սակայն այս չ՚օգնեց, և Քրիստիանին հպատակ բոլոր երկրներն ապստամբեցան։ Նա ստիպուեցաւ փախչել։ Դանիմարքայում նրա ազգական Ֆրիդրիկոս Ա. մասամբ հետևեց նրան, սա հասկացաւ, թէ ինչքան օգտաւէտ կարող է լինել իր համար բարենորոգութիւնը, և ամենայն զօրութեամբ գործակցեց լութերականութեան տարածման։ Օդէնզէի աւագժո-
ղովը (1527) ճանաչեց դաւանութիւնների հաւասար իրա- 1527
ւունքն և թագաւորին տուաւ այն իրաւունքները, որ առաջ պապին էին պատկանում։ Շուեդիայում Քրիստիան Բ-ին գահավէժ անելուս ժողովրդի հերոսն ու առաջնորդն էր Գուստաւ Վազան։ Աւագժողովն ընտրեց

նրան թագաւոր, և նա, երկիրը դանիացիներից մաքրելուց յետոյ, սկսաւ յամառութեամբ աշխատել իւր իշխանութիւնն ընդարձակելու վրայ։ Գլխաւոր միջոցներից մէկն էր դարձեալ լութերականութեան ընդունելութիւնը, եկեղեցական հողերի գրաւումն, եկեղեցական բարձրագոյն իշխանութեան թագաւորին անցնելը։ Վես-
1527 տերասի (Մելար լճի վրայ) աւագաժողովը (1527) լութերականութիւնը մտցրեց Շուեդիայում։ Շատ արիւն թափուեցաւ, մինչև շուեդները հաշտուեցան տէրութեան և եկեղեցու մէջ նոր կարգերի հետ, բայց Գուստաւ Վազան յաղթական դուրս եկաւ և կատարելապէս իրականացրեց Շուեդիայում—cujus regio, ejus religio (որի երկիրը, նրա էլ հաւատը) սկզբունքը։

ԳԼՈՒԽ Գ.

ԿԱԹՈԼԻԿԱԿԱՆ ՅԵՏԱՇՐՋՈՒԹԻՒՆ։

Յիսուսեան-ներ։ Մի որև է 25 տարուան ընթացքում բարենորոգութիւնը տարածուեցաւ ամբողջ արևմտեան Եւրոպայում. Գերմանիայում, Զուիցերիայում, Անգլիայում, Դանիմարքայում, Շուեդիայում. նա ձեռք բերաւ կառավարութիւնների աջակցութիւնն և իւր կողմից կառավարութիւններին էական ծառայութիւն արաւ։ Ֆրանսիայում, Իտալիայում, Սպանիայում, Լեհաստանում կառավարութիւններն աշխատում էին ճնշել նոր կարծիքները, բայց այդ կարծիքներն այսու ամենայնիւ շատ թէ քիչ չափով մուտք էին գործում ժողովրդի մէջ և յուզմունք յառաջացնում։ Օրէ յօր աճող այս մեծ վտանգը ստիպեց, վերջապէս, կաթոլիկ եկեղեցուն արթնանալ եւ հաւաքել ոյժերը մաքառման համար։ Ինչպէս ա-

ռաջ, նոյնպէս և այժմ, կաթոլիկութեան առաջարկուած նոր խնդիրը լուծելու համար, հիմնուեցաւ մի նոր վանական միաբանութիւն — յիսուսեանների միաբանութիւնը (յիսուսեան—եզուիտ կամ ճիզուիտ)։

Այս միաբանութեան հիմնադիրն էր Իգնատիոս Լոյոլան, սպանիացի մի ազնուական, կրտսեր որդի մի բազմանդամ ընտանիքի։ Նա մտաւ զինուորական ծառայութեան մէջ եւ իւր ընկերներին հաւասար արիասիրտ, պարծենկոտ եւ արկածախնդիր էր։ Մի ամրոցի պաշտպանութեան ժամանակ ընդդէմ ֆրանսիացոց՝ ռումբը փշրեց նրա ոտքը. մի քանի ամիս հիւանդ պառկեցաւ մինչեւ վէրքի առողջանալը։ Այդ միջոցին նա շատ էր կարդում. նրա ընթերցանութեան գրքերն էին սրբոց վարքն ու ու նահատակութիւնները, ուստի սկսաւ երազել կրօնական քաջագործութիւնների, կռապաշտներին քարոզելու եւ նահատակի մահուան մասին, ինչպէս առաջ երազում էր ասպետական քաջութիւնների մասին։ Առողջացաւ թէ չէ, վանք մտաւ եւ իւր անձը մատնեց ամենատեսակ տանջանքների։ Երբեմն նրան յուսահատութիւն էր տիրում, յաւիտենական կորստեան ահն էր պատում, բայց յետոյ ունենում էր եւ պայծառ տեսիլներ, նա տեսնում էր Քրիստոսին եւ Աստուածամօրը։ Լոյոլան ուղեւորուեց Պաղեստին, որ քարոզէ անհաւատներին, բայց կաթոլիկ հոգեւորականութիւնը շտապեց նրան յետ քշել —նա շատ վտանգաւոր երեւաց։ Եւրոպա վերադառնալով՝ Լոյոլան մտածեց իւր կրթութեան թերութիւնը լրացնել եւ երեսուն եւ երեք տարեկան հասակում սկսաւ տասն եւ երկու տարեկան մանկանց հետ դպրոց գնալ։ Աստուածաբանութեան ընթացքը համալսարանում դեռ չ'աւարտած, սկսաւ արդէն քարոզել փողոցներում եւ դրա համար հաւատաքննութեան դատարանին մատնուեցաւ։ Նրան արձակեցին խրատելով աստուածաբանութիւն ուսանել։ Այն ժամանակ Լոյոլան գնաց Փարիզ եւ այնտեղ ուսաւ աստուածաբանական գիտութիւնների դասընթացքը։ Այնտեղ էլ խմբեց իւր շուրջը մի փոքրիկ շրջան համախոհների։ Սկզբում նրանք կամենում էին Պաղեստին ուղեւորուիլ, բայց ապա հրաժարուեցան այդ մտքից եւ կազմեցին կաթոլիկական հաւատոյ ու պապի հեղինակութեան պաշտպանութեան համար մի նոր միաբանութիւն։ Այդ միաբանութիւնը 1540 թ. հաստատուեցաւ պապից եւ կոչուեցաւ յիսուսեանների միաբանութիւն։

Միաբանութեանս նպատակը պատերազմական էր— նա պիտի մարտնչէր անհաւատութեան և հերետիկոսութեան դէմ: Ինչպէս նախկին զինուորական, միաբանութեանս հիմնադիր Լոյոլան գիտէր, որ պատերազմի մէջ յաջողութեան համար ամենից առաջ կարևոր է կարգապահութիւն: Ցիսուսեանները կազմում էին մի „դասակ“ կամ „վաշտ“ (compagnia), և նրանց գլխաւոր ուխտն էր անպայման հնազանդութիւնը: Միաբանութեան անդամը հրաժարւում էր իւր կամքից, կարծես թէ դառնում էր մի դիակ, կամ մի գաւազան, որ գործիք էր գլխաւորի ձեռքին: „Հրաժարուիլ իւր սեփական կամքից աւելի լաւ է, քան մեռելներ յարուցանելը“, ասում էր Լոյոլան: Ցիսուսեաններն ազատ էին ճնշող վանական կարգերից, որ վերաբերում էին աղօթքներին, արարողութիւններին, պարտաւորական ժողովներին: Լոյոլան խորհուրդ էր տալիս չը յափշտակուիլ ճգնողութեամբ, պասով, վերացական կեանքով: Միաբանութիւնը նուիրուած էր աշխարհային գործունէութեան, հասարակութեան վրայ ազդեցութիւն ձեռք բերելուն, իսկ դրա համար հարկաւոր էին առողջ, հաստատակամ և ճարպիկ մարդիկ: Ցիսուսեանների գլխաւոր գործիքը դարձաւ դաստիարակութիւնն եւ խոստովանութիւնը: Ցիսուսեան դպրոցները շուտով երևելի դարձան ճարտար դասախօսներով, իսկ որ գլխաւորն է, ազնուականների սանիկներին կատարելապէս իրենց ազդեցութեան ենթարկելու ընդունակութեամբ, որով նրանք կարողանում էին ուղղութիւն տալ սանիկների մտքին, այնպիսի դրոշմ դնել նրա վրայ, որ չէր ջնջւում մինչև մահուան օրը: Մեծ ոյժ էր դարձել յիսուսեանների ձեռքին խոստովանութիւնն և հոգևոր առաջնորդութիւնը, որին դիմում էին հաւատացեալները միշտ, կեանքի նեղութիւնների մէջ: Ցիսուսեանները զգուշանում էին չափազանց խստութիւնից, յարմարուում էին իրենց հոգևոր զաւակների դրութեան և թուլութիւններին, հանգստացնում էին նրանց խղճմտանքը բարոյական խնդիրների նուրբ[1])—բայց ոչ միշտ ուղղամիտ վերլուծմամբ և ազդեցութիւն էին ձեռք բերում բազմութեան վրայ: Առանձնապէս ջանք էին գործ դնում հասարակութեան բարձր դասակարգերն իրենց ազդեցութեան ենթարկելու: Միաբանութեանս յաջողութիւնն ահագին էր. արդէն իսկ առաջին կարգապետ Լոյոլայի ժամանակ հիմնուեցան մենաստաններ ու դպրոցներ արևմտեան բոլոր երկրներում և ուղարկուեցան քարոզիչներ Ամերիկա, Հնդկաստան և Չինաստան: Այս յաջողութիւնը չէ կարող բացատրուիլ միայն զօրեղ կազմակերպութիւնով, այլ պիտի վերագրուի ղեկավարների կենսագիտական իմաստութեան: Ցիսուսեան կարգն ուսուցանում էր՝ թէ նպատակը արդարացնում է միջոցը, և դիմում էր վատ միջոցների—բայց ունէր գաղափարական նպատակներ, որոնց կարգի անդամները ծառայում էին ոգևորութեամբ և անձնուրացութեամբ: Այդ կարգը յառաջ է բերել ոչ միայն քաղաքագէտներ ու խղճագէտներ (կազուիստ), այլ նաև հերոսներ ու նահատակներ:

Տրիդենտեան եկեղեցական ժողովը:

Ամենից ջերմեռանդ կաթոլիկները կարծում էին, որ բարենորոգութեան դէմ կռուելու համար անհրաժեշտ է արմատախիլ անել եկեղեցու միջից զեղծումները —այն ժամանակ հարկ չէր լինիլ ամաչելու կաթոլիկութեան հանրածանօթ մեղքերի համար և պարզերես կարելի էր դէմ դուրս գալ հերետիկոսների յարձակումների առաջ: Այս նպատակով Կարլոս Ե. պահանջեց եկեղեցական ժողով գումարել Տրիդենտում: Պօղոս Գ. պապը տեղի տուաւ, բայց միջոցներ ձեռք առաւ, որ

[1]) Միաբանութեան այսպէս կոչուող „խղճագէտ“ները կամ „դիպուածախօս“ները (կազուիստ) յատկապէս զբաղւում էին բարոյական „դիպուածների“ (casus, խղճմտանքի խնդիր, որ առիթ է վիճաբանութեան) լուծմամբ, որ ծագում էին խոստովանութեան կամ հոգևոր առաջնորդութեան ժամանակ:

եկեղեցական ժողովը կարող չը լինի լուրջ բարենորոգութիւնների ձեռնարկել: Նա պնդեց, որ ձայնտուութիւնը լինի համաձայն ներկայ եղողների թուին և ոչ համաձայն ազգերի թուին (ազգ-ազգ), ինչպէս այդ տեղի էր ունեցել Կոնստանցում և Բազելում: Այս օրինակ ձայնտուութիւնն առաւելութիւն էր տալիս իտալացոց: Հէնց որ եկեղեցական ժողովն անյարմար խնդիրներ էր յարուցանում, պապը ընդհատում էր նստերը կամ նոյն իսկ այլ քաղաք էր տեղափոխում ժողովը: Նստերն սկսան
1545 1545 թուին, իսկ ապա երկու անգամ ընդհատուեցան մի քանի տարով, և ժողովն աւարտեց իւր գործը միայն
1564 1564 թ: Ժողովը զբաղուեց կաթոլիկ վարդապետութեան սահմաններով և ոչ մի զիջումն չ՛արաւ բողոքականներին, թէպէտ ժողովականներից շատերը ցանկանում էին մերձենալ բողոքականներին շատ խնդիրներում: Պապական իշխանութիւնը ժողովից ստացաւ իւր առաջնորդող և անպայման հեղինակութեան կրկին հաստատութիւն և ոչ մի կէտում թոյլ չը տուաւ ակարացնելու այդ հեղինակութիւնը: Տրիդենտեան ժողովը չը վերացրեց պապական արքունիքի զեղծումները, բայց մեծ ազդեցութիւն ունեցաւ կաթոլիկութեան ճակատագրի վրայ երկու այլ կէտերում, առաջին՝ նա ճիշդ սահման դրաւ կաթոլիկ վարդապետութեան և վերջ տուաւ եկեղեցու մէջ եղած ներքին անհամաձայնութեան. երկրորդ՝ նա աւելի մեծ կարգ եւ եռանդ մտցրեց ստորին եկեղեցականների: Առանձնապէս մեծ նշանակութիւն ունեցաւ այն վճիռը, որի զօրութեամբ ամեն մի վիճակում պիտի հիմնուէր դպրանոց քահանայ պատրաստելու համար:

Սպանիա: Կաթոլիկ եկեղեցին իւր կարողութեան չափ բարեկարգւում էր: Պապերը սակայն գլխաւորապէս յոյս էին դնում աշխարհական իշխանների ջերմեռանդութեան և հերետիկոսների արիւնը թափելու վրայ: Իտալիայում շատ

նուազ էր եղել հերետիկոսութեան ազդեցութիւնը. կարճատև հալածանքներն հերիք էին, այդ երկիրը մաքրելու համար, որի ամբողջ անցեալը կապուած էր Հռոմի և հռոմէական հաւատոյ հետ: Այլ կերպարանք ունեցաւ յետադիմութիւնը Սպանիայում: Սա ԺԶ. դարում ամենազօրեղ տէրութիւնն էր համարւում Եւրոպայում: Ֆերդինանդ Կաթոլիկն ու Կարլոս Ե. թագաւորական իշխանութիւնը չափազանց բարձրացրել էին, սպանիացիք գոհ էին նրանց կառավարութիւնից: Ժողովրդի հայրենասիրութիւնն ու հպարտութիւնն ուղղուեցան դէպի զինուորական ձեռնարկութիւնները դրացիների դէմ և դէպի նորանոր երկրների յայտնագործութիւնը: Սպանիացիք որչափ աներկիւղութեամբ, յամառութեամբ և հարքաշութեամբ, նոյն չափ էլ անգթութեամբ, գոռոզութեամբ ու ագահութեամբ հռչակուեցան: Նրանք չէին սիրում և չը գիտէին էլ աշխատել. արկածների ու աւարի տենչը նրանց այնպէս էր առաջնորդում, ինչպէս թղթախաղի մոլութիւնը յափշտակում է խաղամոլին: Կրօնական տեսակէտով կասկածներն հեռու էին մրանց մտքից. հաւատը նրանց համար մի ամուր խարիսխ էր. եւ նրանց սրտագին բարեպաշտութիւնը փոխուեցաւ արիւնախանձ անհանդուրժողութեան օտարադաւաններին հանդիպելիս: Ժողովրդի համար սիրելի տեսարան էր auto da fe (հաւատոյ գործեր)—հանդիսաւոր կերպով հերետիկոսներին այրելը:

Եւրոպական պատերազմների դաշտերում անպարտելիութեան հռչակը սպանիական հետևակազօրին անցաւ, որ երկար ժամանակ վայելում էին զուիցերացիք: Աշխարհակալներ (կոնքուիստադորներ): Սպանիացոց քաջագործութիւնները նոր երկրներ յայտնագործելու ժամանակ առաւել ևս զարմանալի էին, քան թէ նրանց արիութիւնը կանոնաւոր պատերազմներում: Ամենայն տարի «կոնքուիստադորների» (աշխարհակալների) խմբերն ուղևորւում էին Նոր Աշխարհ

բախտ որոնելու: Մէկը միւսի յետևից յայտնագործուում էին Ամերիկիայի նահանգները: Մագելլանը, մի փորթուգալացի սպանիական արքունի ծառայութեան մէջ, 1520 թուին իրագործեց Կոլոմբոսի միտքն՝ հասնելու Ասիայի ափերին արևմտեան ճանապարհով: Նա իջաւ Հարաւային Ամերիկայի ափերի երկարութեամբ, ձմերեց Պատագոնիայում. մեծամեծ դժուարութիւններով պըտտեց ցամաքի շուրջն այն նեղուցի միջով, որ նրա անունն է կրում, նաւեց խաղաղական ովկիանոսի լայնութեամբ և դուրս եկաւ Փիլիպպեան կղզիների մօտ: Ինքը Մագելլանը սպանուեցաւ տեղացի բնակիչների հետ կռուելու ժամանակ, բայց նրա արշաւախմբի մնացորները դարձան Սպանիա ուղևորութիւնից երեք տարի յետոյ, կատարելով առաջին շուրջերկրեայ նաւարկութիւնը:

Մագելլանի նաւարկութեան հետ միասին ձեռնարկուեցաւ մի արշաւանքի, որ մեծամեծ նիւթական օգուտները տուաւ: Կուբայի նահանգապետն ուղարկեց իւր ստորադրեալ Կորտեսին Մեքսիկա: Կորտէսն իւր հետ ունէր 550 հետևակ զինուոր, 16 հեծեալ, 14 թնդանօթ: Սրանց առաջ բացուեցաւ մի գեղեցիկ մշակուած երկիր բազմաթիւ բնակիչներով, որոնք գիտէին հանքեր մշակել, հոյակապ շէնքեր կառուցանել և զարդարել առանձնայատուկ քանդակներով: Ացկետների ցեղն էր իշխող այդ տէրութեան մէջ, որ Ատլանտեան ովկիանոսից ձգուում էր մինչև խաղաղականը: Սպանիացիք ճարպկութեամբ օգտուեցան հպատակ ցեղերի ատելութիւնից դէպի ացկետներն և այն սնոտի երկիւղից, որ ազդում էին հրացայտ զէնքերն ու ձիանքը: Նրանք տիրեցին ացկետների մայրաքաղաքին, Մեքսիկոյին, որ ընկած էր մի մեծ լճի մէջ գտնուող կղզու վրայ:

Ացկետների թագաւորին բանտարկուած էին պահում իւր պալատում, իսկ բնակիչների վրայ հարկ էին դրել: Մինչ այդ, Կուբայի նահանգապետը լսելով Կորտեսի մեծ յաջողութեան մասին, 1000 մարդուց բաղկացած մի բանակ ուղարկեց, որ խլէ նրանից նոր գրաւած երկիրն: Կորտէսը կարողացաւ իւր դէմ ուղարկած գունդը գրաւել դէպի ինքը, բայց նրա Մեքսիկոյից բացակայած ժամանակ ապստամբութիւն ծագեց անգութ եւ ագահ աշխարհակալների դէմ, եւ ինքը Կորտէսը Մեքսիկոյ դառնալուց յետոյ կարող չ՚եղաւ մաքառել ահագին քաղաքի բնակիչների հետ: Նա ստիպուեցաւ դուրս գալ քաղաքից, որ սովամահ չլինի: Մի մութ գիշեր 1300 սպանիացիք յառաջ դիմեցին ջրանցքներով ու թմբերով, նեղուելով ացկէտների յարձակուող ամբոխից: Զօրախմբի երրորդ մասը կորստի մատնուեցաւ, կենդանի մնացածներն ամենքն էլ վիրաւորուած էին, բայց մի կերպ ձգեցին իրենց Տլասկալա բարեկամ քաղաքը: Այնտեղ Կորտէսը ժողովեց 100 հազարի չափ տեղացիք, որ հակառակ էին ացկէտներին եւ նրանց հետ միասին դիմեց Մեքսիկոյի վրայ: Կատաղի կռիւը 75 օր տեւեց, բայց վերջ ի վերջոյ Կորտէսն յաղթեց. քաղաքը կործանուեց, ացկէտների թագաւորը գերի բռնուեց եւ սպանիացոց ձեռքին տանջուեց, ամբողջ երկիրը հպատակեց նրանց:

Նոյն ձևով մի այլ աշխարհակալ, Պիզարրօ անուամբ տիրեց Պերուին: Այնտեղ գոյութիւն ունէր աչքի ընկնող քաղաքակրթութիւն, ինչպէս Մեքսիկայում: Սպանիական մի գունդ 180 հոգուց բաղկացած երևեցաւ Պերուում, դաւաճանութեամբ բռնեց թագաւորին, տիրեց նրա պալատին և նուաճեց երկիրը: Տեղացիների փորձերն սպանիական լուծը թօթափելու համար ճնշուեցան մեծ արիւնհեղութիւններով:

Սպանիացոց աշխարհակալութիւններն Ամերիկայում, Աւստրալիայում, Հարաւ—արևելեան Ասիայում ընդլայնեցին եւրոպացիների մտաւոր տեսութեան հորիզոնը, բացին ընդարձակ ասպարէզ գաղթականութեան համար, յառաջ բերին վաճառականութեան մէջ յեղափոխութիւն: Բայց նրանք բարիք չը բերին նոր յայտնագործուած երկրների բնակիչներին. Եկուորները նրանց հետ վարուում էին ինչպէս անասունների հետ, ստի-

պում էին անսովոր աշխատութիւններ անելու, անբարոյականացնում և կոտորում էին նորանց: Տեղացիք սկսան կոտորուիլ, իսկ դրանց փոխարէն ստրկական աշխատանքի համար սկսան Աֆրիկէից խափշիկներ (նեգրեր) բերել: Բայց աշխարհակալութիւնները բարիք չը բերին և սպանիացոց: Իրաւ է, ոսկին ու արծաթը հեղեղի պէս թափուեցաւ Ամերիկայից, բայց թանկագին մետաղների այս հոսանքը չը նպաստեց երկրագործութեան կամ արդիւնաբերութեան զարգացման, սպանիացիք ներշնչուեցան ատելութեամբ դէպի աշխատանքը, ոսկին ու արծաթը սպառուում էր պատերազմների և շռայլութեան համար կամ անցնում էր օտարերկրացիների ձեռքն, որոնցից գնում էին հաց, գործուածք և զէնք: Ամբողջ Եւրոպայի համար թանկագին մետաղների հոսանքը մեծ նշանակութիւն ունեցաւ, որովհետև դրա շնորհիւ աւելացաւ դրամական նշանների քանակը և վաճառականական փոխանակութիւնը շատ դիւրացաւ: Սպանիան այս երևոյթների վատ կողմերը ճաշակեց առաւելապէս: Գներն յանկարծ բարձրացան և բնակիչների այն մասը, որ կարող չէր գրպանները լեցնել այդ աւարով, նեղւում էր չը լսուած թանկութիւնից:

Փիլիպպոս Ե. Կառավարութիւնը սակայն սկզբում վաստակեց աշխարհակալութիւններից ու ոսկու առատ հոսանքից: Նախ քան աշխատանքի կանգ առնելը զգացուիլը, սպանիական կառավարութիւնը միջոց ունեցաւ Ամերիկայից լիքը նաւերով ոսկի ստանալու և ծախսելու այդ իւր քաղաքական նպատակների համար: Կարլոս Ե-ի հրաժարումից յետոյ Սպանիան, հարաւային Իտալիան, Նիդերլանդիան և սպանիական գաղութներն ընկան նրա որդու,
1555—1598: Փիլիպպոս Բ-ի (1555—1598) իշխանութեան տակ: Նա ամուսնացած էր երկրորդ անգամ Հենրիկոս Ը-ի Մարիա դստեր հետ, որ մի քանի տարի թագուհի էր

եղել Անգլիայում: Փիլիպպոսն իւր թագաւորութեան վերջին ժամանակներում իրաւունք յայտնեց և Փորթուգալական գահի վրայ. Նրա մայրը փորթուգալական իշխանուհի էր և նրան իրօք յաջողուեցաւ Փորթուգալիան միացնելու Սպանիային, սրա հետ միասին և փորթուգալեան հարուստ գաղութները Աֆրիկէում և Ասիայում: Փիլիպպոսն հոգւով զուտ սպանիացի էր. Նրան ևս իւր հօր պէս չէին գրաւեցնում իւր այլացեղ տէրութիւնների շահերը, որոնք միացած էին նրա գաւիսոնի տակը — Սպանիան նրա համար անկեան քարն էր, իսկ բոլոր մնացեալ երկրներն յաւելուածներ: Չոր, լռակաց և անողոք, նա յամառութեամբ դիմում էր դէպի նախորոշեալ նպատակը, չը ճանաչելով ոչ մի արգելք: Թագաւորութեան առաջին տարիքն հաստատեցին նրա մէջ հաւատ դէպի իւր անձն և դէպի Սպանիան: Նրա զօրավարները ջարդեցին Հենրիկոս Բ-ի զօրքը. Նրա ազգական Դոն-Ժուան Աւստրացին ոչնչացրեց տաճկական նաւատորմիղը Լեպանտոյի մօտ: Առաւել ևս խիստ էր Փիլիպպոսը ներքին գործերում: Իւր որդի Դոն-Կարլոսին, որ վճռել էր իւր հօր հակառակ ընթացք ունենալ, բանդարկեց: Չընայելով իւր հաւատարմութեան դէպի կաթոլիկ եկեղեցին, նա հնար եղածին չափ մերժում էր նոյն իսկ պապի միջամտութիւնը սպանիան եկեղեցական գործերում: Յատկապէս անտանելի էր նրա համար կրօնական կարծիքների տարբերութիւնը: Անդալուզիայի աշխատասէր և խաղաղ մօրիսկներն իսկ, նուաճուած մաւրերի սերունդը, գրեթէ ջնջուեցան, որովհետև շարունակում էին խօսել արաբերէն և կրել արաբական զգեստներ: Բողոքականութիւնը, որ սկսել էր երևիլ Սեւիլլիայում, շուտով արմատախիլ արուեցաւ. լութերականութեան հակամէտ լինելու կասկածը հերիք էր, որ մարդուն խարոյկ հանէին: Բայց Փիլիպպոսի տէրութեան մի մասում, Նիդերլանդիայում հերետիկոսութիւնը խորը արմատ էր ձգել:

Նիդերլանդիա։

Այդ երկիրը բաղկացած էր 17 նահանգներից, որ ձեռք էր բերել Մաքսիմիլիան Ա. բուրգունդական ժառանգութիւնից. ժողովրդի մի մասը խօսում էր գերմանական բարբառներով (հոլլանդացիք ու ֆլամանդացիք), իսկ միւսը ֆրանսերէնի բարբառներով (վալլոնները)։ Դեռ ևս միջին դարերում այս երկիրն յառաջադիմել էր շնորհիւ իւր բնակիչների անսովոր աշխատասիրութեան և ձեռներէցութեան։ Գէնտն ու Բրիւգգէն հիւսիսային Եւրոպայի ամենից հարուստ քաղաքներն էին։ Սպանիայի հետ միացումը նորանոր ճանապարհներ բացաւ նիդերլանդացոց առաջ, նրանք իբրև վաճառականներ գնում էին սպանիացոց յետևից, որոնք յայտնագործութիւններով և աշխարհակալութիւններով ճանապարհ էին բաց անում։ Հիւսիսային Իտալիոյ և գերմանական քաղաքների աշխոյժ վաճառականութիւնը թուլացաւ, և իւր առհացին գործերով առաջ անցաւ Անտվերպէնը։ Արդէն Կարլոս Ե. Նիդերլանդիայից չորս անգամ աւելի արդիւնք էր ստանում քան Սպանիայից, չը նայելով ոսկու հոսանքին դէպի այս երկիրը։ Նիդերլանդացիք ունէին իւրեանց յատուկ կարգերը, ամէն մի նահանգ ունէր բաւական լայն ներքին անկախ վարչութիւն, բոլորն էլ պատգամաւորներ էին ուղարկում Կարլոս Ե-ի հիմնած աշխարհախումբ ժողովը (*États généraux*, երեք դասակարգաց ժողով)։ Այս ինքնիշխանութեան պաշտպանութեան տակ լութերականների և կալուինականների քարոզութիւնը մեծ յաջողութիւն ունեցաւ, մանաւանդ հիւսիսում, հոլլանդական նահանգներում։ Փիլիպպոս Բ. պատուիրեց Պարմայի դքսուհի Մարգարիտին, որ իւր անուամբ կառավարում էր Նիդերլանդիան, խիստ միջոցներ ձեռք առնել։ Սպանիացոց փորձերը հաւատաքննութեան ընթացք տալու և բնակիչներին դրանով վախեցնելու, զայրոյթ յառաջացրին բոլոր դասակարգերի մէջ։ Քաղաքացիք և գիւղացիք հա-

զարներով ժողովւում էին հրապարակներում և դաշտերում լսելու բողոքական քարոզիչներին։ Ազնուականութեան մեծագոյն մասը Բրիւսսելում ընկերութիւն կազմեց կռուելու հաւատաքննութեան և ազատութեան խափանումների դէմ։ Նրանք խնդրագիր տուին խնամակալուհուն, հերետիկոսների դէմ ուղղուած հրամանագրերի պահանջները մեղմելու համար։[1] Նիդերլանդիայի մեծամեծներից այս շարժման հովանաւորում էին Վիլհելմ Օրանեցին, մի գերմանացի իշխան, որ մեծամեծ կալուածներ ունէր Նիդերլանդիայում, Էգմոնտ կոմսը, որ հռչակուել էր Ֆրանսիացոց դէմ վարած պատերազմներում և նիդերլանդական ծովապետ կոմս Հոռնը։ Մարգարիտ Պարմացին յաջողութեամբ էր գործում դժգոհների դէմ. բայց Փիլիպպոսն համարում էր, որ նա չափազանց գթասիրտ է և վարանամիտ։ Նա նիդերլանդիա ուղարկեց սպանիական զօրք դուքս Ալբայի հրամանատարութեան տակ, որ երևելի զօրավար էր, բայց միևնոյն ժամանակ ժանտ և անողորմ կրօնամոլ։ Ալբան անմիջապէս սկսաւ մահուան պատիժներ տալ։ Էգմոնտն ու Հոռնը դաւաճանութեամբ ձերբակալուեցան և գլխատուեցան։ Հերետիկոսական խնդիրների քննութեան համար ամենախիստ կաթոլիկներից մի յանձնախումբ կազմուեցաւ, մինչև իսկ այդ յանձնախումբն էլ բաւականաչափ հնազանդ չ'երևեցաւ, և Ալբան դատաստանն յանձնեց մի սպանիացու, որ հարցաքննում և դատապարտում էր, թէպէտ և տեղական լեզուները չէր իմանում և չէր հասկանում մեղադրուածներին։ Սկսան ապստամբութիւններ։ Վիլհելմ Օրանացին և նրա եղբայրները մտան Նիդերլանդիա. *gueux* (մուրացկանները) ձեռք ձգեցին մի քանի նաւահանգիստներ և սկսան ծովա-

[1] Մարգարիտի խորհրդականներից մէկը նրանց անուանեց «մուրացկաններ» (Gueux)։ Նրանք ընդունեցին այդ անունը և նշանաւոր դարձրին նոյն անունը կրող կռուով, որ վարեցին սպանիցոց դէմ։

հինական պատերազմ ընդդէմ սպանիացոց։ Բայց դժուարին էր Ալբային պատերազմի դաշտում յաղթելը։ Նրա պատերազմի մէջ եփուած զինուորները կոտորում էին ապստամբներին և առնուած քաղաքները հողին էին հաւասարեցնում։ Երբեմն ծաղկած և երջանիկ Նիդերլանդիան արիւնով ներկուեցաւ, իսկ ընդդիմութիւնը դարձեալ շարունակւում էր։ Պատիժների անգթութիւնն աւելացնում էր միայն յուսահատների քաջութիւնը։ Մինչև իսկ Փիլիպպոս Բ. հասկացաւ, որ այսպէս շարունակել չէր կարելի։ Նրա տէրութեան արդիւնքներն սպառեցան, թոշակ չը ստացող զինուորներն ապստամբեցան [1]), ամենալաւ նահանգներն անապատ դարձան։ Նա յետ կանչեց Ալբային։ Բայց արդէն ուշ էր։ Բնակիչների սիրտը լցուել էր ատելութեամբ դէպի նեղիչները, և Փիլիպպոս Բ-ի փորձերը կարգը չափաւորութեամբ վերականգնելու, ազդեցութիւն չունեցան։ Բոլոր նահանգները (բացի Լիւքսամբուրգից) Գէնտում դաշն կռեցին և պարտաւորութիւն յանձն առան սպանիացիներին վռնդելու և հասնելու իրենց իրաւունքների վերականգնման։ Սպանիական գործերը յաջող սկսան ընթանալ միայն այն ժամանակ, երբ Փիլիպպոս Բ. Նիդերլանդիա ուղարկեց Մարգարիտ Պարմացու որդուն, Ալէքսանդր Ֆարնէզէին։ Սա ոչ միայն առաջնակարգ զօրավար էր, այլ նա և մեծ վարչական անձն։ Նա հասկացել էր, որ պէտք էր Նիդերլանդացոց բաժանել, և դրա համար միջոց կար։ Հարաւային նահանգները, (ապագայ Բելգիան), ուր ռոմանական ցեղի բնակիչները գերակշռում էին, մնացել էին կաթոլիկ. Հիւսիսայինները, գերմանական բնակիչներով, ընդունել էին բողոքականութիւնը։ Ֆարնեզէն օգտուեցաւ այն հանգամանքից, որ երկու դաւանութիւններին հետևողները միմեանց նեղում էին, և կաթոլիկական կուսակցութիւնն իւր կողմը ձգեց։ Նա զօրքերին չէր թոյլ տալիս կողոպտելու և բռնութիւններ անելու, յարգանքով էր վերաբերւում դէպի տեղական հաստատութիւններն ու արտօնութիւնները, իսկ պատերազմի դաշտում փառաւոր յաղթութիւններ էր տանում։ Բայց նա պէտքէ կռուէր արդէն ոչ թէ անկազմ ապստամբ ամբոխի դէմ, այլ ամրակուռ դաշնակցութեան։ Հիւսիսային հինգ նահանգները 1579 թուին Ուտրեխտում յաւիտենական դաշն կռեցին իրենց անկախութիւնն և կրօնը պաշտպանելու համար։ Յետոյ նրանց հետ միացան և երկուսը, փոխարքայ (շտատհալտէր) ընտրուեցաւ Վիլհելմ Օրանացին։ Ֆարնեզէին յաջողուեցաւ նուաճելու հարաւային նահանգները. յատկապէս փառաւոր անուն հանեց նա Անտվերպենի առմամբ։ Բայց «Միացեալ նահանգները» չը կարողացաւ նուաճել։ Չը նայելով պարտութեան, նրանք շարունակում էին կռուել, երբ Վիլհելմ Օրանացին ընկաւ սպանչի ձեռքով, նրա տեղը բռնեց իւր որդին, Մօրից Օրանացին։ Ֆարնեզէի զինուորական գերազանցութիւնը վերանում էր այնու, որ նա չէր կարողանում իւր ոյժերը կենդրոնացնել նիդերլանդական պատերազմի համար, այլ ստիպուած էր ամենավճռական վայրկեաններում դարձնելու այդ ոյժերը զանազան կողմեր, Փիլիպպոս Բ-ի այլ ձեռնարկութիւններին Անգլիայում ու Ֆրանսիայում օժանդակելու համար։ Երբ Ֆրանեզէն մեռաւ, սպանիացոց գործերը վատացան, և նրանք, վերջապէս, զինադադար հաստատեցին Միացած նահանգների հետ։

1) Անտվերպենում քաղաքապահ գունդը դուրս եկաւ ամրոցից ու յարձակուեց քաղաքի վրայ, ուր փողոցներում 5000 մարդ կոտորեց։

Անգլիա։

Այն չափաւոր բարենորոգութիւնը, որին անգլիական կառավարութիւնը ձեռնարկեց, տեղի ունեցաւ առանց շփոթի։ Հենրիկոս Ը-ի և Էդուարդ Զ-ի ժամանակ խորհրդարանն ու ժողովուրդը հպատակւում էին անգլիկանութեան։ Բայց պաշտօնական դաւանութեան հրատա-

կումը սկիզբն եղաւ կրօնական շարժման։ Էդուարդ Զ. մեռաւ տասնևվեց տարեկան. գահ բարձրացաւ նրա մեծ քոյրը, Մարիան (Հենրիկոս Ը-ի և Կատարինէ Արագոնացու դուստրը), որի առաջին գործն եղաւ կաթոլիկութիւնը վերականգնել Անգլիայում։ Նրա ամուսնութիւնը Փիլիպպոս Բ. Սպանիացու հետ ցոյց էր տալիս, որ նա բոլորովին միանում է կաթոլիկական յետաշրջման։ Ինչպէս որ Հենրիկոս Ը-ի և Էդուարդ Զ-ի խորհրդարանները սիրով գործակցել էին անգլիկանութեան հաստատման, այնպէս էլ Մարիայի խորհուրդարանը հնազանդութեամբ վերացրեց անգլիկանութիւնն ու ճանաչեց կրկին պապի իշխանութիւնը։ Միայն թէ պայման դրուեցաւ, որ հոգևորականութիւնից խլուած ստացուածքը յետ չի դարձնուիլ և պիտի մնայ նախկին տէրերի ձեռքին։ Անգլիացոց մէջ շատերն եղան, որ չէին կամենում Նեռի եկեղեցուն հնազանդել, ինչպէս նրանք անուանում էին կաթոլիկութիւնը։ Սկսուեցան հալածանքներ։ Կրանմէր արքեպիսկոպոսն ու երկու այլ անգլիկան եպիսկոպոսներ կենդանւոյն այրուեցան Օքսֆորդում, իսկ նրանցից յետոյ մահուան պատիժ կրեցին շատ ուրիշ բողոքականներ։ Հալածանքը սակայն նպատակին չէր հասնում—նա կատաղեցնում էր ժողովրդին և նպաստում էր ծայրայեղ բողոքական կարծիքների տարածման։

Եղիսաբէթ. 1558—1603

Մարիա Թագուհին մեռաւ 1558 թուին և գահն ամբարձաւ նրա քոյր Եղիսաբէթը (1558—1603), Հենրիկոս Ը-ի և Աննա Բօլէյնի դուստրը։ Սրա մանկութիւնն անցել էր վտանգների մէջ։ Հայրը մերթ գքով էր շրջապատում նրան, իբրև արքայական տան իշխանուհու, մերթ յայտարարում էր իբրև ծնունդ ապօրինի ամուսնութեան և ուղարկում էր արքունիքից ինչքան կարելի է հեռու։ Մարիայի թագաւորութեան ժամանակ Եղիսաբէթի կեանքն անգամ վը-

տանգի մէջ էր, որովհետև ժողովուրդը նրան համարում էր բողոքականութեան ներկայացուցիչ, և անհամբերութեամբ սպասում էր նրա գահ բարձրանալուն, իսկ Մարիան և կաթոլիկները նրան վտանգաւոր թշնամի էին համարում և քանի մի անգամ քննել էին այն խնդիրը՝ թէ աւելի լաւ չէր լինիլ մէջտեղից վերցնել նրան։ Եղիսաբէթն իրան շատ զգոյշ էր պահում, ոչ մի դաւաճանութեան չէր խառնուում և իւր ժամանակի մեծագոյն մասը նուիրում էր հին լեզուների և մաթիմաթիկայի ուսման։ Այդ միջոցին մշակուեցաւ նրա բնաւորութիւնը—հաստատուն, աներկիւղ և իշխանասէր։ Թագուհի դառնալով՝ Եղիսաբէթը անգլիկանութեան փոխուեցաւ, այս բանի մէջ նրա գլխաւոր օգնականն եղաւ տէրութեան դիւանապետ լորդ Բէօրլին։ Պաշտօնական դաւանութեան հիմունքներն արձանագրուած էին 39 յօդուածում։ Հէնց առաջին խորհրդարանն արգելեց այլկերպ աստուածպաշտութիւն կատարել, քան եթէ այն ձևով, որ հաստատուած էր Էդուարդ Զ-ի ժամանակ[1]։ Միւս օրէնքը («գլխապետութեան վճիռ») պատուիրում էր, որ տէրութեան ծառայութեան մէջ մտնողը կամ համալսարանական աստիճան ստացողը երդուէր, որ ճանաչում է Թագուհուն գլխաւոր կառավարիչ թէ աշխարհական և թէ հոգևոր կամ եկեղեցական գործերում։ Հենրիկոս Ը-ի պէս, Եղիսաբէթն ևս պաշտպանեց անգլիկանութեան միջին ճանապարհը կաթոլիկների և բողոքականների ընդդէմ։ Բայց նա ստիպուած էր արդէն կռուելու ոչ թէ լութերականութեան և կալուինականութեան առանձին առանձին հետևողների դէմ, այլ ընդարձակ կրօնական կուսակցութեան, որ տարէ ցտարի զօրանում էր։ Այդ «պուրիտան»-ները կամ մաքրակրօն-

[1]) Այս օրէնքը կոչուում էր «միաձևութեան» վճիռ։

ները. (purus=մաքուր), պահանջում էին եկեղեցին
մաքրել կաթոլիկութեան մնացորդներից։ Նրանք դի-
մախօսում էին եպիսկոպոսութեան պաշտպանութեան և
թագաւորի եպիսկոպոս կամ քահանայ նշանակելու ի-
րաւունքի դէմ. նրանց վրդովում էին ծէսերը, գար-
դերը, զգեստները, աստուածպաշտական երգերը, որ
անգլիկան եկեղեցին փոխ էր առել կաթոլիկ-հռով-
մէականից, նրանք պահանջում էին կալուինականու-
թեան կատարեալ ընդունելութիւնը։ Եղիսաբէթն ու
նրա խորհրդականները միջոցներ էին ձեռք առնում
մաքրակրօնների դէմ. այն քահանաներին, որոնք բա-
ցարձակ կերպով կալուինականութեան էին հետևում,
զրկում էին պաշտօններից, անգլիկանութեան ամենից
յանդուգն դիմախօսներին դատապարտում էին անարգ-
սեան առաջ կանգնելու, կտրում էին նրանց ականջ-
ները, ձեռները։ Անգլիկանութիւնից հեռացածներին
հալածելու համար հաստատուեցաւ «բարձր յանձնա-
խմբի դատարանը»։ Բայց մաքրակրօնների դէմ հալա-
ծանքը չէր կարող եռանդագին լինել, քանի որ Եղի-
սաբէթը ստիպուած էր յուսահատական կռիւ մղել կա-
թոլիկների դէմ և դրա համար կարօտ էր մաքրակրօն-
ների աջակցութեան։

Մարիա Ստիւարտ։

Եղիսաբէթը քաղաքական պատճառներից ստիպուած
իւր գահակալութեան հէնց սկզբում նեցուկ եղաւ կա-
լուինականութեան Շոտլանդիայում։ Շոտլանդիայի թա-
գաւոր Յակոբ Ե-ի մահուանից յետոյ թագն անցաւ նրա
աղջիկ Մարիային, որ կրթուած էր ֆրանսիական ար-
քունիքում և ամուսնացած էր Ֆրանսիայի թագաւոր
Ֆրանցիսկոս Բ-ի հետ։ Շոտլանդական աւագանին օգ-
տուելով այն հանգամանքից, որ թագաւորական իշխա-
խանութիւնը գտնւում է թոյլ ձեռքում, կրօնական յե-
ղափոխութիւն առաջ բերաւ — պատարագը վերացուե-
ցաւ, պատկերներն ու արձաններն եկեղեցիներում ջար-

դուեցան, վանքերի հողերը գրաւուեցան ազնուական-
ներից։ Բարենորոգութեան առաջնորդութիւնը ստանձ-
նեց ասպա խիստ կալուինիստ Նոքսը։ Նա կազմակերպեց
շոտլանդական երիցական եկեղեցին։ Իւրաքանչիւր ծու-
խի մէջ եկեղեցական գործերը գտնւում էին քարոզչի
և համայնքից ընտրուած, աշխարհական հոգաբարձուաց
ձեռքին. զանազան համայնքների քարոզիչներն հաւա-
քւում էին և կազմում նահանգական ժողովներ Շոտ-
լանդական եկեղեցու։ Շոտլանդիան Մարիայի բացակայու-
թեան ժամանակ կառավարողը, թագուհու մայրը, ֆրան-
սիական զօրք կանչեց և բողոքականներին վտանգաւոր վի-
ճակի մէջ դրաւ։ Ֆրանցիսկոս Բ. մեռաւ շուտով և Մարիա
Ստիւարտը վերադարձաւ Շոտլանդիա։ Նրա համար
դժուարին էր կառավարուիլ խոժոռադէմ երեցականների
հետ, որոնք վախենում էին նրա ֆրանսիացի ազգա-
կաններից և դատապարտում էին նրան թեթևամիտ
զուարճութիւնների համար, մանաւանդ պարահանդէս-
ների։ Վերջնականապէս կորստի մատնեցին նրան այն
արկածները, որ ոչ մի կապ չ'ունէին կրօնի հետ։ Նա
երկրորդ անգամ ամուսնացաւ իւր ազգականներից մէ-
կի, կոմս Դարնլէյի հետ։ Դա մի կոպիտ և աննշան
մարդ էր, որ շուտով սկսաւ իւր կնոջ հետ վարուիլ
անվայել կերպով և հէնց նրա աչքի առաջ սպանեց
թագուհու քարտուղարին։ Մարիան, ըստ երևութին,
ներեց նրան, բայց շուտով Դարնլէյը մի դաւաճա-
նութեան զոհ գնաց, որ կազմել էր պալատական-
ներից մէկը, կոմս Բոտուէլն։ Ժողովրդի մէջ կասկածներ
ծագեցան, որ դա Մարիայի գործն էր, և կասկածներն
զօրացան, երբ Բոտուէլն յափշտակելով փախցրեց թա-
գուհուն և ամուսնացաւ նրա հետ։ Շոտլանդացիք ապս-
տամբեցան և ջարդեցին թագուհու զօրքը. Մարիան իւր
հպատակների ձեռքը չ'ընկնելու համար փախաւ Ան-
գլիա։ Եղիսաբէթը փոխանակ նրա կողմը բռնելու կամ

նրան արձակելու, հրամայեց ձերբակալել նրան, և թշուառ Մարիա Ստիւարտը 18 տարի բանդ նստաւ անգլիական դղեակներում։ Եղիսաբէթի այս փոքրոգութիւնը զանազան կերպ է բացատրւում. բացի անձնական ատելութիւնից, որ Եղիսաբէթն ունէր դէպի այս շատ վիպարկածների հրապուրիչ հերոսուհին. նա ցանկանում էր վերջ դնել յուզմունքին Շոտլանդիայում և միևնոյն ժամանակ միջից վերցնել այն անձնաւորութիւնը, որ կարող էր վտանգաւոր լինել նոյն իսկ Անգլիայում։ Մարիան իրաւունք ունէր անգլիական թագի վրայ, իբրև թոռն Հենրիկոս Է-ի դստեր,[1]) և կրում էր անգլիական թագուհու տիտղոսը։

Մարիա Ստիւարտն աւելի վտանգաւոր երևեցաւ գերութեան մէջ քան թէ ազատ ժամանակը։ Առաջ նա խճճուած էր շոտլանդական արկածներով և շփոթութիւններով, այժմ դարձաւ կենդրոն անգլիական դաւաճանութիւնների և կաթոլիկ կուսակցութեան յոյսը։ Նա ոչ մի վայրկեան յուսակտուր չէր լինում և յարաբերութիւն էր պահպանում դժգոհնդրի ու օտարերկրացիների հետ։ Մի քանի անգամ նրա խորհրդակիցներն ընկել էին անգլիական կառավարութեան ձեռքն ու գլխատուել. անմիջապէս կազմուել էին նոր դաւադրութիւններ։ Այս գաղտնածածուկ մաքառումն աւելի ևս կատաղի կերպարանք էր առնում, քանի որ այդ միջոցին յայտնի պատերազմը ճարակում էր կաթոլիկ հակազդեցութեան և բողոքականութեան մէջ։ Եղիսաբէթըն օժանդակում էր Նիդերլանդացոց ընդդէմ Փիլիպպոս Բ-ի, դրա փոխարէն Փիլիպպոսը բացաւ Բելգիայում անգլիական կաթոլիկ քահանայացուների համար մի դպրանոց, ուր աւարտելուց յետոյ նորընծաներն իրենց կեանքը վտանգի ենթարկելով՝ Անգլիա էին անցնում, կատարում իրենց հաւատակիցների հոգևոր պիտոյքն և գրգռում եկեղեցուց բանադրուած «նոր Յեզաբելի» դէմ։

1) Հենրիկոս Է. Անգլիոյ
|
Մարգարիտ Տուդոր—Յակոբ Դ. Շոտլանդիոյ
|
Յակոբ Ե.—Մարիա Գիզ։
|
Մարիա Ստիւարտ։

Անգլիական ժողովուրդը սակայն ոգևորութեամբ նեցուկ էր լինում իւր թագուհուն—նրա մէջ անձնաւորացնում էին իրենց ազգային անկախութիւնն ու զօրութիւնը։ Խորհրդարանն հաստատեց այսպէս կոչուած «ընկերակցութիւնը» (ասսոցիացիօն). բոլոր դասակարգերին պատկանող անգլիացիք երդմամբ պարտաւորուեցան պաշտպանելու թագուհուն և այն դիպուածում, երբ նա սպանուի, սպանելու այն անձին, որի համար կատարուած կլինի այդ յանցանքը, այսինքն՝ Մարիա Ստիւարտին։ Այսուամենայնիւ, երբ Փիլիպպոս Բ. պատրաստւում էր Անգլիոյ ափը դուրս գալու, մի քանի երիտասարդ կաթոլիկներ խօսք կապեցին Եղիսաբէթին սպանելու։ Նրանց մտադրութիւնը յայտնուեցաւ, և նրանց մահուան պատիժ տալուց յետոյ, դատ բացուեցաւ Մարիա Ստիւարտի դէմ, իբրև դաւադրութեան մասնակցողի։ Բաւարար ապացոյցներ չկային, բայց դատարանը մահուան դատապարտեց նրան։ Խորհրդարանը խնդրեց թագուհուց իրագործել դատավճիռն։ Երկար տատանումից յետոյ Եղիսաբէթը ստորագրեց մահուան դատավճիռն և այսու ամենայնիւ հրաժարուեց իւր տուած հրամանից, երբ այդ արդէն կատարուել էր։

Պատերազմ Սպանիայի հետ

Մարիա Ստիւարտի գլխատումը չ՚արգիլեց Փիլիպպոս Բ-ին իրագործելու իւր հին ծրագիրն Անգլիոյ վրայ յարձակուելու։ Պէտք էր կոտրել Անգլիայի ոյժն, որպէս զի հնար լինէր հասնելու կաթոլիկութեան յաղ-

թանակին Նիդերլանդիայում և Ֆրանսիայում։ Սրա հետ միասին պէտքէ ասել, որ անգլիական նաւերը մեծ վնաս էին հասցնում սպանիացոց գաղութներում և վաճառականութեան մէջ։ Ծովահինութիւնն այնպէս շահաւէտ էր, որ մի ընկերութիւն կազմուեցաւ, որը նաւեր էր սպառազինում սպանիացոց կողոպտելու համար, և ինքը թագուհին, չը նայելով ժլատութեան, իւր դրամներն այսպիսի ձեռնարկութիւնների մէջ էր գետեղում։ Ծովահէններից մէկը, Դրէկ, Մագելլանից յետոյ առաջին շուրջերկրեայ նաւարկութիւնն արաւ և ճանապարհին կողոպտեց սպանիական նաւերը։ Անգլիոյ դէմ ծովային արշաւանքի համար Փիլիպպոսի նախապատրաստութիւն-
1588 ները վերջացան 1588 թ.։ Նրա „անյաղթելի արմադան“ (նաւատորմիղը) բաղկացած էր 160 մեծ նաւերից, որոնց վերայ 20,000 ցամաք հանելու զօրք կար։ Փիլիպպոս Բ. հրամայեց Ալէքսանդր Ֆարնեզէին օժանդակել արշաւանքին, իսկ նաւատորմղի հրամանատարութիւնը տուաւ սպանիական աւագ, Մեդինա-Սիդոնիա դքսին, որ ոչինչ չէր հասկանում ծովային խնդիրներում։ Անգլիայում հայրենասիրութեամբ վառուեցաւ ամբողջ ազգը— գէնք առան ոչ միայն բողոքականները, այլ նաև կաթոլիկները, որոնք մտան կամաւոր զինուորների խմբի մէջ, մասնաւոր միջոցներով նաւատորմիղ կազմուեցաւ, որ ստոր էր սպանիականից իւր մեծութեամբ, բայց գերազանց էր նրանից ծովային յատկութիւններով։ Ամենից քիչ գործ արաւ կառավարութիւնը, թագուհին չը հրաժարուեցաւ իւր ժլատութիւնից, և զօրքը բաւականաչափ պատերազմական պաշար չ'ունէր։ Սակայն սպանիացոց չը յաջողուեցաւ իսկ ցամաք դուրս գալ։ Արմադան մեծ վնասներ կրեց անգլիական թեթև նաւերի յարձակումներից, իսկ երբ նա հասաւ Ֆլանդրիոյ եզերքին, յանկարծ ծագած փոթորիկը քշեց սպանիական նաւերը դէպի հիւսիս։ Փոխանակ ցամաք զօրք հանելու, նա-

ւատորմիղը պտտեց հիւսիսային Շոտլանդիոյ շուրջն և Իռլանդիոյ կողմից դարձաւ Սպանիա, ամենուրեք նաւեր կորցնելով փոթորկի ու անգլիացիների հալածանքի շնորհիւ։ Այս ահագին արշաւանքն աւելի ողբալի ելք չէր կարող ունենալ։ Եղիսաբէթի ժողովրդականութիւնն այս անսպասելի յաջողութիւնից յետոյ շատ աճեց. Նրա թագաւորութեան գլխաւոր գործն պահովուած էր. Անգլիան իր ազգային եւ կրօնական անկախութիւնը պաշտպանեց Սպանիայի եւ Հռոմի ընդդէմ:

Ֆրանսիայում բողոքական դաւանութիւններից Ֆրանսիա։
գլխաւորաբար տարածուեցաւ կալուինականութիւնը: Սա հրապուրում էր ֆրանսիացիներին իւր լրութեամբ, պարզութեամբ և մարտնչող բնաւորութեամբ։ Որովհետև քարոզիչները գալիս էին Զուիցերիայից, ուստի ֆրանսիական բողոքականներին սկսան անուանել հուգենոտս, այսինքն՝ դաշնակցական, անդամներ զուիցերական դաշնակցութեան։ [1]) Կառավարութիւնը թշնամաբար էր վերաբերւում դէպի բողոքականութիւնը, սակայն Ֆրանցիսկոս Ա.-ի և Հենրիկոս Բ-ի ժամանակ նա շատ էր զբաղուած կայսեր հետ պատերազմելով, իսկ Հենրիկոս Բ-ի որդոց (Ֆրանցիսկոս Բ. Կարլոս Թ. և Հենրիկոս Գ.) ժամանակ նա տկարացել էր։ Սրանք աննշան մարդիկ էին, անկարող տէրութիւնը ղեկավարելու դժուար ժամակներում. մեծ ազդեցութիւն ձեռք բերաւ գործերի վրայ նրանց մայրը Կատարինէ Մեդիչին, խորամանգ և միջոցների մէջ խտրութիւն չը դնող իտալուհին։ Զերմեռանդ կաթոլիկներին, որ պահանջում էին հերետիկոսութեան ջնջումը, գլուխ էին կանգնել Գիզ դքսերը։ Այս կուսակցութիւնը բարենորոգութեան դէմ կռուելու համար օգնութիւն խնդրեց Փիլիպպոս Բ-ից։

---

[1]) Hugenots—եղծուած eidguenots-Eidgenossen, դաշնաւորք, դաշնակիցք։

Բողոքականների առաջնորդներն էին Բուրբոնները, թագաւորական ցեղի իշխանները, որ սերում էին Սուրբ Լուդովիկոսից։ Նրանց էր պատկանում Նաւարրայի թագաւորութիւնը, Պիրենեան սարերի երկարութեամբ ձգուած, սակայն սպանիական թագաւորները խլել էին նրանց երկրների մեծագոյն մասը։ Բողոքականներն ևս օգնութիւն էին խնդրում օտարներից—Անգլիայից։

Կրօնական պատերազմներ.

Ազգամիջեան կռիւն սկսաւ հետևեալ առթիւ։ Կառավարութիւնն իրաւունք էր տուել կալուինականներին դաշտում բացօթեայ ժողովուելու քարոզիչներին լսելու համար։ Այս զիջողութիւնը զայրացրեց կաթոլիկներին. Գիզ դուքսը զէնք բարձրացրեց և Փարիզի ճանապարհին Վասսիում կոտորեց անզէն բողոքականների խումբը կանանց ու մանկանց հետ միասին, որ ժողովուել էին քարոզ լսելու համար։ Յետագայ գործողութիւններն ևս նման էին այս սկզբնաւորութեան. կռիւը մղւում էր Ֆրանսիայի բոլոր անկիւններում, թշնամի էր դարձնում մերձաւոր բարեկամներին ու ազգականներին, և անգթութիւն չէր մնում, որ թոյլ չը տային իրանց կռուող կուսակցութիւնները։ Այս վիճակը շարունակուեց 36 տարի կարճատև ընդհատումներով. կուսակցութիւնները խաղաղութեան դաշինք էին կռում և անմիջապէս կրկին պատերազմական գործողութիւնները վերսկսում։ [1])

1572 Կատարինէ Մեդիչին, 1572 թուին, խաղաղութեան դաշը կռելուց անմիջապէս յետոյ, վճռեց մի հարուածով վերջ տալ գործին։ Նա խօսք կապեց կաթոլիկ զօրավարների հետ՝ ջարդելու հուգենոտներին։ Օգոստոսի 23-ից 24-ի գիշերը [2]) Փարիզում սկսաւ կոտորածը։ Առաջին սպանուածներից մէկն էր հուգենոտների ամե-

[1]) Աչքի առաջ ունենալով այս ընդհատումները, ֆրանսիացիք 9 կրօնական կռիւներ են հաշւում։

[2]) Այսպէս կոչուած Բարթուղիմէոսեան գիշեր. 24-ին Օգոստոսի ս. Բարթուղիմէոսի տօնն է։

նալաւ զօրավարը, ծովապետ Կոլինին։ Կարլոս Թ. որ նախ ընդդէմ էր այս դաւադրութեան, մի տեսակ խելացնորութեան մէջ ընկաւ և պատուհանից կրակում էր այն թշուառների վրայ, որոնք թափառում էին փողոցներում, փրկութիւն որոնելով։ Կոտորածը շարունակուեց քանի մի օր Փարիզում և գաւառներում, ընդամէնը ջարդուեցաւ երեսուն հազար ժողովուրդ։ Պապն հրամայեց ի պատիւ այս քաջագործութեան գոհաբանական մաղթանք կատարել, բայց կաթոլիկները սխալուեցան իրենց հաշուի մէջ. բոլոր բողոքականներին կոտորելու հնար չըկար, իսկ կենդանի մնացածները վերսկսան պատերազմն առաւել ևս մեծ կատաղութեամբ։ Արքունիքը փորձ փորձեց նրանց խաղաղացնելու զիջումներով, բայց այդ քայլը ջերմեռանդ կաթոլիկների մէջ դաշնակցութիւն կազմելու պատճառ եղաւ։ Լիգայի կամ դաշնակցութեան նպատակն էր պաշտպանել կաթոլիկութեան շահերը սեփական միջոցներով, ուշք չը դարձնելով կառավարութեան և ոչ մի ցուցմունքին։ Այսպիսով Ֆրանսիայում թագաւորական կառավարութեան կից կազմուեցան կրկին երկու իշխանութիւններ. Բորդոյի մօտ, Լա Ռոշելն էր հուգենոտների մայրաքաղաքը, Փարիզում կենդրոնացած էին Լիգայի գլխաւոր ույժերն, որի գլուխն էր դուքս Հենրիկոս Գիզը։ Դաշնաւորներն անկախ կերպիւ պայմանաւորուեցան Փիլիպպոս Բ-ի հետ և ստացան նրանից օգնական զօրք։ Հենրիկոս Գ. թագաւորը փորձեց Գիզին Փարիզից քշելու, բայց մի օրուան մէջ քաղաքը ծածկուեցաւ պատնէշներով, և ինքը թագաւորը ստիպուեցաւ փախչելու մայրաքաղաքից։

Նա վրէժ առաւ Գիզից այն ժամանակուան յատուկ Հենրիկոս Դ. 1589—1610
ձևով. խաբեց նրան կեղծ հաշտութեամբ և հրամայեց սպանել։ Մի տարի էլ չ՚անցաւ, որ մի մոլեռանդ կաթոլիկ սպանեց Հենրիկոս Գ-ին (1589)։ Սպանուած թագաւորը որդիք չ՚ունէր։ Գահակալութեան իրաւունքն

անցաւ Հենրիկոս Բուրբոնին, Նաւարրայի թագաւորին, կալուինականների զօրավարին։ Սա մի անխոնջ, փառաւոր զինուորական և քաղաքագէտ էր, զուարթամիտ, հեռու մոլեռանդութիւնից ու անհամբերութիւնից։ Նրան սիրով յարեցան շատ չափաւոր կաթոլիկներ, որոնք ձանձրացել էին պատերազմներից, զինուորների ու աւազանու ինքնակամութիւնից, օտարերկրացիների տանուտէրութիւնից Ֆրանսիայում։ Բայց Լիգան չէր կամենում հպատակուել հերետիկոսին և շարունակում էր պատերազմը Փիլիպպոս Բ-ի դաշնակցութեամբ։ Հենրիկոս Դ. ջարդեց դաշնաւորներին, բայց յամառ դիմադրութեան պատահեցաւ Փարիզում։ Երկու անգամ յարձակուեց նա մայրաքաղաքի վրայ, և երկու անգամ էլ Ֆարնեզէի Նիդերլանդիայից գալուստը ստիպեց նրան յետ կենալու իւր ձեռնարկութիւնից։ Ֆարնեզէի մահն ազատեց նրան ամենավտանգաւոր թշնամուց։ Բայց, որպէս զի տիրէ Փարիզին, Հենրիկոս Դ. մի նշանաւոր քայլ անել վճռեց. նա հրաժարուեց բողոքականութիւնից և ընդունեց կաթոլիկութիւն։ Քաղաքական մակաբերութիւնները նրա համար կրօնականներից գեր ի վեր էին, և այդ վայրկենին նա վճռեց յարել Ֆրանսիացոց մեծամասնութեան դաւանութեան։ Հենրիկոս Դ-ի հրաժարումը հերետիկոսութիւնից մեծ ուրախութեամբ ընդունուեցաւ Ֆրանսիայում. ամէնքն հասկացան, որ հաշտութիւն և կարգի վերահաստատումն պիտի տեղի ունենայ։ Փարիզը թագաւորի առաջ բացաւ իւր դռները. նա շուտով վերջացրեց բանը Լիգայի մանր առաջնորդների հետ, մի քանիսին դրամով հաճեց, միւսներին էլ յաղթեց։ Բողոքականներին խաղաղացնելու համար հրատարակուեցաւ 1598 թ. Նանտի հրովարտակը։ Նրանց թոյլ տրուեցաւ աստուածապաշտութեան կարգ կատարել կալուինական ազնուականների գղեակներում և շատ քաղաքներում. երկու դաւանութիւնների կողմնակից-

ները եւ հաւասար իրաւունքի տէր ճանաչուեցան. բողոքականների առաջ բացուեցաւ բոլոր պաշտօնների մուտքը. բողոքականներին ապահովացնելու համար, որ դաշը պիտի կատարուի, մի քանի ամուր քաղաքների կառավարութիւնը բողոքականներին յանձնուեցաւ, սրանց մէջ էր և Լա-Ռոշելը։ Կաթոլիկական հակազդեցութեան ղեկավարն Եւրոպայում, Փիլիպպոս Բ. դժգոհ էր Ֆրանսիայի խաղաղուելուց։ Նրա բանակներն երկու ողմից, Պիրենեան լեռներից ու Նիդերլանդայից, դիմեցին Ֆրանսիա, բայց հետ մղուեցան Հենրիկոս Դ-ից։

Փիլիպպոս Բ. այս վերջին անորդանքից յետոյ երկար չ՚ապրեցաւ։ Նա մեռաւ 1598 թուին։ Սպանիան, 1598
որ նրա գահակալութեան ժամանակ ամենազօրաւոր տէրութիւնն էր Արևմուտքում, վատնեց իւր ոյժերն երկարամեայ կռուի մէջ կաթոլիկութեան և Փիլիպպոս Բ-ի գերիշխանութեան համար։ Բողոքականութիւնը ջընջուեցաւ Սպանիայում և Իտալիայում, կանգ առնել ստիպուեցաւ Նիդերլանդիայում, բայց Անգլիան և Միացեալ Նահանգները յաղթական դուրս եկան կռուից. Ֆրանսիան ազատուեցաւ սպանիական խնամակալութիւնից, իսկ որ գլխաւորն է, «կաթոլիկ» թագաւորի սեփական երկրները դատարկուեցան,[1]) նրա հպատակ ազգերի զօրութիւնները ջլատուեցան։

Բարենորոգութիւնը տեղի ունեցաւ երբ Լեհաստանը գտնուում էր իւր գոյութեան տագնապալից շըրջանում։ Դասակարգերի յարաբերութիւնները փոփոխուել էին։ Աւելի եւ աւելի առաջ էր անցնում զինուորական ազնուականութիւնը — շլեախտան։ Օրէնքների հաստատումն և դրամական հարկերի ժողովումը կախուած էր նահանգական և ընդհանուր աւագաժողովներից. մանր և մեծ աւագաժողովներում միայն ազնուա- Լեհաստան

[1]) Այս տիտղոսն ստացան պապից սպանիական թագաւորները Ֆերդինանդի Գրանադան առնելուց յետոյ։

կաններն (panowie) էին հաւաքւում և շլեախտիչները, իսկ հոգևորականութիւնն և քաղաքացիք մերժուած էին այդ ժողովներից։ Լեհական հացը ԺԶ. դարում մեծ քանակութեամբ արտահանւում էր. շլեախտն սկսել էր եռանդով զբաղուիլ գիւղատնտեսութեամբ և աւագաժողովներում պնդեց գիւղացիներին հողի հետ կապելու, տասանորդական հարկ նշանակելու, գիւղական ինքնավարութիւնը ջնջելու վրայ և հասաւ իր նպատակին. ճորտերը (chłop) մատնուեցան կալուածատէրերի անպատասխանատու տրամադրութեան։ Քաղաքացիների դասակարգը տանում էր ամենատեսակ անարգանքի և վնասների—խոշոր վաճառականութիւնն անցնում էր օտար ազգի վաճառականների ձեռքը, մանրը—հրէաների. քաղաքացիներին արգիլուած էր բարձրագոյն հոգևոր պաշտօններ ստանձնելը։ Շլեախտայի արտօնութիւնների այսօրինակ չափազանց զարգացումը վտանգաւոր էր տէրութեան համար, և խնդիր էր ծագում, թէ կարո՞ղ են արդեօք թագաւորները պահպանել իրենց հեղինակութիւնը, որ ձեռք էին բերել Կազիմիր Մեծն ու Կազիմիր Դ։ Միմիանցից յետոյ թագաւորող Կազիմիր Դ-ի որդիք [1]) կարող չեղան առաջնորդող դիրք ստանալ երկրի մէջ։ Պատերազմներն ու վարչութիւնը մի կերպ առաջ էին տարւում պալատական խարդաւանքներով և շլեախտիչների կամահաճութեամբ։ Սիգիզմունդ Ա.-ի միջի այլոց, մի մեծ և վտանգաւոր սխալ գործեց, թոյլ տալով, որ տեւտոնեան կարգը փոխակերպուի Պրուսիոյ ժառանգական դքսութեան (1525)։ Նախկին կարգապետը (grossmajster) Ալբրէխտ Բրանդենբուրգցին բողոքականութիւն ընդունեց, կարգի կալուածները դարձրեց դքսութեան սեփականութիւն իսկ իր ցեղի հարստութեան ընդհատման դիպուածում՝ դքսութեան իրաւունք ձեռք բերաւ իր մերձաւոր ազգականների, Բրան-

1525

[1]) Եան-Ալբրէխտ, Ալէքսանդր, Սիգիզմունդ Ա.

դենբուրգի կայսրընտիրների համար։ Սրանով Նէմանի և Վիսլայի ափերին հաստատուեցաւ մի զօրաւոր գերմանական իշխանութիւն, որ բնականաբար յարում էր Բրանդենբուրգի կողմը։

Օտարերկրացի վաճառականների մէջ մեծ տեղ էին գրաւում եւ հայերն, որոնք Ղրիմից եւ հարաւային Ռուսիայից այս միջոցները մեծ բազմութեամբ գաղթեցին Լեհաստան, ուր հաստատուեցան քաղաքներումն ու մեծ հարստութիւն ձեռք բերին։ Հայերն ունէին իրենց ներքին ինքնավարութիւնն ու օրէնսդրութիւնը, որ Մխիթար Գօշի օրինագրքի վրայ էր հիմնուած։ Լեհաստանի հայ գաղթականութեան կենդրոն էր էր Լվով (Լվօվ) քաղաքը, ուր ԺԶ. դարում հազար տնից աւելի հայ կար։ ԺԷ. դարու սկզբին կրօնական վէճեր ծագեցան Լվովում շնորհիւ յիսուսեանների եւ նրանց գործիք Նիկոլ Թորոսովիչ հայ եպիսկոպոսի (1626—1652)։ Այս խռովութիւնների շնորհիւ հայերից շատերը գաղթեցին աւստրիական երկրներն, իսկ դրանց մնացորդները բանի կերպով հաւատափոխ դառնալով, միացան ու ձուլուեցան լեհացոց հետ։ Այսպէս կորած հայերն հաշւում են 40.000 հոգի։ Այժմ իսկ կան այս գաղթականների լեհացած մնացորդները։

Թագաւորական իշխանութեան նշանակութիւնը բարձրացնելու յարմար առիթ էր բարենորոգութեան տարածումը Լեհաստանում։ Բարենորոգութիւնը Լեհաստանում։

Լեհերի մեծագոյն մասը դժգոհ էր հոգեւորականների անկեալ վարքուբարքից եւ ցանկանում էր չափաւոր եւ ընդհանուր եկեղեցական բարենորոգումն. շլեախտան պատրաստ էր ձեռք մեկնել ու եկեղեցու նիւթական հարստութեան. դեռ եւս չէր մոռացուած Հուսին հետեւողների շարժման համակրութիւնը, եւ լեհերի մէջ յաջողութեամբ քարոզում էին մորաւեան եղբայրները, հուսեանների յաջորդները. քաղաքների գերմանացի բնակիչները լաւ միջնորդ էին հիւսիսային Գերմանիայից եկող լութերականութեան եւ կալուինականութեան քարոզիչների համար։ Կալուինականութիւնն աւելի էր տարածւում, քան թէ որոշ վարդապետութիւնից զուրկ լութերականութիւնը, վերջապէս, արեւմտեան հումանիստների հետ աշխոյժ յարաբե-

րութիւնները նպաստում էին քրիստոնէութիւնից խիստ շեղուող գաղափարների տարածման. ո՛չ մի տեղ, բացի Լեհաստանից, հակաերրորդականութեան (Երրորդութեան մերժողների—անտի-տրինիտարեանների) քարոզն այնքան յաջողութիւն չունեցաւ։

Բայց կառավարութիւնը կարող չեղաւ տէր դառնալ այս շարժման. նրան չը յաջողուեցաւ ո՛չ ազգային եկեղեցի կազմել անգլիկան եկեղեցու պէս, ո՛չ աշխարհական իշխանութեան խնամակալութիւնը հաստատել եկեղեցու վրայ լութերականների ձեւով, ո՛չ էլ ճնշելու բարենորոգութիւնը Փիլիպպոս Բ-ի պէս։ Սիգիզմունդ Ա.-ի որդի, Սիգիզմունդ Բ. Աւգուստի, ժամանակ բարենորոգու-թիւնը տարածւում էր խառն ի խուռն կերպով, տիրում էր առանձին քաղաքներին ու գիւղերին։

Կրօնական վէճերը միայն սաստկացնում էին քաղաքական անիշխանութիւնը, որին հասել էր տէրութիւնը շնորհիւ մեծամեծների և շլեախտայի տիրապետութեան։ Մի արտաքին հանգամանք—պատերազմը Իօհան Ահարկուի (Գրոզնիյ) հետ Բալթեան նահանգների համար—ստիպեց սակայն մի փոքր մտածելու տէրութեան զօրութիւնը սերտացնելու և Լիթուանեան Լեհաստանի հետ միացնելու մասին։ Լիւբլինի միաբանութիւնը 1569 թուին պատճառ եղաւ ընդհանուր լեհա-
1569 լիթուանական աւագաժողովի կազմուելուն, որոշուեցաւ թագաւորի ընդհանուր ընտրութիւն և ընդհանուր դիւանագիտական յարաբերութիւն ունենալ, բայց այս երկրներից իւրաքանչիւրը պահպանեց իւր առանձին օրէնքներն ու ներքին վարչութիւնը։ Սա միակ արդիւնքն եղաւ Սիգիզմունդ Աւգուստի թագաւորութեան—իսկ ընդհանրապէս շարունակուեց և զօրացաւ ազնուականների ու շլեախտայի ինքնիշխանութիւնը։

1572 Սիգիզմունդ Բ-ի (1572) մահուամբ վերջացաւ Եա-
Հենրիկոս Ֆրանսիա- գելլոնների հարստութիւնը, և լեհացիք պէտք է նոր
ցին և Ստեփան Բա- թագաւոր ընտրէին։ Իբրև ընտրողներ ներկայացան բոլոր
տորի։ շլեախտիչներն. նրանց համագումարն համարուում էր

վեհապետ ժողովուրդ,[1]) որը ժամանակաւորապէս իշխանութիւնն յանձնում է թագաւորին և նրա հետ որոշ պայման է կապում (Pacta conventa)։ Ընտրեցին ֆրանսիական արքայազն Հենրիկոսին։ Նա երդուեցաւ, որ ամենքին դաւանութեան ազատութիւն կը տայ, ամեն երկու տարին մի անգամ աւագաժողով կը գումարէ և առանց ծերակուտի համաձայնութեան պատերազմ չի յայտարարիլ ու խաղաղութեան դաշն չի կռիլ։ Հենրիկոսն հազիւ մի քանի ամիս մնաց Լեհաստանում և փախաւ այնտեղից, որպէս զի ֆրանսիական թագին տիրանայ Հենրիկոս Գ. անուամբ։ Նրա փոխարէն ընտրեցին հունգարացի սպարապետ (վոյեվոդ) Ստեփան Բատորիին։ Սա կատարեալ թագաւոր հանդիսացաւ։ Սրա հեղինակութիւնը բարձրացաւ շնորհիւ յաջող պատերազմի Ռուսիոյ հետ, որ նա չէր վարում «հասարակապետութեան» (պօսպոլիտեան) զօրքով, այսինքն՝ շլեախտայի գնդերով, այլ կանոնաւոր զօրքով։ Իսկ ներքին գործերում չէր կամենում խաղալիկ լինել շլեախտայի և իշխանների (պաների) ձեռքին։ Բայց նրա
թագաւորութիւնը չափազանց կարճատև էր (1575—1586 1575—1586
թ.) և պատերազմներով չափազանց զբաղուած, որ կարող լինէր լուրջ բարեփոխութիւնների ձեռնարկել։

Բատորիին յաջորդ ընտրեցին շուեդական արքայազն Կաթոլիկա-
Սիգիզմունդին։ Նրա հայրն Յոհան Վազան լութերակա- կան յետա-
նութիւնից հրաժարուեցաւ և աշխատում էր Շուե- շրջութիւն
դիայում կաթոլիկութիւն վերահաստատել։ Սիգիզմունդին դաստիարակել էին յիսուսեանները. նա Փիլիպպոս Բ-ի երկրպագուն էր և իբրեւ գլխաւոր խնդիր իր քաղաքականութեան համարում էր կաթոլիկական յետաշըր-ջութիւնը։ Լեհական հոգևորականութիւնն արդէն առա-

[1]) Լեհաստանը կոչում էր Ռէչ Պոսպոլիտա (ընդհանուր գործ), այս կոչումը նման է հռովմէական respublica—հանրական գործ, կոչման, որ նշանակում էր թէ տէրութիւնը, առանձնական անձինքներից որոշելու համար, և թէ հասարակապետութիւնն, իբրև կառավարութեան ձեւ

ջուց, տրիդենտեան ժողովի ազդեցութեան տակ, սկսել էր աւելի ջերմեռանդութեամբ վերաբերուիլ իւր հոգևոր պարտաւորութիւններին: Արդէն Սիգիզմունդ Բ-ի ժամանակ երևացել էին Լեհաստանում առաջին յիսուսեանները. Բատորիի ժամանակ սկսում են նրանք իրենց ձեռքն առնել երիտասարդութեան դաստիարակութիւնը, բայց յատկապէս հովանաւորում էր նրանց Սիգիզմունդ Գ.: Թագաւորը յօգուտ կաթոլիկների սկսաւ գործ դնել իւր պաշտօններ, կալուածքներ, կապալներ ու պատիւներ բաշխելու իրաւունքը, և այս բանն ազնուականների վրայ ազդեցութիւն ունեցաւ. լեհական իշխանները հրաժարւում էին անշահաբեր բողոքականութիւնից և յարում էին այն կրօնին, որ նրանց տալիս էր քաղաքական առաւելութիւններ: Նոյն ոգւով միջոցներ հնարուեցան և արևելեան եկեղեցու վերաբերութեամբ, որ մեծ ույժ էր ռուս-լիթուանական

1595 երկրներում: Բրեստի 1595 թ. միութեան (Ունիա) նպատակն էր այդ եկեղեցու հիմքը խախտելը: Գլխաւոր նպատակին հասնելու համար, այսինքն՝ պապի գերիշխանութիւնը ճանաչել տալու համար, կաթոլիկները թոյլ տուին քահանայից ամուսնութիւնը, եպիսկոպոսի նշանակումը թագաւորեց և արևելեան (օրթո-դոքս) արարողութիւնը: Միարարական հոգևորականութիւնն հաւասար իրաւունքներ ստացաւ կաթոլիկ հոգևորականութեան, այսու կամենում էին օրթոդոքսներին դէպի միութիւնը գրաւել, հրապուրելով այն արտօնութիւններով, որ ունէին միաբանուածները: Այս ծրագիրը մասամբ միայն իրագործուեցաւ. հռովմէական կաթոլիկ հոգևորականութիւնը խանգարեց իրաւունքների հաւասարացումն և արգելք եղաւ միաբանուած եպիսկոպոսների ծերակոյտը մտնելուն:

Անիշխանութիւն: Թագաւորը ճարպիկութեամբ օգնում էր յիսուսեաններին կաթոլիկական քարոզութեան մէջ, բայց ին-

քըն անզօր էր տէրութեան կազմն ուղղելու, և չէր էլ փորձում այդ անելու: Նրա ժամանակ վերջնական կերպով հաստատուեց անիշխանութիւնը, որ կորստի մատնեց Լեհաստանը: Լեհական Հանրապետութիւնը (Ռէչ Պօսպոլիտա) դարձաւ նախարարութիւնների դաշնակցութիւն, որոնցից իւրաքանչիւրը նման էր մի անկախ տէրութեան: Երկու տարին մի անգամ գումարուում էր այդ դաշնակցութեան սէյմը միայն վեց շաբաթ ժամանակով: Իւրաքանչիւր նախարարութիւն (վոյեվոդստվօ) իւր նահանգական ժողովում ընտրում էր պատգամաւորներ սէյմի համար և տալիս էր նրանց պարտաւորիչ հրահանգներ: Սէյմում ընդհանուր վճիռ կարող էր կայանալ միայն միաձայնութեամբ, բաւական էր լոկ մի ձայն, որ ասէր «նէ պօզվալամ» —չեմ թոյլ տալիս, որպէսզի ջնջուէր ամբողջ սէյմի վճիռը:[1]) Նոյնը կարող էր անել նահանգական ժողովներում իւրաքանչիւր շլեախտիչ: Թագաւորն, ինչպէս ընդհանուր ուժի և ընդհանուր նպատակների ներկայացուցիչ, ստիպուած էր խարդաւանանքներով, կաշառով և բռնութեամբ համաձայնութիւն ձեռք բերել սէյմերում, որպէսզի տէրութեան ամենակարևոր պէտքերին գոհացումն տայ. Վերջապէս, եթէ մի զօրեղ կուսակցութիւն տէրութեան մէջ չէր հաւանում կառավարութեան ընթացքին, կազմում էր դըժգոհների մի «դաշնակցութիւն», որ հետևում էր իւր սեփական նպատակներն իրագործելու, երբեմն սրանք մինչև իսկ զէնք էին բարձրացնում, և այդ չէր համարուում պետական յանցանք: Պատմութեան մէջ տէրութեան իշխանութեան այս անօրինակ լուծումը շլեախտան համարում էր «ոսկէ ազատութիւն»:

---

[1]) Այսպէս անուանեալ ազատ արգիլման իրաւունք—liberum veto:

Ռուսիայում տեղի ունեցող շփոթմունքը լեհերին առիթ տուաւ խառնուելու Մոսկուի տէրութեան գործերին։ Բայց Լեհաստանի սեփական քայքայումն այնքան մեծ էր, որ չըկարողացաւ եւ այս առթից օգտուիլ։ Լեհական զնդերն անկախօրէն նեցուկ էին հանդիսանում ինքնակոչներին եւ կողոպտում էին մոսկովեան նահանգները։ Իսկ երբ Սիգիզմունդ Գ. վերջապէս, անձամբ պատրաստուեց Մոսկուայի վրայ արշաւելու, նրա դէմ դուրս եկաւ վերածնուած ռուս տէրութիւնը, եւ մի քանի քաղաքների ժամանակաւոր տիրապետութիւնը չըվարձատրեց լեհերին ընդհանուր ձեռնարկութեան անյաջողութեան փոխարէն։

Գերմանիա։ Աուգսբուրգի կրօնական խաղաղութեամբ (1555) ճանաչուեցաւ, որ կայսրութիւնը բաժանուած է անկախ իշխանութիւնների, որոնցից իւրաքանչիւրն ազատ է կաթոլիկութիւն կամ լութերականութիւն դաւանելու։ Բայց աուգսբուրգի խաղաղութիւնը չըլուծեց բոլոր դըժուարութիւնները։ Նախ *նա չորոշեց կալուինիստների դրութիւնը*, իսկ այդ դաւանութիւնը խիստ տարածուած էր Գերմանիայում, առանձնապէս վերին Հռենոսի ափերին։ Կալուինականութիւն ընդունել էին Հռենոսեան Պֆալցի կոմսը, Բրանդենբուրգի կայսրընտիրը և շատ կայսերական քաղաքներ։ Կալուինականները պահանջում էին լութերականներին հաւասար իրաւունք։ Խառնակութիւնների երկրորդ պատճառն էր *հոգեւոր իշխանութիւնների վիճակը*, այսինքն՝ այն նահանգների, որոնց մէջ իշխանական իրաւունքը պատկանում էր եպիսկոպոսին կամ աբբային։ Աուգսբուրգի խաղաղութիւնը հաստատեց այսպէս կոչուած reservatum ecclesiasticum (եկեղեցական վերապահումն). մի կողմից պահանջուում էր, որ այդ իշխանութիւնները գըտնուէին կաթոլիկների [1]) ձեռքին, բայց միւս կողմից—

[1]) Եթէ եպիսկոպոսը լութերականութիւն էր ընդունում, պէտք է հրաժարուէր իւր աստիճանից։

բնակիչներին դաւանութեան ազատութիւն էր տրուում։[1]) Դաշինքի այս յօդուածներն անդադար խանգարուում էին. բողոքականները մի շարք հոգևոր իշխանութիւններ դարձրել էին աշխարհական տիրապետութիւններ. կաթոլիկ եկեղեցական իշխաններն էլ հալածում էին իրենց բողոքական հպատակներին։ Կայսրից և կայսերական վարչութիւններից չէր կարելի սպասել այս վէճերի լուծումը։ Գերմանական Հաբսբուրգները չափազանց զբաղուած էին իրենց աւստրիական, բոհեմական, հունգարական կալուածների հոգսերով և տաճիկների դէմ պատերազմով. իսկ կայսերական վարչական հաստատութիւնները կորցրել էին բոլոր իրենց հեղինակութիւնը։ Նոյն իսկ աւագաժողովը (*ռայխստագ*) նշանակութիւն ունէր միայն կայսեր ընտրութեան համար։ Կարգին կայսերական զօրք կազմելու և մշտական հարկ մտցնելու բոլոր փորձերն անյաջող անցան, որովհետև դասակարգերն աշխատում էին ինչքան կարելի է քիչ վճարել և քիչ ծառայել։ Մնում էր որ իւրաքանչիւր ոք իւր ապահովութեան մասին հոգար և որոնէր դաշնակիցներ։ *Իշխանների երկու դաշնակցութիւն* կազմուեցաւ ԺԷ. դարում, որ կարևոր դիպուածում կարող էր նշանաւոր զօրաբանակներ դաշտ հանել. այդ դաշնակցութիւններն էին՝ կաթոլիկ լիգան, որ ստեղծել էր եռանդուն Մաքսիմիլեան Բաւարացին, և բողոքական միութեանը (ունիա), որ կազմել էին կալուինականները Պֆալցի-կոմս Ֆրիդրիխի առաջնորդութեամբ։ Լութերական իշխանները չը կազմեցին մի այսպիսի կանոնաւոր դաշնակցութիւն, բայց նոյնպէս առանձին խմբակցութիւն էին կազմում Սաքսոնիոյ դքսի շուրջը։

Գործերի այս վիճակը կարող էր ամէն րոպէ պատերազմ ծագեցնել, մանաւանդ աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Գերմանիոյ արևմտեան սահման-

[1]) Ընդհանուր օրէնքից—cujus regio, ejus religio, իբրև բացառութիւն։

ներում կրօնական պատերազմ էր մղւում: Հռենոսեան
1610 իշխաններից[1] մէկի մահուան պատճառաւ 1610 թուին
պէտք է նրա կաթոլիկ բնակիչներ ունեցող կալուածներն
անցնէին բողոքական ժառանգներին, ուստի և cujus
regio, ejus religio օրէնքի սկզբունքով, պէտք է ուժով
բողոքական դարձնէին այդ կաթոլիկ հպատակներին:
Կաթոլիկ իշխանները չէին կամենում այդ թոյլ տալ,
կայսրը խառնուեցաւ վէճին այն յուսով, որ այդ իշխա-
նութիւնը միացնի Հաբսբուրգեան տան կալուածներին,
բայց բողոքականները զօրք մտցրին վիճելի երկիրն ու
օգնութեան կանչեցին Ֆրանսիական թագաւորին, Հեն-
րիկոս Դ-ին: Սա եռանդով օժանդակեց դրանց, և ֆրան-
սիական բանակներն արդէն սահմանն անցնում էին, երբ
Ռաւալեակ անունով մէկը, յիսուսեանների աշակերտնե-
րից, մահացու կերպով վիրաւորեց Հենրիկոս Դ-ին: Այս
դիպուածը խանգարեց Ֆրանսիացոց յարձակման, և պա-
տերազմը մի առ ժամանակ յետաձգուեցաւ:

Կաթոլիկական յետաշրջութիւնն Աւստրիայում:

Պատերազմը բռնկեց Հաբսբուրգեան երկրներում
տեղի ունեցած դիպուածների պատճառով: Բարենորո-
գութիւնը մուտք էր գործել և այդ երկրներն և Ֆեր-
դինանդ Ա-ի յաջորդ Մաքսիմիլեան Բ. մինչև իսկ հո-
վանաւորում էր նրա տարածմանը: Շտիրիան, Կարին-
տիան, և յատկապէս Բոհեմիան, Սիլեզեան ու Մորաւիան
լիքն էին բողոքականներով. շատ քաղաքներում և իշ-
խանական դղեակներում նախկին կաթոլիկ եկեղեցիք
փոխարկուել էին կալուինական և մորաւեան եղբայրու-
թիւնների աղօթատների: Կաթոլիկ հոգևորականութիւնը
սկսաւ եռանդով մաքառել այլադաւանների դէմ. դրանց
գլուխ կանգնեցին յիսուսեանները, և նրանց յաջողուե-
ցաւ նոր վարդապետութիւնների տարածման առաջն
առնել: Բայց կաթոլիկ հակազդեցութիւնը գերակշռու-
թիւն ստացաւ միայն, երբ աշխարհական իշխանութիւնը

1) Կլեւէի դքսի:

նրա կողմն անցաւ: Ֆերդինանդ արքիդուքսը, որ Ռու-
դոլֆ Բ. կայսեր ժամանակ ստանձնեց Շտիրիայի և
Կարինտիայի կառավարութիւնը, ույժ գործ դրաւ. բոլոր
բողոքական քարոզիչներին հրամայուեցաւ դուրս գալու
արքիդուքսի նահանգներից: Ոստիկանները զինուորական
գնդերով շրջում էին բոլոր քաղաքները, գիւղերն ու
դղեակները, որպէսզի ստուգեն՝ թէ արքիդուքսի հրա-
մանը կատարուա՞ծ է և կաթոլիկ եկեղեցին վերահաս-
տատուա՞ծ է իւր իրաւունքների մէջ: Բնակիչների հո-
գևոր առաջնորդութիւնը ստանձնեցին յիսուսեանները:
Կէս խելացնոր և աստեղաբաշխութեան մէջ խորասու-
զուած Ռուդոլֆ Բ. պատրաստ էր հետևելու Ֆերդի-
նանդի օրինակին, նա սկսաւ միջոցներ ձեռք առնել այլա-
դաւանների դէմ Բոհեմիայում: Բայց սա չունէր Ֆերդի-
նանդի եռանդը, իսկ չէխերը կամ բոհեմացիք աւելի
ընդունակ էին իրենց պաշտպանելու, քան թէ հարա-
ւային դքսութիւնների բնակիչները: Բոհեմական դասա-
կարգերն ստիպեցին Ռուդոլֆին իրենց տալու «արքայա-
կան մեծութեան հրովարտակ», որ դաւանութիւնների
ազատութիւն էր յայտարարում և թոյլ էր տալիս բողո-
քական եկեղեցիներ կառուցանել: Բայց Ռուդոլֆի մա-
հուանից յետոյ թագը պիտի անցնէր արքիդուքս
Ֆերդինանդին[1]: Բոհեմական դասակարգերը վախենում
էին, որ Ֆերդինանդը Բոհեմիայումն էլ այնպէս կը վարուի
ինչպէս Շտիրիայում և Կարինտիայում: Բոհեմական
ազնուականները կոմս Տուրնի առաջնորդութեամբ Պրա-
գայում յարձակուեցան պալատի վրայ, ներս խուժեցին և
կայսեր երկու խորհրդականներին պատուհանից վայր
գլորեցին (1618): Այս գործողութիւնը վախճանական 1618
պառակտման հասցրեց, սկսաւ ներքին պատերազմ, որ
երեսուն տարի շարունակուեցաւ:

1) Ռուդոլֆից յետոյ և Ֆերդինանդից առաջ թագաւորեց մի
քանի տարի Ռուդոլֆի անզաւակ եղբայր Մատթէոսը:

Երեսնամեայ պատերազմ 1618—1648: Բոհեմացիք դիմեցին կալուինականների միութեան առաջնորդ Ֆրիդրիխ Պֆալցի կոմսին և ընտրեցին նրան թագաւոր: Նա թագն ընդունեց և կոմս Տուրնին օգնութեան ուղարկեց վարձկան զօրք կոմս Մանսֆելդի հրամանատարութեան տակ: Ֆերդինանդն իւր կողմից յարաբերութիւն էր սկսել կաթոլիկ դաշնակցութեան (լիգա) և Սպանիայի հետ: Բաւարիոյ իշխան Մաքսիմիլեանից նա օգնութիւն ստացաւ մի լաւ բանակ Տիլլիի զօրավարութեամբ: Կայսեր և լիգայի զօրքը բոհեմացոց և գերմանական բողոքականներին Պրագայի մերձակայքում, Սպիտակ լերան մօտ, կոր ի գլուխ ջարդեց: Ֆրիդրիխն ստիպուեցաւ փախչել Բոհեմիայից, իսկ Տիլլին գրաւեց նրա հռենոսեան երկրները: Ֆերդինանդը պատռեց «արքայական հրովարտակը» և սկսաւ կաթոլիկութիւնը վերահաստատել Բոհեմիայում: Միևնոյն ժամանակ նա յայտարարեց, որ թոյլ չի տալ բողոքականներին աուգսբուրգեան դաշնիքը խախտելու, և միջոցներ ձեռք առնել սկսաւ, կաթոլիկութեան դարձնելու այն հոգևոր իշխանութիւնները, որոնք 1552 թուից յետոյ դարձուած էին աշխարհական բողոքական իշխանութիւններ: Այս քաղաքականութիւնը յեղաշրջումն էր սպառնում մի ամբողջ շարք գերմանական նահանգներին: Հիւսիսային իշխաններն որոշեցին ընդդիմանալ և օգնութեան կանչեցին Դանիմարքայի թագաւոր Քրիստիան Դ-ին: Լիգան անմիջապէս Տիլլին ուղարկեց հիւսիս, իսկ Ֆերդինանդ կայսրը, որ նիւթական միջոցներ չունէր, հաւանութիւն տուաւ բոհեմական կոմս Վալլենշտայնի (իսկապէս Վալդշտայն) առաջարկութեան՝ բանակ կազմելու ազատակամ զինուորներից և վճարելու այդ զինուորների վարձն այն երկրներից հարկեր առնելով, ուր բանակը կը գործէ [1]: Վալլենշտայնի կոչին համախմբուեցին անմիջապէս յիսուն հազար զինուոր զանազան

[1]) Այդ միջոցին այսօրինակ զօրաժողովների դէպքեր շատ կային, միայն թէ Վալլենշտայնինը աչքի ընկնող յաջողութիւն ունեցաւ:

ազգերից ու դաւանութիւններից, որոնք յոյս ունէին լաւ ապրելու և հարստանալու ձեռնարկու զօրապետի հրամանատարութեան ներքոյ: Այսպիսի բանակը ո՛չ հայրենասիրութիւն գիտէր և ո՛չ կրօնական ոգևորութիւն, բայց անձնատուր էր իւր զօրագլխին և հպարտ զինուորական քաջասրտութեան: Վալլենշտայնը պաշտպանում էր Էլբայի և Դանուբի գիծը կոմս Մանսֆելդի և հունգարացիների դէմ, իսկ Տիլլին ջարդեց դանիացոց թագաւորին: Դանիմարքան շտապեց խաղաղութեան դաշն կռելու, իսկ Ֆերդինանդը հրատարակեց «վերահաստատութեան» հրովարտակը, որի զօրութեամբ բոլոր հոգևոր տիրապետութիւնները, որ 1552 թուից յետոյ բողոքականութեան էին անցել, յետ էին դարձւում կաթոլիկ եկեղեցուն:[1])

Բողոքականներին օգնութեան եկաւ շուեդացոց երիտասարդ թագաւոր Գուստաւ Ադոլֆը: Սրա հայրը ոտքի էր կանգնել իւր եղբօրորդի Սիգիզմունդի դէմ, երբ սա կամենում էր լեհական զօրքով լութերականութիւնը ճնշել Շուեդիայում: Սիգիզմունդի արշաւանքն անյաջող ելք ունեցաւ, իսկ շուեդները բողոքականների զօրագլխին թագաւոր հրատարակեցին Կարլոս Թ. անուամբ: Գուստաւ Ադոլֆը հօրից ժառանգել էր հաստատամտութիւն և բարեխղճութիւն, ազգային պէտքերի ըմբռնումն ու անկեղծ կրօնական զգացմունք: Բացի դրանից, նա ունէր մի տեսակ հրապոյր—նրան սիրում էին և հաւատում: Առաջին երիտասարդութեան օրերում նա ծանր պատերազմներ էր վարել Ռուսիոյ և Լեհաստանի դէմ, գրաւել էր Ինգրիան, Կորիլեան և Լիֆլանդիան և կազմել էր պատերազմի մէջ փորձուած մի զօրաբանակ: Գերմանիա անցաւ նա 1630 թ.—բացի նրանից, որ չէր կամենում 1630

Գուստաւ Ադոլֆ:

[1]) Հրովարտակը վերաբերում էր 2 արքեպիսկոպոսութեան, 12 եպիսկոպոսութեան, 120 մանր իշխանութիւններին:

թոյլ տալ Գերմանական բողոքականութեան ջնջումը,
դիտաւորութիւն ունէր Շուեդիոյ համար ձեռք բերել
Բալթեան ծովի հարաւային ափերի տիրապետութիւնը։

Վալլէնշտայնի չափից դուրս զօրանալուն դէմ զայ-
րացած իշխանների ազդեցութեան տակ կայսրը հրաժարե-
ցրեց նրան, և Գուստաւ Ադոլֆի ընդդէմ ուղարկեց
փորձուած Տիլլիին։ Սա պաշարեց Մագդեբուրգը (Սաք-
սոնիայում), որ շուեդական թագաւորի կողմն էր ան-
ցել։ Քաղաքն յամառութեամբ պաշտպանուում էր, բայց
այսուամենայնիւ առնուեցաւ և կողոպտուեցաւ։

Շուեդներն ու նրանց դաշնակից սաքսոնացիք Տիլ-
լիի հետ զարնուեցան Լայպցիգի մօտ։ Գուստաւ Ադոլֆը
փոխեց զինուորական սովորական կազմը. նա աւե-
լացրեց հրացանակիրների [1]) թիւը հետևակազօրքի մէջ
և նուազեցրեց նիզակաւորներինը. նրա գնդերն սա-
կաւաձեռն էին, բայց աւելի արագաշարժ, թնդանօթա-
ւոր գնդերն ունէին թեթև թնդանօթներ և շուտ շուտ
էին կրակում, քան թէ կայսերականները, վերջապէս,
նա առանձին ուշադրութիւն էր դարձրել պահեստի
գնդերի վրայ։ Չընայելով՝ որ Սաքսոնացիք պատերազմի
դաշտից քշուեցան, շուեդները կատարեալ յաղթութիւն
տարան։ Հիւսիսային Գերմանիան թշնամուց մաքրելուց
յետոյ, Գուստաւ Ադոլֆը դիմեց հարաւ-արևմուտք։
Տիլլին ժողովեց իւր զօրքի մնացորդներն, նոր օժան-
դակ գնդեր ստացաւ և փորձեց Լեխ գետի անցքը փա-
կել, բայց կրկին ջարդուեցաւ և մահամերձ վիրաւո-
րուեցաւ։ Բաւարիան, կաթոլիկ յետաշրջութեան գլ-
խաւոր նեցուկներից մէկը, նուաճուեցաւ։ Կայսրն ուրիշ
ելք չըգտաւ պատերազմը շարունակելու համար, քան
թէ կրկին Վալլէնշտայնին դիմելը։ Սա առանձին պայ-
մաններ դրաւ իւր համար. ինքը պիտի ստանար կայ-

[1]) Սրանք զինուած էին «արքեբուզներով», ծանր հրացաննե-
րով, որոնցից կրակում էին, խողովակն առանձին նեցուկների վրայ
դնելով.

սերական բանակի գլխաւոր հրամանատարութիւնը, մի-
այն ինքը պիտի իրաւունք ունենար ստացուածքները
արքունիք գրաւելու և յանցաւորներին ներելու. «վե-
րահաստատման» հրովարտակի գործադրութիւնը դադ-
րեցուում էր։ Վալլէնշտայնը Գուստաւ Ադոլֆի դէմ ևս
գործ դրաւ իւր սիրած գործողութեան եղանակը։ Նա
փակուեցաւ ամրացրած բանակում Նիւրենբերգ քաղա-
քի մօտ, որ գրաւել էին շուեդները, դաշտ չէր դուրս
գալիս և ուղարկում էր իւր թեթև հեծելազունդը պա-
շարը խլելու և հաղորդակցութիւնները կտրելու համար։
Գուստաւը փորձեց բանակը յարձակումով առնել, բայց
յետ մղուեցաւ և ստիպուեցաւ Դանուբից դէպի հիւսիս
քաշուելու։ Վալլէնշտայնը դիմեց անմիջապէս դէպի
Սաքսոնիա. և պատրաստուում էր ձմեռելու համար
բանակն ամրացնելու։ Այս անգամ Գուստաւը թոյլ չը-
տուաւ, որ նա իւր պատրաստութիւններն աւարտէ և
ստիպեց նրան ճակատելու (Լիւցէնի մօտ, Մերզեբուրգի
շրջակայքում—1632)։ Արիւնահեղ կռիւն արդէն երկու 1632
ժամ էր որ շարունակուում էր, երբ Վալլէնշտայնը
իւր պահեստի գնդերն արձակեց շուեդների դէմ և նը
րանց առաջին շարքը յետ մղեց։ Գուստաւ Ադոլֆն ար-
շաւեց վտանգուած տեղը, հանդիպեց թշնամու հեծե-
լազնդին և սպանուեցաւ։ Թագաւորի մահը կատաղա-
ցրեց միայն շուեդներին և նրանք յաղթեցին, չընայե-
լով որ կայսերական զօրքին օժանդակ գնդեր օգնու-
թեան հասան։ Այսուամենայնիւ Վալլէնշտայնը գոհ էր
այդ օրուան վախճանից, որովհետև, թէև ինքն ստի-
պուեցաւ յետ քաշուել, բայց Գուստաւ Ադոլֆն այլ ևս
կենդանի չէր, և նա համարում էր, որ այսուհետև
ոչ ոք կարող չէր իւր բանակի հետ մրցել։ Վալլէն-
շտայնը սկսաւ գաղտնի բանագնացութիւններ շուեդ-
զօրավարների հետ, խոստացաւ նրանց Բալթեան ծովի
հարաւային ափերում մի քանի նաւահանգիստներ, և

«վերահաստատման» հրովարտակի յետս կոչումը։ Իսկ համար նա երազում էր Հռենոսեան կայսրընտրութիւնը կամ բոհեմական թագը։ Վալլենշտայնի բանակցութիւնները գաղտնիք չմնացին կայսերական դրան համար։ Ֆերդինանդը հրատարակեց, որ զրկում է նրան հրամանատարութիւնից։ Վալլենշտայնը իւր զօրավարներից երդումն առաւ, որ իրեն պիտի պաշտպանեն, բայց բանակումն սկսուեցաւ շփոթը։ Քանի մի շոտլանդացի և Իռլանդացի արկածախնդիրներ վճռեցին մի յանդուգն գործի ձեռնարկել—նրանք սպանեցին Վալլենշտայնին և նրա մերձաւորներին։

Ֆրանսիացոց միջամտութիւնը։

Երկու գլխաւոր զօրավարների մահուանից յետոյ գործերը կարծես թէ խաղաղ ընթացք ստացան, մանաւանդ, երբ կայսերական բանակը ջարդեց շուեդներին ու ազատեց Բաւարիան։ Սաքսոնիոյ կայսրընտիրը, որ բոլոր ժամանակն ակամայ էր մասնակցում այս ազգամիջեան կռուին, խաղաղութեան դաշն կապեց կայսեր հետ, և գերմանական իշխաններից մեծագոյն մասը պատրաստ էր նրա օրինակին հետևելու։ Խաղաղութեան արգելք էին լինում շուեդները, և ապա պատերազմի դաշտում երեւան եկաւ մի նոր տէրութիւն—Ֆրանսիան։ Այս երկիրը ղեկավարող քաղաքական գործիչը, Ռիշիլիոյ ծիրանաւորը (կարդինալ), ուրացրել էր Հենրիկոս Դ-ի արտաքին քաղաքականութիւնը։ Նա Հաբսբուրգներին վտանգաւոր թշնամի էր համարում, իսկ գերմանական ազգամիջեան պատերազմն յարմար առիթ էր Հաբսբուրգներին տկարացնելու և Ֆրանսիան զօրացնելու։ Նա բողոքականների կողմն անցաւ, նպաստ էր վճարում Ադոլֆին, իսկ շուեդների պարտութիւնից ետքը դուրս եկաւ կայսրութեան և Սպանիոյ ընդդէմ պատերազմի։ Ֆրանսիացոց գործին խառնուելը կայսերական զօրքին ստիպեց թողնել շուեդներին և միջոց տուաւ նրանց զօրապետներին [1]) արեւելեան Գերմանիան ոտնատակ տա-

[1]) Բաններ, Տորստենսոն, Վրանգել։

լու և սպառնալու նոյն իսկ Վեննային։ Ֆրանսիացիք իրենք չը նայելով մասնաւոր ձախորդութիւններին, մի շարք փառաւոր յաղթութիւններ տարան։ Վայմարի Բերնհարդ դուքսը գրաւեց նրանց համար Էլզասը, իշխան Կոնդէն սպանիացիներին Ռոկրուայի (Ֆլանդրիայում) մօտ ջարդեց. նա ինքը Տիւրէն մարաջախտի հետ միասին ոչնչացրեց Բաւարիոյ կայսրընտրի զօրքը. պիրենեան սահմանի վրա ֆրանսիացիք խլեցին Ռուսիլյոնը, վերջի նահանգը, որին Սպանիան լեռնաշղթայի հիւսիսակողմում տիրում էր դեռ. Իտալիայում ֆրանսիացիք յաջողութեամբ գործում էին Սաւոյեայում։

Վերջապէս 1645 թուին վերջացաւ այս սոսկալի պատերազմը, որ երկար ժամանակ յետ պահեց Գերմանիոյ զարգացումը. 30 տարի երկիրն աւերման ենթարկուեցաւ [1]). մի քանի վայրեր բոլորովին ամայացան, միւսներում բնակիչները կերակրւում էին խոտով ու արմատներով, դէպքեր եղան մարդկային միս ուտելու։ Մարդիկ վայրենացան ու յուսահատուեցան, ամենալաւ զգացմունքները—կրօնական համոզմունքը, հայրենիքի սէրը, իշխաններին հաւատարմութիւնը — անարգուեցան ու ոտնահար եղան այս անպտուղ պատերազմի մէջ, որից շահուեցան միայն օտարերկրացիք։ Քառամեայ բանակցութիւններից [2]) յետոյ հաստատուեցաւ այսպէս կոչուած վեստֆալեան խաղաղութիւնն հետևեալ պայմաններով։

Վեստֆալեան խաղաղութիւնը. 1648։

1.) Ինչ վերաբերում էր կրօնական վէճին, պարզուեցաւ, որ ոչ մի կողմն գերակշռող չէր, և վճռուեցաւ դառնալու այն կէտին, որից սկսել էին, 1555 թուականի — Աուգսբուրգեան դաշինքին։ Կալուինական-

[1]) Կայսեր զօրապետներից մէկը մի արշաւանքի ընթացքում աւերեց 18 քաղաք և 300 գիւղ. Գերմանիոյ մի քանի նահանգներում բնակիչների երկու երրորդ մասը կորստի մատնուեցաւ։

[2]) Խաղաղութեան բանակցութիւնները տեղի էին ունենում մասամբ Միւնստերում և մասամբ Օսնաբրիւկում։

ներն այժմ միևնոյն վիճակի մէջ դրուեցան, որ ունէին լութերականները, վեճի առարկայ հոգևոր իշխանութիւնների վերաբերութեամբ սահմանուեցաւ հետևեալ կանոնը, որ, եթէ նրանք աշխարհականացուած են[1]) մինչև 1624 թ., նրանց աշխարհականացումն հաստատում է։

2.) Գլխաւոր սահմանափոխութիւններն եղան յօգուտ Ֆրանսիայի և Շուեդիայի: Առաջինն ստացաւ Էլզասը 'ի բաց առեալ Ստրասբուրգից, երկրորդը—արևմտեան Գերմանիան Օդեր գետի բերանով։ Բացի դրանից, Բրանդենբուրգը ձեռք բերաւ արևելեան Պոմմերանիան, Մագդեբուրգը Էլբա գետի վրայ և Կլեւէն Հռենոսի վրայ։ Զուիցերեայի և Միացեալ նահանգների (Հոլլանդիա) անկախութիւնը վերջնականապէս ճանաչուեցաւ։

3.) Վեստֆալեան դաշնագրութիւնը որոշեց կայսրութեան բաղկացումն ու կազմակերպութեանը։ Դրա մէջ մտնում էին երեք հարիւր վաթսուն տէրութիւն, որոնցից իւրաքանչիւրը կարող էր ունենալ իւր զօրքը, դատարանը, կառավարութիւնը, դիւանագիտութիւնը։ Որպէս զի կայսրութեան կողմից ընդհանուր միջոցներ ձեռնարկուէին, անհրաժեշտ էր աւագաժողովի համաձայնութեանը, ուր այդ տէրութիւններն ուղղակի կամ կողմնակի ներկայացուցիչներ ունէին։ Ի միջի այլոց ձայն ունէին այդ ժողովում շուեդական և դանիական թագաւորները։ Կայսեր իշխանութիւնը կորցրեց իւր բոլոր նշանակութիւնը։

Այսպիսով երեսնամեայ պատերազմից յետոյ հետևեալ եղրակացութիւնն երևեցաւ. 1) որ բարենորոգութեան եւ հակաբարենորոգութեան յառաջ բերած շարժումն ընդհատուեցաւ 2) որ Գերմանիան բաժան բաժան եղաւ եւ դադարեց իբրեւ քաղաքական ամբողջութիւն գոյութիւն ունենալուց. 3) որ նա աւար դարձաւ օտարների համար։

[1]) Աշխարհականացնումը (սեկուլարիզացիա) այսինքն՝ աշխարհական տիրապետութեան դարձնելը։

ԳԼՈՒԽ Դ.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ:

Հետաքրքրութիւնը դէպի մարդը, դէպի մարդկային հոգևոր եւ մարմնաւոր կեանքը, որ յատկանիշն էր հումանականութեան, առանձին զօրաւոր կերպիւ արտայայտուեցաւ գեղարուեստի մէջ։ Իտալական նկարչութ. Վերածնութեան արուեստագէտներն ուսումնասիրում էին բնութեան եւ գեղարուեստի հնագոյն օրինակները. հներից զանազանուում էին նրանով, որ աւելի յաջող կերպով նկարչութեամբ էին պարապում, թէպէտ եւ արձանագործութեան մէջ էլ շատ նշանաւոր վարպետներ ունէին։ Գեղարուեստն ամենամեծ բարձրութեան հասաւ Իտալիայում ԺԶ. դարում։ Ֆլորենտացի Լէօնարդոյ դա Վինչին աչքի է ընկնում իւր բազմատեսակ տաղանդով եւ գիտութիւնով—նա զբաղուում էր մեքենագիտութեամբ, ճարտարապետութեամբ, նկարչութեամբ, երաժշտութեամբ եւ բանաստեղծութեամբ, ղեկավարում էր տօնախմբութիւնները Լիւդովիկոս Սֆորցայի արքունիքում Միլանում, ծառայում էր իբրև ճարտարապետ Ցեզար Բորջիային եւ մեռաւ Ֆրանցիսկոս Ա.-ի մօտ, որին օգնում էր վերածննդեան քաղաքակրթութիւնը Ֆրանսիայում տարածելու։ Նրա պատկերներից առանձնապէս երևելի է վերջին ընթրիքը, Միլանում, այս պատկերը նշանաւոր է եւ առաքեալների դէմքի բնաւորոչ արտայայտութեամբ։ Լէօնարդոյի ախոյեանն էր Հռոմում երկարաարդ Ֆլորենտացի Միքէլ Անջելոյ Բուօնարոտտին։ Սրա կրքոտ, հանճարեղ բնութիւնը ձգտում էր անսովորականին. ոչ մի արուեստագէտ չէ կարողացել իւր պատկերներին այն ահեղ ոյժը տալ, ինչպէս Միքէլ Անջելոն։ Նրա արձաններից Դաւիթ մարգարէի արձանը Ֆլորենտիայում եւ մանաւանդ Մովսէսինը Հռոմում զիւցազնական ազդեցութիւն են գործում։ Պապի պալատի (Վատիկանի) սիքստին-

եան մատրան որմնանկարները (ֆրէսք), որ պատկերացնում են ստեղծագործութեան վեց օրերը, Ահեղ Դատաստանը, մարգարէներին ու սիբիլլաներին,[1]) ներշնչուած Հին Կտակարանի խիստ վեհութեան ոգով։ Ընդհակառակն, Ռաֆայէլ Սանցիոն
1483—1520 Ուրբինոյից (1483—1520) մարմնում է հոգիացած գեղեցկութիւն, երկնային շնորհք։ Նրա գլխաւոր ստեղծագործութիւնները—Տիրամօր պատկերներն են. Սիքստինեան Տիրամօր պատկերը (Մադոննա), որ այժմ Դրէզդենումն է գտնւում, մադոննա դելլա Սեդիա (Ֆլորենտիայում), այսպէս կոչուող գեղանի պարտիզպանուհին (Belle jardiniere), Փարիզում, միացնում են զգացմունքի խորութիւնն արտայայտութեան ազնիւ պարզութեան եւ գոյների ներդաշնակութեան հետ։ Վատիկանի պալատի որմնանկարները պատկերացնում են կարծես պատմութեան ընթացքի համառօտ տեսութիւնը։ Ռաֆայէլն ու իւր աշակերտները ներկայացրել են դրանց մէջ թէ՛ հին դարու իմաստուններին (աթենական դպրոցը), թէ՛ քրիստոնէութեան յաղթանակը կռապաշտութեան վրայ (Կոստանդին կայսեր ճակատամարտը Մաքսենտիոսի հետ) եւ թէ՛ այն հրաշալի իրողութիւնները, որով փառաւորուել է եկեղեցին (օրինակ Պետրոս առաքելոյ բանդից դուրս գալը)։ Երիտասարդ նկարիչը, որ ճակատագրի սիրականն էր կենդանութեան ժամանակ, մահուանից յետոյ դարձաւ հմուտների եւ հասարակութեան սիրելին։ Մինչեւ ցայսօր ընդհանրական կարծիքը նրան նկարիչների մէջ առաջին տեղն է տալիս։

Իտալական մեծ արուեստագէտների ստեղծագործութեանց
Գերմանական նկարչութիւն։ մէջ արտայայտւում է վերածննդեան հոգին, բայց քիչ է նկատւում բարենորոգութեան ազդեցութիւնը։ Այդ ազդեցութիւնն աւելի զօրաւոր է Գերմանական դպրոցներում։ Գերմանական նկարիչների մէջ ամենից խոշորն է Ալբրեխտ Դիւ-
1471—1528։ րերը (1471—1528)։ Նրա եղանակը հետեւեալն է—նա խնամքով արտանկարում է մանրամասնութիւնները, վատ է ըմբռնում հեռանկարն (պերսպեկտիւ), պատկերների անկենդանութիւնն անհաճոյ տպաւորութիւն է գործում։ Բայց մինչդեռ աւանդութիւն կայ, որ Ռաֆայէլը, դիտելով նրա պատկերները, ասել է. «նա մեզ ամենիս կը գերազանցէր, եթէ մեզ նման ուսած լինէր հնադարեան արուեստագէտներից», Դիւրերի ոյժն այն է, որ կարողանում է դուրս բերել ներքին բարդ եւ ծածուկ

[1]) Կռապաշտական մարգարէուհիք, որ ըստ աւանդութեան նախագուշակել էին Քրիստոսի ծնունդը։

հոգեկան վիճակը։ Արդէն իսկ նրա կենդանագրերը բնաւորոշիչ ու առուգատես են, բայց յատկապէս հետաքրքրական են այլաբանական տեսարանները—Յովհաննու Յայտնութեան տեսարանները, Մելամաղձութիւնը, դէպի մահը դիմող Ասպետը։ Սրանք արտադրութիւն են մի խորհող, կենդրոնացած մարդու, որի ներսը հոգեկան կռիւ է տեղի ունենում։ Դիւրերը ջերմութեամբ ողջունեց Լութերի գործն եւ «աւետարանական» քարոզութեան սկիզբը տօնեց չորս առաքեալների պատկերները նկարելով (Միւնխենում)։

Այլ մաքով բնաւորոշիչ են ԺԶ. դարու վախճանի եւ ԺԷ. Ֆլամանդեան և հոլլանդական դպրոց։
դարու առաջին կէսի արուեստագէտները։ Սրանք էին գեղարուեստի աշխարհականացնողները, այսինքն՝ աշխարհական նիւթերի եւ տրամադրութեան անցնողները։ Դաւանական խնդիրների համար վարուող պատերազմների դադարելը բարենորոգութեան եւ կաթոլիկ յետաշրջութեան ոգեւորութիւնը սառչում է, մարդկանց շահերն այլ նպատակների են դիմում։ Սպանիական Ֆլանդրիայում առաջ է գալիս մի դպրոց, որի
գլխաւոր ներկայացուցիչն էր Ռուբէնսը (1577—1640)։ Եթէ 1577—1640
նա երբեմն եւ կրօնական նիւթեր է առնում իւր նկարների համար, այդ էլ կրօնական զգացմունքից չէ։ Նրա վառ եռանդն ուղղուած է դէպի փառաւոր տօնախմբութիւններ, ըմբշամարտեր, հիւթեղ գեղեցկութիւն եւ ոյժ նկարելու։ Թէ Ահեղ Դատաստանն եւ թէ ամազոնների պատերազմը հետաքրքրում են նրան իբրեւ առիթներ ցոյց տալու համար մկանունքի խաղերը, մարմնոյ համարձակ դիրքը կամ շարժումները, կաշու վարդագոյն արտափայլումն։ Ուրիշ ուղղութեամբ աշխարհականացրեց գե-
ղարուեստը Ռեմբրանդը (1606—1669)։ Նա էլ թողել է մեզ 1606—1669
«Մուտն ի տաճարն», «Քրիստոս հիւանդների մէջ», «Խաչից վայր առումն» եւ այլն, բայց կրօնական նիւթերը կորցրել էին իրենց վեհ բնաւորութիւնը։ Արուեստագէտը ճանաչում եւ սիրում է համեստ գոյներն, համեստ դէմքերն ու ձեւերն իւր հայրենիքի եւ չի հեռանում նրանցից մինչեւ իսկ այն ժամանակ, երբ վեհ կրօնական նիւթեր է առնում նկարելու։ Ռեմբրանդի եւ հոլլանդական դպրոցի նշանակութիւնն այն է, որ նրանք կարող եղան հռչակուել հոլլանդական պարզ կեանքը ներկայացնելով ճշմարտութեամբ եւ զօրեղ կերպիւ։ Լուսոյ ընծերը, ստուերներն ու կիսաստուերները Ռեմբրանդին միջոց տուին տգեղ նիւթերը փոխակերպելու նոր ու անսպասելի ձեւերի։

Իտալիոյ Գրականութիւնը։ Գեղեցիկ գրականութեան մէջ մենք հանդիպում ենք բազմատեսակ ուղղութիւնների, դիւցազնական արկածների եւ քաջագործութեանց ներբողների, որ համապատասխանում են այդ ժամանակի մեծամեծ պատերազմներին. եւ հեգնական յարաբերութիւն դէպի թառամող ասպետութիւնը. կրօնական եղանակների եւ հումանիստների յարձակումներին դպրոցական գիտութեան եւ կեղծաւոր եկեղեցու վրայ։ Իտալիայում, որ երկար ժամանակ առաջնորդում էր գրականութեան, ստեղծագործութիւնն սկսում է տկարանալ։ Ամենից աւելի ծաղկում է գեղարուեստական վիպասանութիւնը։ Ասպետական վէպը կարծես թէ վերածնում է, բայց դրա լաւագոյն ներկայացուցիչներն—արդէն պարզամիտ պատմիչներ չեն, որոնց զբաղեցնում

1474—1533 է միայն արկածների վիպասանութիւնը։ Արիոստոն (1474—1533) իւր «Անգուսպ Ռոլանդում» ճակատամարտների վիպասանութեան խառնում է վէպիկներ ըստ Բոկկաչիոյի, եւ նոյն իսկ ամենից Կարլոս Մեծի ասպետների եւ մաւրերի դիւցազնական քաջագործութիւնները յաճախ աւանդում է ծաղրական ձեւով։

1544—1595 Տասսոյի (1544—1595) վրայ ազդել էր կաթոլիկ եկեղեցու վերածնունդը։ Նա աւելի լուրջ է Արիոստոյից, նրա «Ազատեալ Երուսաղէմն» կրօնական նպատակ ունի. բայց Տանգրեդի եւ Ռինալդոյի քաջագործութիւններից, նա կամենում է այս բարեպաշտական արշաւանքը պանծալի դարձնել։

Սպանիա։ Սպանիական հասարակութեան բարքերը, նրա գոռոզութիւնը, մոլեռանդութիւնը, արկածախնդրութեան սէրը, կենդրոնացած կրքոտութիւնը[1])—ներկայացուած են Լոպէ-դէ-Վեգայի

1562—1635 (1562—1635) եւ Կալդերոնի (1600—1681) թատերախաղերի

1600—1681 մէջ. դրանց մէջ կան այնպիսի թատերական հատուածներ (պիէս), որոնք մինչեւ այժմ զօրաւոր ազդեցութիւն են գործում (օր. Աշխարհի աղբիւր—Վեգայի, Սալամեան դատաւոր (ալկադ), կեանքն երազ է—Կալդերոնի)։ Այդ շրջանի սպանիական գրականութեան մի երկն առանձնապէս աչքի է ընկնում, ինչպէս հանճարեղ ստեղծագործութիւն—դա է Սերուանտեսի «Դոն-Քի-

1547—1616 շոտը»։ Հեղինակը (1547—1616) թափառական կեանք է վարել Փիլիպպոս Բ-ի թագաւորութեան ժամանակ, ուսել է ողորմելի լումաներ վճարելով Սալամանկայում, մտել է բանակը, Լեպանտոյի ճակատամարտում մասնակցել է, ալժիրիայոց ձեռքն է ընկել իբրեւ գերի եւ 5 տարի ստրուկ է մնացել. գերութիւնից

1) Լոպէ-դէ-Վեգան գրել է 1800 աշխարհական և 400 հոգեւոր թատերախաղեր (դրամ)։

գնուելուց յետոյ կրկին պատերազմել է Պորտուգալիայում, թէպէտ Լէպանտոյի մօտ իւր ձախ ձեռքը կորցրել էր. վերջապէս, դարձել է գրագէտ։ Հանգստութեան եւ բարեկեցութեան նա երբէք չէ հասել իւր կեանքում. մինչեւ անգամ երկու անգամ բանդ է նստել։ Նրա գլխաւոր երկը «Դոն-Քիշոտը» գրուած է ասպետական վէպերը ծաղրելու համար եւ նկարագրում է մի խելագարի արկածները, որ դիմելով կռուելու անհաւատ հսկաների եւ կախարդների դէմ, դրա փոխարէն մարտ է մղում հողմաղացների, պանդոկապետների եւ վարսավիրաների դէմ։ Ազդեցութիւնն աւելի եւս զօրանում է այնու, որ Ռոսինանտի վրայ հեծած Դոն-Քիշոտի կողքից իւր էշը քշում է նրա ծառայ Սանչօ-Պանսան. սա ամենից աւելի աշխարհիս վրայ զբաղուած է իւր փորը լցնելով, բայց միեւնոյն ժամանակ աչքի է ընկնում իւր գործնական խելքով եւ ժողովրդական հեգնողականութեամբ։ Դոն-Քիշոտի արկածներն առակաւոր են դարձել. ծիծաղելի եւ սրտաշարժ «տխուր տիպարի ասպետի» մէջ մարմնացրած է այն տեսակ մարդկան տիպը, որ չէ վերջացել եւ չէ իսկ վերջանալու,—[illegible] ([illegible]) տիպը, որոնք ապրում են իրենց ցնորքներում եւ ցաւագին ընդհարումն են ունենում իրականութեան հետ։

Ֆրանսիա։ Բարենորոգութեան շրջանի ամենից աչքի ընկնող ներկայացուցիչն է Ռաբլէն (1483—1553)։ Նա դաստիարակուել էր 1483—1553

վանքում եւ իւր կեանքն աւարտել իբրեւ ծխական քահանայ, բայց սէր չ'ունէր աստուածաբանական նրբութիւնների համար, երիտասարդութեան ժամանակ պարապել էր յունարէնով եւ հին հեղինակներով, իսկ քառասուն տարեկանից անց էր, որ սկսաւ բժշկութիւն ուսանել։ Գարգանտիւյա եւ Պանտագրիւէլ հսկաների գործերը պատմելով իւր վէպերում, նա ծաղրում է ֆրանսիական հասարակութեան դասակարգերը. մանաւանդ գիտական արուեստաւորների—աստուածաբաններին, փաստաբաններին, բժիշկներին։ Նա չէ ծածկում իւր արհամարհանքը դէպի կաթոլիկ կրօնաւորները, բայց Կալուինին եւս դիպչում է։ Նա նկարագրում է եւ գաղափարական պատկեր. այդ է Տելեմեան աբբայութիւնը, ուր մարդիկ ապրում են ազատ եւ ուրախ եւ զբաղւում են արուեստներով եւ գիտութիւններով։ Ռաբլէի կոպիտ եւ մեծաքրքիջ ծիծաղն, նրա անսպառ երեւակայութիւնն եւ զօրեղ կենսունակութիւնը նրա վիպասանութիւնները դարձրել են ամենաժողովրդական արտայայտու-

թիւն կեանքի վրայ հումանիստական հայեացքի, որ բղխում է անձնութեան եւ խորհրդաւորութեան (միստիցիզմ)։

Անգլիա։ Այս շրջանի ամենամեծ բանաստեղծն Անգլիային է պատ-
1564—1616 կանում։ Ուիլեամ Շէկսպիրը (1564—1616) դերասան էր, թատրոնի պահող եւ թատերախաղեր գրող Լոնդոնում Եղիսաբէթ թագուհու եւ նրա յաջորդ Յակոբ Ա.-ի ժամանակ։ Նա գրել է ողբերգութիւններ, կատակերգութիւններ, պատմական ժամանակագրութիւններ եւ ցնորական (ֆանտաստիք) հատուածներ։ Կրօնական աչառութիւնից ա՛յնքան հեռու է, որ նրա մեկնիչները վիճել են, թէ նա կաթոլի՞կ է եղել, թէ՞ բողոքական, բայց հէնց այն հանգամանքը, որ նա բոլորովին ազատ է գրել, առանց միջնադարեան եկեղեցու ազդեցութեան եւ առանց կռապաշտական հումանականութեան, բնորոշիչ է նրա ժամանակի համար։ Հայրենասիրութիւնը, որ արտայայտւում է նրա ժամանակագրական թատերգութեանց մէջ (Յովհաննէս արքայ, Հենրիկոս Դ. Հենրիկոս Ե. Ռիչարդ Գ.) չէ նեղացնում նրա մտքի հորիզոնն ու կրթութիւնը—նա ծանօթ էր իտալական եւ ֆրանսիական վիպասանութիւններին, Հոմերոսի, Լիւիոսի եւ Պլուտարքոսի հետ եւ սիրով նիւթեր էր առնում նրանցից։ Նրա ոճի վրայ, յատկապէս կատակերգութեանց մէջ, երեւում է իտալական ձեւի ազդեցութիւնը—բառախաղի սէր եւ մասամբ քաշքշուած սրամտութիւն։ Իւր ժամանակակից թատերգուների մի թերութիւնից նա բոլորովին չէ ազատուել, այդ թերութիւնն է ուռուցիկ ոճը, թէպէտ եւ ինքը ճանաչում էր այդ պակասութիւնն եւ ծաղրում։ Սակայն, ինչ էլ որ լինին նրա մասնաւոր թերութիւնք, կրթուած աշխարհի դատողութեամբ նա ճանաչուած է բոլոր ժամանակների մեծագոյն թատերգուն։ Նրա կատակերգութիւնները [1]) գրաւում են իրենց աշխուժութեամբ, երեւակայական հատուածները [2]) հիացնում են ընթերցողին թեթեւ պատկերներով, հնարներով, լեզուի ինքնուրոյնութեամբ։ Բայց Շէկսպիրի գլխաւոր արժանիքներն են—բնաւորոշման զօրաւորութիւնն եւ զգացմանց արտայայտութեան ոյժը։ Վեգան եւ Կալդերոնը ճանաչում էին սպանիական հասարակութիւնն եւ արտադրում էին մարդկային բնութեան ո՛չ այնքան բազմադիմի յատկութիւնները, որ այդ հասարակութեան մէջ տիրապետող էին։ Շէկսպիրի մտաւոր հորիզոնն ան-

[1]) Լաւագոյններն են—Տասներկուերորդ գիշերը, Վինդզորի սանամէրները, ինչպէս կամիք։

[2]) Ամառային գիշերուան երազ, Փոթորիկ։

համեմատ լայն է. նա ունի անգլիացու տիպարներ—օր. Ֆալստաֆ, Հենրիկոս Ե.—բայց դրանց մէջ էլ ընդհանուր մարդկային բնութեան գծեր են երեւում։ Նրա ստեղծագործութիւններից մեծագոյն մասը վեր է առանձնական ազգայնութիւններից եւ ներկայացնում է մարդկային բնութեան ամենատեսակ նրբութիւնները. Օթելլոյ եւ Շայլոկ, Լիր եւ Համլէտ, Անտոնիոս եւ Ռոմէօ, Դեզդեմոնա եւ Լէդի Մակբէթ, Օֆելիա եւ Ջուլիէտտա ստեղծուած են միօրինակ անխնայ ճշմարտութեամբ, միատեսակ ներշնչուած են գեղարուեստական կեանքով։ Շէկսպիրը կարողանում էր այնպէս, ինչպէս ոչ ոք բացի նրանից, զարգացնել գործողութիւնը, նկարագրել գործող անձի կռիւն իւր անձի կամ շրջապատող հանգամանքների հետ. իսկ այս կռուի ամենից յափշտակիչ վայրկեանները նրա մէջ յառաջ են բերում քնարական ուժգին զեղումներ, որոնց մէջ աննման ուժգնութեամբ եւ խորին զգացմամբ արտայայտւում են յաւիտենական ձգտումներն եւ մարդկային հոգու տարակուսանքները։

Անգլիացի էր, Շէկսպիրի ժամանակակից եւ բարենո- Փիլիսո-
րոգութեան շրջանի գլխաւոր փիլիսոփան, Ֆրէնսիս Բէկոնը փայութիւն։
(1561—1626)։ Այս բարձրաստիճան իրաւաբանը, Յակոբ Ա.-ի 1561—1626
նախարարապետը, իւր մասնագիտութեան մէջ նշանաւոր էր աւելի խելքով եւ գիտութիւնով, քան թէ ազնւութեամբ։ Իւր կեանքի վերջումը դատարանից կաշառակերութեան համար մինչեւ իսկ դատապարտուեցաւ աստիճանից զրկուելու եւ բանտարգելութեան։ Փիլիսոփայութեան մէջ սակայն նրա վաստակները մեծ են. նա կարող է համարուել կարապետ այսպէս կոչուող փորձնական փիլիսոփայութեան, որ հիմնւում է գիտնական դիտողութեան եւ իրականութեան մէջ արուած փորձերի վրայ։ Բէկոնը սկսաւ կազմել հանրագիտակ բառգիրք (Instauratio magna) եւ առաջին հատորներում, որ գրել է, հակառակորդ է հանդիսանում ամէն տեսակ մոլեռանդութեան, ցնորքների եւ չապացուցուած տեսութիւնների։ Դպրոցականութիւնն ու հին հեղինակների ուսումնասիրութիւնն երկուսն էլ նրան միակողմանի եւ վնասակար են թւում—նա հրաւիրում է բնութիւնը քննել գիտնականօրէն։

Բէկոնի փիլիսոփայական ուղղութիւնն համապատասխա- Գիտութիւն։
նում է այն գիտնական շարժման, որ սկսել էր սխոլաստիկայի անկումից յետոյ։ Հետազօտիչներն ազատ են զգում իրենց, ճշմարտութիւնները փնտռում են նոր ձեւերով եւ ստոյգ գի-

թողութիւններով եւ աստեղաբաշխութեան ու բժշկութեան
խնդիրների լուծումը չէին սպասում խորհրդաւոր (միստիք) տե-
սութիւններից։ Նոր ցամաքների եւ ծովերի յայտնագործու-
թիւնը, շուրջերկրեան նաւարկութիւնները, աստղաբաշխու-
թեան, բնագիտութեան, կենդանաբանութեան եւ ազգագրու-
թեան ընդլայնումը նորանոր փաստերով նպաստեցին գիտնա-
կան շարժման։ Այդ շարժումն սկսում է լեհացի Նիկողայոս Կո-
1472—1543 *պերնիկը* (1472—1543), *որին նրա գործը շարունակողներից*
մէկն անուանել է animo liber (*ազատ հոգւով*)։ *Նա կանոնի-*
կոս էր լեհական Պրուսիայում եւ իր ամբողջ կեանքն աշ-
խատել է «լուսատուների շարժման մասին» գրքի վրայ։ Նա
հերքեց այն ժամանակ ընդհանրապէս ընդունուած Պտղոմեան
սկզբունքը, որի համաձայն երկիրս տիեզերքի կենդրոնն է կազ-
մում եւ նրա շուրջը պտտում են եօթն մոլորակներ, որոնց
մէջն է եւ արեգակը։ Կոպերնիկը կարգեց մոլորակների համա-
կարգութեան (սիստէմ) ճշմարիտ տեսութիւնը. Նա երկիրս հա-
մարում է մոլորակներից մէկը, որ դառնում են արեւի շուրջը։
Կոպերնիկի երկասիրութիւնը նուիրուած էր պապին, բայց հռով-
մէական եկեղեցին դեռ երկար ժամանակ դատապարտեց այս նոր
տեսութիւնը։ Մոլորակների շարժողութիւնը ձուածրով (էլլիպ-
սիս) եւ ոչ շրջաններով, ինչպէս կարծում էր Կոպերնիկը, գտաւ
1571—1630 *Վիւրտեմբերգցի Կէպլէրը* (1571—1630). *Ռուդոլֆ կայսեր պա-*
1564—1642 *լատական աստղաբաշխը։ Իտալացի Գալիլէյը* (1564—1642) *մի*
շարք գիւտեր արաւ բնագիտութեան, մեքենագիտութեան,
աստղաբաշխութեան մէջ—հաստատեց ճօճանակի շարժման եւ
մարմինների անկման օրէնքները, հնարեց ջրաբաշխական մե-
քենայ, հետազօտեց լուսինը, Վեներսը, Մարսը եւ Սատուրնը։
Կեանքի վախճանին նրան մեղադրեցին իբրեւ կոպերնիկեան
սիստեմի պաշտպանի, որն իբր թէ Աստուածաշնչի հեղինակու-
թեանը վնասում է։ Պապը կանչեց նրան Հռոմ, հաւատաքննու-
թեան դատի, եւ ծերունուն ստիպեցին հրաժարուելու իր
«մոլորութիւնից»։

Միւս գիտնականը, որ հաւատաքննութեան հալածանքին
ենթարկուեցաւ, էր Կարլոս Ե-ի եւ Փիլիպպոս Բ-ի անձնա-
կան բժիշկ Վեզալը։ Նրա յանցանքն այն էր, որ անդամազննու-
թիւն (անատոմիա) էր ուսուցանում եւ տպել էր այդ առար-
կայի համար ձեռնարկ։ Նա մահուան դատապարտուեցաւ, ապա
ներման արժանացաւ եւ խոստացաւ ուխտի գնալ Սուրբ Երկիրը,
որտեղից վերադառնալու ժամանակ ծովակուլ եղաւ։ Անգլիայի

բժիշկ Հարվայ (1578—1657) *ԺԷ. դարում գտաւ արեան շըր-* 1578—1657
ջանառութիւնը մարդուս մարմնի մէջ եւ դրանով հիմք դրաւ
նոր բնախօսութեան։

ՅԱՒԵԼՈՒԱԾ.

ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԸ ԺԵ. եւ ԺԶ. ԴԱՐԵՐՈՒՄ:

Իսկական թշուառութեան դարեր էին հայոց համար ԺԵ— Ներածու-
ԺԷ. դարերը—մինչ եւրոպական ազգերը կռւում էին խղճի թիւն։
եւ մտքի ազատութեան համար, հայերը լոկ կեանքի ազատու-
թիւն անգամ չունէին եւ պատերազմներից, աւազակներից,
գերութիւնից ազատուածները զոհ էին դառնում սոսկալի սովի
եւ ժանտամահի։ Սեփական երկրի աւերումներից ու թշուա-
ռութիւններից փախածներն ապաստանարան էին գտել Ղրի-
մում, հարաւային Ռուսիայում, Լեհաստանում եւ մասամբ Կ.
Պօլսում։ Սուլթան Մէհէմմէտը Կ. Պօլիսն առնելուց յետոյ իր
իշխանութեան հպատակ հայերի գլուխ կարգեց Յովակիմ եպիս-
կոպոսին (1459—1477), *Բրուսայի նախկին առաջնորդին,* 1459—1477
փաթրիկ կամ պատրիարք անուամբ, տալով նրան եւ որոշ քա-
ղաքական իրաւունքներ, իբրեւ իր ազգի ներկայացուց-
չին եւ գլխաւորին։ Սկսեալ այն ժամանակից Տաճկաստանի
հպատակ հայերը կազմեցին մի կրօնական-քաղաքական հա-
մայնք, որի պաշտօնական ներկայացուցիչը դարձաւ Կ. Պօլսոյ
պատրիարքը, սակայն սրա ընտրութիւնը կախուած լինելով
սուլթանների ու վեզիրների սիրելիներից, այսպէս կոչուող հայ
ամիրաներից, Կ. Պօլսոյ պատրիարքը յաճախ խաղալիկ էր
դառնում եւ չէր կարողանում իր կոչման արժանավայել դիրք
բռնել։ Տաճկական տէրութեան կազմակերպութեան շնորհիւ
իրաւունքն ու արդարութիւնը ծախու լինելով թէ պատրիարք-
ները, թէ ազգն առհասարակ մեծամեծ տուգանքներով անգամ
չէին կարողանում արդարութիւն գտնել եւ ժամանակաւոր
յաջողութիւնները միշտ մեծաքանակ գումարներ էին նստում
թէ առանձնականներին եւ թէ ընդհանուրին։

Բուն Հայաստանում վիճակն աւելի եւս անտանելի էր. Հայաստանի
Լանգթամուրի վերջին արշաւանքների ժամանակ (1400—1406) քաղաքա-
բոլոր Հայաստանը, Վրաստանը, Անատոլիան, Ասորիքը, մինչեւ կան վիճակը։
իսկ Ղրիմու խանութիւնը, մի խօսքով բոլոր այն երկրները,

ուր բնակւում էին հայերը, նուաճուեցան այս բռնակալի ձեռքի տակ, բայց չուտով նրա մահուանից յետոյ բաժան բաժան եղաւ նրա ժառանգութիւնն եւ Հայաստանն ու Վրաստանը հրապարակ դարձաւ աւազակների։

Կաթողիկոսական աթոռի փոխադրութիւնը Էջմիածին։

Հինգետասաներորդ դարու աչքի ընկնող դէպքը հայոց կեանքից կաթուղիկոսական աթոռի կրկին Ս. Էջմիածին փոխադրուելն էր։ Այս փոխադրութիւնն անհրաժեշտ էր դարձել Կիլիկիոյ հայկական իշխանութիւնը վերանալուց յետոյ, մանաւանդ որ Սսի կաթողիկոսութեան անխտրութիւնն ու արեւմտեան քրիստոնեաների հետ մերձաւոր յարաբերութիւններն եւ ծէսերի խառնումը վաղուց կասկածելի էին դարձրել այդ աթոռն, ուստի 1441 թ. մեծ բազմութիւն ժողովուեցաւ Ս.
1441 Էջմիածնում, ուր կաթողիկոս ընտրուեցաւ եւ օծուեցաւ Կիրակոս Վիրապեցին։ Այդ օրուանից մինչեւ ցայժմ Էջմիածնի ընդհանրական Հայրապետը գլուխ է ճանաչուած ամբողջ հայոց եկեղեցու։

Պարսկական տիրապետութիւն։

Երկու իշխաններ այս ժամանակ մրցում էին միմեանց հետ Հայաստանի տիրապետութեան համար, արեւելքում իշխում էր Ջհանշահ Ղարաղոյնլուն [1]) իսկ արեւմուտքում աղխոյնլուների ամիրան Ուզուն-Հասանը, որ 1468 տիրեց Դաւրիժին եւ ոչնչացրեց իւր հակառակորդներին։ Սրա ցեղի տէրութիւնն եւս վերջացաւ չուտով եւ Պարսկաստանում հաստատուեցաւ Սէֆեան հարստութիւնը (1441), որոնց առաջին թագաւորն եղաւ Շահ Իսմայիլ Ա.։ Թէ՛ սրա եւ թէ սրա որդի չահ Թահմազի եւ ապա չահ Աբբասի ժամանակ Հայաստանի տիրապետութեան համար կռիւներ տեղի ունեցան սկսած 1513—
1513—1694 1694 թ. Այս շրջանում տեղի ունեցաւ հայոց բռնի գաղթականութիւնը դէպի Պարսկաստան (1605) Շահ Աբբասի ձեռքով,
1605 ապա մեծ սովն ու ժանտամահը։ Ժամանակի դառնութիւնների մէջ անմխիթարական էր Էջմիածնի գահակալների վիճակն, որ ամենայետին անարգութեան էր հասել։

Հերիք չէին մահմեդականների հալածանքները, հայոց համար մեծ պատուհաս դարձաւ եւ կաթոլիկ յետաշրջութեան շնորհիւ զօրացած քարոզիչների բանակը, որի գնդերը բուն էին դրել Նախիջեւանում, Շամախում եւ Երեւանում։

---

[1]) Սեւ-ոչխարեան, որովհետեւ նրա դրօշի վրայ նկարուած էր սեւ ոչխար. միւս կուսակցութեան դրօշի վրայ նկարուած էր սպիտակ ոչխար, ուստի կոչւում էին աղ-ղոյնլու։

Ասիայի քաղաքակրթութեան համար մեծ վաստակ ունեցան հայ գաղութների վաճառականները, որոնք արեւելքի ու արեւմուտքի վաճառականութիւնն իրենց ձեռքին ունէին, մանաւանդ նշանաւոր էին Ջուղայեցիք, Կաֆացիք եւ Լեհաստանի հայք։

Շնորհիւ հայոց հայրապետների ջանքերի տպագրութեան արուեստը այս ժամանակ (1567) մուտ գործեց հայոց մէջ։ 1567

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Հին վիճակ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՆԳԼԻԱ.

Ստիւարտ-ներ: 1603 Եղիսաբէթ թագուհին մեռաւ 1603 թուին, նրա օրինական ժառանգն էր Շոտլանդիոյ Յակոբ թագաւորը, Եղիսաբէթի ախոյեան Մարիա Ստիւարտի որդաւորը, Եղիսաբէթի ախոյեան Մարիա Ստիւարտի որդին: Սա գահ բարձրացաւ Յակոբ Ա. անուամբ: Սահմանափակ խելքի տէր մարդ լինելով հանդերձ, նա ինքն իրեն համարում էր «թագաւորական գործին հըմուտ», սիրում էր դատողութիւն տալ թագաւորի իրաւունքի մասին, թէ ինչպէս թագաւորը վեր է օրէնքից և դատարանից, թէ թագաւորութեան մէջ բոլոր հաստատութիւնները նրանից են ստանում իրենց իրաւասութիւնը: Հենրիկոս Ը. և Եղիսաբէթն չիրաւի կառավարում էին երկիրնի ընեց ուզածին պէս և զգալ էին տալիս հպատակներին իրենց ոյժը, բայց Հենրիկոս Ը. և Եղիսաբէթն ազգային մեծ քաղաքականութիւն ունէին և այդ քաղաքականութիւնը վարում էին յաջողութեամբ ու ժողովրդից սիրուած էին, իսկ Յակոբ Ա. կարող չեղաւ իւր նոր հպատակների հետ հաշտ վարուել և բոլոր իւր թագաւորութեան ընթացքում սխալներ էր գործում ներքին եւ արտաքին քաղաքականութեան մէջ: Խորհրդարանն, որ Հենրիկոս Ը-ի և Եղիսաբէթի

ժամանակ հետեւում էր արքայական իշխանութեան ցուցմունքներին, հէնց սկզբից Յակոբ թագաւորին ընդդիմացաւ: Ստորին խորհրդարանին անդամակցում էին կալուածատէրերն և վաճառականները, բայց դրանք դասակարգերի ներկայացուցիչ չէին, այլ անգլիական ազգի: Ընտրողական իրաւունքը պատկանում էր ոչ բոլոր բնակիչներին, այլ միայն կարողներին, հողատէրերին և տանտէրերին, կապալառուներին. բայց այս կարգի մարդոց թիւը մեծ էր, և նրանց ձայնը համապատասխանում էր երկրի հասարակական կարծիքին:

Յակոբը դժգոհութեան առիթ տուաւ հէնց Անգլիա ժամանելուն պէս: Մաքրակրօնութեան (պուրիտանիզմ) հակուող եկեղեցականները խնդիր ներկայացրին նրան, որ իրենց թոյլ տրուի սովորական զգեստով պաշտօն մատուցանելու, որովհետև իրենք եկեղեցական զգեստների պահպանութիւնը համարում էին կաթոլիկութեան մնացորդ: Յակոբը կրօնական վիճաբանութիւններ սահմանեց մաքրակրօնների ու եպիսկոպոսականների մէջ, բայց ինքը խառնուում էր վիճաբանութեանց, խստութեամբ դատապարտում էր մաքրակրօնութիւնն և յայտարարեց, որ բոլոր ուժով պիտի պաշտպանէ անգլիկանութիւնը, որովհետև «առանց եպիսկոպոսների թագաւոր էլ չկայ»: Շատ հոգևոր հովիւներ զրկուեցան ծխերից: Միաժամանակ հալածանքը շարունակուում էր կաթոլիկների դէմ. սրանց մէջ վաղուց արդէն մի կուսակցութիւն էր կազմուել, որ ատելով ատում էր Անգլիոյ ամբողջ կառավարութեան կարգ ու կանոնը: Այս կատաղի մարդիկ դաւադրութիւն կազմեցին թագաւորին և խորհրդարանն օդը ցնդեցնելու: Լորդերի խորհրդարանի նկուղի մէջ դրուեցան վառօդի տակառիկներ պայթեցնելու համար: Որոշուած օրուան նախընթաց երեկոյին բացուեցաւ այս «վառօդային» դաւադրութիւնն և դաւադիրները գլխատուեցան:

Յակոբ Ա-ի մաքառումը խորհրդարանի դէմ

Ծողովուրդն ու խորհրդարանը թշնամաբար էին վերաբերուում կաթոլիկներին, և փառօքի դաւադրութիւնը միայն սաստկացրեց նրանց կատաղութիւնը։ Ընդհակառակն մաքրակրոններին համակրում էին, և թագաւորի խստութիւնը նրանց դէմ հաւանութիւն չէր գտնում։ Սակայն թագաւորին հարկաւոր էր խորհրդարանը։ Թէ անգլիական երկրներում և թէ Եւրոպայում այնպիսի իրողութիւններ էին տեղի ունենում, որոնք պահանջում էին գործունեայ միջամտութիւն և հետևաբար դրամ։ Յակոբ Ա. Իռլանդիայում ապստամբութեան արիւնահեղ ճնշումից յետոյ սկսել էր գաղութներ հաստատել—անգլիացի գաղթականները խմբերով դիմում էին արքունիք գրաւուած հողերի վրայ բնակուելու, սակայն դրանց պէտք էր պաշտպանութիւն և նիւթական նպաստ։ Եւրոպայի ցամաքի վրայ կռիւը սկսուել էր կրկին Սպանիոյ և Նիդերլանդիոյ մէջ, սկսուած էր երեսնամեայ պատերազմը, որով Յակոբ Ա. առանձնապէս հետաքրքրուած էր, որովհետև նրա դուստրը Պֆալցի կոմս Ֆրիդրիխի ամուսինն էր։ Խորհրդարանն ոգևորուած էր սաստիկ հայրենասիրական և գինուորական զգացմունքներով և պատրաստ էր դրամ տալու ինչքան կամենային գերմանական և սպանիական Հաբսբուրգների դէմ պատերազմելու համար։ Բայց թագաւորն իւր անշնորհքութեամբ խանգարեց գործը. Սպանիոյ հետ երկար ժամանակ բարեկամական յարաբերութիւններ պահպանեց, յոյս ունենալով իւր որդուն ամուսնացնելու սպանիական արքայազնուհու հետ, գերմանական պատերազմի մէջ վերջապէս խառնուեցաւ նա, բայց անգլիական զօրքը սաստիկ վնասուեցաւ ցրտից ու հիւանդութիւններից, որևէ ճակատամարտի մէջ մտած անգամ չլինելով։ Խորհրդարանը փոխանակ վարչութեան օժանդակելու, քննադատում էր նրան, յարձակուում էր թագաւորի անընդունակ և շահասէր սիրելիների

վրայ, պաշտպան էր կանգնում մաքրակրոններին։ Թագաւորը կրկին ու կրկին արձակեց խորհրդարանն, հակառակ Եդուարդ Ա-ի հրովարտակին մաքս նշանակեց ապրանքների վրայ, իսկ իւր ձեռքով պոկեց ստորին խորհրդարանի արձանագրութիւններից մի որոշման թերթ [1]։

Կարլոս Ա.

Նրա յաջորդը, Կարլոս Ա. բոլորովին իւրացրել էր հօր քաղաքականութիւնը, բայց գործ էր դնում աւելի խելացի և ճարտար կերպով։ Պատերազմը Ֆրանսիայի հետ մեծ միջոցներ էր պահանջում, և Կարլոսը վճռեց խորհրդարանից պահանջել այդ։ Ստորին խորհրդարանը պատրաստ էր դրամ տալու, բայց պահանջում էր զեղծումների վերացումը։ Նա ներկայացրեց թագաւորին „խնդրագիր իրաւունքի մասին“ (1628), *որի մէջ բուած էին անգլիացոց քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքները*, հարկեր ու տուրքեր չէր կարելի սահմանել առանց խորհրդարանի համաձայնութեան. ոչ ոք չէր կարող բանդ դրուիլ առանց որոշ մեղադրութեան դատարանի առաջ և այլն։ Թագաւորն հաստատեց խնդրագիրը, բայց շուտով կրկին կռուեցաւ խորհրդարանի հետ և արձակեց (1629։) Ընդդիմադիր կուսակցութեան գլխաւորները բանդը դրուեցան։ 1628 1629

Կարլոս Ա-ի միահեծան կառավարութիւնը

Սրանից յետոյ Կարլոսը փորձեց *կառավարել առանց խորհրդարանի*։ Գլխաւոր դժուարութիւնն այն էր, որ նրա մշտական եկամուտները շատ աննշան էին. զօրաբանակի, նաւատորմղի, վարչութեան և արքունիքի պահպանութեան համար ստիպուած էր օժանդակ հարկեր հաւաքելու, որ օրէնքի համաձայն պէտքէ թոյլատրէր խորհրդարանը։ Թագաւորը չէր կամենում օրէնքը պարզապէս խախտել, այլ աշխատում էր խոյս տալ։ Նա օգուտ էր քաղում օրէնքի անորոշութիւնից մաք-

[1]) Նա այս առթիւ յայտնեց, որ, իւր կարծիքով, խորհրդարանն ոչ մի ինքնուրոյն իրաւունք չունի, այլ նրա բոլոր ազատութիւնները պարգևուած են թագաւորից և կախումն ունին իւր ողորմութիւնից։

սերի վերաբերութեան և առնում էր այդ առանց խորհրդարանի համաձայնութեան։ Ապա նրա խորհրդականները վերականգնեցին միջնադարեան սովորութիւնը նաւատորմղի համար նաւեր պահանջելով քաղաքներից ու կոմսութիւններից։ Իսկապէս նաւեր տալիս էր միայն Լոնդոնը, իսկ միւս վայրերը դրամով էին հատուցանում, և այսպէս գանձարանի համար նոր եկամուտների աղբիւր էր բացում։ Մի կալուածատէր, Գէմպդէն անունով, որ պէտքէ հաշուով 20 շիլլինգ նաւային հարկ վճարէր, հրաժարուեցաւ, դատի մատնուեցաւ, և նրա փաստաբանները ապացուցեցին հարկի ապօրինի լինելը. դատաւորները Գեմպդենին մեղաւոր ճանաչեցին, թէպէտ հասարակաց կարծիքը նրա կողմն էր։ Այս ձևով Կարլոս Ա.-ին յաջողեցաւ մի կերպ առանց նպաստի կառավարուել. նա տասնեմի տարի միայնակ կառավարեց, խորհրդարանը չը գումարելով։ Դժգոհների դէմ, որոնք չափազանց համարձակ յարձակուումէին կառավարութեան կամ հոգևորականութեան դէմ, գործում էր գաղտնի խորհրդի յանձնախումբը, այսպէս կոչուող աստեղային պալատը. սա գործ էր դնում տանջանքներ և մարմնական պատիժներ։

Թագաւորի մետասանամեայ միահեծան կառավարութեան ժամանակ գլխաւոր նպատակներից մէկն էր կալուինական շարժումը ճնշելը, որ հետ զհետէ աւելի էր տարածուում Անգլիայում։ Թագաւորն ատում էր կալուինականներին, իբրև տէրութեան և եկեղեցու հակառակորդներին, որ իւր գահի գլխաւոր նեցուկն էր համարում։ Նա հոգևորականների մէջ հովանաւորում էր այն կուսակցութեան, որ հակուած էր կաթողիկութեան առանց պապի, հերքում էր նախասահմանութեան վարդապետութիւնն, պաշտպանում էր կաթոլիկ հայեացքները խորհուրդների և ծէսերի մասին։ Կէնտրբերրի արքեպիսկոպոս Լօուդը սկսաւ իրեն հպատակ

եկեղեցականներից պահանջել այն արարողութիւնների կատարումը, որ մաքրակրօներն համարում էին կաթոլիկութեան նշան։ Շատ հոգևոր հովիւներ զրկուեցան իրենց պաշտօններից, ջերմեռանդ կալուինականներին, որոնք գրում էին եպիսկոպոսական եկեղեցու դէմ, բարձրագոյն յանձնախմբի կամ աստեղային պալատի դատարանին էին ենթարկում. գործերն աւարտուում էին սովորաբար ականջները կտրելով, խայտառակութեան սեան մօտ կանգնեցնելով և բանդարգելութեամբ։

Երկարատև խորհրդարան։

Քանի տէրութիւնը սովորական վիճակի մէջ էր, թագաւորի անձնական կառավարութիւնը կանգուն կարող էր մնալ, բայց ամենափոքր արտաքին դժուարութեան կամ ներքին խանգարման միջոցին՝ հնար չը կար առանց մեծամեծ դրամական ծախքերի կառավարուելու և, հետևաբար, առանց ժողովրդին դիմելու։ Երկար չ՛անցաւ դժուարութիւնն երևան եկաւ։ Յակոբն ու Կարլոսը մաքառում էին կալուինականութեան դէմ ոչ միայն Անգլիայում, այլ նաև Շոտլանդիայում, ուր տիրապետող էր երիցական եկեղեցին։ Յակոբ Ա. վերականգնեց այստեղ եպիսկոպոսութիւնը, Կարլոսը հրամայեց Շոտլանդիոյ համար ժամակարգութիւն յօրինել անգլիականի ձևով։ Նոր աստուածպաշտական կարգի մտցնելու հէնց առաջին փորձի ժամանակ Էդենբուրգում ապստամբութիւն ծագեցաւ։ Շոտլանդացիք դաշնակցութիւն կազմեցին աւետարանական եկեղեցին, ինչ ձևով որ նա գոյութիւն ունէր մինչև նորամուծութիւնն,
(1638) պաշտպանելու։ Թագաւորը վիճելի կէտերը քննելու համար ժողով գումարեց, որ բաղկացած էր հոգևորական և աշխարհական անձերից — սա վերացրեց եպիսկոպոսական աստիճանն ու չը ցրուեցաւ, երբ Կարլոսն արձակեց նրան։ 1638
Յայտնի ապստամբութեան դէմ թագաւորը զօրք խաղացրեց Անգլիայից, բայց նա դրամ չ՛ունէր, զինուորները բանակից փախչում էին, ծաղ-

րում էին անգլիական ծէսերն և կատարեալ հակակրու-
թիւն էին ցոյց տալիս կռուելու. մի զօրագունդ ջար-
դուեցաւ շոտլանդացիներից։ Կարլոսի ամենից եռան-
դոտ կուսակիցները խորհուրդ տուին նրան խորհրդա-
րանը գումարելու։ Նա վճռեց, վերջապէս, այդ անելու։
1640 Հետ զհետէ երկու խորհրդարան գումարուեցաւ 1640
թուին. սրանցից վերջինը, այսպէս կոչուած „Երկարա-
տեւ“ խորհրդարանն սկսաւ կատաղի կռիւ թագաւորա-
կան կառավարութեան դէմ։ Ամենից առաջ ստորին
խորհրդարանն սկսաւ քրէական հալածանք լորդ Ստրա-
ֆորդի, Իռլանդիոյ փոխարքայի դէմ, որին մեղադրում
էին՝ թէ նա Իռլանդիայում բանակ էր պատրաստում
անգլիացիներին ստրկացնելու համար։ Այս մեղադրու-
թիւնը չէր կարելի դատարանական կարգով ապացու-
ցանել, ուստի գործը վարեցին բանադրութեան կար-
գով։[1] Կարլոսը թոյլութիւն ունեցաւ հրաժարուելու
իւր օգնականից, և Ստրաֆորդը գլխատուեցաւ։

Այս հետևեցին մի շարք ձեռնարկութիւններ, որ
վերաբերում էին տէրութեան հաստատութիւններին։
Խորհրդարանը վճռեց, որ ինքն արձակուել կարող է
միայն իւր իսկ համաձայնութեամբ, ոչնչացրեց աստե-
ղային պալատն ու բարձրագոյն յանձնախումբը, յայտա-
րարեց, որ, մաքսերի ու նաւային հարկի հաւաքումն
ապօրինի է, մինչև այստեղ խորհրդարանը գործում էր
միահոգի և միաբան։ Բայց երբ եկեղեցական խնդիր-
ների հասաւ բանը, բաժանուեց զանազան կու-
սակցութիւնների։ Մաքրակրօններն հալածուելով ժո-
ղովրդական էին դարձել, և խորհրդարանի մեծագոյն
մասն նրանց կողմն էր։ Դրանք պահանջեցին եպիսկո-

[1] Բանադրութեան կամ տարագրութեան կարգն հետեւեալ ձեւով
էր կատարւում. երեսփոխանական ժողովն ընդունում էր բիլլը, այս-
ինքն՝ օրէնքի ծրագիրն, որով դատաճան էր հրատարակւում մէկը, այդ
բիլլն ուղարկւում էր լորդերին, եթէ նրանք համաձայնում էին, այն
ժամանակ օրէնքի ծրագիրն առաջարկւում էր թագաւորին ի հաս-
տատութիւն։

պոսների մերժումը վերին կամ լորդերի խորհրդարա-
նից և նոյն իսկ եպիսկոպոսական իշխանութեան ջըն-
ջումը։ Սակայն այս առաջարկութիւնների դէմ կազ-
մուեցաւ զօրաւոր ընդդիմադիր կուսակցութիւն այն
մարդկանցից, որոնք չէին ցանկանում ընկնել երեցա-
կան եկեղեցու խիստ իշխանութեան տակ և վախենում
էին հին հաստատութիւնների աւելի մեծ չափով աւե-
րումից։ Կռիւն առանձնապէս սաստկացաւ Իռլանդիայից
եկող վատ լուրերի պատճառաւ։ Կելտ ազգաբնակու-
թիւնն ապստամբել էր և ջարդել անգլիացի գաղթա-
կաններին, որ գրաւել էին կելտերից խլուած հողերը։
Պէտք էր զօրք ուղարկել Իռլանդիա, իսկ խորհրդարանն
այս զօրքերի հրամանատարութիւնը չէր կամենում թա-
գաւորին յանձնել, վախենալով՝ որ նա օգուտ կըքաղէ
դրանցից իւր անգլիական թշնամիների դէմ։ Ստորին
խորհրդարանը Պիմի և Գէմպդէնի առաջնորդութեամբ
պահանջում էր, որ նախարարները հաշիւ տային իրենց
գործունէութեան մասին խորհրդարանին և որ եկեղե-
ցական վէճերը լուծուէին խորհրդարանից նշանակուած
հոգևորականների յանձնաժողովով։ Այդ կընշանակէր, որ
խորհրդարանն իրեն թագաւորի տեղն էր դնում, յա-
փրշտակում էր բարձրագոյն իշխանութիւնը։ Նոյն իսկ
երեսփոխանների ժողովում այդ առաջարկութիւնը մե-
ծամասնութեան 11 ձայնն ստացաւ։

Զայրացած թագաւորը հրամայեց Պիմի, Գէմպդէնի
և ստորին խորհրդարանի այլ երեք անդամների դէմ
մեղադրութիւն յարուցանել, որ նրանք Անգլիա են կան-
չել շոտլանդական զօրքը։ Նա ինքը խորհրդարան եկաւ
զինուած գնդով շրջապատուած, որ ձերբակալել տայ
մեղադրուածներին, թէպէտև խորհրդարանի անդամնե-
րը չէին կարող առանց ժողովի համաձայնութեան բան-
տարկուել։ Բայց մեղադրուածներին զգուշացրել էին և
նրանք ժողովի չէին եկել։ Թագաւորը հեռացաւ խոր-

Հըրդարանից զայրոյթի աղմուկների մէջ, իսկ Լոնդոնն իւր համակրութիւնը դէպի հինգ երեսփոխաններն աղմուկներով արտայայտեց։ Թագաւորին, այս անյաջող փորձից յետոյ, մնում էր միայն թողնել մայրաքաղաքն ու հեռանալ։ Նա գնաց դէպի հիւսիս և սկսաւ զօրք
1642 ժողովել (1642)։

Ներքին պատերազմ

Երբ խնդիրն հասաւ այսպիսի ծայրայեղութեան, անգլիական ժողովրդի մեծագոյն մասը թագաւորի կողմը բռնեց։ Հիւսիսային և արևմտեան կոմսութիւնները նրա կողմն էին, հարաւային և արևելեանները խորհրդարանի։ Նրա կողմնակիցներին, որոնց մէջ կային բազմաթիւ հին ազնուական սերնդի կալուածատէրեր, սկսան անուանել *ասպետներ*։ Խորհրդարանի զօրաբանակում գերակշռում էին քաղաքացիք և շատ աչքի էին ընկնում մաքրակրօնները, որ կոչուեցան *կլորգլխաններ*, որովհետև դրանք իրենց գլխի մազերը տակիցն էին խուզում։ Առաջին երկու տարին պատերազմը շարունակւում էր առանց վճռական հետևանքների, բայց ընդհանրապէս թագաւորին ձեռնտու կերպով, որովհետև ասպետներն աւելի պատերազմասէր էին և աւելի զինավարժ։ Գործն ուղղելու համար, Պիմը համոզեց խորհրդարանին դիմել շոտլանդացիներին և օգնութեան կոչել։ Նրանք համաձայնեցին զօրք ուղարկելու Անգլիա, բայց փոխադարձաբար պահանջեցին, որ սրանք համաձայնեն երիցական եկեղեցին հաստատել Անգլիայում։ Յիրաւի, դաշնակցութիւն և պայման (լիգա և կոնվէնանտ) հաստատուեցաւ «Անգլիայում կրօնը բարեփոխելու համաձայն բարեկարգուած եկեղեցիների և Աստուծոյ խօսքին»։ Այս պայմանի համաձայն շոտլանդացիք սահմանն անցան, բայց առանձին գործունեայ մասնակցութիւն չ'ունեցան պատերազմներում. թագաւորն էլ իւր կողմից բանակցութիւններ սկսաւ իռլանդական կաթոլիկների հետ և վարձկան զօրք ստացաւ օգնութեան Իռլանդիայից։

Գործերը վճռական ընթացք ունեցան, երբ խորհրդարանի բանակի մէջ չափաւոր անգլիկանների և երիցականների փոխարէն յառաջ անցան կրօնական մոլեռանդները։ Անգլիայում յատկապէս ստորին դասակարգերում շատ աղանդաւորներ կային—կրկնակնունքներ, հինգերորդ միապետութեան [1]) մարդիկ և այլն։ Տիրապետող եկեղեցիներից, անգլիկանից և երիցականից, աղանդաւորներն հեռու էին պահում իրենց և պահանջում էին, որ ամէն մի համայնք իրաւունք ունենայ իւր կամեցածին պէս կարգադրելու իւր կրօնական գործերը։ Նոյն հայեացքն ունէին և կալուինականներն, որոնք պնդում էին առանձին համայնքների կրօնական ինքնուրոյնութեան վրայ։ Այսպէս ծագեցաւ «անկախների» (ինդէպենդէնտ) կուսակցութիւնը. խորհրդարանում այդ կուսակցութիւնը սկզբում միայն հինգ ներկայացուցիչ ունէր, բայց նրա կուսակիցները զօրքի մէջ մեծ ոյժ էին տալիս կուսակցութեան։ Դրանց առաջնորդը բանակի մէջ էր Օլիվէր Կրոմուէլ, մի մանր կալուածատէր արևելեան Անգլիայից։ Ներքին պատերազմի սկսուելուց յետոյ շուտով նա այն կարծիքն յայտնեց, որ ասպետների ոյժն իրենց ասպետական պատուազգացութեան մէջ է և որ նրանց յաղթելու համար պէտք է օգտուիլ մի այդպիսի զօրեղ զգացմունքից—*կրօնական ոգևորութիւնից*։ Նա արևելեան կոմսութիւնների աղանդաւորների մէջ կազմեց մի հեծելագունդ, և դրանք գերազանց զինուորներ դարձան. սրանք կռուի մէջ էին մտնում, իբրև մի սուրբ գործի և մահուանից չէին վախենում [2]), փոքր առ փոքր բոլոր խորհրդարանական բանակը վերակազմուեցաւ «Կրոմուէլեան սրբերի» քաջագործութիւնների ազդե-

---

[1]) Սրանք սպասում էին երկրիս վրայ Քրիստոսի թագաւորութեան սկսուելուն, որ պիտի տևէր հազար տարի։

[2]) Կրոմուէլի զինուորներն ստացան «երկաթէ կողեր» (Iron Sides) մականունը։

ցութեան տակ։ Հետեւանքն եղաւ թագաւորի կատարեալ պարտութիւնը։ Կարլոսը փախաւ շոտլանդացիներին ապաւինեց, բայց սրանք մատնեցին նրան անգլիացիներին։

Խորհրդարանի երիցական մեծամասնութիւնն անմիջապէս բանակցութիւններ սկսաւ թագաւորի հետ, որպէս զի վերականգնէ նրա իշխանութիւնն երիցական եկեղեցին ճանաչելու պայմանով։ Խորհրդարանն այժմ վախենում էր իւր սեփական բանակից և աշխատում էր ինչքան կարելի է շուտով նրանից ազատուել։ Զինուորներին առաջարկեցին գնալ Իռլանդիա, իսկ նրանց վարձը չը վճարեցին։ Բանակն իւր կողմից պահանջում էր արդարացի վարձատրութիւն և ազատութիւն բոլոր դաւանութիւնների, բացի կաթոլիկութիւնից. անկախները չէին կամենում հպատակել երիցականների բռնակալութեան։

Խորհրդարանի կռիւը զօրքի հետ։

Խորհրդարանը սակայն բաւական զօրութիւն չունէր բանակի հետ մրցելու համար։ Լոնդոնի քաղաքացիք և հարաւային կոմսութիւնների գիւղացիք չէին կարող ուժերը չափել Կրոմուէլի „երկաթէ կողերի“ հետ։ Թէպէտ և թագաւորն համոզեց շոտլանդացոց զօրք ուղարկել Անգլիա, բայց այդ էլ չ՚օգնեց։ Մի քանի շաբաթում երկրորդ անգամ պատերազմն աւարտուեցաւ. բանակը գրաւեց Լոնդոնը, հարաւային կոմսութիւններից ժողոված զօրքը ցրուեց և խսպառ ջարդեց շոտլանդացոց։ Խորհրդարանի և թագաւորի պատուհասումն երկար չըտևեց։ Զինուորները մաքրեցին խորհրդարանն, այսինքն՝ փախցրին երիցական մեծամասնութեան անդամներին։ Երեսփոխանական ժողովում մնացած անկախներն յարուցին թագաւորի դէմ դաւաճանութեան մեղադրանք։ Լորդերի խորհրդարանն հրաժարուեցաւ մասնակցելու այդպիսի դատի։ Ստորին խորհրդարանի մնացորդը վերացրեց լորդերի խորհրդարանն և նոր

դատարան կազմակերպեց թագաւորի գործը վճռելու
համար։ Թէպէտ և Կարլոսը յայտարարեց, թէ ինքը չէ
ճանաչում իւր հպատակների իրաւունքն իրեն դատելու,
դատաստանն արագութեամբ յառաջ տարին և Կարլոսին
մահուան դատապարտեցին այն պատճառով, որ նա
ազգամիջեան պատերազմ էր վարել։ Կարլոսին 1649 թուի 1649
սկզբում գլխատեցին իւր իսկ արքունիքի բակում
Ուայտհոլում։

Հասարակապետութիւն։

Իշխանութիւնն Անգլիայում պատկանում էր զօրքին և ստորին խորհրդարանի մնացորդին, որ 1640 թ. էր ընտրուած։ Այս խորհրդարանն յայտարարեց իրեն ազգային ժողով (պառլամենտ), հասարակապետութիւն հրատարակեց և գործադիր իշխանութիւնը յանձնեց պետական խորհրդին, որի մեծագոյն մասն իրենց միջից էր։ Սկզբներում զօրքը չէր ընդդիմանում, որովհետև ինքը շատ բաւական գործ ունէր։ Կրոմուէլն անցաւ Իռլանդիա և արիւնահեղ հատուցումն տուաւ կելտերին և թագաւորականներին.[1]) դիմադրողներին խնայել չը կար. կոտորածներին յաջորդում էր ստացուածքի գրաւումն, որի շնորհիւ իռլանդական հողերի կէսից աւելին խլուեցան իրենց նախկին տէրերից։ Այդ միջոցին Շոտլանդիայումն երևան եկաւ Կարլոս Ա.-ի որդին, Կարլոս Ստիւարտը, իսկ շոտլանդական ազգային ժողովը նրան թագաւոր ճանաչեց։ Վտանգաւոր արշաւանքից յետոյ Կրոմուէլը խորտակեց շոտլանդացոց զօրութիւնը. նրանց զօրքը դիմեց Անգլիա, այնտեղ ապստամբութիւն յարուցանելու յուսով, բայց Կրոմուէլը հասաւ նրանց յետևից և բոլորովին ոչնչացրեց։ Դրանից յետոյ երկարատև կռիւ սկսաւ Հոլլանդիոյ հետ։ Ազգային ժողովն հրատարակեց «Նաւարկութեան վճիռ», որով արգելուում էր անգլիական նաւահանգիստներն ապրանք բերելն այլ կերպ, բայց եթէ անգլիական նա-

[1]) Կարլոս Ա.-ի որդի, Կարլոս Ստիւարտի կուսակիցներին։

ւերով կամ այն երկրների նաւերով, որտեղից ապրանքներն էին։ Այս վճիռը դրած էր հոլլանդական ծովագնացների դէմ, որոնք պարապում էին օտարերկրեայ ապրանքներն Եւրոպայից կամ գաղութներից տեղափոխելով։ Այսու Անգլիան մրցման մէջ մտաւ Հոլլանդիոյ հետ իբրև ծովային պետութեան։ Երկու կողմից էլ փառաւոր քաջագործութիւններ կատարուեցան, բայց պատերազմը վճռական ելք չ'ունեցաւ։

Ցամաքային զօրքն անգործ մնաց Շոտլանդացոց յաղթելուց յետոյ և անմիջապէս ազգային ժողովին զգալ տուաւ, որ *ոյժն իւր ձեռքին* է։ Ազգային ժողովն զբաղուած էր տէրութեան վերջնական կազմակերպութեամբ և մշակում էր բարեփոխուած ընտրական կարգ ու կանոն, որի զօրութեամբ պատգամաւոր ընտրելու իրաւունքը խլուեցաւ աննշան բնակավայրերից, որոքն այդ ստացել էին միջին դարերում, և բաշխուեցաւ նշանաւոր քաղաքների միջև համաձայն բնակչաց թուին։ Բայց միևնոյն ժամանակ *Երկարատեւ խորհրդարանի* անդամները չէին կամենում հրաժարուիլ իրենց իշխանութիւնից և արդարանում էին նրանով, որ ազատ ընտրութիւնները մեծամասնութիւնը թագաւորականներին կը տան։ Այս պատճառով վճռեցին ընտրութիւններ նշանակել միայն բաց մնացած տեղերի համար, իսկ արդէն ժողովին մասնակցող պատգամաւորներին համարել նոր ազգային ժողովի անդամ։ Կրոմուէլն օգուտ
1653 քաղեց այս վճռից, որ 1653 թուին հաստատում էր 1640 թուականի ընտրեալների իրաւունքը, որպէս զի *ցրուէ Երկարատեւ պառլամենտը*։ Նա խորհրդարանի դահլիճը մտաւ զինուորներով, ճառ խօսեց պատգամաւորներին, որի մէջ մեղադրեց նրանց իբրև անիրաւ և եսական անձինք, և հրամայեց մաքրել դահլիճը։ Ամենից աւելի նշանակութիւն ունեցող անդամներին ճանապարհ ձգեց հայհոյանքներով։

Կրոմուէլի խնամակալութիւնը։

Կրոմուէլը միակ մարդն էր, որ կարող էր ազդել զօրքի վրայ եւ երկրի մէջ իշխանութիւն ու կարգ պահպանել։ Սա գործի մարդ էր. կոշտ ու կոպիտ, քաղաքական տեսութիւններն ատող, իւր ձևով կրօնասէր, իսկ որ գլխաւորն է—առողջ խելքի և երկաթէ կամքի տէր։ Նա կարողացաւ իւր հեղինակութիւնը պահպանել զօրքի մէջ, մինչև իսկ այն ժամանակ, երբ թողել էր յեղափոխական լինելն և դարձել էր կառավարիչ։ Նա վարպետութեամբ օգտուում էր այն հանգամանքից, որ «սրբերը» բանակի մէջ զանազան աղանդների հետևողներ էին, և կարևոր դիպուածում անողորմ կերպիւ ճնշում էր մէկ կամ միւս խմբակի փորձերն իւրանց ծրագրները յեղափոխութեան միջոցով իրականացնելու։ Այսպէս ճնշուեցան *Լեւելլերների* շարժումները, որոնք կամենում էին հաւասարացնել հասարակութիւնն և պահանջում էին ստացուածքի անհաւասարութեան ջնջումը, և հինգերորդ միապետութեան մարդոց շարժումը, որոնք պատրաստուում էին վերակազմելու հասարակութիւնն համաձայն Աստուածաշնչի ցուցման։

Բայց Կրոմուէլի դիկտատորութեան դժուարին էր օրինական ձև տալը։ «Երկարատեւ» պառլամենտի ցրուելուց յետոյ ժողոված խորհրդարանը զբաղուեց դատական բարեփոխութիւններով և եկեղեցական կազմակերպութեամբ, ապա արձակուեցաւ մի քանի շաբաթից յետոյ։ Կրոմուէլի կուսակիցներն իրենք կազմեցին մի նոր սահմանադրութիւն,[1]) որով Կրոմուէլն ստանում էր գործադիր իշխանութիւն խնամակալ տիտղոսով, իսկ օրէնսդրական իշխանութիւնն յանձնուեցաւ ազգային ժողովին, որ սակայն իրաւունք չ'ունէր սահմանադրութիւնը փոխելու։ Առաջին իսկ ազգային ժողովը, որ նոր սահմանադրութեան զօրութեամբ էր գումարուել, սկսաւ

1) Կոնստիտուսիօն—սահմանադրութիւն կամ իսկապէս «կազմութիւն» տէրութեան, գումարումն հիմնական օրինաց, որոնք որոշում են տէրութեան կազմութիւնը։

փոփոխել այդ և արձակուեցաւ Կրոմուելից: Մի առ ժա-
մանակ սա ինքը կառավարեց միայնակ: Հարկերը ժողո-
վում էր կամայական կերպով, բայց աւելի յաջող քան
թէ Կարլոս Ա., որովհետև սրա ձեռքի տակ կար զի-
նուորական ույժ—Նրա հրամանները կատարում էին
տասն մեծ զօրագլխները (գեներալ-մայօր), որոնց նշա-
նակել էր նահանգների վրայ: Նրա ներքին կառավա-
րութեան լաւագոյն կողմը *հաւատոյ ազատութիւնն* էր,
որ սակայն չէին վայելում միայն կաթոլիկները: Ար-
տաքին գործերը սոխալեցին խնամակալին կրկին գիմելու
ազգային ժողովին: Նա սկսել էր Ֆրանսիոյ հետ դաշ-
նակցելով պատերազմել Սպանիոյ դէմ. դաշնակիցները
գրաւել էին Դիւնկիրխէնը,[1] և խորտակել էին սպա-
նիական նաւատորմը գաղութներում: Բայց պատերազմն
այնքան սուղ էր նստում, որ Կրոմուէլը չը համարձա-
կուեցաւ ժողովրդի վրայ նորանոր հարկեր դնելու ա-
ռանց ազգային ժողովի համաձայնութեան: Սա պա-
հանջուած դրամը տուաւ, վերականգնեց երկրորդ խոր-
հրդարանն, որ պիտի փոխարինէր լորդերի դահլիճը, և
խնդրեց խնամակալին թագաւոր տիտղոսն ընդունել:
Կրոմուէլն հրաժարուեցաւ դրանից զօրքի դժգոհու-
1658 թեան պատճառաւ: Նա մեռաւ 1658 թուին, և կառա-
վարութեան ձեւի խնդիրը կրկին հանդէս եկաւ:
Կրոմուելի որդին Ռիչարդ հրատարակուեցաւ խնա-
Վերահաստատութիւն: մակալ, բայց նա հեղինակութիւն չ'ունէր զօրքի մէջ
և շուտով հրաժարուեցաւ իշխանութիւնից:
Կրկին սկսուեցան անկարգութիւններն, որոնց վախ-
ճան տուաւ Մոնկ, Շոտլանդիայում հրամանատար նշա-
նակուած զօրագլուխը: Սա իւր բանակով դիմեց Լոն-
դոնի վրայ, և սրա ազդեցութեան տակ ազգային ժո-
ղով գումարուեցաւ հին ձեւով, լորդերի խորհրդարա-
նով: Դրա մէջ ահագին մեծամասնութիւնը դահը Կար-
լոս Ստիւարտին վերադարձնելու կողմն էր: Սա ևս իւր

[1] Ֆլանդրիայում:

կողմից ուղարկեց Նիդերլանդիայից մի հրովարտակ, որի
մէջ խոստանում էր ներել ապստամբներին, վարձահա-
տոյց լինել զօրքին և ապահովել հաւատոյ ազատու-
թիւնը: Հրովարտակս ստացուելուն պէս ազգային ժողովը
վճռեց, որ, համաձայն հին օրէնքների, կառավարու-
թիւնը բաղկանում է թագաւորից, երեսփոխանների և
լորդերի խորհրդարաններից: *Ազգի ցանկութիւնն հին
կարգին դառնալու* այնքան պարզ էր, որ զօրքը, զըր-
կուած առաջնորդից, հպատակուեց: Կարլոս Բ. 1660 1660
թուին ժողովրդի ցնծութեան աղաղակներով հանդիսա-
ւոր կերպիւ մուտք գործեց Լոնդոն: Կրոմուելեան զօ-
րագնդերն անմիջապէս ռոճիկ և. արձակումն ստացան,
իսկ Կարլոսի խոստմանց միւս կէտերն այնքան դիւրին
կերպիւ չ'իրագործուեցան: Բարձրագոյն դատարանի ան-
դամներից մի քանիսը, որ Կարլոս Ա.-ին մահուան էին
դատապարտել, սպանուեցան, իսկ որ գլխաւորն է, թա-
գաւորի գումարած ազգային ժողովն ընդդիմացաւ հա-
ւատի ազատութեան հաստատման: Հասարակաց կար-
ծիքի մէջ յեղաշրջումն էր տեղի ունեցել. ինչպէս որ
Կարլոս Ա.-ի զեղծումներն ու Լօուդի փորձերն առաջ էին
բերել մաքրակրօնների երկարատեւ պառլամէնտի ընտրու-
թիւնն, այսպէս էլ մաքրակրօնների ձանձրացուցիչ խըս-
տութիւնը, ներքին պատերազմի սարսափներն, զօրքի
բռնակալութիւնն յառաջ բերին *յետաշրջումն ընդդէմ
մաքրակրօնութեան*: Կարլոս Բ-ի ժամանակ շատ զուար-
ճացան և ուրախ կեանք անցկացրին. եկեղեցական խըն-
դիրներում ազգային ժողովը բռնում էր եպիսկոպոսա-
կանութեան կողմը և ճնշում մաքրակրօնութիւնը,
մղուած այն ատելութիւնից, որ տածում էին դէպի Կրո-
մուելի զինուորներն: Հոգևոր հովիւներից և ուսուցիչ-
ներից պահանջում էին «միօրինակութիւն», այսինքն՝
եպիսկոպոսական աստուածպաշտութեան եղանակի ըն-
դունելութիւն. 2000 հոգևոր հովիւ այս վճռի հի-

ման վրայ թողին իրենց պաշտօնները։ Քաղաքներին արգելուեցաւ քաղաքային խորհրդարանների անդամ ընտրելու այն անձինքներին, որոնք չէին հրաժարուել երեցականների դաշնաւորութիւնից և չէին երդուել, որ թագաւորին ընդդիմանալն ապօրինի են համարում։ Անգլիկան եկեղեցուց պառակտուածներին—«Դիսսենտերներին» (անհամաձայններին) արգելուեցաւ ժողովուել և պաշտօն կատարել։ Թագաւորը չէր համակրում այս օրէնքներին և փորձեր էր անում հաւատոյ ազատութիւն հաստատել տալու. դրա համար իւր յատուկ պատճառներն ունէր — նա հովանաւորում էր կաթոլիկներին եւ վերջապէս ինքը գաղտնի կերպով ընդունեց կաթոլիկութիւն։ Բայց ազգային ժողովը տեղի չէր տալիս, և Կարլոսը ստիպուած էր սահմանափակուել օրէնքի խստութիւնը մեղմացնելով մասնաւոր դիպուածներում։ Կարլոսն ընդունակ մարդ էր, բայց ամենից առաջ նա ապրում է իւր զուարճութեան համար, չ՚ունէր ոչ անկեղծութիւն, և ոչ արժանապատուութեան զգացմունք։ Նա չ՚ամաչեց Ֆրանսիական թագաւոր Լուդովիկոս ԺԴ-ի վերաբերութեամբ կախման վիճակի մէջ մտնել, ստանում էր նրանից դրամական ընծաներ ու նպաստներ, պայման էր դրել, որ ֆրանսիական զօրքը պէտք է իրեն պաշտպանէր այն դէպքում, եթէ իւր կաթոլիկ դառնալն և կաթոլիկներին հովանաւորելն Անգլիայում ապստամբութիւն յառաջ բերէին։ Վերջապէս, արտաքին քաղաքականութեան մէջ ևս պարտաւորուել էր Ֆրանսիային օգնելու և նրա հետ միասին պատերազմ էր վարում Հոլլանդիայի դէմ։

Կարլոս Բ-ի կռիւը պառլամէնտի դէմ։

Կարլոսի ամօթալի դաշն Լուդովիկոսի հետ գաղտնի էր պահուում, բայց նրա հետեւանքները զգացուում էին։ Հոլլանդիոյ հետ ծովի վրայ յամառ և անվճռական պատերազմ էր վարուում, մինչ Լուդովիկոս ԺԴ. անում էր, ինչ որ կամենում էր, Նիդերլանդիայում սպանիացիներից ամրոցներ էր խլում, իսկ Հոլլանդացոց այն վիճակի մէջ դրաւ, որ նրանք ստիպուեցան ծովի առաջը փակող թմբերն ու ամբարտակները պատռել և հեղեղել երկերը, որպէս զի կանգ առնել տան ֆրանսիական զօրքին։ Անգլիացիներին իրենց առողջ բանականութիւնը թելադրում էր, որ նրանց գլխաւոր թշնամին Լուդովիկոս ԺԴ. է, և ոչ թէ Նիդերլանդիոյ միացեալ նահանգները, սրա հետ միասին պապականների դաւադրութիւններից ծագող երկիւղը կասկածի տեղի էր տալիս, որ Անգլիայում յեղաշրջումն է պատրաստուում յօգուտ կաթոլիկութեան։ Կարլոս Բ-ի հաւատարիմ ազգային ժողովը փոխանակ նրա ցանկութիւնը կատարելով հաւատոյ ազատութիւն տալու և կաթոլիկներին, ընդունեց այսպէս կոչուող «տէստ-ակտը» (վկայութեան վճիռ). ամեն ոք, որ արքունի պաշտօնի էր նշանակուում, պարտական էր հրաժարուելու գոյափոխութեան[1]) վարդապետութիւնից և հաղորդուելու անգլիկան եկեղեցու ծիսով։ Այս պահանջը տէրութեան ծառայութիւնից մերժում էր կաթոլիկներին եւ այն անհամաձայններին (դիսսենտեր), որոնք չէին կամենում անգլիկան
արարողութեան հպատակել (1673)։ Չընայելով դրան, 1678
թագաւորը շարունակում էր իւր հակազգային քաղաքականութիւնն և շատ նպաստում Լուդովիկոս ԺԴ.-ի յաջողութիւններին, որ Նիմվեգեան խաղաղութիւնից
(1678) յետոյ Եւրոպայում այն դիրքը գրաւեց, որ յիշե- 1678
ցնում էր Փիլիպպոս Բ.-ի դերն իւր թագաւորութեան սկզբում։ Ժողովրդի մէջ պտտող զրոյցները կաթոլիկների լարած որոգայթների և նրանց սպառնացող արշաւանքի մասին, առիթ տուին մի անպիտանի[2]) մատնութիւն հնարելու պապականների դաւադրութեան մասին, որոնք իբր թէ մտադիր էին սպանել թագաւո-

[1]) Transsubstantiation—գոյափոխութիւն, գինու և հացի փոխարկումն յարիւն և ի մարմին Քրիստոսի։ Ծ. Թ.

[2]) Տիտ Օտս անունով։

րին, գահի վրայ բազմացնելու նրա եղբօրը—մի կաթոլի-
կի, Եօրքի դքսին, և ֆրանսիացիներին Անգլիա հրաւի-
րելու: Այս մատնութիւնը զարհուրանք պատճառեց և
խիստ հալածանք հանեց կաթոլիկների դէմ: Միևնոյն
ժամանակ յայտնի եղաւ ազգային ժողովին, որ թագա-
ւորն յերաւի գաղտնի թղթակցութիւն ունի Լուդովի-
կոս ԺԴ.-ի հետ և դրամ է խնդրում նրանից, որպէս զի
ազատուի խորհրդարանին դիմելու անհրաժեշտութիւ-
նից: Գայթակղութիւնը ծածկելու համար Կարլոսը խոր-
հրդարանն արձակեց, որ տասն և եօթը տարի գու-
մարուած էր: Եթէ նա սպասում էր, որ յաջորդ խոր-
հրդարանի անդամներն աւելի դիւրաւ համոզուող կը լի-
նին, շատ էր սխալւում: Հասարակաց կարծիքը կրկին
յեղաշրջուել էր, և այժմ ամենից աւելի վախենում էին
թագաւորի և կաթոլիկների բռնութիւնից: Այս տրամա-
դրութեան վրայ հիմնեց իւր ծրագիրն ընդդիմադիր կու-
սակցութեան առաջնորդ Լորդ Շեֆտսբերին: Նա պա-
հանջում էր *քաղաքացիական ազատութիւն, հաւատոյ
ազատութիւն դիսսենտէրների (անհամաձայնների)
համար* և կաթոլիկ, Եօրքի դքսի մերժումը գահաժառան-
գութիւնից: Շեֆտսբերիի համախոհները ստացան *վիգ*
մականունը, որ առաջ գործ էր դրուում արևմտեան
Շոտլանդիոյ ապստամբած մաքրակրօնների համար. Թա-
գաւորականներին և խիստ անգլիկաններին սկսան կո-
չել *տորի*, ինչպէս առաջ կոչում էին իռլանդացի այն
կաթոլիկներն, որոնք աւազակութիւններով էին պարա-
պում: Habeas Corpus-ի [1] վճիռն ընդունուեցաւ խոր-
1679 հրդարանում 1679 թուին, դրանով վերջնական կերպով
որոշուեցաւ, որ իւրաքանչիւր բանդարկուած անգլիացի,
իրաւունք ունի պահանջելու, որ նրան 24 ժամուան
ընթացքում դատարանին ներկայացնեն, ցոյց տալով
բանդարգելութեան օրինական պատճառները. դատարանը

[1] Օրէնք անձնակալութեան: Ծ. Թ.

կարող էր հաստատել բանդարկութիւնը կամ արձակել
բռնուածին:

Վիգ կուսակցութեան աւելի մեծ յաջողութեան
խանգարեց այն, որ նրանք չափազանց մեծ բան էին
պահանջում—Եօրքի դքսի գահաժառանգութիւնից զըր-
կուիլը: Այս պահանջին չէին համակրում չափաւոր անգ-
լիացիք, մանաւանդ այն պատճառով, որ դժուար էր
այլ յարմար ժառանգ առաջարկելը: Թագաւորը մի քա-
նի անգամ արձակեց խորհրդարանն, և վերջապէս իւր
ասածն արաւ: Նրա մահուանից յետոյ գահն ամբար-
ձաւ Եօրքի դուքսը Յակոբ Բ. անուամբ:[1]

Վիգերի երկիւղը շուտով արդարացաւ: Յակոբն
սկսաւ կաթոլիկներին նշանակել զինուորական և հա-
մալսարանական պաշտօնների, իսկ նրանցից մէկին մին-
չև իսկ եպիսկոպոս կարգեց: Նա քանդեց վկայու-
թեան-վճիռը (տէստ-ակտ), բայց արդարանում էր այնու,
որ իրեն իրաւունքն էր ազատել հպատակներին օրէնքը
կատարելուց: Այս կարծեցեալ իրաւունքի զօրութեամբ
նա յայտարարութիւն հրատարակեց, որով թոյլ էր տա-
լիս կաթոլիկներին և դիսսենտէրներին իրենց կարգով
աստուածպաշտութիւն կատարել: Բողոքական քարոզիչ-
ներին արգելեց կաթոլիկութեան դէմ քարոզել: Թա-
գաւորը 1688 թ. հրամայեց հոգևոր հովիւներին իւր 1688
յայտարարութիւնը կարդալ եկեղեցիներում: Նրանք հրա-
ժարուեցան, իսկ եօթն եպիսկոպոսներ Յակոբին խընդ-
րագիր ներկայացրին ազատելու հոգևորականներին այդ
պարտականութիւնից: Թագաւորը սարսափելի կերպով
զայրացաւ, յայտնեց, որ այդ ապստամբութիւն է, և ե-
պիսկոպոսներին դատի ենթարկեց իւր կառավարութեան
դէմ զրպարտութիւն հրատարակելու համար: Երդուեալ

[1] Շեֆտսբերին գահի թեկնածու ներկայացրեց թագաւորա-
կան տան ազգական դուքս Մոնմութին, բայց այս ծրագիրը համա-
կրութեան չարժանացաւ և յաջողութիւն չունեցաւ: Մոնմութն ապս-
տամբութիւն յարոյց արևմտեան կոմսութիւններում, բայց ջարդուե-
ցաւ, և նրա կուսակիցներն անողորմ կերպիւ դատուեցան:

դատաւորներն արդարացրին եպիսկոպոսներին, և այս
արդարացումը ցնծութեամբ ընդունուեցաւ ժողովրդի և
նոյն իսկ բանակի մէջ: Այս առթիւ ծագած շփոթու-
թիւնների ժամանակ Յակոբին մի որդի ծնուեցաւ:
Մինչև այդ ժամանակ անգլիացիք յոյս ունէին, որ կա-
թոլիկ թագաւորի մահուանից յետոյ թագը կ՚անցնի
նրա դստեր Մարիային, որ բողոքական էր և բողոքա-
կանի կին—Միացեալ նահանգների կուսակալ, Վիլհելմ
Օրանացու կինը, արդ այս յոյսն էլ կորաւ: Ո՛չ վիգերն
եւ ո՛չ տորիները չէին կարող հաշտուել այն մտքի հետ,
որ բողոքական երկրում տիրապետութիւնը կաթոլիկ
հաւատութեան ձեռքին լինի: Երկու կուսակցութեան
գլխաւորներն ևս գրաւոր հրաւէր ուղարկեցին Վիլհելմ
Օրանացուն, որ զօրքով Անգլիա անցնի բողոքական
կրօնն ու անգլիական օրէնքները պաշտպանելու հա-
1688 մար: Վիլհելմը 1688 թուի վերջին Անգլիա անցաւ և
դիմեց Լոնդոնի վրայ: Նրան դիմաւորում էին ցնծու-
թեամբ և Յակոբի զօրագնդերն անցնում նրա կողմը:
Յակոբը տեսնելով որ ամէնքը լքանում են իրեն, փա-
խաւ Ֆրանսիա, իսկ Վիլհելմը նոր պառլամէնտ գու-
մարեց տէրութեան կազմակերպութեան խնդիրը վճռե-
լու համար: Այս պառլամէնտում, կամ ինչպէս անուա-
նում էին, կոնվենսիոնում (համագումարում), վճռուե-
ցաւ, որ Յակոբ Բ. քանդել է թագաւորի և ժողովրդի
միջև եղած դաշն, և իւր Անգլիայից հեռանալովը հրա-
ժարուել է գահից, ուստի և գահը պէտք թափուր
համարուի: Վիլհելմն ու Մարիան հրաւիրուեցան բազ-
մելու այդ գահի վրայ: Այսպէս կոչուած «իրաւունքնե-
րի բիլլում» (bill of rights) սահմանուեցան և հաս-
տատուեցան անգլիական ազգի ազատութիւնները, որոնց
պատճառաւ կռիւ էր մղւում թագաւորի հետ. օրէնք-
ները կատարելուց ազատելու իրաւունքը ձևական կեր-
պով խլուեցաւ թագաւորից. հարկերն ու դրամական

տուրքերը կարող էին հաւաքուել միմիայն պառլամեն-
տի համաձայնութեամբ, մշտական զօրք պահելու հա-
մար պահանջւում էր պառլամէնտի յատուկ թոյլտուու-
թիւնը. քաղաքացիք իրաւունք ունէին իշխանութեան
խնդիրներ և գանգատներ տալու. ոչ ոք կարող չէր
պատասխանատուութեան ենթարկուիլ պառլամէնտների
դահլիճներում արտասանած ճառերի համար. ընտրող-
ներն ազատութեամբ պատգամաւոր ընտրելու իրաւունք
ունէին. երդուեալ դատաւորների ցանկը պէտք կազմուէր
օրէնքի պահանջի համաձայն:

Այս յեղափոխութիւնը կատարելագործեց 1640 թ. Յեղափոխութիւն
սկսուած գործը: Սա վերջնականապէս պառլամէնտը 1688 թ.
թագաւորից վեր դասեց Անգլիայում: Ստիւարտների հա-
բստութիւնն, որ արքայական գերիշխանութեան համար
պատերազմ էր վարում, մերժուեցաւ, և Վիլհելմ Օրա-
նացին թագն ստացաւ պառլամէնտի ձեռքից: Այս մա-
սին կոլորգլխանիների յաջորդները—Վիգերը յաղթա-
նակը տարան: Բայց Տորիների ազդեցութեան տակ յե-
ղաշրջումն տեղի ունեցաւ օրինական ձևերից քանի մի
աննշան շեղումներով, առանց հաստատութիւնների այն
կործանման, որ սկսուած էր քառասնական թուական-
ներին, այլ կատարուեցաւ կարգերի աստիճանաբար փո-
փոխմամբ: Յեղափոխութիւնն առելի էր տորիներին, և
թէպէտ նրանք այդ կատարեցին անհրաժեշտութիւնից
ստիպուած, բայց հնար եղածին չափ համեստ կերպով:

Նոր թագաւորի ընդունելութեան պատճառաբանութիւ-
նները վատ էին համաձայնեցրած իրար հետ. խօսք կար թա-
գաւորի պայմանին եւ հիմնական օրէնքները խախտելու մասին,
Վիգերի հայեացքի համաձայն, եւ խօսք կար թագաւորի ազա-
տակամ հրաժարման մասին, Տօրիների հայեացքով: Բայց անգ-
լիացիք չէին չփոթւում իրենց պետական օրէնսդրութեան
տեսական սխալներով. Նրանք մինչեւ անգամ պարծենում էին
դրանով, իբրեւ ապացոյց, որ իրենց սահմանադրութիւնը տե-
սական փիլիսոփաների մտածողութեան արգասիք չէ, այլ կեն-

սական զարգացման եղրակացութիւն է, նրա բոլոր հակասութիւններով և անյարմարութիւններով։

Յեղափոխութեան յարուցած միւս մեծ խնդիրն առժամ սկզբունքով միայն վճռուեցաւ։ Գլխաւոր կրօնական կուսակցութիւններն ստիպուեցան խաղաղութիւն հաստատելու։ Սկսած Հենրիկոս Ը-ից, կառավարութիւնը ճգնել էր անգլիկանութիւնը դարձնել ազգային դաւանութիւն և ճնշել միւսներին։ Բայց անգլիական բարեշրջումն անգլիկանութիւնից առաջ անցաւ. քառասնական թուականի յեղափոխութեան միջոցին երիցականութիւնն էլ իւր կողմից փորձեց եկեղեցին միայնակ իւր ձեռքն առնելու, իսկ անկախներն (ինդէպենդէնդ) հաւասարութիւն յայտարարեցին անգլիական բարեշրջման բազմաթիւ ուղղութիւնների բոլորի համար էլ։ Կարլոս Բ.-ի դարձը նշան էր վերահաստատման, այսինքն՝ հին կարգերի վերականգնման, և անգլիկան եկեղեցին կրկին հալածանք հանեց երիցականների և անկախների դէմ, ինչպէս հերձուածողների ու ապստամբների։ Կաթոլիկութեան վտանգի վերսկսումը ստիպեց բողոքականներին հաշտուիլ։ Դիսենտերները (անհամաձայնները) չընդհասան, իրաւ է, եպիսկոպոսականների հետ հաւասար իրաւունքի, բայց աչքի առաջ ունենալով նրանց ընթացքը Յակոբ Բ-ի ժամանակ, և գլխաւորապէս այն, որ նրանք հրաժարուեցան օգտուել թագաւորի առաջարկած ապօրինի արտօնութիւններից, ստացան գոնէ հնարաւորութիւն անարգել դաւանելու իրենց կրօնը:

Այսպիսով, թէ քաղաքականութեան և թէ կրօնի մէջ հին կարգն Անգլիայում տեղի տուաւ նորին, բայց դանդաղ կերպով և աստիճանաբար։

ԳԼՈՒԽ Թ.

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ.

Հենրիկոս Դ. իւր բոլոր ջանքը գործ դրաւ, որ դարմանէ կրօնական պատերազմների Ֆրանսիային հասցրած չարիքը։ Հենրիկոս Դ. Նրա օգնականն այս գործում Սիւլլի նախարարն էր, մի խստապահանջ և անկաշառ հուգենոտ, որ էապէս բարելաւեց հարկահանութեան կարգը։ Հարկերը կապալով էին տրուում գործառուներին, որոնք ապա հարկը ժողովում էին իրենց օգտին։ Այս ձևով գանձարանի շահերին վնաս էր հասնում, որովհետև կապալառուները աճրդի ժամանակ ջանում էին գինը պակսեցնել. սակայն վնասուում էին և բնակիչները, որոնցից նրանք ծծում էին ինչքան կարող էին։ Սիւլլին չը կարողացաւ ոչնչացնել կապալը, բայց կարգ մըտցրեց հաշիւների մէջ և զօրացրեց հսկողութիւնն հարկահանութեան վրայ։ Նա երկրագործութիւնն համարում էր տէրութեան եկամտի գլխաւոր աղբիւրն և շատ բան արաւ երկրագործութեան բարելաւութեան համար Ֆրանսիայում։ Դրամական արդիւնքներն առատացնելու համար նա մի խոտելի միջոցի ձեռնարկեց։ Ազգային ժողովի և այլ դատական հաստատութիւնների անդամներն իրաւունք ստացան տարեկան որոշ վճարով ժառանգաբար աւանդելու իրենց պաշտօնները:

Հենրիկոս Դ-ի սպանումից յետոյ կառավարութիւնը Լուդովիկոս ԺԳ. և Ռիշելիէօ թոյլ ձեռքերի անցաւ։ Լուդովիկոս ԺԳ. դեռ ևս կատարելահասակ չէր, և նրան շրջապատողների մէջ սկսաւ մրցումն և խարդաւանանք։ Արքունիքում տեղի ունեցած շփոթի պատճառով 1614 թ. գումարուեցաւ երեք 1614
դասակարգերի ժողովը (էտա ժէնէրալ)։ Երրորդ դասակարգի պատգամաւորները ներկայացրին բարենորոգութեան լայն ծրագիր, նրանք խնդրում էին հարկերն հաւասարապէս բաշխել, արտօնութիւնները ջնջել, կար-

ճել պալատականների վայելած կենսաթոշակները, պարտաւորացնել դատարանները վերստուգելու բանտարկութիւնների օրինականութիւնը, երեք դասակարգերի ժողով գումարել տասն տարին մի անգամ։ Բայց ազնուականութիւնն ու հոգեւորականութիւնը մեծով անգամ չանցկացրեց միասին գործելու երրորդ դասակարգի հետ և ամէն կերպ աշխատում էին քաղաքացիներին զգացնել իրենց դասակարգային առաւելութիւնը [1]։ Արքունիքն շտապով արձակեց ժողովը, որ սկսած այդ ժամանակից մինչև 1789 թ. այլ ևս չըգումարուեցաւ։

Լուդովիկոս ԺԳ. կատարելահասակ դառնալուց յետոյ էլ քիչ էր մասնակցում գործերին, դրանց ղեկավարութիւնը յանձնել էր նա Ռիշիլիէօ ծիրանաւորին (կարդինալին)։ Սա մի անդրդուելի կամքի տէր մարդ էր, որ իւր հակառակորդների վերաբերութեամբ գութ ասած չըգիտէր՝ թէ ի՛նչ է, և քիչ էր հոգում ժողովրդի բարօրութեան մասին. նա մինչև իսկ այն միտքն էր յայտնում, որ գործաւորները պէտք չէ բարեկեցիկ լինեին, որովհետև դիւրաւ կարող են մոռանալ իրենց պարտաւորութիւնները։ Այս պատճառով նա չէր քաշւում հարկերը ծանրացնելուց և սնանկացնող պատերազմներ վարելուց։ Նա իւր անձը նուիրել էր Ֆրանսիական տէրութեան եւ միապետութեան և ամեն ինչ զոհում էր դրանց զօրանալուն։ Ռիշիլիէօն տէրութեան մէջ մարդիկ գտաւ, որոնք անպայման կերպով չէին ճանաչում տէրութեան մէջ թագաւորի բարձրագոյն իշխանութիւնն և վարում էին իրենց սեփական քաղաքականութիւնը։ Դրանք էին հուգենոտներն ու մեծամեծները։ Հուգենոտներն ունէին 800 եկեղեցի Ֆրանսիայնները։ Հուգենոտներն ունէին 800 եկեղեցի Ֆրանսիայում, գումարում էին եկեղեցական ժողովներ նահանգ-

[1] Ազնուական պատգամաւորներից մէկն յայտնեց. «Մենք չենք կամենում, որ կօշկակարների որդիք մեզ եղբայր կոչեն. մեր և նրանց մէջ նոյն տարբերութիւնն է, որ կայ տիրոջ ու ծառայի մէջ»

ներում և Ֆրանսիայի բոլոր բողոքական եկեղեցու սինօդը տարին մի անգամ. այս ժողովներում քննում էին ո՛չ միայն եկեղեցական խնդիրներ, այլ նաև քաղաքական, հարկեր էին նշանակում իրենց վրայ, կառավարում էին մի քանի ամրցրած քաղաքներ հարաւում և առաջնակարգ նաւահանգիստ Լա-Ռոշէլն արևմուտքում։ Նրանք հաւատ չէին ընծայում կառավարութեան, յարաբերութիւններ էին պահպանում Անգլիայի, Հոլլանդիայի, Սպանիայի հետ և երազում էին նիդերլանդական կամ անգլիական բողոքականների վիճակը ձեռք բերել։ Նրանց յանդգնութիւնն այն տեղն հասաւ, որ միանգամ գրաւեցին թագաւորի զինուորական նաւատորմը։ Ռիշիլիէօն կարողացաւ նաւեր ձեռք բերել անգլիացիներից ու հոլլանդացիներից և պատժել յանցաւորներին։ Նա խորհեց վախճանական կերպով նուաճել հուգենոտներին և պաշարեց Լա-Ռոշէլը։ Որպէս զի քաղաքը ծովակողմից փակէ, թագաւորական բանակը ծովաթումբ[1] կառոյց, որ փակում էր նաւահանգստի մուտքը։ Ծովն երեք անգամ քանդեց ամբարտակն և Ռիշիլիէօն, որ անձամբ ղեկավարում էր գործը, երեք անգամ գործն սկսեց նորից և, վերջապէս, հասաւ իւր ցանկացածին։ Կարլոս Ա. զուր էր նաւային արշաւանքներ ուղարկում Լա-Ռոշէլն ազատելու։ Անգլիացիք յետ մղուեցան, և Լա-Ռոշէլն անձնատուր եղաւ սովից տասնուչորսամսեայ պաշարումից յետոյ։ Հարաւային հուգենոտներին յաղթելը դիւրին եղաւ, և Ռիշիլիէօն հաշտութիւն կապեց նրանց հետ, որով Նանտեան հրովարտակն էապէս սահմանափակուեցաւ։ Բողոքականներն ստացան հաւատոյ ազատութիւն, բայց նրանց քաղաքական իրաւունքները ջնջուեցան [2]։

[1] Մօլ-ծովաթումբ, կոչւում է արհեստական ամբարտակը, որ շինւում է քարեր ածելով ծովը։

[2] Նրանցից խլուեցան ամրոցներն և քաղաքական խնդիրների քննութեան համար ժողովուելու իրաւունքը։

Կռիւ ազնուականների դէմ։

Ազնուականութիւնը չէր կազմում մի այնպիսի սերտ միաբանած զօրութիւն, ինչպիսին հուգենոտներն էին, և հէնց այդ պատճառով դժուար էր նրա հետ կռուելը։ Աւագանին վաղուց կորցրել էր իւր քաղաքական իրաւունքները, նրանք կարող չէին պատերազմներ վարել, դատել հպատակներին և հարկեր դնել նրանց վըրայ, բայց պահպանել էին շատ արտօնութիւններ, որով տարբերւում էին ստորին դասակարգերից [1]), շարունակում էին իրենց հին հպատակներից զանազան հարկեր և տուրքեր ժողովել, արքունիքում, զօրքի մէջ և գաւառներում օգտւում էին ժառանգաբար ստացած ինքնակամ ազատութեամբ և ունի[թ] չէին փախցնում, կառավարութիւնից անկախ դիրք ստեղծելու իրենց համար։ Այդ ժամանակներում պալատական խարդաւանանքները հեշտութեամբ փոխարկւում էին դաւադրութիւնների, ապստամբութիւնների և ներքին պատերազմների։

Ռիշլիեօն հոգ չէր տանում ազնուականների արտօնութիւնները ժողովրդի վերաբերութեամբ նուազեցնելու, բայց եռանդով կռւում էր անհնազանդութեան եւ դաւադրութիւնների դէմ: Երբ ընդհանուր ձեռնարկութիւններով գրաւեց նա ազնուականութեան ատելութիւնն և ժողովրդի համակրութիւնը. ամրացրած դղեակների ջնջմամբ, մահուան պատժի երկիւղով մենամարտութիւններն[2]) արգիլելով և նահանգներում թագաւորական գործակալներ կամ վերակացուք (կոմիսար) նշանակելով, որոնք պիտի հոգ տանէին ելևմտքի և ոստիկանութեան վրայ ու հսկէին դատարաններին։ Վերջին ձեռնարկութիւնն յատկապէս նշանաւոր էր, որովհետև թագաւորական գործակալը (էնտանդան) նշանակւում էր երրորդ դասակարգից, սա ըստ ամենայնի պարտական լինելով թագաւորին, առանձնապէս նրա համար էր նշանակուած, որ սահմանափակ է ազնուական-նահանգապետների իշխանութիւնը, որոնք հակամէտ էին նահանգների վրայ նայելու, ինչպէս իրենց ուստական կալուածների։ Բացի այս ընդհանուր միջոցներից, Ռիշլիեօն շարունակ կռւում էր դաւադրութիւնների դէմ, որ երբեմն հասնում էին զինուած ընդդիմութեան։ Նա պատժում էր իւր հակառակորդներին, ուշք չըդարձնելով նրանց ծագման ու աստիճանին։ Նրա ժամանակ սպանուեցան հինգ դուքս, չորս կոմս, մի մարաջախտ։

Զարգելով ինքնուրոյն հասարակական ույժերը, Ռիշլիօն բոլոր գլխաւոր գործերը Փարիզ էր բերում, պետական խորհրդի մէջ, որի անդամները կառավարութիւնն էր նշանակում երրորդ դասակարգից կամ մանր ազնուականներից։ Գլխաւորագոյն խնդիրները նա թողնում էր թագաւորի, այսինքն իւր սեփական անձի վըճռին։ Կենդրոնացումն, այսինքն կառավարութեան բոլոր գործերը մի կէտում համախմբելը, ձեռնարկելով՝ Ռիշլիեօն չէր քաշւում հին սովորութիւններից կամ իրաւունքներից, օրինակ՝ ոչնչացրեց դասակարգերի ժողովը Դոֆինէում և Պրովանսում։ Նա չէր քաշւում և առանձին դատական հաստատութիւնների գոյութիւնից։ Երբ նրան թւում էր թէ այդ դատարանների գործավարութիւնն անյարմար կանոնների և ձևականութիւնների է ենթակայ, գործերն անց էր կացնում յատուկ կազմուած յանձնաժողովները, և մինչև իսկ վճռում էր այդ գործերը թագաւորի կամ նոյն իսկ իւր սեփական առանձնասենեակում։ Տիրանաւորի կամայականութիւնն ու անգթութիւնը նրան ատելի դարձրին, բայց դժուար էր չը հիանալ նրա ճարտարութեան, անշահասիրութեան և հաստատակամութեան վրայ։ Միևնոյն ժամանակ,

[1]) Օրինակ՝ նրանք ազատ էին անձնական հարկերից, իսկ հողային հարկի վերաբերութեամբ ևս բազմատեսակ արտօնութիւնների տէր էին։

[2]) Տասնութ տարուան ընթացքում մենամարտութիւնների մէջ սպանուել էին 4000 ազնուական։

երբ նա տէրութեան ներսը կատաղի կռիւ էր մղում, յաջողուեցաւ նրան Ֆրանսիայի համար առաջին տեղը գրաւել Եւրոպայում իւր վճռող միջամտութեամբ երեսնամեայ պատերազմում: Նա օժանդակում էր Գուստաւ Ադոլֆին և շուեդական թագաւորի մահուանից յետոյ փոխեց պատերազմի ընթացքը: Նրա հեռատես քաղաքականութեան պտուղներն արդէն Լուդովիկոս ԺԴ-ի ժամանակը վայելեց Ֆրանսիան:

Մազարինի և Պարսաւոր-ները: 1643 Ռիշիլիէօ ծիրանաւորն ու Լուդովիկոս ԺԳ. մեռան միմեանց յետևից 1643 թ.: Մատաղատի Լուդովիկոս ԺԴ-ի խնամակալ եղաւ իւր մայրն Աննա Աւստրիացին, իսկ գործերի ղեկավարութիւնը ստանձնեց խելացի և խորամանկ իտալացի ծիրանաւոր Մազարինին: Դատարանն, արքունիքն և ազատանին Ռիշիլիէօ ծիրանաւորի մահուանից յետոյ ազատ շունչ քաշեցին և պատրաստ էին վրէժ խնդրելու երկարատև ստորացման. սակայն Մազարինին յաղթանակ տարաւ նրանց վրայ:

Ամենից առաջ կառավարութեան դէմ դուրս եկաւ Փարիզի պառլամէնտը: Սա ի հնուց իրաւունք ունէր դիմախօսելու կառավարութեան հրովարտակներ եւ օրէնքներ հրատարակելու ժամանակ: Ահա թէ ի՞նչպէս էր կատարում այս. իւրաքանչիւր օրինական վճիռ պէտք է արձանագրուէր պառլամէնտների արձանագրութիւնների մէջ. սրանք երբեմն մերժում էին արձանագրել, յայտարարելով՝ որ նոր կարգադրութիւնն անարդար է կամ հակասում է եղած օրէնքներին: Այս դիպուածներում կառավարութիւնը միջոց ունէր ստիպելու պառլամէնտին. նիստ էր գումարում, ուր թագաւորն անձամբ հրամայում էր արձանագրել հրամանները: Մազարինին հրատարակեց մի քանի նոր հրամանները. բայց Փարիզի պառլամէնտը մերժեց արձանագրելու դրանց: Նախարարը կազմեց թագաւորական նիստ, բայց պառլամէնտը բողոքեց իննամեայ թագաւորի հրամանների դէմ եւ խնամակալութեան լայնածաւալ պահանջներ առաջարկեց, որոնց կազմուելուն վրայ ազդել էին
1648 Անգլիայում տեղի ունեցող ժամանակակից դէպքերը (1648) [1]:

[1] Պառլամէնտն առաջարկում էր վերացնել թագաւորական գործակալներին (ինտենդանտ), նոր հարկեր չընդունակել առանց

Մազարինին հրամայեց բանտարկել պառլամէնտի գլխաւորներին, բայց Փարիզը պատասխանեց դրան փողոցներում պատնէշներ կանգնելով, եւ սկսաւ ազգամիջեան պատերազմ, այսպէս կոչուող ֆրօնդ, պարսաւորների պատերազմ: Շուտով պառլամէնտը յետ մնաց. առաջ անցան փառասէր ազնուականներ, եւ արքայազուններ, որոնք ձգնում էին Մազարինիին վայր գլորել եւ իշխանութիւնը ձեռք ձգել: Ֆրօնդի (պարսաւորների) գլխաւոր զօրավարն էր Կոնդէ թագազարմ իշխանը: Երբ թագաւորական բանակի հրամանատար Տիւրէն սպարապետը քշեց նրան դէպի Փարիզ եւ ջարդեց, Կոնդէն չամաչեց փախչել սպանիացոց մօտ եւ նրանց օգնութեամբ մի քանի տարի դեռ եւս Ֆրանսիայի դէմ պատերազմել: Բայց Ֆրօնդի եսական նպատակները շատ աչկարայ էին, եւ ազգը, որ սկզբում համակրում էր շարժմանը, կրկին խմբուեցաւ թագաւորական իշխանութեան շուրջը: Ֆրօնդը ճնշուեցաւ, եւ Մազարինին դարձաւ իւր նախորդի Ռիշիլիէօի քաղաքականութեան: Գերմանիայում կարողացաւ նա օգուտ քաղել իշխանների երկպառակութիւններից, որպէս զի կազմէ հռենոսեան դաշնակցութիւնն, ուր մասնակցում էին բացի Ֆրանսիայից երեք կայսրընտիրներ, Շուեդիայի թագաւորը, Պֆալցի կոմսն եւ դարձեալ երեք իշխաններ. դաշնակցութեանս նպատակն էր դիմադրութիւն աւստրիական Հաբսբուրգներին: Պատերազմը Սպանիոյ հետ, որ վեստֆալեան հաշտութիւնից յետոյ դեռ եւս 11 տարի շարունակւում էր, վերջացաւ Ֆրանսիայի օգտին, շնորհիւ Տիւրէնի ճարտարութեան եւ Սպանիոյ ուժասպառ լինելուն: Պիրենեան խաղաղութիւնը Ֆրանսիային տուաւ Ռուսիլիօնը հարաւում, Պիրենեան լեռնաշղթայի մօտ, Լիւքսամբուրգի մի մասը (Տիօնվիլլ) արեւելքում, Արտուան եւ Հեննէգաուն հիւսիսում:

Մազարինին մեռաւ 1661 թուին, և երիտասարդ Լուդովիկոս ԺԴ. 1661:
թագաւորն ինքը ձեռք առաւ քաղաքական ղեկավարութիւնը: Ռիշիլիոյի և Մազարինիի ճարտար կառավարութիւնը նախապատրաստել էին նրա համար անհագին միջոցներ եւ նախապատիւ դիրք Եւրոպայում: Չը նայելով պատերազմներին և ելևմտական վարչու-

պառլամենտի համաձայնութեան, գործերը չը քննել առանձին յանձնախմբերում, իւրաքանչիւր ձերբակալուածին դատարանի ներկայացնել, բանդարգելութեան պատճառները վերստուգելու համար:

թեան թերութիւններին, ժողովրդի աշխատասիրութիւնը և Ֆրանսիայի բնական հարստութիւնը մեծ եկամուտներ էին տալիս կառավարութեան. նա ձեռքի տակ ունէր մեծ, քաջարի և գեղեցիկ կերպով վարժուած զօրաբանակ. կրօնական երկպառակութիւնների դադարումը, Ֆրանսիայի միութիւնն և նրա փայլուն յաղթանակները յառաջ բերին այս վառվռուն, փառասէր ազգի մէջ ոգևորութիւն գործունէութեան բոլոր ասպարէզներում—զօրքի, կառավարութեան, եկեղեցու, գեղարուեստների, գրականութեան, արդիւնաբերութեան—երևան եկան բազմաթիւ տաղանդաւոր մարդիկ: Բարձր դասակարգերն յատկապէս յափշտակուեցան զինուորական ասպարիզով և նրա արկածներով ու փառքով՝ նրանք յափշտակուեցան և Փարիզու պալատական կեանքով, ուր կենդրոնանում էր ամեն ինչ, որ նշանաւոր էր, նրբաճաշակ և զօրաւոր ամբողջ Եւրոպայում: Ինքնարոյն, երբեմն իսկ ինքնահաճ աւագանու տեղը, որ ապրում էր գաւառներում, այժմ բռնում էր պալատական ազնուականութիւնը, որ թագաւորին էր հետևում խոնարհութեամբ: Լուդովիկոս ԺԴ. կարծես թէ նրա համար էր ստեղծուած, որ այս փայլուն շրջանում ղեկավար է Ֆրանսիային: Նա աչքի չէր ընկնում իսկատիպ հնարագիտութեամբ և բարձր գաղափարականութեամբ. բայց մարմնացնում էր իւր անձի մէջ Ֆրանսիական ազգի գլխաւոր յատկութիւնները—յարատև ջանասիրութիւն և թեթևամիտ վարք, ձգտումն դէպի վեհագոյնն և անսահման սնափառութիւն, գեղեցիկի ճաշակ և ամեն ինչ միաձև շրջանակի մէջ դնելու սովորութիւն: Նա ինքն իրեն ազգի հետ միանձն էր զգում և Ֆրանսիայում բացի իւր կամքից, ուրիշը չէր ճանաչում. «տէրութիւն ես եմ», ասաց նա դեռ երիտասարդ ժամանակն և այդ նշանաբանին հաւատարիմ մնաց իւր երկարատև թագաւորութեան ընթացքում: Մի հանդա-

մանքի վերաբերութեամբ նա հաստատուն յաջողութիւն ունեցաւ. Փարիզն ու Ֆրանսիական արքունիքը նրա ժամանակ դարձան կենտրոն ոչ միայն Ֆրանսիայի, այլ եւ Եւրոպայի: Ֆրանսիական լեզուն, գրականութիւնը, ձևերը, տարազը, տարածուեցան այդ ժամանակից սկսած եւրոպական հասարակութիւնների բարձր դասակարգերի մէջ: Վերսայլի պալատի հանդիսաւոր և ծանր շէնքերը, Վերսայլի պարտիզի ծառուղիքն ու շատրուանները դարձան նմանութեան օրինակներ մեծ ու փոքր իշխանների համար:

Ֆրանսիան իւր այս գերակշռութեամբ պարտական Կենդրոնացումն: էր ոչ միայն իւր գեղարուեստի, գրականութեան, հասարակական կեանքի գերազանցութեան, այլ նաև իւր զօրութեան, որ կէս դար ծանրանում էր Եւրոպայի վրայ: Ռիշիլիէօի ներքին քաղաքականութիւնը բերում էր իւր պտուղները: Ֆրանսիայի կառավարութիւնը կենտրոնացած էր թագաւորի եւ նրա պաշտօնեաների ձեռքում. բոլոր հասարակական գործերը, որ ծագում էին քաղաքներում և գիւղերում, ուղարկւում էին Փարիզ վճիռ ստանալու կամ վճռւում էին այն պաշտօնեաների ձեռքով, որոնք նշանակուած էին Փարիզից և գործում էին Փարիզից եկող վերահսկողութեան տակ: Այսպիսի պաշտօնեաներից գաւառներումը գլխաւորն էր գործակալը կամ վերակացուն (էնտէնդան). Նա ամէն բանի վրայ աչք ունէր. զօրք էր ժողովում, հսկում էր համալսարանների ու դպրոցների վրայ, երբեմն դատաստան էր կտրում սովորական դատաստանական հաստատութիւններից դուրս, ոստիկանութեան մասին կարգադրութիւն էր անում, հետևում էր հարկաժողովին, երկրագործութեան, արդիւնաբերութեան և վաճառականութեան. հսկողութիւն ունէր հասարակական շէնքերի, բողոքականների ու հրէից կրօնական գործերի վրայ: Վերակացուն ինքն

էր նշանակում իւր օգնականներին (*սուբ-դելեգէ*). ոչ մի նահանգական և քաղաքային արտօնութիւն չէր սահմանափակում նրան — մի քանի նահանգներում դեռ ևս գումարուում էին երեք դասակարգերի ժողովները, բայց դրանք. դատարկ ձևականութիւններ էին դարձել, իսկ քաղաքային ինքնավարութեան փոխարէն ըստ մեծի մասին նշանակուում էին պաշտօնեաներ։ Նահանգապետները մնացին, բայց նրանց էր պատկանում միայն հանդիսաւոր ներկայացուցչութիւնը, մինչդեռ իրական իշխանութիւնն անցել էր վերակացուներին։ Գործերի վերստուգութեան և նրանց բարձրագոյն ուղղութիւն տալը կենդրոնացած էր Փարիզում[1]։ Սովորական դիպուածներում գործերն ու զեկուցումները քննուում էի պետական խորհրդում. բարձր քաղաքականութեան մասին խորհրդակցում էր բարձրագոյն խորհուրդը, որ թագաւորի նախագահութեան տակ կազմուում էր նախարարներից և մի քանի աւագներից։

Կոլբեր. Պաշտօնեաններն ընտրուում էին երրորդ դասակարգից, որպէս զի ամենազօրաւոր նախարարն անգամ ինքն իրեն իբրև «թագաւորի հասարակ գործակատարն» զգայ։

Լուդովիկոս ԺԴ.-ի նախարարներից ամենից նշանաւորն էր Կոլբէրը, մի դերձակի որդի, որ Մազարինի ծերանաւորի կալուածների կառավարչի մասնաւոր պաշտօնից անցել էր տէրութեան ծառայութեան։ Սա մի անխոնջ գործիչ էր և առաջնակարգ կազմակերպիչ, որ կանչուեցաւ ընդհանուր վերաստուգողի դժուար պաշտօնին. Նրա պարտքն էր միջոցներ գտնել պատերազմի, շէնքերի, արքունիքի խրախճանութեանց համար, և այս էր պատճառը, որ չը կարողացաւ արմատական կերպով ուղղել հարկահանութեան կարգը։ Գոնէ նա ամեն ինչ արաւ, որ երենից էր կախուած, որպէս զի նուազեցնի արտօնութիւնները, կրճատեց հողային հարկից ազատ կալուածների թիւը, պակասցրեց ուղղակի հարկերը (տալիա), որ գրեթէ բացառապէս աղքատներն էին վճարում, և բազմացրեց կողմնակի հարկերը, որ ընկնում էր բոլոր ապրանք գործածողների վրայ, հետևաբար, և հարուստների. Նա պակսեցրեց պարտքերի և մշտական վճարների (ռէնտ) գումարը, ներմուծից նախահաշիւ, այսինքն՝ իւրաքանչիւր տարուան ծախքերի և մուտքի ենթադրուած հաշիւը։ Սակայն, Սիւլլիի նման, առանձին ուշադրութիւն դարձրեց ժողովրդական տնտեսութիւնը բարձրացնելու վրայ, թէպէտ և սրա առաջադրած խնդիրներն այլ էին, քան թէ Սիւլլիինը։ Կոլբերի նպատակն էր Ֆրանսիան իր դրացիներից անկախ երկիր դարձնել, տալ նրան վաճառականութեան մէջ գերակշռութիւն իր դրացիներից եւ դրանով դրամական հարստութիւն մտցնել երկիրը։

ԺԶ. եւ ԺԷ. դարերում խիստ տարածուած էր այն կարծիքը, թէ երկրի հարստութիւնը չափւում է նրա մէջ գտնուած դրամի քանակութեամբ։ Այս պատճառով տնտեսական քաղաքականութեան գլխաւոր նպատակն համարում էին ազնիւ մետաղների ներածումն երկրի մէջ։ Այս նպատակին հասնելու համար, կառավարութիւնն աշխատում էր հնար եղածին չափ զօրացնել ապրանքի արտահանութիւնն համեմատութեամբ ներածութեան, որպէսզի այդպիսով երկրին աւելի դրամ է ստանում, քան թէ վճարում է։ Այս վարդապետութիւնը կոչւում է վաճառականականութիւն (մերկանտիլիզմ)։ Վաճառականական ուղղութեան հետ ձգտումն առաջացաւ օտարերկրեայ արդիւնաբերութեան ազդեցութիւնից ազատուելու։ Երկիրը պէտք է արդիւնաբերէ այն ամէնը, որ անհրաժեշտ է այնտեղ ապրող հասարակութեան համար։ Եթէ այստեղ արդիւնաբերուած ապրանքներից մի քանիսը չեն կարող իրենց որակով եւ գնով մրցել դրացի երկրների արդիւնաբերութիւնների հետ,

[1]) Վեց նախարար կար. դիւանապետ օրէնսդրութեան և իրաւագիտութեան, գլխաւոր վերաստուգիչ, ելևմուտքի, ներքին գործոց և արքունիքի պալատի, արտաքին գործոց, զօրքի և նաւատորմղի։

այն ժամանակ կառավարութեան պարտքն է բնիկ արդիւնաբերութեան պաշտպանելու համար միջոցներ ձեռնարկել—օրինակ՝ մաքս դնել օտարերկրեայ ապրանքների վրայ, պարգեւներ տալ տեղական արդիւնաբերութեան յաջողութեան համար, արտասահմանից փորձուած վարպետներ հրաւիրել եւ այլն։ Այսպիսի «խնամարկու» քաղաքականութիւնը կոչուում է «խնամակալականութեան (պրոտեկցիոնիզմ)։

Ֆրանսիական արդիւնաբերութեան համար կարեւոր հում նիւթերը թոյլ տրուեցաւ առանց մաքսի ներմուծել, իսկ արտասահմանեան արդիւնաբերութեան արգասիքների վրայ այնպիսի ծանր մաքսեր դրուեցան, որ դադարեցին դրանց այլ եւս Ֆրանսիա ներմուծելը։ Բնիկ արդիւնաբերութիւն ստեղծելու համար Կոլբէրը վարպետներ էր հրաւիրում արտասահմանից, գործարանատէրերին դրամագլուխ էր ընձեռում, հիմնում էր արքունի գործարաններ, կազմում կառավարական վերահսկողութիւն մասնաւոր ձեռնարկութիւնների վրայ։ Իրապէս յաջողուեցաւ նրան սկիզբը դնելու բրդեղէնի, մետաքսեղէնի և թղթի գործարանների, ապակեղէնի և յախճապակու գործատների։ Քիչ խնամք չյատարուեցաւ և վաճառականութեան զարգացման վրայ։ Շինուեցաւ գեղեցիկ ճանապարհների և ջրանցքների մի ցանց. կառավարութիւնն եռանդուն աջակցութիւն ցոյց տուաւ գաղթավայրերին վերաբերեալ ձեռնարկութիւններին [1]։ Կոլբէրը գրեթէ նոր հիմնեց զինուորական նաւատորմիղը—սրա համար կառուցուեցաւ մի գեղեցիկ նաւահանգիստ Բրէստում։

Լուվուա։ Եթէ Կոլբէրը ղեկավարում էր Ֆրանսիայի արդիւնաբերող ոյժերն, Լուվուան ուղղութիւն էր տալիս դրանց գործադրութեան տէրութեան ձեռքով։ Նա զինուորական նախարար էր և արաւ ամեն ինչ, որպէս զի զօրացնէ ֆրանսիական բանակն ու բարելաւէ նրա

[1]) Կանադայում, Լուիզիանայում, Անտիլեան կղզիներում, Սենեգալում, Մադագասկարում եւ Պոնդիշերիում։

կազմակերպութիւնը։ Լուդովիկոս ԺԴ.-ի թագաւորութեան վախճանին Ֆրանսիան քսան միլիոն բնակիչ ունենալով՝ 450,000 մարդուց բաղկացած բանակի տէր էր։ Լուվուան առանձին ուշադրութիւն էր դարձնում սպառազինութեան, զգեստաւորութեան, նիւթական պաշարի մատակարարութեան, շտեմարանների կազմակերպութեան վրայ։ Զինուորական տնտեսութիւնը մեծ կատարելութեան էր հասցրած, ուստի և ֆրանսիական զօրքն հնար ունէր աւելի արագ շարժուելու, աւելի ազատ գործելու, քան թէ որ և է այլ զօրաբանակ Եւրոպայում։ Ճարտարապետական բաժինը բոլորովին վերակազմուեց մարաջախտ Վոբանի ձեռքով, որ, բացի դրանից, հետեւակազօրի մէջ էական բարեփոխութիւն ներմուծեց—նա հնարեց սուինը և դրանով միջոց տուաւ մի զինուորի ձեռքին միացնելու հրազէնն ու սառը զէնքը, մինչդեռ մինչև այդ ժամանակը հետեւակազօրը բաժանուում էր հրացանակիրների և նիզակաւորների։ Լուվուայի ժամանակ բանակի մէջ մշակուեցաւ միաբանութեան ոգի, եւ նա դարձաւ թագաւորական իշխանութեան ամենազօրեղ նեցուկը։

Ֆրանսիական միապետութիւնը, որ անսահման իշխանութիւն էր գործ դնում երկրի բոլոր ոյժերի վրայ, տրամադիր չէր կողմնակի իշխանութեան հպատակելու եկեղեցական խնդիրներում։ Գալլիկանութիւն։ *Դեռ Ֆրանցիսկոս Ա. դաշինք (կոնկորդա) էր գրել պապի հետ, որով իրաւունք էր ստացել եկեղեցական գլխաւոր պաշտօնեաները նշանակելու։ Լուդովիկոս ԺԴ. զգուշութեամբ պահպանում էր իւր իրաւունքները պապի միջամտութիւններից։ Նրա ժամանակ ֆրանսիական հոգեւորականութիւնն ինքն իրեն ամենից առաջ զգում էր ազգային, գալլիկան դաւանակարգ, որ գտնուում էր թագաւորի պաշտպանութեան տակ։ Գալլիկանութիւնն այնքան առաջ չգնաց, որքան անգլիկանութիւնը, չխզեց իւր կապը հռովմէական քահանայապետութեան հետ, բայց այսուամենայնիւ մի քանի գլխաւոր առաջադրութիւններ արաւ։ Ֆրանսիացի եպիսկոպոսները նշանաւոր ճարտասան Բոսսիւէի առաջնորդութեամբ 1682* 1682

թուին հետեւեալ չորս սկզբունքը դրին. Աստուած ս. Պետրո-
սին եւ նրա յաջորդներին աշխարհական գործերում իշխանութիւն
չէ տուել. տիեզերական ժողովները հոգեւոր խնդիրներում պա-
պերից գեր ի վեր են. Ֆրանսիական եկեղեցու սովորութիւն-
ներն ու կանոնները պիտի անձեռնմխելի մնան, հաւատոյ գոր-
ծերում պապի վճիռներն անպայման զօրութիւն ունին միայն
այն ժամանակ, երբ ընդունուած են եկեղեցուց։ Պապը դա-
տապարտեց 1682 թուի վճիռները, որովհետեւ դրանք համա-
շխարհային եկեղեցու վարդապետութեան եւ պապի անպայման
գլխաւորութեան հիմքը խախտում էին։ Բայց գալլիկանութիւ-
նը մնաց ֆրանսիական հոգեւորականութեան պաշտօնական
ուղղութիւնը Լուդովիկոս ԺԴ-ի ժամանակ։

Հալածանք բողոքական-ների դէմ։

Օտարադաւանների գոյութիւնը Ֆրանսիայում ա-
տելի էր թագաւորին, նա չէր սիրում այն մարդոց,
որոնք կրօնական խնդիրներում այլ կերպ էին մտա-
ծում, քան ինքը։ Ռիշելիէօն ընդ միշտ ոչնչացրել էր
բողոքականների (հուգենոտ) քաղաքական առանձնու-
թիւնը. նրանք վտանգաւոր չ'էին, այլ, ընդհակառակն,
վերին աստիճանի օգտակար, իբրեւ փորձուած, ճարտար
գործաւորներ բոլոր ասպարէզներում։ Բայց Լուդովի-
կոս ԺԴ. չէր կարող դիմանալ ինքնուրոյն կարծիք ու-
նեցողներին, եւ նրա ժամանակ սկսաւ հուգենոտների
հալածանքը։ Կառավարութեան սիրելի միջոցներից մէկն
էր գիւղերում զինուորներ բնակեցնելը, որոնք ամէն
կերպ նեղում էին բնակիչներին (դրագօնադ)։ Լուդո-
1685 վիկոս ԺԴ. 1685 թ. ջնջեց Նանտի հրովարտակը։ Բո-
ղոքական եկեղեցիք փակուեցան, հոգեւոր հովիւներին
արգելուեցաւ պաշտօն կատարել։ Սկսաւ բողոքական-
ների փախուստը Ֆրանսիայից։ Կառավարութիւնն ար-
գիլեց գաղթելն, որսում եւ կախում էր փախստական-
ներին։ Այսուամենայնիւ տասնեակ հազար ընտանիք-
ներ թողին Ֆրանսիան եւ դարձան Գերմանիոյ, Հոլլան-
դիոյ, Զուիցերիոյ օգտակար բնակիչներ։ Աղքատներն
ստիպուած էին մնալու։ Սեւեննեան լեռներում ծագեց

մի անյոյս ապստամբութիւն, որ սակայն շատ տարիք
տեւեց։

Լուդովիկոս ԺԴ.-ի պատերազմները։

Ֆրանսիական տէրութեան մեծ ոյժը Լուդովիկոս
ԺԴ. ուղղեց դէպի աշխարհակալութիւն։ Ռիշելիէօն
իւր ժամանակ յանդուգն յարձակումով Հաբսբուրգների
տան անհամաչափ գերակշռութիւնը խախտեց։ Լուդո-
վիկոս ԺԴ-ի ժամանակ Սպանիան եւ կայսրութիւնը տը-
կարացած եւ անվտանգ էին, Անգլիան զբաղուած էր
ներքին երկպառակութիւններով, Հոլլանդիան շատ փոքր
էր, որպէս զի կարող լինի վտանգաւոր դառնալ, Շուե-
դիան դաշնակից էր Ֆրանսիային եւ ուշքն արեւելեան
գործերով գրաւուած։ Բոլոր դրացիների տկարութիւնն
էր, որ իսկապէս դրդում էր Լուդովիկոս ԺԴ-ին փո-
խելու Եւրոպայի քարտէսի պատկերն յօգուտ Ֆրանսիայի։
Առաջին յարձակման ենթարկուեցաւ Սպանիան։ Փիլիպ-
պոս Դ-ի մահից յետոյ թագն անցաւ նրա որդի Կար-
լոս Բ-ին։ Լուդովիկոս ԺԴ. զօրք ուղարկեց սպանիական
Նեդերլանդիա այն պատրուակով, որ իւր կինը Փիլիպ-
պոս Դ-ի աւագ դուստրն է առաջին ամուսնութիւնից,
եւ այդ պատճառով ինքն է ժառանգը, համաձայն ֆլան-
դրական օրէնքի, նա առաւելութիւն ունէր երկրորդ
ամուսնութիւնից ծնուած որդուց։ Եթէ խնդիրը վե-
րաբերէր որ եւ է կալուածքի Բրիւսէլի շրջակայքում,
այն ժամանակ Լուդովիկոսն իրաւացի կլինէր, բայց
մինչեւ այդ ժամանակ ոչ ոքի մտքովն անգամ չէր ան-
ցել, թէ ֆլանդրեան քաղաքացիական օրէնքը կարելի է
վերաբերել սպանիական թագաժառանգութեան։ Ֆրան-
սիացոց գործողութիւնները միայն սպանիացոց չվախե-
ցրին, հոլլանդացիք կարողացան երրեակ տէրութեանց
դաշնակցութիւն կազմել Անգլիոյ եւ Շուեդիայի հետ,
Ֆրանսիական արշաւանքի առաջն առնելու համար։ Լու-
դովիկոսն համաձայնեց խաղաղութեան դաշն կռել Ախե-
նում (1668) եւ խլեց սպանիական Նեդերլանդիայից մի 1668

մեծ կտոր—Հարաւային ամրոցների շարքը, որոնց մէջ գլխաւորն էր Լիլը։

Երկրորդ հարուածն ուղղուեցաւ Հոլլանդիայի դէմ, որին Լուդովիկոս ԺԴ. վճռել էր պատժել անժամանակ միջամտութեան համար։ Լուդովիկոս ԺԴ. կաշառեց Կարլոս Բ-ին, Շուեդիային իւր կողմը ձգեց և ինքը դիմեց Հոլլանդիայի Միացեալ Նահանգների վրայ մի զօրաբանակով, ուր իւր հրամանատարութեան տակ ծառայում էին Տիւրէնն ու Կոնդէն։ Տիւրէնն այնպէս ճարտարութեամբ գործը վարեց, որ ֆրանսիացիք հոլլանդական ամրոցների շուրջը պտտեցին ու դուրս եկան Ամստերդամի առաջ ընկած հարթութեան վրայ, առանց որ և է ճակատամարտ տալու։ Եթէ թագաւորը բանակում չը լինէր, Ամստերդամը գրաւուած կըլինէր։ Լուդովիկոսը գործը ձգձգեց և միջոց տուաւ հոլլանդացոց դիմելու վերջին ծայրայեղ միջոցին—պատռելու ամբարտակներն ու հեղեղելու երկիրը։ Միևնոյն ժամանակ ծովապետ Ռիւյտէր ջարդեց անգլիական և ֆրանսիական միացած նաւատորմը։ Այս գործողութիւնները միջոց տուին սարսափած հարևաններին օգնութեան հասնելու հոլլանդացոց. Լէօպոլդ կայսրն ու Բրանդենբուրգի կայսրընտիր Ֆրիդրիխ Վիլհելմ պատերազմ հրատարակեցին Ֆրանսիայի դէմ։ Հարկ եղաւ թողնելու միացած Նահանգներն և գործելու Հռենոսի գծի վրայ։ Տիւրէնն աւերեց ու խանձեց ծաղկեալ Պֆալցը, որպէս զի թշնամուն արգիլէ այն տեղով անցնելու։ Կայսեր և բրանդենբուրգեան կայսրընտրի զօրքերը գրաւել էին արդէն Ալզասը, բայց Տիւրէնն յանկարծ յարձակուեցաւ դաշնակիցների վրայ և դուրս քշեց այնտեղից։ Սակայն նա սպանուեցաւ թշնամու բանակը լրտեսելու ժամանակ, և նրա մահը աւելի մեծ կորուստ եղաւ ֆրանսիացոց համար, քան թէ մի կորցրած ճակատամարտ։
1678 Նիմվեգենում 1678 թուին հաշտութեան դաշն կապուեցաւ, այս պատերազմի վնասը կրկին Սպանիան վճարեց, որ ստիպուեցաւ ֆրանսիացոց տալ Ֆրանշ-Կոնտէն։

Երրորդ հարուածն հասաւ Գերմանիային։ Լուդովիկոսը կազմել էր այսպէս կոչուած «միացման խորհրդարանները (Chambres des réunions) այն խնդիրները վճռելու, թէ ո՞ր տեղերը Ֆրանսիային են պատկանում Ֆլանդրիայում, Ալզասում և Ֆրանշ-Կոնտէում։ Այդ խորհրդարանները հրատարակում էին վճիռներ՝ թէ ո՞ր տեղերն են պատկանում Ֆրանսիային, իսկ ֆրանսիական զօրքերն անմիջապէս կատարում էին այդ հրամանները։ Այսպէս գրաւուեցաւ Լիւքսամբուրգը, Տրեբեան նահանգը, արևմտեան Պֆալցը, Ալզասի մէջ մի շարք քաղաքներ, վերջապէս, Ստրասբուրգը։ Մի առժամանակ կայսրութիւնը համբերում էր այս յափշտակութիւններին—հէնց այդ միջոցին տաճիկները խիստ նեղում էին Աւստրիան և քիչ մնաց Վեննան գրաւեն։ Բայց միացած նահանգների կուսակալ Վիլհելմ Օրանժեցուն յաջողուեցաւ վերջապէս, Ֆրանսիայի դէմ դաշնակցութիւն կազմել, որին միացան կայսրը, գերմանական իշխաններից շատերը, Սպանիան, Շուեդիան և նոյն իսկ իտալական տէրութիւնները։ Դրանից քիչ յետոյ Վիլհելմ Օրանացին Յակոբ Բ-ի փոխանակ նստաւ անգլիական գահի վրայ և այդպիսով ամբողջ Եւրոպան դէմ կացաւ Ֆրանսիային։ Սկսաւ տասնամեայ ծանր պատերազմը, որի մէջ ֆրանսիացիք պատերազմի դաշտում միշտ գերակշռութիւն ունեցան, բայց չը կարողացան այդ յաղթութիւններից պտուղ քաղել թշնամեաց բազմութեան պատճառով։ Մինչև իսկ ֆրանսիական ծովապետ Տուրվիլը յաղթեց անգլիացոց և մի քանի ժամանակ իշխում էր Լամանշի ջրերում. բայց անգլիացիք, վերջապէս, ջարդեցին նրան և այս յաղթութիւնը վերջնականապէս ամրացրեց նրանց իշխանութիւնը ծովի վրայ։ Պատերազմող կողմերի ոկարանալու պատճառաւ

1698 թուին խաղաղութիւն հաստատուեցաւ Ռիսվիկում։
Լուդովիկոս հրաժարուեց իւր խորհրդարանների միա-
ցումներից, բացի Ստրասբուրգից, և Վիլհելմ Գ.-ին ճա-
նաչեց Անգլիոյ թագաւոր։

Պատերազմ սպանիական ժառանգութեան համար։

Այս խաղաղութիւնը միայն զինադադար եղաւ։ Դա-
շինքը կապելու վայրկենին սպասում էին Կարլոս Բ.-ի
մահուան, որով վերջանում էր Հաբսբուրգների սպա-
նիական ցեղը։ Կանացի կողմից ազգական էին Լուդովի-
կոս ԺԴ. և Լէօպոլդ կայսրը։ Նախ խօսք եղաւ սպա-
նիական միապետութեան բաժանման մասին, բայց Լու-
դովիկոս ԺԴ. մեռնող թագաւորին կարողացաւ կտակ
անել տալ յօգուտ իւր Փիլիպպոս թոռանը. Նա Կարլոս
1700 Բ.-ի մահուանից յետոյ 1700 թ. զօրքը խաղացրեց դէպի
Սպանիա։ Կայսրն իւր կողմից թեկնածու հանեց իւր
երկրորդ որդուն, Կարլոսին և նրան պաշտպան դուրս
եկան Անգլիան, Հոլլանդիան և գերմանական իշխանների
մեծագոյն մասը։ Սպանիական ժառանգութեան համար
ֆրանսիացիք պատերազմը վարեցին մեծ ճիգ ու ջանք
թափելով, բայց Լուդովիկոս ԺԴ.-ի ժամանակ կրթուած
մեծ զօրավարները—Տիւրէնն ու Կոնդէն մեռել էին, և
առաջ էին անցել դատարկ պալատականները Վիլլերուա
դքսի նման։ Ընդհակառակը դաշնակիցների մէջ երևան
էին եկել առաջնակարգ զօրավարներ յանձին Եւգենիոս
Սաւոյացու և մանաւանդ լորդ Մալբորոյի։

Իտալիայում յաջողութիւնը մերթ մի և մերթ միւս կողմն
էր. սկզբում Եւգենիոս իշխանը յաղթեց ֆրանսիացոց, ապա
սրանց գործերն ուղղեց Վանդոմի դուքսը, յետոյ, երբ սրան
յետ կանչեցին, կրկին գերակշռութիւն ստացաւ կայսեր զօրքը։
Պիրենեան թերակղզում անգլիացիք ամուր հաստատուեցան
Պորտուգալիայում և գրաւեցին Ջիբրալտարը, բայց Բերվիգ
դուքսը, իսկ յետոյ Վանդոմի դուքսը նուաճեցին սպանիա-
կան թագաւորութիւնը Փիլիպպոս Ե.-ի համար։

Պատերազմի գլխաւոր դաշտը գտնուում էր Գերմա-
նիայում, Նիդերլանդիայում և հիւսիսային Ֆրանսիայում։

Եւ այստեղ Մալբորոյ դուքսը իշխան Եւգենիոսի աջակ-
ցութեամբ պարտութիւն պարտութեան յետևից էր հասց-
նում Ֆրանսիացոց։[1]) Բանն այնտեղ հասաւ, որ հոլլանդա-
կան հեծելազօրի մի վաշտ հասաւ Վերսայլի սահմանը։
Լուդովիկոս ԺԴ. հաշտութիւն խնդրեց և պատերազմը
շարունակեց միայն նրա համար, որովհետև անհնարին
պայմաններ առաջարկեցին—նրան իրեն էին ուզում պար-
տաւորացնել, որ Փիլիպպոս Ե.-ին դուրս քշէ Սպանիայից.
բայց գործերն այսպէս վատ էին ընթանում, որ պիտի
ստիպուէր ամեն բանի համաձայնել։ Լուդովիկոս ԺԴ.-ի
բախտից անգլիական քաղաքականութեան մէջ անսպա-
սելի յեղաշրջումն տեղի ունեցաւ. այն տեղ յաղթեց
պատերազմի ընդդէմ Տորիների կուսակցութիւնը։ Բացի
սրանից, Լէօպոլդ կայսեր և նրա աւագ որդի Յովսեփի
մահուանից յետոյ կայսերական թագն հասնում էր ար-
քիդուքս Կարլոսին, որին դաշնակիցներն սկզբում կա-
մենում էին սպանիական գահի վրայ բազմացնել։ Կայ-
սերական թագի նրան անցնելը բոլորովին փոխեց դրու-
թիւնը, որովհետև դաշնակիցներն ամենևին ցանկու-
թիւն չ՚ունէին Կարլոս Ե.-ի միապետութիւնը նորոգելու։
Մեծ ազդեցութիւն էր գործում և ֆրանսիացոց անընկ-
ճելի հայրենասիրութիւնը, որ չընայելով պարտութեան,
բանակ բանակի յետևից էին հանում, կռւում էին ոչ
նուազ քաջութեամբ, քան թէ պատերազմի սկզբում, և
դաշնակիցներին մի քանի զգալի հարուածներ իսկ հաս-
ցրին։ Ֆրանսիան հնար ստացաւ շատ ձեռնտու հաշտու-
թեան դաշն կռելու Ուտրեխտում և Ռաշտատում (1714)։ 1714
Փիլիպպոս Ե. ճանաչուեցաւ սպանիական թագաւոր, բայց
հրաժարուեցաւ իւր և իւր ժառանգների կողմից ֆրան-
սիական թագի իրաւունքից և Ջիբրալտարն թողեց Ան-
գլիային. Բելգիան, Միլանն ու Նէապոլսական թագաւո-
րութիւնն Աւստրիային։ Ֆրանսիան թողեց Աւստրիային

[1]) Բլէնհայմ, Ռամիյլի և Մալպլաքէ։

Ֆլանդրիոյ մեծագոյն մասը, Անգլիային — հիւսիսային ամերիկական երկրներից մի մասն, դարձրեց Սաւոյիոյ դքսին իւր երկիրը, որ միացած Պիէմոնտի և Սարդինիա կղզու հետ թագաւորութիւն հրատարակուեցաւ. վերջապէս, Հոլլոնդիան գրաւեց բելգիական ամրոցների մի շարք, ինչպէս „պատնէշ„ Ֆրանսիայի դէմ։

Խաղաղութեան պայմանները, այսպիսով, համեմատաբար շատ պատուաւոր էին։ Սակայն բացի երկրների կորստից անհրաժեշտ է ուշադրութեան առնել և Ֆրանսիայի կատարեալ ուժասպառութիւնը, նրա ելևմուտքի անուղղելի խանգարմունքը (պարտքն հասնում էր չորս միլիարդ ֆրանկի), բնակիչների թուի նուազումն և աղքատութիւնն, ազգի յուսահատութիւնն և բոլոր կարգի բարոյական կործանումը։ Ինքը Լուդովիկոս ԺԴ. մահուան վայրկենին ասաց իւր թոռան ու ժառանգին. «Ես շատ էի սիրում պատերազմն և չափազանց շատ էի ծախսում—այդ բանում մի՛ հետևէք ինձ։»

ԳԼՈՒԽ Գ.

ՊՐՈՒՍՍԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ։

Լեհաստանի տկարանալը՝

Երեսնամեայ պատերազմն տնտեսելի կերպով յառաջ մղեց Շուեդիային, մեծ պետութեան դիրք տուաւ նրան ու երևան հանեց Լեհաստանի թուլութիւնը։ Սա փոխանակ որ և է կերպիւ այն համաշխարհային իրողութիւնների ընթացքին խառնուելու, որ տեղի էին ունենում Գերմանիայում, զբաղուեցաւ Տաճկաստանի դէմ պատերազմելով։ Այս կռիւը կողմնակի ազդեցութիւն գործեց երեսնամեայ պատերազմի վրայ, որովհետև ազատեց կայսեր տաճիկների կողմից սպառնացող

վտանգից և միջոց տուաւ եռանդով գործելու արևմուտքում։ Պէտք է աւելացնել, որ Լեհաստանի բացակայութիւնն երեսնամեայ պատերազմում մեծ չափով բացատրուում է Ռուսաստանի ճնշմամբ, որ ոտքի էր կանգնել շփոթութեան շրջանից յետոյ և աւելի ուժգնապէս ճնշում էր Լեհաստանը արևելքից։ Այս ժամանակ սկսուում է բորբոքուել կոզակների խնդիրը, և մրցումը Ուկրայնի համար գրաւում է Լեհաստանի, Տաճկաստանի ու Ռուսաստանի ույժերը։

Թէպէտև Լեհաստանը ժամանակին ուշք չէր դարձրել Շուեդիայի յաջողութիւնների վրայ, բայց նա չէր կարող անտարբերութեամբ նայել այդ բանին երեսնամեայ պատերազմի աւարտելուց յետոյ։ Լիֆլանդիայում, Պոմերանիայում և Պրուսսիայում երկու պետութիւնների շահերն ընդհարուում էին. Վլադիսլաւ Դ.-ի որդի Եան Կազիմիրը դեռ շարունակում էր իրեն թեկնածու հրատարակել շուեդական գահի։ Շուեդիոյ թագաւոր Կարլոս Ժ. (Գուստաւ Ադոլֆի եղբօրորդին) մտաւ Լեհաստան 1655 թուին, արագապէս նուաճեց երկիրը մին- 1655
չև Կրակով և ջարդեց Եան Կազիմիրին Վարշաւայի մօտ երեքօրեայ ճակատամարտում։ Լեհաց թագաւորին ազատելու շտապեցին կայսրը, Դանիմարքան և Ռուսիան։ Շուեդներն ույժ չ'ունէին այդքան հակառակորդներին դիմադրելու, նրանք պատժեցին դանիացոց, խլեցին Սկանդինաւեան թերակղզու հարաւում նրանց պատկանող նահանգները, բայց ձեռքից բաց թողին Լեհաստանը.

Սա կրկին դարձաւ ռուսական և տաճկական գործերին։ Անդրուսովսկու զինադադարը դարձրեց Ռուսիային Սմոլենսկը, Կիևը, Չեռնիգովն ու ձախեզրեայ (Դնեպրի) Ուկրայնան (1667)։ Տաճիկները գրաւեցին Պա- 1664
դոլիան և աջեզրեայ Ուկրայնան։ Նշանաւոր զօրավար Եան Սոբէսկին ստիպեց տաճիկներին կանգ առնել, յաղ-

թելով նրանց Խոտինի [1] մօտ: Սրան թագաւոր ընտ-
րեցին, և սա մեծ ծառայութիւն արաւ Աւստրիային.
1683 թուին մեծ վեզիր Ղարա-Մուստաֆան մերձեցաւ
Վեննային, պաշարեց քաղաքն ու նրա պաշտպան-
ներին ծայրայեղ վիճակի հասցրեց. Սոբէսկու երևումը
փոխեց գործի ընթացքը—նա տաճիկներին գլխովին
ջարդեց: Բայց այս քաջագործութիւններից քիչ օգուտ
ունեցաւ Լեհաստանը, որովհետև այնտեղ շարունակ-
ւում էր ներքին անկարգութիւնը: Սոբէսկու մահուա-
նից յետոյ կաշառքով ձեռք բերաւ լեհական թագը
Սաքսոնիոյ կայսրընտիր Աւգուստ Բ.: Սրա ժամանակ
արևելեան Եւրոպայում յեղաշրջումը տեղի ունեցաւ
Պետրոս Մեծի Կարլոս ԺԲ-ին յաղթելու պատճառով:
Աւգուստը Ռուսիոյ դաշնակիցն էր, շնորհիւ դրա նա
գահի վրայ մնաց, բայց Լեհաստանը հիւսիսային պա-
տերազմից ոչինչ չը ստացաւ, որովհետև շլեախտան երկ-
պառակուել էր և, մինչ մեծ կռիւ էր տեղի ունենում
ռուսաց, սաքսոնացոց, բրանդենբուրգցոց, դանիացոց,
շուեդների և տաճիկների մէջ, լեհական դաշնակցու-
թիւնները միմեանց էին ոչնչացնում: Երբ շուեդներից
սպառնացող վտանգն անցաւ, Աւգուստը ճնշեց շլեախտայի
ապստամբութիւնն և կարողացաւ մի փոքրիկ մշտական
հարկ դնել և սակաւաթիւ մշտական զօրք պահել, բայց
ստիպուած էր „ոսկէ ազատութիւնն“ անձեռնմխելի
թողնելու:

Պրուսիան ԺԷ դարում Արևելեան երկու առաջնակարգ պետութիւնները,
Շուեդիան և Լեհաստանն, անկման հասան: Դրանց
փոխարէն առաջնակարգ նշանակութիւն ստացաւ Ռու-
սիան: Սակայն, բացի դրանից, առաջ անցաւ և մի այլ
տէրութիւն, որ ո՛չ իւր ծաւալով և ո՛չ էլ զօրութեամբ
ըստ երևոյթին կարող էր մեծ դեր խաղալ, բայց որը
կարողացաւ լաւ օգտուել արեւելեան Եւրոպայի գոր-

[1] Բեսսարաբիայում.

ծերի բոլոր ճգնաժամերից և, կարծես թէ գտնուե-
լով Շուեդիոյ, Ռուսիոյ և Լեհաստանի միջև եղած մեծ
ճանապարհի վրայ, չընայելով դրան, կազմեց մի ամ-
բողջական և ինքնուրոյն ամբողջութիւն: Այդ տէրու-
թիւնն էր Պրուսիան:

Բրանդենբուրգի Հոհենցոլեռններն 1611 թուին 1611
Սիգիզմունդ Գ-ից ստացան իբրև աւատ արևելեան Պրու-
սիան, ուր Ալբրեխտ դքսի սերունդը վերջացել էր: Նոյն
ժամանակ նրանք հաստատուեցան Հռենոսի ափին, Կլե-
ւէի դքսութիւնը գրաւելով: Վեստֆալեան խաղաղու-
թիւնը տուաւ նրանց արևելեան Պոմերանիան և Մագ-
դեբուրգը: Կարլոս Ժ-ի Եան Կազիմիրի հետ ունեցած
պատերազմի ժամանակ Ֆրիդրիխ Վիլհելմ կայսրըն-
տիրը կամ «Մեծ կայսրընտիրը» նախ Շուեդիայի հետ միա-
ցաւ և ձգեց Լեհաստանը, ապա ժամանակին յետ կանգ-
նեց Շուեդիայից և միացաւ Լեհաստանի հետ: Նրա պար-
գևն եղաւ անկախութիւնն և ազատուեցաւ լեհաց թա-
գաւորին վասսալ լինելուց, որին հպատակ էր իբրև արև-
ելեան Պրուսիոյ դուքս: Ազատուելով լեհական գերիշխա-
նութիւնից «Մեծ կայսրընտիր» Ֆրիդրիխ Վիլհելմն
առանձին ուշադրութիւն դարձրեց շուեդների ու ֆրա-
նսիացոց վրայ: Նա եռանդուն մասնակցութիւն ունե-
ցաւ Լուդովիկոս ԺԴ-ի դէմ կազմուած դաշնակցու-
թիւնների մէջ և, թէպէտ անյաջողութիւն ունեցաւ Հռե-
նոսի ափերին, բայց շուեդներին ծանր պարտութիւն
հասցրեց Ֆերբելլինի մօտ (1675), հիւսիսային Բրան- 1675
դէնբուրգում: Այսպէս Բրանդէնբուրգը խոշոր ոյժ սկը-
սաւ դառնալ ընդհանուր եւրոպական քաղաքականու-
թեան մէջ: Մեծ կայսրընտիրն հասաւ դրան ո՛չ միայն
ճարպիկ դիւանագիտութեամբ և յաղթութիւններով, այլ
նոյնպէս իւր երկրի բարեկարգմամբ: Նա կառավարա-
կան իշխանութիւնը կենդրոնացրեց իւր ձեռքի մէջ,
չէր թոյլ տալիս դասակարգերի միջամտութիւնն: Իւր

անխոնջ ջանքերով վարչական գործերի և արդիւնաբերութեան համար նա այն հետևանքին հասաւ, որ երեսնամեայ պատերազմի պատճառով աւերուած և աղքատացած գաւառները բարեկարգուեցան ու մինչև իսկ դրացի երկրներից առաջ անցան։ Յատկապէս ձեռնտու եղաւ նրա համար բողոքականների փախուստը Ֆրանսիայից Նանտի հրովարտակի ջնջումից յետոյ. սրանք տասնեակ հազարներով բնակութիւն էին հաստատում պրուսական երկրներում և ներմուծում էին նոր արդիւնաբերական արուեստներ։ Բրանդենբուրգի զօրացումն ձևական կերպով հաստատուեցաւ մեծ կայսրընտրի մահուանից յետ—նրա որդի Ֆրիդրիխը կայսրից խնդրեց

1701 ու ստացաւ Պրուսիոյ թագաւորի տիտղոսը (1701) [1]։

Ֆրիդրիխ Վիլհելմ Ա. Նոր թագաւորութիւնս հիւսիսային պատերազմում գործում էր ինչպէս Ռուսիոյ դաշնակից, իբրև պարգև

1720 սրա համար Ֆրիդրիխ Վիլհելմը ստացաւ 1720 թ. շուեդական Պոմերանիոյ մեծագոյն մասը։ Ֆրիդրիխ Վիլհելմը ժլատ, կոպիտ և սահմանափակ խելքի տէր մարդ էր, բայց շատ ճիշտ եւ խիստ կառավարիչ։ Նա հաշւում էր ելքի և մուտքի ամէն մի լուման, իւր արքունիքի համար գործ էր դնում շատ համեստ գումար, անձամբ դատում էր պաշտօնեաներին, որոնցից դժգոհ էր։ Նա միայն մի կիրք ունէր, որի համար դրամ չէր խնայում.—սիրում էր զօրքը։ Ֆրիդրիխ Վիլհելմն առանձնապէս սիրում էր բարձրահասակ զինուորներ և, չէր գոհանում միայն պրուսացիներով, մեծ փողերով զինուոր էր գրել տալիս հսկաներին և պատահած ժամանակը նոյն իսկ ուժով ձեռք էր բերում այդպիսիք արտասահմանից։ Փոքրիկ Պրուսիան իւր 2,500,000 բնակչով մի այնպիսի բանակ էր պահում, որ թուով հաւասարւում էր կայսերականին, բայց կարգապահութեամբ,

[1]) Սա ինքն էր, որ Ուտրեխտի դաշնագրութեամբ ստորին Հռենոսի ափերում ստացաւ Գելդերնը.

կազմով ու տնտեսական մատակարարութիւնով գերազանց էր նրանից։

Ֆրիդրիխ Բ. Ֆրիդրիխ Վիլհելմի յաջորդը, Ֆրիդրիխ Բ. բոլորովին իւր հօր հակապատկերներն էր։ Նրա մտաւոր կարողութիւնները փաղահաս էին. նա շատ էր կարդում իւր դաստիարակ Ֆրանսիացու առաջնորդութեամբ։ Ընդհակառակն, բողոքական քրիստոնէականի ուսման և տնտեսութեան վերաբերեալ գործնական տեղեկութիւններ ձեռք բերելու համար, ինչ որ նրա հայրն էր ցանկանում, կրոնպրինցը (գահաժառանգը) քիչ սէր ունէր։ Հօր կեանքի ամբողջ եղանակը, նրա կծծիութիւնը, քրթմնջելու սովորութիւնը, իմաստակական խստութիւնը խորշանք էին պատճառում նրան։ Նա զուարճութիւն էր որոնում, պարտքեր էր անում, բայց որ գլխաւորն է, ֆրանսիական փիլիսոփաների ազատ մտածողութիւնն իւրացրել էր, սկսել էր ատել հնաձև գաղափարներն ու սովորութիւններն ու ծաղրել։ Ֆրիդրիխ Վիլհելմը չափազանց դժգոհ էր որդու վարքից և, ըստ սովորութեան, իւր դժգոհութիւնն արտայայտում էր չափազանց կոպիտ կերպով—բանը հասնում էր նոյն իսկ ծեծի։ Գահաժառանգն յուսահատուելով՝ վճռեց փախչել և այդ նպատակով խօսք կապեց մի քանի երիտասարդ սպաների հետ։ Դրանց մտադրութիւնն յայտնեցին թագաւորին, որ աննկարագրելի զայրոյթով վառուեցաւ։ Գահաժառանգին դատելու համար կազմուեցաւ զինուորական դատարան, նրան դատում էին իբրև դասալիք զինուորի, իւր աչքի առաջ մահուան մատնեցին իւր ընկերներից մէկին։ Թագաւորը լուրջ կերպով մտածում էր զրկելու որդուն գահից. բայց պատիժը սահմանափակեց խիստ բերդարգելութեամբ։ Մի քանի ժամանակից յետոյ գահաժառանգը նշանակուեցաւ նահանգական վարչութեան գլուխ և ստիպուած էր թղթերով զբաղուելու, ինչպէս մի հասարակ պաշտօնեայ։ Այսպիսի

վարժութիւն ձեռք բերաւ նա և զինուորական ծառայութեան մէջ: Ապա թագաւորն ամուսնացրեց նրան բրաունշվայգի մի իշխանուհու հետ, որի մասին ինքը գրում էր, որ ո՛չ տգեղ է և ո՛չ սիրուն, բայց շատ աստուածավախ: Ինչպէս ամուսնացած մարդու, Ֆրիդրիխին իրաւունք տրուեցաւ մի փոքրիկ արքունիք ունենալու. Նա ձգնում էր ինչքան կարելի է ճշգապահ լինելու ծառայութեան մէջ և ինչքան կարելի է քիչ ընդհարուելու հօր հետ: Թէպէտ և, ջանադիր մտադրութիւնը ծառայութեան մէջ ցոյց տուաւ Ֆրիդրիխին, որ իւր հօր իմաստակութեան մէջ անգամ լաւ կողմեր կան: Նա մօտիկ ճանաչեց զօրքը, ծանօթացաւ ելևմուտքին, ժողովրդական տնտեսութեան և տեսաւ, որ Ֆրիդրիխ Վիլհելմն ամենայն ինչ գեղեցկապէս է պատրաստել մեծամեծ ձեռնարկութիւնների համար և որ մնում է միայն համարձակօրէն գործին ձեռնարկել:

Աւստրիա
1740

Ֆրիդրիխ Վիլհելմը մեռաւ 1740 թ. և Ֆրիդրիխ Բ. անմիջապէս իւր հօրից նախապատրաստած միջոցները գործ դրաւ: Նա վճռեց *օգուտ քաղել այն նեղ վիճակից, որի մէջ գտնւում էր Աւստրիան:*

Հաբսբուրգների արտաքին զօրութիւնը շատ մեծ էր երեւում: Սոբէսկու տաճիկներին յետ մղելուց յետոյ Աւստրիան սկսաւ նրանց դէմ յարձակողական դիրք բռնել, եւ արքայազն Եւգենիոսի յաղթութիւնը նրաց վրայ Ցենտի մօտ (հարաւային Հունգարիայում, Տիսսի վրայ) յետ դարձրեց նրան հունգարական նահանգներն, որ տաճիկների իշխանութեան տակն էին, եւ նոյն իսկ Սերբիոյ մի մասը: Սպանիական ժառանգութեան պատերազմը Աւստրիային ընձեռեց Բելգիան եւ Իտալիոյ սպանական նահանգները: Լեհական գահի համար պատերազմ ծագեցաւ 1733 թուին, ուր Կարլոս Զ. եւ Ռուսիան պաշտպան կանգնեցին Աւգուստ Գ-ին, Աւգուստ Բ.-ի որդուն, իսկ Ֆրանսիան—Ստանիսլաւ Լեշչինսկուն. պատերազմն աւելի եւս բարդուեցաւ շնորհիւ սպանիական արքայազն Դօն-Կարլոսի թեկնածութեան Հաբսբուրգների իտալական երկրների վրայ: Այդ պատերազմը վարւում էր փոփոխակի յաջողութեամբ—

եւ ռուսները գրաւեցին Դանցիգն ու գահի վրայ բազմացրին Աւգուստ Գ.ին, բայց ֆրանսիացիք ու սպանացիք աւստրիացոց դուրս քշեցին Իտալիայից: Խաղաղութեան դաշը փոփոխեց երկրների տիրապետութեան պատկերը—Ստանիսլաւ Լեշչինսկին հրաժարուեց լեհական գահից, բայց ստացաւ Լոթարինգիայի[1]) դքսութիւնը, որ նրա մահուանից վերջը պիտի Ֆրանսիային հասնէր: Նախկին դուքսը Ֆրանցիսկ, կայսեր դուստր Մարիա Թերէզայի ամուսինը, դրա փոխարէն ստացաւ Տոսկանան, իսկ Դօն-Կարլոսը դարձաւ Երկուց Սիկիլիայից (այսինքն՝ Նէապոլսի եւ Սիկիլիոյ) թագաւոր: Այն դիւրութիւնը, որով կատարւում էին այսպիսի փոփոխումներ, ցոյց էր տալիս, որ խնդիրը չէր վերաբերում այնպիսի տէրութիւնների, որ կազմուած էին միապաղաղ ազգութիւններից եւ շնորհիւ պատմութեան, այլ զանազանատարր երկրներից, իրենց առանձին հաստատութիւններով, որոնք թոյլ կցուած էին միմեանց պատահական պատերազմների, դաշինքի կամ ամուսնութիւնների շնորհիւ:

Հաբսբուրգների միապետութեան, չընայելով իւր ընդարձակութեան, բազմամարդութեան և բնակիչների պատերազմասիրութեան, սպառնում էր քայքայումն ամէն մի հարուածից: Կարլոս Զ. որդիք չ'ունէր, և նրա մահուամբ խնդիր պիտի ծագէր ժառանգի մասին Բոհեմիայում, Հունգարիայում, Աւստրիայում և Կարինթիայում, Բելգիայում, Միլանում և Տոսկանայում: Որպէս զի տէրութեան սպառնացող քայքայման վտանգի առաջն առնէ, կայսրն հրատարակեց այսպէս կոչուած «իրաւագիտական կարգադրութեան պատճառական սրբագործումն», *որ ժառանգութեան վերաբերութեամբ միացնում էր նրա բոլոր տիրապետած երկրներն ու կազմում մի ամբողջութիւն*, և նշանակեց իրեն յաջորդ ու ժառանգ իւր դուստր Մարիա Թերեզային: Կարլոս Զ. գործ դրաւ բոլոր զօրութիւնը, որ ճանաչուի իւր այս կարգադրութիւնը թէ երկրի մէջ և թէ արտասահմա-

[1]) Գլխաւոր քաղաքն է Նանսի, այս նահանգը կայսրութեան մասն էր և Բուրգունդիոյ աւատական իշխանութեան մէջ էր մտնում:

1740 նում։ Այսուամենայնիւ երբ նա մեռաւ 1740 թուին, անմիջապէս մի քանի թեկնածուք դուրս եկան, և նրանցից մէկին, բաւարական կայսրընտրին, աջակցեցին ֆրանսիացիք։ Այդ ժամանակ վերսկսուեց Ֆրանսիայի և Աւստրիայի դարաւոր մրցումն, և Մարիա Թերեզային ախոյեան դուրս եկաւ իւր իսկ երկրներում—Ֆրիդրիխ Բ. անակնկալելի կերպով Շլեզիա խուժեց և իւր առաջին յաղթանակը տարաւ աւստրիացոց վրայ։ Նրա հաշիւն ուղիղ երևեցաւ։ Մարիա Թերեզան վտանգի մէջ հոգու արիութիւն ցոյց տուաւ, բայց իւր գըլխաւոր ոյժերն ստիպուեցաւ ուղղել ֆրանսիացոց դէմ, որոնք այնքան ներս էին մտել, որչափ Լուդովիկոս ԺԴ.-ի բանակներն երբէք չէին հասել. նրանք բաւարացոց օգնութեամբ գրաւել էին Պրագան, սպանիացոց օգնութեամբ առել էին Իտալիան, իսկ Նիդերլանդիայում յաղթել էին անգլիացիք—Աւստրիոյ դաշնակիցները։ Վերջ ի վերջոյ ֆրանսիացոց դիմադրութիւն ցոյց տրուեցաւ եռանդեամբ, և նրանք կռեցին Ախենի խաղաղութեան դաշն առանց որ և է նուաճման, մինչ Մարիա Թերեզայի իրաւունքները ճանաչուեցան համաձայն իւր հօր հրովարտակի, իսկ նրա ամուսին Լոթրենգիայի դուքս Ֆրանցիսկոսը, կայսր ընտրուեցաւ։ Ամենից մեծ օգուտը քաղեց Ֆրիդրիխ Բ., որ հազիւ խաղաղութեան դաշն էր դրել Աւստրիոյ հետ, որն անմիջապէս խախտեց, աւստրիացոց դարձեալ քանի մի անգամ յաղթեց և վերջնականապէս հաստատուեցաւ Շլէզիայում։

Ֆրիդրիխ Բ-ի յաջողութիւնը նրա վրայ գրաւեց ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը. Պրուսիան Ռուսիոյ և Աւստրիոյ երկրորդական աջակցից յանկարծ դարձել էր մեծ պետութիւն։ Ստիպուած էին զարմանալու պրուսական բանակի զինուորական բարեկարգութեան վրայ, նրա թնդանօթաձգութեան արագութեան ու նշան առնելուն, թագաւորի տաղանդի և ձեռնարկութեան ոգու

վրայ. քիչ չէին զայրանում և նրա դէպի իրաւունքը տածած աւազակային արհամարհանքի, նենգութեան ու խորամանկութեան վրայ։ Այս ամենի մասին գանգատւում էին Մարիա Թերեզայից ոչ պակաս և Ֆրիդրիխի դաշնակից ֆրանսիացիք։ Կայսրուհին անձնատուր էր եղել զօրքի և վարչութեան բարենորոգութեան. չէր կարողանում հաշտուել Շլէզիայի կորստեան գաղափարի հետ, որ ի սկզբան պատկանել էր չեխական թագին, և ճարտարութեամբ նախապատրաստում էր ահագին դաշնակցութիւն ընդդէմ Պրուսիոյ։ Նրան յաջողուեցաւ դաշնակցութեան միացնելու Ռուսիան, Սաքսոնիան, Շուեդիան և նոյն իսկ Ֆրանսիան։ Ֆրիդրիխ Բ-ի դաշնակից եղաւ Անգլիան, որ նրա կողմը բռնեց միայն այն պատճառով, որ Ֆրանսիան նրա թշնամեաց կողմն էր։ Ոյժերն այնքան անհաւասար էին, որ Ֆրիդրիխը կարող էր յոյս դնել միայն հակառակորդների անհամաձայնութեան վրայ և փորձել *ջարդելու նրանց առանձին առանձին*։ Չը սպասելով պատերազմի հրատարակման, նա յարձակուեց Սաքսոնիոյ վրայ, շրջապատեց սաքսոնական զօրքը բանակում (Պիրնի մօտ), անձնատուր լինելու ստիպեց նրան. իսկ աւստրիացոց երկու գգալի պարտութիւն հասցրեց (Լովոզիցի և Պրագայի մերձակայքում)։

Այս սկզբնաւորութիւնը շատ փառաւոր էր, բայց դաշնակիցների զօրութիւնները փոքր առ փոքր գործի մէջ էին մտնում ամեն կողմերից։ Ֆրանսիացիք անգլիական բանակը Հաննովերում, Էլբա գետի բերանի մօտ, ճահիճը խոթեցին և արձակեցին այն պայմանով, որ հրաժարուին պատերազմին մասնակցելուց, ռուսները գրաւեցին արևելեան Պրուսիան և ջարդեցին իրենց դէմ ուղարկուած պրուսական զօրագունդն. շուեդները դուրս եկան Պոմերանիա։ Ամենից վատն այն էր, որ աւստրիական մարաջախտ Դաունը յաղթեց նոյն իսկ Ֆրիդրի-

խին իրեն—Պրագայի մերձակայքում (Կոլինի մօտ)։
Բայց Ֆրիդրիխը չէր յուսահատուում։ Նա ժամանակ
հրտուաւ իւր թշնամեաց, որ իւր շուրջը փակեն զօր-
քերով։ Մինչ Դաունը դանդաղ կերպով յառաջ էր խա-
ղում դէպի Բոհեմիա, Ֆրիդրիխը դարձաւ ֆրանսիա-
կան բանակի դէմ, որ Սաքսոնիա էր մտել։ Նա երկու
անգամ աւելի քիչ զօրք ունէր, բայց նրա հեծելազօրը
յանկարծուստ յարձակուեց ֆրանսիացոց վրայ Ռոսբախի
մօտ [1]) և մի քանի վայրկենում բոլոր նրանց զօրքը
փախչել սկսաւ։ Ռոսբախից անմիջապէս Ֆրիդրիխը
դարձաւ յետ. փոխարէնը վճարեց Դաունին, ջարդելով
նրան Շլեզիայում։ Այդտեղից դիմեց Բրանդենբուրգ
ռուսաց դէմ և յաղթեց նրանց մի սարսափելի ճակա-
տամարտում [2])։ Բայց երբ Ֆրիդրիխը կրկին դարձաւ
Դաունի դէմ, դարանի մէջ ընկաւ Սաքսոնիայում (Հոխ-
կերխէ) և կորցրեց իւր ամբողջ թնդանօթները։ Աւս-
տրիական զօրավարը սակայն չափազանց զգոյշ էր և
կարող չ՚եղաւ օգուտ քաղել իւր յաղթութիւնից։ Մեծ
ճիգերով Ֆրիդրիխը նոր բանակ ժողովեց և դիմեց
Սալտիկովի ռուս բանակի դէմ, որ մերձենում էր Բեռ-
լինին։ Սալտիկովն արդէն ջարդել էր պրուսական մի
գունդ, իսկ Կունէրսդորֆի [3]) մօտ ինքը Ֆրիդրիխը
1759 կատարեալ պարտութեան կրեց (1759)։ Նրա դրութիւնն
յուսահատական էր, և մտադիր էր թագից հրաժարու-
ելու։ Նրա բախտից իւր թշնամեաց մէջ համաձայնու-
թիւն չը կար—Սալտիկովը զայրացած էր Դաունի դան-
դաղկոտութեան վրայ և կասկածում էր, որ աւստրիա-
ցիք կամենում են պատերազմի բոլոր ծանրութիւնը
ռուսաց վրայ ձգել, ռուսաց զօրքի մի գունդը գրաւեց
Բեռլինը, բայց Ֆրիդրիխին չը հալածեցին, և նա մի-
ջոց ունեցաւ ոտքի կանգնելու։ Առաւել նշանաւոր էր

[1]) Էլբա գետի վտակ Զաալի ափին։
[2]) Ցորնդորֆի մօտ։
[3]) Օդերի վրայի Ֆրանկֆուրտին մերձ։

այն, որ Ռուսիայում գահ ամբարձաւ Պետրոս Գ., Ֆրի-
դրիխի ոգևորուած երկրպագուն։ Նա հրաժարուեց
բոլոր գրաւումներից և պահանջներից և պատրաստուում
էր իսկ օգնութեան դուրս գալու պրուսական թագա-
ւորին։ Սա հնար ունեցաւ իւր ոյժերը կենդրոնացնելու
աւստրիացոց դէմ և մի շարք յաղթանակներ տարաւ
նրանց վրայ։ Հուբերտսբուրգի [1]) խաղաղութիւնը 1763 1763
թուին վերջ տուաւ եօթնամեայ պատերազմին (1753—
1763)։ Ֆրիդրիխը պահպանեց միայն Շլէզիան և նոր
գրաւումներ չ՚արաւ, բայց պատերազմը քայքայեց Աւ-
ստրիային, և Պրուսիան գերակշռող պետութիւն դար-
ձաւ միջին Եւրոպայում։ Ֆրիդրիխի անսովոր մրցումը
դաշնակցութեան դէմ զարթեցրեց գերմանացոց վա-
ղուց քնած ազգային զգացմունքը. պրուսական թա-
գաւորն ամբողջ Գերմանիայում ամենից ժողովրդական
մարդն էր։

Լեհաստանի առաջին բաժանումը։

Լեհական շփոթութիւններն առիթ տուին Ֆրի-
դրիխ Բ-ին մի այլ մեծ ու հիմնական գրաւման։ Լեհաս-
տանի քաղաքական անկումն կատարելապէս երևան ե-
կաւ եօթնամեայ պատերազմի ժամանակ։ Ընդարձակ ու
երբեմն զօրաւոր պետութիւնը ոչ մի մասնակցութիւն
չ՚ունեցաւ այն կռուի մէջ, որ տեղի էր ունենում իւր
սահմաններում, ռուս զօրքերն անարգել աշնում էին
լեհական հողով, Ֆրիդրիխը լեհերին բռնում էր իւր
բանակը լցնելու համար։ Կատարինէ Բ. կայսրուհու
գահ բարձրանալուց սկսած Լեհաստանը կախման մէջ
մտաւ Ռուսիայից, ռուսաց դեսպան իշխան Ռէպնին
Վարշաւայում կարգադրութիւններ էր անում։ Լեհացոց
մէջ քիչ հայրենասէրներ չը կային, որոնք, վերջապէս,
հասկացան չարիքի պատճառն և խորհում էին պետա-
կան կազմի բարենորոգութեան մասին։ Բայց նրանք
միաբան չէին, իսկ աւագանու և շլեախտայի մեծամաս-

[1]) Հուբերտսբուրգ գիւղը Լայպցիգի մօտ։

նութիւնն անհոգութեամբ անձնատուր էր նենգութեների և խրախճանների։[1]) Աւգուստ Գ.-ի մահուանից լետոյ Զարտորիյսկիների կուսակցութիւնը ռուսաց ձեռնտուութեամբ դաշնաւորութիւն (կոնֆեդերացիա) կազմեց և էական բարեփոխութիւններ ձեռք բերաւ. liberum veto պահպանուեց միայն օրէնքների քննութեան համար, իսկ ելևմտական խնդիրները վճռւում էին ձայների մեծամասնութեամբ. գաւառաժողովներն այլ ևս պարտաւորացուցիչ հրահանգներ չը պիտի տային պատգամաւորներին. զինուորական ու ելևմտական գործերը վարելու համար նշանակուեցան երկու մշտական յանձնախմբեր։ Թագաւոր ընտրուեցաւ Կատարինէին մերձաւոր Ստանիսլաւ Պոնեատովսկին, բայց երբ իշխան Ռէպնինը պահանջեց իբրև վարձ արած ծառայութիւնների պաշտպանողական և յարձակողական դաշինք կռել Ռուսիոյ հետ, Զարտորիյսկեանները մերժեցին։ Այս եղաւ ինքնասպանութիւն Լեհաստանի համար, Ռուսիան առանց դժուարութեան քանդեց նոր տեղի ունեցած բարենորոգութիւնն և կազմեց օրթոդոքսների և բողոքականների դաշնաւորութիւն դիմադրելու համար կաթոլիկների բռնութեան։ Սրանք այս դաշնաւորութեան հակառակ մի ուրիշը կազմեցին Պոդոլիայի Բար քաղաքում, որ գլխաւորաբար ուղղուած էր Ռուսիոյ դէմ։ *Ֆրիդրիխ Բ. օգուտ քաղեց այս շփոթութիւններից, որպէս զի առաջ անցնի Լեհաստանի բաժանման ծրագիրը ներկայացնելով։* Կատարինէ կայսրուհին սկզբում դէմ էր այդ ծրագրին, իւր ազդեցութիւնը տարածուած էր ամբողջ Լեհաստանի վրա, և հիմք չը կար այդ ազդեցութիւնից բաժին հանելու Պրուսիային և Աւստրիային։ Բայց նա զբաղուած էր տաճկական պատերազմով և բարդութիւններից խուսափելու համար

[1]) Առած էր դարձել. «սաքսոնական թագաւորի ժամանակ կեր, խմր և գօտիդ արձակիր»։

համաձայնեց. 1772 թուին տեղի ունեցաւ առաջին բաժանումը, որի ժամանակ Ռուսիան ստացաւ Բէլօռուսիան, Աւստրիան—Փոքր Լեհաստանը (Կրակովի և Սանդոմիրի վոյվոդութիւնը) և Կարմիր Ռուսիան, ռուսինների երկիրը Գալիցիայում, իսկ Պրուսիան գրաւեց այսպէս կոչուող արևմտեան Պրուսիան, բացի Դանցիգից ու Տօրնից։ Ֆրիդրիխ Մեծի գրաւումներն առանձնապէս նշանաւոր էին, որովհետև, դրանց շնորհիւ «արևելեան Պրուսիան», որ մինչև այդ ժամանակ կտրուած էր պետութեան ամբողջութիւնից, սերտ կերպով միացաւ նրա հետ։ 1772

Գ Լ Ո Ւ Խ Դ.

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՍՈՒԴԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ.

Անգլիական թագն ընդունելով՝ Վիլհէլմ Գ. նախ և առաջ աչքի առաջ ունէր Անգլիան մասնակից անելու ցամաքային պետութիւնների պատերազմին ընդդէմ իւր անհաշտելի թշնամի Լուդովիկոս ԺԴ-ի, և, չիրաւի, Յակոբ Բ-ի փոխանակումն Վիլհէլմ Գ-ով կարելի է համարել պատմութեան մէջ դարձակէտ ֆրանսիական աշխարհակալութեան։ Անգլիոյ միաբանութիւնը դաշնակցութեան հետ սրան գերակշռութիւն տուաւ։ Ընդհանրապէս սակայն Վիլհէլմ Գ. քիչ էր հետաքրքրւում անգլիական գործերով և դրանց վարելն յանձնում էր նոյն իսկ անգլիացոց, իշխանութիւնը սովորաբար այն պետական անձանց ձեռքին էր գտնւում, որոնց կողմն էր լինում խորհրդարանի մեծամասնութիւնը։ Վիլհէլմ Գ-ի ժամանակ սկսւում է կազմուել «կաբինէտը», այսինքն՝ Վիլհէլմ Գ.

[1]) Պառլամէնտական Օլիգարխիա։

նախարարների խորհուրդը, որ թագաւորն ընտրում էր խորհրդարանի ղեկավարող կուսակցութեան միջից։ Ղեկավարութիւնն անցնում է երեցփոխանական ժողովի մեծամասնութեան ձեռքը, որովհետև նա բաղկացած էր ժողովրդի ներկայացուցիչներից, և ո՛չ ժառանգական աւագանուց (պէր), և որովհետև նա էր մանրակրկիտ քննութեան ենթարկում ելևմտական առաջարկները, մինչդեռ լորդերը կարող էին առաջարկութիւնները մերժել կամ ընդունել միայն։ Ամենից առաջ դեսսենտերներին պարգևուեցաւ հաւատոյ ազատութիւն իբրև վարձատրութիւն այն բանի համար, որ նրանք չըհրապուրուեցան Յակոբ Բ-ի զիջումներով, կաթոլիկները թողնուեցան նախկին վիճակի մէջ։ Յակոբ Բ-ի փորձն Իռլանդացոց ոտքի կանգնեցնելու նոր կառավարութեան դէմ՝ վերջացաւ իռլանդական կաթոլիկների պարտութեամբ և նորանոր հալածանքներով նրանց դէմ։ Անգլիական խորհրդարանն աւելի քիչ անգութ էր դէպի նրանց, քան թէ Դուբլինի խորհրդարանն, ուր անդամակցում էին բացառապէս անգլիական գաղթականների և այն էլ բողոքական գաղթականների սերունդը—իռլանդական բնիկներից գրեթէ երկու երրորդն օրէնքից դուրս համարուեցաւ։

Ժառանգութեան վճիռը։ Վիլհելմն ու Մարիան որդիք չ՚ունէին։ Պէտք է յաջորդէր Յակոբի երկրորդ դուստր Աննան, որ նոյնպէս անզաւակ էր։ Որպէս զի թագն այլ ևս Ստիւարտներին չ՚ընկնի,
1701 խորհրդարանն 1701 թուին վճիռ կազմեց, որի համաձայն թագն Աննայից յետոյ պիտի անցնէր Հաննովերի կայսրընտրներին, որոնք ծագում էին կանացի կողմից Յակոբ Ա.-ից։ Այս թագաժառանգութիւնը սակայն պայմանաւորեալ էր. անգլիական թագաւորը պիտի պատկանէր անգլիկան եկեղեցուն. օտարերկրացիք իրաւունք չ՚ունէին նախարար կամ գաղտնի խորհրդի անդամ լինելու. դատաւորներն ան-

փոփոխելի պիտի մնային, որպէս զի հնար չը լինէր նրանց վճիռների վրայ ազդել. խորհրդարանի անդամները իրաւունք չ՚ունէին պաշտօն վարելու և միևնոյն ժամանակ պատգամաւոր մնալու։ Այս վերջին վճիռն ապա քիչ փոփոխուեցաւ—նախարարները նշանակւում էին խորհրդարանի անդամներից, բայց եթէ պատկանում էին երեցփոխանաց ժողովին, պէտք է հրաժարուէին իրենց պատգամաւորական աթոռից և նորից քուէարկուէին. եթէ, ինչպէս որ միշտ լինում էր, նրանց նորից ընտրէին, նրանք դառնում էին կրկին խորհրդարանի անդամ և մնում նախարար։ Այս ձևով, նախարարները մնում էին միշտ կապուած խորհրդարանի հետ, իսկ միւս պաշտօնեաները հեռացւում են խորհրդարանի անդամութիւնից, որովհետև նրանց վրայ կարող էին ազդել իրենց մեծաւորները։

Աննա թագուհու կառավարութիւնը զբաղուեցաւ գլխաւորապէս սպանիական ժառանգութեան պատերազմով։ Աննա Թագուհին։ Այս երկար և ծանր պատերազմը մի առ ժամանակ հետաքրքրում էր հասարակութեան, շնորհիւ Մալբորոյ դքսի յաղթութիւններին, բայց փոքր առ փոքր պաղեցաւ դրանից—ուղղակի օգուտներ չէին սպասում այդ պատերազմից, իսկ զօրքի կորուստն ու դրամական ծախքը շատ մեծ էր։ Հասարակական կարծիքն սկսաւ երես դարձնել Վիգերից, որոնք պատերազմի կողմն էին, և թագուհին օգտուեցաւ դրանից, որ ազատուի Վիգերի նախարարութիւնից և Մալբորոյ ամուսիններից, որոնք ձանձրացրել էին նրան իրենց իշխանասիրութեամբ ու շահասիրութեամբ։ Պատերազմի անմիջական պտուղներն Անգլիոյ համար չնչին էին, բայց դա նախապատրաստեց Անգլիոյ առաջնութիւնը ծովի վրայ, որովհետև սպառեց Հոլլանդիոյ միջոցներն ու ֆրանսիական նաւատորմիղը խորտակեց։ Ներքին քաղաքականութեան մէջ մի մեծ քայլ արուեցաւ, Շոտլանդիան,

որ ցարդ առանձին տէրութիւն էր կազմում, միացած Անգլիոյ հետ միայն միապետի անձով, համաձայնեց աւելի սերտ կապուել Անգլիոյ հետ [1]: «Միացման վճռով» շոտլանդացիք հրաժարուեցան իրենց ինքնուրոյն խորհրդարանից Էդինբուրգում [2]:

Վիգերն ու Տորիները՝ 1714

Աննա թագուհին մեռաւ 1714 թուին, և գահը բարձրացաւ Գէորգ Ա. Հաննովերի կայսրընտիրը, որ մինչև իսկ անգլիերէն խօսել չգիտէր և շատ աւելի հետաքրքրուում էր իւր գերմանական իշխանութեան գործերով, քան թէ անգլիական պետութեամբ: Թէ նա ինքն և թէ նրա որդի Գէորգ Բ. Անգլիայում օտար մնացին, ինչպէս և օտար էր Վիլհելմ Գ.: Այս հանգամանքը շատ նպաստեց պառլամենտական գերիշխանութեան հաստատուելուն և „կաբինետական“ կառավարութեան զարգանալուն, այսինքն՝ այնպիսի կարգի, որի շնորհիւ կառավարութիւնը կազմուում է երեսփոխանական ժողովի մեծամասնութիւնից և իւր ճակատագրով կապուած է այդ մեծամասնութեան հետ: Այն նախարարութիւնը, որ մի փոքր ի շատէ էական խնդրում աւելի քիչ ձայն կըստանայ, քան թէ ընդդիմադիր կուսակցութիւնը, այսինքն՝ կառավարութեան հակառակ կուսակցութիւնը, պարտական է հրաժարական տալու: Հաննովերեան տան գահ բարձրանալու ժամանակ երկրի մէջ և խորհրդարանում մեծամասնութիւնը Վիգերի կողմն էր, որոնք քաղաքական կազմի հիմունք էին համարում 1688 թուի յեղափոխութիւնն և բողոքականութիւնն և ջերմեռանդ օժանդակիչ հաննովերեան տան, որովհետև նա ապահովում էր խորհրդարանական գերիշխանութիւնն եւ բողոքականութեան տիրապետութիւնը: Բացի դրանից, Վիգերն աշխատում էին

1) 1707 թուին:

2) Նրանց տրուեցան անգլիական երեցփոխանական խորհրդարանում 45 աթոռ, իսկ լորդերի դահլիճում 16. դատարաններն ու տէրութեան եկեղեցիք բաժան մնացին:

լաւ յարաբերութիւններ ունենալ վաճառական դասակարգերի հետ, որոնք շարունակ հարստանում և զօրանում էին: Տորիքը շատ բազմաթիւ հետևողներ ունէին կալուածատէրերի մէջ, բայց սրանք իրենց կեղծ վիճակի մէջ էին դրել հալածելով դեսսենտերներին և յարաբերութիւն պահելով արտաքսուած Ստիւարտների հետ—դրանց համարում էին գաղտնի յակոբեաններ (կողմնակիցներ Յակոբ Գ-ի, Յակոբ Բ-ի որդու):

Պառլամենտական կարգի զեղծումները՝

Վիգերը սակայն միայն հասարակաց կարծիքի վրայ չէին յենուում: Նախարարութեան տիրանալով՝ նրանք առանձնապէս վայելուչ միջոցներ գործ չը դրին այդ իշխանութիւնը ձեռքերին պահելու համար, Վիլհելմ Գ-ի ժամանակ օրէնք հրատարակուեցաւ, որ երեսփոխանական ժողովն առանց նոր ընտրութիւնների երեք տարուց աւելի իրաւունք չ՚ունի տևելու: Վիգերն այս ժամանակամիջոցը փոխեցին և 7 տարի դարձրին: Գանձարանի առաջին լորդն եղաւ Ռոբերտ Ուալպոլը, որ մի լաւ ելևմտագէտ էր, բայց որ արհամարհում էր մարդոց և միջոցների խտրութիւն չէր անում: Նա կազմակերպեց կաշառակերութեան կարգը, որ երկար ժամանակի համար ապահովեց Վիգերի գերակշռութիւնն երեսփոխանական ժողովում: Բանն այն էր, որ Վիգերի կուսակցութեան շարքերումն էին անգլիական ամենից հարուստ ազնուականներն, և դրանք կանոնաւոր կերպով օգտուում էին իրենց ազդեցութիւնից և դրամներից. ընտրողներին կաշառելու կամ նրանց ստիպելու, որ ձայն տան Վիգերի առաջարկած թեկնածուներին: Այդ անհնարին կըլինէր, դրամ չէր բաւիլ, եթէ երեսփոխանական ժողովն ընտրուէր բոլոր ազգից և կամ գոնէ նրա նշանաւոր և հաւասարապէս որոշուած մեծամասնութիւնից: Բայց իրօք ամենևին այդպէս չէր: Կոմսութիւնների մէջ ընտրող էին, բացի կալուածատէրերից, գլխաւորապէս գիւղական վարձակալներ (ֆերմերները)—

գիւղացիների սովորական մտքով, մանր և ազատ կալուածատէրեր, գրեթէ չէին մնացել Անգլիայում, իսկ գիւղական բանուորները զրկուած էին ձայնից, որովհետև ինքնուրոյն տնտնտեսութիւն չ'ունէին։ Խոշոր հողատէրերն կատարելապէս հնար ունէին ազդելու գիւղական վարձակալների (ֆերմերների) վրայ, բայց կոմսութիւնների մէջ այսուամենայնիւ նրանք ստիպուած էին մրցելու միջին և մանր կալուածատէրերի հետ, որոնք մեծ մասամբ Տորի կուսակցութեան էին պատկանում։ Գլխաւոր նեցուկը Վիգ ազնուականների այն աւաններն էին, որոնք որ և է առիթով միջին դարերում սկսել էին պատգամաւորներ ուղարկել խորհրդարան։ Այդ իրաւունքը նրանք պահպանել էին, թէպէտ և այդ բնակավայրերից շատերն այն ժամանակներից յետոյ «փըտել» էին, այսինքն կորցրել էին իրենց նշանակութիւնըն, և ունէին միայն քանի մի տասնեակ ընտրողներ։ Այս փտած բնակավայրերում Վիգ լորդերն շնորհիւ իրենց հարստութեան և ազդեցութեան տէր էին դառնում ընտրողների ձայներին և այդպիսով խորհրդարան էին ուղարկում բազմաթիւ պատգամաւորներ, որոնք ձայն էին տալիս և վիճաբանութեան մասնակցում այնպէս, ինչպէս եթէ նրանք ուղարկուած լինէին Լոնդոնի կամ որ և է մեծ կոմսութեան կողմից։ Այս ընտրական ձևին համապատասխանում էր և նոյն իսկ պատգամաւորների կաշառակերութիւնը։ Նախարարն իրաւունք ունէր պաշտոններ և թոշակներ բաշխելու, վերջապէս, նոյն իսկ պարգևներ տալու համար դրամ ունէր ձեռքի տակ, և այս պատճառաւ նախարարական կուսակցութեան ձգողական ույժն ահագին էր։ Ուալպօլ առատութեամբ պարգևում էր ընծաներն ու շնորհները, բայց պահանջում էր անպայման հնազանդութիւն։ Սակայն պառլամենտական ձևերը կարելի էր ի չարը գործ դնել միայն խաղաղ ժամանակ, քանի որ

երկիրը զօրաւոր կերպով շահագրգռուած չէր որ և է խնդրով։ Երբ սկսուում էր որ և է ուղղութեամբ զօրաւոր հասարակական հոսանք, բոլոր կուսակցական կաշառներն ու հնարները դրա ընթացքը կարող էին կանգառնել տայ քիչ ժամանակ. այդպիսի ժամանակ ոչ Ուալպոլ, և ոչ ոք նրա ճարպիկ յաջորդներից ապահով չէր խորհրդարանի ղեկավարութիւնը կորցնելուց։ Ուալպոլ ուրիշներից աւելի լաւ գիտէր այս, ուստի և իւր քսանամեայ վարչութիւնը հնարաւորութեան չափ խաղաղ վարեց, փախուստ տալով ամէն մի բարդութիւնից, խոշոր ձեռնարկութիւններից, իսկ որ գլխաւորն է—պատերազմից։ Նա ընկաւ, երբ պատերազմը Սպանիոյ հետ անխուսափելի դարձաւ։ Վիգ կուսակցութիւնը սակայն նրա հետ միասին չ'ընկաւ։ Մի կարճատև ընդհարումից յետոյ նրան փոխարինեցին նոյնպիսի գործիչներ—Պելլգամները։

Գահի թեկնածուի պարտութիւնը։

Դարուս միջին Ստիւարտները վերջին փորձն արին անգլիական թագը յետ խլելու. Յակոբ Գ-ի որդին, Կարլ Էդուարդը, ցամաք դուրս եկաւ լեռնային Շոտլանդիայում և լեռնականներից կազմուած փոքրիկ զօրքով դիմեց հարաւ։ Նրա լայն վաղակաւորներով զինուած կելտերի յարձակումը ջարդեց երկու անգլիական զօրագունդ, և թիկնածուն անցաւ Անգլիա։ Բայց Կիւլոդէնի մօտ հրազինաւորներն յաղթեցին սուսերաւորներին—Կումբերլանդի դուքսը ջարդեց լեռնականներին և անխնայ կոտորեց ամենքին, որոնք նրա ձեռքն ընկան, մինչև իսկ վիրաւորներին։ Կարլ Էդուարդը մի շարք արկածներից վերջը փախչելով ազատուեցաւ, բայց այլ ևս փորձ չ'արաւ ապստամբութեան դրօշը բարձրացնելու։

Գաղթավայրերի աշխարհակալութիւններ։ 1756

Անգլիան 1756 թուին մասնակցեց եօթնամեայ պատերազմին. սա պատճառ եղաւ հասարակութեան հետաքրքրութիւնը զարթնելուն և խանգարեց պառլամենտական սովորական կարգերը։ Երեսփոխական ժողովի

մէջ դեռ ևս Ուալպոլի վարչութեան վերջին տարիներն երևան եկաւ մի խմբակ, որ դատապարտում էր կաշառքըն ու պահանջում էր ազգային, ազնիւ և զօրաւոր քաղաքականութիւն։ Այս գաղափարականների խմբի գըլխաւոր ներկայացուցիչն էր Ուիլեամ Պիտտ, մի փայլուն ճարտասան, որ ունկնդիրներին յափշտակում էր իւր ճառերի ջերմութեամբ և վեհ ոճով։ Եօթնամեայ պատերազմի ժամանակ նա նշանակուեցաւ զինուորական նախարար և ցոյց տուաւ, որ գիտէ ո՛չ միայն խօսել, այլ նաև գործել։ Նա եռանդեամբ պաշտպանեց Ֆրիդրիխ Բ-ին դրամով և զօրքով ու ֆրանսիացոց գգալի հարուածներ հասցրեց նրանց գաղթավայրերում. Ուոլֆ զօրավարը գրաւեց Քուեբէքը, իսկ սրանից յետոյ առնուեցաւ Կանադան։ Հնդկաստանում Արևելեան—Հընդկաստանի վաճառականական ընկերութիւնը, որ դեռ Եղիսաբեթի ժամանակ էր հիմնուել, հետ զհետէ ձեռք էր բերել նաւահանգիստներ ծովափներում, հիմնել էր Մադրասն ու Կալկաթան և ստացել էր Պորտուգալիայից Բոմբէյը։ Տասնևութերորդ դարու սկզբում կործանուել էր «Մեծ Մողոլի» թագաւորութիւնը, Լանգթամուրի յաջորդների տէրութիւնը, որ կարգ էր պահպանում թերակղզու վրայ, սկսուել էին կռիւներ ցեղերի մէջ, որոնք դիպչում էին և եւրոպացոց գաղութներին։ Սրանք երկու բանակի բաժանուեցան—անգլիացիք յենուում էին Կալկաթայի, Մադրասի և Բոմբէյի վրայ, ֆրանսիացիք Պոնդիշերիի։ Յիսունական թուականներին Կլայվ, որ արևելեան—հնդկական ընկերութեան հասարակ գործակատարութիւնից հասել էր նահանգապետութեան, յաղթանակեց ֆրանսիացոց ու բնիկների վրայ։ Պիտտը կառավարութեան զօրքով օժանդակեց ընկերութեան, անգլիացիք գրաւեցին Պոնդիշերին և դրանով թերակղզու վրայ իրենց գերակշռութիւնն ապահովեցին։
1763 Փարիզու խաղաղութեան դաշինքով (1763) Ֆրանսիացիք անգլիացոց թողին Կանադան և յետ ստացան Պոնդիշերին, բայց նրանց ազդեցութիւնը Հնդկաստանում կորաւ։

Գէորգ Բ. մեռաւ 1760 թուին, և նրան յաջորդեց Գէորգ 1760
Գ., մի փառասէր թագաւոր, որ չէր գոհանում միմիայն ներկայացուցչութեամբ, և վճռել էր օգտուել իրեն թողնուած բոլոր ազդեցութեան միջոցներից։ Ամենից առաջ նա մերժեց պարզապէս հետևելու Վիգերի ցուցմունքին նախարարներ նշանակելիս, և փորձ արաւ կազմելու «թագաւորի բարեկամների» նախարարութիւնը։ Բայց շուտով երևեցաւ, որ Վիգերը զօրաւոր էին թագաւորից, և սա ստիպուեցաւ կրկին նրանց գործակցութեան դիմելու։ Պառլամէնտն իւր ույժը թագաւորին զգացնելով միևնոյն ժամանակ ցոյց տուաւ ժողովրդին, որ ինքն իրեն երկրի մէջ բարձրագոյն իշխանութիւնն է համարում և չի ճանաչում իւր վրայ ընտրողների գերիշխանութիւնը։ Խորհրդարանի անդամ Ուիլկս խիստ յօդուած հրատարակեց լրագրում թագաւորի ճառի առթիւ, որով բացւում էին խորհրդարանի նստերը։ Թագաւորի պահանջով երեսփոխանների դահլիճը նրան արձակեց անդամակցութիւնից, դատարանով նա դատապարտուեցաւ բանտարկութեան և փախաւ Ֆրանսիա։ Նրան կրկին ընտրեցին—խորհրդարանը կրկին արձակեց. այսուամենայնիւ ընտրողները կրկին նրա կողմը բռնեցին, իսկ խորհրդարանն օրինական ընտրած համարեց նրա ախոյեանին, որ շատ քիչ ձայն էր ստացել։ Ժողովուրդը սաստիկ գրգըռուած էր խորհրդարանի դէմ, որ այսպիսով ընտրողներին զըրկում էր իրենց իրաւունքից, Լոնդոնում ամբոխն անարգում էր խորհրդարանի անդամներին, իսկ քաղաքացիք Ուիլկսին ընտրեցին օլդերմէն (քաղաքային վարչութեան անդամ)։ Ուիլկսի գործը ցոյց էր տալիս, որ երկրի ու խորհրդարանի վիճակներըն անբնական են, և լաւագոյն մարդիկ սկսան խորհել վերակազմութեան մասին։ Մի անյայտ հեղինակ Իւնիւս կեղծանուամբ սկսաւ մի շարք նամակներ հրատարակել, որոնց մէջ խստութեամբ յարձակւում էր թագաւորի և պառլամենտական աւղիշխանութեան վրայ։

Եօթնամեայ պատերազմի գլխաւոր հետևանքն Ամերիկական գաղթավայրեր։
Անգլիայի համար եղաւ նրա ամերիկական կալուածների ընդարձակուիլը։ Ֆրանսիական Կանադան միացաւ այն

գաղթավայրերի հետ, որ հիմնուել էին ԺԷ. դարում։ Դրանք բաղկացած էին տասն և երեք գաւառաշրջաններից, որ կազմուած էին զանազան հանգամանքներում և աչքի ընկնող առանձնայատկութիւններ ունէին։ Դեռ ևս ԺԶ. դարում Եղիսաբէթ թագուհու ծովահէնները հիմնել էին Վիրգինիան. առաջին գաղթականներին կոտորեցին սպանիացիք ու հնդիկները, բայց շուտով նրանց տեղը նորերն եկան, որ դիմացան։ Վիրգինեան ծաղկեցաւ շնորհիւ ծխախոտի մշակութեան, որ կատարւում էր նեգր (խափշիկ) ստրուկների ձեռքով, իսկ այդ տնկարանները պատկանում էին խոշոր կալուածատէրերի[1]։ Այս հարաւային գաղթավայրերում սպիտակամորթ բնակիչները հետևում էին անգլիկանութեան։ Բոլորովին այլ տիպար ունէին հիւսիսային գաղութներն, այսպէս կոչուած Նոր Անգլիան։ Դրանցից առաջինն էր Մասաչուզեթի գաղութը։ Դա հիմնուած էր մաքրակրօն —անկախների ձեռքով, որոնք Յակոբ Ա.-ի ժամանակ
1620 հալածուել էին և գաղթել Հոլլանդիա, իսկ ապա 1620 թուին անցել էին Ամերիկա[2]։ Այս տեղ գերակշռողն էր մանր տնտեսութիւնը։ Գաղթականները պարապում էին երկրագործութեամբ, որսորդութեամբ ու առևտրով հնդիկների հետ։ Հաստատամիտ, աստուածավախ, աշխատասէր մաքրակրօնները վերջապէս հնարաւորութիւն ունեցան իրենց կարգերը գործ դնելու աշխարհական և եկեղեցական վարչութեանց մէջ և կազմեցին փոքր ռամկավարական հասարակապետութիւններ։

Մի փոքր այլ գոյն ունէր Պենսիլուանիան—այնտեղ իշխող էին երերեան աղանդաւորները (քուէքեր), որոնք կրօնական ղեկավարութիւն էին որոնում մարգարէական ներշնչման մէջ, սրանք ևս մաքրակրօնների նման աշխատասէր և խիստ բարոյական էին, բայց առաւել անտարբեր քաղաքական ազա-

---

[1]) Նոյն տեսակ էին և յետոյ հիմնուած գաղութները Մերիլէնդ, Հիւսիսային և Հարաւային Կարոլինան և Ռոդ Այլանդը։

[2]) Մաքրակրօն գաղթականների միւս բաժինը բնակութիւն էր հաստատել Կոննեկտիկուտում, Նիւ-Հէմպշիրում և Ռոդ Այլանդում։

տութեան վերաբերութեամբ և պատերազմից փախուստ տուող[1]։ Վերջապէս Նիւ-Եօրքն[2]) աչքի էր ընկնում հոլլանդական տարրի խիստ խառնուրդով։

Գաղթավայրերի կառավարութիւնը, չը նայելով տեղական առանձնայատկութեանց, գլխաւորաբար կազմուած էր լինում ներկայացուցիչների ժողովից (Նոր Անգլիայում մեծ գործերի համար գոյութիւն ունէին բոլոր քաղաքացոց համաժողովներ) խորհրդից և նահանգապետից։ Անգլիական թագաւորի կառավարութիւնը չէր խառնւում գաղթականների գործերին, և գաղթավայրերի ու մայր հայրենիքի կապը սերտանում էր միայն պատերազմի ժամանակ, երբ Անգլիան զօրք էր ուղարկում և օգտուում էր նաւահանգիստներից իւր զինուորական նաւատորմղի համար։ Բացի դրանից, գաղթականները վաճառականութեան վերաբերութեամբ սահմանափակուած էին—նրանք պարտական էին արդիւնաբերական ապրանքները բացառապէս անգլիացի վաճառականներից գնելու։

Գաղթավայրերի նշանակութիւնը շարունակաբար աճում էր, ոչ միայն նրա համար, որ դրանք լայն ասպարէզ էին ձեռներեցութիւնների համար, այլ և այն պատճառով, որ Հիւսիսային Ամերիկայում ապաստանարան էին գտնում հասարակութեան դժգոհ ու հալածուած տարրերը։ Սրա հետ միասին ամերիկեան բնակավայրերին չէր վերաբերում այն ելևմտական ծանրութիւնը, որ ճնշում էր Մեծ Բրիտանիան և աւելանում էր ամէն մի պատերազմով, կառավարական կազմածի ամէն մի բարդութեամբ։ Գաղթականների հարկերից ազատութիւնն անգլիացոց անիրաւացի էր թւում այն պատճառաւ, որ Անգլիան ստիպուած էր գաղութների պաշտպանութեան համար մեծ ծախքեր անել։ Հարկերի խնդիրը ծագեցաւ առանձին ուժգնութեամբ եօթնամեայ պատերազմից վեր-

---

[1]) Պենսիլուանիային յարում էր Դելաուէր (Delaware) գաղութը։

[2]) Նոյնպիսի բնաւորութիւն ունէր և Նիւ-Ջերսի (New-Jersey) գաղութը։

ջը։ Որպէս զի գաղթավայրերն հարկի տակ դնելու սկզբունքն որոշէ, խորհրդարանը սահմանեց դրոշմահարկ ժողովել առևտրական ու դատական թղթերից։ Գաղութները վճառաբար բողոքեցին. Նրանց ներկայացուցիչը Լոնդոնում, Ֆրանկլինը, բացադրեց նախարարներին, որ ամերիկացիք պատրաստեն վճարելու, բայց ցանկանումեն վճարել միայն այն հարկերը, որոնց նշանակման իրենք եւս մասնակից կը լինին։ Երեսփոխանական ժողովի դահլիճում նոյն իմաստով խօսեց և Պիտտն ու աղաչեց գաղթականներին չը զրկել այն իրաւունքից, որ վայելում են անգլիացիք։ Դրոշմահարկը վերացուեցաւ, բայց շուտով դրանից յետոյ անգլիական կառավարութիւնը դարձաւ նոյն բանին այլ ճանապարհով. թէյի ու քանի մի այլ ապրանքների վրայ մաքս նշանակուեցաւ ամերիկական նաւահանգիստները ներմուծելու ժամանակ։ Գաղութները կազմեցին ընդհանուր ժողով (կոնգրէս) Ֆիլադելֆիայում, Բոստոնում ծպտեալ երիտասարդների խումբը ծովը նետեց Հնդկաստանից բերուած թէյի բեռը։ Կառավարութիւնը զօրք ուղարկեց, բայց դրա երևումը միայն վէճ ու կռիւ յարոյց։ Ամերիկական գործն եռանդով վարելու համար Գէորգ Գ. առաջին նախարար նշանակեց լորդ Նորսին (North), „թագաւորի բարեկամների“ առաջնորդին, որ կազմել էին նոր տորիական կուսակցութիւն։ Վիգերը խորհրդարանի մէջ կորցրին գերակշռութիւնը, որի շնորհիւ նրանք իշխանութիւնն իրենց ձեռքին ունէին եօթանասուն տարուց աւելի չը հաշուելով կարճատև ընդհատումները։

Ամերիկացոց ապստամբութիւնը. 1775

Պատերազմական գործերն սկսան 1775 թուին. ամերիկական ազատակամ զինուորները փակեցին անգլիական զօրագնդի ճանապարհն և ստիպեցին յետ նահանջելու. քիչ ժամանակից յետոյ անգլիացիք յարձակմամբ գրաւեցին ապստամբների բանակը Բոստոնի մօտ, բայց

այդ յարձակման ժամանակ կորցրին իրենց գնդի կէսը հաշուած սպանուածներն ու վիրաւորները։

Ամերիկական համաժողովն (կոնգրէս) հրատարակեց 1776 թ. յուլիսի 4-ին «անկախութեան յայտարա- 1776
րութիւնը», որ խզում էր կապն Անգլիոյ հետ յանուն «մարդկային իրաւանց» խանգարման անգլիական կառավարութեան կողմից։

«Բոլոր մարդիկ հաւասար են, և Արարիչը պարգևել է նրանց մի քանի անկապտելի իրաւունքներ, ի միջի այլոց, կեանք, ազատութիւն և ձգտումն դէպի երջանկութիւն։ Կառավարութիւնները դրուած են, որ ապահովեն մարդկանց այդ իրաւունքները, իսկ երբ կառավարութիւնը խանգարում է դրանց, ժողովուրդը կարող է կործանել և փոխել կառավարութիւնը»։ Ճանաչելով, որ անգլիական կառավարութիւնը ձգտում է նրանց ստրկացնելու, ամերիկացիք հրատարակեցին գաղթավայրերն անկախ Միացեալ Նահանգներ Ամերիկայի։

Համաժողովն ամերիկական զօրաբանակի հրամանատար կարգեց քաջ և հաստատակամ Գէորգ Ուաշինգտոնին։ Նրա դրութիւնը ծանր էր—նա պիտի գործէր ազատակամ զինուորների միջոցով, որոնք զինուորական կարգին և կարգապահութեան սովոր չէին. Նրանք լաւ նշան էին դնում և արիութեամբ պաշտպանում էին իրենց դիրքերը, բայց չէին կարողանում յարմար պատերազմական շարժումներ կատարել, հրամաններին չէին լսում և երբեմն ամբողջ գնդերով բանակից ելնելով տուն էին դառնում։ Զինուորական մատակարարութիւնը կազմակերպուած չէր, և զինուորները կարօտութիւն էին զգում զգեստի և կերակրի։ Բայց անգլիացոց վիճակն էլ նախանձելի չէր։ Կառավարութեան անհոգութեան շնորհիւ նրանց ցամաքային զօրքն անկման վիճակի մէջ էր, զինուորները լաւ էին, բայց թուով

սակաւաւոր—հազիւ քսան հազար հոգի բոլոր անգլիա-
կան կալուածների համար պատերազմի սկզբում։ Նորսը
մի տարօրինակ միջոցի ձեռնարկեց։ Նա վարձեց զանա-
զան գերմանական իշխանների բանակները. այսպէս
օրինակ բրաունշուայգեան դուքսը 50 թալէր էր ստա-
նում ամէն մի մարդու համար, չը հաշուած 50 թալէր
ամէն մի սպանուածի և $16\frac{2}{3}$ թալէր վիրաւորուածի
համար։ Այսպիսով զանազան ժամանակներում Ամերիկա
փոխադրուեցան 30,000 գերմանացիք։ Այսուամենայնիւ
անգլիական գնդերը կորչում էին Ամերիկայի ահագին
տարածութեանց վրայ, թշնամի բնակիչների մէջ։
Նրանք տիրում էին միայն այն տեղերին, ուր գտնում
էին։ Անհնարին էր մտածել գնդեր բաժանելու բերդա-
պահութեան, ճանապարհների հաղորդակցութեան և
շտեմարանների պահպանութեան համար—բոլոր պաշա-
րեղէնը նաւերիցն էին բերում, որոնք գալիս էին Ատ-
լանդեան ովկիանոսի միւս կողմից, ուստի խիստ վտան-
գաւոր էր ափերից հեռանալը։

Այս պարագաներում ճակատամարտների մէջ անգ-
լիացիք և նրանց վարձկան գերմանացիք սովորա-
բար գերակշռութիւն ունէին, թէպէտ և Ուաշինգտո-
նին յաջողուեցաւ երկու անգամ յանկարծակիի բռնել և
յաղթել նորանց։ Բայց ճակատամարտներում տարած
յաղթանակները հետևանք չէին ունենում — երկիրը
մնում էր ամերիկացիների ձեռքին։ Անգլիացոց մեծա-
մեծ ձեռնարկութիւններն երբեմն պարտութեամբ էին
վերջանում։ Զօրագլուխ Բէօրգոյնը Կանադայից դիմե-
լով անգլիական մի զօրագնդի ընդ առաջ, որ պիտի
գար Նիւ-Եօրքից, շրջապատուեցաւ ամերիկացիներից
և ստիպուեցաւ անձնատուր լինելու։ Ապա սկսաւ
արտայայտուել եւրոպական պետութիւնների թըշ-
նամութիւնը դէպի Անգլիան և եւրոպական հասա-
րակութիւնների համակրութիւնը դէպի ամերիկացիք։

Ֆրանսիան, որ ամենից առաւել զրկանք էր կրել անգլիա-
կան աշխարհակալութիւններից գաղթավայրերում, յայտ-
նի կերպով Միացեալ Նահանգների կողմը բռնեց, և նրա
ուղարկած օժանդակ գունդը շատ օգնեց Ուաշինգտոնին։
Ֆրանսիային հետևեց Սպանիան։ Միւս պետութիւնները
Ռուսիոյ ղեկավարութեան տակ կազմեցին «զինուած չէզո-
քութիւնը» իրենց վաճառականական նաւերի պաշտպա-
նութեան համար անգլիացոց դէմ, որոնք զինուորական
մաքսանենգ ապրանքներ, այսինքն՝ պաշարեղէն և
զէնք էին որոնում դրանց վրայ, որ նաւերը տանում
էին պատերազմող կողմերից մէկի կամ միւսի համար։
Անգլիական նաւատորմն այսուամենայնիւ յաղթանակ
տարաւ ֆրանսիականի և սպանիականի վրայ. բայց գոր-
ծերն Ամերիկայում հետզհետէ վատթարացան։ Ապս-
տամբները լաւ զինուորներ սկսան դառնալ, իսկ Անգ-
լիոյ ուժերն ցրիւ էին ամբողջ աշխարհի երեսին։ Կոր-
նուօլիս լորդը Բէօրգոյնի պէս շրջապատուեցաւ և յա-
մառ դիմադրութիւնից յետոյ անձնատուր եղաւ։ Այս
պարտութիւնը վճռեց պատերազմի ճակատագիրը։ Անգ-
լիան 1783 թ. Փարիզու խաղաղութեամբ ճանաչեց Միա- 1783
ցեալ Նահանգների անկախութիւնն և շուտով դրանից
յետոյ հաշտութիւն կապեց Ֆրանսիայի և Սպանիոյ հետ,
որոնց փոքրիկ զիջումներ արաւ։

Միացեալ Նահանգները դեռ ևս պիտի մշակէին մի (Միացեալ Նահանգների սահմանադրութիւնը։)
քաղաքական կազմակերպութիւն. որովհետև անգլիա-
ցոց դէմ կռուելու համար կազմած դաշնակցութիւնը
կանոնաւոր պետական կեանքի համար անպէտք էր։
Տասներեք նահանգների պատգամաւորները ժողովուե-
ցան 1787 թուին և կազմեցին «Համագումարը», որ 1787
մշակեց դաշնակցական (Ֆեդերալ) սահմանադրութիւնը։
Ամէն մէկ նահանգ ճանաչւում է իբրև առանձին
տէրութիւն և վայելում է կատարեալ ինքնուրոյնու-
թիւն ներքին կազմակերպութեան և իւր յատուկ գոր-

ծերի վարչութեան մէջ. *դաշնակցութիւնը* կազմում է դիւանագիտական յարաբերութիւնները, զինուորական պաշտպանութիւնը, ընդհանուր առևտրական գործերը, հաղորդակցութիւնը նահանգների մէջ (ուղիք, փոստ), վերջապէս, նահանգների երկպառակութիւնները և զանազան նահանգների քաղաքացոց վէճերի դատը (դաշնակցական դատարան) միասին վարելու համար, *գործադիր* իշխանութիւնը դաշնակցութեան մէջ պատկանում է *նախագահին*, որ չորս տարով է ընտրւում այն պատգամաւորների ձեռքով, որոնք նշանակւում են ընդհանուր ձայնտուութեամբ։ *Օրէնսդրական* իշխանութիւնը պատկանում է *ծերակոյտին* (սենատ), որ ընտրւում է վեց տարով և կազմուած է նահանգների ներկայացուցիչներից, ամէն մէկից երկու անձն, և *երեցփոխանների խորհրդարանին*, որ ընտրւում է ընդհանուր ձայնտուութեամբ և երկու տարով, ամէն նահանգ իւր բնակչաց համեմատական թուով պատգամաւորներ է ընտրում։ Եթէ ցանկալի համարուի փոփոխել սահմանադրութիւնը, հրաւիրւում է մի յատուկ համագումար։ Դաշնակցական դատարանները, որոնց անդամներն անփոփոխելի են, վճռում են այն վէճերը, որ ծագում են սահմանադրութեան կամ նահանգական օրէնքների գործադրութիւնից. եթէ երևի, որ նահանգական օրէնքները հակասում են սահմանադրութեան, դատարանը պիտի հրաժարուի դրանց գործադրութիւնից։

Գ Լ Ո Ւ Խ Ե.

ՀԻՆ ՎԻՃԱԿԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ.

Արևմտեան Եւրոպան 1000 և 1700 թուականներին։ Արևմտեան Եւրոպայի բնակիչները հազարերորդ թուականներում մերձաւորապէս միատեսակ հանգամանքներումն էին ապրում, չը նայելով՝ որ բաժին բաժին էին եղած բազմաթիւ տանուտէրութիւնների (սենեօրի) մէջ։ Ամենուրեք *պետական իշխանութիւնը* գտնւում էր խոշոր կալուածատէրերի ձեռքին, ամենուրեք ընդունուած էր պարզագոյն, «բնական» տնտեսութիւնը, ամենուրեք հասարակութիւնը բաժանւում էր երեք գլխաւոր, խիստ սահմանափակուած դասակարգերի—ասպետների, հոգևորականների և շինականների կամ ռամիկների (վիլլէն), ամենուրեք *կրօնն ու կրթութիւնը* գտնւում էր կաթոլիկ եկեղեցու ղեկավարութեան տակ։ Եւրոպան 1700 թուականներին բոլորովին այլ կերպարանք ունէր։ Առաջ էին եկել զօրաւոր *տէրութիւններ*, որ կլանել էին տանուտէրութիւնների մեծագոյն մասը, զարգացել էր արդիւնաբերութիւնը, և ընդարձակ առևտրական յարաբերութիւններ էին հաստատել, հարստացել էին քաղաքներն, երևան էր եկել զօրաւոր «*միջին*» դասակարգ, կրօնական տեսակէտով հասարակութիւնը բաժանուել էր մի քանի *եկեղեցիների*. գիտութիւնը, գրականութիւնը և գեղարուեստն աշխարհականների ձեռքն էին անցել և *աշխարհական գոյն էին* ստացել։ Աւատական միօրինակ կազմին փոխարինել էր մեծ բազմատեսակ յարաբերութիւններով բարդուած կազմակերպութիւնը։ 1700

Գերմանիա։ Գիւղացիք։ Գերմանիան յետ էր մնացել իւր արևմտեան դրացիներից։ Նրա մեծագոյն բաժնում շինականները *ճորտութեան* մէջ էին, այսինքն՝ պարտաւոր էին ծառայելու կալուածատէրերին սերնդէ սերունդ և ապրելու նրանց հողի վրայ։ Հողատէրերի կալուածները շրջապատուած էին ճորտերի գիւղերով, և կալուածատէրերի երկիրը մշակում էին շինականերն իբր կոռ, շինականները պարտաւոր էին իւրաքանչիւր հողաբաժնից որոշ թուով բանուոր տալու, որոնք պիտի մշակէին տէրերի արտերը, տեղափոխէին բեռները, կատարէին յանձարարութիւնները (*բեգեառ*). բացի դրանից նրանք վճա-

րում էին և տասանորդ, մատակարարում էին տէրերին քաթան, իւղ, հաւեղէն, ձու և այլն։ Հացաբոյսերի մշակութիւնը դանդաղ և ստիպմամբ էր յառաջ տարւում, շինականներն աղքատ էին, տգէտ ու բիրտ։

Քաղաքներ։

Քաղաքներ շատ կային Գերմանիայում, թէպէտ և ԺԸ. դարում նրանք այնքան հարուստ չէին և այնպիսի մեծ դեր չէին խաղում, ինչպէս ԺԴ. և ԺԶ. դարերում։ Ամերիկայի յայտնագործութիւնից և Բարեյուսոյ հրուանդանի շուրջը առևտրական ճանապարհ գտնուելուց յետոյ համաշխարհական առևտուրն անցաւ հոլլանդացոց ձեռքը։ Գերմանական քաղաքներն ստիպուեցան աւելի համեստ դեր ստանձնելու. նրանք ծառայում էին իբրև կենտրոններ արդիւնագործութեան եւ կրթութեան, իւրաքանչիւրն իր շրջակայ նահանգի համար. դրանց աշխատասէր քաղաքացիք սկսան վարժուել աւելի նեղ շրջապատի։ Քաղաքային արդիւնագործութիւնն ազատ չէր թողնուած առանձնական անձանց ձեռնեբեցութեան և ազատ ձեռնարկութեան։ Իւրաքանչիւր ճիւղը, օրինակ կօշկակարութիւնը, կաշեգործութիւնը, կացմում էր առանձին, սահմանափակ համքարութիւն կամ արուեստակցական խումբ (ցեխ): Վարպետ, այսինքն՝ արդիւնագործական տանտէր դառնալու համար, պէտք էր նախ երկարատև վարժութիւն իբրև աշակերտ և օգնական. ապա երիտասարդ արհեստաւորը սովորաբար ուղևորւում էր ճանապարհորդութեան, աշխատում էր օտար քաղաքներում և գիտում էր օտարների ճարտարութիւնն ու հնարները, հայրենիք դառնալով ներկայացնում էր իւր արհեստի վարպետների դատաստանին իւր աշխատանքի նմուշը և քուէարկութեան էր ենթարկւում վարպետների ժողովում։ Թէ առանձին արուեստակիցների խմբերը, և թէ նրանց ընդհանուր դաշնակցութիւնը հետևում էին, որ ապրանքների որակը լաւ լինի և պատրաստուած որոշ կանոնով,

նշանակում էին գները, որոշում էին բանուորների և տէրերի յարաբերութիւնները, հոգում էին նոյն իսկ արուեստակիցների կրթութեան ու բարոյականութեան մասին։ Այս կարգերը դարձան ճնշիչ, երբ առևտրական յարաբերութիւններն աւելի կենդանութիւն ստացան, բնակիչների պահանջներն աւելացան և սկսան երևան գալ արդիւնագործութեան նոր եղանակներ։ Համքարային կազմակերպութիւնն արգելք էր լինում հնարագիտ և ձեռնարկու լինելուն. վարպետների շրջանը ջանում էր փակուել, թոյլ չէր տալիս կողմնակի անձանց մրցումն և յաճախ ի չարն էր գործ դնում իւր իշխանութիւնը բանուորների վրայ։

Ազնուականութիւն։

Գերմանական ազնուականութիւնը շատ զօրաւոր և գոռոզ էր։ Նա հեռու էր պահում իրեն քաղաքացիներից, և, օրինակ քաղաքացի դասակարգի անդամների հետ ամուսնանալն ազնուականների համար անարգանք էր համարւում։ Հողը գտնւում էր առաւելապէս ազնուականների ձեռքին, և կալուածատէրերն օգտւում էին ոչ միայն շինականների աշխատանքից, այլ պահպանել էին և, բացի դրանից, աւատական շրջանից որոշ դատական ու ոստիկանական իշխանութիւն նըրանց վրայ։ Զինուորական ծառայութիւնը բաց էր միմիայն ազնուականների համար և հնար էր տալիս կալուածատէրի կրտսեր որդոց և մանր հողատէրերին ապահովելու իրենց. զինուորականութիւնը համարւում էր ամենից պատուաւոր ծառայութիւն, և զինուորականները յաճախ ստանում էին թագաւորներից ու իշխաններից քաղաքացիական յանձնարարութիւններ։ Դատարաններում և քաղաքացիական վարչութեան մէջ ծառայում էին քաղաքացիք։

Հոգևորականութիւն։

Հոգևորականութեան վիճակը շատ տարբեր էր կաթոլիկ ու բողոքական երկրներում։ Կաթոլիկ երկրներում հոգևորականութիւնը տէր էր ընդարձակ հողերի,

ունէր զօրեղ ազդեցութիւն և երկու խմբի էր բաժանուում. եկեղեցու իշխանների (պրէլատ) կամ բարձրագոյն հոգևորականութեան, որի անդամներն առնուում էին ազնուականներից և դրանց հայեացքներն և նոյն շահերն ունէին, և ստորինի, ծխական հոգևորականութեան, քաղաքացիներին ու շինականներին մերձաւոր, աղքատ ու համեստ թէ ըստ վիճակի և թէ ըստ բնաւորութեան: Բազմաթիւ վանքերում միացած էին այս երկու խմբերի եկեղեցականներից և միաբանութիւնները կազմուում էին հասարակութեան բոլոր դասակարգերից, աբբաներն ու միւս իշխող դիրք ունեցող հոգևորականներն առաւելապէս ազնուականներից էին և պահում էին իրենց ինչպէս ազնուականներ: Բողոքական երկրներում բարենորոգութեան շնորհիւ եկեղեցին կորցրել էր իւր քաղաքական նշանակութեան մեծագոյն մասն ու հարստութիւնը: Հոգևոր հովիւները գտնուում էին աշխարհական իշխանութեան ուժեղ ազդեցութեան տակ, նրանք յարում էին քաղաքացիների դասակարգին, և կարելի է ասել, որ շնորհիւ բարենորոգութեան ազնուականութիւնը կորցրել էր բողոքական Գերմանիայում իւր գլխաւոր սիւներից մէկը:

Պետութիւն: Գերմանիայում դեռ ևս շատ գործ կար կատարելու ատական կեանքի վնասակար հետևանքներից ազատուելու համար, և, ի հարկէ, այս խնդրի կատարման ժամանակ գործունեայ առաջնորդութիւն պէտք է սպասուէր պետական իշխանութիւններից: Բայց նոյն իսկ իւր պետական կազմի վերաբերութեամբ Գերմանիան ամենից աւելի վնաս էր կրում «հին վիճակից»: Վեստֆալեան խաղաղութիւնից յետոյ նա այլ ևս մի ամբողջ և միացեալ պետութիւն չէր կազմում: Այսպէս կոչուած „կայսերական» հաստատութիւնները կատարելապէս անզօր էին: Կայսեր տրամադրութեան տակ ընդամէնն 8000 թալէր մշտական եկամուտ կար. Ռայ-

խըստագում (խորհրդարանում), որ բաժանուում էր երեք դասի (կայսրընտիրների, իշխանների և քաղաքների) և երկու դաւանութեանց (corpus catholicorum և corpus evangelicorum), դասակարգերն ու դաւանութիւնները խանգարում էին միմեանց, ուստի և ոչ մի լուրջ գործունէութիւն հնարաւոր չէր: Բոլոր 300-ից աւելի տէրութիւնները [1]), որ կազմում էին ԺԸ. դարու Գերմանիան, ինքնուրոյն և անկախ էին, գլխաւորներին մինչև իսկ իրաւունք էր տուած օտար պետութիւնների հետ դաշնակցելու. մանրերը գոնէ միայն իրենց հպատակների վերաբերութեամբ ծայրագոյն իշխանութիւն ունէին: Աւստրիան և մանաւանդ Պրուսիան ձեռքի տակ ունէին մեծ զօրութիւն, բայց դրանով իսկ դրացիների մէջ անվստահութիւն և թշնամութիւն էին յարուցանում:

Ֆրանսիայում հասարակական կեանքն աւելի էր զարգացած, քան թէ Գերմանիայում: Ֆրանսիացի շինականներն անձնապէս ամենքն ազատ էին. տանուտէրական տուրքերը, որոնց ենթակայ էին հողաբաժինները, հետզհետէ գնուելով, ազատուել էին, և շինականները դարձել էին ժառանգական տէր այդ հողաբաժինների: Բայց այսու ամենայնիւ նրանք չէին կարողացել ատական լուծը բոլորովին թօթափել. նրանք շարունակում էին դրամական տասանորդ վճարել հողի համար և, բացի դրանից, ենթակայ էին բազմաթիւ մանր հարկերի յօգուտ տանուտէրական իշխանների, որ. կրում էին դրանց ցորենն իրենց սայլերով, աղում էին հատիկները նրանց ջրաղացում, հացը թխում էին նրանց փռներում, վաճառում էին իրենց գինին նրանցից քանի մի օր յետոյ, և այլն: Ընդհանրապէս շինականնե- Ֆրանսիա: Շինականք:

[1]) Այդ տէրութիւններից երեսնի հողն երկու քառակ. մղոնից պակաս էր. տասնի երկիրը 1/4—1 մղոն շրջապատ ունէին: Կար իշխան, որ չէր կարող իւր թնդանօթն արձակել, որովհետև գնդակը դրացու երկիրը կ'ընկնէր:

րըն աչքի էին ընկնում ջանասիրութեամբ և գործու-
նէութեամբ, հողը գլխաւորապէս մանր տանտէրերն
էին մշակում, որոնք կամ սեփականատէր էին և կամ
կապալառու, բայց շինական դասակարգի մէջ կուտակուել
էր զօրաւոր դժգոհութեան գրգիռ ազնուականների
դէմ, այդ սահմանափակող հարկերի պատճառով:

Միջակարգ (Բուրժուազի)·

Քաղաքացի դասակարգը, որ Ֆրանսիայում բուր-
ժուազի կամ երրորդ դասակարգ էր կոչւում, մի քանի
հանգամանքներով շատ նման էր գերմանական քաղա-
քացի դասակարգին կամ բիւրգերներին: Նրա արդիւնա-
բերող շրջաններումն ևս մրցումն կար արուեստակից-
ների խմբի (ցեխ) և ազատ արդիւնագործութեան մի-
ջև մի քանի բացառութիւններից զատ, Ֆրանսիական
քաղաքները նոյնպէս, ինչպէս և գերմանականները,
առաւել կենդրոն էին տեղական կեանքի, քան թէ միջ-
նորդ համաշխարային առևտրի: Բայց կային և շատ
նշանաւոր տարբերութիւններ ևս: Ֆրանսիական քա-
ղաքներն աւելի քիչ էին կապում իրենց հետ բնակիչնե-
րին, քան գերմանականները· Ֆրանսիական բուրժուա-
զիայի լաւագոյն ոյժերը դիմում էին Փարիզ, որ Ֆրան-
սիայում այնպիսի դեր ունէր, որի մասին երազել ան-
գամ կարող չէր որ և է գերմանական մայրաքաղաք:
Փարիզում վճռւում էին քաղաքականութեան և
կառավարութեան բոլոր նշանաւոր խնդիրները, մխա-
նում էին առևտրական գործառնութիւնների բոլոր թե-
լերն, Փարիզում մտքի փոխանակութիւն էր տեղի ու-
նենում Ֆրանսիոյ ամենալաւ մարդկանց միջև, կազ-
մւում էր հասարակական կարծիք: Փարիզու շնորհիւ,
Ֆրանսիական քաղաքացիք սերտ կապուեցան միմ-
եանց հետ, շրջահայեաց դարձան եւ ճանաչեցին իւ-
րեանց զօրութիւնը: Նրանց առաջնորդները—գրագէտ-
ներն ու գործի մարդիկ—իրենց ազնուականներից ստոր
չէին համարում և, ազդելով հասարակաց կարծիքի վրայ,

ներգործում էին կողմնակի կերպիւ և նոյն իսկ ազ-
նուականութեան վրայ:

Ազնուականութիւն·

Ազնուականութիւնը կեղծ դրութեան մէջ էր: Վար-
չական բոլոր իրաւունքները, տանուտիրական դատա-
րանը, ոստիկանութիւնն և տեղական կառավարութիւնն
անցան պետական իշխանութեան, արքունի գործակալ-
ները վարում էին բոլոր նահանգական գործերը, թա-
գաւորն անսահման իշխանութեամբ կառավարում էր
տէրութիւնը: Այսու ամենայնիւ ազնուականութիւնը
պահպանել էր իրեն ձեռնտու արտօնութիւններ, որ
ծագում էին նրա նախկին կառավարական դրութիւնից:
Ազնուականներն ոչ միայն առաջին տեղն ունէին ար-
քունիքում և զօրքի մէջ, նրանք ազատուած էին զա-
նազան հարկերից և անհամապատասխան թեթև հո-
ղային տուրքեր էին տալիս: Արքունիքին մերձաւորու-
թիւնը հնար էր տալիս նրանց ձեռք բերելու առատ
պարգևներ, թոշակ, ամենատեսակ արտօնութիւններ, և
ինչքան քիչ ազնուականները գործում էին տէրութեան
համար, այնքան շատ ի չարն էին գործ դնում նրա
շնորհները: Արտօնաւորների մէջ առանձին դիրք ու-
նէր դատաւորների դասակարգը, այսպէս կոչուող «վե-
րարկուի ազնուականութիւնը»[1]) (noblesse de robe):
Դատական պաշտօնները ձեռք էին բերւում գնելով և
աւանդւում էին ժառանգաբար: Այս կարգն հարկա-
թիւր էր, բայց յամենայն դէպս ապահովում էր դա-
տական ընկերութիւններին բաւական մեծ ինքնուրու-
նութիւն· դրանք յաճախ օգուտ էին քաղում այդ դրու-
թիւնից, որպէս զի քննադատեն կառավարութեան գոր-
ծողութիւնները:

Հոգևորականութիւն·

Հոգևորականութիւնն ևս ազնուականութեան պէս
արտօնաւորեալ դասակարգ էր: Նա ահագին ստաց-
ուածք ունէր, բայց ազատ էր ընդհանուր հարկերից

[1]) «Սրի ազնուականութիւնից» (noblesse d'épée) զանազանելու
համար:

և գոհանում էր միայն աննշան վճարներով, որոնք որոշւում էին կառավարութեան հետ համաձայնութիւն կայացնելով: Իսկ անդամների մէջ գոյութիւն ունէր մեծ անհաւասարութիւն, երևելի եկեղեցական իշխաններն ունէին խոշոր եկամուտներ, իսկ ծխական քահանայք ապրում էին ծայրայեղ չքաւորութեան մէջ:

Կառավարութիւն։

Ի՞նչպէս էր վերաբերւում կառավարութիւնը հասարակական կեանքի այս անկանոնութիւններին: Թագաւորական կառավարութիւնն այնքան զօրաւոր էր և այնպիսի ընդարձակ իրաւունքների տէր, որ նրան էին պատասխանատու համարում ամենայն բանի համար, ինչ որ կատարւում էր Ֆրանսիայում, օգնութիւն էին սպասում նրանից և խնամակալութիւն բոլոր գործերում, նրան էին մեղադրում հասարակական կազմակերպութեան բոլոր անարդարութիւնների համար: Թագաւորական իշխանութիւնը խլել էր ազնուականութիւնից նրա քաղաքական իրաւունքներն ու անխնայ կերպով ճնշել էր նրա ինքնավարութեան փորձերը, բայց իւր հազարամեայ զարգացման շրջանում միապետութիւնը սերտ միացել էր ազնուական հասարակութեան հետ և մտադիր չէր բոլորովին խզելու իւր կապը նրա հետ: Թագաւորն իրեն համարում էր «Ֆրանսիայի առաջին ազնուականն» և արտօնաւորեալների արտօնութիւններն ապահովում էր:

Պատմական աւանդութիւնները պահել էին իրենց ոյժը, հակառակ արդարութեան եւ բանականութեան, նոյն իսկ այնպիսի հանգամանքներում, երբ խնդիրը չէր վերաբերում ազնուականութեան: Զրնայելով, օրինակ՝ Ֆրանսիայի միացման, պահպանուել էին դեռ եւս մաքսային սահմանները նահանգների մէջ, որոնք առաջ պատկանում էին զանազան տէրութիւնների կամ նոյն իսկ տանուտէրութեանց: Լուար գետով ապրանք կրելու համար, պէտք էր 27 տեղում մաքս վճարել. սահմանական նահանգների բնակիչները բաժանուած էին մնացել Ֆրանսիայից «իբրեւ օտարերկրացիք»:

Բնակիչներին առելի աղի մաքսի (gabelle) բաժանումը կարող է ծառայել իբրեւ նմուշ կամայականութեան եւ «հին վիճակի» ճնշման: Աղի վաճառումն արքունի իրաւունք էր, այսինքն՝ կառավարութեան մենավաճառութիւն, եւ մի քանի նահանգներում աղի գրւանքան վաճառւում էր 2 լիվրով [1]), իսկ միւսներում դրա գինն հասնում էր մինչեւ 63 լիվրի:

Անգլիա։ Գիւղականներ։

Անգլիան մեծաւ մասամբ դուրս էր եկել այն դժուարութիւններից, որոնք ծանրանում էին Ֆրանսիայի և Գերմանիայի հասարակական կեանքի վրայ: Անգլիական շինականները արդեն միջին դարերու վախճանին դադարել էին ճորտ լինելուց: Նրանք կալուածատէրերից գնել էին տանուտիրական և այլ բնական հարկերը, իսկ ԺԵ. դարում արքունի դատարանները ճանաչել էին նրանց սեփականատէր իրենց հողաբաժինների, որոնցից ի վաղուց հետէ օգտւում էին, այնպէս որ այդ ժամանակից ազատների և շինականների մէջ եղած տարբերութիւնը չքացել էր, Անգլիան ծածկուել էր բազմաթիւ մանր շինական տնտեսութիւններով և միջնադարեան սարկութեան հետքը մնացել էր միայն աննշան տեղական սովորութիւններում: Հնգետասաներորդ դարու վախճանից սակաւ սկսա մի այլ գործողութիւն, որ անշահաւէտ էր մանր շինականութեան. սկսաւ աճել խոշոր տնտեսութիւնն, որի նպատակն էր մեծ հողաբաժինների մշակութիւնը բազմաթիւ գործաւորների աշխատակցութեամբ, մեծաքանակ դրամագլխի գործադրութիւնն և մշակութեան եղանակների կատարելագործութիւնը: Մանր մարդոց դժուար էր մրցել այսպիսի տնտեսութիւնների հետ, և շինականներն իրենց աշխատութիւնը շահաւէտ չը համարելով՝ սկսան հողերը վաճառել դրացի կալուածատէրերին և իրենք դարձան ֆէրմերներ, այսինքն՝ խոշոր հողաբաժինների կապալառուք, կամ թէ չէ վարձւում էին իբրև գեղական բան-

---

[1]) Մի լիվրը 20 սու է կամ մերձաւորապէս մի ֆրանկ:

ուորներ, կամ գնում էին քաղաքներն և ձեռնարկում էին արդիւնաբերութեան և կամ վաճառականական գործերի, կամ, վերջապէս, հեռանում էին Անգլիայից դէպի գաղթավայրերը։ Փոքր առ փոքր հողագործ—շինականների դասակարգը չքացաւ, իսկ հացաբոյսերի մշակութեամբ և անասնաբուծութեամբ սկսան պարապիլ բացառապէս կալուածատէրերը, ֆէրմերներն և գիւղական բանուորները։

Քաղաքացիք՝

Սրա հետ միասին աճում էր քաղաքների բնակիչների թիւն ու զարգանում էին քաղաքային արդիւնագործութիւնները։ Անգլիական արդիւնագործութիւնն աշխատում էր ոչ միայն սահմանափակ տեղական շուկաների համար, այլ վաճառում էր իւր վաստակներն և գաղթավայրերում ու օտարերկրեայ վաճառանոցներում. անգլիացիք սկսան առաջնակարգ տեղ բռնել համաշխարհական առևտրի մէջ։ Այս պարագաներում կարող չէր կանգուն մնալ հին արուեստակցական կարգը, և նա կամաց կամաց տեղի տուաւ ազատ մրցման և անհատական ձեռներէցութեան։ Տասնևութերորդ դարում մի շարք գիւտեր պատճառ եղան ձեռքի արդիւնաբերութեան մեքենականի փոխուելուն: Հարգրեւսը հնարեց մանելու մեքենան։ Կարտրայտը—ոստայնանկական գործին, Ուատտը կատարելագործեց շոգեշարժ մեքենան. մետաղների ու յախճապակու արդիւնագործութիւնների մէջ էական բարեփոխութիւններ արուեցան։ Գործաւորներն յաճախ կատաղաբար ոչնչացնում էին մեքենաները, որոնք մարդկային ձեռքի աշխատանքը փոխարինում էին մեքենական աշխատութեամբ։ Բայց ի վերջոյ վաստակեցին և գործաւորները, որովհետև արդիւնաբերութիւնն անսովոր կերպով զօրացաւ և, շնորհիւ դրա, միլլիոնաւոր մարդիկ սկսան այն գործով զբաղուիլ, որով առաջ ապրում էին քանի մի տասնեակ հազար մարդիկ։ Առանձնապէս շահուեցաւ Անգլիոյ հիւսիսա-

կողմը—Մանչեստր, Բիրմինգամ, Լիդս և Շեֆֆիլդ դարձան մարդաշատ քաղաքներ։ Քարածուխի առատութիւնն աւելի մեծ յաջողութիւններ էր խոստանում։

Ազնուականութիւն։

Ազնուականութիւնը չէր ոչնչացած, այլ վերածնուել էր։ Օրէնքի առաջ ամենքն հաւասար էին, և քաղաքացիական յարաբերութեան մէջ ամենից մեծ ազնուականներն անգամ ոչինչ էական արտօնութիւններ չ՚ունէին։ Սակաւաթիւ տիտղոսաւոր ազատանին չէր կազմում մի յատուկ և առանձնացած դասակարգ. միմիայն լորդի աւագ որդին ժառանգում էր նրա տիտղոսն և հայրենական կալուածքն, իսկ կրտսերները նոյնպիսի «սոսկականներ» (կօմմոնէր), հասարակ քաղաքացիք, էին, ինչպէս բոլոր մնացած անգլիացիք։ Միջակ ու մանր ազնուականութիւնն աննկատելի կերպով ձուլուում էր քաղաքացի դասակարգի հետ։ Թէպէտ իրաւաբանական տեսակէտով բոլոր անգլիացիք հաւասար էին, բայց բարձր ազնուականութիւնը պահպանեց իւր ազդեցութիւնը տնտեսական և քաղաքական կեանքում։ Նրա գլխաւոր յենարանն էր կալուածատէր դասը: Դրանցից նշանակուում էին դատաւորները, որոնք դատում էին ոչ միայն երկրորդական գործերին վերաբերեալ խնդիրները, այլ նաև տեղական գործերի վարչութիւնների և ոստիկանութեան գլուխ էին։ Նոյն իսկ կալուածատէր դասից էր կախուած գլխաւորաբար և պետական կառավարութիւնն, որովհետև ի շնորհս հնացած ընտրական եղանակի, երեսփոխանական խորհրդարանի անդամների մեծագոյն մասն ընտրուում էին ֆէրմերներից և աննշան բնակավայրերի բնակիչներից, որոնք կախում ունէին խոշոր կալուածատէրերից։ Լորդերի դահլիճում բազմում էին նոյն դասակարգի ներկայացուցիչները։ Վաճառական և արդիւնաբերող դասակարգը շատ հեռու էր այդ քաղաքական իրաւունքներից օգտուելուց, որոնք իսկապէս սրանց պէտք

պատկանէին, աչքի առաջ ունենալով սրանց թիւը, հարստութիւնն ու նշանակութիւնը։ Քաղաքներն ունէին, յիրաւի, տեղական ընտրական վարչութիւն, բայց խորհրդարան, ինչպէս արդէն ասուեցաւ, նրանք պատգամաւոր էին ուղարկում համաձայն հին աւանդութեանց, այլ ոչ իրենց իրական զօրութեան համեմատ. ամենից երեւելի նոր կենդրոնները. Մանչեստր, Բիրմինգամ և Լիդս ամենեւին ոչ մի ներկայացուցիչ չ'ունէին երեսփոխանական դահլիճում։ Հասարակութեան աղքատագոյն դասակարգը բոլորովին մերժուած էր ընտրութիւններից շնորհիւ ընտրական կշռի (ցէնզ)։

Եկեղեցի։

Եկեղեցական տեսակէտով Անգլիան բաժանուում էր բազմաթիւ աղանդների, եւ դրանցից իւրաքանչիւրն ունէր իւր յատուկ հասարակական գոյնը։ Կալուածատէր դասակարգը հետեւում էր «բարձր» եպիսկոպոսական եկեղեցուն. քաղաքներում գերազանցում էին զանազան դիսսենտերները, սկսած երիցականներից մինչև քուէքերները (երերականները)։ Յամենայն դէպս բոլոր այն առաւելութիւնները, որոնք եկեղեցուն կարող էին պետութեան և բարձր հասարակութեան հովանաւորութիւնն ընձեռել, բաժին էին ընկնում հարուստ և ազդեցիկ եպիսկոպոսական եկեղեցուն։

Պետական կեանք։

Անգլիոյ հասարակական կազմակերպութիւնն այսպիսով պահպանեց ազնուապետական բնաւորութիւն, և բնական է, որ անգլիացոց մեծագոյն մասը բարեկարգութիւն էր ցանկանում և պահանջում։ Բայց ժողովուրդը կատաղած չէր եւ չէր մտածում բռնի յեղաշրջման մասին։ Դրա համար շատ պատճառներ կային. ազնուականութեան նիւթական հարստութիւնը, կատարած ծառայութիւնները պետական և տեղական կառավարութիւնների մէջ, խորին յարգանքը դէպի օրէնքը, որոնց տիրապետութիւնը հակառակ թագաւո-

րական իշխանութեան ոտնձգութիւնների անգլիացիք պաշտպանել էին, վերջապէս—վստահութիւնն, որ վաղ թէ ուշ հասարակաց կարծիքը յաղթանակ կըտանէ փոքրամասնութեան անձնական շահասիրութեան վրայ։

Ամենուրեք զգացւում էր «հին վիճակի անբաւարարութիւնը», որ ծագել էր աւատական կազմակերպութիւնից։ Սա Գերմանիայում յետ էր ձգում նիւթական և մտաւոր զարգացումը, Ֆրանսիայում խախտել էին այդ վիճակի հիմունքը, բայց կառավարութիւնն և բարձր դասակարգերը դեռ ևս պահպանում էին արտօնութիւնները։ Անգլիայում կատարուել էր իրաւական հաւասարութիւն, բայց քաղաքական գերակշռութիւնը դեռ ևս պատկանում էր կալուածատէր ազնուականութեան։ Իրողութիւնների ապագայ ընթացքը կախուած էր ոչ միայն նիւթական շահերից և ուժերից, այլ նաև այն շարժումից, որ տեղի էր ունենում մտքերի մէջ։

ԳԼՈՒԽ Զ.

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ.

Գրականութիւն։ Կրօնական ուղղութիւններ։

Տասնեւեօթներորդ դարու գրականութեան մէջ դեռ եւս զօրաւոր կերպով անդրադառնում էր բարենորոգութեան շրջանի կրօնական յուզմունքը, որովհետեւ կրօնական կուսակցութեանց մէջ միայն ԺԸ. դարում աւարտուեցաւ կռիւը։ Ամենից առաւել կրօնական դրոշմ նշմարւում է այս դարու անգլիական գրականութեան վրայ։ Անգլիական գրականութեան այս շրջանի մեծագոյն բանաստեղծը, Միլտոն (1608—1674), 1608–1674 անգլիական առաջին յեղափոխութեան գործիչներից մին, անկախների (ինդէպենդէնտ) աղանդից եւ հասարակապետական,— ոգեւորեալ զինուոր էր կրօնի, խիստ բարոյականութեան եւ ազատութեան, ընդդէմ անաստուածութեան, թեթեւամտութեան եւ բռնութեան։ Նրա «Կորուսեալ դրախտը» մի վիպա-

ստնութիւն է, գրուած Թագաւորութեան վերահաստատութեան ժամանակ, պատկերացնում է սատանայի կռիւն երկնային զօրութեանց դէմ, առաջին մարդոց մեղանչումն ու պատժուիլը։ Հեղինակի Ս. Գրքի հմտութիւնն եւ աստուածաբանական գիտնականութիւնն հազիւ թէ վաստակէին նրա համար յարատեւ փառք. այս վիպասանութեան մէջ շատ բան ձանձրալի եւ ձգձգուած է. չնայելով դրան Միլտոնի բանաստեղծական ոյժը վեհ եւ ահեղ պատկերներ ստեղծելու մէջ, բարոյական զգացմունքի խորութիւնն եւ լեզուի գեղեցկութիւնը պահեցին վիպասանութեանս համար աչքի ընկնող դիրք մատենագրութեան մէջ։ Միլտոն ոչ միայն բանաստեղծ էր, այլ նաեւ քաղաքական գրող. Ստիւարտների կուսակիցների հետ վիճաբանելով նա բողոքում է նրանց հայեացքի դէմ թագաւորական իշխանութեան մասին, որ նրանք համարում էին իբրեւ Աստուծուց որոշուած կառավարութեան ձեւ, եւ «Արիոպագետիկա» կոչուող շարադրութեան մէջ ճարտարութեամբ պաշտպանում է մամուլի ազատութիւնը։ Գրականութեան մէջ մաքրակրօնութեան միւս ներկայացուցիչն էր—Բէօնիան։ Սրա «Ուխտաւորի ընթացքը» (Pilgrims Progress) մի այլաբանական պատմութիւն է այն մասին, ինչպէս Քրիստիանը, այսինքն՝ քրիստոնեան, ենթարկւում է ամենատեսակ փորձութիւնների եւ վտանգների իւր ընթացքի ժամանակ դէպի ճշմարտութիւնը։

Պասքալ և Բոսսիւէ։ Աւելի թոյլ են հնչում կրօնական եղանակները ֆրանսիական գրականութեան մէջ։ Սակայն եւ այստեղ պէտք է նշանակենք երկու խոշոր երեւոյթ։ Ամենալուրջ եւ՞ բարեպաշտ կաթոլիկների մէջ տարածուեցաւ «յանսենականութիւնը», մի ուղղութիւն, որ, ձեռք չքաշելով տրիդենտեան ժողովից հաստատուած վարդապետութիւններին, պահանջում էր աւելի անկեղծ եւ խորին կրօնական զգացմունք, պնդում էր որ անհրաժեշտ է փրկութիւն փնտռելն Աստուծոյ շնորհաց մէջ, եւ չը սահմանափակուիլ «բարի գործերի» որոշ թուով եւ եկեղեցու բարեխօսութեամբ։ Յանսենականների ոսոխները մեղադրում էին նրանց իբրեւ կալուինականութեան հակումների. իրենք յանսենականները խիստ կերպով բողոքում էին յիսուսեանների նենգամիտ կրօնական քաղաքականութեան եւ նրանց յանցանքներն ու մարդկային թուլութիւնները քաջալերելուն դէմ։ Պասքալի (1623—1662) «գաւառական նամակներին» պատռում է յիսուսեանների դիմակը. նրա «Մտքերը» կամ «խորհրդածութիւնները» խոստովանութիւններ են. մի այն-
1623—1662

պիսի մարդու, որ բոլոր խնդիրների եւ կեանքի հոգսերի մէջ շարունակ վերադառնում է գլխաւոր խնդիրներին Աստուծոյ եւ հոգու մասին։ Պասքալի կրօնական զգացմանց խորութիւնը համեմատելով ֆրանսիական եկեղեցու պաշտօնական ներկայացուցիչների երկերի հետ, վերջիններս թւում են արհեստական ու ճոռոմաբան։

Ֆրանսիական քարոզիչներից ամենից երեւելին Բոսսիւէն (1627—1704) գրեց «խորհրդածութիւնք տիեզերական պատմութեան մասին», ուր ապացուցանում էր, թէ պատմական անցքերը կատարւում էին ոչ թէ պատահաբար, այլ մի յայտնի ծրագիր լրացնելու համար. Աստուածային նախախնամութիւնը դրանցով աստիճանաբար նախապատրաստում է քրիստոնէութեան եւ կաթոլիկ եկեղեցու յաղթանակը։ Բոսսիւէի միւս շարադրութիւնը «Քաղաքականութիւնն իբրեւ եզրակացութիւն Ս. Գրքից», բացադրում է, որ Աստուած արքայական իշխանութիւնն ստեղծել է տէրութիւնը կառավարելու համար, որ հպատակները պիտի հնազանդին նրան անպայման կերպով։ 1627—1704

Ֆրանսիական միապետութիւնը ԺԷ. դարում ձեռք բերաւ ահագին ազդեցութիւն ո՛չ միայն պետական կազմութեան մէջ, այլ նաեւ մտաւոր աշխարհի վրայ։ Ռիշէլիէօն գրականութիւնը պաշտօնապէս թագաւորի խնամակալութեան տակ դրաւ, հիմնելով 1636 թուին «ֆրանսիական ճեմարանը», որի նպատակն էր առաջնորդելու կրթուածների դասակարգին լեզուի եւ ոճի խնդիրներում։ Լուդովիկոս ԺԴ-ի ժամանակ հիմնուեցաւ «արձանագրութեանց ճեմարանը», որի պարտականութիւնն էր սկզբան արձանների ու չքադրամների (մէդալ) արձանագրութիւնները կազմել. աստիճանաբար սա կերպարանափոխուեց եւ դարձաւ պատմագէտների ու բանասէրների (ֆիլոլոգ) գիտնական ընկերութիւն։ Աւելի ուշ ծագեցան «գեղարուեստից ճեմարանն» եւ «գիտութեանց ճեմարանը»։ Փարիզն ու արքունիքը գրաւեցին Ֆրանսիայի լաւագոյն ոյժերը։ Բնութեամբ հասարակական, մտքերի աշխոյժ փոխանակութեան հակուող, զգայուն ամէն նոր եւ գեղեցիկ բանի համար, ֆրանսիացիք, խմբուելով Լուդովիկոս ԺԴ-ի ժամանակ, կազմեցին կրթուած հասարակութիւն, որի նմանը ոչ մի տեղ չը կար Եւրոպայում. եւ որին հետեւում էին ամենուրեք։ Մեծ դեր էին խաղում այդ հասարակութեան մէջ կանայք, ամենից հրապուրիչներն ու սրամիտներն աշխատում էին շրջապատել իրենց աչքի ընկնող անձերով—քաղաքագէտներով, գիտնականներով,

Ֆրանսիական կրթուած հասարակութիւնը։ 1636

արուեստագէտներով, փայլուն աշխարհասէր անձերով։ «Սրահներում» խօսակցում էին, կատակում եւ դատում օրուան բոլոր անցքերի եւ խնդիրների մասին, եւ աշխոյժ զրուցի մէջ մշակւում էին ճաշակներն ու պահանջները, որոնք ապա արտափայլում էին գրականութեան եւ գեղարուեստի մէջ։ Արքունիքի ազդեցութիւնը շէնքերին եւ յուշարձաններին տալիս էր հանդիսաւորութեան, նրբաճաշակութեան եւ ճոխափառութեան դրոշմը։ Վերսալլի պալատն իւր ահագին դահլիճներով, այլաբանական եւ պատերազմական նկարներով, ոսկեզօծ քիւերով, թանգագին եւ անյարմար կահաւորութեամբ, հոյակապ շատրուաններով, խուզած ծառուղիներով, մինչեւ այսօր վկայում են Լուդովիկոս ԺԴ-ի դարու ճաշակի մասին։ Գրականութեան մէջ այս դարու յիշատակարանն է կեղծ դասական ողբերգութիւնը։

Կեղծ դասական ողբերգութիւն։

Ոչ բոլոր պատմական դարաշրջանները միօրինակ բարեյաջող են ողբերգութեան զարգացման համար։ Սա չի գտնիլ իւր համար աճելութեան հող այն հասարակութեան մէջ, որ խորասուզուած է մանր շահերի մէջ. դժուար է սրա համար հասնել մեծ կատարելութեան այնպիսի ժամանակ, երբ մարդկանց աշխարհահայեցողութիւնն անորոշ է եւ նրանց միտքը շփոթուած ծագող խնդիրների եւ հնարաւոր լուծմունքների պատճառով, բայց ԺԷ. դարու ֆրանսիական հասարակութիւնը արդէն դուրս էր եկել ազգամիջեան կռիւների անկարգ վիճակից, միապետութեան առաջնորդող դերն արդէն կատարելապէս որոշուել էր, կաթոլիկութեան գերակշռութիւնն եւս վէճի խնդիր չէր այլ եւս, ընդհանուր աշխարհահայեցողութիւնը թափանցուած էր ամրակուռ բանաւորութեամբ, հետեւողականութեամբ եւ մտածողութեան պարզութեամբ, ֆրանսիական լեզուն եւ ֆրանսիական ճաշակը կատարելապէս հասունացել էին։ Միեւնոյն ժամանակ յիշողութիւնների մէջ կենդանի էին դեռ եւս ներքին պատերազմների հաստատամիտ բնաւորութիւններն եւ կատաղի ընդհարումները. հասարակութիւնը կարողանում էր հասկանալ ինչպէս յաղթողների գոռոզութիւնն, այնպէս էլ պարտուածների վշտալի վեհութիւնը։ Եւ թշնամիք հաշտուեցան, որպէս զի ձեռք ձեռքի տուած մտնեն եւրոպական մրցման ասպարէզը, որպէս զի կատարեն մեծամեծ սխրագործութիւններ ի փառս թագաւորի եւ Ֆրանսիայի։ Այսպիսի բարձրաթռիչ տրամադրութեան ժամանակ կարող էր երեւան գալ ողբերգութիւն, եւ ԺԷ. դարու Ֆրանսիայի երեք

մեծ բանաստեղծներից երկուսը, Կոռնէյլն ու Ռասինը, նուիրուեցան ողբերգութեան։ Կոռնէյլի հանդէս հանած բնաւորութիւնների վրայ դրոշմուած է ուժի, եռանդի ու խստութեան տիպարը, նա իւր հերոսների ճակատագիրը կախման մէջ էր դնում հասարակական կռուից եւ պատմական իրողութիւններից։ Նրա ամենայայտնի թատերախաղերից մէկի (Կիննա) մէջ նկարագրուած է, օրինակ՝ մի հռովմէացի, Օգոստոս կայսեր ժամանակակից. նա ներշնչուած է հասարակապետական գաղափարներով, նրա հետ միասին նկարագրուած է նրա վառվռուն սիրելին, որ վճռել է իւր ծնողաց մահուան վրէժն առնել Օգոստոսից, դաւադրութիւն է նիւթում կայսեր դէմ, բայց Օգոստոսը յաղթում է դաւադիրներին ոչ միայն իւր զօրութեամբ, այլ աւելի եւս իւր վեհանձնութեամբ։ Ռասինն աւելի փափկազգաց է. նա նուրբ դիտող է եւ սիրում է անհատական անձանց կրքերի եւ ձգտումների կռիւը հոգու մէջ բաց անել։ Եւրիպիդեսի պէս նա ստեղծել է Ֆեդրայի մէջ անմիտ եւ յանցաւոր սիրով յափշտակուած կնոջ պատկերը. Գոթողիայի մէջ նիւթ է առնուած Հին Կտակարանից եւ դէմ առ դէմ են կանգնեցրած իշխանասէր թագուհին եւ մի երիտասարդ, որ դաստիարակուած է ակնածող հնազանդութեան մէջ դէպի եկեղեցին ու եկեղեցական աւանդութիւնը։

Ընդհանուր գաղափարները, որ դրուած են թատերախաղերին իբրեւ հիմք, զարգացրած են զարմանալի ուժով եւ հետեւականութեամբ, գործողութիւնների եւ խօսակցութիւնների մանրամասնութիւնները ճարտարութեամբ են կազմուած, որպէս զի լուսաբանեն այդ ընդհանուր իմաստներն ամենայն կողմից եւ օգտուեն բոլոր ազդեցութիւններից, որ կարող են ստացուիլ ստեղծուած դրութիւններից. գործող անձանց խօսքերը գեղեցիկ են եւ ազդու։ Եւ այսուամենայնիւ այս ողբերգութիւնները թերութիւններ ունին, որոնց պատճառով նրանք զուրկ են մնացել յաջորդ սերունդների համակրութիւնից։ Նախ որ դրանց մէջ չը կայ ազատութիւն. դրանք ճնշուած են պայմանաւորութեամբ. բանաստեղծների ստեղծագործութիւնն ամեն կողմից սահմանափակուած է արքունիքի ամբարտաւան սովորութիւններով եւ բարձր հասարակութեան բռնակալ ճաշակով։ Բանաստեղծը չէ կարող իրեն նիւթ առնել եւ գործող անձինք ընտրել որտեղից կամենայ, նա պարտական է հանդէս հանելու թագաւորներ ու մեծամեծներ. նա ազատ չէ եւ գործողութիւններն ըստ իւր կամքի անդամատելու. նրանից պա-

համջներ են անում, որոնք իբրեւ թէ հներից են վերցրած. պահանջում էին, որ ողբերգութեան մէջ պահպանուած լինին «երեք միութիւնները»—«տեղւոյ, ժամանակի եւ գործողութեան», այսինքն՝ որ խաղայուի առանց տեղը փոխելու, առանց ժամանակն ընդհատելու եւ առանց մի գործողութիւն միւսներով բարդուելու։ Գործող անձանց խօսքերը պիտի լինէին «բարձր ոճով», անպատճառ ներշնչուած վեհութեամբ եւ գեղեցկութեամբ. անկարգութիւնից եւ կոպտութիւնից ջանքով խուսափում էին։ Օրինակ վերցնելով իրենց համար դասական ողբերգութիւնը, ֆրանսիացի հեղինակները ստեղծեցին խսկապէս կեղծ դասական ողբերգութիւնն եւ պատկերացնում էին ո՛չ հին դիւցազներին եւ ոչ առհասարակ մարդիկ, այլ Լուդովիկոս ԺԴ-ի պալատականներին, եւ այն արհեստական ու հանդիսաւոր պարագաների մէջ։

Սրա հետ միասին սերտ կապ ունէր եւ միւս արուեստական ճիւղը—թատերական կատակերգութիւնն—պատճառասխութիւնը։ Խնդիրները մշակւում էին ոչ այնքան դիտողութեան ազդեցութեան տակ, որ ցոյց կը տար կեանքն իւր անխուսափելի բազմազանութեամբ եւ բարդութեամբ, որքան վերացական մակաբերութիւններով. գործող անձինք կատարեալ մարդիկ չէին, ինչպէս օրինակ Շեքսպիրի թատերախաղերի մէջ, այլ միայն որոշ գաղափարների եւ վարդապետութիւնների ներկայացուցիչներ։ Կեղծ դասական ողբերգութիւնն իւր լաւագոյն արտադրութիւնների մէջ աւելի ճարտարաբան էր քան բանաստեղծական. միւսների մէջ նա ցամաք է ու ճոռոմաբան։

Մոլիէր։

Կատակերգութիւնն, իւր նպատակն աչքի առաջ ունենալով, չէր կարող այս ծայրայեղութեան մէջ ընկնել, եւ այս շրջանի կատակերգուն, Մոլիէրը, իւր համար աւելի տեւական փառք է թողել, քան թէ նրա համհարզները—ողբերգակները։ Նրա սրամտութեան եւ դիտողական հանճարն չեն կաշկանդուած գրական սովորութիւնների անողոք պահանջներով. նա ծաղրեց ո՛չ միայն իւր ժամանակի հասարակութեան ընթացիկ թերութիւնները, աշխարհասէրների ձեւականութիւնը, կեղծ գիտնականութիւնը, բժիշկների խաբեբայութիւնները—նրա լաւագոյն երկերն հանդէս են հանում այնպիսի տիպարներ, որոնց հանդիպում ենք մարդկային պատմութեան բոլոր դարաշրջաններում։ Բաւական է իբրեւ օրինակ յիշատակել Տարտիւֆֆին, մի կեղծ աստուածասէր, որ պատրուակ բռնելով բարեպաշտութիւնը, կամենում է հասնել այնպիսի նպատակների, որոնք ամենեւին բարեպաշտական չեն։

Բանապաշտութիւն (Ռացիոնալիզմ)։

Տասնեօթներորդ դարու բոլոր աշխարհայեցողութիւնը ներշնչուած էր բանապաշտութեամբ, այսինքն՝ կեանքի եւ բնութեան բոլոր երեւոյթների բացատրութիւնը մարդկային բանականութեան մէջ գտնելու ձգտմամբ։ Միջին դարերում եկեղեցուն էին դիմում ուսանելու համար և նրա յուցմունքներն ընդունում էին հաւատով. բարենորոգութիւնը սկսաւ ստուգուել այդ ցուցմունքներն և դիմեց Ս. Գրքի անմիջական մեկնութեան բանականութեան միջոցով։ ԺԷ. դարում բանականութիւնը չէին համարում այլ ևս բանալի Սուրբ Գրքի, այլ իբրև ինքնուրոյն զօրութիւն ամեն ճշմարտութիւն ճանաչելու համար։ Տասնեօթներորդ դարու փիլիսոփաները կրօնը չէին մերժում, բայց իրենց եզրակացութեանց մէջ նրա վրայ չէին յենուում։ Նրանք ճգնում էին խորհրդածութիւններով հաստատել աշխարհածանօթութեան հիմունքը։ Բոլոր գիտութիւններից ամենաբանականն է համարողութիւնը կամ ուսողութիւնը (մաթեմատիկա)։ Սա զարգացնում է իւր բովանդակութիւնը դատողութիւններով և համարողութեամբ որոշ սկզբունքների սակաւ թուից։ ԺԷ. դարու տաղջնորդող իմաստասէրները մեծ մաթեմատիկոսներ էին, ինչպէս մաթեմատիկական գիտութիւնների յատուկ շրջանում, այնպէս և փիլիսոփայութեան մէջ։

Դեկարտ, Սպինոզա և Լայբնից։ 1596—1650

Դեկարտը (1596—1650), վերլուծական երկրաչափութեան ստեղծողներից մէկը, հիմն դրաւ նոյնպէս բանապաշտական փիլիսոփայութեան։ Նա ամենից առաջ նպատակ դրաւ իրեն գտնելու մի այնպիսի դատողութիւն, որ կարելի լինէր ճանաչել անհերքելի ճշմարտութիւն (աքսիոմա) եւ դնել այդ իբրեւ հիմունք բոլոր միւս դատողութիւնների։ Մի առ մի քննելով բոլոր ընդհանուր ընդունելութիւն գտած կարծիքները, տեսաւ, որ ամենքն էլ կարողեն կասկածի ենթարկուիլ, բայց կայ մի այնպիսի դատողութիւն, որ անհերքելի է. Cogito, ergo sum (Մտածում եմ, ուստի գոյութիւն ունեմ)։ Ձեռք բերելով այս անհերքելի ճշմարտութիւնը, Դեկարտն

այդ տեղից եզրակացրեց իւր կազմ փիլիսոփայական համա-
կարգութիւնը։

Հոլլանդացի հրեայ Սպինոզան խորասուզուեցաւ այն
խնդրի մէջ, թէ ի՞նչ յարաբերութիւն ունի Աստուած աշխար-
հիս հետ եւ հասաւ այսպէս կոչուած պանթէյիզմին կամ հա-
մաստուածութեան, այսինքն՝ այն հայեացքին, որ Աստուած
էութիւն չէ, աշխարհից անջատուած, այլ ինքն է աշխարհիս
հոգին կամ էութիւնը, աննկատելի կերպով միացած նրա հետ։
Սպինոզան իւր վարդապետութիւնը շարադրեց երկրաչափա-
կան եղանակով, անհերքելի ճշմարտութիւնների եւ խնդիրների
շարքով։ Դարուս երկրորդ կիսուն հանդէս եկաւ Լայբնիցը
(1646—1716)․ սա գտաւ տարբերական համարողութիւնը, բայց,
դրանից զատ, ցոյց տուաւ անսովոր գործունէութիւն այդ
ժամանակ յայտնի բոլոր գիտութեանց շրջաններումն—բնա-
գիտութեան, բնալուծութեան, աստեղաբաշխութեան, երկրա-
բանութեան, լեզուագիտութեան, իրաւաբանութեան եւ պատ-
մութեան մէջ։ Դեկարտի մեքենական փիլիսոփայութիւնը նա
միակողմանի եւ անբաւարար էր համարում, որովհետեւ նա
չէր կարող հոգեկան կեանքի երեւոյթները բացատրել։ Նոյն
իսկ նիւթի մէջ Լայբնիցը տեսնում էր մի հոգեւոր գործօնի
ներկայութիւնն, այսինքն՝ ուժի, որ անգործարանաւոր աշխար-
հում համապատասխանում է գործարանաւոր աշխարհի հոգուն
եւ կամքին։ Աշխարհայեցողութիւնը միացնելու համար, նա են-
թադրում էր, որ աշխարհս կազմուած է անբաժանելի եւ մեր
զգայարաններին անմատչելի մասնիկներից—մոնադներից։

Նիւտոն։ Անգլիացի իմաստասէրներն Եւրոպայի մտաւոր կեանքն
այս համարձակ եւ օդային շինուածքներից դարձրին եւ ուղ-
ղեցին դէպի աւելի հաստատուն հողի վրայ։ Նիւտոնի շարա-
դրութիւնը «բնութեան փիլիսոփայութեան մաթեմատիկական
1687 սկզբունքների մասին» հրատարակուեցաւ 1687 թուին. սա
դարաշրջան կազմեց ո՛չ միայն գիտութեան, այլ նաեւ հասա-
րակութեան աշխարհահայեցողութեան մէջ։ Նիւտոնը «բնա-
զանցական» այսինքն՝ մեր զգայարանական գիտողութիւնների
եւ գիտնական հետազօտութիւնների սահմանից դուրս խնդիր-
ներին չէր դիպչում։ Բնութեան փիլիսոփայութիւն ասելով
նա հասկանում էր այն, ինչոր յոյներն «ֆիզիկա», բնական գի-
տութիւն էին անուանում, բառի ընդարձակ նշանակութեամբ—
գիտնական հետազօտութիւն բնութեան, որ ենթակայ է մեր
անմիջական գիտողութեան։ Մաթեմատիկական հանճարի տէր

լինելով, Նիւտոնը մեծ յայտնագործութիւններ արաւ զուտ մա-
թեմատիկայի մէջ, բայց չսահմանափակուեցաւ դրանով, այլ
առանձին ուշադրութիւն դարձրեց մաթեմատիկական սկզբունք-
ների գործադրութեան վրայ տիեզերակազմութեան վերաբե-
րութեամբ։ Ձգողութեան օրէնքի յայտնագործութեամբ մեքե-
նականութեան սկզբունքը վերաբերեց տիեզերքին, ցոյց տուաւ
նիւթի ընդհանուր պարզ յատկութիւնն եւ այդ յատկութիւնից
գիտնական եզրակացութիւններ արաւ։ Գիտնականների համար
Նիւտոնի յայտնագործութիւնը նորանոր հետազօտութեանց
դուռն էր բանում, կրթուած մարդոց համար դա երեւան էր
գալիս իբրեւ գիտական ապացուցութիւն բնութեան միու-
թեան եւ նրա կախումն ունենալը ճիշդ օրէնքներից։ Նիւտոնի
երկերի մէջ մաթեմատիկական եղանակը չէ՛ր ծառայում իբրեւ
օրինակ վերացական սկզբունքներից փիլիսոփայութիւն կազ-
մելու, այլ խիստ-գիտնական հետազօտութեան մի ձեւ էր, իրա-
կան բնութեան դիտողութեան հետ անհրաժեշտաբար կապակ-
ցուած։ Հազիւ Նիւտոնի գլխում յղացել էր այն միտքը, որ
մարմինները ձգում են իրար յարաբերաբար իրենց զանգուա-
ծին եւ հակադարձ յարաբերաբար հեռաւորութեան քառակու-
սիներին, որ սկսաւ այդ ստուգել լուսնի երկրի շուրջը պտը-
տելու հաշուով, եւ երկու լուսաւորների զանգուածի ստոյգ
հետազօտութեամբ գտաւ, որ իւր հաշիւն հաստատուում է, այն
ժամանակ ձեռք զարկաւ իւր աշխատութեան շարունակու-
թեան։

Անգլիացոց առողջ գործնական միտքը թոյլ չէր տալիս Լոկկ։
նրանց բանապաշտական փիլիսոփայութեան դատողութիւնները
այնպիսի համարձակ հետեւողականութեամբ ապացուցանելու
եւ հասնելու այնպիսի ծայրայեղութեանց, ինչպէս անում էին
այդ ֆրանսիացիք, կամ յափշտակուել, գերմանացոց պէս, խո-
րամիտ, բայց անհիմն ցնորքներով։ Նոյն ժամանակում Լոկկը
փիլիսոփայութեան անգլիական հասկացողութեան զարմանալի
արտայայտութիւնը տուաւ եւ զօրեղ ազդեցութիւն գործեց
եւրոպական մտքի ընթացքի վրայ։ Լոկկի գլխաւոր երկասի-
րութիւնը «Մարդկային հասկացողութեան մասին» (Essay en
human understanding, 1690) ուղղուած է Դեկարտի վարդա- 1690
պետութեան եւ առհասարակ բնազանցական փիլիսոփայութեան
դէմ։ Նա ապացուցանում էր, որ մեր բոլոր ծանօթութիւններն
ու գաղափարները վերջ ի վերջոյ ծագում են մեր հինգ զգա-
յարանների տպաւորութիւններից եւ որ հոգու մէջ գոյութիւն

չունին բնածին գաղափարներ, որ անկախ լինէին զգայարանական տպաւորութիւններից: Հոգին ընդունում է զգայութիւններ արտաքուստ նոյնպէս ճշգութեամբ, ինչպէս հայելին արտացոլում է իւր առաջև գտնուող առարկան, և մեր մտքի ինքնուրոյն գործողութիւնը կայանում է այդ սկզբնական զգայութիւնների մշակման մէջ տրամաբանական մտախոհութեամբ (ռէֆլէքսիօն=անդրադարձումն)։

Երբ այդ ա՛յդպէս է, գիտնական հետազօտութեան և փիլիսոփայական դատողութեան միակ ուղիղ ճանապարհը պէտք է սկսուի իրականութեան դիտողութիւնից և նրա վրայ արած փորձից, և ոչ թէ չբստուգած ընդհանուր ենթադրութիւններից կամ հաւատալով ընդունւած վարդապետութիւններից։ Այսպիսով, Լոկկը նորոգեց կռիւը, որ վարել էր սքոլաստիկականութեան դէմ նրա հայրենակից Բէկոնը, և Բէկոնի պէս, յենւում էր փորձնական գիտութեան վրայ. բայց սա չէ մաքառում այլ ևս սքոլաստիքայի դէմ, այլ բանապաշտական ընազանցութեան, և ինքը գլխաւորապէս հաստատում է փորձնական հոգեբանութեան հիմունքը։ Լոկկը իւր տեսութիւնը գործ դրաւ մանկավարժութեան, աստուածաբանութեան և քաղաքագիտութեան մէջ։ Նա բողոքում էր տրամախօսութեան (դիալէկտիկա) ի չարը գործ դնելու և հին լեզուների ուսման գերակշռութեան դէմ, պահանջում էր բազմակողմանի, հանրագիտական ծանօթութիւններ և դիտողութեան զարգացումը։ Վարդապետական վիճաբանութիւնների մէջ չըմտնելով նա համոզելով պաշտպանում էր հաւատքի ազատութիւնը. Քրիստոնէութեան անպայման ճշմարտութիւնները նրա կարծիքով էին հաւատն առ Աստուած և առ Փրկիչն, իսկ կրօնի գլխաւոր նշանակութիւնը—նրա բարոյականութեան վրայ ունեցած ներգործութիւնն էր։ Այս պատճառով նա մինչև իսկ հրէից ու կռապաշտների համար հաւատի ազատութիւն էր պահանջում և դրանից բացառութիւն էր անում միայն անաստուածների ու կաթոլիկների համար, որովհետև դրանց վարդապետութիւնները, նրա կարծիքով, վտանգաւոր են պետութեան համար։

Վերջապէս, հիմնական նշանակութիւն ունի Լոկկի գիրքն «Կառավարութեան» մասին։ Դրա մէջ կարծես թէ հանւում է անգլիական սահմանադրական պատմութեան փիլիսոփայա-
1688 կան գումարը, աչքի առաջ ունենալով 1688 թուի յեղափոխութիւնն, որով աւարտուեց սահմանադրական կռիւը։ Լոկկը

պետութեան հիմք էր համարում քաղաքացոց միջի դաշինքը։ Մարդիկ հրաժարւում են կատարեալ անձնական ազատութիւնից, որ պատկանում է ամէն մարդու բնական վիճակում, որպէս զի խուսափեն ընդհարումներից, օգնեն և պաշտպանեն միմեանց։ Նրանք դաշինք են դնում այս նպատակներով, կազմում են կառավարութիւն իրենց գլխին, բայց եթէ կառավարութիւնը չարն է գործ դնում իւր իշխանութիւնն և դաշինքի կէտերը նեղութեանց են ենթարկւում, այն ժամանակ նրանք իրաւունք ունին յետ դարձնելու իրենց ազատութիւնն և փոխելու կառավարութիւնն։ Ընդհարումներից և յեղաշրջումներից խուսափելու համար ամենից լաւ է ժողովրդի և նրա պատգամաւորների ձեռքին թողնել օրէնսդրական իշխանութիւնն և միայն գործադրական իշխանութիւնը, այսինքն՝ օրէնքների կատար ածելն յանձնել միապետական կառավարութեան։

Լուսաւորութիւն քարոզող շարժումն։

Տասնեւութերորդ դարու բանապաշտութիւնը զարթեցրեց քննադատական ոգին, և նրա ազդեցութեան տակ սկսաւ բոլոր հաստատուած հաւատալիքների, հասկացողութիւնների, հիմնարկութիւնների, իրաւունքների և օրէնքների վերաքննութեան անխնայ աշխատանքը: Ամենուրեք սկսան ցոյց տալ զեղծումներ և այլանդակութիւններ, որոնցով, յիրաւի, այնքան հարուստ էր հին վիճակը։ Սկսաւ լուսաւորութիւն քարոզող մի զօրաւոր շարժումն, որ իրեն նպատակ էր դրել լոյս սփռելու եւրոպական հասարակութեան բոլոր մութն անկիւններում, ցրուելու նախապաշարումները, հերքելու սնոտիապաշտութիւնները, մերկացնելու նեղիչներին, բանականութեան և համոզմունքի ուժով մարդկութեան համար ձեռք բերելու մի լաւագոյն ապագայ։ Լուսաւորութեան շրջանի գործիչները միշտ չէին կարողանում զանազանել նախապաշարումները խորին հաւատալիքներից, բանականութեան վերստուգութեան չափազանց մեծ հեղինակութիւն էին վերագրում և չէին հասկանում պատմութեան մէջ արմատացած հայեացք-

ների և իրողութիւնների զօրութիւնը, բայց նոյն իսկ դրանց չափազանցութիւնները ծագում էին գործի արդարութեան խորին համոզմունքից և արմատական բարեփոխութիւնների անհրաժեշտութիւնից.

Վոլտէր. Լուսաւորութիւն տարածող շարժման փայլուն ներկայացուցիչը թէ իւր վաստակներով և թէ ծայրայեղութիւններով՝ Վոլտէրն է։ Նա իսկատիպ իմաստասէր չէր, ոչ էլ մեծ գիտնական. իւր հիմնական հայեացքները փոխ էր առել Լոկկից, Նիւտոնից և ուրիշներից, յատկապէս անգլիացի հեղինակներից։ Բայց նա կարողանում էր այնպէս, ինչպէս ոչ ոք իրենից զատ, շահել փիլիսոփայութեան և գիտութեան արգասիքներից գործնական կռուի համար և սարսափելի զէնք ունէր—սուր խօսք և անխնայ եռանդ։ Նրա հակառակորդներն հզօր էին իրենց նիւթական դիրքով և ազդեցութեամբ, բայց նա կարողանում էր այնպէս ծաղրել իրեն անհաճոյ անձանց ու նրանց հայեացքները, որ յաղթանակն ինքն էր տանում։

1694—1778 Վոլտէրի (1694—1778) անձնական կեանքի մէջ կային շատ դէպքեր, որոնք ստիպել էին նրան զգալու հին վիճակի թերութիւնները. 23 տարեկան հասակում նա Բաստիլ[1] էր դրուել մի չ'ապացուցուած եւ անարդար կասկածի պատճառով, իբր թէ նա ծաղրական ոտանաւոր է գրել թագաւորի մասին. շուտով բանդից ելնելուց յետոյ, ուր նրան մի ամբողջ տարի պահեցին, ծեծեցին նրան մի երեւելի պարոնի ծառաները, որովհետեւ այդ պարոնին քանի մի անհաճելի խօսք էր ասել. փոխանակ գոհացումն ստանալու, ստիպուեցաւ հեռանալու Ֆրանսիայից։ Բայց Վոլտէրին կարելի չէր ճնշել անարդարութիւններով եւ վիրաւորանքներով։ Ամէն մի շարադրութեան լոյս տեսնելովը նրա փառքն աճում էր, եւ նա շուտով դարձաւ Եւրոպայի ամենանշանաւոր հեղինակը. Նրա առաջ խոնարհւում էին ոչ միայն հասարակութիւնը, այլ նաեւ միապետները. Ֆրիդրիխ Բ. եւ Կատարինէ Բ. նրա ոգեւորուած երկրպագուքն էին եւ պատիւ էին համարում նրա հետ անձնական

[1]) Բանդ քաղաքական յանցաւորների համար Փարիզում։

ծանօթութիւն սկսելը։ Վոլտէրի անձնականութեան մէջ շատ կեղտոտ կողմեր կային—նա չափազանց սնոտիափառ էր, ագահ եւ ստախօս, բայց չի կարելի չը հիանալ նրա շրջապատող չարիքի դէմ կռուելու յարատեւութեան վրայ։

Ժողովրդական-փիլիսոփայական յօդուածներում և ողբերգութիւններում, երգիծաբանական պատմուածքներում և պատմական շարադրութիւններում,[1]) վիպասանութիւններում, մանր ոտանաւորներում և նամակներում մարտնչում էր նա սնոտիապաշտութեանց և հարստահարութեանց դէմ։ Կաթոլիկ եկեղեցու մոլեռանդութիւնը, նրա փերեզակային շահագործութիւնը տգիտութեան և յիսուսեանների խարդաւանանքն առիթ եղան, որ նա սկսաւ խորշել քրիստոնէութիւնից, նա չէր հասկանում քրիստոնէութեան իսկական հիմունքն և թեթևամտութեամբ կրօնի պատմութիւնն համարում էր խաբեբայութեանց և յիմարութեանց շարք։ Շատ անգլիացոց պէս, նա հետևող էր *աստուածեանց աղանդին (դէիզմ), այսինքն՝ հաւատում էր Աստուծոյ գոյութեանը, իսկ բացի այդ հաւատից, այլ բաներում կրօնը պարտաւորացուցիչ չէր համարում* և ենթադրում էր, որ կրօնը կարելի է փոխարինել բանական բարոյականութեամբ։

Սակայն Վոլտէրի կռիւն եկեղեցու դէմ, նրա յարձակումներն ընդդէմ սնոտիապաշտութեանց եւ անհամբերողութեան չէին նպաստում թեթեւամիտ անհաւատութեան տարածման. այդ կռուի քաղաքակրթական նշանակութիւնը կարելի է գնահատել, օրինակ՝ հետեւեալ դիպուածով։ Ֆրանսիայի հարաւում ապրում էր բողոքական մի ընտանիք, Կալաս անուամբ, որի անդամներն էին ծերունի հայրը, նրա կինը եւ մի քանի որդիք։ Որդկանցից մինը սկսաւ զուարճութիւններով անցկացնել իւր օրերը, անվճարելի պարտքերի մէջ ընկաւ եւ կախուեցաւ։ Կալասների ապրած տեղում մոլեռանդ բնակիչների մէջ լուր տարածուեցաւ, որ իբր թէ ծերունին իւր ձեռքով է սպանել որդուն, որովհետեւ նա կամեցել էր կաթոլիկ դառնալ։ Տեղա-

[1]) Գլխաւորը—„Ազգերի բարքերի ու ոգու մասին։“

կան հոգեւորականները գործն ուռեցրին. Կալասին եւ նրա ընտանիքը բանտարկեցին եւ դատի ենթարկեցին. բանը վերջացաւ նրանով, որ 68 տարեկան ծերունուն, չը նայելով յանցանքի ապացոյցների կատարեալ բացակայութեան, պատժեցին—անուի վրայ քաշելով՝ ոսկորները ջախջախեցին։ Վոլտէրն այս սոսկալի գործը սրտին առաւ, եւ անասելի ջանքերից վերջը ստիպեց վերաքննել այդ դատավճիռն եւ ճանաչել դրա անարդարութիւնը։ Վոլտէրը քանիցս ստիպուեցաւ խառնուելու այսպիսի գործերի մէջ, հալածուածներին պաշտպանելու համար։

Վոլտէրի հասարակական քարոզութիւնը։

Այսպիսի խնդիրների ժամանակ նա ընդհարւում էր ոչ միայն կրօնական մոլեռանդութեան, այլ նաև բարբարոսական դատավարութեան և իշխանութեանց կամայականութեան հետ։ Նա անդրդուելի կերպով քարոզում էր բարենորոգութեան անհրաժեշտութիւնը, հասարակական յարաբերութիւնների վերաքննութիւնը։ Բանական և մարդասիրական տեսակէտով օրինակ, եռանդագին, թէպէտ անյաջող կերպիւ, պահանջում էր ճորտութեան վերացումը, որ պահպանուած էր Ֆրանսիայի մի քանի տեղերում։ Բարենորոգութեանց էր հրաւիրում կառավարութիւններին և ոչ ժողովրդական ամբոխին, որին տգէտ, անբանական և վտանգաւոր էր համարում. Վոլտէրը բարիք էր սպասում կրթուած մարդկանց գործունէութիւնից, որոնք կարգուած էին առաջնորդելու ժողովրդին, և առանձնապէս յոյս էր դնում կրթուած միապետների եռանդուն գործունէութեան վրայ, որոնք հնար ունէին գործերի վիճակն իմանալ, կարող էին օգուտ քաղել գիտութեան վերջին խօսքից և գործել նպատակայարմար կերպով, հետևողաբար, եռանդով։ Նրա համակրութիւնը լուսաւորուած միապետութեան կողմն էր:

Զգայականներ և Նիւթապաշտներ:

Վոլտէրը միշտ հետեւողական չէր իւր կարծեաց մէջ։ Նրա շարժուն եւ զգայուն միտքը յաճախ տատանւում էր զանազան հայեացքների մէջ Աստուծոյ եւ տիեզերակազմութեան, հասարակական յարաբերութիւնների եւ կառավարու-

թեան վերաբերմամբ։ Ազատախոհների մէջ շատ մարդիկ կային, որոնք աւելի հետեւողական եւ միակողմանի էին։ Ամենից ծայրայեղներն յանգում էին զգայնականութեան եւ նիւթապաշտութեան (սանսիւալիզմ եւ մատերիալիզմ)։

Առաջին ուղղութեան իսկական ներկայացուցիչ կարելի է համարել Կոնդիլեակին։ Լոկկը մեր գաղափարների բովանդակութիւնն հանում էր զգայական տպաւորութիւններից, բայց մարդկային հոգուն վերագրում էր այդ տպաւորութիւնների ինքնուրոյն մշակութիւնն անդրադարձութեան (ռեֆլեքս) միջոցով։ Կոնդիլեակը Լոկկից հեռու էր գնում եւ մերժում էր բոլորովին հոգու ինքնուրոյն գործունէութիւնը գաղափարների կազմութեան մէջ։ Տրամաբանական գործողութիւնը (ռէֆլէքս) նրա կարծիքով հոգու արտաքուստ ստացած զգայութիւնների ձեւափոխութեան շարունակութիւնն է։ Հոգեկան գործունէութեան բոլոր ձեւերը վերջ ի վերջոյ միմիայն զարկեր են, որ տալիս են զգայութիւնները, եւ մարդկային հոգին կարելի է համեմատել մի արձանի հետ, որի մէջ շնորհիւ զգայութիւնների, ներս են թափանցում կեանք եւ միտք:

Նիւթապաշտութեան եզրակացութիւնները հանուած են բարոն Հոլբախի «Բնութեան համակարգութեան» մէջ։ Այս գիրքը, որ նոյն իսկ ազատամիտներին վախեցրեց, նայում է է ամբողջ բնութեան վրայ, իբրեւ նիւթի յաւիտենական շարժման վրայ, ժխտում է Աստուծոյ գոյութիւնն, իբրեւ անձնական էութիւն, որ ստեղծել է աշխարհս եւ կառավարում է, մարդուս համարում է նիւթի բազմատեսակ փոխակերպութեանց միայն մի տեսակը, բարոյական կեանքը մարդուս մէջ վերագրում է բացառապէս ինքնապահպանութեան ձգտման, այսինքն՝ եսականութեան։

Հանրագիտութիւն։

Դիդրոն նպատակ դրաւ իրեն գիտութիւնն ամբողջապէս իւր եզրակացութիւններով և գործադրութեամբ մատչելի անել բոլոր կրթուած հասարակութեան, գիւտերն ու հետազօտութիւնները, որոնք այնպիսի վճռական ազդեցութիւն էին արել փիլիսոփաների և գիտնականների աշխարհահայեցողութեան վրայ, դարձնել ժողովրդական սեփականութիւն։ Նա ձեռնարկեց «գիտութիւնների, գեղարուեստների ու արհեստների հանրագիտակ բառարանի» յօրինման, կարողացաւ իւր շուրջն

համախմբել մի շարք տաղանդաւոր աշխատակիցներ և, չը նայելով ամենատեսակ արգելքների, այդ աՀագին Հրատարակութիւնը գլուխ Հանեց։ Չը նայելով գրաքննութեան ճնշումներին, Հանրագիտական բառգիրքն յիրաւի կազմում էր լուսաւորող գրականութեան հոգւով մշակուած ծանօթութիւնների եւ հայեացքների ժողովածու։ Դրա ազդեցութիւնն աՀագին էր։ Սա դիմում էր ամեն տեսակ պարապունք ունեցող մարդկանց, առաջարկում էր ամենայն նշանաւոր խնդիրների լուծումն և նիւթը լուսաբանում էր մի որոշ տեսակէտից։ Սա դարձաւ մի տեսակ Աստուածաշունչ այն ժամանակի կրթուած մարդոց Համար։

Քաղաքական տնտեսութիւն։

Լուսաւորութիւն քարոզող շարժման առաջին ներկայացուցիչներն հետաքրքրւում էին առաւելապէս ընդհանուր փիլիսոփայական եւ կրօնական խնդիրներով եւ համեմատաբար քիչ էին խօսում քաղաքական եւ հասարակական խնդիրների մասին։ Բայց հետզհետէ առաւել պարզուեցաւ վերջին խնդիրների նշանակութիւնը։ Լուսաւորող գրականութիւնից անկախ, բայց կարծես թէ նրան ընդառաջելով, սկսաւ մի նոր հոսանք ժողովրդական տնտեսութեան ուսումնասիրութեան։ Անգլիան երբէք չէ ընկել վաճառականութեան եւ խնամակալութեան ազդեցութեան ներքոյ, ինչպէս ցամաքային Եւրոպայի պետութիւնները. նա վաղ սկսաւ օգտուել ազատ ձեռներեցութիւնից եւ ազատ մրցումից, ուստի եւ այնտեղ առաջ երեւացին խմաստէրներ (օր. Նորսը), որոնք սկսան ապացուցանել ազատ փոխանակութեան օգուտը։ Ֆրանսիայում այդ հայեացքները համակրական արձագանգ գտան։ Կոլբերի բռնած ընթացքին հակառակ, որ խնամակալութիւն էր անում արդիւնաբերութեան, այնտեղ կազմուեցաւ այսպէս կոչուող ֆիզիօկրատների[1]) (բնութեան իշխանների) դպրոցը, որ միայն այն աշխատութիւնն էր համարում իսկապէս արդիւնագործող, որ ձեռք էր բերում հում նիւթեր, ուշք էր դարձնում առանձնապէս երկրագործութեան վրայ եւ պահանջում էր վերացումը մենավաճառութիւնների, արտօնութիւնների եւ հարստահարութիւնների, որոնց հետեւում էր մինչեւ այդ ժամանակ ֆրանսիական

[1]) Դպրոցիս հիմնադիրն էր Քէնէն, Լուդովիկոս ԺԵ-ի բժիշկը։

ելեւմտական քաղաքանութիւնը։ Անգլիացի Ադամ Սմիտը մարդկային տնտեսական գործունէութեան վերաբերեալ ցրուած ծանօթութիւններն ու վարդապետութիւնները ժողովեց եւ գիտութեան աստիճանին բարձրացրեց [2])։ Քաղաքական տնտեսագիտութեան հիմք դրաւ նա այն կարծիքը, թէ ամեն ոք իւր տնտեսական գործունէութեան մէջ առաջնորդւում է վաստակի ձգտումով, եւ քննեց, թէ ի՞նչ կարող է լինել այս ձգտման հետեւանքն երբ մարդիկ հասարակական միաբանութիւն են կազմում։ Նա կարողացաւ ցոյց տալ, որ երբ արդիւնագործութեան հիմնական ձգտումները միատեսակ են, արժէքի բաժանումն ու փոխանակութիւնը կատարւում է համաձայն ընդհանուր օրէնքների։ Կառավարութիւնն ինչքան քիչ խառնուի տնտեսական կեանքի ընթացքին, ինչքան աւելի ազատ թողնէ նրան, այնքան աւելի լաւ է։

Մոնտեսքիէօ։

Բորդոյի խորհրդարանի դատաւորներից մէկը, Մոնտեսքիէօն, աշխատեց բոլոր հասարակական գիտութեան Համար անել այն, ինչ որ Սմիտն արել էր մարդկային ամենապարզ գործունէութեան ճիւղի—տնտեսութեան Համար։ Մոնտեսքիոյի «Օրինաց ոգին» նպատակ ունի ցոյց տալու, որ ազգերի կեանքը կախուած չէ պարագաների պատահական հոսանքից, որ նրա գլխաւոր երեւոյթների մէջ կարելի է ցոյց տալ մշտական օրէնքների ներգործութիւնը։ Իւր դիտողութիւնների Համար նա շատ Հարուստ նիւթ չ'ունէր և գլխաւորաբար աչքի առաջ ունէր դասական ազգերի պատմութիւնը մի կողմից, վերջին դարերու իրողութիւններն Անգլիայում և Ֆրանսիայում—միւս կողմից։ Պետական ձեւերը Մոնտեսքիէօն քիչ տարբեր կերպով էր ստորաբաժնում, քան Արիստոտէլն—հասարակապետութեան, բռնակալութեան եւ միապետութեան։ Վերջինս նա Համարում էր թագաւորական կառավարութիւն, որ սահմանափակուած է օրէնքներով և ազնուականութեամբ, ինչպէս որ այդ էր—դատաւորական դասակարգի կար-

[2]) Սրա շարադրութիւնը «Ազգերի հարստութեան մասին» հրատարակուեցաւ 1776 թ.։

ծեօք—Ֆրանսիայում: Կառավարութեան իւրաքանչիւր ձեւն երեւան է գալիս եւ կանգուն է մնում նայելով ժողովրդի բարոյական կազմին: Եթէ ժողովրդի մէջ զօրեղ է քաղաքացիական առաքինութիւնը, նա կ'ունենայ հասարակապետական կառավարութեան ձև. եթէ ժողովրդին կարելի է սանձել միայն երկիւղով, նրան պատշաճ է բռնակալութիւնը. եթէ քաղաքացոց աչքին առանձին նշանակութիւն ունին պատիւն ու յարգանքը, նրան յարմար կը գայ ազնուապետական միապետութիւնը: Կառավարական ձևերի պայմանական նշանակութիւնն ընդունելով հանդերձ, Մոնտեսքիէօն ցոյց է տալիս սակայն և այն ձևը, որ ինքն ամենից ցանկալին է համարում. պէտքէ ձգտել խառն ձևին, որ միացնէր իւր մէջ միապետութեան և հասարակապետութեան լաւ կողմերը: Գործնական կեանքում այդպիսի ձև գոյութիւն ունի, նրա կարծիքով, Անգլիայում, և դրա հիմնական սկզբունք է իշխանութիւնների բաժանումն: Ժողովուրդը պահպանում է—իւր պատգամաւորների միջոցով խորհրդարանում — օրէնսդրական իշխանութիւնը, թագաւորն ունի գործադրող իշխանութիւն, դատաւորների անկախ դասակարգին վերապահում է նա դատական իշխանութիւնը: Իշխանութիւնների այսպիսի բաժանմամբ նրանք հաւասարակշռում են միմեանց, և ոչ մէկը կարող չէ քաղաքացիների համար վտանգաւոր գերակշռութեան հասնել:

Ռուսսօ: Մոնտեսքիէօյի վարդապետութիւնն սկիզբն է առնում իրականութեան և պատմութեան վրայ արած դիտողութիւններից, թէպէտ և նա այդ դիտողութիւնները բաւական ազատօրէն է մեկնում, բայց հէնց այդ իրականութեան և պատմութեան մերձաւորութիւնը չէ համապատասխանում դարուս ձգտման, որ խորապէս դժգոհ էր հին կարգ ու կանոնից և նրա պատմական հիմունքներից: Մոնտեքիօյից աւելի համարձակ և

ազդեցիկ երեւեցաւ Ժենեւացի Ժան Ժաք Ռուսսոն (1712—1778): Մի ժամագործի որդի, աղքատ, հիւանդոտ, անձնասէր, կասկածոտ և նախանձոտ լինելով Ռոսսոն միշտ խորթ մնաց աշխարհասէր մարդոց և հեղինակների փայլուն հասարակութեան մէջ, ուր ընկաւ նա, շնորհիւ իւր սովորականից դուրս գրական տաղանդին: 1712—1778
Սա մարմնացնում էր իւր մէջ դարուս երկրորդ կիսի ձգտումն: Գիտութեան ամենազօրութեան առաջ երկրպագութեան, լուսաւորող առաքելութեան գոռոզ գիտակցութեան, լուսոյ և բարու յաղթանակի ուրախ վստահութեան տեղի էին տալիս վերահաս յեղափոխութեան նախազգացութիւնը, տիրող կարգ ու կանոնի դէմ ատելութիւնը, տեսական մտքի արհամարհանքի առաջ, որը չէր հասցնում անմիջական գործական հետեւանքների:—Առաջին երկասիրութիւնն, ու Ռուսսօյի անունը հռչակեց, նուիրուած էր այն ապացուցութեան, որ գիտութիւններն ու գեղարուեստները—բոլոր այսպէս կոչուած քաղաքակրթութիւնը—ապականել են մարդկանց և որ մարդկային բնութեան վերածնութեան համար անհրաժեշտ է վերադառնալ բարքերի սկզբնական պարզութեան: Երկրորդ տետրը քննում էր քաղաքակրթուած հասարակութեան կազմն իւր ստացուածքի անհաւասարութեամբ, դասակարգերի բաժանմունքով, պետական կեանքի արհեստական ձևերով և կրկին դատապարտում էր այդ վիճակը:

Էմիլ Զը գոհանալով բացասութիւններով, Ռուսսոն առաջարկեց իւր գրական գաղափարները: «Էմիլի» մէջ նա բացադրում է իւր հայեացքները դաստիարակութեան մասին: Հիմնական միտքն հետեւեալն է, որ բոլոր անհրաժեշտ գիտութիւնն ու բարոյական սովորութիւնները սանիկը պէտք է ձեռք բերէ ինքնագործունէութեամբ. դաստիարակի դերը միայն այն պիտի լինի, որ սանիկին անհրաժեշտութեան մէջ դնէ անձամբ վճռելու թէ ի՞նչ պէտք է գիտենալ եւ ի՞նչպէս պէտքէ վարուել: Այս միտքն իրագործելն, Ռուսսոյի կարծիքով, կա-

տարբելապէս հնարաւոր է. 1) մարդս ի բնէ օժտուած է առողջ բանականութեամբ եւ առողջ ձգտումներով, եւ միայն հասարակական կեանքի արհեստական պայմանն են անբարոյականացնում նրան եւ միտքը բթացնում. 2) անհրաժեշտ գիտելիքների պաշարն այնքան էլ մեծ չի լինել, եթէ դուրս ձգուի աւելորդը, կեանքի համար անպիտանը. 3) գլխաւոր գործը մտքի կրթութիւնը չէ, այլ բնաւորութեան դաստիարակութիւնն է։ Համաձայն այն նշանակութեան, որ Ռուսսոն տալիս էր զգացմունքին, նա առանց վարանելու ընդունում էր կրօնի բարի ներգործութեան վրայ, թէպէտ եւ կրօնն ա՛յլ կերպ էր հասկանում։ Նա գրում էր. «Ես հաւատում եմ Աստուծուն, եւ Աստուած անարդար կը լինէր, եթէ իմ հոգին անմահ չը ստեղծէր. այս է թւում ինձ էական, իսկ մնացածի մասին թող վիճեն բանականուի սիրահարները»։

Ընկերական դաշն։ Ռուսսոյի քաղաքական վարդապետութիւնն ամենից աւելի կատարեալ կերպով պարզաբանուած է «ընկերական դաշինքի» (Contrat social) մէջ։ Հեղինակը Լոկկի նման ենթադրում է, որ մարդկային ընկերութիւնն յառաջ է եկել շնորհիւ այն դաշինքի, որ դրել են իրենց մէջ սկզբնապէս կատարեալ ազատ մարդիկ։ Բայց սրա հանած եզրակացութիւնները բոլորովին տարբեր են Լոկկի եզրակացութիւններից։ Ընկերութիւն կազմող մարդիկ հրաժարուում են իրենց անձնական կամքից միմիայն նրա համար, որպէս զի մասն ունենան ընդհանրութեան կամքի մէջ, որ կազմուում է դաշինքի հիման վրայ։ Ով դադարել է անկախ անձնաւորութիւն լինելուց, դառնում է մասնակից ինքնիշխան ժողովրդի։ Ժողովրդի գերիշխանութիւնը Ռուսսոն այնքան անպայման է համարում, որ լսել անգամ չէ կամենում երեսփոխանութեան մասին, ոչ իսկ իշխանութեան բաժանման մասին։ Տէրութեան մէջ իւրաքանչիւր կարգադրութիւն պէտքէ ծագումն առնէ անմիջապէս ժողովրդական համախումբ ժողովից, ուր մասնակցութեան իրաւունք ունին բոլոր քաղաքացիք։ Միւս կողմից, անձնաւորութիւնն ամբողջովին հրաժարուում է իւր անձնա-

կան կամքից յօգուտ հաւաքական կամքի, եւ խօսք չէ կարող լինել անձի ազատութեան մասին ժողովրդական իշխանութեան հակառակ։ Ժողովուրդը քաղաքացոց համար սահմանում է օրէնքներ, բարքեր, կրօնական համոզումներ։ Ռուսսոյի քաղաքական վարդապետութիւնն ուղղուած էր հաւասարապէս բոլոր պետութիւնների դէմ և նոյն իսկ պետութեան գաղափարի դէմ, իբրև մի բարդ արտադրութիւն պատմութեան և քաղաքականութեան։ Ռուսսոյի գաղափարների իրագործումը կը տանէր մեծ քաղաքական կազմակերպութեանց լուծմանը և անհատների ճնշման, բայց Ռուսսոն չէր ափսոսում ոչ պետութիւններին և ոչ անհատներին, միայն թէ մարդիկ հաւասարացուէին և հասարակական կազմը մինչև վերջին ծայր պարզուէր։

Գերմանական գրականութիւն։ Ռուսսոյի գործունէութեան մէջ չէ կարելի չը նկատել հակասութիւն վերացական-պատճառաբանական մտածմանց ձևերի եւ զգացմունքի պաշտպանութեան մէջ ընդդէմ խելքի միակողմանի զարգացման։ Դրա մէջ երեւում է անցքը դէպի նոր դարաշրջան եւ նորանոր սկզբունքները. լուսաւորող փիլիսոփայութիւնն անբաւարար, ցամաք, պատճառաբանական երեւեցաւ. նոր սերունդը պահանջում էր մարդկային հոգու բոլոր մասերի կատարեալ զարգացումն ու ամենից առաջ ջերմ զգացմունք. մարդկանց հետաքրքրութիւնը դառնում էր դէպի սկզբնական դարաշրջաններն եւ կիսավայրենի ազգերը։ Դրանց մէջ որոնում էին զգացմունքների ոյժ եւ անմիջական բղխումն։ Այս ուղղութիւնն ամենից զօրաւոր կերպով արտայայտուեցաւ Գերմանիայում։ Երեսնամեայ պատերազմն եւ քաղաքական կեանքի աղքատութիւնն երկար ժամանակով կանգ առնել տուին գերմանացոց քաղաքակրթութեան զարգացումը. փոխանակ եւրոպական ազգերի առաջին շարքում կանգնելու, ինչպէս բարենորոգութեան շրջանում, նրանք շատ յետ մնացին անգլիացիներից ու ֆրանսիացիներից եւ ընկան այս վերջիններիս ազդեցութեան տակ։ Լայպնիցի պէս մարդիկ բացառութիւն էին կազմում։ Լաւագոյն մարդիկ նմանուում էին, իրենց կարողութեան չափ, փարիզեցոց, եւ Ֆրիդրիխ Բ., օրինակի համար, աւելի լաւ գիտէր ֆրանսերէն, քան թէ գերմաներէն,

եւ արհամարհանօք էր վերաբերւում գերմանական գրակա-նութեան։

Լեսսինգ։ Դարձը դէպի լաւագոյնը սկսաւ Լեսսինգից։ Նա կատա-րելապէս համակիր էր լուսաւորող փիլիսոփայութեան մարդա-սիրական գաղափարներին, եւ նրա ամենալաւ թատերախաղե-րից մին, «Նաթան Իմաստունը», մի ազնիւ եւ գեղարուես-տական բարձր արժէք ունեցող ջատագովութիւն է հաւատոյ ազատութեան։ Իբրեւ լուսաւորող, նա նման էր բոլորովին ֆրանսիացի իմաստասէրներին։ Բայց նա վրդովւում էր տես-նելով իւր ազգի մտաւոր ստրկութիւնը, նրա կոյր երկրպա-գութիւնը ֆրանսիական գրականութեան օրինակներին։ Եւ դրա մէջ չէր արտայայտւում միմիայն նրա հայրենասիրական հպարտութիւնը։ Լեսսինգը լաւ էր զգում ֆրանսիական ուղ-ղութեան միակողմանութիւնը եւ յարձակւում էր նրա գլխա-ւոր թերութիւնների—պատճառասիրութեան, արհեստականու-թեան եւ պայմանաւորութեան դէմ։ «Համբուրգեան թատեր-գութեան» մէջ նա ջարդուփշուր է անում կեղծ-դասական թատերախաղի երկրպագուներին, պահանջում է բնականու-թիւն դրութիւնների եւ բնաւորութիւնների, կենդանի ճշ-մարտութիւն եւ բազմատեսակութիւն, նա մատնանիշ էր անում իբրեւ օրինակ ազգակից անգլիական գրականութեան եւ հին յունական թատերգութեան վրայ, գովաբանում էր Շեքսպիրին, իբրեւ թա-տերական ստեղծագործութեան ամենամեծ ներկայացուցչին։ Չը գոհանալով միայն խրատներով, ինքն հանդէս դուրս եկաւ նմանապէս իբրեւ թատերագիրող, եւ ստեղծեց գերմանական թա-տերագրութեան առաջին գեղարուեստական օրինակները[1]։

Հերդեր։ Հերդէրն աւելի լայն ծաւալով խնդիրներ առաջադրեց։ Նա ուշք դարձրեց նոյն իսկ լուսաւորող փիլիսոփայութեան սահ-մանափակութեան վրայ եւ սկսաւ պահանջել բնականութիւն կենսունակութիւն, բազմակողմանութիւն ժողովրդի ճանա-չողութեան մէջ, ինչպէս որ Լեսսինգը պահանջում էր բնակա-նութիւն, կենսունակութիւն, բազմակողմանութիւն մարդու ճանաչողութեան մէջ։ Ժողովուրդը Հերդերի համար—գործա-նարանաւոր էութիւն է, եւ ոչ թէ դաշինքով ու ծրագրով միաբանած մարդկանց ժողով։ Ի՞նչպէս են կազմուել ժողովըր-դական գործարաններն, ինչո՞ւմն է նա ցոյց տուել իւր առա-ջին առանձնութիւններն, ի՞նչպէս է կազմակերպուել նրա բնա-

[1] Միննա ֆօն Բարնհելմ, Էմիլիա Գալոտտի, Նաթան Իմաստուն։

ւորութիւնն։ Այս հարցումներն առաջարկելով Հերդերը սկսաւ աւելի ուշադրութեամբ դիտել եւ քննել ժողովրդական կեան-քի սկզբնաւորութիւնները, քան թէ քաղաքակրթական կեան-քի արհեստական եւ բարդ շրջանները։ Նա կարծես թէ մի նոր աշխարհ յայտնագործեց մարդկային ստեղծագործութեան— առասպելների, աւանդութիւնների, սնոտիապաշտութիւնների եւ հէքիաթների մէջ: Կրթուած հասարակութիւնն արհամար-հում է դրանց իբրեւ անմիտ առակներ, բայց Հերդերի աչքում նրանց մէջ աւելի իմաստութիւն եւ գեղեցկութիւն կայ, քան թէ ամենանշանաւոր հեղինակների երկերի մէջ։ «Մարդկու-թեան պատմութեան մասին խորհրդածութիւններ»[1] կոչուած շարադրութեան մէջ Հերդերն հիմունք է դրել ժողովրդական կեանքի այս հասկացողութեան, բայց միեւնոյն ժամանակ ամ-բողջ շարադրութեան մէջ առաջնորդ է ընտրել մարդկութեան քաղաքակրթութեան կատարելագործութեան գաղափարն, յառա-ջադիմական ընթացքը դէպի լուսաւորութիւն եւ երջանկու-թիւն։ Բայց յառաջադիմութիւնը, նրա կարծիքով, միմիայն մտքի հարստութեան մէջ չէ, այլ ամբողջ մարդուս աճող բա-րոյական կատարելագործութեան մէջ, բնութիւնից մարդուս տուած բոլոր ուժերով եւ ընդունակութիւններով։

Լեսսինգը դեռ եւս միայնակ էր մարտնչում իսկ Հերդերը շրջապատուած էր ընկերների ու համհարզների փայլուն խում-բով։ Գերմանիայում սկսել էր բուռն ձգտումների (Sturm und Drang Periode) շրջանը։ Տենդային կեանքն եռում էր։ Կարծես թէ հողից սկսան բուսնել երիտասարդ, տաղանդաւոր գործիչներ գրականութեան բոլոր ասպարէզներում։ Բոլոր գո-յութիւն ունեցող իրերը քննութեան ենթարկուեցան, մինչեւ երկինք էին բարձրացնում անմիջական զգացմունքն եւ ոյժը, մտքի եւ նրա ազատութիւնը, բնութեան մերձաւորութիւնը: Այս անհանգիստ ժամանակում սկսան իրենց գործունէութիւնը Գէօթէն ու Շիլլերը։ Ձգտումների շրջան։

Գէօթէն (1750—1832) մարմնացրեց մարդկային զօրա- Գէօթէ. 1750—1632
ւոր անձնաւորութեան գաղափարը, որի մասին այդ ժամանակ հեղինակներն երազում էին։ Նա անխուսափելի կերպով գրա-ւիչ էր, նրա զգայուն բնութիւնը դարաշրջանի բոլոր խորին ձգտումներով տոգորուած էր, իսկ բանաստեղծական հանճարը միջոց էր տալիս նրան արտայայտելու պատկերներով այն,

[1] Ideen zur Geschichte der Menschheit, 1784 և հետ.

ինչ որ մտքերն էր ալէկոծում։ «Վերթերն» ու «Ֆաուստն» ան-մահացրին նրա մրրկալից երիտասարդութիւնը։ «Վերթերը» տխուր վիպասանութիւն է մի մարդու մասին, որ տանջւում է շրջապատող հասարակական պայմանների սառութիւնից եւ ստո-րութիւնից, համակուած յոռետեսութեամբ (Weltschmerz), որ հանգստանում է միայն մահուան ծոցում. Վերթերի զգայու-նութիւնը դառնում է հիւանդութիւն, զրկում է նրան ո՛չ միայն կեանքի ուրախութիւնից, այլ նաեւ գործելու ընդունակութիւ-նից, եւ նա վերջ է դնում իր կեանքին յուսահատ սիրոյ յուզմուն-քի մէջ։ «Ֆաուստի» առաջին մասի մէջ Գէօթէն օգտուել է մի հին աւանդութիւնից, որի համաձայն մի գիտնական իր հոգին սատանային էր վաճառել, երկրիս վրայ զօրութիւն ձեռք բե-րելու համար։ Այս աւանդութիւնը դարձաւ նոր ժամանակների ամենամեծ վիպասանութիւնը. Մեֆիստոֆելի ծաղրերի մէջ, Ֆաուստի ոտնձգութեան մէջ ընդդէմ գիտութեան եւ Աստուա-ծային սահմանադրութեան դուրս է ցայտում այն խորին զգաց-մունքը—մարդկային հոգու դժգոհութիւնը, այն բոլորից, որ մատչելի է նրան երկրիս վրայ, ձգտումն անհասանելի գերա-կայ գաղափարին (իդէալ), որի առաջ թառամում էր գիտու-թիւնն ու սէրը։

Գերմանիոյ երկրորդ մեծ բանաստեղծը Շիլլերը (1759— Շիլլեր, 1759—1805 1085), Գէօթէից յետ կըմնայ իր հանճարեղութեամբ, բայց նա աւելի զօրաւոր կերպիւ էր զգում իր ժամանակի թերու-թիւնները. նրա նախնական թատերախաղերի մէջ յեղափոխա-կան տրամադրութեան ձայնն է լսւում։ «Աւազակների» մէջ հերոսը բացարձակ պատերազմ է յայտարարում անպիտան հասարակութեան, իր շուրջն է հաւաքում այնպիսի քաջեր, որոնք այլ եւս տանել չեն կարողանում անարդարութիւններին ու վիրաւորանքներին։ «Նենգութիւն եւ սէր» թատերախաղն անարգանաց սեան առաջն է հանում արքունի հասարակու-թեան անհոգի, անափառ եւ ստոր ներկայացուցիչներին։ «Դոն Կարլոսի» մէջ մոլեռանդութիւն եւ բռնակալութիւն մարմնա-ցնող Փիլիպպոս Բ-ի դէմ հանդէս է հանում մարքիզ Պօզային, ազատութեան եւ մարդասիրութեան պաշտպանին։

Մարդասի-րութիւն։ Մինչեւ այժմ խօսւում էր ԺԸ. դարու մտաւոր շարժման մասին, ինչքան դա արտայայտուած է ամե-նանշանաւոր հեղինակների երկերի մէջ։ Բայց ինչպէս

էին կեանքի մէջ գործ դրւում այն խրատները, որ տալիս էր գրականութիւնը։ Հին կարգի և իմաստասէր-ների պահանջների մէջ եղած անդունդն ահագին էր, բայց հէնց այդ հակասութիւնն եղածի և լինելիքի միջև, մարդկանց դէպի գործ էր դրդում։ Չը նայելով հայեացքների ծանրակշիռ տարբերութեանց, բոլոր ԺԸ. դարու գործիչները համաձայն էին քանի մի գլխաւոր կէտերի վերաբերութեամբ։ Դրանք քարոզում էին *«մարդկայնութիւն»*, ուշադրութիւն մարդկային անձնա-ւորութեանց պահանջներին ու արժանիքին, *«մարդա-սիրութիւն»* (ֆիլանթրոպի), սիրալիր վերաբերութիւն, դէպի մարդիկը։ Եւ խնդիրը չէր փակւում քարոզով, կամ մասնաւոր բարեգործութեամբ։

Նոր ուղղութեան մարդիկ շատ լաւ ճանաչում Մասոններ և Լուսա-կրօններ։ էին իրենց եղբայրակցութիւնը, շրջապատող թշնամա-կան զօրութեանց մէջ, և դրանք բնական ցանկութիւն էին զգում համախմբուելու, կանոնաւոր յարաբերու-թեանց մէջ մտնելու միմեանց հետ։ Անգլիայի լուսա-ւորողները 1717 թուին օգուտ քաղեցին միջնադարեան 1717 որմնադիրների կիսով չափ մոռացուած սովորութիւն-ներից, որպէս զի կազմակերպեն մի դաշնակցութիւն, որի նպատակը պիտի լինէր, ինչպէս իրենք էին արտա-յայտում, *դաստիարակել մարդկանց հոգեւոր որմնա-դրութեան համար*։ Ազատ որմնադիրների կամ Ֆրանք մասոնների միաբանութիւնն արագութեամբ աճեց և տարածեց իր «օթեակները» (լոժ) ամբողջ Եւրոպայում և նոյն իսկ ամբողջ աշխարհում։ Միաբանութեանս խոր-հրդաւոր արարողութիւններն ու կանոնները հեռու էին պահում նրանց չընծայուածներից, միաբանութիւնը բացարձակ կռիւ չէր մղում պետական իշխանութիւն-ների և եկեղեցիների դէմ, բայց նրանց ազդեցութիւ-նից դուրս էր գալիս, կրօնական տեսակէտով հետեւում էր «աստուածայնութեան» (դէիզմ), իսկ հասարակա-

կան տեսակէտով՝ հետեւող էր բոլոր մարդկութեան եղբայրութեան և մարդկանց հաւասարութեան սկզբունքին: Պետական իշխանութիւններն երկար ժամանակ ներողամիտ էին դէպի այս միաբանութիւնը, բայց կաթոլիկ եկեղեցին յայտարարեց նրան անհաշտ պատերազմ: Մասոնների ազդեցութիւնը շատ մեծ էր հասարակութեան վրայ, բայց դրանք ըստ մեծի մասին այնքան զգոյշ էին, որ չափազանց վառ խնդիրներ չէին յարուցանում: Այլ խնդիր էր ռոզակրոյցների կամ իլլումինատների գործը, այս միաբանութիւնը կազմուել էր դարավերջին Բաւարիայում մասոնականութեան օրինակով, դրանց մէջ ուղղակի տարածուած էր յեղափոխական վարդապետութիւնն, և բաւարական կառավարութիւնն անհրաժեշտ համարեց հալածելու այդ միաբանութիւնը դատարանով:

Լուսաւորող գրականութեան ազդեցութիւնն իրաւունքի վրայ:

Հայեացքների յեղաշրջումը զգալի եղաւ և կառավարական շրջաններում: Լուսաւորող գրականութեան ազդեցութեան տակ շատ կարգեր փոխուեցան, որ գոյութիւն ունէին դարերի ընթացքում, առանց կասկած յարուցանելու իրեանց օրինաւորութեան մասին: Դեռ ևս ԺԷ. դարում գերմանական բանագնացները արշաւանք սկսան ընդդէմ կախարդութեան և հետզհետէ յաջողուեցաւ այն հայեացքն ընդունել տալու, որ մարդիկ չեն կարող անմիջական յարաբերութիւնների մէջ մտնել չար ոգիների հետ ի վնաս իրենց մերձաւորների: Այս կռիւն սկսաւ ընդդէմ տանջանքի, իբրև դատական հարցաքննութեան միջոցի: Լուսաւորող գրականութեան յաջողեցաւ կրկին համոզելու կառավարութեան, որ դատական այդ սովորութիւնը չարիք է, որ շատ անմեղ զոհեր է կորստի մատնել: Իտալացի Բեկկարիան մերկացրեց քրէական իրաւունքի[1] տմարդի խստութիւնը, որ չէր ճանաչում պատիժների մէջ ոչ մի չափ: Անգլիացի Հօուարդ իւր ամբողջ կեանքը նուիրեց բանտարկութեան պայմանների բարւոքման:

[1] „Յանցանքների և պատիժների մասին“ 1764.

Լուսաւորուած միահեծանութիւն:

Բայց այն ներգործութիւնից զատ, որ լուսաւորող շարժումն ունեցաւ առանձին խնդիրների և ճիւղերի վրայ, անհրաժեշտ է նկատել, որ իշխանութեան տէրերն յաճախ իրենք այդ ուղղութեան ազդեցութեան տակ էին ընկնում իրենց ընդհանուր քաղաքականութեան մէջ: Լուսաւորիչների պահանջած բարենորոգութիւններից շատերը ցանկալի էին պետական շահերի տեսակէտով ևս. ԺԷ. դարու պետական անձինքներից շատերն համարձակութիւն ունեցան ժամանակի պահանջներին ընդառաջելու: Նրանք իշխանութիւնը չէին դարձնում ժողովրդին, ընդհակառակն, իշխանութեամբ սպառազինւում էին, որպէս զի ժողովրդին օգտակար բարեփոխութիւններ իրագործեն: Այսպէս էին գործում Արանդան Սպանիայում, Պոմբալը—Պորտուգալիայում, Տանուչչին—Նէապոլում, Կատարինէ Բ.—Ռուսիայում, Գուստաւ Գ. Շուեդիայում: Կաթոլիկ երկրներում լուսաւորուած միահեծանութեան գլխաւոր նպատակներից մէկն էր եկեղեցու քաղաքական և հասարակական ազդեցութեան սահմանափակումն: Այս առթիւ լուսաւորուած միահեծանութեան ներկայացուցիչներն ստիպուած էին անխուսափելի կերպով ընդհարուիլ—յիսուսեան միաբանութեան հետ, որ գործօն կաթոլիկութեան գլխաւոր գործիքն էր նոր ժամանակներում: Պորտուգալի և Սպանիոյ կառավարութիւնները յիսուսեաններին վռնդեցին իրենց բոլոր երկրներից, և ժամանակի ոգին այնքան զօրաւոր էր, որ Կղէմէս ԺԴ. պապը ցրուեց միաբանութիւնը: Թէպէտ և յիսուսեան կարգն ապագայում վերահաստատուեցաւ, բայց դեռ երկար ժամանակ չը կարողացաւ ոտքի կանգնել այս հարուածից յետոյ:

Յատկապէս բնաւորոշ են լուսաւորեալ միահեծանութեան համար Ֆրիդրիխ Բ.-ի գործունէութիւնը Պրուսիայում և Յովսէփ Բ.-ինը Աւստրիայում:

Ֆրիդրիխ Բ-ի ուղղութիւնը։

Ֆրիդրիխ Բ. արժանացել է Մեծ մականուան ոչ
լոկ իւր պատերազմական և դիւանագիտական յաջողու-
թիւնների պատճառաւ. Նա առաջին իրագործողն եղաւ
«լուսաւորեալ միահեծանութեան» գաղափարների պետա-
կան կառավարութեան մէջ։ Դաստիարակուած իւր ժա-
մանակի ժողովրդական փիլիսոփայութեամբ, գիտակցօ-
րէն էր վերաբերուում իւր աստիճանին և մարդկային
հասարակութեան յատկութիւնից եզրակացնում էր կա-
ռավարչի պարտականութիւնները։ Թագաւորը նրա հա-
մար—պետութեան առաջին պաշտօնեան (ծառայողը) է։
Հպատակները հնազանդում են նրա իշխանութեան, որպէս
զի խուսափեն երկպառակութիւններից և օտարազգիների
բռնակալութիւններից, բայց թագաւորի բոլոր գործողու-
թիւնների նպատակը պիտի լինի հպատակների բարիքը,
նրանց կեանքի խելօք կազմակերպութիւնը, հարստների
և աղքատների մէջ եղած տարբերութեանց նուազումը,
թշուառներին և հալածուածներին օգնելը։ Թագա-
ւորի իշխանութիւնն անսահման է, որովհետև նա ամ-
բողջութեան ներկայացուցիչն է։ Ֆրիդրիխ Բ. ոչ մի-
այն սահմանափակումներ չէր ընդունում, նա մինչև
իսկ իշխանութիւնը չէր բաժանում իւր հրամանները
կատարողների հետ և չ՛էր պահում ղեկավարող նախա-
րարներ կառավարութեան զանազան ճիւղերի համար։
Այս ճիւղերից իւրաքանչիւրը գտնուում էր առանձին
հաւաքական հաստատութիւնների, քանի մի մարդկան-
ցից բաղկացած յանձնաժողովների իշխանութեան տակ,
իսկ գործերի մասին զեկուցանելու համար թագաւորը
նշանակում էր գաղտնի խորհրդականներ, ըստ մեծի
մասին ոչ ազնուական ծագումի մարդոց և յաճախ բարձր
կրթութիւն անգամ չը ստացածներից։ Թագաւորն ինքն
էր ամենայն բանի վրայ հսկողը. Նրա նպատակն էր կառա-
վարութեան ամբողջ կազմը դարձնելու մի հնազանդ
մեքենայ իւր ձեռքին, որ առանց քննելու և յետա-
ձգելու կատարէր իւր հրամանները։

Մեծ ուշադրութիւն էր պահանջում հարկաւ զօրքը։ Զօրքը։
Հինգ միլիօն բնակիչ ունեցող երկիրն ունէր 200,000
մարդուց բաղկացած մի բանակ, բայց զինուորների կի-
սիցն աւելին օտարազգիք էին, որոնց գրաւել էին
ամէն տեսակ ուղիղ և թիւր միջոցներով [1]։ Այս սին-
լիքօրից խիստ կարգապահութեան միջոցով կազմում
էին գեղեցկայարդար զօրագնդեր. յանցաւորներին յա-
ճախ պարկեցնում և ճիպոտներով ծեծում։ Սպայակոյ-
տըն ամբողջապէս ազնուականներից էր բաղկացած, և
բոլոր պաշտօնեաները նշանակուում էին, մինչդեռ
միւս զօրաբանակներում (անգլիական և ֆրանսիական)
գնուում էին պաշտօնները։

Զօրաբանակի հետ սերտ կապուած էր ելևմուտքը։ Ելևմուտք։
Ֆրիդրիխը մուտքն աւելացնելու համար միջոցների
խտրութիւն չէր անում. ի միջի այլոց, քանի մի հար-
կերի հաւաքումը յանձնում էր ֆրանսիացի պաշտօնեա-
ների, որոնք խուզարկում էին տներն և խանութները
և դրանով ատելի էին դառնում բնակիչներին։ Բայց
նա հասկանում էր, որ պետական հարստութեան իս-
կական հիմունքն է—երկրի արդիւնաբերական յառա-
ջադիմութիւնն, և կարծում էր թէ դրան կըհասնի կա-
ռավարական եռանդուն խնամակալութեամբ։ Երկրա-
գործութեան նպաստում էր ճահիճները ցամաքեցնելով,
գետերի ընթացքը կանոնաւորելով, գաղթականներ գրա-
ւելով, կալուածատէրերի համար աժան վարկ բանալով։
Բայց յատկապէս ջանք էր գործ դնում գործարանական
արդիւնաբերութիւնը բարձրացնելու համար. այս նա դի-
պուածում օրինակ էր առնում Կոլբերից, թէպէտ և
շատ քիչ յաջողութիւն ունէր նրա հետ համեմատելով։

Բնաւորոշ են «լուսաւորեալ միահեծանութեան» Դատարան։
առանձնայատկութիւնները, որ երևան են գալիս Ֆրի-

[1] Զինուորագրողների սիրելի միջոցներից մէկն էլ այն էր, որ
պնդակազմ երիտասարդներին հարբեցնում էին և գրամ էին տալիս
իբրև առհաւատչեայ։

գրիխ Մեծի արդարադատութեան և դատավարութեան մասին քաշած հոգսերի մէջ—հոգսեր, որոնց մէջ նա ղեկավարուում էր պարտաճանաչութեամբ և կառավարչի բարձրագոյն նշանակութեան ըմբռնումով։ Նա սիրում էր ասել, որ թագաւորը—ամենից առաջ իւր հպատակների դատաւորն է, և խստութեամբ հետևում էր, որ պրուսական դատարանները վարեն գործերը արագ և անկեղծ։ Դատարանի առաջ նա ազնուականի և անազնուի [1]), հարստի և աղքատի մէջ տարբերութիւն չէր ճանաչում, բացի դրանից—չէր ընդունում որ և է կողմնակի իշխանութիւն, նոյն իսկ իւր սեփական իշխանութեան միջամտութիւնը։ Միայն այդ մասի մէջ նա պարտք էր համարում սահմանափակել իւր կամքն ու պնդում էր օրէնքի կատար ածելու վրան, ինչ էլ որ լինէր։ Դիւանապետ Կոկցէի նախագահութեամբ մի յանձնաժողով կազմուեցաւ պրուսական իրաւունքը մշակելու և համախմբելու համար։ Այդ ժողովն հրատարակում էր իւր աշխատութիւնների արդիւնքներն և ընդունում էր ցուցումներ և դիմախօսութիւններ բոլոր հեղինակաւոր անձերից։ Այսպէս կազմուեցաւ Codex juris Friedriciani (Ֆրիդրիկեան իրաւունքի օրէնսգիրքը) այս զարմանալի իրաւաբանական յիշատակարանին իբրև հիմունք ծառայել են գերմանական իրաւական սովորութիւններն և պրուսական օրէնքները․ բայց բոլոր նիւթը մշակուել է հռովմէական իրաւունքի և ԺԸ. դարու փիլիսոփայական գաղափարների ազդեցութեան տակ։ Թագաւորն իւր բոլոր երկրներում հաւատոյ ազատութիւն էր տուել։ Նրա խօսքը․ «Թող ամէն ոք փրկուի իւր ձևով (es mg ein jeder selig werden

[1]) Առանձին ազդեցութիւն ունեցաւ Առնոլդ ջրաղացպանի գործը, որ չէր վճարել թագաւորին կապալագինը, որովհետև գաւառապետը (լանդրաթ) խլել էր նրա ջուրը։ Դատարանները պատժեցին ջրաղացպանին, բայց թագաւորն համոզուեցաւ, որ այդ արել են գաւառապետին ի հաճոյս, ուստի հրաժարեցրեց կանցլերին և մի քանի դատաւորների։

nach seiner Façon)—դառնում է Հոհենցոլեռնների մի տեսակ նշանաբան կրօնական քաղաքականութեան խնդիրների վերաբերութեամբ։

Դասակարգեր։

Մի խնդրի վերաբերութեամբ Ֆրիդրիխ Մեծը չըհամարձակուեցաւ հին կարգի վրայ ձեռք բարձրացնելու։ Դասակարգային կազմը մնաց անձեռնմխելի։ Թագաւորն ազնուականութեան մէջ պետութիւնը պաշտպանելու ոյժ էր տեսնում։ Նրա սպաներն ամենախեղճ ռոճիկներ էին ստանում և կենսաթոշակ չ'ունէին—նրանք պարտական էին իրենք իրենց կեանքի հոգսը քաշելու։ Ազնուական կալուածատէրերը կարևոր էին զօրաբանակին և այն պատճառով, որ դասակարգային պատուոյ զգացումը պէտք է պատճառ լինէր նրա ոգու բարձրանալուն—դրա համար գաւազանի կարգապահութիւնը քիչ էր։ Հաւատ ընծայելով սպաներին, թագաւորը գործ էր դնում նրանց և քաղաքացիական վարչութեան մէջ և բացարձակ կերպով նրանց գերադասում էր ոչ ազնուական պաշտօնեաներից։ Այս պատճառով էլ բոլոր կալուածատէր ազնուականների վրայ նայում էր իբրև ծառայողների վրայ, հաշիւ էր պահանջում, եթէ նրանք երկար ժամանակ մնում էին կալուածներում, արտասահման գնալու թոյլ չէր տալիս առանց յատուկ արձակուրդի։ Ազնուականութեան այսպիսի դեր յատկացնելով պետութեան մէջ, Ֆրիդրիխ Բ. չէր կարող մտքովն անգամ անցնել միւս դասակարգերը վեր բարձրացնելու մասին։ Ազնուականներին արգելուած էր ոչ ազնուականների հետ ամուսնանալ։ Զը նայելով թագաւորի մեծ ցանկութեան շինականների վիճակը բարւոքելու, շատ քիչ յաջողութիւն ունեցաւ նա, որովհետև կաշկանդուած էր իւր յարաբերութիւններով ազնուականների հետ։ Արքունի կալուածների կառավարիչները սահմանափակուեցան, մի քանի կալուածատէրեր պատժուեցան, որովհետև շատ մեծ չափով ի չարն

էին գործ դրել իրենց իշխանութիւնը, վերջապէս թագաւորն արգելեց մարդկանց հողից վռնդելը, բայց տասանորդները, կոռն ու բէգառը և զանազան հարկերը մնացին, կամայական կերպով հրամայելու և պատժելու իրաւունքը մնաց կալուածատէրերին։

Ժողովրդական լուսաւորութիւն։

Լուսաւորեալ թագաւորը գտնւում էր ֆրանսիական իմաստասէրների հետ աշխոյժ յարաբերութիւնների մէջ, ինքը գրում էր քաղաքական խորհրդածութիւններ, մի քանի բան արաւ գիմնազիոնների և համալսարանների համար, վերակազմեց գիտութեանց ճեմարանը և յայտարարեց, որ կրթութիւնը պարտաւորիչ է իւրաքանչիւր անձի համար, բայց քիչ բան արաւ ստորին դպրոցների համար։ Այս խնդրումս արտայայտւում է նրա արհամարհանքը դէպի մարդիկ, որ այս մեծ քաղաքագէտի յատկանիշն է եղել միշտ։ Նա սպասում էր հպատակներից մեքենական հնազանդութիւն, և ոչ թէ բանական ըմբռնողութիւն. այս պատճառով ժողովրդական կրթութեան խնդիրները նրա համար երկրորդական էին։

Յովսէփ Բ. Նրա բարենորոգութիւնները։

Շատ աւելի վճռաբար է գործում լուսաւորեալ միահեծանութեան մի այլ ներկայացուցիչը—Յովսէփ Բ. կայսրը։ Արդէն նրա մօր Մարիա Թերեզայի ժամանակ ընդարձակ բարեփոխութիւններ էին կատարուած ելևմտական վարչութեան, շինականների յարաբերութեանց և եկեղեցական կազմակերպութեան մէջ։ Յովսեփին այս զգուշաւոր բարեփոխութիւններն անբաւարար էին թւում, և նա ձեռնարկեց արմատական բարեփոխութեանց պետական կեանքի բոլոր մասերում։ Նա ոչընչացրեց ազնուականների արտօնեալ դիրքը դատարանի առաջ, բոլոր դասակարգերի համար ազատ մուտք բաց արաւ դէպի պաշտօնները, խլեց կալուածատէրերից դատի ու ոստիկանութեան իրաւունքը շինականների վրայ, իւր երկրների մեծագոյն մասում ոչնչացրեց ճորտութիւնը, նախկին ճորտերի վրայ հաստատեց իրենց կալուածներն և մեղմացրեց նրանց պարտականութիւնները դէպի կալուածատէրերը։ Այս միջոցների հետ միասին կայսրը ջերմեռանդութեամբ հոգս էր տանում ժողովրդական դպրոցների վրայ, դրանց մէջ մտցրեց ձրի դասաւանդութիւն, բաց արաւ ուսուցչանոցներ։ Կրօնի մէջ հաւատոյ ազատութիւն հրատարակեց և կաթոլիկների ու լութերականների իրաւունքներն հաւասարեցրեց։ Ապա փակեց բոլոր այն վանքերը, որոնց մէջ կրօնաւորները չէին նուիրուած դասատուութեան կամ հիւանդապահութեան։ Այս վանքերի ստացուածները գործ դրուեցան ծխական եկեղեցեաց բարեկարգութեան վրայ։ Հնացած հաստատութիւնները ջնջելով, քաղաքացիական հաւասարութիւն մտցնելով, Յովսէփ Բ. այն մասին էր հոգում, որ կիսաւատական աւստրիական երկրները դարձնէ միաձև պաշտօնէական (բիւրոկրատիկ) պետութիւն, որ կատարելապէս կախումն ունենայ բարձրագոյն իշխանութիւնից։ Փոխանակ պատմական ճանապարհով կազմած նահանգների, նա կամայական կերպով բաժանեց տէրութիւնը վարչական շրջանների. փոխանակ դասակարգերի և տեղական ընկերակցութիւնների, նշանակեց իւր պաշտօնեաներին։ Պատմական բոլոր առանձնայատկութիւնները նախապաշարմունք էր համարում, և օրինակ՝ հրամայեց բոլոր պաշտօնատեղերում գործ գնել բացառապէս գերմաներէն լեզուն, թէպէտև հունգարացիք, սլաւոնները, բելգիացիք խորին կերպով վիրաւորուած էին այս ոտնձգութիւնից նրանց ազգային լեզուի դէմ։

Զարմանալի չէ, որ նրա բարենորոգութիւնները բազմացեղ աւստրիական երկրներում դժգոհութիւն և մինչ իսկ դիմադրութիւն յառաջ բերին։ Բարձր դասակարգերը չէին կամենում իրենց իրաւունքներից ձեռք վեր առնել, ստորիններն էլ համակիր չէին եկեղեցական փո-

փոխութիւններին, ամէնքը գանգատուում էին կառավարութեան կամայականութեան և պատճառանքներ բարուրելու դէմ, և ամէնքը դժգոհ էին ազգային առանձնայատկութիւնների խանգարմունքից։

Հունգարիայում աւստրիական զօրաբանակի ներկայութիւնը միայն խափանեց ժողովրդի ապստամբութիւնը, իսկ Նեդերլանդական նահանգներում բռնկեց մի բացարձակ յեղափոխութիւն, որի դէմ առնել չըկարողա
1700 ցաւ կայսրը։ Նա մեռաւ (1700 թ.) վհատութեան մէջ, տեսնելով՝ որ իւր վեհանձն ծրագիրներն և ջանքերը մնացին չ'ընդունուած և չըգնահատած և պետութիւնը ձգեցին վտանգաւոր շփոթութեան մէջ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Յեղափոխութիւն.

ԳԼՈՒԽ Ա.

ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ։

Հին վիճակն և հասարակաց կարծիքը։

Ամենակատաղի յարձակումների էր ենթարկուում հին վիճակը ֆրանսիական գրականութեան մէջ. նոր գաղափարների ամենից ազդեցիկ քարոզիչները գործում էին Ֆրանսիայում։ Այս չէ կարելի բացադրել միայն ազգի զգայուն բնաւորութեամբ. հաստատուած կարգի դէմ զայրացած ընդդիմադրութիւնը ծագում էր նոյնպէս ֆրանսիական պետական և հասարակական կեանքի յատուկ պայմաններից։ Ինչպէս վերևում ցոյց տրուեցաւ, Ֆրանսիացիք աւելի էին զայրացած էին վիճակի դէմ, քան թէ գերմանացիք ու անգլիացիք, որովհետեւ իրենք գերմանացիներից առաջ էին անցել, իսկ անգլիացիներից յետ էին մնացել։ Հին կարգը Ֆրանսիայում ոչ իրական զօրութիւն ունէր, ինչպէս Գերմանիայում, ոչ էլ հնութեան յիշատակ էր, ինչպէս Անգլիայում. դա դարձել էր ամենատեսակ արտօնութիւնների գումարումն։ Իսկ կառավարութիւնը փոխանակ լուսաւորեալ միահեծանութեան ուղին բռնելու, պաշտպանում էր արտօնութիւնները։

Լուի

Լուդովիկոս ԺԴ.-ի քաղաքականութեան խորտակումից յետոյ Ֆրանսիան կառավարելն անչափ դժուա-

րացել էր։ «Մեծ թագաւորը» թողել էր իւր մատաղատի յաջորդին երեք ու կէս միլիարդ պարտք և տարեկան պակասորդ[1]) 80 միլիոն լիվրի։ Ֆրանսիայի բնակիչները սնանկացել էին, նրա գերակշռութիւնը քաղաքականութեան մէջ կորսուել էր։ Լուդովիկոս ԺԵ.-ի խնամակալ Օրլէանի դքսի կառավարութեան ժամանակ փորձեր եղան բարօրութիւնը բարձրացնելու ելևմտական շահագիտութնան[2]) միջոցով։ Վաճառականական և սեղանաւորական գործերին լաւ հմուտ Շոտլանդացի Լօուն համոզեց խնամակալին, որ շնորհիւ վարկի, այսինքն՝ հասարակութեան վստահութեան, պետութիւնը կարող է հրապարակ հանել թղթէ դրամանշաններ շատ աւելի մեծ քանակութեամբ, քան թէ մետաղէ դրամանշանների պաշար ունի, դրամանշանների բազմանալով կը դիւրանայ փոխանակութիւնն և մարդիկ կը սկսեն աւելի գնել ու վաճառել, բարօրութիւնը կը բարձրանայ, և կառավարութիւնը միջոց կը ստանայ դուրս գալու իւր դրամական նեղ վիճակից։ Լօուի հայեացքների մէջ շատ ճշմարտութիւններ կային. իրաւ, նորագոյն վաճառականութիւնը լայն չափով օգտուում է վարկից և անհնարին է առանց դրա, բայց ամենազօրաւոր պետութեան վարկն անգամ անսահման չէ, և դրամաթղթեր հրատարակելու ժամանակ պէտք է աչքի առաջ ունենալ, որ այդ թղթերն ստացողները մի օր դրանց փոխարէն մետաղէ դրամ կամ այլ իրական արժէքներ կարող են պահանջել։ Սկզբում Լօուն գործում էր զգոյշ, և նրա ձեռնարկութիւնն անսովոր յաջողութիւն ունեցաւ, նա հիմնեց թագաւորական դրամատունը (բանկ) այն փողերով, որ ձեռք բերաւ բաժնետոմսերը[3]) վաճառելով, և սկսաւ դրամաթղթեր հանել

[1]) Պակասորդ—դեֆիցիտ, տարեկան ելքի պակասորդը համեմատութեամբ մուտքի։

[2]) Շահագիտութիւն—սպեկուլացիա, ձեռնարկութիւններ, որ հիմնուած են ենթադրական հաշիւների վրայ։

[3]) Բաժնետոմս (աքսիօն, ակցիա) բաժին որ եւ է ձեռնարկութեան շահերին մասնակցելու համար։

դուրս, որոնք մետաղէ դրամանշաններին հաւասար շրջանառութիւն ունէին։ Երկու երեք տարուան մէջ դրամատունը ձեռք բերաւ բոլոր նշանաւոր վաճառականական գործերը—դրամահատութիւնը, վաճառականութիւնը գաղութների հետ, հարկերի ժողովելը։ Բաժնետոմսերը, որ հրապարակ էին հանուել 500 լիվր արժողութեամբ, վաճառուում էին 20,000 լիվրով. բոլոր հասարակութիւնը բռնուել էր բորսային տենդով. գնում և վաճառում էին բաժնետոմսերը, ձեռնարկութիւններ էին կազմակերպում։ Բայց այս վաղահաս ձեռնարկութիւններից շատն անյաջող ընթացաւ, բայց որ գլխաւորն էր, Լօուն դրամատոմսեր հանեց բոլորովին անհամապատասխան քանակութեամբ—երեք միլլիարդի։ Հասարակութիւնը սկսաւ պահանջել մետաղէ դրամ, որ փոխանակութեան համար ամենևին բաւական չէր. և Լօուն փորձեց պահանջը կանգ առնել տալ ստիպողական միջոցներով, կառավարութեան արգելք դնել տուաւ տաջոցներով, կառավարութեան արգելք դնել տուաւ տանը ոսկէ դրամ պահելու դէմ, տներում խուզարկութիւններ էր անել տալիս, որպէս զի գտնէ ոսկու պահեստները։ Բայց այս միջոցները հասարակութեան երկիւղն աւելի ևս մեծացրին. բաժնետոմսերը կորցրին իրենց արժէքը բոլորովին, ոչ-ոք թղթադրամ ընդունել չէր կամենում, և բանը վերջացաւ սնանկութեամբ։ Դրամատան սնանկութիւնը պետութեան սնանկութիւնն էր կողմնակի կերպով, որովհետև նա Լօուի գործառնութիւնները պաշտպանել էր և իւր պարտքերի մեծագոյն մասը գնել էր նրա դրամատոմսերով։ Մասնաւոր մարդկանցից շատերը, որ չէին կարողացել Լօուի բաժնետոմսերը ժամանակին վաճառել, բոլորովին աղքատացան։

Լուդովիկոս ԺԴ-ի Ֆրանսիայի վրայ բարձած բեռը վերացուեցաւ, թէպէտև ոչ այնքան վայելուչ միջոցով։ Լուդովիկոս ԺԵ.
Յամենայն դէպս պէտք էր հոգալ, որ կրկին այնպիսի

վիճակի մէջ չ՚ընկնէր պետութիւնը, ինչպիսի վիճակի
1715 մէջ գտնուեցաւ 1715 թուին։ Բայց Լուդովիկոս ԺԵ. չէր պատկանում լուսաւորեալ միապետների կարգին, որոնք, Ֆրիդրիխ Բ-ի և Յովսէփ Բ-ի նման, նուիրել էին իրենց բոլոր ոյժն ու կարողութիւնը պետութեան ծառայութեան։ Նա ապրում էր իւր անձնական զուարճութիւնների համար, դրանից վեր բան չէր ճանաչում, և իւր քաղաքականութեան հետևանքների վերաբերութեամբ անտարբեր էր, եթէ դրանք անմիջապէս չէին դիպչում իւր անձին։ Նրան են վերագրում ասացուածքս. «ինձնի՛ց յետոյ—ջրհեղեղ.» (Après moi—le déluge)։ Տէրութեան մէջ գլխաւոր դերը կատարում էին պալատական կանայք, որոնք վայելում էին թագաւորի շնորհը. Լուդովիկոս ԺԵ. ունեցել է նաև լաւ նախարարներ, բայց նրանց համար դժուար է եղել հաստատուն և հետևողական բարելաւութիւններ ձեռք բերելը։ Պետական հարկերի անհաւասար բաշխումը, պետական միջոցների յափշտակութիւնն արտօնաւորեալների ձեռքով, ելևմտական վարչութեան խառնակութիւնը շարունակուում էին։ Արտաքին քաղաքականութիւնը խայտառակ ընթացք ունէր, թէ զինուորական ու թէ դիւանագիտական անյաջողութիւնները զգալի էին փառասէր Ֆրանսիացոց համար։ Լեհական ժառանգութեան համար վարուող պատերազմում ֆրանսիական թեկնածուն յաջողութիւն չ՚ունեցաւ. իսկ աւստրիական ժառանգութեան համար վարուող պատերազմում բոլոր առաւելութիւնները Պրուսիոյ կողմն էին, Ֆրանսիան ստիպուած էր իւր ծրագիրներից հրաժարուելու. եօթնամեայ պատերազմում Ֆրանսիացիք մի շարք ամօթալի պարտութիւններ կրեցին. սրա թագաւորութեան բոլոր ժամանակում անգլիացիք գրաւում էին շարունակ ֆրանսիական գաղութներն և ջարդում ֆրանսիական նաւատորմիղը։

Ընդհանրական վերատեսուչ (ելեւմտից նախարար) Մաչօն փորձեր արաւ ելեւմտական վարչութիւնն արմատական կերպով փոխելու, նա սահմանափակեց հոգեւորականութեան իրաւունքն անշարժ կալք ձեռք բերելու, որովհետեւ հոգեւորականների ձեռքին անհագին տարածութեամբ հողեր ազատ էին հողային հարկից։ Ապա նա ներմուծեց հասոյթի հարկը, որ հաւասարապէս բոլոր դասակարգերի վրայ էր ծանրանում եւ փոխարինում էր գլխահարկին, որ ճնշում էր ստորին դասակարգերը։ Բայց Մաչոյի բարենորոգութիւնները յառաջ բերին փոթորիկ արքունիքում եւ հոգեւորականութեան մէջ, եւ թագաւորն չտապեց յետ վերցնելու դրանց եւ փոխելու յանդուգն վերանորոգչին։

Հասարակութիւնը, որ առաջ բարենորոգութիւն էր Կռիւ խորհրդարանների հետ։
սպասում թագաւորից, սկսաւ այն համոզման գալ, որ այդ կողմից սպասելիք չունի և սկսաւ քննադատել կառավարութեան գործողութիւնները։ Այս քննադատութիւնն երևում էր ի միջի այլոց և դատաւորական դասակարգի ընթացքի մէջ։ Բարձրագոյն դատարանները, այսպէս կոչուող խորհրդարանները, իրենց պաշտպանում էին կատարելապէս հին կարգին, դրանց մէջ պաշտօնները վաճառուում և գնուում էին ժառանգաբար. դատաւորական ազնուականութեան կարծիքները շատ յաճախ բոլորովին ընդդիմակաց էին պետութեան իսկական շահերին և ամենից լուսաւորեալ քաղաքական գործիչների հայեացքներին։ Բայց դատաւորական դասակարգն ինքնուրոյն էր պահում իրեն, համարձակութիւն էր ունենում դիմախօսելու կառավարութեան, ուստի և հասարակութեան համակրութիւնը նրա կողմն էր։ Լուդովիկոս ԺԵ.ի ժամանակ խորհրդարանները քանի մի անգամ օգտուեցան իրենց բողոքելու իրաւունքից։ Ամենախիստ ընդհարումն տեղի ունեցաւ այն պատճառաւ, որ բրետոնական խորհրդարանի դատախազը պատասխանութեան ենթարկեց նահանգապետին իւր իշխանութիւնն ի չարը գործ դնելու համար։ Արքունիքը բռնեց նահանգապետի կող-

մը, և Փարիզի խորհրդարանն, ուր գործը վարում էին, հրաման ստացաւ ընդհատելու այդ։ Այն ժամանակ ֆրանսիական բոլոր խորհրդարանների անդամները միաբանեցին և յայտարարեցին, որ գործերը չեն քննիլ, եթէ իրաւունք չ'ունենան ազատ գործելու։ Կանցլեր Մոպուն (արդարադատութեան նախարարը) ձեռք բերաւ յամառող դատաւորներին աքսորելու և նոր դատարաններ կազմելու հրովարտակ։ Դատակազմութեան մէջ էական բարելաւութիւններ արուեցան—վերացուեցաւ պաշտօնների վաճառումը, դատավարութիւնն աժանացուեցաւ։ Չընայելով դրան հասարակութիւնը խորհրդարանների կողմը պահեց. փաստաբաններն հրաժարուեցան գործերը վարելու նոր դատարաններում։

Լուդովիկոս ԺԶ. և Տիւրգօ։ Այս կռուի տաք ժամանակը Լուդովիկոս ԺԵ. մեռաւ։ Նրան յաջորդեց իւր որդի Լուդովիկոս ԺԶ., բարի, լաւագոյն դիտաւորութիւններով հարուստ, բայց թոյլ բնաւորութեան տէր մի մարդ։ Նրա առաջին գործն եղաւ խորհրդարանների վերականգնումը։ Նրա նախարարներից ամենից լուսաւորածը, Տիւրգօն, բողոքեց դրա դէմ ոչ միայն այն պատճառով, որ դա թագաւորի հեղինակութիւնը կոտրում էր, բայց նաև այն պատճառով, որ նախագուշակում էր, թէ դրանք պիտի հաճառով, որ նախագուշակում էր, թէ դրանք պիտի հակառակեն լուրջ բարենորոգութեանց։ Տիւրգօն փորձուած տնտեսագէտ էր և կառավարիչ, ջերմեռանդ հայրենասէր և լայն ու խիկատիպ խելքի տէր մարդ։ Նա հասկանում էր որ Ֆրանսիային անհրաժեշտ են ո՛չ միայն եղեւմտական բարեփոխութիւններ, այլ նախ ընդարձակ ծաւալով վերակազմութիւն կեանքի բոլոր մասերում։ Նրա ծրագիրները այս մասքով էին պատրաստուած և թագաւորը համակրում էր դրանց։ Տիւրգօն մտադիր էր վերջ դնելու հարկերի անհաւասար բաշխման և հողային հարկը տարածելու և արտօնաւորեալների վրայ, պարտաւորելու տանուտէրական իշխաններին աւատական տուրքերի փոխարէն միանուագ գնահատութիւն ընդունելու, ոչնչացնելու մենավաճառութիւնները, արհեստակցական կազմակերպութիւնը, ներքին մաքսերը, հացի առևտրի սահմանափակումը։ Կառավարութեան մէջ նա անհրաժեշտ էր համարում ինքնավարութեան զարգացումն և այդ նպատակով միտք ունէր տեղական գործերի վարչութիւնը յանձնել քաղաքատեսչութիւններին (մունիցիպալիտէ) — իւրաքանչիւր համայնքից ընտրուածների ժողովներին, նահանգական գործերի համար մտադրութիւն կար հրաւիրելու նահանգական տեսչութիւններ, վերջապէս մի քանի պետական խնդիրների քննութեան համար ենթադրուում էր «պետական տեսչութեան» կազմութիւնը, որի անդամներին պիտի ընտրէին նահանգական տեսչութիւնները։ Կրօնական խնդիրների վերաբերութեամբ Տիւրգօն խղճմտանքի ազատութեան և կաթոլիկաց ու բողոքականաց իրաւունքների հաւասարեցնելու կողմն էր։ Բարենորոգութիւններիս հաստատութեան և շահաւէտութեան իբրև ապահովութիւն պիտի ծառայէին ժողովրդական կրթութեան տարածման համար ձեռք առնուած միջոցները։

Գործնականապէս չափազանց դժուար երևեցաւ ենթադրեալ բարենորոգութիւնների գոնէ մի մասի իրագործումը—պալատը, հոգևորականութիւնը, խորհրդարանները զինուեցան դրանց դէմ. նոյն իսկ ժողովուրդն էլ չէր ըմբռնում դրանց օգուտն և ամենից շահաւէտ նորամուծութիւնները հանդիպում էին ամբոխի ապստամբութեան։ Սակայն Տիւրգօն հացի ազատ վաճառման, արհեստակցութիւնների և ներքին մաքսերի ջնջման հրովարտակներն ընդունել տուաւ։ Բայց դրա համար կարևոր եղաւ ստիպելու խորհրդարաններն ու զէնքով ճնշելու ռամիկների ընդդիմադրութիւնը։ Տիւրգօն պատրաստ էր ամեն բանի, բայց թագաւորն այս-

պիսի կռուի համար անընդունակ երեւեցաւ եւ թագուհու և շրջապատողների ազդեցութեան տակ հրաժարեցըրեց իւր մեծ նախարարին։

Տիւրգոյի յաջորդները։ Տիւրգոյի անկումը սակայն չէր նշանակում, թէ կառավարութիւնը հրաժարուում է ընդմիշտ ամեն տեսակ վերակազմութեան փորձերից. ելեւմուտքի խանգարմունքն և հասարակութեան մէջ պտտող գաղափարների ազդեցութիւնն այնքան մեծ էին, որ բարենորոգութիւնների ծրագիրները կրկին ու կրկին երեւան էին գալիս Տիւրգոյի յաջորդների (Նէկքերի, Կալոննի, Բրիէննի) ժամանակ։ Բայց փոխանակ մի որոշ ծրագրի և հաստատամիտ քաղաքականութեան հետեւելու, այս յաջորդները մերթ մի քայլ էին առնում դէպի յառաջ, եւ մի քայլ դէպի յետ: Երբեմն սպառնում էին արտօնաւորեալներին և ընդունում էին լուսաւորող ծրագրի արդարութիւնն, երբեմն տեղի էին տալիս արտօնաւորեալներին և փորձում էին խօսել Լուդովիկոս ԺԴ-ի լեզուով։ Արտաքին քաղաքականութեան մէջ մի խոշոր յաջողութիւն ձեռք բերուեցաւ. հիւսիսային-ամերիկական գաղութներին ցոյց տուած աջակցութիւնն Անգլիոյ դէմ պատերազմելու ժամանակ, մի տեսակ հատուցումն էր այն ստորացումներին, որ ստիպուած էին ֆրանսիացիք կրել անգլիացիներից ԺԸ. դարու ընթացքում։ Բայց հիւսիսային-ամերիկայի պատերազմի մասնակցութիւնը դարձաւ ձեռնտու չ՚եղաւ կառավարութեան համար, որովհետեւ դրա շնորհիւ, նոյն իսկ Ֆրանսիայում սաստկացաւ քաղաքական ազատութեան ձգտումը։ Ներքին վարչութեան մէջ հազիւ կառավարուում էին նորանոր պարտքերով, բայց պակասորդները տարեկան հաշուէկշիռների մէջ հետըզհետէ մեծանում էին և հասան վերջապէս տարեկան 198 միլլիոն լիվրի։ Աշկարայ էր, որ պէտք էր փոխել ելեւմտական վարչութիւնն և զրկել արտօնաւորեալներին իրենց ազատութիւններից, բայց միեւնոյն ժամանակ

կառավարութիւնն զգում էր, որ ինքը մենակ չէ կարող այս խնդիրը լուծել և որ պէտք է հասարակութիւնը հրաւիրել օգնութեան։ Տիւրգոյի ծրագիրները կրկին հանդէս եկան, թէպէտ և աղճատուած ձեւով։ Սկսեցին նահանգական եւ տեղական վարչութիւնների յեղաշրջութիւնից—այդ վարչութիւնները խըլուեցան գրեթէ կատարելապէս արքունի վերակացուներից և յանձնուեցան գաւառական շինական ժողովներին, որոնց մէջ սակայն պահպանուած էին դասակարգային տարբերութիւնները։ Այս ընդարձակ բարենորոգումն ոչ ոքի չը գոհացրեց—ոմանք դժգոհ էին նրանից, որ իրենց ստիպում էին գործելու ստորին դասակարգերի հետ միասին, միւսները պահանջում էին աւելի ընդարձակ լիազօրութիւններ։ Երբ կառավարութիւնը ձեռնարկեց հարկերի բարենորոգութեան, կատաղի ընդդիմութեան պատահեցաւ։ Փարիզի խորհրդարանը հրաժարուեցաւ թագաւորի հրովարտակն արձանագրելու, բողոքեց թագաւորի անձնական հրամանի դէմ, յայտարարեց, որ իշխանութիւնն իրաւունք չ՚ունի կամայական կերպով իրեն անհաճելի մարդոց բանդարկելու առանց դատարանի առաջ մեղադրելու[1]), վերջապէս, պահանջեց երեք դասակարգերի ընդհանուր ժողով հրաւիրել։ Խորհրդարանը զուտ յետաշրջական[2]) նպատակներ ունէր, բայց հասարակութիւնը համակրեց այդ բանին, որովհետեւ նա սկսաւ մաքառել կառավարութեան դէմ։ Թագաւորի դատարանները բարեփոխելու փորձերը վերջացան նոյնպէս ողբալի կերպով, ինչպէս մի ժամանակ Մոպուի բարենորոգութիւններն էին վերջացել. բարեփոխութիւնների հրովարտակները յետս կոչուեցան։

---

[1]) Այսպիսի երեւոյթներ շատ սովորական էին հին վիճակի ժամանակ։ Դրանք կատարուում էին «կնքուած հրամանագրերի» (lettres de cachet) զօրութեամբ։

[2]) Յետաշրջում—ռէաքսիօն—շարժում դէպի յետ։

Երեք դասակարգերի համաժողովի ընտրութիւնները։

Ընդհանուր շփոթութեան մէջ միայն մի ելք էր մնացել—գումարել ազգի ներկայացուցիչներին, և Լուդովիկոս ԺԶ. հրամայեց ընտրել *երեք դասակարգերի համաժողովի անդամներին*, որ 1614 թուից սկսուած չէր գումարուել այլ ևս։ Երեք դասակարգերի [1]) պատգամաւորներին ընտրելով՝ ժողովուրդը պէտք է պատգամներ (cahiers) կազմէր նրանց համար, որոնց մէջ պիտի արտայայտէր իր ցանկութիւնները։ Պատգամներից մեծագոյն մասը պահանջում էին մշտական ժողովրդական ներկայացուցչութիւն և արմատական հասարակական բարեփոխութիւններ, հին վիճակի զեղծումների դէմ բողոքներին կցուած էին բարեփոխութեանց ծրագիրներ, որոնք պահանջում էին քաղաքական կազմակերպութիւնը պարզեցնել և բարեփոխել ազգային սկզբունքների համաձայն։

Այսպիսի միջոցի, որպիսին էր երից դասակարգերի համագումարը, ձեռնարկելով՝ ելևմտից նախարար Նէկկերը չէր մշակել կառավարութեան համար ոչ մի գործունէութեան նախագիծ։ Նա մինչև իսկ չէր ցոյց տուել, թէ դասակարգերը միասի՞ն պիտի խորհրդածեն, թէ՞ առանձին. առանձին խորհրդածելու օգտին էր հին օրինակը, իսկ միասին խորհրդածելուն—այն հանգամանքը, որ ընտրութիւնների հրովարտակում թոյլ էր տուած երրորդ դասակարգին թուով երկու անգամ աւելի պատգամաւոր ընտրելու, քան թէ մնացած դասակարգերից ամեն մէկին։ [2]) *Խորհրդածութեան ձևի խնդիրն առաջնակարգ նշանակութիւն ունէր*, որովհետև երբ պատգամաւորները մի ժողով կազմէին, երրորդ դասակարգը միացած այն պատգամաւորների հետ, որոնք միւս դասակարգերից համաձայն էին իրանց կար-

1) Ազնուականութեան, հոգևորականութեան, երրորդ կամ միջին դասակարգի։

3) Ընտրուած էին ազնուականներից 270, հոգևորականներից 291, երրորդ դասակարգից 557 հոգի։

ծիքներին, պէտքէ ճնշող մեծամասնութիւն ստանար. ընդհակառակն, եթէ դասակարգերը բաժան բաժան խորհրդածէին, երրորդ դասակարգը միւս երկուսի դէմ անզօր կըլինէր։ Կառավարութիւնն ևս ցանկանում էր երրորդ դասակարգի գերակշռութիւնը հարկերն աչքի առաջ ունենալով, և վախենում էր քաղաքացիական դասակարգից նրա քաղաքական տրամադրութեան պատճառով—ի վերջոյ կառավարութիւնը գործը թողեց իւր սեփական ընթացքին։

Ազգային ժողով 1789 թուի։

Երբ պատգամաւորները ժողովուեցան Վերսալլում, 1789 թուի մայիսի 5-ին, ազնուականներն ու հոգևորականները կազմեցին առանձին ժողովներ, բայց երրորդ դասակարգի պատգամաւորները հրաժարուեցան խորհրդածելուց իբրև առանձին ժողով, և յայտարարեցին, որ իրենք սպասում են մնացած պատգամաւորներին ընդհանուր ժողով կազմելու համար։ Մի ամսի չափ անցկացաւ անպտուղ բանագնացութեանց մէջ, իսկ ապա երրորդ դասակարգը վճռեց այլ ևս չըսպասել և ճանաչեց ինքն իրեն իբրև ժողովրդի մեծ մասի ներկայացուցչութիւն, «ազգային ժողով»։ Միւս դասակարգերի ներկայացուցիչներին իրաւունք էր տրուում միանալու իրենց հետ։ Այսպիսի միջոցի ձեռնարկութիւնից յետոյ պալատը դուրս եկաւ իւր անգործութիւնից։ Թագաւորի հրամանով Վերսալլի պալատում ժողովի դահլիճը փակուեցաւ, բայց պատգամաւորները գումարուեցան մարզարանում[1]) և երդմամբ պարտաւորուեցան չը ցրուիլ, մինչև չը մշակեն պետական նոր կազմակերպութիւն։ Յունիսի 20-ին դրանք հրաւիրուեցան ազնուականների և հոգևորականների հետ հանդիսաւոր նիստ կազմելու, ուր թագաւորը հրամայեց իւրաքանչիւր դասակարգին առանձին առանձին խորհրդածել և չը դիպչել բարձրագոյն դասակարգերի ար-

1) Jeu de paume—մարզարան գնդախաղի։

տօնութիւններին։ Բայց թագաւորի հրամաններն ու սպառնալիքը չ'ունեցան ցանկալի հետեւանքը։ Երրորդ դասակարգը շարունակումէր նիստեր կազմել իբրեւ ազգային ժողով, և դրան էին յարում հետ զհետէ ազնուականների և հոգեւորականների պատգամաւորները։

Բաստիլի առումն։

Թագաւորը չը վստահացաւ անմիջապէս արձակել ժողովը, բայց սկսաւ Փարիզի շուրջը զօրք ժողովել, հրաժարեցրեց Նեկկերին։ Այս բաների լուրը մայրաքաղաքում սարսափելի յուզմունք յառաջ բերաւ, փողոցներում ժողովեցան քաղցած գործաւորների խմբեր, որոնք ազգային ժողովից էին սպասում իրենց վիճակի բարուքումն և ատում էին աւագներին. ամբոխին ցրուեցին զինուորներով, բայց մի քանի գնդերի մէջ նկատելի էր համակրութիւն դէպի ժողովուրդը։ Յուլիսի 14-ին ժողովրդի ահագին ամբոխը դիմեց դէպի Բաստիլ, որպէս զի ձեռք ձգէ այն տեղ ամբարուած զէնքը։ Սակաւախումբ բերդապահները կրակեցին ժողովրդի վրայ, որով մի քանի տասնեակ մարդիկ սպանուեցան, բայց այդ միայն կատաղեցրեց յարձակուողներին. սրանք մտան բերդը, բերդապահները զէնքերը վայր դրին, բայց զօրագլխներն ու մի քանի զինուորներ սպանուեցան։ Սպասելով որ զօրքը կը յարձակուի Փարիզի վրայ, փողոցները ծածկուեցան պատնէշներով, քաղաքացիք զինուեցան և կազմեցին ազգային թիկնապահների գունդը, որի գլուխն անցաւ մարքիզ Լաֆայէտը, հիւսիսային-ամերիկական պատերազմի հերոսը։ Բայց Լուդովիկոս ԺԶ. իւր կողմից չը վստահացաւ ազգամիջեան պատերազմ սկսելու։ Նա խոստացաւ արձակել զօրքը. հաստատեց ապստամբների կարգադրութիւնները Փարիզի վերաբերութեամբ և հաշտուեցաւ ազգային ժողովի հետ։

Օգոստոսի 4.

Բաստիլի առման լուրը տարածուեց արագաթռիչ կերպով ամբողջ Ֆրանսիայում և ամենուրեք նշան ե-

ղաւ նոյնպիսի ընդհարումների և հատուցումների։ Յատկապէս սպառնական էին շարժումները գիւղերում. շինականներն աւերում և այրում էին դղեակները, իսկ մի քանի դիպուածներում սպանում էին տեղի կալուածատէրերին ու նրանց գործակալներին։ Այս ընդհանուր ապստամբութիւնն ազգային ժողովի վրայ իւր ազդեցութիւնը ցոյց տուաւ մի զարմանալի տեսարանով. օգոստոսի 4-ին մի քանի երիտասարդ ազնուականներ յայտարարեցին, որ իրենք ազատակամ հրաժարուումէն այն կոռ ու բեգեառից, որ վայելումէին ի հնուց։ Այն ժամանակ ոտքի կանգնեցին արտօնաւորեալների դասակարգերի պատգամաւորներն ամեն կողմից—իւրաքանչիւր ոք շտապում էր հրաժարուելու իւր արտօնութիւններից։ Մի գիշերային նստում ջնջուեցան առանց հատուցման գնի բոլոր աւատական հարկերի տեսակները, արտօնութիւնները, մենավաճառութիւնները, որոնցով այնքան հարուստ էր հին վիճակը:

Թագաւորի Փարիզ փոխադրուիլը։

Մինչ այս կրկին վտանգ սկսաւ սպառնալ պալատի կողմից։ Միշտ տատանուող Լուդովիկոս ԺԶ. կրկին ընկաւ թագուհու ազդեցութեան տակ և զօրք գումարեց Վերսայլում. մի զինուորական հանդէսի ժամանակ թագաւորական տան ներկայութեամբ սպաները պոկեցին և ոտքի տակ տուին եռագոյն [1]) երիզներն, որոնք Բաստիլի առումից յետոյ փոխարինել էին նախկին սպիտակ կապերին։ Փարիզի բնակիչները կրկին զէնք առին, և այս անգամ ամբոխը, որի մէջ կային բազմաթիւ կանայք, չըսպասեց յարձակման, այլ ինքը դիմեց Վերսայլ, խուժեց ապարանքը և պահանջեց, որ թագաւորը Փարիզ տեղափոխուի։ Թագաւորը կրկին տեղի տուաւ, որպէս զի արիւնհեղութիւն չը լինի (5 և 6 հոկտեմբերի)։ Նա եկաւ Փարիզ եւ այսու յանձնեց իւր անձը

---

[1]) Փարիզ քաղաքի գոյներին, կարմրին եւ կապոյտին, աւելցրել էին սպիտակը—թագաւորական դրօշի գոյնը։

մայրաքաղաքի անհանգիստ բնակիչներին: Ազգային ժողովը հետևեց նրան։

Օրէնսդրութիւն սահմանադիր ժողովի։

Ժողովս կոչուում էր ոչ միայն ազգային, այլ նաև սահմանադիր,[1]) որովհետև նրա գլխաւոր գործն էր Ֆրանսիայի համար նոր սահմանադրութիւն յօրինելը։ Սա ստիպուած էր բոլորովին բացառիկ հանգամանքներում գործելու։ Պատգամաւորները, որ հրաւիրուել էին միջնադարեան դասակարգերի ժողով կազմելու, հզօր թագաւորին հպատակութիւն յայտնելու համար, յանկարծ փոխարկուել էին ազգի լիազօր ներկայացուցիչների, որոնք մերժեցին բոլոր պատմական հաստատութիւններն և ձեռնարկեցին վերակազմելու պետական կեանքը նոր ի նորոյ։ Իբրև ուղեցոյց ընտրեցին ընդհանուր մակաբերութիւններն մարդու և քաղաքացու իրաւունքների, պետութեան պարտականութեան և իշխանների միջի յարաբերութիւնների մասին. բոլոր պատմականը, որ աճել էր կամաց կամաց անցած դարերում, կասկած և թշնամութիւն էր ծնեցնում իւր դէմ. եթէ միապետական իշխանութիւնը երկար գործեց Ֆրանսիայում միահեծանութեամբ և առանց վերահսկողութեան, դրա համար ևս այժմ ժլատաբար էին չափում իրաւունքն եւ հնարաւորութեան չափ քիչ ազդեցութիւն էին յատկացնում նրան և չէին վախենում, որ դրանից կարող լինէր անկարգութիւն և բռնութիւն ծագել։ Իսկ այն դահլիճի շուրջն, ուր նիստ ունէին օրէնսդիրները, աղմկում էր Փարիզի սանձարձակ ամբոխը, որ զգացել էր իւր ոյժն, երբ նրա յարձակման առաջ ընկել էր գոռոզ Բաստիլը և ցրուել էին առանց կռուի այն զօրագնդերը, որ ժողովել էր թագաւորը։ Ժողովից ոչ շատ հեռու Ֆրանսիայի վերակազմութեան և նրա կառավարութեան խնդիրները քննուում էին առանց սահմանափակութեան

[1]) Assemblée constituante (կազմիչ կամ սահմանադիր ժողով)։

և պատասխանութեան քաղաքական ազատ ակումբներում (քլիւբ) և այդ ակումբների անդամները բնականաբար համարում էին, որ պատգամաւորները շատ դանդաղ և զգոյշ են գործում, առաջարկում էին աւելի վճռական գործողութիւններ։ Այս ակումբներից մէկը, այսպէս կոչուած ժակոբինեան ակումբը, յարաբերութիւններ հաստատեց Ֆրանսիայի բոլոր նահանգներում և ամենուրեք ճիւղեր բաց արաւ։

Մարդու և քաղաքացու իրաւունքը։

Նախ քան որ և է քաղաքական միջոցի ձեռնարկելը, ժողովն անհրաժեշտ համարեց առաջադրելու այն ընդհանուր վերացական սկզբունքները, որ ինքն համարում էր բարեկարգ քաղաքական կեանքի հիմնական պայմանը։ Երկարատև քննութիւնից յետոյ յօրինուեցաւ «մարդու և քաղաքացու իրաւանց յայտարարութիւնը։» Դրանով հրատարակուում էր, որ բոլոր մարդիկ հաւասար են և անձնապէս ազատ, որ քաղաքացիների համագումարին, այսինքն՝ ժողովրդին, է պատկանում գերագոյն իշխանութիւնը պետութեան մէջ և որ իշխանութիւնների կողմից եթէ նեղը ձգուի ժողովուրդը, իրաւունք ունի դիմադրութիւն ցոյց տալու։

Սահմանադրութիւն։ 1791 թուի։

Երբ բանն հասաւ այս վերացական սկզբունքների իրագործման, շատ դժուարութիւններ հանդէս եկան։ Բաւական կատարելութեամբ գործ դրուեցաւ հաւասարութեան սկզբունքը։ Օգոստոսի 4-ի գիշերը միանգամից ոչնչացրեց ոմանց առաւելութիւններն ու արտօնութիւնները միւսների վերաբերութեամբ, վերջը խլուեցան ազնուականներից նոյն իսկ տիտղոսները, գրօշանիշներն և այլ արտաքին նշանները։ Հաւասարութեան գաղափարը սակայն շատ սահմանափակուեցաւ քաղաքական մտքով։ Կատարեալ իրաւունքի տէր (գործօն) քաղաքացիք չը ճանաչուեցան ոչ միայն երեխայք ու կանայք, այլ նաև բոլոր կատարելահասակ տղամարդոց ազգային ժողովն ընդունակ չը համարեց

կատարեալ քաղաքացու իրաւունք ստանալու. Նա քաղաքական ընտրութիւնների մասնակցութիւնից զրկեց շատ աղքատ մարդոց—քաղաքացիներից ընտրող կարող էին լինել նրանք, որոնք տէրութեան ուղղակի հարկ էին վճարում գոնէ երեք օրուան աշխատանքի վարձագնի չափ։ Այս իսկ գործօն և կարող քաղաքացիներից էին կազմում ազգային պահակախումբը, որի գնդերը, Փարիզին հետևելով, կազմուեցան Ֆրանսիայում ամենայն տեղ։

Անձնական ազատութիւն ասելով հասկացուում էր ցանկացած կրօն դաւանելու իրաւունքը (խղճմտանքի ազատութիւն), բանաւոր և գրաւոր կերպով իւր մտքերն արտայայտելու իրաւունքը, եթէ միայն դրանից վնաս չէր հասնում միւս քաղաքացոց (խօսքի և մամուլի ազատութեան), ուր և ինչպէս էլ ցանկանան ժողովուելու մասնաւոր կամ հասարակական խնդիրները քննելու համար (ժողովներ և ընկերակցութիւններ կազմելու ազատութիւն)։

Ժողովրդական գերիշխանութեան իրագործման ժամանակ ազգային ժողովն աչքի առաջ ունէր հետևելու Մոնտեսքիէօյի գաղափարներին և ոչ Ռուսսոյի։ Բոլոր հաստատութիւնների համար գործ դրուեցաւ *ընտրական իրաւունքն* և բաժանեց այդ հաստատութիւններն երեք խմբի, համաձայն *իշխանութիւնների բաշխման* վարդապետութեան։ *Օրէնսդրական իշխանութիւնն* և դրա հետ միասին պետական գործերի ընդհանուր ղեկավարութիւնն յանձնուեցաւ ներկայացուցիչների ժողովին, որ բաղկացած էր մի խորհրդարանից[1]), որի անդամներն ընտրուում էին գործօն քաղաքացոց ձեռքով երկու տարի ժամանակով։ Գործադրական իշխանութեան գլուխ էր նշանակուած թագաւորը, որին յանձնուած էր զօրքի, նաւատորմղի և ոստիկանութեան հրամանատա-

[1]) Եւ ոչ երկուսից, ինչպէս էր Անգլիայում և Ամերիկայում։

րութիւնը, նոյնպէս և դիւանագիտական յարաբերութիւնների վարումը։ Նրան իրաւունք էր տրուում մի առ ժամանակ յետաձգելու օրէնքների հաստատութիւնն, որոնք նրան վնասակար կը թուէին, բայց եթէ ազգային ժողովն երեք անգամ միևնոյն օրէնքը սահմանէր, այն ժամանակ թագաւորի veto-ն (*վետօ*-արգելումեմ) կորցնում էր իւր ոյժը։ Իւր գործողութիւնների մէջ թագաւորը պիտի յենուէր *նախարարների* վրայ, որոնք պատասխանատու էին օրէնսդիր ժողովի առաջ, բայց վստահութիւն չ՚ունենալով դէպի ամենատեսակ միանձնեայ գլխապետութիւն, և ցանկանալով խիստ զանազանել գործադրական և օրէնսդիր իշխանութիւնները, որոշուեցաւ, որ նախարարները չեն կարող նշանակուիլ պատգամաւորների ժողովի անդամներից։ *Դատական* իշխանութիւնը պատկանում էր դատարաններին, որի անդամներն ընտրուում էին տեղական ժողովներում 6 տարով։ Տեղական և նահանգական[1]) վարչութիւնը գտնուում էր անուղղակի կերպով թագաւորի և ներքին գործոց նախարարների հսկողութեան տակ, բայց էապէս կախումն չ՚ունէր նրանցից և գըլխովին գտնուում էր պատգամաւորական ժողովի ձեռքին, որի անդամներին ընտրում էին գործօն քաղաքացիք։ *Առ հասարակ իշխանութիւնների բաժանումը գոյութիւն ունէր աւելի թղթի վրայ, քան թէ իրականութեան մէջ*. դատական և գործադրական իշխանութիւնները զուրկ էին ինքնուրոյնութիւնից և կախուած էին երեսփոխանական ժողովներից, որոնց անդամներին ընտրում էին իրաւատէր քաղաքացիք։ *Թագաւորը* միակ իշխանաւորն էր, որ զօրութիւն ունէր, առանց ընտրութեան, այլ իշխումէր պատմական աւանդութեան շնորհիւ. Նրան թողնուեցան իւր նախկին դիրքի քանի մի

[1]) Նահանգների հին պատմական բաժանումը բարձուեցաւ, և Ֆրանսիան բաժանուեցաւ 83 նահանգների (*դեպարտամենտ*).

փշուրներ—որոնք խիստ հակասումէին մնացած ամբողջ կազմակերպութեան։

Յարմար դիպուածում քաղաքացոց իշխանութիւններին ընդդիմանալու իրաւունքը դժուար էր սահմանադրութեան մէջ որոշել մանրամասնօրէն, բայց իրաւունքների յայտարարութեան մէջ դրա ձեւական ճանաչումը զուրկ չէր նշանակութիւնից, աչքի առաջ ունենալով այն սպառնական դերը, որ բռնել էր Փարիզը, և յուզուած վիճակը տաք գլուխների, որոնք բազմաթիւ էին Ֆրանսիայում։

Եկեղեցի։ Տէրութեան վերակազմութեան ժամանակ ազգային ժողովը պէտք է հանդիպէր մի զօրութեան, որ իրեն չէր համարում պարզ հասարակական հիմնարկութիւն, այլ յաւիտենական և աստուածային հաստատութիւն,—եկեղեցուն։ Պատգամաւորների մեծագոյն մասն անցել էր լուսաւորող փիլիսոփայութեան դպրոցն և չէր վարանում լսելով եկեղեցու գերբնական հաստատութիւն լինելու մասին վկայութիւններ։ Ազգային ժողովը շատ վաղ հետևեց լուսաւորեալ բռնակալների օրինակին և գրաւեց յօգուտ տէրութեան հոգեւորական միաբանութիւնների ահագին անշարժ ստացուածքը [1]։ Քանի որ այլուր հնար չը կար միջոցներ ձեռք բերելու նեղ վիճակից դուրս գալու համար, ուստի և հոգևորականութիւնն անգամ շատ թէ քիչ չափով հաշտուեցաւ այդ միջոցի հետ։ Բայց մի անգամ որ եկեղեցին դադարեց խոշոր հողատէր լինելուց, պէտք էր նրան ռոճկով ապահովել։ Այսպիսի ապահովութեան պայմանները քննելիս ազգային ժողովը սկսաւ օրէնսդիր լինել այնպիսի խնդիրներում, որ կաթոլիկ եկեղեցին ամենևին ենթակայ չէր համարում աշխարհական իշխանութեան։ Ժողովը փակեց հին թեմերը և վճռեց, որ եպիսկոպոսներին այսուհետև պիտի ընտրէին գաւառական խոր-

[1]) Դա գնահատուում էր մերձաւորապէս 3 միլլիարդ ֆրանկի։

հուրդները, իսկ քահանաներին—իրաւատէր քաղաքացիների ժողովն համայնք առ համայնք։ Բարի կաթոլիկների համար ազատամիտների այս կարգադրութիւնը յանդուգն ձեռնմխութիւն էր եկեղեցական կեանքի մէջ։ Պապը դատապարտեց այսպէս կոչուած «եկեղեցու քաղաքացիական կազմակերպութիւնը»։ Հոգևորականների ահագին բազմութիւնն հրաժարուեցաւ հնազանդելու դրան. իրենց եղբայրակիցներից բաժանուեցաւ միայն եպիսկոպոսաց և քահանայից մի սակաւանդամ խումբ, որ դրանով իսկ, կաթոլիկ եկեղեցու տեսակէտով, հերձուածողութեան մէջ ընկաւ։

Սահմանադիր ժողովի բոլոր անդամները չէին համակրում այն ուղղութեան, որ բռնել էր նրա գործունէութիւնը. դրանց մէջ կային հնութեան պաշտպաններ, որոնք ատում էին յեղափոխութիւնը, կար և մի սակաւաձեռն խմբակ ծայրայեղների, որոնք ցանկանում էին յեղափոխութեան շարունակութիւնը. նոյն իսկ մեծամասնութեան մէջ կային մարդիկ, որ համարում էին՝ թէ ժողովը չափազանց ոգևորուում է բարեմիտ դիտաւորութիւններով և վերացական ձեռնարկութիւններով. բայց բազմաթիւ պատգամաւորներից մի հանճարեղ պետական անձն միայն կատարելապէս ըմբռնում էր դրութիւնը։ Դա էր հարաւային պատգամաւոր—կոմս Միրաբօն։ Միրաբօ։ Նա աչքի ընկնող մասնակցութիւն ունեցաւ հին վիճակի տապալման մէջ և ջերմ համակրութիւն էր տածում դէպի քաղաքական ազատութիւնն և հասարակական բարենորոգումները, բայց համոզուած էր, որ ուժեղ պետական իշխանութեան դերը Ֆրանսիայում դեռ չէ աւարտուել և պէտք չէ աւարտուի, երազում էր ուժեղ և համարձակ իշխանութեան մասին, որը պէտք էր վերակազմութեան գործը առաջ տանէր փոխանակ նրան հակառակելու, և այսպիսի իշխանութեան համար հիմունք էր որոնում հին ազգային միա-

պետութեան մէջ։ Միրաբոն ոչ միայն որոշ ծրագիր ունէր, այլ նաև դրա իրագործման համար քանի մի փաստեր. շնորհիւ իւր անզուգական ճարտասանութեան ուժին, նա ազգային ժողովի մէջ ամենից ազդեցիկ մարդըն էր, իսկ արքունիքի հետ կարողացաւ գաղտնի կապեր հաստատել և դառնալ թագաւորի խորհրդականներից մին։ Այսուամենայնիւ կարող չեղաւ գործին լաւագոյն ուղղութիւն տալ. Նա իւր ոյժը գործ դնելու յենակէտ չը գտաւ: Ազգային ժողովը հաւատ չէր ընծայում նրա փառասիրութեան և ճարպիկութեան. Թագաւորի մերձաւորները չէին կարողանում ներել Միրաբոյին նրա յեղափոխական անցեալը, նայում էին նրա վրայ ինչպէս մի բախդախնդրի, բայց որ գլխաւորն է, չէին կարողանում ըմբռնել այն գաղափարը, որ նա քարոզում էր։ Այս սովորականից դուրս մարդու ամբողջ գործունէութիւնը յանգում էր ծրագիրներ կազմելու, որոնց չէր վճռուած իրականանալու, առանձին խնդիրներ քննելու, փայլուն ճառեր խօսելու։ Նա մեռաւ 1791 թ. ապրիլ ամսին յանկարծական և կարճատև հիւանդութիւնից յետոյ, ճիշդ այն ժամանակ, երբ Ֆրանսիային սկսան սպառնալ շփոթութիւններ և պատերազմեր։

Յեղափոխութիւնն և Եւրոպան. Հոգևորականութիւնն և ջերմեռանդ կաթոլիկները կատաղել էին եկեղեցու քաղաքացիական կազմակերպութեան դէմ, ազնուականներից շատերը փախել էին արտասահման, օտար արքունիքների առաջ միջնորդում էին զօրք ուղարկել Ֆրանսիական «ապստամբութիւնը» ճնշելու համար և իրենք կազմում էին փոքրաթիւ զօրաբանակ Տրիերի եպիսկոպոսի երկրում, Ֆրանսիայի սահմանի վրայ. միւս կողմից, յեղաշրջումը մի շարք վէճեր յարոյց Ֆրանսիայի և իւր հարևանների միջև. արևելեան նահանգներում [1]) աւատական իրաւունքի

[1]) Էլզասում, Լոթրինգիայում, Ֆրանշ-Կոնտէում։

վերացումը վիրաւորեց գերմանական իշխաններին, որոնք այնտեղերում հողեր ունէին. Աւենիօնում, որ դեռ ևս պապին էր պատկանում, բնակիչները վռնդեցին պապական պաշտօնեաներին, և քաղաքը միացուեցաւ Ֆրանսիային. ազգային ժողովն աջակցում էր կողմնակի Բելգիայում աւստրիական կառավարութեան դէմ բռնկած ապստամբութեան։ Խնդիրը սակայն չէր հասունացել բացարձակ ընդհարման համար։ Այդ ժամանակ կուտակուեցան շատ այլ խնդիրներ, որոնք լարուած ուշադրութիւն էին պահանջում եւրոպական դիւանագէտների կողմից: Յովսէփ Բ. մեռաւ, թողնելով աւստրիական երկրները մեծ անկարգութեան մէջ, և նրա յաջորդի և եղբօր Լէօպոլդի գլխաւոր հոգսն էր դարձել Յովսէփի սխալներն ուղղելը, առանց զոհելու էական բարենորոգումները—հաւատի ազատութիւնն և ճորտութեան վերացումը։ Նրան յաջողուեց խաղաղացնել իւր երկրների բնակիչների մեծամասնութիւնը զիջումներ անելով նրանց ազգային սովորութեանց, իսկ Բելգիան, նրա զօրքերը նորից գրաւեցին։ Իւր եղբօր թողած անհաճոյ ժառանգութիւններից մէկն էր և տաճկական պատերազմը, որին չէր համակրում Լէօպոլդը, որովհետև դա զօրացնում էր Ռուսիային ի վնաս Տաճկաստանի—նա շտապեց խաղաղութեան դաշը կապել տաճիկների հետ ձեռնտու պայմաններով։ Առհասարակ սա ցոյց տուաւ իւր յաջողակ դիւանագէտ լինելն և արագութեամբ բարձրացրեց Աւստրիոյ նշանակութիւնն Եւրոպայում, բայց ամենևին չէր ձգտում զինուորական քաջագործութեանց։

Վեննայի հետ միասին եւրոպական քաղաքականութեան նշանաւոր կենդրոն էր Պետերբուրգը։ Թէպէտև Կատարինէ Բ. խիստ դատապարտել էր յեղափոխութիւնը, բայց ինքն զբաղուած էր երեք խնդրով, որոնք անմիջապէս Ռուսիային էին վերաբերում. Նա ստիպուած

էր միաժամանակ վարել շուեդական ու տաճկական
պատերազմները եւ, բացի դրանից, հետեւել իրո-
ղութիւններին Լեհաստանում: Գուստաւ Գ-ից նա հեշ-
տութեամբ ազատուեց Վերելի դաշինքով, Տաճկաստա-
նում Սուվորովն ու Ռէպնինը շարունակում էին փառա-
ւոր յաղթանակներ տանել, չընայելով՝ որ ռուսներին
միայնակ թողին իրենց դաշնակից աւստրիացիք։ Դրա
փոխարէն Լեհաստանում գործերը ստանում էին այն-
պիսի ընթացք, որ օգտակար չէին այն պետութեանց
համար, որոնք ձեռնարկել էին առաջին բաժանումն և
սովոր էին օգտուելու Ռէչ Պոսպոլիտայի (լեհական պե-
տութեան) չփոխութիւններից, այնտեղ իրենց ազդեցու-
թիւնը գործ դնելու համար։ Լեհացիք, վերջապէս,
սկսել էին գիտակցութեան գալ, որ իրենց պէտք միա-
բանել եւ հաստատել պետական իշխանութիւնը։ Վար-
1791 շաւայի աւագաժողովում 1791 թուի մայիսի 3-ին փոխուե-
ցաւ հին անիշխանական կազմը։ Այսպէս կոչուած մայիսի
3-ի սահմանադրութեամբ թագը ժառանգական յայտա-
րարուեցաւ [1]), liberum veto-ն (ազատ արգելման իրա-
ւունքը) ջնջուեցաւ, շլեախտական աւագաժողովին փո-
խարինեց պատգամաւորների ժողովը, թագաւորի և նա-
խարարների իրաւունքներն ընդլայնացուեցան։

Այսպիսով պարագաներն անյարմար էին պետու-
թեանց ֆրանսիական գործերին միջամուխ լինելու հա-
մար։ Իսկ մինչդեռ ոչ միայն փախստականներին, այլ
Լուդովիկոս ԺԶ. եւս իւր բոլոր յոյսը դրել էր այդ
միջամխութեան վրայ։

Լուդովիկոս ԺԶ-ի փախուստը. Այն գրաւոր խորհրդների մէջ, որ Միրաբոն տալիս էր
Թագաւորին, յաճախ քննում էր Թագաւորի Փարիզից փա-
խուստեան եւ ազգային ժողովի հետ զինուորական ուժով կը-
ռուելու խնդիրները. Նա այս երկու միջոցներն էլ ցանկալի եւ
իրագործելի էր համարում, որովհետեւ միայն այդ ձեւով կա-

[1]) Ստանիսլաւ Պոնեատովսկու մահուանից յետոյ թագը պիտի
անցնէր սաքսոնական տան։

րելի էր իջնել այն զառիվայրից, որի վրայով Թագաւորական
իշխանութիւնը գլորւում էր դէպի կատարեալ ջնջումը։ Բայց
Միրաբոն ամենաջերմ կերպով բողոքում էր եւ ի փորձի
դէմ օտարերկրեայ արշաւանքով օգնելու գործին. Նա համո-
զուած էր, որ դա յառաջ կը բերէ անմիջապէս հայրենասիրա-
կան զգացումների բռնկումն եւ նրանց, որոնք դիմել էին
օտարներին, դաւաճանների կարգը կը դնէ։ Բայց արքունի-
քում չէին հասկանում այդ մակաբերութիւնները։

Թագաւորն ու թագուհին 1791 թուի ամառը փորձ
արին Փարիզից փախչելու զօրաբանակը, որ գտնում էր
Լօթրինգիայում, որպէս զի ապա ձեռք բերեն, թագու-
հու եղբօր, Լէօպոլդ կայսեր օգնութիւնն և պատե-
րազմ սկսեն ազգային ժողովի դէմ։ Սակայն Վարեն-
նում պահեցին այն կառքը, որի մէջ գնում էին նը-
րանք՝ և փախստականները ստիպուեցան դառնալ Փա-
րիզ խայտառակ կերպով, պահակախմբի ուղեկցութեամբ։
Սրանից յետոյ դրութիւնն աւելի եւս անտանելի դար-
ձաւ։ Թագը պահպանելու համար, Լուդովիկոս ԺԶ.
հաստատեց այն սահմանադրութիւնը, որ մշակել էր
ազգային ժողովը, բայց ամենի համար պարզ էր, որ
նա ատում էր այդ սահմանադրութիւնը:

Ճշմարիտ է, որ նոյն իսկ սահմանադիր ժողովի
ձախակողմեանները պետական խնդիրների վրայ այժմ
այլ աչքով էին նայում, քան թէ 1789 թուին. Ժողովը 1789
նկատեց վտանգը, որ սպառնում էր գրգռուած ամբո-
խից, բայց կաշկանդուած էր իւր նախընթաց գործու-
նէութեամբ, և դրա հետ միասին Վարեննի փախստից
յետոյ մտածել անգամ կարելի չէր թագաւորի իշխա-
նութիւնը զօրացնելու մասին։ Մի քանի փոփոխութիւն-
ներ, որ արուեցան սահմանադրութեան մէջ վերջնա-
կան խմբագրութեան ժամանակ, չափաւոր ազատամիտ-
ների ակմբի [1]) հիմնումը, վերջապէս—Փարիզի ամբոխի

[1]) Այսպէս կոչուած «1789 թ. ակումբ», որ ապա անուանուեց
«ֆէլեաններն ակումբ», որովհետեւ դա ժողովւում էր ջնջուած բերըն-
հարդականների կամ ֆէլեանների վանքում։

պատուհասումը [1]) Լաֆայէտի առաջնորդութեամբ ազգային պահակախմբի ձեռքով, որովհետև դա պահանջում էր թագաւորական պատուի վերացումը,—այս ամէնը ցոյց տուին միմիայն այն հակադրութիւնը, որ կար գործօն քաղաքացոց—բուրժուազիայի, և կրաւորական քաղաքացոց—գործաւորների, միջև, որովհետև սրանք յատկապէս վնասուում էին գործերի կանգ առնելուց և թանգութիւնից ու անհամբերութեամբ սպասում էին իրենց հերթին թէ իշխանութիւն և թէ կենսական բարիք ձեռք բերելու։

Օրէնսդիր ժողով։ Այս աղմկալից ժամանակ սահմանադիր ժողովն աւարտեց իւր գործն ու ցրուեցաւ, բայց դեռ ևս ցրուելուց առաջ մի որոշումն կայացրեց, որ լրացրեց անյաջող միջոցների շարքը, որոնք այնքան վնասել էին ազգային ժողովի գործին։ Ծայրաէլների ակմբի առաջնորդներից մէկի առաջարկութեամբ վճռուեցաւ, որ ժողովի պատգամաւորները կարող էին կրկին ընտրուել միայն երբ այնքան ժամանակ անցած կը լինէր, որչափ ժամանակ յաջորդ ժողովը պիտի տևէր, այնպէս որ սահմանադիր ժողովի անդամներից ոչ մէկը չէր կարող անդամ լինել առաջին օրէնսդիր ժողովում, ուստի և այդ ժողովում Ֆրանսիայի ներկայացուցիչներ պիտի լինէին մեծ մասով երկրորդական կարգի կամ շատ երիտասարդ մարդիկ և յամենայն դէպս անփորձներ [2]). Ամենամեծ նշանակութիւնը ստացաւ պատգամաւորների այն խումբը, որոնց կոչումէին ժիրոնդիստներ, որովհետև դրանց առաջնորդում էին մի քանի նշանաւոր ճառախօսներ ժիրոնդի գաւառից [3]) հարաւարևմտեան Ֆրան-

---

[1]) Մարսի դաշտի կոտորածը 1791 Թ. 17-ի յունիսի։

[2]) Այս զարմանալի որոշումը կայացաւ ռամկավարական սխալ հասկացուած հաւասարութեան գաղափարի թելադրութեամբ. դրա նպատակն էր, որ պատգամաւորները շատ երկար ժամանակ տէր չը լինէին լիազօրութեան, որ նրանց բարձրացնում էր սովորական քաղաքացիներից,

[3]) Ամենից աչքի ընկնողներն էին Վերնիօ, Բրիսսօ, Կոնդորսէօ

սիայում)։ Դրանք ազնիւ և անգործնական մարդիկ էին, որոնք երազում էին Ֆրանսիայում ոչ միայն հասարակապետական հաստատութիւններ, այլ նաև յոյների և հռովմէացոց հասարակապետական առաքինութիւնները մտցնելու։ Միևնոյն ժամանակ աւելի և աւելի զօրաւոր կերպիւ երևան էին գալիս ակումբների ազդեցութիւնն, որոնց մէջ գլխաւոր առաջնորդներն էին խստասիրտ, մոլեռանդ Ռոբեսպիերն ու տաղանդաւոր, բայց անբարոյական Դանտոնը։

Օրէնսդիր ժողովի գլխաւոր խնդիրն էր մի կերպ Պատերազմ վերջ տալ կռուին, որ սկսել էր սահմանադիր ժողովը. հոգևորականների և փախստականների հետ։ Այդ խնդիրներին վերաբերեալ զիջումների մասին խօսք անգամ կարող չէր լինել. ժողովն, ընդհակառակն ձեռնարկեց ծայրայեղ միջոցների։ Նա արքունիք գրաւեց փախստականների ստացուածքն և վճռեց Ֆրանսիայից աքսորել այն հոգևորականներին, որոնք չէին երդուել եկեղեցու քաղաքացիական կազմակերպութիւնը պահպանելու, եթէ դրանց աքսորումը պահանջէին գոնէ 20 քաղաքացիք։ Նոյն ժամանակ վճռուեցաւ պնդելու, որ գերմանական իշխանները ձեռք վերցնեն փախստականներին պաշտպանելուց։ Մինչդեռ Ֆրանսիայում իրերի բռնած ընթացքն աւելի և աւելի գրգռում էր օտար արքունիքների զայրոյթը, Լէօպոլդ կայսրն էլ ժամանակն հասած համարեց ֆրանսիացոց վրայ ճնշումն գործելու, որպէս զի ստիպի նրանց կանգ առնելու յեղափոխական գործողութիւնների մէջ։ Նա հրատարակեց մի քանի սպառնական հրովարտակներ և սկսեց ֆրանսիական գործերի քննութեան համար պետութիւնների համաժողովի մասին բանակցութիւններ։ Բայց այս դիպուածում նրբամիտ դիւանագէտը սխալուեցաւ—սպառնալիքները Ֆրանսիացոց ո՛չ միայն չը վախեցրին, այլ, ընդհակառակն, նրանց կողմից վճռական դի-

մադրութեան հանդիպեցին, բանը պատերազմի հասաւ, որ Լէօպոլդն ամենևին չէր ցանկանում։ Նա պատերազմի յայտարարութիւնից մի քանի շաբաթ առաջ յանկարծակի մեռաւ, և Ֆրանսիայի դէմ արշաւանք սկսելու գործը բաժին ընկաւ նրա երիտասարդ յաջորդ, Ֆրանց Բ-ին և Պրուսիոյ թագաւոր Ֆրիդրիխ Վիլհելմ Բ-ին։

Միապետութեան անկումը.

Փոխանակ Լուդովիկոս ԺԶ-ին ազատելու, գերմանական զօրքի արշաւանքը վերջնական կերպով կորստի մատնեց նրան։ Նա կարող չեղաւ իր վրայից վերցնելու կասկածը, որ ինքը, Ֆրանսիական զօրքի բարձրագոյն հրամանատարն, յարաբերութիւն ունի թշնամու հետ և ցանկանում է նրա յաղթութիւնը։ Երբ պատերազմական գործողութեանց սկիզբը ցոյց տուաւ բանակի անպիտանութիւնը, որ բոլորովին քայքայուած էր յեղափոխութեամբ, կորցրել էր իւր հին ազնուական կազմն ու ձեռք չէր բերել ռամկավարականը—հասարակաց կարծիքը սկսաւ ամեն բանի մէջ մեղադրել թագաւորին և նրա բարեկամներին։ Նա ոչ միայն կարող չեղաւ մրտքերն հանգստացնելու, այլ, ընդհակառակն, աւելի ևս գրգռեց նրանց դիմադրութեամբ, որ ցոյց էր տալիս օրէնսդիր ժողովի վճիռներին՝ հոգևորականներին և փախստականներին վերաբերեալ գործերում։ Պրուսական գլխաւոր հրամանատարի հրովարտակի լուրն եղաւ վերջին հարուածը։ Զինուած գործաւորների ամբոխն
1792 1792 թ. օգոստոսի 10-ին դիմեց արուարձաններից դէպի Թիւյլրիի պալատը. ապստամբները ցրուեցին քաղաքային խորհուրդն և փոխարինեցին նորով, իրենց ընտրութեամբ. ազգային պահակախումբը գումարուեց պալատի շուրջը, բայց չը գիտէր իւր անելիքը, և թոյլ տուաւ ապստամբներին գործելու իրենց կամեցածը. զուիցերական թիկնապահների գունդը յետ մղեց առաջին յարձակումն, բայց թագաւորն ընդունակ չէր իր անձը պաշտպանելու զէնքով—նա պահուեցաւ իւր ըն-

տանեօք օրէնսդիր ժողովի շինութեան մէջ և հրամայեց զուիցերացոց թողնել պալատը. յետ քաշուելու ժամանակ ամբոխը ջարդեց նրանց։ Օրէնսդիր ժողովին մնաց միայն վաւերացնել կատարուած իրողութիւնները. նա կարգադրեց Լուդովիկոս ԺԶ-ին բանտարկել, յայտարարեց, որ միապետութիւնը ջնջուած է Ֆրանսիայում, և հրաւիրեց ժողովրդին ընտրելու ազգային սահմանադիր ժողով նոր սահմանադրութիւն կազմելու համար։

ԳԼՈՒԽ Ե.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ.

Կռիւ դաշնակցութեան դէմ.

Գերմանական բանակների յարձակումը Ֆրանսիան այնպիսի անկարգութեան և շփոթութեան մէջ գտաւ, որ, ըստ երևոյթին, դաշնակիցներին մնում էր միայն յառաջադիմել, ֆրանսիական զօրքը ցրուելու, Փարիզը գրաւելու և յեղափոխականներին պատժելու համար։ Այն բանակներում, որ պրուսական և աւստրիական զօրքերի դէմ էին հանուած, ոչ կարգապահութիւն կար և ոչ վստահութիւն դէպի զօրագլուխները։ Լաֆայէտը, այս բանակներից մէկի հրամանատարը, Օգոստոսի 10-ի լուրն առնելով՝ փորձեց Փարիզ առաջնորդելու զօրքն և երբ նրա զինուորները չը հնազանդեցին, փախաւ Գերմանիա։ Լուծուեցաւ 1791 թուին հաստա- 1791
տուած կազմակերպութիւնը, թագաւորը բանտարկուած էր, նախարարներն անզօր, Փարիզը զինուած ամբոխի և նրանից կարգուած քաղաքային խորհրդի ձեռքին էր, ամբողջ Ֆրանսիայում բազմաթիւ դժգոհներ կային, որոնց յեղափոխութիւնն որ և է կերպով վնասել էր։ Այս դժուարին ժամանակում հանդէս եկան մարդկային բնութեան ամենից ազնիւ և ամենից ստոր կողմերը.

հայրենասիրութիւնն ոյժ տուաւ ֆրանսիացոց կռուելու ամբողջ Եւրոպայի դէմ, իսկ կազմակերպութիւնը, որ կարեւոր էր կռուի համար, ստեղծուեցաւ սարսափի (տէրրէօր) միջոցով, տմարդի կերպով հասարակութեան բոլոր անյարմար տարրերի ջնջմամբ և հեռացմամբ։ Թէ մէկ և թէ միւս ուղղութեամբ ճանապարհ ցոյց տուաւ Դանտոնը։ Սա սպառազինութեան ոգին էր, որ տենդային եռանդով էր կատարուում. քաղաքացիք ու գիւղացիք միահոգի պատրաստ էին պաշտպան կանգնելու հայրենիքին ու յեղափոխութեան արգասիքներին. կամաւորների գնդեր էին կազմուում ամենուրեք և շուտափոյթ օգնութեան էին ուղարկուում զօրքին։ Ոգևորութիւնն ու նոր ոյժերի օգնութեան հասնելը, նոյնպէս և դաշնակիցների անմիաբան գործունէութիւնը Ֆրանսիան ազատեց։ Պրուսացիք յետ մղուեցան Վալմիի մօտ. աւստրիացիք պարտուեցան Ժէմմապում. ֆրանսիական գնդերն անցան սահմանը, գրաւեցին Բելգիան և Հռենոսի միջին ընթացքի ափերի քաղաքները։

Սեպտեմբերի կոտորածը։ Բայց հայրենասիրական ոգևորութեան հետ միասին արտայայտուում էին և այլ զգացումներ. կասկածանք ընդդէմ ամէնքի, որ վնաս էին կրել յեղափոխութիւնից, ատելութիւն ստորին դասակարգերի ընդդէմ վերինների, վրէժխնդրութեան ծարաւ ու շահասիրութիւն։ Դանտոնն անհրաժեշտ համարեց այս բնազդումներին ընթացք տալ։ Իբրև արդարադատութեան նախարար նա իրաւունք խնդրեց օրէնսդիր ժողովեց խուզարկելու փարիզեցոց և բանդարկելու այն քահանայից, որոնք չէին երդուել, փախստականների ազգականներին և առհասարակ կասկածելի անձանց։ Բանդերը լցուեցան թշուառներով, որոնց միակ յանցանքն այն էր, որ իրենք կամ իրենց մերձաւորները վնաս էին կրել յեղափոխութիւնից։ Սեպտեմբերի 2-ին սկսաւ բանդերի մաքրումը. չարագործների մի խմբակ, ժողովուած

հասարակութեան տականքներից, ընդամէնը 200 հոգի, ներս խուժեցին բանդերն ու սկսան կոտորել ամէն «դաւաճաններին» և «ազնուականներին», առանց խտրութեան սեռի և հասակի,[1]) այպանելով իրենց զոհերին. հարբեցողութեան շուայտութիւններ անելով սպանութիւնների ընդմիջման ժամանակ։ Կոտորածները շարունակուեցան երեք օր (2. 3 և 4 սեպտեմբերի) իշխանութիւնների և ազգային պահակախմբի աչքի առաջ. Փարիզում սպանեցին 1500 հոգի, և ապա այս մարդասպաններն ուղևորուեցան նահանգներն ու սկսան իրենց գործը շարունակել։ Դանտոնը կատարուած գործն արդարացրեց խօսքերով. — „Ժողովուրդը հատուցումն տուաւ,“ — թէպէտև ժողովուրդն այս բանի մէջ մասը չ՛ունէր։

«Սեպտեմբերի օրերից» յետոյ շուտով կազմուեցաւ համախմբութիւն կամ կոնվենս։ Համախումբ ժողով կամ կոնվենս։ Ժիրոնդիստները, որ օրէնսդիր ժողովում ձախակողմն էին կազմում, համախմբութեան մէջ աջ կողմը նստան։ Սրանք հաւատարիմ էին մնացել անձնական կատարեալ ազատութեան և ժողովրդական գերիշխանութեան գերակայ գաղափարներին (իդէալ), առաջուան պէս երկիւղ էին կրում պետութիւնն սպառազինելու ուժով և իշխանութիւնով, բայց դրանք շատ աւելի օրինաւոր մարդիկ էին, քան որ կարողանային համակրել կոտորածներին և յափշտակութիւններին, և անմիջապէս կռիւ սկսան քաղաքային խորհրդի, ժաքոբէնների խմբի և Դանտոնի դէմ։ Ձախակողմը, վերին նստարանների վրայ, նստած էին Դանտոնի և Ռոբեսպիէրի շուրջը «լեռնականները» (մօտանեար), որոնք Ժիրոնդիստներից յետ չէին իրենց ծայրայեղ հասարակապետական տեսութիւններով, բայց որ գըլխաւորնէ, պաշտպան էին յեղափոխական գործողութիւնների, այլ կերպով մտածողների վրայ բռնանալու,

[1]) Բանդերից մէկում 43 մանուկ խողխողեցին։

վնասուածներին հալածելուն, հասարակութեանը սարսափահար անելուն։ Միջավայրում նստած էին «հարթութեան» կամ «ճահճի» պատգամաւորները, որ պատկանում էին այն անվճռական հասարակութեան, որին հարկ էր սարսափահար անել և երկիւղով յառաջ մղել։

Թագաւորի դատապարտութիւնը՝

Ուղղութիւնների և նրանց ուժի չափը փորձելու յարմար առիթ էր թագաւորի վիճակի քննութիւնը։ Ժիրոնդիստներն անզգուշութիւն էին ունեցել առաջարկելու, որ համախումբ ժողովը նրա դատը տեսնէ։ Դատական քննութեան համար իրաւաբանական հիմունք չը կար, որովհետև, 1791 թ, սահմանադրութեամբ, թագաւորը պատասխանատուութեան ենթակայ չէր իւր գործողութիւնների համար, դատը նրան անմեղ զոհի վիճակի մէջ էր դնում և առիթ էր տալիս նրան ցոյց տալու իւր ոգու վերին աստիճանի հաստատամտութիւնն ու ազնուութիւնը։ Իսկ քաղաքական տեսակէտով թագաւորի գլխին բացուած դատը „լեռնականների“ համար ձեռնտու էր, որ օգուտ քաղեցին դրանից, որպէսզի այդ փայլուն օրինակով ցոյց տան իրենց անհաշտելի թշնամութիւնը հին Ֆրանսիայի դէմ և իւրեանց վճռականութիւնը ջնջելու այդ։ Բոլոր դատավարութեան ընթացքում Լուդովիկոս ԺԶ. պահում էր իրեն համեստ արժանապատուութեամբ. նա գտաւ անձնազոհ փաստաբաններ, որոնք ճարտարութեամբ և եռանդով պաշտպանեցին նրան։ Երբ բանն հասաւ դատավճռին, արտայայտուեցաւ Ժիրոնդի կատարեալ կեղծ դրութիւնը—նա չէր կամենում դատապարտել թագաւորին և չէր վստահանում բացարձակ կերպով պաշտպանել նրան։ Թագաւորը գրեթէ միաձայն յանցաւոր ճանաչուեցաւ, բայց մահուան պատժի համար ձայն տուաւ միայն չնչին մեծամասնութիւնը. 1793 թ. 21-ին յունուարի Լուդովիկոս ԺԶ. գլխատուեցաւ։ Նրա վերջին խօսքերն էին. «Տէր Աստուած, որ իմ արիւնս յօգուտ Ֆրանսիայի թափուած լինէր։»

Ժիրոնդի անկումը՝

Թագաւորի գլխատումից յետոյ կռիւը Ժիրոնդիստների և լեռնականների միջև աւելի ևս կատաղի կերպարանք ստացաւ։ Ժիրոնդիստներն աշխատում էին ինչ էլ որ լինի վերջ դնել բռնութեանց և պատժել յանցաւորներին։ Լեռնականների մէջ նկատւում էր երկպառակութիւն։ Դանտոնը հակառակ չէր Ժիրոնդիստներին մերձենալու, բայց սեպտեմբերի կոտորածը դրանց մէջ անդունդ էր ձևացրել, և Ժերոնդիստները զզուանքով մերժեցին նրան։ Լեռնականների մեծ մասը խմբուեցաւ Ռոբեսպիերի շուրջն և պահանջում էր սարսափի միջոցների շարունակութիւնը։ Նրա ձեռքին էին Ժաքոբէնները ակումբն ու Փարիզու սինլիքորը (սան-ֆիւլոտ անվարդիկ)։ Ժերոնդիստներն ևս ստիպուեցան զէնք որոնելու կռուի համար և կարծեցին, որ իրենց նեցուկ կարող է լինել գաւառական հասարակութիւնը։ Բայց դժուարին էր Փարիզում կռուել Փարիզի դէմ. Ժերոնդիստների գործունէութիւնը գաւառներում առիթ տուաւ նրանց մեղադրելու իբր դաշնակցականներ, իբրև թէ նրանք ցանկանում էին Ֆրանսիացոց բաժան բաժան անել, սակայն այս չ՚ընձեռեց նրանց անկախ դրութիւն։ Մահաւիթ հարուած տրուեցաւ Ժերոնդիստներին նոյն արտաքին իրողութիւնների ընթացքով, որը կորստի էր մատնել թագաւորական իշխանութիւնը։ Հասարակապետութեան զօրաբանակների յաջողութիւններն անհաստատ երևեցան. գնդերի մէջ դեռ չէր մշակուել կարգապահութիւն, չը կար բաւական տոկունութիւն։ Բացի դրանից, փոխանակ Աւստրիոյ և Պրուսիոյ դէմ միայն կռուելու ստիպուած եղան գրեթէ ամբողջ Եւրոպայի հետ գործ ունենալ։ Դեռ 1792 թուին համախումբ ժո- 1792
ղովն յայտարարել էր, որ հասարակապետութիւնը պատերազմ է մղում բոլոր ազգերի ազատութեան համար, և դրանով բոլոր կազմակերպուած պետութիւնների

թշնամութիւնը շահեցաւ. Լուդովիկոս ԺԶ-ի գլխատումը մենամարտութեան հրաւէր էր ոչ միայն Ֆրանսիայում գտնուող հին կարգի պաշտպաններին, այլ նաև բոլոր եւրոպական պետերին։ Գերմանական մանր պետութիւններն—այսպէս կոչուած կայսրութիւնը, իտալական տէրութիւնները, Սպանիան, Անգլիան, հետըզհետէ պատերազմի դուրս եկան Ֆրանսիայի դէմ։ Հասարակապետութեան զօրքերն ստիպուեցան ամենուրեք յետս նահանջել. գլխաւոր զօրաբանակը, որ գրաւել էր Բելգիան, ջարդուեց աւստրիացիներից։ Այս պարագա-
1792 ների մէջ կրկնուեցան մի քանի փոփոխութեամբ 1792
թուի դէպքերը։ Համախումբ ժողովը պատուիրեց 300,000 զօրք ժողովել հայրենիքը պաշտպանելու համար, ծայրայեղ յեղափոխականները ձեռք ձգեցին դիկտատորութիւնը (բացարձակ իշխանութիւնն) եւ այդ իշխանութեան իբրեւ նեցուկ կազմակերպեցին սարսափը։
1793 Մայիսի վերջին և յունիսի սկզբումը 1793 թ. Փարիզի
ազգային պահակախումբը, ուր այժմ իշխող էին անվարդիկները (սան-կիւլոտ), ամբոխի սինլիքորների հետ միասին խուժեցին երկու անգամ համախումբ ժողովի դահլիճը, և աղմկով պահանջեցին ժիրոնդիստներին արձակել համախումբ ժողովից և դատի ենթարկել նրանց։ Ժողովին այլ ելք չըմնաց, քան թէ տեղի տալը. 34 գլխաւոր ժիրոնդիստներին արձակեցին պատգամաւորների թուից, և նրանցից որոնք չէին կարողացել փախչել, դատի մատնուեցան, այսինքն՝ ստոյգ կորստեան դատապարտուեցան։ Մի երիտասարդ աղջիկ, Շառլոտտա Կորդէն, ոգևորուած երկրպագու ժիրոնդիստների գաղափարների, դաշոյնով սպանեց Մարատին, մի կիսախելացնոր և արիւնարբու հրապարակախօսի, որ անուն էր հանել իւր բռնութիւնների և յափշտակութիւնների քարոզներով։

Նորմանդիայում, Բորդոյում, Լիոնում, Մարսելում, Տուլոնում ծագեցան ապստամբութիւններ Փարիզի բռնակալների ընդդէմ։ Վանդէում [1]) բնակիչներն աւելի վաղ էին ոտքի կանգնել, նոր զինուորակոչից յետոյ. վանդէացոց գլուխ էին կանգնած տեղական ազնուականներն ու հոգևորականութիւնը, Բրէտայնում նոյնպէս սկսել էր թագաւորականների շարժումը։ Բայց այս բոլոր խռովութիւնները միայն գրգռում էին յեղափոխականներին և աւելի անգութ էին դարձնում նրանց։

Իշխանութեան կենդրոնական մարմին դարձաւ հետ Սարսափ։
զհետէ համախումբ ժողովի անդամներից կազմուած մասնաժողովը, որ կոչւում էր «հասարակական փրկութեան յանձնաժողով»։ Ժիրոնդիստների անկումից վերջը մասնաժողովը նորից կազմակերպուեցաւ.[2]) Դանտոնը նրա մէջ չը մտաւ. ընտրուեցան մի քանի գործի մարդիկ, որոնց մէջ ամենից աչքի ընկնողն էր Կարնոն, ֆրանսիական զօրքի անխոնջ վերակազմիչը, երկու երեք անգամ կենդրոնից[3]), որ հնազանդութեամբ հետևւում էին յաղթական կուսակցութեան, Ռոբեսպիերն իւր գըլխաւոր համախոհներով։ Ռոբեսպիերը տիրապետող ուղղութեան ամենից աչքի ընկնող ներկայացուցիչն էր— չոր, համակարգեալ խելքի և նեղ հայեացքի տէր մի մարդ, սնապարծ իմաստակ, որ սկսեց Ֆրանսիան իւր յատակագծով հաւասարեցնել և որ ի սրտէ իւր բոլոր հակառակորդներին մարդկութեան թշնամի էր համարում։ Ամենից աւելի նրան մերձաւոր էր 25 տարեկան Սէն-Ժիւստը, որի բարձրագոյն նպատակն էր

1) Ֆրանսիայի արևմուտքում ծովեզրեայ նահանգ. հիւսիսից սահմանն է Բրէտան, գլխաւոր քաղաքն է Նանտը։

1) Յուլիսին 1793 թուի ընտրուեցան 9 անձինք. վերջին անդամները թիւն հասցրին 12-ի։

2) Ամենից բնաւորոշ յատկութեան տէր անձն էր դրանց մէջ— յանձնաժողովի զեկուցանող Բարերն։ Սա յաջողութեամբ կենակցեց և ծառայեց բոլոր տեսակ կարգերին, որ միմիանց փոխարինեցին Ֆրանսիայում, մինչև 40-ական թուականը մեր դարու. Նա մեռաւ 86 տարեկան իբրև Լուի-Ֆիլիպպ թագաւորի թոշակառու։

Ֆրանսիայում ստեղծել միջին տիպարը Սպարտայի և Ռուսսոյի տէրութեան։ Սարսափի գլխաւոր կազմակերպիչը, մասնաժողովի ղեկավարը վարչութեան մէջ էր Բիլլօ-Վարէննը. սա ոչ մի հեռաւոր տեսութիւններով չէր զբաղուում, բայց շատ լաւ էր հասկանում յեղափոխութեան առանձնայատկութիւններն և դիկտատորութեան պահանջներն ու ծառայում էր սարսափին, չը քաշուելով բարոյականութեան և մարդասիրութեան ոչ մի մակաբերութիւնից։ «Հասարակական փրկութեան յանձնաժողովից» մերձաւոր կախման մէջ էր «*հասարակական ապահովութեան մասնաժողովը*»։ որ կառավարում էր պետական ոստիկանութիւնը։ Նահանգներն ու բանակներն ուղարկուեցան *հանրախումբ ժողովի յանձնակատարներ*, որոնք լիակատար և կամայական իրաւունքներ ունէին իւրեանց շրջանի սահմաններում։ Ամբողջ Ֆրանսիայում տարածուած էին *յեղափոխական մասնախմբերը*, դրանից իւրաքանչիւրն հետևում էր որոշ տեղի քաղաքացոց ընթացքին, ընդունում էր մատնութիւններ, բանդարկութիւններ էր անում. գաւառներում դրանց անդամները նշանակուում էին յանձնակատարներ համախումբ ժողովի, ամեն ոք, որ շատ չափաւոր էր համարուում, իսկոյն հեռացուում էր։ Սարսափի կազմակերպութիւնն այսպիսով մի ամուր ցանց էր, ձգուած Ֆրանսիայի վրայ։ Անձնական ազատութեան և քաղաքացոց ազատ միաբանութեան մասին շատ էր գրուած սահմանադրութեան
1793 մէջ, որ լեռնականները կազմեցին փութով 1793 թուին. բայց այդ սահմանադրութիւնը մնաց թղթի վրայ, իսկ իրապէս կրկին իշխում էին կենդրոնացումն և իշխանութեան կամայական հրամանատուութիւնը, թէպէտ և իշխանութիւնն իւր հաստատութեան համար չէր հիմնում «Աստուծոյ շնորհաց» վրայ, այլ «ժողովրդի գերիշխանութեան»։

Ինչ վերաբերում է իշխանութեան գործունէութեան, դա ուղղուած էր ամենից առաջ դէպի *ճնշումն եւ սարսափահարութիւն*։ Լեռնականները համախումբ ժողովի մէջ «կասկածելիների» մասին օրէնքն ընդունել տուին, որի համաձայն բոլոր անձինք, որ վնասուել էին որ և է կերպիւ յեղափոխութիւնից, համարուում էին կասկածելի և ենթակայ էին բանդարկութեան և դատի։ Քաղաքական մեղադրութիւնները քննելու համար հիմնուեցաւ «*յեղափոխական դատարանը*», որ ազատուած էր սովորական դատավարութեան իրաւական կանոններից։ Փարիզի գործաւորներին գոհացնելու համար, որոշուեցաւ վաճառքների համար գնի *առ առելն* (*մաքսիմում*), և այլ գներով վաճառելու ամեն մի փորձը կամ պաշար ժողովելը գների բարձրանալուն սպասելով՝ յայտարարուեցաւ պետական յանցանք։ Կասկածելիների և յանցաւորների պատիժը գրեթէ նոյնն էր միշտ. նրանց գլխատում էին կատարելագործուած ձևով—Գիյլօտինի[1]) վրայ։ Այսպէս մեռան թագուհի Մարիա Անտուանէտան, ժիրոնդիստներն ու Օրլէանի դուքսը, չը նայելով որ նա հրաժարուել էր իւր տիտղոսից[2]), և համախումբ ժողովում ձայն էր տուել Լուդովիկոս ԺԶ-ին գլխատելու համար։ Այսպէս մեռան հազարաւոր մարդիկ[3]), ձերբակալուած առանց յատուկ քննութեան, որովհետև դրանք ազնուական, կամ հարուստ էին և կամ դուր չէին եկել իրենց հարևան-մատնիչին։ Յանձնակատարներից ոմանք համարում էին, որ Գիյլօտինը շատ դանդաղ է գործում. Լիոնում երկաթի կտորներով լցրած ռումբներ էին արձակում դրանց վրայ և այդպէս սպանում,

1) Հնարուած բժիշկ Գիյլօտէնից, որ սահմանադիր ժողովի պատգամաւորներից մէկն էր։

2) Նա ընդունեց Égalité (էգալիտէ-հաւասարութիւն) մականունը։

3) Յեղափոխական դատարանը սկզբում կառափնատեղին էր ուղարկում շաբաթական 30—40 մարդ, բայց 1794 թ. ամառն սկսաւ ուղարկել 200 և աւելի։

իսկ Նանտում ջրահեղձ էին անում դրանց ամբողջ խմբերով։

Սարսափի կուսակիցների միմիանց ոչնչացնելը։

«Լեռնականների» յաղթանակն երկպառակութիւն առաջ բերաւ կուսակցութեան մէջ։ Փարիզի քաղաքային խորհուրդն իրեն էր վերագրում ժերոնդիստների ճնշումն և սովորել էր համախումբ ժողովին հրամաններ տալ և նրան չը հնազանդել. Նրա անդամներն հոգում էին թէ տէրութիւնն և թէ հարուստներին կողոպտելու մասին յօգուտ Փարիզի ամբոխի, պահանջում էին հալածանք ոչ միայն հոգևորականութեան դէմ, որ չէր երդուել, այլ քրիստոնէութեան և քրիստոնէից. կազմում էին գինարբուք Փարիզի Աստուածածնի տաճարում ի պատիւ «բանականութեան դիցուհու»։ Միւս կողմից, Դանտոնն ու իւր բարեկամները մեղադրում էին մասնաժողովին աւելորդ արիւնածարաւութեան և իշխանասիրութեան մէջ։ Բայց ոչ մէկին և ոչ միւսին չը յաջողուեց գլորել Ռոբեսպիերին և նրա ընկերներին։ Քաղաքային խորհրդին զինաթափ անելու համար, Ս.-Ժիւստն առաջարկեց համախումբ ժողովին բաժանել ազգային հարստութիւնն աղքատ քաղաքացոց մէջ, և, երբ մասնաժողովը բանտարկեց խորհրդի առաջնորդներին, Փարիզի սինլիքորը նրանց պաշտպանութեան համար տեղից չը շարժուեց։ Դանտոնն ևս չափազանց վստահ էր իւր ժողովրդականութեան վրայ. նա ձեռքից բաց էր թողել գործերի ղեկավարութիւնն, իւր տրամադրութեան տակ չ'ունէր նիւթական ոյժ և չը կարողացաւ մասնաժողովին դիմադրութիւն ցոյց տալ։ Նրան գլխատեցին իւր համախոհների հետ քաղաքային խորհրդի անդամներից յետոյ։ Ռոբեսպիէրը, կարծես թէ, ոչնչացրել էր իւր բոլոր լուրջ հակառակորդներին։ Նա սկիզբը դրաւ նոր դարաշրջանի քրիստոնէութեան տեղ նոր հաւատ [1]) ներմուծելով—պաշտօն բարձրագոյն

[1]) հասարակապետականներն աւելի վաղ փոխել էին քրիստոնէական տարեթիւը, առաջին տարին համարում էր 1792 թ., հասարակապետութեան հրատարակման տարին։ Ամիսների հին անուններ փոխանակ նորերը դրուեցան, որոնք առնուած էին եղանակի յատկութիւններից և պտուղներից (օրինակ՝ Ventôse, Pluviose, Floreal, Fructidor և այլն)։

էակի և հանդիսով տօնեց համախումբ ժողովին գլուխ անցած դրա սկզբնաւորութիւնը։ Նրա կարծիքները բաւականաչափ յայտնի էին—պէտք էր հասարակութիւնը դաստիարակել սարսափի միջոցով նոր կրօնի եւ նոր բարոյականութեան ոգւով: Այսպիսի բարձր նպատակի համար Ռոբեսպիէրը մտածեց սարսափն աւելի զօրացնելու, նա ստիպեց համախմբին նոր օրէնք հրատարակելու, որով յեղափոխական դատարանին առաջուանից աւելի մեծ լիազօրութիւններ էին տրուում, քաղաքացոց կեանքի և ազատութեան վերաբերութեամբ [1]), և նա սկսաւ գործել կրկնապատիկ անգթութեամբ։ Բայց այդ արդէն չափազանց էր նոյն իսկ սարսափականների համար։ Իրենք իսկ մասնաժողովի անդամները չէին կամենում Ռոբեսպեէրի ձեռքն ընկել դատապարտուելու և զգում էին, որ մի ժամ անգամ ապահով չեն, քանի նա է Ֆրանսիայի գլուխը։ Նրանց համար դժուարին չէր համախմբի աջակցութիւնը ձեռք բերել, որ միայն երկիւղից ստիպուած տանում էր նրա սոսկալի լուծը։ Ռոբեսպիէրը ժամանակին իմացաւ նախապատրաստուող պատժի մասին և նրա առաջն առաւ։ Նա ինքը դուրս եկաւ երկու մասնաժողովների դէմ իբրև մեղադրող ժաքոբէնների ակմբում, իսկ Ս.Ժիւստը—համախմբի մէջ (9 թէրմիդորի—27 յուլիսի 1794 թուի)։ 1794
Նրանց բանտարկեցին, բայց քաղաքային խորհուրդը, որ մի անգամ մաքրուելուց յետոյ ընտրուած էր Ռոբեսպեէրի համախոհներից, ուժով ազատեց նրան։ Մասնաժողովն ու համախումբ ժողովն հասկանում էին, որ մահուան և կեանքի խնդիր է։ Նրանց հրամանով, զօրքն ու ազգային պահակախումբը խուժեցին քաղաքա-

[1]) Իրաւունք էր տուած, օրինակ ձերբակալելու և դատելու համախմբի անդամներին, առանց դրա համաձայնութիւնն հարցնելու։

յին խորհրդարանն և բռնեցին Ռոբեսպեէրին։ Միւս օրը նա գլխատուեցաւ իւր համախոհների հետ միասին։

1793—1794 Թուականների արշաւանքները։

Ինչքան էլ սարսափը զգուելի էր, բայց մասամբ նա ծառայութիւն արաւ Ֆրանսիային. ինչպիսի էլ լինէր հաստատուած կառավարութիւնը բայց նա էր, որ հնարաւոր կացոյց պատերազմ վարելը ներքին և արտաքին թշնամեաց դէմ։ Այս պատերազմին դիմեցին Ֆրանսիոյ լաւագոյն ոյժերն, միայն բանակների մէջ կարելի էր ապահովութիւն գտնել յեղափոխական հաւատաքննիչների դէմ և նուիրուել պատուաւոր և հայրենասիրական գործի։ Զինուորական կազմակերպութիւնն ու կարգապահութիւնը հետըզհետէ վերականգնուեցաւ. իսկ շնորհիւ ռամկավարական յեղաշրջման բարձրագոյն պաշտօնների մուտքը բացուեցաւ այժմ ընդունակ մարդոց համար ամենայն դասակարգերից եւ վիճակներից։ Շատ ստորին ծագման մարդիկ արագ վեր էին բարձրանում ծառայութեան մէջ, իսկ սրանցից մի քանիսն հանդիսացան իբրև նշանաւոր զօրավարներ[1])։ Յեղափոխական բանակներում մշակուեցաւ յատուկ ռազմագիտութիւն, հիմնուած մեծ բազմութեամբ գործելու և արագ տեղափոխութեան վրայ։ Յամառ դիմադրութիւնից յետոյ նահանգներում ընկճուեցան ապստամբութիւնները. առանձնապէս կատաղի դիմադրութիւն ցոյց տուաւ Վանդէան։ Սահմաններին վրայ ևս հասարակապետականները մի շարք փայլուն յաղթութիւններ տարան ընդդէմ անգլիացոց, աւստրիացոց, պրուսացոց, իտալացոց և սպանիացոց։ Յատկապէս հռչակուեցան այդ ժամանակ Հօշը, Մորօն և Պիշեգրիւն։ Վերջինս նուաճեց Հոլլանդիան և հիմնեց այստեղ «բատաւեան հասարակապետութիւնը», որ դաշնակից դարձաւ Ֆրանսիային։ Պէտքէ գիտել, որ գինուորների քաջարտութիւնից և զօրագլուխների ճարտարութիւններից զատ շատ նպաստեց Ֆրանսիացոց յաղ-

1) Հօշը, զօրօրինակ՝ ախոռապան էր։

թութիւններին այն հանգամանքն, որ Պրուսիոյ և Աւստրիոյ ուժերի մեծ մասն զբաղուած էր լեհական խնդրի պատճառով։ Մայիսի 3-ի սահմանադրութիւնը չէր կարող միանգամից վերատեղծել Լեհաստանը, լեհական ազնուականների մէջ մնացել էին շատ կուսակիցներ հին անիշխանական կազմակերպութեան. դրանք օգնութիւն խնդրեցին Ռուսիայից և դաշնակցութիւն կազմեցին Տարգովիցում կռուելու այն կուսակցութեան հետ, որ ճգնում էր պետական իշխանութիւնն ամրապնդել։ Ռուսաց զօրքերը մտան Լեհաստան, Պրուսիան էլ իւր կողմից շարժեց բանակը դէպի լեհական սահմանները, լեհերի դիմադրութիւնը ընկճուեցաւ և ձեռնարկուեց Լեհաստանի երկրորդ բաժանմանը, որով Պրուսիան ստացաւ Դանցիգը, Տորնը և Պոզնանի մի մասը, իսկ Ռուսիան գրաւեց Մինսկը, Վօլինիան և Պօդոլիան։ Լեհական հայրենասէրները Կոստիւշկոյի առաջնորդութեամբ յուսահատական փորձ տրին կորածը յետ դարձնելու, բայց դրա հետևանքն եղաւ միայն Սուվորովի ձեռքով Վարշաւայի գրաւումն և երրորդ բաժանումը, ուր մասն ստացաւ և Աւստրիան։ Սրան բաժին ընկաւ Կրակովը, Ռուսիան վերցրեց Վիլնօն, իսկ Պրուսիան Վարշաւը։ Արևելեան եւրոպական գործերը պատճառ եղան գերմանական զօրքերի տկարանալուն արևմտեան սահմաններում և դրանով նպաստեցին Ֆրանսիացոց յաղթութիւններին. Պրուսիան անհրաժեշտ համարեց բոլորովին դուրս գալու դաշնակցութիւնից և 1795 1795
թուին Ֆրանսիոյ հետ Բազելի դաշինքը կռեց, որի մէջ պայման էր դրուած, որ, եթէ Ֆրանսիացիք կայսրութիւնից երկիր խլեն Հռենոսի ձախ ափին, այն ժամանակ պրուսիացիք վարձադրութիւն պիտի ստանան այդ տիրապետած հողերից։

Սարսափի վախճանը։

Ռոբեսպիէրի անկումը չէր ծագել միմիայն այն երկպառակութիւնից, որ կար սարսափականների մէջ. դա համապատասխան էր հասարակութեան պահանջ-

ներին, որ այլ ևս չէր կարող դիմանալ սարսափին: Զզուանքը դէպի սարսափականներն աւելի ևս նկատելի էր երիտասարդ սերնդի մէջ, որն այլ ևս չէր յափշտակւում ազատութեան և ժողովրդի գերիշխանութեան գերակայ գաղափարներով, այլ, ընդհակառակն, համակրում էր զինուորական ուժին և միապետութեան աւանդութիւններին: Հարուստ դասակարգերի երիտասարդները յայտնի կերպով ցոյց էին տալիս իրենց ատելութիւնն անվարդիկներին, և «ոսկէ երիտասարդութեան» գնդերը Փարիզում առիթ էին առնում ամէն մի դէպք, հատուցումն տալու անվարդիկներին իրենց հալածանքների համար:

Կառավարական շրջաններում հասարակաց կարծիքի այս յեղաշրջութիւնն արտայայտւում էր իշխանութեան տակաւ առ տակաւ լեռնականների ձեռքից կենդրոնի և աջակողմեան պատգամաւորների կուսակցութեանն
1794 անցնելովը. 1794 թուի վերջին փակուեցաւ ժաքոբէն-
1795 ներու ակումբը: Արուարձանները 1795 թուին երկիցս փորձ արին բռնադատելու համախումբն ու վերանորոգելու սարսափն իւր առաջուան ձևով, բայց այդ յարձակումները յետ մղուեցան և առաջ բերին միայն մի շարք յայտնի սարսափականների աքսորումն ու գլխատումը. ի միջի այլոց աքսորուեցաւ և Բիլլօ-Վարէննը: Յետաշրջումն աւելի զօրացաւ, երբ համախումբ ժողովը կարգադրեց իւր անդամների շարքն ընդունել կրկին ժիրոնդիստներին, որոնք կենդանի էին մնացել, և այն պատգամաւորներին, որոնք արձակուել էին ժիրոնդիստներին համակրելու համար:

Այս պայմաններում համախումբ ժողովը մշակեց այսպէս կոչուած III տարուան սահմանադրութիւնը, որ պէտք է հիմք դառնար նոր պետական կարգի համար:

Վարչութիւն (դիրեկտուար): Այս սահմանադրութեան հեղինակներն այլ ևս հնարաւոր չէին համարում կառավարական իշխանու-

թիւնը գլուխ հաւասարեցնելու նրանք փորձեցին կատարեալ հաւասարակշռութիւն հաստատելու դրա եւ օրէնսդիր իշխանութեան միջեւ: Օրէնքներ դնելն և հարկեր ժողովելը թողնուեցաւ երկու խորհրդարաններին—ծերակոյտի եւ հինգհարիւրոց խորհրդին. կառավարութիւնը գտնւում էր կատարելապէս հինգ վարիչների (դիրեկտոր) և նրանցից նշանակուած նախարարների ձեռքին: Ոչ մի բանի մէջ հայեացքների փոփոխութիւնն այնպէս զօրաւոր կերպիւ երևան չ'եկաւ, ինչպէս նահանգական կառավարութեան կազմակերպութեան մէջ. ընտրեալ հոգաբարձուներին փոխարինեցին վարիչներից նշանակուած գործակալները: Սակայն սահմանադրութեան գործադրութիւնը դժուարին երևեցաւ, որովհետև անմիջապէս սկսաւ խիստ մրցումն վարիչների և խորհրդարանների միջև, որ յեղափոխութեան ժամանակ իւրացրած սովորութեան համաձայն, ստացաւ օրէնքի խախտման կերպարանք ամէն մէկի կողմից, որ իրեն բաւական զօրաւոր էր համարում այդ բանն անպատիժ անել կարողանալու համար:

Սրա օրինակը տուել էր հէնց ինքն համախումբ ժողովը
դեռ եւս III տարուան սահմանադրութիւնը գործադրութեան
մէջ մտնելու ժամանակ: Որոշելով սահմանադրութեան մէջ, որ
խորհրդարանների անդամներն ընտրական են, համախումբը դըրանից յետոյ կարգադրեց, որ առաջին անգամուան համար դըրանց անդամների երկու երրորդը լինին համախմբի պատգամաւորներից: Իբրև արդարացումն մատնանիշ էին անում այն բանի վրայ, որ հակառակ դիպուածում արքայականները մեծամասնութիւն կը ստանան եւ կ'ոչնչացնեն հասարակապետութիւնը: Արքայականները կամ, աւելի լաւ ասենք, հասարակապետութեան հակառակորդները, այս կոչն առանց պատասխանի չը թողին եւ բացարձակ ապստամբութիւն հանեցին Փարիզում, որ սակայն ընկճուեցաւ շնորհիւ երիտասարդ զօրավարի Բոնապարտի [1]) կարգադրիչ ոգուն:

[1]) Նա ծնուել էր Կորսիկայում 1769 թ. մի աղքատ փաստաբանի ընտանիքում. դաստիարակուել էր Բրիէննի դպրոցում, ուր

Վարչարանի պատմութեան չարունակութիւնը նման է
1797 այս սկզբնաւորութեան. 1797 թուին երեք վարիչները զօրքի
օգնութեամբ ձերբակալեցին եւ աքսորեցին 55 պատգամաւոր
եւ վռնդեցին իրենց երկու ընկերներին, որպէս զի խորտակեն
միքենայութիւնները հասարակապետութեան դէմ, դրա փոխա-
1799 րէն 1799 թ. խորհրդարանները ստիպեցին 3 վարիչներին հե-
ռանալ, որոնք յայտնի էին իրենց հասարակապետական համո-
զումներով։

1796—1799 Թուական-ների արշաւանքները։ Այսպիսի կառավարութիւնը չէր կարող յարգանք
ազդել ոչ դէպի ինքն, և ոչ դէպի օրէնքը, որ ինքը
շարունակ խախտում էր։ Յեղափոխութեան քաղաքական
իդէալների վերաբերութեամբ հրապարակումն արտայ-
այտուում էր հետզհետէ աւելի և աւելի զօրաւոր կեր-
պով, բայց դրա հետ միասին զգացւում էր բարքերի և
համոզումների ընդհանուր անկումն, թեթևամիտ և
շնական (կինիկեան-ցինիք) յարաբերութիւն դէպի հա-
սարակական գործունէութիւն և գաղափարային պա-
հանջներն, զօրաւոր հետապնդումը նիւթական բարիք-
ների և զուարճութիւնների յետևից։ Միակ գաղափարային
զօրութիւններն, որ ընդունուած էին այդ հասարակու-
թիւնից, էին—կրօնական պահանջը, որ աւելի ու աւելի
ուժով էր արտայայտւում, և հայրենասիրութիւնն
ամենասկզբնական ձևով—իբրև ցանկութիւն կռուի և
յաղթանակի։ Պատերազմն ուշադրութիւնը ոչ միայն դար-
ձնում էր անարժան ներքին քաղաքականութիւնից, նա-
անհրաժեշտ էր և ելևմտական տեսակէտով. յեղափոխա-
կան ահագին գրաւումները չէին կարող արդիւնագործու-
թեան քայքայման վնասներն և յեղափոխական կառավա-
րութիւնների ապարդիւն ծախքերը հատուցանել. դրա-
մաթղթերը, որ սկսել էին հրատարակել եկեղեցական
ստացուածքի աշխարհականացման ժամանակ 1790 թ.,

աչքի էր ընկել մաթեմատիքական ընդունակութեամբ և պատմու-
թեան համար ունեցած հետաքրքրութեամբ, աւարտել էր իբրև Բրեն-
դանօթաձիգ սպայ և յեղափոխութեան ժամանակ միացել էր Ռո-
բեսպիէրի կուսակցութեան։

կորցրին բոլորովին իրենց արժէքը. բանն այնտեղն էր
հասել, որ մի զոյգ կօշկի համար վճարում էին 10.000
ֆրանկ դրամաթղթով։ Հատուցումները դադարեցրին
1793—1796 թուականներին։ Վարչարանի համար դրա- 1793—1796
մական աղբիւրներից գլխաւորը դարձաւ կոնստիտուցիոն
(կոնստիտուցիոն) տիրապետած երկրների. Հոլլանդիան,
Գերմանիան, Իտալիան պարտաւորուեցան լցնելու Ֆրան-
սիոյ դատարկ գանձարանը։

Այս ժամանակի գլխաւոր պատերազմական իրողու-
թիւնները կատարւում էին Իտալիայում։ Բոնապարտը
1796 թուին իբրև վարձատրութիւն արքայականներին 1796
ջնջելու համար ստացաւ հրամանատարութիւնը վատ
զինուած և սակաւաթիւ իտալական բանակի և միան-
գամից ցոյց տուաւ իր զինուորական հանճարը։ Ֆրան-
սիացիք ստիպուած էին կռուելու հիւսիսային Իտալիայում
Սարդինիոյ թագաւորի հետ, որին պատկանում էր
Պիէմոնտը, և Աւստրիոյ հետ, որ տիրում էր Լոմբար-
դիայում։ Բոնապարտը թոյլ չը տուաւ թշնամեաց միա-
նալու։ Նա սկզբում մի քանի ճակատներում ջարդեց
սարդինեան զօրքն և ստիպեց թագաւորին խաղաղութիւն
խնդրելու։ Ապա դարձաւ աւստրիացոց դէմ և վռնդեց
նրանց Լոմբարդիայից Տիրօլ։ Այլ ևս երեք անգամ փորձ
արին աւստրիական զօրագլուխներն ոտքի կանգնելու,
բայց ամէն անգամ բանը վերջանում էր նոր պարտու-
թեամբ։ Բոնապարտի դէմ ուղարկուեցաւ 1797 թուին 1797
աւստրիական ամենալաւ զօրավարը, արքիդուքս Կարլոսը,
բայց նա էլ անյաջողութիւն կրեց, և Աւստրիան յաղ-
թուած ճանաչեց իրեն։ Աւստրիան հրաժարուեցաւ [1])
Լոմբարդիայից և գրաւեց Վենետկի նահանգը։ Լոմբար-
դիան իրեն կից նահանգներով կազմեց Անդրալպեան
հասարակապետութիւնը, իսկ Ճենովան — Լիգուրեան
հասարակապետութիւնը։ Երեք մեծ պետութիւններից,

[1]) Կամպօ-Ֆորմիոյի խաղաղութիւնը։

որոնք պատերազմ էին վարում Ֆրանսիոյ դէմ, երկուսը—
Պրուսիան և Աւստրիան—ստիպուեցան հաշտուելու։
Մնում էր Անգլիան, որ շնորհիւ իւր նաւատորմղի,
աւելի յաջողակ էր գործում քան իւր դաշնակիցները։
Անգլիացոց յաջողելէր ոչնչացնել իսպանիական եւ
հոլլանդական նաւատորմիղները, որոնք միացել էին
ֆրանսիականի հետ, խլել ֆրանսիացիներից, սպանա-
ցիների և հոլլանդացիներից նրանց գաղթավայրերի մե-
ծագոյն մասը։ Հոշը նախապատրաստում էր մի արշա-
ւանք Իռլանդիոյ ցամաքն հանելու համար, բայց նրա
նաւերը խորտակուեցան փոթորկից։ Բոնապարտը չը
վստահացաւ այդ փորձը կրկնելու, բայց կազմեց մի ցնո-
րական նախագիծ անգլիացոց վրայ յարձակուելու Եգիպ-
տոսի վրայով։ Նրա աշխոյժ երևակայութեան առաջ
պատկերանում էր անգլիական ազատ վաճառականութիւնը
Միջերկրական ծովի վրայ ջնջուելու հեռանկարը, ար-
շաւանքը դէպի Հնդկաստան... Վարչարանն ուրախ էր
ազատուելու վտանգաւոր զօրավարից և յանձնեց նրան
1798 գեղեցիկ զօրագունդ, որի հետ նա 1798 թուին նաւեց արև-
ելք։ Նա կարողացաւ յաջողութեամբ փախչել անգլիական
նաւատորմղի հրամանատար Նելսոն ծովապետի նաւախմբի
աչքի առաջևից, որ սակայն հետևեց ֆրանսիական նա-
ւատորմղին ու բոլորովին ոչնչացրեց այն Աբուքերի մօտ։
Ցամաքային զօրքը կարողացել էր ափը դուրս գալ։
Բոնապարտը շուտով տիրեց Եգիպտոսին։ Բայց նրա
դրութիւնն յուսահատական էր, որովհետև ֆրանսիական
զօրքը բոլորովին կտրուած էր Ֆրանսիայից։ Տաճիկները
նոր զօրքեր էին ուղարկում։ Բոնապարտը լաւ համարեց
նրանց առաջն առնել և ինքն շտապեց դէպի Ասորիք։
Նա սկսաւ Ակրայի պաշարումը, բայց չը գրաւեց այդ
քաղաքը, որովհետև Եւրոպայից ստացած լուրերը ստի-
պեցին նրան արևելեան գործերը թողնել ու շտապել

Ֆրանսիա։ [1] Նրա բացակայութեան ժամանակ կրկին
բորբոքուեց եւրոպական պատերազմը։ Ֆրանսիացիք
մտան Զուիցերիա և հարաւային Իտալիա, և նրանց
ազդեցութեան տակ հրատարակուեցան երկու նոր հա-
սարակապետութիւն—հռովմէական և պարթէնոպէա-
կան (Նէապոլսի), իսկ Զուիցերիան վերակազմուեցաւ։
Պիէմոնտն ու Տոսկանան ուղղակի միացուեցան Ֆրանսիայի
հետ։ Այս նոր յեղաշրջումներն ու գրաւումներն աչքի
առաջ ունենալով՝ Աւստրիան հրաժարուեց և Կամպօ-
Ֆորմիոյի հաշտութիւնից և այս անգամ կռուի մէջ
մտաւ Ռուսիոյ զօրեղ աջակցութեամբ։ Պօղոս կայսրը Սու-
վորովին ուղարկեց Իտալիա, որ մի քանի ամսում բոլո-
րովին ոչնչացրեց ֆրանսիացոց նախկին յաղթութիւնների
բոլոր արդիւնքը։ Կասսանոյի մօտ ջարդեց Մօրոյին,
Տրեբիայի մօտ—Մակդոնալդին, Նովիի մօտ—Ժուբերին։
Աշնանն ամբողջ Իտալիան, բացի Ճենովայից, խլուեցաւ
ֆրանսիացիներից։ Այն ժամանակ աւստրիացիք համոզե-
ցին Պօղոս կայսեր Սուվորովին ուղարկել Զուիցերիա,
իսկ իրենք այնքան արագութեամբ հանեցին իրենց զօրքն
այստեղից, որ ֆրանսիական զօրավար Մասեննը, որ հրա-
մանատար էր Զուիցերիայում, կարողացաւ մինչև Սու-
վորովի գալուստը Ցիւրիխի մօտ բոլորովին ջարդել
Ռիմսկի-Կորսակովի զօրագունդը։ Սուվորովի դրութիւնը,
որ աշնանը Ս. Գոթարդով անցաւ, յուսահատական էր։
Ամեն օր պատերազմ տալով, հազիւ անցանելի լեռնային
շաւիղներով հասաւ նա Բաւարիա։ Աւստրիացոց հետ
դաշնակցելու փորձն այնքան խրատական եղաւ, որ
ռուսաց կայսրը նրանց հետ ամեն յարաբերութիւն
կտրեց և մերժեցաւ Ֆրանսիայից։

Բոնապարտը 1799 թուին թողեց եգիպտական զօ- 18 Բրիւմերի
րագունդն և, անգլիացոց ձեռքն ընկնելու վտանգին 1799 թ.

[1] Նրա Եգիպտոս նաւելուց յետոյ ֆրանսիական զօրքերի գոր-
ծերը վատ գնացին, և ֆրանսիացիք վերջ ի վերջոյ անգլիացոց հետ
պայման կապեցին Եգիպտոսը յետ դարձնելու։

չը նայելով, նաւեց Հարաւային Ֆրանսիա։ Իտալական արշաւանքի առաջին տարիներից սկսած նա ամենից ժողովրդական անձն էր երկրի մէջ։ Նրա դարձը շնորհաւորեցին, իբրև փրկչի գալուստ։ Ամէնքն համոզուած էին, որ նա կարող էր պաշտպանել յեղափոխութեան բոլոր վաստակներն և վերականգնել զօրութիւնն ու փառքը, որ խախտուել էին 1799 թուի պարտութեամբ։ Վարչարանն ու խորհրդարաններն երբէք չէին վայելել հասարակութեան համակրութիւնն, իսկ այդ ժամանակ բոլորովին կորցրել էին իրենց վարկը։ Խորհրդարանները դեռ նոր էին վռնդել իրենց անհաճոյ վարիչներին, և նոյն իսկ պատգամաւորների մէջ շատերը պատրաստ էին զոհելու հասարակապետական ձևերը, միայն թէ հնար լինէր մի հաստատուն և փառաւոր կառավարութիւն ստանալ։ Բոնապարտը չը մտածեց

1799 երկար. 1799 թուի 18-ին բրիւմերի (10 նոյեմբերի) արձակեց ծերակուտի խորհրդարանն և զինուորներով քշեց հինգհարիւրի ժողովը. վարիչները դիմադրութիւն ցոյց չը տուին։ Երեկոյեան ժողովուեցան մի քանի պատգամաւորներ, որոնք գիտէին զօրավարի ծրագիրներն, և հրատարակեցին նրան և ուրիշ երկուսին, աւելի աննշան անձանց, ֆրանսիական հասարակապետութեան հիւպատոսներ (կոնսուլ)։

ԳԼՈՒԽ Գ.

ՆԱՊՈԼԷՈՆ.

Սահմանադրութիւն VII տարուան. Նուտափոյթ կազմուած «VIII տարուան» սահմանադրութիւնն անուանական կերպով պահպանել էր Ֆրանսիայում հասարակապետական կառավարութեան ձևը, բայց իրապէս ներմուծել էր միահեծանութիւն։ Գործադիր

իշխանութիւնը 1791 թուին ստորադրուել էր օրէնսդրա- 1791
կանին, 1795 թ. փորձ եղաւ թէ մէկն և թէ միւսն 1795
հաւասարակշռելու, 1799 թուին օրէնսդրականը ստո- 1799
րադրուեցաւ գործադիր իշխանութեան։ Օրէնքների ծրագիրները մշակւում էին պետական խորհրդի միջոցով, յանձնուում էին քննութեան տրիբունական ժողովին և տրիբունների նկատողութիւններով հանդերձ մտնում էին օրէնսդրական ժողովը, որ իրաւունք չ'ունէր դրանց քննելու, այլ միայն պիտի քուէարկէր. նոյն իսկ օրէնքն ընդունուելուց յետոյ ծերակոյտը (սենատ) կարող էր ջնջել այն, եթէ դա համաձայն չէր սահմանադրութեան։ Արդէն իսկ օրէնսդրական իշխանութեան այս բաժան բաժան անելը պէտք է տըկարացնէր նրան, բայց, դրանից զատ, երկու նշանաւորագոյն ժողովների անդամները, պետական խորհրդի և ծերակուտի, ուղղակի հիւպատոսներից էին նշանակւում, իսկ միւս երկուսի անդամները, տրիբունական և օրէնսդրական ժողովներինը, նշանակւում էին ծերակուտից այն ցանկերից, որ բարդ եղանակով կազմում էին տեղական և նահանգական ժողովները։ Այս հանգամանքներում ղեկավարող նշանակութիւն էր ստանում պետական խորհուրդը, որ բացի օրէնքների մըշակութիւնից վճռում էր և վիճելի վարչական գործերը. դա բաղկացած էր բարձր պաշտօնեաներից և կատարելապէս կախումն ունէր հիւպատոսներից։ Հիւպատոսներն ընտրուում էին 10 տարով. թւով երեք էին, բայց երկրորդ և երրորդ հիւպատոսները հասարակ գործիքներ էին առաջինի ձեռքին։ Ֆրանսիայում ամէնքն հասկանում էին, որ երկրի մէջ երևան է եկել տէր—Բոնապարտ զօրավարն—և որ նրա կամքից է կախուած վերջուրս ձգել հասարակապետական կառավարութեան վերջին մնացորդները։ Ժողովրդի մեծամասնութիւնն ևս համակրում էր նոր կազմին, որովհետև դա խոստա-

նում էր զօրեղ կառավարական իշխանութիւն, կարգ, ազգային զօրութիւն, պահպանութիւն նիւթական վաստակների և յեղափոխութեան քաղաքացիական բարեփոխութեանց։ Կային, հարկաւ, և հակառակորդներ—հին միապետութեան կուսակիցներ և հասարակապետութեան կողմնակիցներ, բայց դրանք զարհուրեցրած և անզօր էին։ Բոնապարտը չը վախեցաւ դիմելու ժողովրդական ձայնտուութեան, իւր իշխանութիւնն հաստատելու համար. ձայն տալու հրաւիրուեցան քիչ շատ կարողութիւն ունեցող քաղաքացիք, և 3,000,000-ից աւելի ձայն տուին VIII. տարուան սահմանադրութեան պահպանութեան համար. միայն 1500 հոգի վստահացան հակառակ ձայն տալու։

Դիւանակալութիւն կամ բիւրոկրատիա։

Հին կարգը վարժեցրել էր Ֆրանսիացոց կառավարական կենտրոնացման, նշանակուած պաշտօնեաների բազմաթիւ դասակարգի ղեկավարութեան։ Սահմանադիր ժողովի փորձերն այս շաւղից հանելու Ֆրանսիան, կատարեալ անյաջողութեամբ աւարտուեցաւ. սարսափականները վերականգնեցին կառավարական կենդրոնացումն, և վարչարանը (դիրեկտորը) հետևեց այդ բանում սարսափականներին։ Առաջին հիւպատոսն աւելի ևս մեծ սիրով կարող էր օգտուել Ֆրանսիացոց այդ հակումից դէպի պաշտօնատարների վարչութիւնը, քանի որ նա բարձրացաւ այն միջոցին, երբ ժողովուրդը խիստ էր յոգնել քաղաքական յուզմունքներից և սիրով պատրաստ էր հեռանալ քաղաքական հոգսերից։ Դիւանակալական (բիւրոկրատիկ-չինովնիկական) կարգն հաստատուեցաւ, այժմ և այն տիպարն ստացաւ, որ մինչև այսօր իսկ շատ մասամբ պահպանել է։ Կառավարութեան գլխաւոր գործօններն էին դեպարտամէնտներում նշանակուած նահանգապետը (պրէֆէ), գաւառներում [1])—նշանակուած գաւառապետը (սու-

1) Arrondissement.

պրէֆէ), համայնքներում—շինական և քաղաքային—նշանակուած շահապը (մէր)։ Այս պաշտօնէից մօտ կային և խորհուրդներ, բայց դրանք միայն պիտի օգնէին իրենց ցուցմունքներով. բացի դրանից այդ ժողովների անդամները նշանակում էին, չէին ընտրուում։ Այս պարզ կազմակերպութեան շնորհիւ բոլոր հասարակաց գործերը ստորադրուած էին կենդրոնական իշխանութեան ազդեցութեան, առաջին հիւպատոսի և նրա օգնականների հրամանները կատարուում էին արագութեամբ, առանց շեղման ամբողջ Ֆրանսիայում. կենդրոնական իշխանութեան կամքը ոչ մի տեղ չէր հանդիպում սահմանափակութեան կամ ինքնուրոյն կեանքի. քաղաքացիք դարձան կրկին հպատակ, իրենց մտադրութիւնը կենդրոնացրին մասնաւոր գործերի վրայ, բայց միևնոյն ժամանակ դարձան հնազանդ գործի, որոնց պաշտօնեաներըն իրենց կամեցածին պէս հասարակաց գործերում բանեցնում էին։ Բոնապարտ զօրավարի իդէալն էր քաղաքացիական կազմակերպութիւնը նմանեցնել բոլորովին զինուորականին. նրա համար պաշտօնատարները սպաներ էին, իսկ հպատակները—զինուորներ քաղաքացիական ասպարիզում։

Քաղաքացիական բարենորոգութիւններ։

Բայց առաջին հիւպատոսը գրաւել էր իշխանութիւնն և կարգապահութիւն էր հաստատել ո՛չ թէ նրա համար. որ հանդիստ և անգործ նստելով՝ օգտուի յաղթութեան պտուղներից։ Քաղաքական տեսակէտով նա յեղափոխութեան թշնամի էր, բայց իւրացրել էր դրա քաղաքացիական ծրագիրը. նա արհամարհում էր ազատութիւնն և խեղդում էր դրա ամենափոքր արտայայտութիւնը, բայց ինքն ամբողջապէս նոր կարգի մարդ էր, այնպիսի վերանորոգիչ, որ պատրաստ էր ամենուրեք մտցնել բանական սկզբունք, որոշ պարզութիւն, կազմ համակարգութիւն։ Նրա օգնականները շուտով վերացրին ելևմտի անկարգ վիճակը, հասարակութիւնը

ստորագրեցին ծանր, բայց միօրինակ արդիւնքի հարկին (25°/₀ արդիւնքից)․ գլխաւորը, հսկայական իրաւաբանական բարենորոգումը վերսկսուեց և գլուխ հանուեցաւ, որ ձեռնարկել էին սահմանադիր և համախումբ ժողովները։ Հին վիճակի անկումը պահանջում էր արմատական բարեփոխութիւն իրաւունքի ամէն ճիւղերում․ փոխանակ բարդ, խճճուած, երբեմն հակասող որոշումների, որոնցով ղեկավարուում էին հին միապետութեան դատարանները, հաստատուեցաւ մի վերին աստիճանի պարզ և վերջաւորեալ իրաւաբանական համակարգութիւն, որ յենուում էր հռովմէական իրաւունքի վրայ, բայց վերամշակուած էր նոր հանգամանքներին համապատասխան կերպով։ Այսպէս կոչուած Նապոլէոնի օրինագրքի մէջ քաղաքացիական իրաւունքն երկու սկզբանց վրայ են հաստատուած—բոլոր քաղաքացոց օրէնքի առաջ հաւասարութեան և անհատականութեան վրայ, այսինքն՝ բոլոր իրաւաբանական յարաբերութիւններն անհատների կամքին համաձայնեցընելու վրայ։ Ապա հետևում էին քրէական օրէնսգիրքըն և քրէական, քաղաքացիական ու առևտրական դատավարութեան օրէնսգրքերը։ Այս իրաւաբանական հիմնական աշխատութիւնը հաստատեց յեղափոխութեան ձեռք բերած արդիւնքները քաղաքացիական կեանքի կազմի համար։ Դա, հարկաւ, գործ էր մասնագէտ իրաւաբանների, բայց առաջին հիւպատոսն յաճախ խառնուում էր գլխաւոր խնդիրների լուծմանց, իսկ որ գըլխաւորն է, նրա կառավարութիւնը ստեղծեց այս գործը գլուխ հանելու համար կարևոր պարագայքը։

Ժողովրդի լուսաւորութեան գործի համար ևս հիմունք դրուեցաւ Ֆրանսիական նոր վիճակում։ Հին դրութեամբ դպրոցական գործն առաւելապէս եկեղեցու ձեռքին էր, իսկ մնացած մասով, կախուած էր պատահական նուիրաբերութիւններից ու արտօնութիւններից։ Հիւպատոսութեան ժամանակ պետութիւնն եռանդուն կերպով սկսաւ ժողովրդական կրթութեան գործը կազմակերպել։ Ստորին դպրոցներն ենթարկուեցան կառավարութեան վերահսկողութեան, բայց նրանց նիւթական հոգսը թողնուեցաւ համայնքներին․ իսկ միջնակարգ և մասնագիտական վարժարաններն հիմնուեցան պետական ծախքով և ենթարկուեցան նրա անմիջական հսկողութեան։ Այս գործն աւարտուեցաւ 1811 թուին այսպէս կոչուած 1811
Ֆրանսիական համալսարանի հիմնարկութեամբ, այսինքն՝ միաբանակցութեամբ պետութեան բոլոր դպրոցների դասախօսների և ուսուցչապետների։

Մի խնդրում առաջին հիւպատոսը չը կարողացաւ ազատ ընթացք տալ իւր ձգտման դէպի միօրինակութիւն, բանադատութիւն և պետութեան կատարեալ տիրապետութիւն։ Նա ստիպուած էր ճանաչելու կրօնական համոզումների ինքնուրոյն ույժը։ Ինքն անձամբ զուրկ էր բոլորովին կրօնական զգացումներից—չափազանց վստահ իւր անձի վրայ, քան թէ կարող լինէր որ և է մէկի առաջ գլուխ խոնարհել, նոյն իսկ Աստուծոյ առաջ, և չափազանց ներշնչուած բանապաշտութեամբ, այնպէս որ հասկանալ չէր կարող հաւատացեալներին․ բայց նա տեսնում էր, որ այդպիսի մարդիկ շատ կան և աւելի ևս շատանում են, և վճռեց օգուտ քաղել կրօնական համոզումներից իւր իշխանութիւնն ամրապնդելու համար: Նա չը հրաժարուեցաւ հաւատոյ ազատութեան գաղափարից, որ աւանդել էր յեղափոխութիւնն, և թոյլ տուաւ բոլոր դաւանութիւններն ազատօրէն դաւանելու, բայց ճանաչեց կաթոլիկ եկեղեցին Ֆրանսիայի գլխաւոր կրօնական հաստատութիւն և ջանաց, ինչքան կարելի էր, յարմարեցնել նրա կազմակերպութիւնն իւր տէրութեան պահանջներին։ Պիոս Է. պապի հետ 1802 թ․ դաշինք կամ կոնկորդատ հաստատուեցաւ։ Կաթոլիկ եկեղեցուն խոստացուեցաւ պահպա-

Դաշանց գիր կամ Կոնկորդատ․

նութեան նիւթական միջոց տէրութեան կողմից, որի փոխարէն եկեղեցին ձեւական կերպով հրաժարուեց յեղափոխութեան ժամանակ արքունիք գրաւուած ստացուածքը պահանջելուց։ Թեմերը որոշուեցան կառավարութեան և պապի միջև համաձայնութեամբ. առաջնորդներ նշանակելու վերաբերութեամբ վճռուեցաւ, որ կառավարութիւնը նշանակէ եպիսկոպոսներին, իսկ պապը—դրանց կանոնական հաստատութիւն տայ։ Դաշանց գիրը վերջ դրաւ եկեղեցու և քրիստոնէութեան երկար հալածանքին, որ սկսուել էր սահմանադիր ժողովի ծայրայեղ միջոցներով, և ուժեղ կերպով աջակցեց նոր վիճակի հաստատման։

Փախստականները։ Ոչ պակաս նշանաւոր քայլ արուեցաւ վերաբերութեամբ արտօնաւոր դասակարգերի մնացորդների ներկայացուցիչների։ Առաջին հիւպատոսը վերջ տուաւ փախստականների եւ նրանց մերձաւորների հալածանքին. և, թէպէտ նրանց չը վերադարձրեց գրաւուած հողերը, բայց թոյլ տուաւ բոլոր ցանկացողներին Ֆրանսիա դառնալու։ Շատ փախստականներ անմիջապէս օգուտ քաղեցին դրանից յոյս ունենալով, որ կարող կը լինին Ֆրանսիայում ուղղել իրենց գործերը, և նոր կառավարութեան լայն գործունէութիւնը զինուորական և քաղաքացիական ասպարիզում յիրաւի շատերի համար ճանապարհ բացաւ դէպի բարեկեցութիւն և նշանակութիւն։

Պատերազմ Աւստրիացոց հետ։ Բոնապարտը շուտով վերադարձրեց Ֆրանսիային զինուորական գերակշռութիւնն, որ խախտել էին Սու-
1800 վորովի յաղթութիւնները։ Նա ինքն 1800 թուին զօրքի գլուխն անցաւ, որ նշանակուած էր Իտալիայում գործելու համար, Ալպեան լեռներով անցաւ և աւստրիացոց վճռական հարուած հասցրեց Մարենգոյի մերձակարքում։ Սրա հետ միաժամանակ Մօրօն ջարդեց աւստրիական բանակը Գերմանիայում, Հօհէնլինդենի մօտ։ Ֆրանց

կայսրն ստիպուեցաւ խաղաղութիւն [1]) խնդրելու. Հռենոսի ձախ ափը վերջնականապէս Ֆրանսիայի սեփականութիւն ճանաչուեցաւ, և Իտալիայում վերականգնուեցաւ գլխաւոր կէտերով իրերի այն դրութիւնը, որ գոյութիւն ունէր Սուվորովի արշաւանքից առաջ։ Կողմնակի կերպիւ այս խաղաղութեան դաշինքն ազդեց Գերմանիոյ ներսի յարաբերութիւնների վրայ. մի ամբողջ շարք մանր իշխաններ և ազատ քաղաքներ կլանուեցան աւելի մեծերից. առանձնապէս վտանգուեցան հոգևոր իշխանութիւնները, որոնք մեծ մասով աշխարհականուեցան։ Հին վիճակի ամենից բնաւորիչ երևոյթներից մէկը, «գերմանական ազգի սրբազան հռովմէական կայսրութիւնը», կորցրեց բոլորովին իր խորհուրդը, և Ֆրանց կայսրը ճանաչեց այդ կատարուած իրողու-
թիւնը 1804 թուին, հրաժարուելով հռովմէական կայսեր 1804
տիտղոսից և դրա փոխարէն ընդունելով աւելի համապատասխան «աւստրիական կայսր» տիտղոսը [2])։

Գրեթէ դրա հետ միաժամանակ [3]) Բոնապարտը, որ Կայսրութիւն
1802 թուին հրամայել էր իրեն ցկեանս հիւպատոս 1802
հրատարակել, ընդունեց, վերջապէս, այն տիտղոսն, որ համապատասխան էր իւր դրութեան. Ծերակոյտն հռչակեց նրան Ֆրանսիացոց կայսր, Նապոլէոն անուամբ. 3,500,000 հպատակներ հաստատեցին այդ պատիւը ձայնատուութեամբ համայնքների մէջ. Պիոս Է. պապն անձամբ Փարիզ եկաւ նոր պետին թագով պսակելու համար։ Հաստատութեանց մէջ առանձին փոփոխութիւններ չեղան, բիչ յետոյ կայսրը ջնջեց տրիբունական ժողովը, որին նա չէր հաւանում իւր քննադատական նկատողութեանց համար. օրէնսդիր ժողովն ու ծերակոյտը մնացին, իբրև

[1]) Լիւնէվիլի հաշտութիւնը։

[2]) Կայսերական հաստատութիւնները վախճանական կերպիւ դադրեցրին իրենց գոյութիւնը 1806 թուին։

[3]) Հինգ օրով առաջ։

անվտանգ և հնազանդ գործիք իշխանութեան ձեռքին.
պետական խորհուրդը ձեռք բերաւ աւելի գործնական նշա-
նակութիւն, քան թէ առաջ ունէր։ Աչքի ընկնող նորամու-
ծութիւն էր կայսերական պալատի մի ամբողջ շարք պա-
տուաւոր պաշտօնների և ազնուականութեան ստեղծումը։

Պատերազմներում, քաղաքացիական ծառայութեան,
գիտութիւնների, գրականութեան և արդիւնաբերու-
թեան մէջ աչքի ընկնող վաստակները վարձատրելու
համար հիմնուեցաւ պատուաւոր Լէգիոնի շքանշանը,
կառավարութեան և զօրքի մէջ ամենից աւելի աչքի ընկ-
նող գործիչներն ստացան բարոն, կոմս, դուքս, իշխան
տիտղոսներն. զօրքի մէջ վերահաստատուեցաւ մարաջախ-
տութեան պատիւը։ Կայսրն առատութեամբ բաշխում
էր պարգևներն ու պատիւները, իսկ եռուն վարչական
և զինուորական գործունէութիւնը շատ առիթներ էր
տալիս տաղանդաւոր և եռանդուն անձանց առաջ
անցնելու և վերցնելու իրենց բաժին աւարն ու փառքը։
Բայց կայսերական պաշտօնատար աւագանին ազնուա-
կանութիւն չէր. թէպէտ դրա անդամները կարող էին
պարծենալ իրենց վաստակներով, բայց ոչ երբէք ծագ-
մամբ և ինքնուրոյնութեամբ. նրանք կատարելապէս
կայսերական ողորմութեան արարածներ էին, և Նա-
պոլէոնը սիրում էր այդ զգացնել իւր ծառաներից ա-
մենից բարձր դիրք ունեցողներին։ Այն ժամանակուան
առածին համաձայն, իւրաքանչիւր զինուոր գիտէր, որ
իւր պայուսակի մէջ կայ մարաջախտի գաւազան, բայց
մարաջախտն էլ մնում էր միշտ վաստակաւոր զինուոր։

Արշաւանք-ներ Օգուտ քաղելով Եւրոպայի խաղաղացումից, Նա-
1805—1809 պոլէոնը սկսաւ ոյժերը ժողովել, Անգլիային հարուա-
թուական-ներին ծելու, որ միայնակ շարունակում էր կռիւը[1]։ Նա
«մեծ բանակը» կենդրոնացրեց Բուլոնում և պատրաս-

[1]) 1803 թուին հաշտութիւն կայացաւ Ամիէնում, բայց երևաց,
որ դա զինադադար էր միայն։

տեց զօրաւոր նաւատորմիղ նեղուցից ցամաք անցնելու
համար։ Բայց Պիտտը կարող եղաւ Ֆրանսիոյ դէմ նոր
դաշնակցութիւն կազմել, որի մէջ մտան Աւստրիան և
Ռուսիան (1805)։ Կայսրն ստիպուեց իւր զօրքերն ուղ- 1805
ղել դէպի արևելք, իսկ նաւատորմիղը, որի ստեղծման
վրայ Ֆրանսիացիք մեծ ջանք էին գործ դրել, ջնջուե-
ցաւ Նիլսոնի ձեռքով Տրաֆալգարի մօտ։ Այս ճակատա-
մարտը վերջնականապէս հաստատեց անգլիացոց գերիշ-
խանութիւնը ծովի վրայ և ազատեց նրանց ֆրանսիա-
կան զօրքի ցամաք դուրս գալուց։ Եւրոպայի ցամաքի
վրայ դաշնակցութեան գործերը վատ գնացին։ Նապո-
լէոնը պատեց թշնամեաց բանակի շուրջը, որ անզգու-
շութեամբ Բաւարիա էր մտել, և ստիպեց նրան անձ-
նատուր լինելու։ Դաշնակիցների գլխաւոր բանակին,
ուր գտնուում էին Ֆրանց և Ալէքսանդր կայսրները,
հանդիպեց նա Մորաւիայում, Աւստերլիցի մօտ։ Թըշ-
նամու բանակի կենդրոնի վրայ յարձակուելով բուռն
կերպով՝ Նապոլէոն երկուսի բաժանեց դաշնակիցների
զօրքն և բոլորովին ջարդեց։ Աւստրիան շտապեց խա-
ղաղութեան դաշը կռելու։ Դրա փոխարէն Պրուսիան,
որ նախ հրաժարուել էր դաշնակցութեան յարելու,
պատերազմ հրատարակեց այժմ (1806)։ Պրուսական զօրքը 1806
պարծենում էր Ֆրիդրիխ Մեծի փառաւոր հռչակով,
և նրա զօրագլուխները պատերազմի մէջ մտան Նապո-
լէոնի հետ, առանց սպասելու ռուսաց գալստեան։
Ենայի մօտ պրուսացիք կոր՛ իգլուխ ջարդուեցան։ Նապո-
լէոնը Բեռլին մտաւ. իսկ պրուսական թագաւոր Ֆրի-
դրիխ Վիլհելմ Գ. իւր բանակի մնացորդներով ազա-
տութիւն որոնեց ռուսաց զօրքի պաշտպանութեան տակ,
որ անցել էր Վիսլա գետը (1807)։ Պրայսիշ-Այլաուի մօտ 1807
տեղի ունեցաւ այդ շրջանի ամենից արիւնահեղ ճակատա-
մարտներից մէկը. Ֆրանսիական մի ամբողջ զօրագունդ
ոչնչացաւ, բայց ռուսներն ևս աւելի կորուստներ ունե-

ցան, և պատերազմի ելքը մնաց անորոշ։ Բայց յետոյ
Նապոլէոնը ռուսաց զօրքին այսուամենայնիւ հարուած
հասցրեց Ֆրիդլանդի մօտ, և Ալէքսանդր Ա., անօգուտ
համարեց պատերազմը շարունակել գերմանացոց համար,
որոնք այլ ևս ընդունակ չէին անձամբ որ և է մաս-
նակցութիւն ունենալու։ Նա Նապոլէոնի հետ կռեց
Տիլզիտեան դաշը Ռուսիոյ համար չափազանց օգտաւէտ
պայմաններով։ Ֆրանսիացոց կայսրը ռուսաց թագաւորին
վերաբերուեցաւ անսովոր սիրալրութեամբ և նախահո-
գութեամբ, առաջարկեց նրան բարեկամութիւն և աջակ-
ցութիւն, բացադրեց նրան Ֆրանսիայի և Ռուսիայի
միացած գերակշռութիւնն եւրոպական գործերում, որ
պիտի յիշեցնէր հռոմէական կայսրութեան արեւելեան և
արեւմտեան բաժինների յարաբերութիւնը, Նապոլէոնը հա-
մոզ էր ուղղելու միացեալ ոյժերն ընդդէմ հին թշնամեաց
1805–1807 —շուէդացոց և տաճիկների։ Ռուսիայի համար 1805 և 1807
թուականների անյաջողութեանց միակ անհաճոյ հե-
տեւանքն էր Վարշաւայի մեծ դքսութեան հաստատու-
թիւնն այն լեհական նահանգներից, որ ընկել էին
Պրուսիային երկրորդ և երրորդ բաժանման ժամանակ։
Հատուցման ամբողջ ծանրութիւնն ընկաւ Պրուսիոյ
վրայ։ Բացի լեհական նահանգներից, նա կորցրեց իւր
երկրներն Էլբա գետից դէպի արեւմուտք, դրանք անցան
Ֆրանսիային և այն գերմանական իշխանութիւններին,
որոնք գտնուում էին ֆրանսիացոց հովանաւորութեան
տակ։

Կրկին անգամ փորձ եղաւ Նապոլէոնի գերիշխա-
1809 նութիւնը կոտրելու կենդրոնական Եւրոպայում—1809
թուին Աւստրիան կրկին դուրս եկաւ ֆրանսիացոց դէմ։
Նապոլէոնի առաջին գործողութիւններին ընդդէմ ար-
քիդուքս Կարլոսի բոլորովին յաջող չէին, նա զուր աշ-
խատեց Դանուբն անցնել աւստրիական բանակի աչքի
առաջ և վեց շաբաթուան ընթացքում ստիպուած էր

մնալու մի փոքրիկ կղզու վրայ Դանուբի մէջ տեղը,
սպասելով օգնութեան։ Աւստրիացիք սակայն օգուտ չը
քաղեցին այս վտանգաւոր դրութիւնից և ժամանակ
տուին օգնական գնդերին Իտալիայից և Գերմանիայից
տեղ հասնելու։ Բանը վերջացաւ աւստրիական բանակի
պարտութեամբ Վագրամի մօտ, որից յետոյ Ֆրանց
կայսրը հաշտութեան դաշն կռեց [1])։

Ֆրանսիացիք հպարտութեամբ կարող էին ասել, Ֆրանսիա-
որ սկսած Յուլիոս Կեսարից պատմութեան մէջ տես- կան զօրքը։
նուած չէին այնպիսի յաղթանակների շարքեր, ինչպի-
սիք տարել էին հասարակապետութեան և կայսրու-
թեան զօրքերը։ Եւրոպայի հին տէրութիւնների հետ
ընդհարուելու ժամանակ վերածնուած Ֆրանսիան ար-
տայայտում էր բոլորովին նոր ոգի, որ երեւցաւ իբրև
յաղթական ոյժ—կազմակերպուած ռամկավարութեան
ոգի։ Իրենց կազմութեամբ ֆրանսիական զօրքերն ամե-
նեւին նման չէին հին վիճակի ազնուական զօր-
քերին, որոնց նախատիպարն էր Ֆրիդրիխ Մեծի բա-
նակը, որի զինուորներն հաւաքուում էին ճորտերից
ոչ առանձին ընտրութեամբ, քաղաքացիական կեանքի
համար անպիտան մարդկանցից, օտարազգիներից և ան-
խնայ կարգապահութեան միջոցով կրթուելով՝ կազ-
մում էին մի յատուկ զինուորական դասակարգ, որին
ղեկավարում էին ազնուական սպաները։ Ֆրանսիական
յեղափոխութիւնն, ընդհակառակն, զօրաբանակը մղեց
ազգի լաւագոյն ոյժերն և հրամանատարութեան ու-
ղին բացաւ ամէն դասակարգի անձանց առաջ։ Պանդո-
կապետների, խանութպանների, ծառաների որդիք դառ-
նում էին մարաջախտներ, դքսեր, երբեմն էլ թագա-
ւորներ[1]), կորսիկական աննշան փաստաբանի որդին

[1]) Այս դաշինքի հետեւանքներից մէկն եղաւ Նապոլէոնի բաժա-
նումն իւր առաջին ամուսնուց և նրա ամուսնութիւնը Մարիա-Լուիզա
արքիդքսուհու հետ։

[1]) Միւրատը, մի պանդոկապետի որդի, դարձաւ Նէապոլսի թա-
գաւոր. Բերնադոտը, գաւառական փաստաբանի որդին, շուեդներից

կայսր և թագաւորների հրամանատար դարձաւ։ Առաջին հասարակապետական զօրքերի թերութիւնք—անկարգութիւնը, կարգապահութեան թուլութիւնը—շուտով բարձուեցան. բայց նրանց աշխոյժն ու ոգևորութիւնը մնաց։ Ֆրանսիական զինուորական ուժին համաձայն կազմուեցաւ և նրա յատուկ ռազմավարութիւնն, որ հիմնուած էր մեծ զորախմբերի արագ և համապատասխան շարժումների վրայ։ Նապոլէոնի մէջ նա գտաւ իւր նախատիպար ներկայացուցիչն, ոչ մի զօրագլուխ չէր կարողանում նրա պէս ճարտար կերպով կարգադրել մեծամեծ խմբերն և կենդրոնացնել նրանց վճռական հարուածի համար։

Կայսրութեան աշխարհակալութիւնները 1805—1809։ Արշաւանքները 1805—1809 թուականներին բոլորովին փոխակերպեցին Եւրոպայի քարտէզը։ Ֆրանսիան յատկապէս իւր «բնական սահմաններից», որ համարւում էին Հռենոսն և Ալպերը, շատ հեռու էր դուրս եկել։ Բացի Բելգիայից և Հռենոսի ձախ ափի գերմանական նահանգներից, փոքր առ փոքր միացուել էին նրա հետ Սաւոյիան և Պիէմոնտը, Տոսկանան և պապի երկիրը, Հոլլանդիան [1]) և ծովափնեայ Գերմանիան մինչև Էլբան. փոխանակ 83 նահանգի, որ հաստատուել էին
1790 1790 թուին, Ֆրանսիան բովանդակում էր 130։ Լոմբարդիան և դրացի երկրները կազմեցին մի առանձին իտալական թագաւորութիւն, բայց թագաւոր հրատարակեց ինքն իրեն Նապոլէոնը. իսկ այդ նահանգները կառավարում էր Նապոլէոնի խորթ որդին Եւգենիոս Բոհարնէն։ Հարաւային Իտալիան մտաւ Նեապոլի թագաւորութեան մէջ [2]), այդտեղ թագաւորեց

ընտրուեցաւ շուեդական թագի ժառանգ, դարձաւ Շուեդիայի և Նորվեգիայի թագաւոր և հիմնեց այսօր այնտեղ թագաւորող հարստութիւնը։

[1]) Մինչև 1810 թ. նա առանձին թագաւորութիւն էր, որի թագը պատկանում էր Նապոլէոնի եղբայր—Լուդովիկոսին,

[3]) Սեկիլիան չը յաջողուեցաւ նուաճել. անտեղ անգլիացոց օգնութեամբ Բուրբոնները մնացին։

նախ կայսեր եղբայրը, Յովսէփ Բոնապարտը, իսկ ապա մարջախտ Միւրատը։ Զուիցերիան մնաց հպատակ հասարակապետութիւն։ Իլլիւրիական նահանգները (Իստրիան և Դալմատիան) գտնւում էին Մարմոն մարաջախտի իշխանութեան տակ։ Գերմանիայում կազմուեցաւ Վեստֆալեան թագաւորութիւնը Նապոլէոնի եղբօր—Յերոնիմ Բոնապարտի համար, դրա մէջ մտան Հաննովերի մասերը, Պրուսիայի կալուածները Հռենոսի վրայ և Էլբայի ափերին։ Գերմանական տէրութիւնների թիւը շատ պակասեց, և նրանց կազմութիւնը պարզ ձև ստացաւ։ Նապոլէոնը յատուկ հովանաւորութիւն էր ցոյց տալիս Բաւարիային, Վիւրտէմբերգին և Սաքսոնիային, դրանց իշխաններին թագաւորական աստիճանի բարձրացրեց. բացի դրանցից, նա քիչ կողմնակիցներ չ՛ունէր գերմանական իշխանների մէջ և միաբանելով դրանց, կազմեց Հռենոսեան դաշնակցութիւնը, որ պէտք է հակակշռէր Աւստրիայի և Պրուսիայի զօրութեան։ Արևելքում ֆրանսիացոց յառաջախաղաց պահակն էր Վարշաւայի մեծ դքսութիւնը, որի թագը տրուեցաւ սաքսոնական թագաւորին։ Վերջապէս, հրաման եղաւ մարաջախտներին գրաւելու Փորթուգալիան եւ Սպանիան, թէպէտ և վերջինս 1795 թուից սկսած հաւատա- 1795
րիմ դաշնակից էր մնացել Ֆրանսիային։ Յովսէփ Բոնապարտը Նէապոլսի գահից փոխադրուեցաւ սպանիական գահի վրայ, իսկ Նէապոլսի թագաւոր դարձրեց Նապոլէոնը Միւրատին։

Այսպէս առանց քաշուելու փոփոխութիւններ անելն այն լաւ կողմն ունէր, որ դրանով Եւրոպայում տարածւում էր յեղափոխութեան մշակած քաղաքացիական կազմը։ Ֆրանսիական զօրքի երևումն առաջ էր բերում ճորտութեան ջնջումն, հաւատոյ ազատութիւն, աւատական արտօնութիւնների վերացումն, հին մեծաւաւալ օրէնքների փոխանակութիւնը Նապոլէոնի օրինա- Հին կարգի անկումը։

գրքով, վերջապէս, ֆրանսիական դիւանակալական կարգի ներմուծումը։ Այս արմատական յեղաշրջումը կատարւում էր ոչ միայն այն տեղերում, որոնք ուղղակի միացրած էին Ֆրանսիային, այլ նոյնպէս և այն տեղերում, ինչպէս Բաւարիան էր, օրինակի համար, որ, անկախ մնալով, այսուամենայնիւ ընկաւ ֆրանսիական ազդեցութեան տակ։

Պրուսական բարենորոգումները։

Պրուսիայում, որին Նապոլէոնը ստորացրել և մերժել էր իրենից, Ֆրանսիայի հետ ընդհարումն ինքնատիպ բարենորոգումներ առաջ բերաւ։ Ազգային ամենամեծ թշուառութեան և անարգանաց օրերում հասարակութեան մէջ ուժեր գտնուեցան, որ նախապատրաստեցին բարոյական և քաղաքական վերածնունդ։ Քաղաքական բարենորոգիչ եղաւ Շտայն նախարարը, իսկատիպ խելքի և անխոնջ եռանդի տէր մի մարդ, որ լաւ էր ճանաչում ֆրանսիական կարգի առաւելութիւնները, բայց տեսնում էր և նրա թերութիւնները։ Նա ջնջեց ճորտութիւնը, և զրկեց ազնուականութիւնն անարդար արտօնութիւններից, պահպանելով սակայն նրանց հասարակական դիրքը։ Բայց, նրա հայեացքով, հասարակութիւնը կարօտ չէր միայն ռամկավարական հաւասարեցման. պէտք էր նրա մէջ բարձրացնել ինքնուրունութեան ոգին, սովորեցնել հասարակական գործերում եռանդուն մասնակցութիւն ունենալու. զուտ դիւանակալական կառավարութիւնը միշտ նրան վնասակար էր թւում, որ սովորեցնում է մարդկանց մեքենական հնազանդութեան։ Շտայնը զբաղուեցաւ ինքնավարութեան զարգացմամբ լայն ծրագրով, բայց կարողացաւ միայն քաղաքային ինքնավարութեան օրէնքի հրատարակմամբ սկիզբը դնել այդ գործին։ Նապոլէոնը նկատեց, որ Պրուսիայում սկսւում է նոր, ինքնուրոյն կեանք, և պահանջեց Շտայնի հեռացումը։ Սրա յաջորդը, Հարդէնբերգ, շարունակեց բարենորոգումները ռամկավարական հաւա-

սարեցման ուղղութեամբ և անհատականութեան սկզբունքով—ջնջեց արուեստակցութիւնը, միջոց տուաւ գիւղացոց հողը կալուածատէրերի հետ բաժանելու, երեք մասից մէկը թողնելով՝ երկուսը զատելով և տալով գիւղացոց իբրև սեփականութիւն. ինքնավարութեան զարգացումը կանգ առաւ։ Շտայնի և Հարդէնբերգի հետ միաժամանակ գործում էր զինուորական կազմակերպութեան համար Շարնհորստը։ Տիլզիտի դաշնագրութեամբ Պրուսիային թոյլ էր տուած ունենալ միմիայն 42,000 զինուոր։ Շարնհորստը հէնց այդ սահմանափակումից օգուտ քաղեց, նոր զինուորական կարգի սկիզբը դնելու համար, որ մի մեծ քայլ էր դէպի յառաջ համեմատած ֆրանսիականի հետ։ Նա այդ հիմնեց երկու սկզբունքի վրայ—ընդհանուր զինուորական պարտաւորութեան եւ պահեստի զնդեր կազմելու վրայ։ Բոլոր առողջ երիտասարդութիւնը Պրուսիոյ պարտաւոր էր դրօշների տակ ծառայելու, և որովհետև կանոնաւոր զօրքի բանակում միմիայն 42,000 մարդ պահելու իրաւունք կար, ուստի և այդ բանակը դարձաւ միմիայն դպրոց կամ վարժոց զինուորական արհեստը սովորելու համար։ Կարճ ծառայութիւնից յետոյ զինուորը դառնում էր իւր քաղաքացիական զբաղմունքին, բայց շարունակում էր հաշուուել պահեստի գնդի մէջ և պատերազմի դիպուածում կրկին կանչւում էր ծառայութեան։ Աւելի հասակաւորները մտնում էին աշխարհապահ (լանդվեհր) և պահեստի (լանդշտուրմ) գընդերի մէջ.

Այս նշանաւոր բարենորոգումները պարզապէս վարչական միջոցներ չէին. դրանք ծագում էին խորին բարոյական դրդումներից, ուղղուելու ազնիւ և լուրջ վճռականութիւնից, սրբելու ազգային անուանարկութիւնն և վերադարձնելու կորածը։ Բարեփոխելով վարչութիւնն, իրաւունքը, զօրքը, չը մոռացան ժողովրդի

լուսաւորութիւնը: Ամենածանր ժամանակում Վիլհելմ Հումբոլդը բաց արաւ Բեռլինի համալսարանը, որ անմիջապէս գրաւեց Գերմանիոյ լաւագոյն գիտնական ուժերն:

Կայսրութեան լուծը.

Այն երկրներում, որ գտնւում էին Ֆրանսիացոց տիրապետութեան ներքոյ, արդիւնաւոր բարենորոգումները չէին կարող ո՛չ հակակշռել այն աւերումներն ու ոյժերի սպառումն, որոնք հետեւանք էին պատերազմների և կամ ելեւմտական կողոպուտների, ոչ ստորացումներն ու բռնութիւնները, որ ստիպուած էին կրել յաղթողների կողմից, և ոչ էլ իրաւունքի և ազգային ինքնուրոյնութեան կործանումն:

Վեստֆալիոյ Թագաւոր Յերոնիմը զեկուցանում էր իւր եղբօրը. «Եթէ պատերազմ սկսուի, Հռենոսի եւ Օդերի մէջ ընկած բոլոր նահանգները կ'ապստամբեն: Այս վտանգաւոր շարժման պատճառը միայն ատելութիւնը չէ դէպի ֆրանսիացիք եւ դէպի օտար լուծը. աւելի մեծ նշանակութիւն ունին՝ մեր ժամանակի թշուառութիւնները, հասարակութեան բոլոր դասակարգերի կատարեալ սնանկութիւնը, անտանելի ծանրութիւնն. հարկերի, պատերազմական փրկանքների, բանակի պահպանութեան ծախքի, զինուորներին բնակութիւն տալու եւ ամենատեսակ նեղութիւնների, որ միշտ կրկնուում են: Իմ թագաւորութեան գլխաւոր քաղաքներում տանտէրերը թողնում են իրենց տները... Ամենուրեք աղքատութիւնը ճնշում է ընտանիքները, ազնուականը, գիւղացին եւ քաղաքացին ամէնքն էլ հեծում են պարտքերի եւ կարօտութեան տակ: Պէտք է վախենալ ազգերի յուսահատութիւնից, որոնք կորցնելու բան չ'ունին, որովհետեւ ամեն ինչ խլուած է նրանցից»: Նապոլէոնը չէր հասկանում դրութիւնը: Նա խելքի անսովոր ոյժ ունէր. Նրա միտքը մի վայրկեան անգամ չէր դադարում մտածելուց եւ պահպանում էր իւր բարձրութիւնն եւ պարզութիւնը, մինչդեռ նրա օգնականները ակարանում էին յոգնելուց. Նա գիտէր ուշքը կենդրոնացնել էականի վրայ, ինչպէս կարողանում էր զօրքը կենդրոնացնել յաղթութիւնների համար. Նրա դատողութիւններն երբէք կախումն չունէին անգոյն դարձուածներից եւ վերացական մտքերից—նրանց մէջ արտայայտուում

էր իրականութեան անմիջական զգացումն: Բայց այս սովորականից դուրս մարդն երկու թոյլ կողմն ունէր. վառվռուն երեւակայութիւնը խաբում էր նրան հնարաւորութեան սահմանների վերաբերութեամբ. արդէն Եգիպտոսի արշաւանքը ցոյց էր տուել, որ նա կարող էր ոգեւորուել բոլորովին անիրագործելի ձեռնարկութիւններով, եւ ինչքան հեռու էր գնում նա չը լսուած յաջողութիւնների մէջ, այնքան աւելի ներշնչւում էր այնու, թէ իւր համար անհնարին բան չը կայ աշխարհիս երեսին: Բայց գլխաւորաբար, նա կատարելապէս անկարող էր զանազանել իրական զգացումների ոյժը: Մարդիկ, որ դրանց նշանակութիւն էին տալիս, նրա աչքում «գաղափարախօս» (իդէօլօգ) էին եւ ընդվայրաբան: Նրա գլխով անց էր կացել յեղափոխութիւնը եւ չէր հաւատում, որ յեղափոխականներն երբ եւ իցէ իրապէս կարող էին ազատութեամբ ոգեւորուիլ. «Դուք ինքներդ չէք հասկանում ձեր ներքին դրդումները», ասում էր նա դրանցից մէկին. «ո՛չ ապաքէն դուք էլ ա՛յնպէս էք ստեղծուած, ինչպէս ուրիշները,—անձնական շահն ամէ՛ն տեղ արտայայտուում է»: Նոյնպէս էլ նա չէր հասկանում կրօնական յափշտակութիւնն եւ հայրենասիրութիւնն: Լինելով Լուսաւորութեան [1]) մարմնացումն, նա աշխարհիս կեանքն երեւակայում էր, իբրեւ կռիւ ամէնքի ընդդէմ ամենեցուն, եւ չէր կարողանում կշտանալ յաղթութիւններից, քանի որ զգում էր որ եւ է մէկի անկախ գոյութիւնն իւր կողքին: Նրան կարող էր հանգստացնել միայն համաշխարհային տիրապետութիւնը:

Նախ պապի հետ.

Նապոլէոնը սակայն համոզուեցաւ, որ նիւթական զօրութիւնը պէտք է հաշուի առնէ և բարոյական ոյժը: Դաշանց գիրն հաստատելով, նա ճանաչեց եկեղեցու նշանակութիւնը, բայց նրա իսկական նպատակն էր եկեղեցին եւս իրեն հպատակեցնել կառավարութեան այլ ճիւղերի պէս: Բայց նա անյաղթելի դիմադրութեան հանդիպեց Պիոս Է. պապի կողմից, որ չը նայելով երկրորդական խնդիրներում տեղի տալուն, երբէք չէր

[1]) Աչքի ընկնող մատենագիր, տիկին դը-Ստալ, այսպէս է հազորդում այն տպաւորութիւնն, որ արել է Նապոլէոնն իւր վրայ. «մարդկային էութիւնը նրա համար մի փաստ է, մի իր, և ոչ իւր նըման մարդ: Նա ատելութիւն չ'ունի, ինչպէս սէր չ'ունի. Նրա համար գոյութիւն ունի միայն ինքը: Նրա ոյժը բացադրւում է եսականութեան անխառն հաշուով: Դա—մի ճարտար սատրինջ խաղացող է»:

կարող թոյլ տալ, որ կաթոլիկ եկեղեցին կայսերական կառավարութեան մի ճիւղը դառնայ։ Նապոլէոնը պապի դէմ գործ դրեց ամեն տեսակ ստիպողական միջոց. խլեց նրա աշխարհական տիրապետութիւնները. բանդարկեց Ֆոնտէնբլոյում. բայց նրա զէնքն անզօր էր անդէն ծերունու դիմաց, որովհետև սա յենւում էր հոգեկան կեանքի փաստերի վրայ, որոնք անձեռնմխելի են նիւթական զօրութեան կողմից։

Սպանիական պատերազմ։ Վիրաւորուած ազգային զգացման դիմադարձութիւնն սկսաւ այն երկրներում, որոնք վաղուց համարւում էին աննշան զինուորական մտքով—Փորթուգալիայում և Սպանիայում։ Նապոլէոնը հրամայեց գրաւել Փորթուգալիան, որովհետև դա միշտ առևտրական յարաբերութիւնների մէջ էր անգլիացոց հետ,—Սպանիան, որովհետև նրան օգտակար էր թւում ընդհատելու իւր հաւատարիմ դաշնակից տէրութեան գոյութիւնը։ Մարաջախտները մտան առանց մեծ նեղութեան Լիսաբոն և Մադրիդ, բայց երկիրը գրաւելուց անմիջապէս յետոյ սկսան ֆրանսիացոց դժուարութիւնները։ Ժողովուրդը սկսաւ վարել նրանց դէմ «մանր պատերազմ» (guerilla), որ նրանց մի վայրկեան հանգիստ չէր տալիս, ստիպուած էին պաշտպանել ամեն մի պաշարի սայլակ, յետ մղել յարձակումներն իւրաքանչիւր փոստի կայարանից, որ գրաւել էին ֆրանսիացիք, և ուր հնար էր լինում—լեռնային նեղ անցքերում, ամրացրացրած քաղաքներում, սպանիացիք յամառ դիմադրութիւն էին ցոյց տալիս. առանձնապէս հռչակուեցաւ իւր պաշտպանութեամբ Սարագոսսան—երկար պաշարումից և բազմօրեայ պատերազմից յետոյ փողոցներում, ֆրանսիացիք տիրեցին միայն աւերակի մի կոյտի։ Վերջապէս, սպանիացիք և փորթուգալացիք իրենց յուսահատական դիմադրութեան մէջ մնացուկ զօրքն անգլիացոց, որոնք չէին կարող Նապոլէոնի դէմ ուղարկել «մեծ բանակ», բայց

ուղարկեցին Պիրենեան թերակղզի մի քանի ընտիր զօրագնդեր և Ուելլենգտոն լորդի ճարտար ղեկավարութեամբ անգլիական զօրքի հին հռչակը պահպանեցին։ Նապոլէոն ինքը մի արշաւանք գործեց դէպի թերակղզին, բայց այդ մանր և դանդաղ պատերազմը տեղի տուող թշնամու և ասպատակազօրի դէմ նրա բանը չէր։ Նա շուտով թողեց այդ գործն իւր մարաջախտներին։ Սրանք այնտեղ անգլիացիներից մի քանի անգամ պարտութիւն կրեցին, նոյն իսկ հռչակաւոր Մասսենան չը կարողացաւ Ուելլենգտոնին յաղթել։ Բացի արդէն յիշատակուած դժուարութիւններից, անյաջողութիւնները բացադրւում էին մեծ մասով զօրավարների խարդաւանանքներով միմեանց դէմ. մարաջախտներն արդէն յագեցած էին յաջողութիւններով և ամենևին չէին ցոյց տալիս այն եռանդն ու թարմութիւնը, որոնց շնորհիւ իրենք այդպիսի փառաւոր վիճակի էին հասել։

Ցամաքային շրջափակումն։ Պիրենեան պատերազմի անյաջող ընթացքը Նապոլէոնին կատաղեցնում էր, մանաւանդ այն պատճառով, որ, դրա շնորհիւ, անգլիացիք առիթ էին ստանում իրեն վնասելու, մինչդեռ ինքը չէր կարողանում ձեռք հասցնել նրանց իրենց անմերձենալի կղզու վրայ։ Սակայն նա հնարեց կռուի միջոց նրանց դէմ—այսպէս կոչուած ցամաքային շրջափակումն (բլոկադ)։ Նա փակեց եւրոպական ցամաքի բոլոր նաւահանգիստներն անգլիական նաւերի համար, արգիլեց անպայման կերպիւ գնել անգլիական ապրանքներ և յայտարարեց, որ իւրաքանչիւր նաւ, որը կը մտնի անգլիական նաւահանգիստ, կը գրաւուի արքունիք։ Նապոլէոնի նպատակն էր ոչնչացնել անգլիական առևտուրը, որից կախումն ունէր կղզու ամբողջ բարօրութիւնը։ Նապոլէոնի հնարն սակայն անյաջող եղաւ։ Նախ՝ անգլիական առևտուրն այնքան էլ շատ չը վնասուեցաւ, ինչքան կայսրն էր կարծում։ Բացի դրանից, որ զօրեղ մաքսանենգութիւնը զարգացաւ

գաղթավայրերի այն ապրանքները բերելու համար առանց որոնց դժուար էր մնալ, անգլիացիք Եւրոպայում իրենց վաճառականութեան կտրուելու փոխարէն որոշ չափով վարձադրուեցան ընդարձակ տիրապետութիւններով, որ արին այդ ժամանակ աշխարհիս բոլոր մասերում ի վնաս Ֆրանսիայի և նրա դաշնակից տէրութեանց։ Իշխելով ծովի վրայ, նրանք այդ ժամանակ սպանեցին ֆրանսիացոց և հոլլանդացոց առևտուրը, որոնք առաջ ուժեղ կերպով մրցնում էին իր հետ։ Իսկ երկրորդը, ցամաքային շրջափակումն առաջ բերաւ եւրոպական ցամաքամասում բոլորովին անտանելի վիճակ։ Նապոլէոնը ճգնում էր ինչքան կարելի է խիստ պահպանել այդ շրջափակումն, անհրաժեշտ համարեց դրա համար գրաւելու Գերմանիոյ հիւսիսային ծովեզրի շերտը, միացնելու Հոլլանդիան, կարգելու ֆրանսիական սահմանապահ զօրք բոլոր նաւահանգիստներում. ձեռնարկելու ամենածանր տնային խուզարկութիւնների և գրաւումների։ Վերջապէս, նա պահանջում էր անընդհատ անձնազոհութիւններ բոլոր եւրոպական տէրութիւններից, որոնք դեռ ևս պահպանել էին իրենց անկախութիւնը, օրինակ Ռուսիայից։

1812 թ. պատերազմը։ Այդպիսի քաղաքականութիւնն անկարող էր վաղ թէ ուշ դիմադրութիւն չը զարթեցնել։ Ալէքսանդր կայսրը մի որոշ չափով օգտուեցաւ գործողութեան այն ազատութիւնից, որ Նապոլէոնը թողել էր նրան արևելքում,—նա գրաւեց Ֆինլանդիան և խլեց Տաճկաստանից Բեսսարաբիան։ Բայց նրա յարաբերութիւնները Նապոլէոնի հետ տարէ ցտարի աւելի էին լարուում։ Ցամաքային շրջափակումը զրկում էր Ռուսիային իւր արտադրած հում նիւթերի վաճառման գլխաւոր հրապարակից։ Գերմանիայում ազատաբար իշխելով, Նապոլէոնը վիրաւորում էր ռուսաց կայսեր ազգականներին— օրինակ, նա միացրել էր Ֆրանսիային Օլդենբուրգը, որ

պատկանում էր Ալէքսանդր կայսեր մերձաւոր ազգականին․ իսկ որ գլխաւորն էր, ռուսները չէին կարող անտարբեր դիտել այն անհամաչափ մեծ զօրութիւնն, որ Նապոլէոնը իւրացրել էր, նրա բռնի վարմունքը տէրութիւնների և ազգերի հետ, աւելի ևս այն պատճառով, որովհետև նա շարունակ սպառնում էր Ռուսիային Լեհաստանի վերականգնմամբ և, անկասկած, միայն հերթին էր սպասում, որ յարձակուի Ռուսիոյ վրայ։ Երկար պատրաստութիւններից յետոյ Նապոլէոնը, վերջապէս, խաղացրեց «մեծ բանակը» Ռուսիայի վրայ 1812 թուին․ 1812
կենդրոնում նոյն իսկ կայսեր հրամանատարութեան ներքոյ, գնում էր գլխաւոր զօրքը, կազմուած ֆրանսիացիներից, Ֆրանսիային և հռենոսեան դաշնակցութեան հպատակ գերմանացիներից, իտալացիներից և լեհերից։ Ձախ թևի զօրաբանակին, որ ուղղուած էր Պետերբուրգի վրայ, պիտի աջակցէին պրուսացիք, աջ թևի վրայ պիտի գործեր Փոքր Ռուսիայում աւստրիական զօրաբանակը։ Սահմանն անցան ընդամենը 600,000 մարդ, որոնց դէմ ռուսները կարող էին հանել միմիայն 200,000 հոգի, և Նապոլէոնը յաջողութեան մասին կասկած չ'ունէր։ Նա մի բան ուշադրութեան չէր առել— որ ինքը պիտի կռուէր ո՛չ միայն ռուսաց բանակի, այլ նաև ռուս ժողովրդի դէմ։ Թուական անհաւասարութիւնն և աշխարհագրական պայմանները ցոյց տուին ռուսաց թէ պատերազմական ինչ յատակագծի պիտի հետևէին. Բարկլայ-դէ-Տոլլէի զօրաբանակն սկսաւ յետ նահանջել դէպի երկրի խորքերը, Սմոլէնսկի մօտ միանահանջել դէպի երկրի խորքերը, Սմոլէնսկի մօտ միացաւ Բագրատիոնի հետ և դիմացաւ մի խիստ ճակատամարտի, բայց շարունակեց նահանջելը։ Սակայն ժողովուրդն ու զօրքը պահանջում էին մի վճռական ճակատամարտ, և Կուտուզովը, հրամանատարութիւնն ստանձնելով, Բորոդինոյի մօտ փակեց ճանապարհը դէպի Մոսկուա։ Բորոդինոյի ճակատամարտը Նապոլէոնի տուած

բոլոր ճակատամարտներից ամենից արիւնահեղն էր, այստեղ մասնակցում էին 130,000 Ֆրանսիացիք և 110,000 ռուսներ, իսկ ընկան մարտի մէջ 80,000 մարդ (գրեթէ երկու կողմից էլ հաւասար թուով)։ Չնայելով ծայրայեղ ջանքերին, Ֆրանսիացիք կարողացան գրաւել միայն քանի մի առաջնակարգ դիրքեր. միւս օրը ռուսները պատրաստ էին վերսկսելու մարտը, բայց Կուտուզովն աւելի զգուշաւոր համարեց Մոսկուայից միւս կողմն անցնել։ Երբ Նապոլէոնը Մոսկուա հասաւ, նա կատարելապէս համոզուած էր, որ արշաւանքն աւարտուած է և մնում էր միայն ընդունել յաղթուածների հպատակութիւնը։ Դրա փոխարէն նա քաղաքը գտաւ գրեթէ բնակիչներից թափուր. և ոչ մի միջոց չըգտաւ պաշար ժողովելու և կազդուրուելու։ Եւ ինչպէս որ Մոսկուայի ճանապարհի ամբողջ երկարութեամբ բնակիչները թողնում էին և այրում իրենց բնակարանները, այսպէս էլ Մոսկուան այրուեցաւ այն ժամանակ, երբ ընկաւ Ֆրանսիացոց ձեռքը, և հրդեհն անհնարին դարձրեց բոլորովին այնտեղ մնալն այնուհետև։ Արդէն հոկտեմբերին Ֆրանսիացիք դուրս եկան քաղաքից և սկսան վերադարձը։ Նապոլէոնը կամեցաւ փորձել դէպի հարաւ անցնել, Կալուգայի ճանապարհով, բայց հանդիպեցաւ յամառ դիմադրութեան ռուսաց կողմից. Նրա յառաջապահ գնդերն անյաջողութեան պատահեցին Տարուտինի և Մալօեարոսլաւեցի մօտ։ Ստիպուած պիտի վերադառնային Սմոլէնսկի ամայացրած ճանապարհով։ Նրանց հետապնդում էր Կուտուզովը, մասնաւոր գնդերը ջնջում էին Ֆրանսիական մանր վաշտերն և խլում էին նրանց պաշարը, գիւղացիք կոտորում էին յետ մնացողներին, սկսւում էր խիստ ձմեռը։ Մեծ բանակի նահանջը հետզհետէ սկսաւ դառնալ խառն փախուստ, կարգը լուծուեցաւ, կարգապահութիւնն անհետացաւ, և միայն ռուսաց յոգնածութիւնն և կրած

զրկանքները խոչընդոտ եղան նրանց բոլորովին ոչնչացնելու այն թշուառ ամբոխը, որ քարշ էր գալիս դէպի Լիտուա տանող ճանապարհով։ Բերեզինայի անցքը դարձաւ մի կատարեալ սպանդանոց. կամուրջներն ռուսաց թնդանօթների կրակի տակ ջարդուեցան, հազարաւոր մարդիկ գետամոյն եղան. «Մեծ բանակի» ողորմելի մնացորդներն հազիւ հասան սահմանագլուխը։

1813 թ. արշաւանքը։

Նապոլէոնը թողեց իւր զօրքի մնացորդները Լիտուայում և շտապեց Ֆրանսիա, որպէս զի նոր զինուորական զօրութիւն ժողովէ։ Երիտասարդներն սկսած 16-տարեկանից զէնքի կոչուեցան. այն զօրագնդերն որ ուղարկուած էին Պետերբուրգի վրայ, Գերմանիայի զանազան տեղերում ցրուած բերդապահների հետ միասին, կազմում էին մի ահագին բանակ։ Բայց «մեծ բանակի» կործանումն իբրև որոտման կայծակ սթափեցրել էր հպատակ ազգերին։ Նրանք զգացին, որ հասել է ազատութեան ժամը. երբ ռուսաց գնդերն երևացին Գերմանիայում, նրանց դիմաւորեցին ուրախութեամբ, ինչպէս ազատարարների. ամենից առաջ բաժանուեցաւ Նապոլէոնից Պրուսիան և լարեց բոլոր ուժերն, որ կարողանայ դիմանալ յուսահատական կռուին. ապա օժանդակ գունդ ուղարկեց Շուեդիան։ Ռուս և պրուսիացի զօրավարները կարող չէին ամենևին համեմատուել իրենց հանճարեղ ախոյեանի հետ. նա հասցրեց սրանց քանի մի զգալի հարուածներ, բայց ժողովրդական շարժումն իւր գործը կատարում էր, դաշնակից զօրքերը չէին յուսահատում, Գերմանիայում յուզմունքն աճում էր, Աւստրիան ևս ժամանակն հասած համարեց գործի մէջ մտնելու։ Դրէզդէնի մօտ Նապոլէոնը կրկին մի մեծ յաղթութիւն տարաւ դաշնակիցների միացեալ զօրութեան վրայ, բայց դրանից յետոյ անմիջապէս զինուորական գործողութիւնների ընթացքի մէջ յեղաշրջումն պատահեց։ Նապոլէոնը Վանդամմի զօրագունդն

ուղարկեց նահանջող դաշնակից բանակի շուրջը պտըտելու, որպէս զի փակէ նրա գլխաւոր ճանապարհը դէպի յետ և լեռների կողմը դարձնէ։ Եթէ այդ ծրագիրն յաջողէր, դաշնակիցները պիտի սարսափելի ջարդ ուտէին։ Բայց Վանդամմը Կուլմի մօտ հանդիպեց ռուսաց կայսերական թիկնապահներին, որոնք չը նայելով ֆրանսիացոց եռապատիկ աւելի բազմութեան և իւրեանց սոսկալի կորստներին, դիմացան բոլոր յարձակումներին։ Միւս օրն օգնութեան հասան պրուսիացիք, և Վանդամմի զօրագունդն անձնատուր եղաւ։ Փոխանակ Դրեզդենի յաղթութիւնից օգտուելու, Նապոլէոնը ստիպուեցաւ նահանջելու դէպի Լայպցիգ։ Այստեղ տեղի ունեցաւ երեքօրեայ գլխաւոր ճակատամարտն, ուր դաշնակիցների թիւը շատ աւելի էր քան ֆրանսիացոցըն և ուր նրանք տարան կատարեալ յաղթանակն։ Ճակատամարտի ամենատաք ժամանակը սաքսոնական զօրքը թողեց ֆրանսիացոց. Լայպցիգի ճակատից յետոյ դաւաճանեցին բաւարացիք։

1814 Թ. արշաւանքը։ Սակայն Նապոլէոնն իւր գործը կորած չէր համարում։ Կրկին անգամ զօրաժողով արաւ և հաւաքեց ամենին, որոնց այլևս կարող էր, և դաշնակիցների դէմ յամառ պաշտպանողական պատերազմ վարեց Ֆրանսիայում։ Իւր արշաւանքներից ոչ մէկի մէջ նա աւելի զօրաւոր կերպիւ չէ ցոյց տուել իւր զինուորական ճարտարութիւնն, փոքր ուժերով նա բաժան բաժան էր անում հակառակորդներին և հարուածում էր նրանց առանձին-առանձին։ Բայց դաշնակցական ահագին բանակը թէև դանդաղ ու գայթելով, դիմում էր դէպի Փարիզ. իւրաքանչիւր յաղթութիւն Նապոլէոնին այնպիսի կորուստներ էր պատճառում, որի տեղը նա լցնել կարող չէր. ֆրանսիական ազգն ուժից ընկել էր. տհաս երիտասարդութիւնն հալուում էր հիւանդութիւններից և պատերազմական կեանքի զրկանքներից. մարդ չըկար դաշ-

նակիցների դէմ այն ազգային պատերազմը վարելու, որ վարեց հասարակապետութիւնն 1792 և 1793 թուականներին, որ վարեցին սպանիացիք և ռուսներն իրենց հայրենիքում։ Փարիզի առումն ստիպեց, վերջապէս, Նապոլէոնին հրաժարուելու։ Ճարտար դիւանագէտ Տալէյրանը կարողացաւ գրաւել Ֆրանսիայ համար դաշնակից իշխանների մէջ առաջին տեղը բռնող Ալէքսանդր կայսեր հովանաւորութիւնն, և խաղաղութեան պայմանները Ֆրանսիայի համար բաւական տանելի երևացին. նա ստիպուեցաւ դառնալու իւր 1792 թուականի սահմաններին, այնպէս որ նրան թողնուեցան յեղափոխութեան արած առաջին աշխարհակալութիւնները [1]։ Նապոլէոնը ստիպուեցաւ գահից հրաժարուել. Նրան թողնուեցաւ իբրև կալուած Իտալիոյ արևմտեան ափին մօտ փոքրիկ Էլբա կղզին։ Նրա հեռանալուց անմիջապէս յետոյ Փարիզ մուտք գործեց Լուդովիկոս ԺԸ. [2]), Լուդովիկոս ԺԶ-ի եղբայրը, որ Եւրոպայից և Ֆրանսիայից ճանաչուեցաւ ֆրանսիական թագաւոր։ 1792—1843

1792

Թէպէտ Լուդովիկոս ԺԸ. գահ բարձրանալու ժամանակ «հրովարտակ» էր շնորհել, որի մէջ խոստացել էր ֆրանսիացոց անձնական ազատութիւն և ներկայացուցիչների ժողովներ, բայց նրա հետ միասին վերադարձող փախստականներն երազում էին հին վիճակի կատարեալ վերականգնումն և աշխատում էին, որ եկեղեցուն եւ ազնուականներին վերադարձուին այն հողերը, ուր արքունիք էին գրաւուած յեղափոխութեան ժամանակ ու անցել էին բազմաթիւ մանր կալուածատէրերի ձեռքը։ Այս բանը ժողովրդի մէջ զօրեղ գրգիռ յառաջ բերաւ, որից օգտուեցաւ Նապոլէոնը։ Մարտի 1-ին 1815 թ. նա ցամաք դուրս եկաւ հարաւային Ֆրանսիա. Նրան Հարիւր օր։

[1]) Աւինիօնը, Ալզասի քանի մի գաւառներն ու Սաւոյիոյ մի մասը։

[2]) Լուդովիկոս ԺԷ. համարուում էր Լուդովիկոս ԺԶ-ի որդին, որ մեռել էր բանտում յեղափոխութեան ժամանակ։

յարեցան անմիջապէս բազմաթիւ կուսակիցներ, որոնց համար կայսրութեան փառաւոր գործերն աւելի արժէին, քան թէ նրա պատճառած թշուառութիւնները։ Նէյ-մարաջախտը, որ Նապոլէոնի դէմ էր ուղարկուել, միացաւ նրա հետ և կայսրը մտաւ Փարզի բնակիչների ցընծութեան աղաղակներով։ Նա խոստացաւ ազատամիտ քաղաքանութեան հետևիլ և կանչեց օգնութեան բոլորին, որոնց համար թանգ էին յեղափոխութեան արգասիքները. Ներքին գործոց նախարար նշանակուեցաւ հասարակական փրկութեան յանձնաժողովի նախկին անդամ Կարնոն։ Չը սպասելով դաշնակից թշնամեաց յարձակմանը, նա արագութեամբ դիմեց Բելգիա, ուր ժողովուած էին անգլիական և պրուսական զօրքերը հրամանատարութեամբ Ուելլինգտոնի և Բլիւխերի։ Նրան յաջողեց այն շարժումն, որով յաճախ օգտուել էր ընդդէմ դաշնակիցների բանակի. մինչև Նէյը զբաղեցնում էր անգլիացոց, Նապոլէոնն ինքը ջարդեց պրուսիացոց Լինէյի մօտ։ Ապա թողնելով, որ իւր մարաջախտներից մէկը հալածէ պրուսացոց, կայսրը դարձաւ Ուէլլենգտոնի ընդդէմ և յարձակուեց նրա վրայ Վատերլօում (18 յունիսի)։ Անգլիացիք սակայն դիմացան նրա յարձակումներին մինչև այն ժամանակ, երբ երեկոյեան դէմ ֆրանսիական աջ թևի վրայ ընկաւ Բլիւխերը, որ կարողացել էր ժողովել յաղթուած պրուսիացոց և բերել նրանց կռուի դաշտը հէնց լաւ ժամանակին։ Ճակատամարտը վերջացաւ կատարեալ պարտութեամբ, Նապոլէոնի վերջին պարտութեամբ։ Այս անգամ նրան չը թողին Ֆրանսիային մօտիկ, այլ արգիլեցին սուրբ Հեղինէի հեռաւոր կղզու վրայ [1])։

Վիեննայի վեհաժողովը 1814

Դեռ ևս 1614 թուին սկսուել էին Վիեննայում իշխանների և դիւանագէտների բանակցութիւններն Եւրոպայի կարգաւորութեան մասին։ Շատ շուտով աչքի

[1]) Նա մեռաւ այնտեղ 1821 թուին։

ընկան արմատական տարբերութիւնները շահերի և հայեացքների մէջ մի կողմից Ռուսիոյ և Պրուսիայի, միւս կողմից Անգլիայի, Աւստրիայի և Ֆրանսիայի։ Նապոլէոնի վերադարձը սակայն հաշտեցրեց դաշնակիցներին, Ռուսիան ստացաւ Վարշաւի մեծ դքսութեան գլխաւոր մասը։ Շուեդիային միացուեցաւ Ֆինլանդիայի և Պոմերանիոյ փոխարէն Նորվեգիան։ Պրուսիան յետ ստացաւ լեհական նահանգներն, որ բաժին էին ընկել իրեն երկրորդ ու երրորդ բաժանմամբ, և, բացի դրանից, շուեդական Պոմերանիան, նախնի պրուսական կալուածներն Հռենոսի վրայ և Հռենոսի ձախ ափը մինչև Կոբլէնց։ Աւստրիան յետ ստացաւ Տիրոլն ու Զալցբուրգն և դրա հետ միասին գլուխ կանգնեց գերմանական դաշնակցութեան։ Սա կազմուեցաւ երեսուն և ութ տէրութիւններից, որոնք ուղարկում էին պատգամաւորներ դաշնակցական խորհրդին, որ նիստեր էր կազմում Ֆրանկֆուրտում Մայն գետի վրայ։ Հոլլանդիան եւ Բելգիան միացան ու կազմեցին մի թագաւորութիւն։ Զուիցերական հասարակապետութիւնն յայտարարուեցաւ չեզոք և Եւրոպայի հովանաւորութեան տակ գտնուող։ Իտալիայում Աւստրիան ստացաւ Լոմբարդիան և Վենետկեան երկիրն, իսկ Սարդինիոյ և Երկուց Սիկիլիայից թագաւորները վերահաստատուեցան իրենց իրաւունքների մէջ—այնպէս, ինչպէս և պապը։ Փորթուգալական և սպանիական թագաւորները նոյնպէս յետ ստացան իրենց երկիրներն։ Անգլիան իւր տիրապետութիւններից պահեց Մալտան Միջերկրական ծովի մէջ, սուրբ Մաւրիկիոսի կղզին և մի քանի Անտիլեան կղզիք, Ֆրանսիայից խլուած, Ցէյլոնն և Բարեյուսոյ հրուանդանն, Հոլլանդիայից խլուած։ Փարիզի երկրորդ խաղաղութիւնը,
որ Ֆրանսիայի հետ կապուեցաւ 1815 թ. արշաւանքից 1815
յետոյ, փոփոխեց եւրոպական տիրապետութիւնների

բաժանումն միայն այնու, որ Ֆրանսիան յետ մղուե-
1789—1799 ցաւ դէպի իւր 1789 թ. սահմաններն, և ոչ 1792 թ., և, հետևաբար, կորցրեց մի քանի ալզասեան և սաւոյեան գաւառներ. Աւինիօնը նոյնպէս թողնուեցաւ Ֆրանսիային։

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

Տասնեւիններորդ դար.

ԳԼՈՒԽ Ա.

ՅԵՏԱՇՐՋՈՒՄՆ ԵՒ ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Յեղափոխութիւն և կայսրութեան ազդեցութիւնն 1789։

Վիեննայի վեհաժողովը չը վերականգնեց Եւրոպայի քարտէսն այնպէս, ինչպէս այդ էր 1789 թուին. շատ դիպուածներում պետութիւնները հաշուի էին առնում թէ զօրութիւնների բաժանումն 1815 թուին և զանազան տէրութիւնների դերը Նապոլէոնի դէմ վարած պատերազմներում, և թէ այն փոփոխութիւններն, որ գործել էին եւրոպական կազմակերպութեան մէջ յեղափոխութիւնն ու կայսրութիւնը։ Առանձին առանձին տէրութիւնների ներքին կեանքի մէջ ևս ստիպուեցան որոշ *զիջումներ անել 1798 թուի սկզբունքներին:* Լուդովիկոս ԺԸ. տուաւ Ֆրանսիային բարեշնորհումների հրովարտակ և ներկայացուցչական հաստատութիւններ. Ալէքսանդր Ա. իւր լեհական թագաւորութեան մէջ հաստատեց մի օրէնք, որ հիմնուած էր մայիսի 3-ի սահմանադրութեան վրայ. Գերմանիայում մանր տէրութիւնների մեծագոյն մասի մէջ գործում էին ներկայացուցչական հաստատութիւնները. իսկ Պրուսիայում թագաւորը հէնց ազատութեան պատերազմի ամենատաք ժամանակը խոստացաւ ի նշան իւր վստահութեան և ողորմածութեան դէպի ժողովուրդը մըտ-

ցնել այդ հաստատութիւնները, նոյն իսկ գերմանական «դաշնակցական կանոնադրութեան» մէջ ներմուծուեցաւ մի յօդուած այն մասին, որ առանձին տէրութիւնները պիտի կառավարուին «դասակարգերի» (Stände) աջակցութեամբ։

Սրբազան դաշնակցութիւն։

Բայց, չը նայելով այս զիջումներին, եւրոպական պետութիւնների յամառ կռուի մէջ Ֆրանսիայի դէմ արտայայտուում էր այն խորին հակադրութիւնը, որ կար մի կողմից այն հասարակութեան մէջ, որ խզել էր իւր կապն պատմական աւանդութիւնների հետ և վերակազմուել գիտակցական հաշուի հիման վրայ, և միւս կողմից այն հասարակութեան, որ հաստատուած էր դարաւոր հնութեան վրայ։ Յաղթութիւնները 1814 և 1815 թուականներին նշանակ էին վերադարձի դէպի հինն ու յետաշրջութեան յաղթանակի յեղափոխութեան վրայ։ Ալէքսանդր կայսրը, գլուխ կանգնած ռուս ժողովրդին, որ ամենից քիչ էր ենթարկուել յեղափոխութեան ազդեցութեան, խորհեց ընդ միշտ ամրապնդել այն դիմադրութիւնն, որով ներշնչուել էր ազատման պատերազմների ընթացքում, և դրանով ստեղծել եւրոպական քաղաքականութեան համար հաստատուն հիմունք։ Երիտասարդութեան ժամանակ կայսրը գտնուել էր ֆրանսիական ազատամտութեան զօրեղ ազդեցութեան տակ. իւր թագաւորութեան վախճանին, ընդհակառակն, նա մօտեցաւ կրօնական ցնորամիտներին, օրինակ՝ Լիֆլանդացի բարոնուհի Կրիւդների, և նրանց հետ միասին կազմեց «Սրբազան դաշնակցութեան» ծրագիրն։ Այն թղթում, որով այդ ծրագիրն առաջարկում էր իւր մերձաւորագոյն ընկերներին—Ֆրանց կայսեր և Ֆրիդրիխ Վիլհէլմ Գ. թագաւորին, յայտնուածէր այն միտքը, թէ քաղաքականութեան հիմքը պիտի լինի քրիստոնէական կրօնը. քրիստոնէական քաղաքականութիւնն իրականացնելու համար անհրաժեշտ է միաբան գործու-

նէութիւն, որպէս զի միացեալ ուժերով ազգերի կեանքից հեռացնեն ամեն վնասակար բան և ուղղեն դրանց ընթացքը դէպի բարին. Այս գաղափարական ծրագիրն ունեցաւ անկասկած գործնական նշանակութիւն. դա կրօնական սկզբունքն հակադրում էր մարդկային բանականութեան այն տիրապետութեան, որ քարոզել էին ԺԸ. դարու փիլիսոփաներն և յեղափոխութիւնը փորձել էր իրականացնելու. առանց ներքին կառավարութեան մանրամասնութիւններին դիպչելու, Ալէքսանդր կայսեր ծրագիրն աչքի առաջ ունէր սակայն տիրապետներին, իբրեւ իշխանութեան միակ ներկայացուցիչներին երկրիս երեսին. վերջապէս, նա միացրեց Եւրոպայի ամենազօրաւոր պետութիւններին «Սրբազան դաշնակցութեան» մէջ, որ պէտք է ազդէր ոչ միայն միջազգային յարաբերութեանց վրայ, այլ պէտք է ուղղութիւն տար ընդհանրապէս Եւրոպայի ամբողջ կեանքին։ Մտադրութիւն կար դաշնակցութեան հրաւիրելու բոլոր եւրոպական տիրապետներին, բացի սուլթանից, որովհետև նրան չէր կարելի յանձնարարել քրիստոնէական քաղաքականութիւնն, և բացի պապից, որ իւր Քրիստոսի փոխանորդ լինելու յաւակնութեամբ՝ չէր կարող տեղ ունենալ քրիստոնեայ թագաւորների եղբայրութեան մէջ։ Անգլիական թագաժառանգ կառավարիչը [1] պարտք համարեց մեկուսի մնալ, որովհետև չէր կարող ինքն իրեն տէր համարել բարձրագոյն իշխանութեան Անգլիայում. մնացած պետերը համակրութիւն և համաձայնութիւն յայտնեցին, բայց դաշնակցութեան գլխաւոր մասնակիցները մնացին արևելեան երեք միապետները—ռուսաց և աւստրիացոց կայսրերն և պրուսական թագաւորը։

Սրբազան դաշնակցութեան գործնական ղեկավարը դարձաւ աւստրիական դիւանապետ իշխան Մետտերնիխը։

[1] Գէորգ Գ. խելագարուեց, և նրան փոխարինում էր պետական գործերում իւր որդին, թագաժառանգ-կառավարիչը (պրինց-ռեգենտ)։

Ծանօթանալով առաջին անգամ Ալէքսանդր Ա-ի ծրագրի հետ, նա գտեց արհամարհանքով, որ դրանք բոլորն էլ «դատարկ խօսքեր» են. բայց այդ արգելք չեղաւ նրան ապագայում լաւ օգտուելու «դատարկ խօսքերից» Աւստրիոյ և աւստրիական միահեծանութեան ի նպաստ։ Իշխան Մետտերնիխը Նապոլէոնից քիչ չէր ատում «գաղափարատեսներին», բայց մինչդեռ Նապոլէոնն իւր ձևով ծառայում էր մեծագոյն գաղափարներից մի քանիսին, Մետտերնիխը պետական անձի բոլոր ճարտարութիւնը տեսնում էր գոյութիւն ունեցող կարգի պահպանութեան և ամէն մի յառաջադիմութեան ճնշելու մէջ։ Նա զգում էր, որ Աւստրիոյ պէս պետութիւնն ամէն մի փոփոխութիւնից կարող էր միայն վնաս կրել, որ դա պահպանուում է միայն իւր անշարժութեամբ, որ ինքը պէտք է խեղդէ բոլոր ազգայնական և ազատաբարական ձգտումները։ Սրբազան դաշնակցութեան շնորհիւ, աւստրիական քաղաքականութիւնը ձեռք ձրգեց իւր հարևանների հզօր օգնութիւնն, որպէս զի յետաշրջումն առաջ բերէ ամբողջ Եւրոպայում։

Գերմանիա. Սրբազան դաշնակցութեան ամենից աւելի մերձաւոր էին գերմանական գործերը։ Մետտերնիխի հայեցակէտով դրանք ամենևին բարեյաջող վիճակի մէջ չէին։ Գերմանական փառաւոր գրականութիւնը ԺԸ. դարու վախճանին և մեր դարու սկզբան սովրեցրել էր կրթուած գերմանացոց աւելի վեր նայել այն պատնէշներից, որոնք բաժանում էին Գերմանիան մի քանի տասնեակ տէրութիւնների, զգալ իրենց անդամ մի գերմանական ազգի։ Ազատարարական պատերազմների ժամանակ գերմանական ազգն առաջին անգամ սպառազինուեց մի ազգային գործի համար, գերմանացի զինուորներն ոգևորուած էին այն գիտակցութեամբ, որ իրենք կռուում են իւրեանց հայրենիքի լաւագոյն ապագայի և նրա միութեան և ազատութեան համար։ Երբ դրա

փոխարէն երևեցաւ, որ Վեննայի վեհաժողովի դիւանագէտները մշակեցին Գերմանիոյ համար այնպիսի կազմակերպութիւն, որն իւր անմտութեամբ քիչ էր տարբերուում հանգուցեալ „գերմանական ազգի հռովմէական սրբազան կայսրութիւնից", իսկ կառավարութիւնը փոխանակ ժողովրդի վրայ յենուելու, նրա գլխին խիստ ոստիկանական հսկողութիւն կարգեց, ամբողջ Գերմանիայում տարածուել սկսաւ դժգոհութիւնն, որ ուսանող երիտասարդութեան մէջ արտայայտուում էր արգելուած ընկերութիւններ հիմնուելով և աղմկալից ցոյցերով։ Գերմանական «բուրշերը» [1]) քննում էին գաղտնի ժողովներում և գումարումներում Գերմանիոյ միութեան և ազատութեան խնդիրները։ Եկեղեցական բարենորոգութեան երեքհարիւրամեակին, 1817 թ., Վարտբուրգում ժողովուեցան մեծ բազմութեամբ ուսանողներ և դասախօսներ, արտասանուեցան շատ վառ ճառեր, և վերջը խարոյկի վրայ այրուեցան յետաշրջական հրապարակախօսների գրութիւնները, նոյնպէս և զանազան նշանական իրեր, ինչպէս օրինակ աւստրիական ենթ-սպայի գաւազանը։ Երիտասարդութեան զայրոյթն երբեմն աւելի ցաւալի ձևեր էր ստանում. այսպէս, Ենայի համալսարանի ուսանող Զանդն սպանեց թատրերգու և ռուսական ծառայութեան քաղաքական խորհրդական Կոցէբուին, որին համարում էին ռուսաց լրտես։ Մետտերնիխի նախաձեռնութեամբ գերմանական տէրութիւնները խստացրին գրաքննութիւնը, համալսարաններն ենթարկեցին խիստ հսկողութեան և դաշնակցական խորհուրդին կից Ֆրանկֆուրտում կազմեցին մի քննական ատեան արմատախիլ անելու ազգային և քաղաքական շարժումները։

Ամերիկան և հարաւ-արևմտեան Եւրոպան. Գերմանիայում միայն ոստիկանական միջոցներով էին գոհանում, բայց հարաւ—արևմտեան Եւրոպայում

1) Բուրշեր—իսկապէս „ջահիլներ", այսպէս են կոչւում ուսանողները.

Սրբազան դաշնակցութեան քաղաքականութիւնը յառաջ բերաւ զինեալ մեջամտութիւն։ Սպանիայում և գաղութներում, Փորթուգալիայում և Իտալիայում քաղաքական կեանքը զանազան պատճառներով անտանելի ձևեր ստացաւ և յառաջացրեց կրթուած մարդոց մէջ զօրաւոր յեղափոխական շարժումն։ Սպանիայի ամերիկական գաղութներում կրէօլները, սպանիացի աշխարհականների տեղացի սերունդը, գանգատուում էին մայր երկրի անխնայ յափշտակութիւնների, տեղական ուժերի վարչական գործերից կատարեալ մերժման դէմ ի նպաստ սպանիացոց, որոնք վիրաւորական կերպիւ գոռոզ էին պահում իրենց, չը նայելով իրենց անընդունակութեան։ Բուն Սպանիայում իշխում էր «կամարիլլան», այսինքն՝ պալատականների մի խումբը, որ մերձաւոր և սիրելի էին դարձել չնչին ու չարասիրտ Ֆերդինանդ Է. թագաւորին. մոլեռանդ հոգեւորականութիւնը նորից սկսել էր իւր հալածանքն ընդդէմ ազատամտութեան։ Փորթուգալիայում հաստատուել էր իբրև մի տարօրինակ կարգ։ Թագաւորն ապրում էր Բրազիլիայում, իսկ երկիրը կառավարում էին անգլիացիք, որոնք Փորթուգալացոց հետ վարուում էին իբրև ստորին ցեղի մարդոց հետ, որոնք բնութիւնից որոշուած են հրամաններ կատարելու և արդիւնքներ տալու։ Ամենից աւելի սարսափելի էր գործերի դրութիւնն Իտալիայում։ Այս երկիրը, որ մի փոքր միութիւն էր ստացել Ֆրանսիացոց իշխանութեան տակ, կրկին բաժան բաժան արուեցաւ մանր նահանգների։ Նրա մէջ կազմուեցան ճնշման և խաւարամտութեան երեք կենդրոններ. պապական երկրում իշխում էին անսահման իրաւունքներով եկեղեցու գլխապետները, իսկ ազատամտութեան դէմ կռուելու համար վերահաստատուեցաւ իւր բոլոր իրաւունքներով յիսուսեան կարգը. Նեապոլում եւ Սիկիլիայում Ֆերդինանդ Ա. իւր կառավարական գործու-

նէութեան մէջ ցոյց էր տալիս հարաւային-իտալական բնաւորութեան բոլոր վատ կողմերն—տգիտութիւն, սնոտիապաշտութիւն, ծուլութիւն, արիւնածարաւ վրէժխնդրութիւն, բարոյական զգացման կատարեալ բացակայութիւն։ Վերջապէս, Թերակղզու հիւսիսում ժողովրդին ճնշում էր աւստրիական լուծը, կանոնաւոր, հաշուած, սառնարիւն սահմանափակութիւններով օտարերկրեայ ոստիկանութեան։ Հիւսիս արևմուտքում փոքրիկ սարդինեան թագաւորութիւնն անկարող էր հակազդեցութիւն անել բոլոր այս չար ոյժերի դէմ և ինքն էլ ընկաւ աւստրիական ազդեցութեան տակ։

Ապստամբութիւններ Ամերիկայում և հարաւ-արեւմտեան Եւրոպայում 1819

Ապստամբութիւններն սկսան Ամերիկայում—կրէօլները տասը տարի փոփոխակի յաջողութեամբ կռիւ մղեցին սպանիական բանակի դէմ, վերջապէս 1819 թուին Բոլիվարին յաջողուեցաւ հաստատ կերպով հիմնելու Կոլումբիայի հասարակապետութեան անկախութիւնը. Չիլին, Պերուն, Ուրագուայն, Մեքսիկան նոյնպէս ձեռք բերին անկախութիւն, և բոլոր այդ հասարակապետութեանց մէջ սկսաւ այն առանձնատեսակ, եւրոպացոց համար քիչ հասկանալի, քաղաքական կեանքը, որ ցարդ շարունակուում է այնտեղ. կուսակցութիւնների կատաղի երկպառակութիւնք, փառասէր առաջնորդների անսովոր արկածներ, շարունակ և անպտուղ յեղաշրջումներ, արիւնահեղ ազգամիջեան կռիւներ։

Հիւսիսային-ամերիկայի գաղութների բաժանումը ցոյց տուաւ սպանիական կառավարութեան անպիտանութիւնն իւր կատարեալ փայլով, նոյն իսկ Սպանիայում ապստամբութիւն սկսաւ զօրքի մէջ, որ ժողովել էին Ամերիկա ուղարկելու։ Ազգի մեծագոյն մասը հոգևորականների ազդեցութեան տակ քիչ էր զարգացած և անտարբերութեամբ էր վերաբերուում ամէն բանի. բայց կրթուած դասակարգի եւ զօրքի մէջ խիստ տարածուած էին Ֆրանսիական յեղափոխութեան գաղափարներն։

Ապստամբած զօրքերն կարողացան առանց մեծ ջանքի
յաղթել պալատի դիմադրութեան, և Ֆերդինանդ Է.
1812 հանդիսաւոր կերպով երդուեցաւ պահպանելու „1812 թ.
սահմանադրութիւնն“, որ կազմուած էր ֆրանսիական
1791 1791 թ. սահմանադրութեան հետևողութեամբ, բայց
աւելի ազատամիտ: Սպանիական զինուորական ապստամ-
բութիւնը նոյն ձևով շարժումն առաջ բերաւ Փորթու-
գալիայում: Թագաւորն ստիպուեցաւ վերադառնալ Բրա-
զիլիայից և ընդունել սահմանադրութիւնն, որին իբրև
1812 օրինակ ծառայեց սպանիական սահմանադրութիւնն 1812
թուականի:

Իտալիայում ևս չը դանդաղեցին բռնկելու *զինուորական ապստամբութիւններ* վաղուց արդէն նախապատրաստուած էր հողը «կարբօնարիների» (ածխագործների) գաղտնի ընկերութիւնների միջոցով, որոնք կազմուած էին ֆրանկ մասոնների օրինակով, բայց հետևում էին զուտ քաղաքական նպատակների—Իտալիոյ ազատութեան և միութեան: Նէապոլսում և Սարդինիայում զօրքերն ստիպեցին թագաւորնին ընդունել սպանիական սահմանադրութիւնը:

Վեհաժողով-ներ. Սրբազան դաշնակցութիւնը չէր կարող թոյլ տալ, որ ռոմանական երկրներում բացարձակ միապետութիւնները ջնջուէին: Ամերիկական գործերի մէջ խառնուելու հարկաւ ոյժ չ'ունէին, բայց Իտալիայում և Պիրենեան թերակղզում սահմանադրական շարժման դէմ հանդէս դուրս եկան դաշնակից միապետները բոլոր եռանդով: Մի քանի անգամ նրանք *վեհաժողովներ* [1]) կազմեցին, գործերի դրութիւնը քննելու և գործողութեան ծրագիր կազմելու համար: Աւստրիացիք սիրով յանձն առան Իտալիան կարգի բերելու, զօրք խաղացրին Նէապոլիս և Պիէմոնտ և դիւրութեամբ ընկճեցին իտալիացոց դիմադրութիւնը: Սպանիայում կարգը վերականգնելն

[1]) Աախէնում, Տրոպպայուում, Լայբախում և Վերոնայում:

յանձն առան ֆրանսիացիք և թէպէտ աւելի եռանդուն դիմադրութեան պատահեցին, բայց այսու ամենայնիւ յաղթեցին սպանիացոց և վերահաստատեցին Ֆերդինանդ Է-ին իւր իրաւունքների մէջ ամբողջութեամբ: Սահմանադրականների պարտութիւնն ամենուրեք աւարտուեցաւ շարժման մասնակիցների անխնայ պատուհասուելով, ծանր լրտեսութեամբ և կասկածելի անձանց հալածանքով, և մտքի ու լուսաւորութիւն ընկճմամբ: Նէապոլսում կառավարութիւնը, դրդուած հոգևորականութիւնից, այնտեղն հասաւ, որ արգիլեց գրել կարդալ ուսանել այն ամենքին, որոնք չ'ունէին գոնէ 1500 ֆրանկի ստացուածք: Մինչ այդ, Եւրոպայի հարաւ արևելքում սկսուում էր մի կռիւ, որի վերաբերութեամբ Սրբազան դաշնակցութեան պետերի հայեացքները տարբերուում էին:

Տաճկաստան. Բալկանեան թերակղզու բազմաթիւ քրիստոնեայ բնակիչները դեռ ևս գտնուում էին տաճիկների լծի տակ, որոնք չը նայելով իրենց չորսհարիւրամեայ ներկայութեան Եւրոպայում, այսու ամենայնիւ այնպիսի բարբարոսներ էին մնացել, ինչպէս էին ԺԵ. դարում: Առաջուան նման „ռայան“ [1]) նրանց համար մի հօտ էր, որ պաշտպանութիւնից զուրկ էր թէ իշխանութեան ներկայացուցիչների հալածանքների և թէ հարևան մահմեդականների գազանական կրքերի դէմ: Մինչդեռ կռիւը տաճիկ լուծի դէմ այլ ևս անյուսալի չէր թուում: Անցել էին այն ժամանակները, երբ սուլթանը միաժամանակ սպառնում էր Կիեւին ու Վեննային. ԺԷ. դարու վերջից սկսած տաճիկներն ստիպուած էին տեղի տալ Ռուսիոյ և Աւստրիայի առաջև, նահանգ նահանգի յետուից զիջանել: Ներքին կառավարութեան մէջ այդ բարբարոսները ոչ մի բան չէին սովորել իրենց

[1]) Արաբերէն բառ, որ տառացի նշանակում է—հօտ. տաճիկները այդ անունն էին տալիս նուաճուած քրիստոնեայ բնակիչներին:

հիւսիսային հարևաններից, և եթէ նրանց իշխանութիւնը դեռ տևում էր, շնորհիւ մահմէտական մոլեռանդութեան, զինուորների քաջութեան և հակառակորդների երկպառակութիւնների, դրա փոխարէն քաղաքական կազմը փոխուեցաւ միմիայն այն մտքով, որ աւելի խառնաշփոթութիւն տիրեց. տէրութեան ելևմուտքը գտնւում էր ողբալի վիճակի մէջ, զօրքը կազմալուծուած էր, դատարանները ամենևին հոգ չէին տանում արդարադատութեան մասին, ամենուրեք ասպատակում էին աւազակախմբերը: „Դուռը“ [1]) գտնւում էր պալատական կուսակցութեանց և չափազանց սանձարձակ թիկնապահների (Եանիչէրիների) ձեռքին, փոխարքաներն առանց պատասխանատուութեան իշխում էին իրենց նահանգներում, դրանցից երկուսը—Մէհմէտ-Ալին Եգիպտոսում և Ալի-փաշան Ալբանիայում—պահում էին իրենց իբրև ինքնուրոյն իշխաններ: Ստրկացած քրիստոնեայ ազգերն աչքի առաջ ունէին նոյն իսկ մահմեդական լծից ազատման օրինակներ: Չը խօսելով չէրնոգորցոց մասին, որոնք իրենց լեռնային ամրութեանց վրայ երբէք չէին ընկել կատարելապէս տաճիկ իշխանութեան տակ, յաջողուեց սերբերին [2]) և ռումինացոց Ռուսիայի օգնութեամբ ձեռք բերել ինքնավարութիւն: Առհասարակ Կատարինէ Բ-ի և Ալէքսանդր Ա-ի պատերազմներից յետոյ ամբողջ Բալկանեան թերակղզում լոյս ծաւալուեցաւ, որ Ռուսիան պիտի ազատէ իր հաւատակիցներին: Ասորիք, Փոքր Ասիոյ յոյներն, հայերը, բուլղարները դեռ ևս շատ աւելի էին ճնշուած, քան թէ կարող լինէին ապստամբութեան մասին մտածել, բայց եւրոպական նահանգներում, ուր բնակւում էին

[1]) Դուռն—„Բարձր պետութիւնը“—այս անունն էր, որ իբրացրել էր տաճիկ կառավարութիւնը:

[2]) Տաճիկների դէմ ապստամբեց 1806 թ. Սև-Գէորգին, 1815 թ. Միլօշ Օբրէնովիչը, և Տաճկաստանը ստիպուեցաւ պարգևել Սերբիային վասսալական իշխանութեան դրութիւն, որ վախճանական կերպով հաստատուեցաւ ռուս-տաճկական պատերազմից յետոյ 1829 թւին:

յոյները—Էլլադայում, Պելոպոնէսում (Մորէա) և Արխիպելագոսում, ապստամբութիւնը պատրաստւում էր զանազան ձևերով:

Լեռներում վաղուց բուն էին դրել «Կլէֆտները» [1]), Յունական ապստամբութիւն
որոնք իրենց ձևով կռիւ էին մղում տաճիկ տիրապետութեան դէմ, կողոպտում էին մահմետականներին և դիմադրում էին անվերջ լեռնային կռիւներում իրենց դէմ ուղարկուած զօրագնդերին: Աւելի հարուստ և կրթուած բնակիչների մէջ հովիտներում և ծովեզրներում կազմւում էին գաղտնի ընկերութիւններ (հեթերիա), որոնք իրենց կազմով նմանում էին իտալական կարբոնարների դաշնակցութեանց: Բազմաթիւ յոյներն, որոնք ծառայում էին և վաճառականութիւն էին անում արտասահմանում, ընդարձակ յարաբերութիւններ հաստատեցին Եւրոպայի միապետների և պետական անձանց հետ: Կոստանդնուպոլսի յոյն գաղութը (Փանար), որ հարուստ էր և շատ բանով պարտական տաճիկ կառավարութեան, չէր համակրում շարժմանս, բայց ոյժ չունէր դրա առաջն առնելու: Ապստամբութեան մերձաւոր առիթ եղաւ Ալի-փաշայի սուլթանից անջատումը, իսկ պատերազմի առաջին նշանը տուաւ ռուսաց ծառայութեան զօրավար իշխան Իպսիլանտին, որ փոքրիկ գնդով մտաւ Վալախիա, և յայտարարութիւններ ցրուեց, որոնցով յոյներին կոչում էր զէնք առնելու: Իպսիլանտու փորձն յաջողութիւն չ'ունեցաւ, բայց դրան հետևեցին աւելի լուրջ իրողութիւններ: Թեսալիայում, Բէովտիայում, Ատտիկէում և Մորէայում ապստամբութիւններ բռնկեցին, որ չը կարողացան հէնց սկզբում ընկճել, թէպէտև տաճիկները ձեռնարկեցին ամենազարհուրելի կերպով ամայացնել ապստամբած նահանգները: Պատերազմը բաժանուեցաւ մի ամբողջ շարք մանր գործողութիւնների—կռիւների լեռներում,

[1]) Կլէֆտներ—աւազակներ:

յարձակումների պահակների վրայ, ամրութիւնների պաշտպանութիւնների։ Չը նայելով զինուորական կազմակերպութեան և թուական գերակշռութեան, տաճիկները հանդիպում էին ամենայն տեղ ամենակատաղի դիմադրութեան, և հազիւ նրանք մի տեղում ապըստամբութեան վրայ յաղթանակում էին, որ անմիջապէս մի ուրիշ տեղումն էր բռնկում։ Յատկապէս հռչակուեցաւ իւր դիւցազնական պաշտպանութեամբ Միսսոլունգի քաղաքը (Կորնթոսի ծովածոցի մօտ). երբ, վերջապէս, միամեայ պաշարումից յետոյ անհնար եղաւ այլ ևս դիմանալ, բերդապահները քաշուեցան լեռները կանանց ու մանկանց հետ, իսկ քաղաքում թողուած ծերունիք և հիւանդներն օդը ցնդեցրին իրենց բերդը գրաւող տաճիկների հետ միասին։ Եգէյեան ծովում սկիզբն առաւ յունական նաւատորմիղն, որի նաւերը չէին կարող կռուի մէջ մտնել թշնամու նաւատորմղի հետ, բայց յարձակուում էին առանձին նաւերի վրայ և աշխատում էին կրակ տալ տաճկական նաւախմբերը, որ և երբեմն յաջողուում էր։ Աւերիչ պատերազմը շարունակուում էր տարէ ցտարի առանց վճռական հետեւանքների. երկու կողմերն էլ ստիպուած էին օտար օգնութիւն որոնելու. տաճիկները դիմեցին եգիպտական Մեհմէտ-Ալի փաշայի, յոյներն օգնութիւն էին սպասում արևմտեան պետութիւններից և մանաւանդ Ռուսիայից։ Մեհմէտ-Ալին ամենաեռանդուն գործակցութիւն ցոյց տուաւ սուլթանին—եգիպտական զօրքը նրա որդու Իբրահիմի հրամանատարութեան տակ աւերեց Մորէան, և պարզուեցաւ, որ եթէ չը միջամտեն եւրոպական պետութիւնները, յոյները պիտի կորչէին անհաւասար կռուի մէջ։

Եւրոպայի միջամտութիւնը։

Յոյների կողմն էր արդէն վաղուց ամբողջ եւրոպական հասարակութեան համակրութիւնը. բացի դէպի ընկճուած քրիստոնեաներն եղած համակրութիւնից, իրենց ազդեցութիւնը ցոյց տուին և դասական հնութեան մեծ յիշատակներն ևս. կրթուած եւրոպացոց համար Ատտիկէի և Լակոնիայի բնակիչները, թէպէտև առաւելապէս ծագում էին սլաւեան և ալլիւրեան գաղթականներից, արժանաւոր յաջորդներ էին Մելտիադեսի և Լէոնիդասի, որոնք նոր պատերազմի էին դուրս եկել ասիական բարբարոսների դէմ։ Անգլիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից ուղղուեցան ազատակամների խմբերն յոյներին օգնութեան, դրանց մէջ էր այն ժամանակի ամենաերևելի բանաստեղծ լորդ Բայրընը։ Անգլիայում և Ամերիկայում հաւաքեցին ի նպաստ յունական գործի շատ դրամ և զինուորական պիտոյք։ Բայց այս բոլոր համակրութեան արտայայտութիւններն և անձնազոհութիւններն դեռ ևս շատ անբաւարար էին այն գործն ուղղելու համար, որին եգիպտացիք լուրջ հարուածներ էին հասցրել։ Անհրաժեշտ էր եւրոպական պետութիւնների միջամտութիւնը, իսկ այդպիսի միջամտութեան համար կային լուրջ արգելքներ։ Անգլիան համակրանքով էր վերաբերուում բոլոր ազատարարական շարժմանց սկսած այն ժամանակից, երբ նրա արտաքին քաղաքականութեան ղեկավարութիւնըն ստանձնել էր Կաննինգը. ամենից առաջ էլ նա հանդէս դուրս եկաւ յօգուտ յոյների, բայց կարող էր աչքի ընկնող օգնութիւն անել միայն նաւատորմղով և գործումէր մեծ զգուշութեամբ. երկնչելով, որ չը լինի թէ Ռուսիային առիթ տայ աշխարհակալութիւններ անելու Բալկանեան թերակղզում։ Ֆրանսիական կառավարութիւնը հետեւում էր ընդհանրապէս անգլիականին, բայց նա շատ քիչ էր շահագրգռուած արևելեան գործերով, որ կարող լինէր նրանց վրայ վճռական ազդեցութիւն գործել։ Սրբազան դաշնակցութեան երեք առաջնորդող պետութիւններից միայն մէկը, Պրուսիան, իւր աշխարհագրական դիրքով իսկ մի կողմն էր մնում, միւսը, Աւստրիան, շահ ու-

ներ․ որ տաճիկների իշխանութիւնը Բալկանեան թերա-
կղզու վրայ անսասան մնայ։ Մետտերնիխը չէր խռո-
վում այն բանից, որ յոյները ցեղակից կամ և քրիստո-
նեայ էին, իսկ տաճիկները—գազաններ․ նա չէր ցան-
կանում ոչ մի ազգայնական և ազատարարական շար-
ժումն և յամառութեամբ այն միտքն էր պնդում, որ
այս դէպքումը, ինչպէս Իտալիայում և Սպանիայում,
խնդիրը վերաբերում էր յեղափոխութեան օրինա-
կան պետութեան դէմ, դիւանագէտներից հաստատուած
Եւրոպայի կազմակերպութեան վրայ յարձակման։ Ռու-
սիայի դրութիւնը փափուկ էր․ նա պաշտպանում էր
Եւրոպայում ձեռք բերուած և ճանաչուած իրաւունք-
ների «օրինականութեան սկզբունքը», բայց իւր նախնա-
կան քաղաքական աւանդութիւնները պատուիրում էին
նրան պաշտպան կանգնել արևելեան քրիստոնէից ընդ-
դէմ տաճկաց։ Ալէքսանդր Ա․ կայսրը, չը նայելով իւր
անձնական համակրութեան դէպի յոյները, չը փոխա-
հացաւ խզելու օրինականութեան քաղաքականութիւնը,
որ ինքն այնքան անգամ հռչակել էր վեհաժողովներում։
1825 Բայց նա մեռաւ 1825 թուին, և նրա եղբայրն ու յա-
ջորդը, Նիկոլայ Պաւլովիչ կայսրը, թէպէտ և աւելի
վճռական կերպով յայտարարեց իւր անձն պահապան
Եւրոպայում հաստատուած կարգի, յունական գործում
անհրաժեշտ համարեց հետևել ազգային աւանդու-
թիւններին։ Ռուսական քաղաքականութեան այս յեղա-
շրջումն ազատեց Յունաստանն ամենաճակատագրական
վայրկեանին։ Փադիշահի [1]) գահն ամբարձաւ 1826 թ․
եռանդուն Մահմուդը, որ միանգամից ցոյց տուաւ իւր
ոյժն, արիւնահեղ ազգամիջեան կռուից յետոյ ոչնչա-
ցնելով թիկնապահ ենիչերիներին և վերակազմելով
տաճկական զօրքը։ Այսու տաճիկների կողմից սպասու-
ում էին նոր և մեծ ճիգեր, միւս կողմից ևս Իբրահիմը

[1]) Փադիշահ—մեծ արքայ, սուլթանի տիտղոսն է։

շարունակում էր աւերել Մորէան և Արքիպելագոսը։
Բայց Ռուսիան, Անգլիան և Ֆրանսիան, վերջապէս,
համաձայնութիւն կայացրին, պատերազմող կողմերին
զինադադար անել պատուիրելու և միջամտութիւն գոր-
ծելու վախճանական հաշտութիւն կռել տալու համար։
Նրանց միացեալ նաւատորմիղներն անգլիական ծովակալ
Կոդրինգտոնի հրամանատարութեան տակ հասաւ պելո-
պոնեսեան ջրերն, որպէս զի վախճան տայ Իբրահիմի
արիւնահեղ գործունէութեան․ բայց սա չը հնազանդեց
դաշնակից ծովակալների պահանջներին, և Նաւարինի
մօտ տեղի ունեցաւ նրա նաւատորմղի և միացել անգլո-
ֆրանկ-ռուսական նաւախմբի մէջ ճակատամարտ, որ
վերջացաւ եգիպտական նաւատորմղի գրեթէ կատարեալ
ոչնչացմամբ։ Սակայն Անգլիան և Ֆրանսիան Նաւարինի
ճակատամարտից յետոյ ևս բոլորովին յարաբերութիւն-
ները չը խզեցին Բարձրագոյն Դրան հետ, այլ գոհացան
միայն նրանով, որ ստիպեցին եգիպտացոց թողնելու
Յունաստանը։

Ռուսիան ընդհակառակն պատերազմ սկսաւ։ Ռու- Ռուսիան և Տաճկաստանը։
սաց բանակը 1829 թուին Դիբիչի հրամանատարութեան
ներքոյ ջարդեց տաճիկներին Կուլենչէի [1]) մօտ, անցաւ
Բալկանեան լեռներն և դիմեց դէպի Կոստանդնուպոլիս։
Տաճիկներն ստիպուեցան խաղաղութիւն հաստատելու
Անդրիանուպոլսում․ աշխարհակալական տեսակէտով
Ռուսիան գոհացաւ մի փոքրիկ գրաւմամբ Ասիայում
(Կովկասի սև ծովի ափը), բայց նա պայմանի մէջ մըտ-
ցրեց Յունաստանի անկախութիւնը [2]) և նոր տէրու-
թեան ու դանուբեան իշխանութեանց վերաբերութեամբ
հովանաւորող պետութեան դիրքն ստացաւ, որով ստա-

[1]) Բուլղարիայում, Շումլայի մօտ։

[2]) Տէրութեան գլուխ կարգուեցաւ պատգամաւորական ժողովն և „Կառավարիչ" (կիւբերնետէս) կոմս Կապոդիստրիան, մի յոյն, որ ծառայած էր Ռուսիայում։ Նա շուտով սպանուեցաւ մի մորէացու վրէժառութեամբ, և Յունաստանում հաստատուեցաւ թագաւորական դահ, իսկ թագաւոր ընտրուեցաւ Բաւարիոյ իշխան Օթոնը։

նում էր նա զօրեղ ազդեցութիւն Բալկանեան թե-
1833. րակղզու վրայ։ Նիկոլայ կայսրը 1833 թուին մի քայլ
ևս յառաջ գնաց, երբ Մեհմէդ-Ալի փաշայի և Սուլթա-
նի մէջ պատերազմ բացուեցաւ։ Եգիպտացիք գրաւեցին
Ասորիքն ու Փոքր Ասիան և տաճիկ զօրքին երկու ան-
գամ յաղթեցին։ Բայց տաճկական զօրութեան վերա-
կանգնումն եգիպտական հարստութեան ձեռքով կարող
չէր օգտակար լինել ոչ հպատակ քրիստոնէից և ոչ Ռու-
սիայի համար, և ռուսաց կայսրն ազատեց սուլթանին,
մի զօրագունդ ուղարկելով Կոստանդնուպոլսի պաշտ-
պանութեան համար։ Իբրև հատուցումն այս օգնու-
թեան համար սուլթանը պարտաւորուեցաւ (Հիւնքեար-
Սկելեսիի դաշնագրութեամբ) Ռուսիայի *պահանջած*
ժամանակ փակել Դարդանելի նեղուցն օտարազգի
ազգերի զինուորական նաւերի առաջ — մի շատ նշանա-
ւոր պայման Ռուսիայի համար, որով ապահովւում էր
սև ծովից յարձակումների դէմ։

1839. Մեհմէդ-Ալին 1839 թուին կրկին փորձեց տիրելու Տաճ-
կաստանին, եւ նրա զօրքերը կրկին յաղթանակ տարան, բայց
այս անգամ չտապեցին մէջ խառնուելու Անգլիան եւ Աւստրիան,
որպէս զի թոյլ չը տան ռուսաց միակողմանի միջամտութիւնը։
Իբրահիմի զօրքի յաղթական ընթացքը կանգ առնել տուաւ
խառն արշաւանքն, ուր մասնակցում էին անգլիացիք եւ աւ-
ստրիացիք տաճկաց հետ միասին եւ Մեհմէդ-Ալին ստիպուեցաւ
վերջնական կերպով հրաժարուել իր աշխարհակալական մտա-
դրութիւններից եւ գոհանալ իւր հարստութեան ժառան-
գական իշխանութեան ճանաչմամբ Եգիպտոսում, սուլթանի
գերիշխանութեան տակ։

Վերահաստատումը Ֆրանսիայում. Սրբազան դաշնակցութեան քաղաքականութիւնն
անիրագործելի երևեցաւ յունական խնդրում. գրեթէ
միաժամանակ Յունաստանի ազատման հետ նա պար-
տութիւն կրեց և Ֆրանսիայում։ Բուրբոնների վերա-
դարձը (*ռեստաւրասիօն* — վերահաստատումը) երկիրը
շատ դժուարին դրութեան մէջ ձգեց։ Ֆրանսիական

հասարակութիւնը բաժանուեցաւ երկու *խիստ թշնա-*
մական բանակի։ Մի կողմն էին նախկին *փախստա-*
կանները, որոնք համարում էին, թէ 25 տարին, 1789
և 1815 թուականների միջոցը, պէտք է պարզապէս ջըն-
ջել Ֆրանսիական պատմութիւնից, պահանջում էին
իրենց իրաւունքների և ստացուածքի վերադարձը, ներ-
շընչուած էին զայրոյթով և արհամարհանքով դէպի
ռամիկն, որ իրենց այնքան վնասներ էր տուել, և *հո-*
գեւորականութիւնը, որ նոր գաղափարների վրայ նայ-
ում էր իբրև նոր կռապաշտութեան վրայ, հիմնում էր
զօրեղ ընկերութիւն եկեղեցական հայեացքները տարա-
ծելու համար, վերականգնում էր օրէնքով արգելուած
հոգևոր միաբանութիւնները, որոնցից գլխաւորն էր յի-
սուսեան կարգը։ Միւս կողմից խմբւում էր ազգի *մե-*
ծամասնութիւնը, որ այնքան շահուել էր յեղաշրջու-
մից նիւթապէս, իրաւաբանական և հոգևոր տեսակէտով և
պատրաստ էր բոլոր ուժերով պաշտպանելու իւր վաս-
տակածները։ Այս մեծամասնութեան ազատական առաջ-
նորդների մէջ նշմարւում էին զանազան ուղղութիւններ.
ոմանք, *վարդապետականները*[1]), առաջնորդւում էին
1789 իւրեանց գործողութեանց մէջ 1789 թուականի տեսա-
կան սկզբունքներով. թէպէտև չէին հաւանում բռնու-
թիւններն և իրաւունքների բռնաբարութիւնները, որ
գործնականապէս հետևանք եղան յեղափոխութեան.
ոմանց չէր խռովում այն միտքը, թէ պէտք կարող է
լինել դիմելու օրէնքի բռնաբարութեան և ապստամբու-
թեան, և նախապատրաստում էին *գաղտնի ընկերու-*
թիւնների մէջ պատերազմ ընդդէմ վերահաստատութեան։
Դէպի հին կարգն ու նրա ներկայացուցիչներն եղած
ընդհանուր ատելութեան շնորհիւ գաղափարական տեսք
էին տալիս *Նապոլէոնի* գործունէութեան, որին հա-

---

[1]) Դոկտրինէր — „doctirne“ — վարդապետութիւն բառից։ Սրանց
պարագլուխներն էին Ռոյէ — Կոլլարն ու Գիզօն։

մարում էին նոր գաղափարների զօրեղ պաշտօնեայ—նա հերոս էր ոչ միայն ժողովրդի ու զօրքի, այլ նաև կրթուած ազատականների մեծ մասի աչքում։

Լուդովիկոս ԺԸ. Կառավարութեան գործն այս անհաշտ հակադրութիւնների շնորհիւ խիստ դժուարին էր։ Լուդովիկոս ԺԸ, և նրա գլխաւոր նախարարները, դուքս Ռիշիլիէօն[1]) և Դեկազն, ընդհանուր առմամբ յաջող դուրս եկան այս դժուարութիւններից։ Չը նայելով իրենց դէպի ազնուականներն ու հոգևորականներն ունեցած համակրութեան, նրանք հասկանում էին, որ թագաւորական իշխանութիւնը կուսակցութիւններից վեր պիտի լինի և

1789—1815. որ ֆրանսիական պատմութիւնը 1789-ից մինչև 1815 շատ մեծ և փառաւոր, որ գլխաւորն է—անդարձ սկզբունքներ է մշակել։ Այս մտաբերութիւններով հրովարտակ հանուեցաւ, որ օրինական դարձրեց խորհրդարանական կառավարութիւնը, թէպէտ և նրան նեղ սահմաններ[2]) գծեց և սահմանափակեց այն անձանց շրջանն, որոնք կոչուած էին դրան մասնակցելու, բարձր վարկ[3]) նշանակելով։ Նոյնպէս անհրաժեշտ համարեց կառավարութիւնն արձակելու պատգամաւորների առաջին խորհրդարանն, որ չափազանց եռանդով սպառազինուել էր հասարակութեան ռամկավարական տարրերի դէմ։

Կարլոս Ժ. Բայց կառավարութիւնը չը մնաց այս բարձր դիրքի վրայ։ Սրբազան դաշնակցութեան ազդեցութիւնը մի կողմից, քաղաքական յուզման նշանները միւս կողմից—մղեցին թագաւորական իշխանութիւնը դէպի յետաշրջութեան ուղին։ Լուդովիկոս ԺԸ-ի մահուանից (1824)

1824.

[1]) Փախստեան ժամանակ նա ծառայում էր Ռուսիայում և ընդհանուր—նահանգապետ էր Նովորոսսիայի, յատկապէս նրան է պարտական Օդեսսան իւր ծաղկմամբ։

[2]) Օրինակ խորհրդարանների անդամներն իրաւունք չ'ունէին որևէ միջոց առաջարկելու, այլ պիտի գոհանային այն միջոցները քննելով, որ կ'առաջարկէր կառավարութիւնը։

[3]) Ընտրող կարող էր լինել նա, որ վճարում էր 300 ֆրանկ հարկ, իսկ պատգամաւոր միայն նա, որ վճարում էր 1000 ֆրանկից ոչ պակաս։

յետոյ գահ ամբարձաւ Լուդովիկոս ԺԶ-ի դեռ ևս կենդանի մնացած եղբայրներից Կարլոս Ժ։ Դրան կարելի էր բոլորովին ստուգիւ վերաբերել այն առածը, որ կազմուել էր Բուրբոնների աքսորից վերադարձի առթիւ—նա ոչինչ չէր մոռացել և ոչինչ էլ չէր սովորել։

Նա յայտնի կերպով բռնեց հոգեւոր եղբայրակցութեան (կոնգրէգացիոն) եւ անդր-արքայականների կողմը, իսկ նախարարութեան ղեկավարութիւնը նրա ժամանակ անցաւ ելեւմտագէտ Վիլլելին, որ մտածում էր ճարտարութեամբ եւ աստիճանաբար մի շարք փոփոխութիւն յառաջ բերել անդր-արքայական կուսակցութեան ցանկութեան համեմատ։ Խլել իրենց նոր տէրերից այն, ինչ որ արքունիք էր գրաւուած փախստականներից, մինչեւ իսկ Վիլլելը չը վստահացաւ, բայց նա բաժանեց փախստականներին մի միլլիարդ ֆրանկ իբրեւ հատուցումն նրանց կորցրած ստացուածքի փոխարէն։ Ապագայում մտադրութիւն կար հոգեւոր միաբանութիւնների վրայից բառնալ այն սահմանափակումները, որոնց նրանք ենթակայ էին, խստացնել գրաքննութիւնը, կերպարանափոխել ընտրական եղանակը, պատգամաւորների ժողովում դիմադիր կուսակցութիւնը ոչնչացնելու համար։ Վիլլելը սակայն ժամանակ չ'ունեցաւ իւր ծրագիրն իրագործելու։ Կառավարութեան ձեռնարկութիւններն, աւելի եւս նրա յայտարարութիւններն ու ենթադրած յատակագծերն այնպիսի գրգիռ յարուցին երկրի մէջ, որ պատգամաւորների ժողովում չը նայելով, որ դա ամենահարուստ բնակիչների ներկայացուցիչն էր միայն, կազմուեցաւ զօրեղ դիմադիր կուսակցութիւն, իսկ ատենակալների խորհրդարանը, որի անդամները թագաւորից էին նշանակուած, ուղղակի կռուի մէջ մտաւ նախարարի հետ։ Վիլլելը համոզեց Կարլոս Ժ-ին միանգամից 76 նոր ատենակալ (պէր) նշանակելու, վերին խորհրդարանի դիմադրութիւնը կոտրելու համար, եւ արձակելու պատգամաւորների խորհրդարանն։ Այս խորհրդարանի համար նոր ընտրութիւնները կառավարութեան յաղթանակել չը տուին, ինչպէս յոյս ունէր Վիլլելը, այլ կատարեալ պարտութիւն պատճառեցին։ Ֆրանսիական հասարակութեան հարուստ դասակարգերն այսու վճռական կերպով դատապարտեցին յետադիմական քաղաքականութիւնը, եւ թագաւորը համաձայնեց մի վայրկեան յետաձգելու այդ։ Նա նախարարներ

կարգեց չափաւոր ազատականների խմբից[1]) Դրանք խորհրդարանների ներկայացրին տեղական վարչութեան բարենորոգութեանց մի խեղճ ծրագիր, որի նպատակն էր հակազդեցութիւն գործել ֆրանսիական կեանքի արմատացած չարիքի—կենտրոնացման դէմ, բոլոր տեղական գործերը Փարիզի աստեանների ցուցումներից կախման մէջ դնելու սովորութիւնից։ Ենթադրուում էր նահանգների եւ նրաց ստորաբաժանումների վարչութեանց մէջ ընտրուած խորհրդներին ազդեցութեան մի նշանաւոր մասն յատկացնել։ Բայց խորհրդարանում ազատական մեծամասնութիւնը փորձ արաւ մի փոքր լայնացնելու առաջարկուած միջոցները, եւ այդ չարժեց Թագաւորի զայրոյթը։ Նա վճռեց վերջ տալ ձանձրացուցիչ դիմադիր կուսակցութեան եւ նախարարութեան նախագահ նշանակեց իշխան Պոլինեակին—անհաշտելի յետաշրջման ներկայացուցչին։

Յուլիսի յեղափոխութիւնը։ 1830։

Յուլիս ամսին 1830 թ. հրատարակուեցաւ հինգ հրովարտակ, որոնց մէջ Թագաւորն իւր անձնական իշխանութեամբ, առանց խորհրդարանների մասնակցութեամբ, փոփոխեց և սահմանափակեց ընտրական կարգն և մտցրեց նոր, չափազանց խիստ գրաքննական կանոններ գրքերի, բայց մանաւանդ լրագիրների համար։ Հրապարակախօսները սակայն յայտարարեցին, որ չեն հպատակիլ այդ ապօրինի կարգադրութիւններին և հրատարակեցին իրենց թերթերն առանց գրաքննիչների թոյլտուութեան։ Մերձաւոր աջակցութիւն գտան նրանք Փարիզի քաղաքացոց շարքերում, որ խիստ հետաքրքրուում էր քաղաքական կեանքով և առաջուց էլ վրդովուած էր Վիլլելի կարգադրութեամբ, որ արձակել էր քաղաքացիներից բաղկացած զօրքն—ազգային պահակախումբը։ Բայց փոքր առ փոքր շարժման յարեցան եւ գործաւորները, որոնց գործարանատէրերն արձակել էին աչքի առաջ ունենալով նախապատրաստուող յուզիչ իրողութիւնները։ Զինուորական ոյժն, որ կառավարութիւնն ունէր իւր տրամադրութեան տակ Փարիզում, շատ չնչին էր—ընդամէնը 12,000 մարդ մարա-

[1]) Մարտինեակի Նախարարութիւնը։

ջախտ Մարմոնի հրամանատարութեան տակ։ Կռիւն երկու օր շարունակուեցաւ փողոցներում, որ ապստամբներն ըստ սովորութեան պատնէշներով փակել էին։ Զինուորները կարող չեղան յաղթել քաղաքացոց. դրա հետ միասին նրանց շարքերում շատերը կային, որ համակրում էին ժողովրդին։ Յուլիսի 29-ին երեկոյեան, մարաջախտը ստիպուեցաւ Փարիզից դէպի Ս. Կլու նահանջելու, ուր գտնուում էր Կարլոս Ժ։ Սա վճռեց, վերջապէս, զիջումներ անել, յետս վերցրեց չարաբաստիկ հրովարտակները, պաշտօնազուրկ արաւ Պոլինեակին, բայց արդէն ուշ էր. ոչ յաղթական ամբոխն, ոչ ժամանակաւոր կառավարութիւնը, որ կազմուել էր քաղաքային խորհրդարանում, տրամադիր չէին վերադառնալու վերահաստատուած միապետութեան իշխանութեան տակ։ Յեղափոխութիւնն յառաջ էին բերել Փարիզի քաղաքացիք, և նրանցից էր կախուած գլխաւորապէս գործի ապագայ ընթացքը։ Հասարակապետութիւնից վախենում էին, թէ 1789 թուականի յիշողութեամբ և թէ այն պատճառով, որ քաղաքական արմատական յեղաշրջումը կարող էր ժողովրդի ստորին դասակարգերի կողմից մեծամեծ պահանջներ յառաջ բերել։ Ղեկավարող հրապարակախօսներն ու պատգամաւորները կանգ առան միապետութիւնը պահպանելու մտքի վրայ, բայց վճռեցին թագաւորական իշխանութիւնն յանձնել Օրլէանի դքսի որդուն, որ անդամ էր եղել սահմանադիր ժողովին և ձայն էր տուել Լուդովիկոս ԺԶ-ի գլխատման համար։ Այսպիսի հանգամանքներում ընտրուած թագաւորը չէր կարող մտածել ոչ միահեծանութեան եւ ոչ յետաշրջման մասին։ Լուդովիկոս Փիլիպպոս Օրլէանցին համաձայնեց այս դերն ստանձնելու։ Նա պատգամաւորների հետ միասին շրջեց Փարիզի փողոցներով, որոնք դեռ ևս պատնէշներով ծածկուած և լիքն էին սպառազինուած խմբերով.

քաղաքային խորհրդարանում ծերունի Լաֆայէտն, որ
կրկին ընտրուած էր ազգային պահակախմբի հրամա-
նատար, նրան յանձնեց եռագոյն դրօշը, նոր Ֆրանսիայի
նշանակը, և ժողովրդի անհամար բազմութիւնն, որ
առաջ իրեն գրեթէ թշնաբար էր պահում, ոգևորու-
թեամբ ողջունեց իւր նոր Թագաւորին։ Այս տեսարանից
յետոյ Լուդովիկոս Փիլիպպոսի թագաւոր հռչակուելը
պատգամաւորների ժողովում արդէն մի ձեւականութիւն
1830։ էր, որ և կայացաւ 1830 թուականի Օգոստոս ամսի
սկզբում։

1830 թ. յեղափոխութեան ազդեցութիւնն Եւրոպայի վրայ։ Յուլիսեան յեղափոխութիւնն արձագանք գտաւ
Եւրոպայում ամբողջ շարք նման փորձերով։ Բելգիացիք
բաժանուեցան հոլլանդացիներից, որոնց հետ նրանց
միացրել էր Վեննայի վեհաժողովը, բայց որոնցից նրանք
զանազանւում էին իրենց դաւանութեամբ, ցեղական
ծագմամբ, լեզուով և տնտեսական շահերով. լեհացիք
ապստամբեցան Ռուսիոյ դէմ. Իտալացի հայրենասէր-
ները ոտքի կանգնեցին պապի երկրում, Պարմայի դք-
սութեան մէջ։ Լեհական շարժումը ճնշեց Նիկոլայ
Պաւլովիչ կայսրը արիւնահեղ պատերազմից յետոյ.
աւստրիացիք վերականգնեցին պապի և Պարմայի դքսի
իշխանութիւնը. բայց բելգիական ապստամբութիւնն
յաջողութեամբ պսակուեցաւ—եւրոպական պետութիւն-
ները ճանաչեցին Բելգիան իբրև առանձին թագաւո-
րութիւն և ապահովեցին նրա չէզոքութիւնը։

Անգլիա։ Մինչդեռ արևելեան միապետութիւնները զէնքի
ուժով պաշտպանում էին Սրբազան դաշնակցութեան
քաղաքականութիւնն Իտալիայում և Գերմանիայում, իսկ
Ֆրանսիայում կրկին կատարում էր մի բանի յեղաշըր-
ջումն, Անգլիան նորից մտաւ աստիճանաբար, օրինա-
կան բարենորոգութիւնների ուղին, որ թողել էր
ֆրանսիական յեղափոխութեան և Նապոլէոնի հետ պա-
տերազմելու ժամանակ։ Կրտսեր Պիտտին և նրա մեր-

ձաւոր յաջորդներին մի տեսակ լիազօրութիւն էր տուած
աչքի առաջ ունենալով սպառնացող ազգային վտանգն.
նրանք մի կողմը դրին ներքին բարեփոխութիւնների
բոլոր ծրագիրներն և իրենց արտաքին քաղաքականու-
թեան մէջ մօտեցան այն պետութիւններին, որոնք
ներկայացուցիչ էին եւրոպական յետաշրջման։ Բայց Նա-
պոլէոնի վրայ վերջնական կերպով յաղթանակելուց յե-
տոյ չը դանդաղեց արտայայտուելու այն խորին տար-
բերութիւնը, որ կար Անգլիոյ կազմակերպութեան և
շահերի ու եւրոպական ցամաքում գերիշխող պետու-
թիւնների մէջ։ Տորի կուսակցութեան մէջ, որին Պիտտի
ժամանակից սկսած պատկանում էր մեծամասնութեան
խորհրդարանում, հերձուած բացուեցաւ, և փառահեղ
Կաննինգին, արտաքին գործոց նախարարին, յաջողուեց
նոր ընթացք տալու Անգլիոյ արտաքին քաղաքականու-
թեան. նա ինքն իրեն ազատականութեան հովանաւոր
հրատարակեց և գործով էական աջակցութիւն ցոյց
տուաւ ազատարարական շարժումներին սպանիական
գաղութներում և Յունաստանում։ Նոյնաժամանակ
նրա բարեկամ Գէօսկիսոնը նոր դարաշրջան բաց արաւ
անգլիական առեւտրական քաղաքականութեան համար.
նա հռչակեց ազատ առեւտրական փոխանակութեան
սկզբունքն, և մի քանի պետութեանց հետ առեւտրա-
կան դաշինքներ կռեց, որոնց զօրութեամբ փոխադար-
ձաբար վերացւում էին բարձր մաքսերը, որոնք ար-
գելք էին լինում արտասահմանեան ապրանքների փո-
խադրութեան Անգլիայում և անգլիական ապրանքների
—արտասահմանում։ Անգլեական խիստ զարգացած ար-
դիւնաբերութեան համար բացուեցան նոր ընդարձակ
շուկաներ, և Անգլիայի բարօրութիւնն սկսաւ արագու-
թեամբ աճել։

Սակայն բացի բոլոր մասնաւոր փոփոխութիւննե-
րից ու բարեփոխութիւններից, պէտք էր որ և է կեր-

պով վերացնել մեծ քաղաքացիական և քաղաքական
անպատշաճութիւնները, որոնք ժառանգութիւն էին
մնացել հին վիճակից և բարձրաձայն բողոքներ էին
յարուցել դեռ ևս ԺԸ. դարում, բայց որոնք պահել էին
իրենց ոյժն շնորհիւ այն հանգամանքի, որ յեղափո-
խութեան դէմ պատերազմելու ժամանակ բոլոր բարե-
նորոգութիւնները կանգ էին առել։ Երկու հանգամանք
յատկապէս աչքի էին զարնում իրենց անպատեհու-
թեամբ և անարդարութեամբ—իրաւական սահմանա-
փակութիւններն, որոնց ենթակայ էին կաթոլիկներն,
և անբաւարար ընտրական կարգը։

Կաթոլիկ-
ների իրա-
ւանց հաւա-
սարու-
թիւնը։

Անգլիայի ամբողջ նոր պատմութեան ընթացքում
շարունակւում է կռիւը կաթոլիկութեան դէմ. դա
սկսուեցաւ Հենրիկոս Ը-ի եկեղեցական ստացուածքի աշ-
խարհականացմամբ. Եղիսաբէթի ժամանակ Անգլիան
գլուխ կանգնեց բողոքականներին ընդդէմ կաթոլիկակա-
կան յետաշրջման և վերջինիս յուսահատական յարձակում-
ների դէմ կացաւ. Յակոբ Ա.-ի ժամանակ վառօդի դաւադ-
րութիւնը քիչ մնաց խորհրդարանի շինութեան կործան-
մամբ վերջանայ. Կարլոս Բ. դաւաճանեց ազգային քաղա-
քականութեան մասամբ կաթոլիկ ազդեցութեան տակ.
Յակոբ Բ. ի սէր կաթոլիկութեան պատրաստ էր երկրի
օրէնքները ջնջել. վերջապէս, 300 տարուան ընթաց-
քում անգլիացիք Իռլանդիայում բողոքական փոքրա-
մասնութեան հնազանդութեան տակ էին պահում ա-
հագին բազմութիւն ժողովրդի, որ բաղկացած էր կա-
թոլիկ-կելտերից, երբեմն էլ բանն հասնում էր արիւ-
նահեղ ընդհարումների, որոնց մէջ թէ մի և թէ միւս
կողմն աշխատում էին գրեթէ միմեանց ոչնչացնել։
Զարմանալի չէ ուրեմն, որ ատելութիւնը դէպի կաթո-
լիկութիւնն և կաթոլիկները խորին կերպով թափանցել
էր անգլիացոց հայեցողութեանց մէջ և որ օրէնքների
մէջ դրան համապատասխանում էր կաթոլիկների մեր-

ժումը քաղաքական իրաւունքներից։ Վկայութեան-վըճ-
ռի (տէաս-ակտ) պահանջները մեղմացուեցան յօգուտ
դիսսենտերների, բայց կաթոլիկներն առաջուան պէս
չէին կարող պետական ծառայութեան մտնել, մաս-
նակցել տեղական ինքնավարութեանց, ոչ ընտրուել
խորհրդարանի անդամ, ոչ էլ ընտրելու իրաւունք ու-
նենալ։ Տասնևիններորդ դարում իրաւունքի այսպիսի
զրկումն չէր արդարանում ոչ մի քաղաքական մակաբե-
րութեամբ. խօսք չէր կարող լինել և կաթոլիկների
առանձին հակման մասին դէպի պետական դաւա-
ճանութիւնն, իսկ որ գլխաւորն է, իրաւունքների
այսպիսի զրկումը, որ տարածւում էր վեց միլիոն ժողո-
վըրդի վրայ, բոլորովին հակասում էր անգլիական
պատմութեան ոգուն. օրէնքի առաջ հաւասարութիւնը
չէր գրուած մարդուս անկապտելի իրաւունքների
թւում, ինչպէս Ֆրանսիայում, և անգլիական պետա-
կան անձինք չէին սիրում այդ գաղափարից ծագեցնել,
ինչպէս վերացական գաղափարից, ամենատեսակ եզրա-
կացութիւններ. բայց համարձակ և յամառ կռիւն ա-
նարդար անհաւասարութեան դէմ կարող էր վստահ
լինել հասարակութեան անկասկածելի համակրութեան
վրայ և վերջ ի վերջոյ կարող էր յաղթանակել խոր-
հըրդարանում և դատարանում։ Իռլանդացոց համար
բողոքականների և կաթոլիկների իրաւանց հաւասարե-
ցման խնդիրն առանձին նշանակութիւն ունէր, որով-
հետև Իռլանդիոյ բնակիչների չորս հինգերորդական
մասը դաւանում էր կաթոլիկ կրօնը։ Նարժման գլուխ
կանգնեց հին կելտական առաջնորդների սերունդ O'Կոն-
նէլը, տաքարիւն և ճարտարաբան հայրենասէրն, որ
շուտով տեղական ժողովրդի կուռքը դարձաւ։ Նրան
մինչև իսկ անգլիական խորհրդարանի [1] անդամ ընտ-

---

[1] Դուբլինի առանձին խորհրդարանն ոչնչացուեցաւ 1800 թ.,
և Իռլանդիան միացուեցաւ Անգլիոյ հետ այն ընդհանուր հիմունք-
ներով, որոնցով առաջ (1707) միացուել էր Շոտլանդիան։ Իռլանդացի

րեցին, թէպէտև, գործող օրէնքներով, նա, իբրև կաթոլիկ, իրաւունք չ'ունէր իւր տեղը բռնելու խորհրդարանում։ Նոյն իսկ հինաւուրց Տորիքն հասկացան, որ վտանգաւոր է այլ ևս պնդել կաթոլիկների քաղաքականապէս իրաւազուրկ մնալուն վրայ, և արդէն Կաննինգի մահուանից յետոյ, որ վճռաբար յօգուտ սահմանափակիչ օրէնքների վերացման էր յայտնել իրեն։ Ուելլինգտոն դուքսն այն օրինագիծն (1829) ընդունել տուաւ, որ վերացնում էր գոյութիւն ունեցող սահմանափակումներն։ Իրաւ է, իռլանդական շարժումը չը դադարեց։ Օ'Կոննէլը շարունակում էր այդ նոյն իսկ խորհրդարանի մէջ։ Խնդիրը վերաբերումէր ամենից առաջ իռլանդական կաթոլիկներին ազատելու եպիսկոպոսական եկեղեցին իրենց ծախքով պահելուց, բայց Օ'Կոննէլն և նրա համախոհներն աշխատում էին Իռլանդիան Մեծ Բրիտանիայից բոլորովին բաժանելու մասին։ Սակայն ժամանակին տեղի ունեցած կաթոլիկների իրաւանց հաստատումը մեծ չափով թուլացրեց այդ շարժումը, և անգլիական կառավարութիւնն հնար ունեցաւ իռլանդացոց զսպելու այլ խնդիրների վերաբերութեամբ։

Խորհրդա-
րանական
բարենորո-
գութիւն։

Հերթով երկրորդ տեղն էր բռնում խորհրդարանական բարենորոգութեան խնդիրն, այսինքն՝ ընտրական կարգն որոշ համահաւասարութեան բերելու բնակիչների իրական բաժանման և երկրի մէջ ունեցած ազդեցութեան հետ։ Բարենորոգութեանս կուսակիցների կազմած հաշուին նայելով, շնորհիւ փտած բնակավայրերի եւ մնացած ընտրական կարգերի, երեսփոխանական ժողովի 657 անդամներից ընդամենը 170 հոգի միայն կարող էին ազատօրէն ընտրուած համարուել, գրեթէ նոյն չափ էլ ընտրուում էին միջակ կալուա-

պատգամաւորներին ստորին խորհրդարանում 100 աթոռ տրուեցաւ, իսկ իռլանդական լորդերին 31 աթոռ ատենակալների դահլիճում։

ծատէրերի ազդեցութեամբ, իսկ 300-ից աւելին—լորդերի, այսինքն խոշոր կալուածատէրերի և նախարարների ազդեցութեամբ։ Չը նայելով այսպիսի կարգի աշկարայ անպիտանութեան, Տորիները չէին կամենում հրաժարուել դրանից, և բարենորոգութեան մասին առաջարկութիւնն ընթացք ստացաւ միմիայն 1831 թուականի ընտրութիւններից յետոյ, որ մեծամասնութիւն տուաւ Վիգերին և յառաջ բերաւ Լորդ Գրէի ազատամիտ նախարարութեան կազմակերպութիւնը։ Նոյն իսկ, երբ երեսփոխանական ժողովն ընդունեց ընտրական բարենորոգութեան օրինագիծն (Բիլ), լորդերի խորհրդարանն, որ բաղկացած էր առաւելապէս Տորիներից, երկու անգամ մերժեց այն։ Ժողովուրդն այս անյաջողութեանց պատճառով խիստ գրգռուած էր, թագաւորն ու լորդերը փողոցներում վիրաւորանքների էին ենթարկուում, և հասարակութեան մէջ կասկած տարածուեցաւ, որ բանն առանց ապստամբութեան չի վերջանալու։ Լորդ Գրէյը սակայն պնդեց, և Վիլհէլմ Դ. թագաւորը խոստացաւ, որ կարևոր եղած դիպուածում կը նշանակէ այնքան նոր ատենակալներ (պէր), ինչքան հարկաւոր կը լինի մեծամասնութիւն կազմելու համար վերին խորհրդարանում։ Այս խոստման մասին տեղեկութիւն տուեին Տորի կուսակցութեան լորդերին, և նրանք բարւոք համարեցին տեղի տալ, որպէս զի իրենց խորհրդարանն այդպիսի միջոցի չ'ենթարկուի։ Երբ բարենորոգութեան օրինագիծը կրկին երեսփոխանական դահլիճից անցաւ լորդերին, Տորի կուսակցութեան ատենակալների մեծագոյն մասն Ուելլինգտոն դքսի առաջնորդութեամբ նստին եկան, և օրինագիծն ընդունուեցաւ։ Դա երկու գլխաւոր փոփոխութիւններ էր առաջադրում։ Նախ այն փոքրիկ բնակավայրերն, որոնց բնակիչների թիւը 200-ից չէր անցնում, զրկուում էին խորհրդարան պատգամաւոր ուղարկելու իրաւունքից․

մի ամբողջ շարք փոքրիկ բնակավայրեր սկսած փոխանակ երկու պատգամաւորի մէկն ուղարկել. քան և մի քաղաք, որ իրաւունք չունէին պատգամաւոր ուղարկելու, ստացան այդ իրաւունքն։ Երկրորդ՝ ընտրողների վարկը (ցէնզ) որոշ միակերպութեան վերածուեցաւ. ընտրող ճանաչւում էին հողերի և տների տէրերը, որոնք ստանում էին 10 ֆունտից [1]) ոչ պակաս արդիւնք, և երկար ժամանակով կապալառուք, որոնք 10 ֆունտից [2]) ոչ պակաս հողահարկ էին վճարում։ Մինչև 1832 թ. Անգլիայում ընտրողների թիւն 400,000-ից աւելի չէր համարւում, իսկ բարենորոգութիւնից յետոյ դրանց թիւն հասաւ շուրջ 800,000։

Քարտիսականութիւն 1833։ Այս բարենորոգութիւնը շուտով դէպի աւելի սաստիկ ու արդիւնաւոր գործունէութիւն մղեց վերանորոգուած խորհրդարանն։ Բրիտանական գաղութներում 1833 թուին վերացուեցաւ ստրկութիւնը. ապա հետևեալ տարիներում մշակուեցան նոր քաղաքային օրէնքներ, աղքատների խնամակալութեան նոր օրէնք և շատ այլ օգտակար միջոցներ։ Բայց խորհրդարանական բարենորոգութեան հակառակորդներն իրաւունք ունէին, երբ պնդում էին, թէ բաւական է միանգամ հրաժարուել հին կարգից, որ ստեղծուել էր պատմական դիպուածների շնորհիւ, բաւական էր ընդունել ընտրական իրաւունքի բանական բաշխման սկզբունքն, որ ճանապարհ բացում նորանոր պահանջների նոյն մտքով։ Անգլիոյ հասարակաց կարծիքը 800,000 ընտրողները մի քիչ աւելի էին ներկայանում քան թէ 400,000 ընտրողները, բայց 800,000 ևս միայն մի աննշան փոքրամասնութիւն էին Մեծին Բրիտանիոյ 23 միլլիոնից բաղկացած բնակիչների կամ նոյն իսկ 5 միլլիոն չափահաս տղամարդոց։ Ընտրական շրջանի ընդլայնումն

[1]) Այժմեան արժէքով 100 ռուբլուց քիչ պակաս։
[2]) Կարճատև կապալի ժամանակ ցէնզը բարձրացւում էր։

այսու ամենայնիւ չ'ոչնչացրեց անգլիական քաղաքական կարգի ազնուապետական որակը։ Աղքատ դասակարգը, որ դեռ ևս ընտրական իրաւունքի սահմանից դուրս էր մնում, գիտակցօրէն էր վերաբերւում իւր վրայ դրուած սահմանափակման, և բացադրում էին իրենց նիւթական ընկած դրութիւնն, ի միջի այլոց, և նրանով, որ իշխանութիւնը գտնւում է հարուստների ձեռքին և որ դրանք իրենց սեփական շահերը մտցնում են օրէնսդրութեան մէջ։ Դրութիւնն 1838 թ. 1838։
սուր կերպարանք առաւ առևտրական գործերի անյաջող ընթացքի պատճառով, և երկրի մէջ սկսաւ ահագին շարժումն ժողովներով ու խնդրագրերով յօգուտ քաղաքական կարգի արմատական փոփոխութեան։ Պահանջները մի քանի կէտերի մէջ էին ամփոփւում, որ բացադրուած էին «ազգային քարտիսի» [1]) մէջ։ «Քարտիսականները» պահանջում էին ընդհանուր ձայնտուութեան իրաւունք, ընտրութեանց ժամանակ գաղտնի քուէարկութիւն, իւրաքանչիւր տարի փոփոխութիւն խորհրդարանի, երեսփոխական դահլիճի անդամներին ռոճիկ։ Գլխաւոր խնդրագրին, որ այս իմաստով տրուեցաւ խորհրդարանին, ստորագրել էին 1.500,000 մարդ։ Խորհրդարանները սակայն տեղի չը տուին, և շարժումը մի առ ժամանակ ընդհատուեցաւ։

Հացի օրէնքների վերացումը։ Քարտիսականութիւնը սակայն չը մնաց առանց ազդեցութեան անգլիական քաղաքականութեան իմաստուն առաջնորդների վրայ։ Տօրի նախարարութեան գլուխը, 40-ական թուականներում սէր Ռոբերտ Պիլը, չը գոհացաւ միայն պարզ դիմադրական և ճնշման միջոցներով, այլ ջանաց վերացնելու այն լուրջ մեղադրանքներն, որ ուղղւում էին կառավարող դասակարգերի դէմ։ Քարտիսականների մեղադրնքը, որ հողագործ ազնուակա-

[1]) Charter—չարտէր, որ կը նշանակէ քարտէս, ատի և խնդրատուք կոչւում էին „չարտրիստ" (քարտիսական)։

նութիւնն օգտուում է իւր գերակշռութիւնից խորհրդարանի մէջ, իւր տնտեսական գործերը շտկելու համար, յիրաւի արդարանում էր այսպէս կոչուած հացի օրէնքների շնորհիւ: Որպէս զի արտասահմանի հացահատիկների ներմուծումը չ՛իջեցնի Անգլիայում արտադրուած հացի գինը, խորհրդարանը մաքս էր նշանակել արտասահմանական հացի վրայ, որ այնքան աւելի բարձրանում էր, ինչքան արտասահմանում հացն աժանանում էր: Այս խնամարկող մաքսերի շնորհիւ, անգլիացի հողատէրերն կարող էին վստահ լինել, որ իրենց ապրանքը լաւ գնով կը վաճառեն, բայց, միւս կողմից, արդիւնաբերող և վաճառական ժողովուրդն, որ այնքան բազմաթիւ ու նշանակութեան տէր էին Անգլիայում, կարող էին ապահով լինել, որ իրենց հացը պէտք է թանգ գնով առնեն և որ արտասահմանական հրապարակներում հացի աժանանալն երբէք չի ազդելու անգլիական հրապարակի վրայ: Հացի օրէնքներն այնու ևս աւելի անարդար էին թւում, որ Անգլիան Գէօսկիսոնի ժամանակից ընդհանրապէս ազատ առևտրի սկզբունքին էր հետևում և մերժել էր խնամակալական մաքսը: Արդէն երեսնական թուականներին սկսուել էր եռանդուն շարժումն լրագիրների, տետրերի, ժողովների և խնդրագրերի միջոցով: Այս դիպուածում առաջնորդն էր մանչեստրի գործարանատէր Կոբդէնը: Նա կազմեց «Հացի օրէնքների դէմ դաշնակցութիւն», և այս դաշնակցութեան անխոնջ գործունէութիւնն վերջ ի վերջոյ պսակուեցաւ յաջողութեամբ,
1846. 1846 թուին սէր Ռոբերտ Պիլն ընդունել տուաւ խորհրդարանում հացի մաքսերի վերացումը:

Յուլիսեան միապետութիւն. Մինչ դեռ անգլիական քաղաքական կեանքն իւր խաղաղ և օրինական կարգովն էր ընթանում, չը նայելով վիճաբանութիւններին, կուսակցութիւններին և դասակարգերի մրցման, Ֆրանսիայում պետական

կեանքը չէր կարողանում ոչ մի կերպ հաւասարակշռութեան հասնել իւր կրած զարկերից ու յեղաշրջումներից. կուսակցութիւններն ու դասակարգերը ոչ մի կերպ չէին կարողանում ընդհանուր հող գտնել հայրենասիրական գործունէութեան համար: Յուլիսեան յեղափոխութիւնն առաջ էր բերել երկու ոյժ, որոնք առ վայր մի միացել էին,—հարուստ, միջին դասակարգն—բուրժուազիան, որ ձգտում էր քաղաքական գործունէութեան և ուղղակի վտանգուած էր Կարլոս Ժ-ի յետաշրջական ձեռնարկութիւններով. և աղքատ գործաւոր դասակարգը, որ յեղափոխութիւնից սպասում էր իւր վիճակի արմատական փոփոխութիւնը: Յեղափոխութեան ղեկավարութիւնը սակայն պատկանում էր բուրժուազիային, և նա էլ օգտուեցաւ որա հետևանքներից: Արդէն այն գերադասութիւնն, որ տրուեցաւ սահմանադրական միապետութեան հանրապետութեան առաջ, ցոյց էր տալիս, որ մտադրութիւն չը կայ ոչ 1793 թ. աւանդութիւններին դառնալու, ոչ էլ արմատական յեղաշրջումն առաջ բերելու ժողովրդի գերիշխանութեան և ստորին դասակարգերի շահերի տեսակէտով: Վերահաստատման քարտէսը մնաց սահմանադրութեան հիմունք և այսպէս կոչուած յուլիսեան միապետութեան համար, թէպէտ և նա սաստիկ փոփոխուած էր ազատամտական տեսակէտով. օրինակ՝ խորհրդարանների անդամները ստանում էին օրէնսդրական նախաձեռնութեան իրաւունք, այսինքն՝ իրաւունք օրէնսդրական միջոցներ առաջարկելու, մինչդեռ վերահաստատման ժամանակ այդպիսի առաջարկութիւնները կառավարութիւնն էր անում, բոլոր ելևմտական խնդիրները, Անգլիայի օրինակով, պետք է այժմ քննուէին երեսփոխանական ժողովում և այլն: Սակայն ո՛չ միայն շատ մանրամասնութիւններ, այլ վերահաստատման քարտիսի հիմնական գաղափարն ևս—քաղաքական կեանքին մաս-

նակցելու իրաւունք տալ միայն բարձր դասակարգերին—պահեց իր զօրութիւնն։ Միայն թէ «բարձր դասակարգեր» գաղափարն ընդլայնուեցաւ այնքան, որ իր մէջն ամփոփել կարող լինի հարուստ բուրժուազիան. ընտրողների համար 300 ֆրանկի վարկն իջեցուցին 200 Ֆր., 1000 ֆրանկի վարկը պատգամաւորների համար դարձրին 500 ֆրանկ։ Այս իջեցման շնորհիւ Ֆրանսիայում փոխանակ 80,000 ընտրողների, դրանց թիւն հասաւ 200,000, պատգամաւոր ընտրուելու իրաւունք ունեցան 24,000 հոգի փոխանակ նախկին 8,000 հոգու։ Այս «օրինական երկրի» (pays légal) սահմաններում տեղի ունեցաւ յուլիսեան միապետութեան պատմութիւնը։ Ընտրութիւնները, ձայնտուութիւնները, կուսակցութիւնների խաղերն, նախարարութիւնների կազմումն—սահմանադրական կեանքի բոլոր այս արտաքին երեւոյթները տեղի էին ունենում ամբողջապէս կարգով, աշխուժօրէն և տարբեր ձևերով: Առաջ անցան գլխաւոր առաջնորդներն—խիստ, զուսպ Գիզօն, աշխոյժ, փառասէր Տիերն և այլք, պարզուեցաւ ճարտար, մանրակրկիտ թագաւորի անձնական ահագին ազդեցութիւնն ընտրական և խորհրդարանական հաշիւների վրայ։ Բայց Ֆրանսիայում կառավարող դասակարգերը քիչ ուշադրութիւն էին դարձնում այն բանի վրայ, թէ ի՞նչ է կատարւում ժողովրդի բազմութեան մէջ, «օրինական երկրի սահմանից դուրս, որով և զանազանուում էին անգլիացիներից, չէին աշխատում հասկանալ նրանց շահերն և գնահատել նրանց ուժերն, կարևոր չէին համարում նրանց բարօրութեան մասին աշխատել և հաշուի առնուլ նրանց պէտքերը։ Կառավարող բուրժուազիայի քաղաքականութեան վերաբերութեամբ ստորին դասակարգերին, միանգամից պարզապէս ամէն դժգոհութիւն զէնքով ճնշելու բնաւորութիւնն ստացաւ։ Փարիզում, Լիոնում և այլ մեծ քաղաքներում շատ անգամ բռնկեցին ապստամբական

ապստամբութիւններ։ Արդէն 1830 թուի վախճանին 1830։
1833 և 1834 թուականներին ստիպուեցան արիւնահեղ 1832, 1834։
փողոցային կռիւներ վարել յեղափոխութեան գործի մէջ վարժ գործանաւորների հետ, և Նապոլէոնեան մարաջախտ Սուլտն իր վերջին պատերազմական դափնիները վաստակեց բազմօրեայ կռիւների մէջ ընդդէմ Փարիզի և Լիոնի գործաւորների։ Բացի ապստամբութիւններից, գոյութիւն ունեցող կարգի դէմ ատելութիւն արտայայտւում էր բազմաթիւ սպանութեան փորձերով մասնաւոր մոլեռանդների կողմից Լուդովիկոս Փիլիպպոս թագաւորի դէմ. այս փորձերից մէկն, որի հեղինակն էր նախկին ոստիկան Ֆիեսկին, կատարուեցաւ «դժոխային մեքենայի» միջոցով և 60 մարդու կեանք կամ առողջութիւն արժեցաւ։ Հասարակութեան մէջ տարածուեցան զանազան «ընկերավարական» տեսութիւններ, որ պահանջում էին հասարակական կազմի կատարեալ յեղաշրջումը։ Սէն-Սիմոնի հետևողները զինուեցան ընդդէմ քրիստոնէական «ճգնաւորական» բարոյականութեան և քարոզում էին ընտանիքի և ստացուածքի ժառանգականութեան վերացումը։ Ֆուրիէն կամենում էր հասարակութիւնը փաղանգների բաժանել, իւրաքանչիւրում 2000 մարդ. փաղանգի անդամները պէտքէ միատեսակ կեանք վարէին և միատեսակ աշխատանք ունենային և հասարակութիւնից այդ աշխատանքի որոշ մասն արդիւնք ստանային։ Լուի Բլանն աւելի համեստ պահանջներով էր գոհանում,—որ աշխատանքը կազմակերպուի տէրութիւնից, որ նա կռուի մէջ մտնէ մասնաւոր ձեռնարկութեան և ազատ մրցման հետ և հիմնէ ազգային գործարաններ, ուր գործաւորները կարող լինէին միշտ աշխատանք գտնել և լաւ վարձ ստանալ։ Կառավարութիւնը սակայն չէր շփոթւում այս բոլոր վրդովեցուցիչ նշաններից, այլ այդ յոյսը դրել էր հաստատապէս զօրքի, ազգային պահակախմբի եւ ոստի-

1848. կանութեան վրայ. 1848 թուականի սկզբում Գիզոն բոլորովին վստահ էր, որ յուլիսեան միապետութիւնն ամենից աւելի հաստատուն է, և պատգամաւորներից մէկի, պատմաբան Տոքուիլի, ճառը, որ նախազգուշացնում էր խորհրդանը, թէ նախապատրաստւում է վտանգաւոր ժողովրդական շարժումն, ծիծաղով ընդունուեցաւ, իբրև ազատ երևակայութիւն մի գիտնականի, որ գործնական խնդիրներում ոչինչ չէ հասկանում:

Յուլիսեան միապետութեան քաղաքական անկումը. Յուլիսեան միապետութեան թշուառութիւնն այն էր, որ նա շատ թշնամիք էր շահել և հետզհետէ կորցրել էր բարեկամների մի մասն. ինքը բուրժուազիան, որի հետ նա սերտ կապակցուած էր, միայն սկզբումն էր գնահատում նրան, իսկ սկսաւ նրա վրայ նայել անտարբերութեամբ և նոյն իսկ ապա արհամարհանքով: Լուդովիկոս Փիլիպպոսն ու նրան շրջապատող պետական անձինք չէին կարողանում ոչ ստորին դասակարգի մարդոց վիճակն ըմբռնել, ոչ էլ հաշտել իրենց անձն որ և է խոշոր սխրագործութիւնով, որ ստիպէր մոռանալ դրանց դիպուածական և մերձաւոր իշխանութեան ծագումն և տար այդ իշխանութեան մի որոշ վեհութիւն: Տիերի մի քանի փորձերն եւրոպական պետութիւնների հետ նապոլէոնական ոճով խօսելու իսկոյն ընդհատուեցան զգուշաւոր թագաւորի կողմից: Ալժիրի նուաճումն, որ դեռ ևս Կարլոս Ժ-ի վերջին օրերումն էր սկսուած, զօրքին մեծ ջանքեր պատճառեց, բայց չը գոհացրեց Ֆրանսիացոց փառասիրութիւնն: Այսպիսով, նոյն իսկ բուրժուազիայի մէջ զգացւում էր զօրաւորապէս աւելի լայն և համարձակ քաղաքականութեան պահանջ, խիստ տարածուեցաւ թշնամական յարաբերութիւնը դէպի խորհրդարանական մրցումներն ու հնարքներն, որոնք չը նայելով իրենց աղմկալից հանգամանքներին, ոչ մի լուրջ հետեւանք չէին ունենում

թէ ներքին կառավարութեան եւ թէ արտաքին քաղաքականութեան մէջ:

Նոյն իսկ բուրժուազիայի մէջ, խորհրդարանական Փետրուարի յեղափոխութիւնը. ընդդիմադիր կուսակցութեան շրջաններում, սկսաւ — շարժումն յօգուտ ընտրական իրաւունքի ընդլայնման, և որովհետև խորհրդարաններից չէր կարելի նպաստաւոր վերաբերումն սպասել դէպի այս խնդիրն, այն ժամանակ շարժման պարագլուխները փորձեցին խնդիրն առաջ տանել անգլիական ձևով, անմիջապէս հասարակութեան կարծեացն ու ժողովրդի բազմութեան դիմելով: Դիմադիր կուսակցութեան առաջնորդներն ամբողջ երկրի մէջ կազմում էին ստորագրութիւններով ճաշեր, որոնց ժամանակ ճառեր էին խօսւում ընտրական իրաւունքի ընդլայնացնելու մասին: Քանի որ հասարակութիւնը գրգռուած էր, Ֆրանսիացոց տաք բնաւորութեան շնորհիւ, այս ճաշերի ժամանակ կազմուած ժողովներն առիթ էին տալիս ամենախիստ յարձակումների կառավարութեան դէմ. և նախարարները կարևոր համարեցին դրանց վերջ տալ. արգելեցին ժողովրդական թափօրը, որ մտադրութիւն կար մի մեծ ճաշկերութի առթիւ կազմելու Փարիզում փետրուարի 22-ին: Ճաշկերութի կազմողներն յայտարարեցին, որ իրենք պէտք է դատ վարեն նախարարների դէմ այս ապօրինի արգելման պատճառով, իսկ Փարիզի գործաւորներն սկսան փողոցներում պատնէշներ կանգնել: Յաջորդ օրն թագաւորը սարսափով համոզուեցաւ, որ ազգային պահակախումբն համակրում է անկարգութեանց. զօրահանդէսի ժամանակ, որ նա կազմեց, շատ գնդեր նրան դիմաւորեցին աղաղակով. „կեցցէ բարենորոգութիւնը“: Երեկոյեան գործերը սպառնական ընթացք ստացան, որովհետև զօրքի և ամբոխի մէջ ընդհարումն էր տեղի ունեցել, զինուորները կրակել էին, սպանել էին քանի մի հոգի և դրանով միայն գրգռել էին ժողովրդի

կատաղութիւնն, որ ամենուրեք սկսել էր կռուի պատրաստուել: Բայց բանը յամառ կռուի չը հասաւ. Լուդովիկոս Փիլիպպոսը գործը սկսել էր կորած համարել այն ժամանակից, երբ նեցուկ չէր գտել ազգային պահակախմբի, այսինքն՝ զինուած բուրժուազիայի մէջ: Փետրուարի 24-ին նա նախարարներ նշանակեց նախ խորհրդարանական դիմադիր կուսակցութիւնից, որոնք արգիլեցին զինուորներին հրացան արձակել, ապա հրաժարուեցաւ գահից յօգուտ իւր թոռան, և Փարիզից հեռացաւ:

Ամբոխը կոխեց երեսփոխանական ժողովն և սարսափելի շփոթի մէջ ստիպեց ժողովին ժամանակաւոր կառավարութիւն ընտրել և հրաւիրել ազգային սահմանադիր ժողով (կոնվենտ) պետական նոր կազմ մշակելու համար: Այս սահմանադիր ժողովի առաջին գործն եղաւ հասարակապետութիւն հրատարակելը:

Յեղափոխութիւն Գերմանիայում:

Ֆրանսիայում տեղի ունեցած յեղափոխութեանց լուրերը մնացած եւրոպական երկրների համար կարծես թէ կայծակներ լինէին, որ ընկնում էին վառօդի շտեմարանները. ամենուրեք կուտակուած դժգոհութիւնը պայթեցաւ յեղափոխութիւններով ու ապստամբութիւններով: Գերմանիայում հասարակութեան ցանկութիւնը ամենից առաջ արտայայտուեցաւ հարաւ-արևմտեան պետութեանց մէջ, որոնք արդէն սահմանադրական կազմութիւն ունէին: Շարժման պարագլուխներն էին կրթուած քաղաքացիք (բիւրգէր), և նրանց պահանջները վերաբերում էին մամուլի և քաղաքական ժողովների ազատութեան, երդուեալների դատարանի ներմուծման, ազգային զօրախմբի կազմութեան ֆրանսիական ազգային պահակախմբի ձևով: Բացի դրանից, ամէնքն էլ ոգևորուած էին ցանկութեամբ, որ գերմանական անզօր դաշնակցութիւնը վերափոխուի և կազմէ մի գերմանական պետութիւն: Այս գերակշռող ուղղութեան հետ

միասին նկատելի էր և մի ուրիշ, արմատականը, որ ձգտում էր դէպի հասարակապետութիւնն և գործաւոր դասակարգերի տիրապետութիւնը. բայց սա մեծ ոյժ չ'ունէր, և դրա կուսակիցների ապստամբութիւնը Բադենում շուտով ընկճուեցաւ զօրքով: Ընդհակառակն, ազգային—ազատական շարժումը տարածուեցաւ անզուսպ ուժով: Ֆրանկֆուրտում գումարուեցան ամենից ազդեցիկ ազատականներն և դիմեցին գերմանական կառավարութիւններին պահանջելով ընդհանուր ձայնտուութեամբ ընտրուած պատգամաւորներ ուղարկել քննելու և հաստատելու համար Գերմանիոյ պետական նոր կազմակերպութիւնը: Կառավարութիւններն առանց դիմադրութեան հնազանդեցան, և 1848 թուին մայիսին սբ. Պօղոսի եկեղեցում Ֆրանֆուրտում բացուեցաւ սահմանադիր խորհրդարանն, ուր խմբուել էր գերմանական քաղաքացոց ծաղիկն, գլխաւորաբար դասախօսներ (պրօֆէսորներ), ուսուցիչներ և իրաւաբաններ: Գերմանիոյ միութեան և ազատութեան մեծ գործը կատարուեցաւ, ըստ երևոյթին, գրեթէ առանց արիւնհեղութեան, հայրենասիրական ոգևորութեան և զարթնած գիտակցութեան բուռն ձգտման ժամանակ. մնում էր միայն որոշել նոր կազմակերպութեան մանրամասնութիւնը:

Յեղափոխութիւն Աւստրիայում:

Ազգայնականների և ազատականների արագ յաղթանակը նրանով էր բացատրւում գլխաւորաբար, որ դաշնակցութեան մէջ առաջնակարգ տեղ գրաւող պետութիւնները, յեղափոխական շարժումներով իրենք իսկ քայքայուած էին: Աւստրիայում պէտք էր հաշուի առնել ոչ միայն միջին դասակարգի ազատական ձգտումներն, այլ նաև ամենատեսակ ազգայնական աւանդութիւններն եւ գաղափարները: Փոխանակ աշխատելու յօգուտ միութեան և կռուելու նահանգների առանձնականութիւնների դէմ, Աւստրիայում ազգային ձգտում-

ներն էին, այսպէս ասենք կենդրոնախոյզ ոյժեր. Հուն-
գարական, իտալական, չեխական, խռուաթական, սլո-
վենական, լեհական, ռուսինական հայրենասէրները քիչ
թէ շատ ամենքն էլ ատում էին Վիեննայի կառավարու-
թիւնը, բայց ատում էին և միմեանց. Աւստրիայի բազ-
մադարեայ պատմութիւնը չէր կարողացել ստեղծել մի
ժողովուրդ և զօրեղ պետական կապեր. աւստրիական
հպատակների գերակայ գաղափարները կապուած էին
ս. Ստեփաննոսի, ս. Վենցեսլաւի, Եագելոնների թա-
գի, հին Իտալիոյ փառաւոր անցեալի հետ, խռուաթ-
ների ու սերբերի անկախութիւնների հետ։ Դրա
հետ միասին Մետտերնիխեան ոստիկանական վարչու-
թիւնը չէր հոգացել իսկ ազատական վիճակի մնացորդ-
ների վերացման մասին. լեհական և հունգարական ազ-
նուականները ճորտութեան մէջ էին պահում իրենց
գիւղացոց և նրանց վրայ տանուտիրական իրաւասու-
1846։ թիւն ունէին։ Դեռ ևս 1846 թ. ռուսին գիւղացիք
սկսեցին Գալիցիայում հալածել իշխաններին (պան). սը-
րանց սպանում էին հարիւրներով, իսկ դիակները
գիւղացիք իրենք յանձնում էին աւստրիական վար-
չութեան, համոզուած լինելով, որ օգտակար և կայսեր
հաճելի գործ են կատարել։ Վիեննայի կառավարութիւնն,
1848։ որ զսպում էր այս այլասեռ ուժերը, 1848 թուին գլո-
րուեցաւ անսպասելի արագութեամբ։ Բաւական եղաւ
«համալսարանական շփոթը», ուսանողների սպառնական
բողոքագիրն, որին ձայնակցեց ստորին Աւստրիոյ նա-
հանգական ժողովը, որ Եւրոպայի օրէնսդիրն, իշխան
Մետտերնիխն, արագութեամբ հեռանայ Անգլիա, որ նա
այնքան անգամ դատապարտել էր նրա հաստատու-
թիւնների ու քաղաքականութեան համար։ Ֆերդինանդ
կայսրը հրաւիրեց վերակազմիչ ժողով ընդհանուր աւս-
տրիական սահմանադրութիւն մշակելու համար. Վեն-
նայում կարգադրում էին ուսանողներն ու զինուած քա-

ղաքացիք։ Պեշտում իշխանութիւնը ձեռք ձգեցին մա-
ճառ հայրենասէրները պարագլուխ ունենալով իրենց
փաստաբան Կոշուտին և ձեռնարկեցին մի առանձին
տէրութիւն կազմելու ս. Ստեփաննոսի թագի երկրներից.
Պրագայում յաղթանակեց չեխական ազգութիւնը։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ իտալացիք, Յեղափոխութիւն
որոնք ամենից աւելի էին հեծում աւստրիական լծի, Իտալիայում։
տակ առիթը բաց չը թողին, որ, վերջապէս, անկա-
խութիւն ձեռք ձգեն։ Վերջին ժամանակները, իտա-
լական հայրենասիրական շարժումն, որին չը կարողացան
խեղդել աւստրիական ամենախիստ հալածանքներն, երեք
բոլորովին տարբեր կենդրոններից էր յառաջանում։
Գաղտնի ընկերութիւններին գլուխ էր կանգնել ազ-
ատական ընկերակցութիւնը, կազմակերպուած Ճենո-
վացի Մացցինու ձեռքով—դա ներշնչուած էր ծայրա-
յեղ հանրապետական տեսութիւններով և մերժումէր
ամեն հաշտութիւն և համաձայնութիւն Իտալիայում
գոյութիւն ունեցող բոլոր իշխանութիւնների հետ։
Սարդինիոյ թագաւոր Կարլ Ալբէրտը զգուշութեամբ
նախապատրաստում էր կռուի աւստրիացոց դէմ և
ամեն ինչ անում էր, որ ստեղծէ մի մեծ և լաւ վար-
ժուած բանակ։ Վերջապէս, համոզուած կաթոլիկները
բոլոր յոյսերը դրել էին նոր պապ Պիոս Թ.-ի վրայ, որ
նրանց աչքում եւրոպական ազգերի ընտանիքի մէջ
իտալացոց առաջնութեան մեծ գաղափարի մարմնացու-
մըն էր. Պիոս Թ. իւր կողմից ձեռնարկեց մի քանի մի-
ջոցներ պապական երկրում վարչութիւնը բարելաւելու
համար և սկսաւ դրացի պետութիւնների հետ բանակ-
ցել իտալական դաշնակցութիւն կազմելու մասին։ Դեռ
ևս 1847 թ. սկսաւ Սկիլիայում ապստամբութիւն ընդ-
դէմ Ֆերդինանդ Բ. խստաբարոյ թագաւորի։ Փետըր-
ուարի յեղափոխութեան լուրերն ընդհանուր պայթու-
մըն յառաջ բերին. Նէապոլսական թագաւորն ստիպուե-

ցաւ սահմանադրութիւն հրատարակելու, միջին Իտա-լիոյ մանր պետերը փախան իրենց իշխանութիւններից, Կարլ Ալբերտը մտաւ Լոմբարդիա, Վենետկում հրատա-րակուեցաւ հասարակապետութիւն։

Յեղափոխու-թիւնը Պրուսիայում 1848 Պրուսիայում պաշտօնէական վարչութիւնը սկսաւ տատանուիլ 1848 թուից քիչ առաջ։ Ֆրիդրիխ Վիլ-հէլմ Գ-ի տուած խոստումների բարոյական նշանակու-թիւնը մեծ էր, և հասարակաց կարծիքը միաձայն պա-հանջում էր այդ խոստումների կատարումը, Ֆրիդրիխ-Վիլհէլմ Գ-ի յաջորդ Ֆրիդրիխ Վիլհէլմ Դ. պարտք

1847 համարեց 1847 թուին նահանգական ներկայացուցիչ-ների ժողով գումարել։ Թագաւորը զգայուն, ճարտա-րախօս, արուեստագէտի ճաշակի ու զգացման տէր մարդ էր, բայց պարզ ծրագիրներ չ'ունէր և անհետեւողական էր իւր գործողութիւնների մէջ։ Նա ներկայացուցիչ-ներին անյարմար ու նեղ հանգամանքների մէջ դրաւ, և պատգամաւորները փոխանակ շնորհակալ լինելու թագաւորից նրա ողորմութեան համար, անմիջապէս սկսան պահանջել իրենց սահմանադրութեան փոփոխու-մըն։ Երբ Փարիզի դէպքերի լուրերն եկան, Բեռլինի բնակիչները պահանջեցին իսկական սահմանադրութիւն։ Թագաւորը խոստացաւ այդ, բայց զօրքի ու քաղաքա-ցոց յարաբերութիւնները շատ լարուած էին, և երկու պատահական գնդակի արձակումն առաջ բերաւ փողո-ցային կռիւ (18 մարտի)։ Քաղաքը ծածկուեցաւ պատ-նէշներով, զօրքերը յարձակումն գործեցին նրանց վը-րայ և աստիճանաբար յառաջ դիմեցին, չընայելով բնա-կիչների կատաղի դիմադրութեան։ Թագաւորը չը դի-մացաւ—յանկարծ հրամայեց զինուորներին թողնել քա-ղաքն և հրովարտակ արձակեց, որի մէջ ապստամբու-թեան բոլոր մասնակիցներին ներումն յայտարարեց և խոստացաւ այսուհետեւ գործելու ի նպաստ Գերմա-նիոյ ազատութեան եւ միացման։ Պրուսիոյ համար

շուտով մշակուեցաւ ազատամիտ սահմանադրութիւն և կազմուեցաւ ազատամիտ նախարարութիւն։

Այսպիսով յեղափոխութիւնն ամենուրեք անսպասե- Յետաշրջում Իտալիայում
լի և դիւրին յաջողութիւն ունեցաւ։ Բայց շուտով ե-րեւան եկաւ, մի կողմից, որ յեղափոխականները քիչ էին պատրաստուած պետական վերակազմութեան դը-ժուարին խնդիրների համար, որ դրանք յանձն էին ա-ռել, միւս կողմից—որ պատմական ճանապարհով բար-դուած պետական ձեւերն աւելի մեծ կենսունակու-թիւն ունին և որ դրանց չէ կարելի յաղթել մի քանի օրում։ Իտալիայում հայրենասէրներն ամենից առաջ ցանկանում էին միութիւն. բայց չը կարողացան միա-նալ։ Նէապոլսեցիք ու սիկիլիացիք ամբողջապէս զբա-ղուած էին իրենց գործերով, ուժերը ներածին չափ վնասում էին միմեանց և դրանով միջոց տուին Ֆեր-դինանդ Բ-ին ոտքի կանգնելու, ճնշելու ապստամբու-թիւնն և անգութ հատուցումն տալու ապստամբներին։ Սարդինիոյ թագաւորը հանրապետականների կողմից ա-ջակցութիւն չը գտաւ և ստիպուած եղաւ պատերազմը շարունակելու սեփական ուժերով։ Նա Լոմբարդիայում հանդիպեց մի իսկական զօրավարի, նապոլէոնական պա-տերազմների 80-ամեայ հինաւուրց զինուորի, մարա-ջախտ Ռադեցկու հետ։ Չը նայելով սարդինեան բանակի քաջութեան, երկու անգամ ջարդուեցաւ նա (Կուստոց-ցայի և Նովարայի մօտ)։ Կարլ Ալբերտն այս պարտու-թիւնների ցաւին չը դիմացաւ և հրաժարուեցաւ գահից ի նպաստ իւր որդու, Վիկտոր Էմանուէլի, որ շտա-պեց աւստրիացոց հետ հաշտութեան դաշը կռելու և կրկին նրանց թողեց թշուառ Լոմբարդիան։ Վենետիկը մի տարի ունեցաւ իւր հանրապետութիւնը, բայց սար-դինիացոց պարտութիւնից յետոյ կարգն հասաւ և նրան. քաղաքն յուսահատական դիմադրութիւնից յետոյ առ-նուեցաւ Ռադեցկու ձեռքով։ Հռովմում հանրապետա-

կանները պապին այնպիսի վիճակի մէջ դրին, որ նրան մնաց միայն փախստեան դիմել և օգնութիւն խնդրել կաթոլիկ պետութիւններից։ Այս օգնութիւնն հասաւ ամէն կողմից. աւստրիացիք, նէապոլսացիք, սպանիացիք և նոյն իսկ ֆրանսիացիք երևեցան պապի երկրում։ Ֆրանսիացիք գնացին Հռոմի վրայ, սկզբում յետ մղուեցան հռոմէական հանրապետականներից Գարիբալդու հրամանատարութեան տակ, բայց յետոյ օգնութիւն ստացան, և Հռոմի արիասիրտ պաշտպաններն ստիպուեցան քաղաքն յանձնելու։ Իտալիոյ միացումն ու ազատութիւնը, չը նայելով թափուած արեան, կրկին երևեցաւ մի անիրագործելի ցնորք։

Յետաշրջումն Աւստրիայում

Աւստրիայում ևս յետաշրջումն յաղթանակեց, թէպէտ և մեծ դժուարութիւնով. ընդհանուր աւստրիական համաժողն (սէյմ) ընդունեց քանի մի օգտակար միջոցներ ճորտական հպատակութիւնը վերացնելու և ազատ գնուելու մասին, բայց ընդհանրապէս նրա գործունէութիւնը կատարելապէս երևակայական եղաւ։ Նա ջանաց մշակել ընդհանուր պետական օրէնք, մինչդեռ իւրաքանչիւր ազգ կամենումէր ապրել իւր ցանկացածին պէս: Ֆերդինանդ կայսրը, ձանձրանալով այդպիսի դժուար ժամանակներում կառավարելու դերից, հրաժարուեցաւ գահից ի նպաստ իւր եղբօր որդու Ֆրանց Յովսեփի. Սա աջակցութեամբ ճարպիկ ու համարձակ նախարար իշխան Շվարցենբերգի սկսաւ յայտնի պատերազմ ընդդէմ յեղափոխութեան։ Զօրավար Վինդիշգրեցը, որ հրամանատար էր Բոհեմիայում, ռմբակոծեց Պրագան, ուր չեխ հայրենասէրները փորձ էին արել գումարելու ընդհանուր սլաւեան համագումար, որը սակայն ոչ մի գործնական հետևանք չունեցաւ։ Պրագայի նուաճումից յետոյ կարգն եկաւ Վեննային, որ նոյնպէս գրաւուեցաւ, շնորհիւ այն աջակցութեան, որ խռուատները ցոյց տուին Վինդիշգրեցին։ Աւելի

յամառ դիմադրութիւն արին մաճառները։ Նրանց նպատակն էր Աւստրիայից բոլորովին անկախ դառնալ և մի և նոյն ժամանակ ենթարկել իրենց բոլոր սլաւեան ցեղերը, որոնք երբեմն պատկանել էին հունգարական թագին։ Սրանք էլ իրենց կողմից լսել անգամ չէին կամենում ատելի մաճառներին հպատակելու մասին և երազում էին խռուատների, սերբերի և դալմատացիների միացման և մի մեծ խռուատական թագաւորութիւն կազմելու մասին։ Խռուատ իշխան Ելլաշիչն ամենայն ուժով աջակցում էր կայսեր ընդդէմ հունգարացոց, յոյս տածելով, որ կայսրն ի վարձատրութիւն կը համաձայնի իւր հարաւային սլաւոնական երկրներին ինքնավարութիւն տալու։ Կայսերական բանակն ու խռուատները սկզբան խիստ նեղը ձգեցին մաճառներին, բայց, երբ պարզուեցաւ, թէ աւստրիացիներից սպասել կարելի չէ, որ իրագործեն մեծ խռուատական ծրագիրն, հարաւային սլաւներն յետ կանգնեցին պատերազմից։ Մինչ այդ մաճառները ջերմ հայրենասիրութիւն ցոյց տուին, խմբերով մտնում էին ազատակամների բանակն և, վարժուելով զինուորական գործին, դառնում էին շատ լաւ զինուորներ, զօրագլխների ու սպաների մէջ կային շատ
լեհացիք, որոնք մասնակցել էին 1831 թ. ապստամբու- 1831
թեան։ Պեշտում հանրապետութիւն հրատարակուեցաւ, իսկ պատերազմ վարելու համար դիկտատորութիւնն
յանձնուեցաւ եռանդուն Կոշուտին։ Երբ 1849 թուին 1849
Վինդիշգրեցը դիմեց Հունգարիա, մի քանի սկզբնական յաջողութիւններից յետոյ ջարդուեց մաճառ զօրքից։ Աւստրիոյ այս յուսահատական վիճակի մէջ փրկիչ երեւեցաւ նրան յանձին Նիկոլայ Պաւլովիչ կայսեր. սա զայրոյթով էր նայում եւրոպական յեղափոխութեան վրայ, իսկ հունգարական ապստամբութեան ընթացքը թւում էր նրան ուղղակի վտանգաւոր և սպառնական Ռուսիոյ համար, աչքի առաջ ունենալով լեհերի մաս-

նակցութիւնը նրա մէջ և ազդեցութիւնն, որ հունգարական հանրապետութիւնը կարող էր ունենալ Լեհաստանի վրայ: Պասկեւիչի բանակի դէմ մաճառները կարող չէին կռուել. մի քանի արիւնահեղ գործերից յետոյ Գէօրգէյի հունգարական գլխաւոր զօրաբանակը Վիլագոշի մօտ զէնքը վայր դրաւ: Ֆրանց Յովսէփ կայսրը հնար ստացաւ իւր անսահման իշխանութիւնն հաստատելու, հին հունգարական դասակարգերի ներկայացուցչութիւնը ջնջուեցաւ, և Հունգարիան այնպիսի կատարեալ կախման մէջ դրուեցաւ կենդրոնական կառավարութիւնից, ինչպէս մնացած աւստրիական երկիրներն էին:

Յետաշրջումն Գերմանիայում:

Իտալիայում և Հունգարիայում տեղի ունեցած գործերն երկար ժամանակ Աւստրիայի ուշադրութիւնը հեռացրին Գերմանական յարաբերութիւններից, և այս հանգամանքն օգտաւէտ երևեցաւ գերմանական միութիւնն իրագործելու համար. կարելի էր օգտուել Աւստրիոյ ակամայ բացակայութիւնից, միութեան մէկ գլխաւոր արգելքից ազատուելու համար—երկու առաջնորդող պետութիւնների մրցումից—Աւստրիոյ և Պրուսիոյ: Բայց ոչ լուսաւորուած ազատականներն, որ ժողովուած էին Ֆրանկֆուրտում, ոչ պրուսական թագաւորը կարողացան օգտուել այս առիթից: Ոմանք երկար ժամանակ չէին կարողանում յաղթել իրենց ատելութեան դէպի պրուսական պետութիւնն, որ շատ տարածուած էր ազատական շրջաններում և գերմանական երկրորդական տէրութիւնների ժողովրդների մէջ. իսկ միւսն էլ ոճականութիւն չունէր, սրբազան դաշնակցութեան քաղաքականութեան հետ իւր կապը խզելու և ընդդէմ դուրս գալու Աւստրիային և նրա նեցուկ Ռուսիային: Ֆրանկֆուրտի խորհրդարանի առաջին ձեռնարկութիւններից մէկն եղաւ կայսերական փոխարքայ ընտրել անձնապէս ժողովրդական արքիդուքս Յոհան Աւստրիացուն: Գերմանական կառավարութիւնների հետ խորհրդարանն

ամբողջ ժամանակ լարուած յարաբերութեանց մէջ էր և, իւր տրամադրութեան տակ չ'ունենալով ոչ մի որոշ նիւթական միջոց, վարուում էր իբրև բարձրագոյն իշխանութիւն կայսրութեան մէջ: Այսպէս, ժողովը մերժեց այն զինադադարն հաստատել, որ Պրուսիոյ թագաւորը կռել էր դանիմարքացոց հետ Շլէզվիգ և Հոլշտայն նահանգների համար վարուած պատերազմից յետոյ: Խորհրդարանի այս միջամտութիւնը գործնական նշանակութիւն չ'ունեցաւ, բայց վիրաւորեց Ֆրիդրիխ Վիլհէլմ Դ. թագաւորին: Սակայն մինչդեռ շատ նիստերից յետոյ, որ նուիրուած էին գերմանացի քաղաքացոց հիմնական իրաւունքներին, կարևոր եղաւ մատչելու ընդհանուր գերմանական իշխանութիւնների կազմակերպութեան և ուրիշ բան հնարելու միջոց չեղաւ, բայց եթէ Գերմանիոյ գլխապետութիւնն առաջարկել Պրուսիային: Խորհրդարանն այդպէս էլ արաւ. նա յայտարարեց, թէպէտև ոչ առանձնապէս աչքի ընկնող մեծամասնութեամբ, որ ընտրում է Պրուսիոյ թագաւորին գերմանական կայսր: Ֆրիդրիխ Վիլհէլմը սակայն չըվստահացաւ ընդունելու կայսերական թագը Ֆրանկֆուրտի պատգամաւորների ձեռքից—նա համարում էր, թէ այդ թագից յեղափոխութեան հոտ է գալիս: Դրա հետ միասին, ինչպէս և սպասելի էր, գերմանական կառավարութիւններից գլխաւորներն—բաւարականը, սաքսոնականը, հաննովերականն ու Վիւրտենբերգինը—բացարձակ կերպով յայտարարեցին, որ իրենք հակառակ են Պրուսիոյ գերիշխանութեան. աւելի ևս վճռական կերպով Ֆրանկֆուրտեան ծրագրի դէմ էր Աւստրիան: Ֆրիդրիխ Վիլհէլմը քաջութիւն չունեցաւ թափով անցնել դէպի նպատակն և փոխանակ թագն ընդունելու, սկսաւ զանազան կառավարութիւնների հետ բանակցութիւններ «միութեան» մասին, որոնց մէջ աշխատում էր լուծել Գերմանիոյ միացման անլուծանելի խնդիրն և

միևնոյն ժամանակ գոհացնել գերմանական տէրութիւնների բոլորի պահանջները, մինչև իսկ Աւստրիայի։ Ֆրանկֆուրտի խորհրդարանի վիճակն անտանելի դարձաւ շնորհիւ պրուսական թագաւորի հրաժարուելուն։ Դրա կանգնած բոլոր շէնքը կայսերական սահմանադրութեան դարձաւ մի օդային դղեակ։ Պատգամաւորների մեծ մասը թողեց ժողովն, արմատական փոքրամասնութիւնը փորձ արաւ ժողովի նիստերը տեղափոխելու Շտուտգարտ, բայց դուրս վռնդուեցաւ Վիւրտեմբերգի կառավարութիւնից։ Ամենից վճռականներն սկսան ապստամբութիւն, որ շուտով ընկճուեցաւ պրուսական զօրքերի ձեռքով։ Գերմանացի բիւրգերների պետական գործն այնպիսի արագութեամբ կործանուեցաւ, ինչպիսի արագութեամբ որ ծագել էր, բայց աւելի լաւ ճակատագիր չէր սպասում „միութեան“, որի համար աշխատում էր պրուսական թագաւորը։ Ֆրանց Յովսէփը հաստատուելով իւր երկրի ներսում, շնորհիւ ռուս բանակի, անմիջապէս հանդէս եկաւ իւր բոլոր եռանդով ընդդէմ պրուսական ծրագիրների։ Նա կրկին կարող էր նեցուկ դարձնել իրեն Նիկոլայ Պաւլովիչ կայսեր, որ ընդհանրապէս չէր սիրում նորամուծութիւններն, իսկ ի մասնաւորի դէմ էր Գերմանիոյ համար վտանգաւոր միացման։ Օլմիւցում, գերմանական կառավարութիւնների ներկայացուցիչների ժողովում, իշխան Շվարցենբերգը պնդեց այն կարգին վերադառնալու վրայ, որ սահմանել էր Վեննայի վեհաժողովը։ Պրուսիոյ թագաւորին մնաց մխիթարուելու այնու, որ իւր երկրում, աւստրիացոց օրինակով, զէնքի ուժով, վերականգնեց իշխանութիւնը։ Սահմանադրութիւնը սակայն բոլորովին չը ջնջուեցաւ Պրուսիայում, միայն խիստ համառօտուեցաւ։

Ֆրանսիական հանրապետութիւն

Նոյն իսկ Ֆրանսիայում յեղափոխականների յաղթանակն երկարատև չ՛եղաւ։ Յուլիսեան միապետութեան վրայ յաղթանակելուց անմիջապէս յետոյ սկսաւ արտայայտուել անհաշտելի հակառակութիւնն, որ կար կռուի մէջ մասնակցող հասարակութեան երկու դասակարգերի,—հարուստ, իշխան դասակարգի, բուրժուազիայի, եւ աղքատ, ստորին դասակարգի, գործաւորների միջեւ։ Թէպէտ, այս վերջին դասակարգին պատկանող պիտի համարել միայն քաղաքային բանուորներին—գործարանական ու արհեստաւոր, որովհետև գիւղացոց մէջ այդպիսի ստորաբաժանումն չը կար. Նրանք ամէնքն էլ հետևող էին պահպանողական ուղղութեան, պաշտպան էին կարգի և իշխանութեան և չէին համակրում քաղաքացոց հասարակական յեղաշրջումն յառաջ բերելու փորձերին։

Գործադիր յանձնաժողովին, որ ընտրել էր սահմանադիր համագումարը, գլուխ էր կանգնած զգայուն բանաստեղծ և փայլուն ճարտասան Լամարտինը։ Նա ահագին ժողովրդականութիւն ձեռք բերաւ ազատական սկզբունքներն և ժողովրդական գերիշխանութիւնը պաշտպանելով, բայց նոյն իսկ ժողովրդականութեան ձգտող կիրքը կարող չ՛եղաւ նրան ստիպել ընդունելու «կարմիրների» ծրագիրն և աշխատելու ի նպաստ հասարակական յարաբերութիւնների կատարեալ վերակազմութեան։ «Կարմիրների» գլխաւոր ներկայացուցիչն էր Լուի Բլանը։ Փետրուարի դէպքերի թարմ տպաւորութեան տակ Փարիզում հիմնուել էին ազգային արհեստանոցներ, որոնց մէջ ամէն մի գործաւոր իրաւունք ունէր տեղ պահանջելու և օրական 2 ֆրանկ վարձ։ Անկարգութիւնների պատճառով արդիւնագործութիւնն ընկաւ, և ազգային արհեստանոցում գումարուեցաւ ահագին բազմութիւն—100,000 մարդուց աւելի։ Հասարակաց աշխատանքները, որ դրանք կատարում էին, նշանակութիւն չ՛ունէին և վատ էին ընթանում, իսկ այս բազմու- այն ժամանակուան հանգամանքներում

թիւնը յեղափոխութեան համար մի պատրաստի բանակ էր, որի շարքերում հեղինակութիւն ունէին ամենից ծայրայեղ արմատականները։ Յուլիս ամսում գործադիր յանձնաժողովը վճռեց փակել ազգային արհեստանոցները, դրանց մէջ գտնուող գործաւորներին ուղարկել նահանգների երկաթուղիների շինութեան վրայ և կամ զինուորական ծառայութեան։ Այս վճիռն ընդունուեցաւ արհեստանոցներում և բանուորների բնակած թաղամասերում իբրև պատերազմի յայտարարութիւն։ Երեք օր (24—26 յունիսի) Փարիզի փողոցներում կատաղի կռիւ էր մղւում, որի նմանը չէր տեսել մինչև իսկ այն քաղաքը, որի մէջ այնքան յեղափոխութիւններ էին տեղի ունեցել. Սահմանադիր համագումարն զօրավար Կաւենեակին դիկտատորութեան իրաւունք տուաւ, ապստամբութիւնն ընկճելու համար նրա ձեռքի տակ էին բացի զօրաբանակի գնդերից նաև Փարիզի ազգային պահակախմբի և նահանգական «շարժական» վաշտերը։ Ծանր կռուից և սարսափելի կորուստներից յետոյ Կաւենեակը խորտակեց «կարմիրներին», և նրա յաղթութիւնը խնդիրը վճռեց ի վնաս արմատական հանրապետութեան։ Մնում էր պարզելու, թէ չափաւորները, որ յաղթանակել էին, ծնչքան ընդունակեն կազմակերպելու հանրապետութիւնը,

Լուդովիկոս Նապոլէոն Բոնապարտ։

Համագումարի մշակած սահմանադրութիւնը, պետութեան գլուխ էր կարգել երկու իշխանութիւն, որոնք միմեանցից բոլորովին անկախ էին—պատգամաւորների ժողովն. ընտրուած 3 տարի ժամանակով ընդհանուր ձայնտուութեամբ, և նախագահն, նոյնպէս ընդհանուր ձայնտուութեամբ ընտրուած 4 տարով, առանց իրաւունք ունենալու անմիջապէս երկրորդ անգամ վերընտրուելու։ Նախագահութեան գլխաւոր թեկնածուքն էին—Կաւենեակ ու իշխան Լուդովիկոս Նապոլէոն Բոնապարտ։ Սա որդի էր Հոլլանդիոյ նախկին թագաւոր

Լուդովիկոսի և եղբօրորդի Նապոլէոն կայսեր։ Ծածկամիտ ու փառասէր, համոզուած, որ նապոլէոնական գաղափարներն անյաղթելի և բարերար ույժ են, նա երկար ժամանակ վարեց քաղաքական արկածախնդրի և չը ճանաչուած երազողի կեանք։ Դեռ ևս երիտասարդ ժամանակը Լուդովիկոս Նապոլէոնը մասնակցել էր իտալական ապստամբութեան, 1830 թուին, և մեծ դժուարութեամբ ազատուել էր, փախչելով աւստրիացոց ձեռքից։ 1830

Յուլիսեան միապետութեան ժամանակ նա երկու անգամ զուր փորձ էր արել բոնապարտականներին Լուդովիկոս Փիլիպպոս թագաւորի դէմ ոտքի հանելու և երկրորդ անգամ բազմամեայ բերդարգելութեան էր դատապարտուել։ Այդ ժամանակ նա գրքեր էր գրում, որոնց մէջ մեկնում էր գործունէութեան մի բաւական մութը ծրագիր միահեծան իշխանութեան համար, որ ծագումն է առել յեղափոխութիւնից, յենուում է ռամկապետութեան վրայ, եւ ձգտումէ Եւրոպան վերակազմել ազգային եւ ընկերավարական տեսակէտներով։ Յեղափոխութիւնը 1848 թուին, վերջապէս, 1848

յուն ճանապարհ բաց արաւ այս արքայազն իշխանի համար։ Ազատականներն ու արմատականները կռուի ժամանակ սովորել էին բարեկամաբար վարուել բանապարտականների հետ։ Ժողովրդի բազմութեան և բանակի մէջ Նապոլէոնի կայսրութիւնը թողել էր իրենից յետոյ մի անջնջելի հետք, իբրև զօրութեան և փառքի մեծ դարաշրջան։ Նախագահի ընտրութեան համար տըբուած 7,500,000 ձայնից, 5,500,500 ձայնը ստացել էր Բոնապարտը, 1,500,000 Կաւենեակը, մնացածն արմատական թեկնածուք։

Քաղաքական կուսակցութիւնները։

Ինչ վերաբերում է ազգային ժողովի ընտրութիւններին, դրանք աչքի ընկնող մեծամասնութիւնը տուին միապետականներին. նահանգների ազգաբնակութիւնն այստեղ արտայայտեց իւր թշնամական յարաբերութիւնն

արմատականներին ու յեղափոխականներին, բայց դրա հետ միասին ստեղծեց մի տարօրինակ վիճակ. միապետականները կոչուած էին կառավարելու հանրապետութիւնը: Միապետական յեղաշրջման դէմ մի որոշ չափով երաշխաւորութիւն էր այն հանգամանքը, որ միապետութեան կուսակիցները բաժանուում էին երեք միմեանց ատող կուսակցութեանց. օրինաւորականները (լէժիտիմիստ) կուսակից էին կոմս Շամբորի [1]), Բուրբոնեան հարստութեան շառաւղի. օրլէանականներն իրենց յոյսը դրել էին կրկին Անգլիայում ապրող Լուդովիկոս Փիլիպպոսի վրայ. բօնապարտականների թեկնածուն էր նախագահ Բօնապարտը: Արմատականների թիւը շատ քիչ էր ազգային ժողովում, բայց դեռ ես ահեղ էին սրանք շնորհիւ այն ազդեցութեան, որ ունէին Փարիզի գործաւոր բնակիչների վրայ, չափաւոր հասարակապետականներն իրենց խորտակուած էին զգում զօրավար Կաւենեակի նախագահական ընտրութեան ժամանակ պարտուելու պատճառով:

Պետական հարուած: Ազգային ժողովն ու կառավարութիւնը կրկին ստիպուած եղան «կարմիրների» հետ կռուելու պայքին օգնութեան ուղարկուելիք արշաւախմբի առթիւ: Այս ձեռնարկութիւնն համապատասխան էր նահանգների ազգաբնակութեան կաթոլիկ համոզմանց, բայց մարտահրաւէր էր արմատականներին, որովհետեւ ուղղուած էր հանրապետական կուսակցութեան դէմ Իտալիայում: Ազգային ժողովում արմատական պատգամաւորները պահանջեցին դատի մատնել նախագահին ու նրա նախարարներին, բայց նրանց գլխաւոր յոյսը գործաւորների զինեալ շարժման վրայ էր: Զօրքերն ու ազգային պահակախումբը սակայն առանց մեծ դժուարութեան ցրուեցին ամբոխը, Փարիզն հրատարակուեցաւ պաշարման վիճակի մէջ եւ ենթարկուեցաւ խիստ ոստիկանական հսկողութեան: Ազգային ժողովն աւելի եւս հեռուն գնաց. նա ընտրութեանց ժամանակ զրկեց ձայնից այն բոլոր անձանց, որոնք մշտական բնակութեան տեղ[1]) չու-

[1]) Բերրիական դքսի որդին, որ սպանուել էր 1822 թուին:

[1]) Ընտրող կարող էր լինել միայն նա, որ մի յայտնի տեղում ապրել էր 3 տարուց ոչ պակաս:

նէին, եւ դրանով հեռացրեց քաղաքական ազդեցութիւնից անհանգիստ գործաւոր դասակարգի մեծագոյն մասին, որովհետեւ դրա անդամներն ստիպուած էին յաճախ փոխել իրենց բնակավայրերն:

Նախագահը կարողացաւ օգտուել թէ ազգաբնակութեան մեծամասնութեան տրամադրութիւնից, որ ամենից առաջ ցանկանում էր կարգ, եւ վախենում էր „կարմիրներից", եւ թէ ընկճուած արմատական տարրերի գրգռուած դրութիւնից: Ոմանք վարժուել էին նախագահի վրայ նայելու իբրեւ քաղաքացիական կազմակերպութեան սեան վրայ, միւսներն ուրախութեամբ հետեւում էին նրա վէճին ազգային ժողովի հետ: Նա, օրինակի համար, պահանջեց, որ մշտական բնակավայր չ՚ունեցող ազգաբնակութեան յետ դարձուին ընտրական իրաւունքներն, թէպէտ և նախապէս գիտէր, որ ազգային ժողովը պիտի մերժէ իւր առաջարկութիւնը: Նախագահական քառամեայ ժամանակամիջոցը լրանում էր 1852 թուին, բայց արդէն 1851 թուին Լուդովիկոս Նապոլէոնն ու իւր մերձաւորները վճռական միջոցներ ձեռք առին: Նախագահի ժողովրդականութիւնը շատ մեծ էր, մանաւանդ նահանգներում, ֆրանսիացոց մեծամասնութիւնը քաղաքական գրգռուած դրութիւնից անցել էր անտարբերութեան և ցանկանում էր անձնական գործերով ու զուարճութիւնով զբաղուիլ. այն անձինք, որոնցից կարելի էր դիմադրութիւն սպասել, հեռացուել էին զօրքի ու ազգային պահակախմբի վրայ ազդեցութիւն ունենալուց, զօրքերի հրամանատարութեան և ոստիկանութեան վերաբերեալ գլխաւորագոյն պաշտօններն յանձնուած էին նախագահի կուսակիցներին, նրա արկածների մասնակիցներին, կասկածելի անցեալ ունեցող մարդոց, որոնք վտանգաւոր քաղաքական խաղով յոյս ունէին ուղղելու իրենց խանգարուած գործերն և յա- 1852

գեցնելու իրենց զանազան տեսակի ախորժակներն: 1851 թուի դեկտեմբերի 2 լուսացող գիշերը կալանաւորուեցան ազդեցիկ պատգամաւորներն ու զանազան կուսակցութիւնների գործիչները, գլխաւոր փողոցներն ու հրապարակները բռնուեցան զօրքերով, կախուեցան յայտարարութիւններ ազգային ժողովի արձակման, ընդհանուր ձայնտուութեան իրաւունքի վերականգնման և տէրութեան պետի 10 տարի ժամանակով նշանակման մասին: Պետական հարուածն (coup d'état) կատարեալ յաջողութիւն ունեցաւ: Գործաւորների քանի մի դիմադրութիւն ցոյց տալու փորձերն անմիջապէս ճնշուեցան, աչքի ընկնող անձինք, ինչպէս Տիերը, Կաւենեակն ու Շանգարնիէ զօրավարներն արտաքսուեցան Ֆրանսիայից, մի քանի ուրիշներն աքսորուեցան Կայեաննա և Աֆրիկէ: Պաշարման վիճակի ազդեցութեան տակ կատարուեցաւ պլէբեսցիտ, այսինքն՝ ընդհանուր ժողովրդական քուէարկութիւն կառավարութեան եղանակի մասին: Լուդովիկոս Նապոլէոնի պետութեան գլուխ նշանակուելու համար ձայն տուին 7,500,000 մարդ, և միայն 650,000 հոգի քաջութիւն ունեցան նրան ընդդէմ ձայն տալու: Շուտով դրանից յետոյ „պետութեան գլուխ“ անյարմար տիտղոսը փոխարինուեցաւ առաւել որոշ տիտղոսով „Ֆրանսիացոց կայսր“, և նոր ժողովրդական քուէարկութիւնն հաստատեց այս փոփոխութիւնը ձայների առաւել մեծ թուով: Նոր կայսրն ընդունեց Նապոլէոն Գ.[1]) անունը:

1848 թ. յեղափոխութեանց հետեւանքները

Այսպիսով, բոլոր երկրներում, ուր տեղի էր ունեցել 1848 թ. յեղափոխութիւնն, վերականգնուեցաւ միահեծան իշխանութիւնների նշանակութիւնը—յեղափոխական իդէալներն ու ծրագիրներն ըստ մեծի մասին խորտակուեցան: Այսու ամենայնիւ 48 թուականի շար-

[1]) Նապոլէոն Բ. համարւում է Աւստրիայում մեռած Նապոլէոն Ա-ի և Մարիա Լուիզայի որդին, այսպէս կոչուած Ռայխշտատի դուքսը:

ժումն անհետեւանք չ'անցաւ: Նրա աչքի ընկնող սկզբունական յաջողութիւնները յուսադրեցին պարտուածներին, որովհետեւ նրանք օրինակով ցոյց տուին, թէ յառաջդիմականների ոյժն, և թէ թոյլ կողմերը կառավարական դրութեանց: Սակայն բացի այս բարոյական ազդեցութիւնից, Եւրոպայի քաղաքական կազմը խիստ փոխուեցաւ: Իրաւ է, Աւստրիան, յեղափոխութիւնից չը շօշափուած Ռուսիոյ վրայ յենուելով, ամբողջապէս վերադարձաւ մետտերնիխեան քաղաքականութեան, բայց արդէն Պրուսիայում կառավարութիւնն հնարաւոր չը համարեց պարզապէս աչքաթող անելու բոլոր կատարուածները. նա հրաժարուեց անսահման միապետութեան վերահաստատութիւնից և պահեց կառավարութեան սահմանադրական եղանակը: Իսկ որ գլխաւորն է, Ֆրանսիայում կրկին երեւան եկաւ նապոլէոնեան կայսրութիւն, որի նշանաբանն էր շարունակել յեղափոխութեան գործը զինուորական դիկտատորութեան օգնութեամբ:

ԳԼՈՒԽ Բ.

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ.

Նիկոլայ կայսեր քաղաքանութիւնը

Կայսերական իշխանութիւնն ստանձնելով, Նապոլէոն Գ. յայտարարեց, որ „կայսրութիւնը խաղաղութիւն է“: Աւելի ուղիղ կը լինէր ասել, թէ կայսրութիւնը նշանակում է պատերազմ, որովհետեւ միայն պատերազմով կարելի էր ամրապնդել նոր կազմակերպութեան հեղինակութիւնը: Եւրոպայի դրութիւնն այնպիսի էր, որ պատերազմի համար բաւականաչափ պատճառներ ու պատրուակներ կային: Եւ յեղափոխութիւնից ծագած կայսրութիւնը նախ և առաջ կռուի դուրս եկաւ այն պետութեան հետ, որը հետեւողաբար պաշտ-

պանում էր օրինականութիւնն և այդ պաշտպանու-
թեամբ ձեռք էր բերել արևելեան Եւրոպայում գե-
րիշխանութիւն,—Ռուսիայի հետ։ Նիկոլայ կայսրը ոչ
մի ուղղակի օգուտ չը քաղեց իւր աւստրիական և գեր-
մանական գործերին միջամտելուց, բայց հունգարական
պատերազմից և Վարշաւայի դեսպանաժողովից յետոյ
նա ինքն իրեն ապահովուած էր համարում արևմտեան
սահմանի վրայ և ազատ, ձեռնարկելու արևելեան խնդրի
վերջնական լուծման։ Նրա կարծիքով, Տաճկաստանը
„հիւանդ մարդ“ էր, որի ժառանգութեան մասին պիտի
մտածէին դրացիք։ Այս մտքով ռուսաց թագաւորն
յայտնեց Պետերբուրգի անգլիական դեսպանին, որ յար-
մար առթին ինքը կը գրաւէ Կոստանդնուպոլիսը, բայց
մտադիր չէ այն իւր ձեռքին պահելու և պիտի գործէ
Բալկանեան թերակղզում Ռուսիոյ հովանաւորութեան
տակ ինքնուրոյն քրիստոնեայ տէրութիւններ կազմուելու
օգտին։ Անգլիան ևս իւր կողմից կարող է գրաւել
Եգիպտոսն ու Կրէտէն։ Բայց արդէն քառասնական թուա-
կանների սկզբներին որոշուեցաւ, որ արևմտեան պե-
տութիւնները, Ֆրանսիան և Անգլիան, մտադիր չեն
թոյլ տալու, որ ռուսաց ազդեցութիւնը Բալկանեան
թերակղզում ընդլայնանայ և Ռուսիան դուրս գայ դէ-
պի բաց ծովը Կոստանդնուպոլսի կողմից։ Ռուսաց կայ-
սեր ծրագիրները փոխանակ անգլիացոց համակրութիւնը
գրաւելու, առաջացրին արեւմտեան պետութիւնների
միջեւ դաշնակցութեան վերանորոգումն ռուսաց դէմ
գործելու համար։ Նապոլէոն Գ-ի պատերազմական
մտադրութիւններն եռանդուն աջակցութիւն գտան Ան-
գլիոյ կողմից, երբ այնտեղ արտաքին գործոց նախա-
րար եղաւ լորդ Պալմերստոնը։ Ֆրանսիայի հետ ռու-
սաց թագաւորն անմիջական ընդհարումն ունեցաւ,
որովհետև Նապոլէոն Գ. ստանձնեց կաթոլիկների հո-
վանաւորողի դերը Պաղեստինէում և սկսաւ պաշտպան

հանդիսանալ նրանց քանի մի պահանջներին, որոշ ար-
տօնութիւնների վերաբերեալ Փրկչի Գերեզմանի տաճա-
րում, մինչ Նիկոլայ կայսր օրթոդոքս եկեղեցու շահե-
րու պաշտպան էր դուրս եկել։ Այս վէճը սուրբ տեղե-
րի մասին բարդուեցաւ, սպառնական կերպարանք ստա-
ցաւ, երբ Ռուսիան, յենուելով Անդրիանապոլսի և Հիւն-
քեար-Սկելեսու դաշնադրութեանց վրայ, պահանջեց
Տաճկաստանից ճանաչել իւր խնամակալութիւնը բոլոր
օրթոդոքս քրիստոնեաների վրայ տաճկական կայսրու-
թեան մէջ։ Սուլթանը, յոյսը դնելով արևմտեան պե-
տութեանց պաշտպանութեան վրայ, մերժեց այդ պա-
հանջները կատարել, և ռուս զօրքերը, նրան ստիպելու
համար, գրաւեցին դանուբեան իշխանութիւններն, իսկ
ռուսաց Սև ծովի նաւատորմիղը Նախիմով ծովակալի
հրամանատարութեան տակ ոչնչացրեց տաճկաց նաւա-
խումբը Սինոպի մօտ (1853)։ Անգլիան և Ֆրանսիան 1853
պատերազմ յայտարարեցին, բայց հակառակ Նիկոլայ կայ-
սեր սպասածին և մերձաւոր դրացիք ամենևին բարեկա-
մական դիրք չըբռնեցին։ Աւստրիան, որ նոր էր փըր-
կուել ռուսաց ձեռքով, պատրաստուեց «ապերախտու-
թեամբ աշխարհը զարմացնելու» [1]) և պահանջեց ռուս-
ներից, որ դանուբեան իշխանութիւններից դուրս գան։
Այս պարագաներում ռուսները չէին կարող շարունա-
կել արշաւանքը Դանուբի վրայ, վերցրին Սիլիստրիայի
պաշարումն և յետս նահանջեցին դէպի Նովօ-ռուսիա։
Դաշնակիցները մի առժամանակ շուարծէին, չը գի-
տէին թէ ինչ ձեռնարկեն, նրանք նաւախմբեր ուղար-
կեցին դէպի բոլոր ծովերն, որոնց ափերին ռուսական
երկրներ կային—Բալթեան, Սպիտակ, Սև և Բերինգեան
ծովերը, բայց միմիայն Սև ծովի արշաւախումբն ունե-
ցաւ լուրջ հետևանք։ Սևաստոպոլի մօտ յամառ կռիւ
սկսաւ, որը տևեց 11 ամիս և վերջացաւ այնու, որ

[1]) Իշխան Շվարցէնբերգի խօսքերն։

դաշնակիցները սոսկալի կորուստների գնով ձեռք բերին
աւերակների մի կոյտ։ Ֆրանսիացոց, անգլիացոց եւ
տաճկաց հետ կռուի ժամանակ միացան եւ սարդի-
նացիք—Սարդինիոյ նախարար կոմս Կաւուրն այս դէպ-
քում սաթրինիի մի անվտանգ խաղ տուաւ այն նպատա-
կով, որ յիշեցնէ Սարդինիոյ մասին և ձեռք բերէ նրա
համար արևմտեան պետութիւնների համակրութիւնը։
Աւստրիան երկար ժամանակ հեռու մնաց, բայց, երբ
ռուսաց անյաջողութիւնն որոշուեցաւ, նա զօրքերը
խաղացրեց դէպի ռուսաց սահմաններն և Ռուսիոյ հետ
սկսաւ սպառնական լեզուով խօսել։ Փարիզու խաղաղու-
1856 թիւնն 1856 թ., որ արդէն Ալէքսանդր Բ. կայսեր ժա-
մանակ կռուեցաւ, Ռուսիային թանգ չը նստաւ կալուա-
ծական կորստի տեսակէտով—նա զրկուեց միայն Բեսա-
րաբիոյ մի նեղ շերտից, Պրուտ գետի երկարութեամբ,
բայց ռուսաց խնամակալութիւնը դանուբեան իշխանու-
թեանց և Սերբիոյ վրայ փոխարինուեցաւ բոլոր մեծ
պետութեանց հովանաւորութեամբ։ Ռուսիային և Տաճ-
կաստանին արգելուեցաւ զինուորական նաւատորմիղներ
պահել Սև ծովի վրայ, իսկ Դարդանելն ու Բոսֆորը
փակուեցան բոլոր ազգաց զինուորական նաւերի համար։

Իտալական պատերազմ։

Խրիմու պատերազմն ու Փարիզու խաղաղութիւնը
Ֆրանսիային առաջնորդող պետութեան դիրք տուին,
այն ծրագրի մէջ, որ Նապոլէոն Գ. կազմել էր դեռ ևս
գահը չ՚ամբարձած, նա նշանակել էր, իբրև կայսրու-
թեան խնդիրներից մին, Եւրոպայի վերակազմութիւնն ազ-
գութեանց սկզբունքով, և կայսր դառնալով, նա ցան-
կութիւն ունէր նպաստելու մի քանի ազգայնական շար-
ժումների, որպէս զի մեծացնէ Ֆրանսիայի կալուած-
ներն ու ազդեցութիւնը։ Իւր հովանաւորութեան տակ
առնելով ազգայնական ձգտումները, կայսրն այդու թշ-
նամական յարաբերութեան մէջ էր մտնում Աւտրիոյ
հետ, որն այնքան յամառութեամբ ու յաջողութեամբ

յետ էր պահում այդ ձգտումներն Իտալիայում և Գեր-
մանիայում։ Իրողութիւնները 1848 և 1849 թուական- 1848—1849
ների շատ բան էին սովրեցրել իտալացոց. Նրանց լա-
ւագոյն մարդիկ հասկացան, որ ազատութեան մեծ գոր-
ծի համար քիչ է ոգևորութիւն ու համոզուած լինելը,
այլ պէտք են նիւթական միջոցներ ու համաձայնու-
թիւն։ Ամենից աւելի խելօք հանրապետականներն սկսան
մերձենալ սարդինեան միապետութեան, իսկ այդտեղ
գտնուեցաւ մի աչքի ընկնող պետական անձն, կոմս Կա-
ւուրը, որ կարողացաւ վստահութիւն ներշնչել իտա-
լացի ազատականներին և միևնոյն ժամանակ ճարտա-
րութեամբ օգտուեցաւ միջազգային քաղաքականութեան
պայմաններից։ Խրիմու պատերազմին միջամտելն արդէն
մի ճարպիկ միջոց էր, իսկ Փարիզի հաշտութիւնից յե-
տոյ Կաւուրը շուտով հասկացաւ, որ, նախ՝ գլխաւոր
թշնամին, Աւստրիան, կղզիացած է, շնորհիւ իւր բռ-
նած ընթացքին Օլմիւցում և Խրիմի պատերազմի ժա-
մանակ. երկրորդ՝ որ Նապոլէոն Գ. հակուած ունի
խառնուելու իտալական գործերին և աւստրիական
հեգեմոնեան Ապենինեան թերակղզում փոխարինելու
ֆրանսիականով։ Քննելով դրութիւնը, Կաւուրն սկսաւ
գործել համարձակօրէն. Աւստրիոյ վերաբերութեամբ
կռուի հրաւիրող լեզու սկսաւ բանեցնել և, ըստ երե-
ւութին, սկսաւ պատերազմի պատրաստուել, իսկ ֆրան-
սիացոց կայսեր հետ գաղտնի համաձայնութիւն կայա-
ցրեց, խոստանալով նրան Նիցցան և Սաւոյեան իբրև
վարձ հիւսիսային Իտալիոյ միացման համար։ Խնդիրը
1859 թ. ճգնաժամի հասաւ. Ֆրանց Յովսէփ կայսրը 1859
պահանջեց, որ սարդինիացիք դադրեցնեն սպառազինու-
թիւնը, և, մերժումն ստանալով, իւր բանակն ուղար-
կեց Պիէմոնտ։ Մինչ աւստրիական հրամանատար Գեու-
լայը դանդաղօրէն յառաջ էր դիմում, վրայ հասան ֆրան-
սիացիք նոյն իսկ Նապոլէոն Գ. կայսեր հրամանատա-

րութեամբ։ Մաջենտայի և Սոլֆերինոյի պարտութիւնները ստիպեցին աւստրիացոց ապաւինել ամրոցների հըզօր քառակուսու պաշտպանութեան, թերակղզու հիւսիս-արևելեան մասում [1])։ Սակայն նրանք դեռ ևս ընդունակ էին պատերազմը շարունակելու, իսկ Գերմանիայում սկսուեցաւ հասարակաց բուռն շարժումըն ընդդէմ ֆրանսիացոց, և նոյն իսկ Պրուսիան պատրաստ էր մասնակցելու վաղուցուան ազգային թըշնամու դէմ։ Այս սպառնական հանգամանքներն աչքի առաջ ունենալով՝ Նապոլէոն Գ. անհրաժեշտ համարեց ընդհատել իտալական պատերազմն և իւր զօրութիւնը կենդրոնացնել Հռենոսի վրայ։ Աւստրիացոց հետ նա խաղաղութիւն հաստատեց Ցիւրիխում, որի համաձայն Լոմբարդիան անցաւ Ֆրանսիային, իսկ սա յանձնեց այդ Սարդինիային։ Իտալիոյ համար մտադրութիւն կար գերմանականի նման տէրութիւնների մի դաշնակցութիւն հաստատել պապի նախագահութեամբ։

Իտալիոյ միութիւնը։ Ո՛չ Սարդինեան, ո՛չ էլ միջին ու հարաւային Իտալիոյ հայրենասէրները սակայն մտադիր չէին սահմանափակուիլ իրենց ձգուած ողորմութեան պատառով։ Ռոմանիայի [2]), Մոդենայի, Տոսկանայի բնակիչներն ապըստամբեցան իրենց տեղական իշխանութիւնների դէմ և յայտնեցին, որ միանում են Սարդինիայի հետ։ Հարաւում խնդիրը վճռեց ազգային հերոս Գարիբալդին։ Նա 1859 թ. պատերազմի ժամանակ մտաւ Վիկտոր Էմմանուէլի դրօշի տակ և կռւում էր աւստրիացոց դէմ ալպեան հրացանակիրների ազատակամ խմբով։ Ցիւրիխի խաղաղութիւնից յետոյ նա կրկին սկսաւ ինքնուրոյն կերպով գործել։ Հազար ազատակամներով ցամաք դուրս եկաւ Սկիլիայում եւ մի քանի շաբաթում քշեց կղզուց նէապոլսական Ֆրանցիսկ Բ. թագաւորի զօրքը։

[1]) Մանտուա, Վերոնա, Պեսքիերա և Լեննեանօ։

[2]) Նախկին էքզարքոսութիւնը. գլխաւոր քաղաքներն—Ռավեննա և Բոլոնիա։

Սիկիլիայից, չը նայելով Վիկտոր Էմմանուէլի արգելքին, նա անցաւ Ապենինեան թերակղզին, և նրա արշաւանքը նէապոլսական երկրումն ևս նոյնպիսի արագ յաջողութեամբ պսակուեցաւ, որովհետև ժողովուրդը ջերմապէս համակրում էր յանդուգն ազատարարին, իսկ նէապոլսական զօրքերն անսիրտ էին պաշտպանում Բուրբոնների գործը։ Գարիբալդու յաղթութիւնները սպառնում էին ստեղծել հարաւային-իտալական հասարակապետութիւն. Վիկտոր Էմմանուէլը վճռեց օգուտ քաղել դրանց հետևանքներից, բայց թոյլ չը տալ, որ հանրապետութիւն կազմուի։ Նրա զօրքերը մուտք գործեցին Նեապոլսական երկիրն, վերջնական կերպով նուաճեցին այն ու միացրին հիւսիսային նահանգներին։ Առաջին իտալական խորհրդարանը բացուեցաւ 1861 թուի 1861
սկզբում, իսկ այդ տարուան մարտ ամսում Վիկտոր Էմմանուէլն ընդունեց Իտալիոյ թագաւոր տիտղոսը։ Մեծ պետութիւնները, նոյն իսկ Ֆրանսիան, բարեցակամ աչքով չէին դիտում այս յեղաշրջումները, բայց Աւստրիոյ պարտութիւնից յետոյ չը կար մէկը, որ ուժով միջամտէ, և Իտալիան ստացաւ, վերջապէս, հնարաւորութիւն համախմբուելու և մի ամբողջութիւն կազմելու։ Նապոլէոն կայսեր ի հատուցում իւր օգնութեան տրուեցաւ Նիցցան եւ Սաւոյեան, Վենետկի նահանգը մնաց Աւստրիոյ ձեռքին, պապական երկիրը բաժանում էր հիւսիսային Իտալիան հարաւայինից, և ինքն Հռովմը դեռ ևս գտնուում էր հռովմէական քահանայապետի իշխանութեան տակ, որ վճռաբար դատապարտեց նոր ժամանակի ազատարարական գաղափարներն և նրանից ծնուած իտալական թագաւորութիւնը։ Հայրենասէրների նպատակը դեռ ևս բոլորովին չէր կատարուել, և փառաւոր Գարիբալդին, որ ատում էր դիւանագիտութիւնն և հաւատում էր ժողովրդական շարժումների անյաղթելի ուժին, երկու անգամ փորձ ա-

րաւ գրաւելու հռովմէական երկիրը։ Առաջին անգամ գարիբալդիականների յարձակումն յետ մղուեցաւ Վիկ-տոր Էմմանուէլի զօրքերի միջոցով (Ասպրամոնտէի մօտ
1862 1862), սա գիտէր, որ դեռ ևս ժամանակ չէր հռով-մէական խնդիրն յարուցանելու, երկրորդ անգամ — պա-պին նեցուկ եղան ֆրանսիացիք (Մենտանայի մօտ)։ Գործը գլուխ հանելու համար պէտք էր սպասել մի-ջազգային բարեյաջող դրութեան։

Ֆրանսիայի ներքին կեանքը։ Երկրորդ կայսրութիւնն, որ այսպիսի սխրագործու-թիւններով հռչակեց իրեն պատերազմի դաշտում, իւր ներքին գործունէութեամբ ներկայացնում էր մի տա-րօրինակ խառնուրդ յառաջադիմական գաղափարների և զինուորական բռնակալութեան։ Նրա պետական կազմն, առաջին հայեացքով, հիմնուած էր ամենառամկավա-րական սկզբունքների վրայ։ Կայսրն իշխանութիւնն ստացել էր ընդհանուր ժողովրդական ձայնտուութեամբ (պլէբեսցիտ). տէրութեան կառավարութեան մէջ մաս-նակից էին պետական խորհուրդը, ծերակոյտն և օրէնս-դրական ժողովը. սրա պատգամաւորներն ընտրւում էին ընդհանուր ձայնտուութեամբ և առանց որ և է ընտրական վարկի, բայց միջոցներ էին ձեռք առնուած, որ այդ հաստատութիւնները չը խանգարեն ամենազօր կայսեր։ Օրէնքների մշակումն ամբողջապէս պատկա-նում էր պետական խորհրդին, օրէնսդրական ժողո-վըն իւր սեփական ձեռներէցութեամբ կարող չէր ոչինչ առաջարկել, այլ յամենայն դէպս նրա վրայ հսկողու-թիւնն յանձնուած էր ծերակոյտին, որ բացառապէս բաղկացած էր զօրավարներից, եպիսկոպոսներից և բար-ձըր պաշտօնեաներից, որոնք նշանակւում էին կայս-րից։ Մամուլը գտնւում էր խիստ գրաքննութեան տակ, ամբողջ հասարակութիւնը — պաշտօնէութեան (բիւրօկրատիա) խնամակալութեան տակ, որ դիմացել էր բոլոր յեղաշրջումներին Ֆրանսիայում, հին վիճակից

անցել էր սարսափականներին, սարսափականներից վե-րատեսչութեան և առաջին կայսրութեան, ապա վերա-հաստատման, յուլիսեան միապետութեան և, վերջապէս, երկրորդ կայսրութեան, որին նա ծառայում էր առան-ձին ջերմեռանդութեամբ։ Անհաշտ ու անհանգիստ մար-դոց հետ ոստիկանութիւնը վարւում էր առանց ձևա-կանութիւնների — նրանց բանդ էին դնում առանց դա-տաստանի, աքսորում էին Կայեննա և Ալժիր։ Իտալացի Օրսինու Նապոլէոն Գ-ի կեանքի դէմ արած սպանու-թեան փորձից յետոյ պետական ոստիկանութեան միջոց-ներն աւելի ևս զօրացրին և պաշտօնական սրբագոր-ծումն ստացան «անվտանգութեան» օրէնքի մէջ։ Այս հանգամանքներում կայսերական կառավարութեան դէմ գործելը շատ վտանգաւոր էր և, ըստ երևութին, ան-յոյս։ Այսուամենայնիւ օրէնսդրական ժողովում կար ընդդիմադիր կուսակցութիւն, որ դատապարտում էր կառավարութեան քաղաքականութիւնը, և տարէցտարի այդ ընդդիմադիր կուսակցութիւնն աւելի զօրանում էր։ Քառասնական թուականների ազատականների հինա-ւուրց զինուոր Տիերը, ճարտարախօս Ժիւլ Ֆաւրը, 60-ա-կան թուականների վերջին արմատական Գամբետտան, արտասանում էին ջերմ ճառեր, որոնք արձագանգ էին գտնում ժողովրդի մէջ, բայց այդ ճառերից մինչև գործ-նական մրցումը դեռ ևս շատ հեռու էր։

Կայսրը Ֆրանսիան ղեկավարելու համար չէր բա-ւականանում միայն ոստիկանական միջոցներով։ Նա շատ բան արաւ նիւթական բարեկեցութիւնը բարձրա-ցնելու համար։ Արդէն իսկ հաստատուն կարգի վերա-կանգնումը հնարաւոր կացոյց ուղղուելու և բարգաւա-ճելու արդիւնաբերութեան և առևտրի մէջ։ Անգլիոյ, Գերմանիոյ և այլ երկրների հետ մի շարք առևտրական դաշնադրութիւններ կապելով ֆրանսիական արդիւնա-բերութիւնների համար ընդարձակ հրապարակ բացուե-

ցաւ։ Գաղթավայրերի առեւտուրը զօրացնելու համար
Անգլիոյի հետ դաշնակցելով պատերազմի միջոցով ստի-
պեց Չինացոց բանալ մի քանի նաւահանգիստներ եւ-
1858 րոպական վաճառականների համար (1858), տիրեց Կո-
խինխինային և եռանդով աջակցեց Սուէզի ջրանցքի
փորման։ Ֆրանսիայի ներսն առանձին ուշք դարձրուե-
ցաւ երկաթուղների շինութեան վրայ։ Հետեւանքները
փայլուն էին։ Ֆրանսիայի առեւտրական գործառնու-
թիւնների քանակը կրկնապատկուեցաւ 10 տարուց ա-
ւելի քիչ ժամանակի ընթացքում։ Բարեկեցութեան
բարձրանալն ազդեց և գործաւոր դասակարգի դրու-
թեան վրայ, որը, բացի դրանից, լաւ փաստակներ էր
գտնում, շնորհիւ հասարակական շինութիւններին, որ
ձեռնարկում էր կայսերական կառավարութիւնը։ Հոգա-
լով նիւթական օգուտների մասին, կայսրը չէր մոռա-
նում և արտաքին շուքը։ Համաշխարհային ցուցահան-
1867 դէսը 1867 թուին ցոյց տուաւ օտարներին Ֆրանսիական
արդիւնաբերութիւնն ու գեղարուստն իւր բոլոր փայ-
լով։ Փարիզը զարդարուեցաւ նոր փողոցներով, ծառու-
ղիներով, հոյակապ շէնքերով։ Հասարակութեան մտա-
ւոր կեանքը շատ հեռու էր այսպիսի փառաւոր տեսա-
րան ներկայացնելուց, Ֆրանսիացիք կրկին դարձան Եւ-
րոպայի օրէնսդիրներն ճաշակի, տարազի և շռայլու-
թեան խնդիրներում, բայց հասարակութեան մէջ նշմա-
րուում էր բարձրագոյն շահերի թուլութիւն եւ բա-
րոյական անկումն. մարդկային գուծունէութեան գլխա-
ւոր զսպանակը դարձաւ շահի և զուարճութեան յետեւեց
ընկնելն. քաղաքացիական իդէալների համար ընդար-
ձակութիւն չը կար, և կենսական բարիքների—խօսքիս
ամենաստոր նշանակութեամբ—յետեւեց տենդային եռան-
դով վազելով, ոմանք բորսային խաղերի և անպատիւ
շահխնդրութեան էին դիմում, այլք գանձարանն էին
կողոպտում կամ կաշառակերութեամբ էին պարապում։

Ֆրանսիայի այս ներքին թուլութիւնը կարող էր Պրուսիա
նրա համար արտաքին վտանգի աղբիւր լինել, որովհե- Ընդհարումն
տեւ նրա կողքին զարգանում էր և ամրապնդւում մի
նոր զօրաւոր պետութիւն—վերանորոգուած Պրուսիան։
Ինչպէս իւր ժամանակ պարտութիւնն ու տելզիտեան
խաղաղութիւնն, այնպէս էլ այժմ նուաստացումը Վար-
շաւայում և Օլմիւցում, ստիպեցին պրուսական պետա-
կան անձանց ույժերը ժողովել, ուղղել սխալներն և
պատրաստուել նոր կռուի։ Վարչութիւնը 1857 թուին
անվճռական Ֆրիդրիխ Վիլհելմ Դ-ից անցաւ նրա եղ-
բօրը Վիլհելմին, մի զինուորական կրթութեան և հաս-
տատուն կամքի տէր մարդու [1]։ Նրա և իւր մերձա-
ւոր օգնականների—զինուորական նախարար Ռօօնի և
սպայապետ Մոլտքէի կարծիքով—Պրուսիոյ եւ Գերմա-
նիոյ ապագան ամենից առաջ կախուած էր պատե-
րազմական պատրաստականութիւնից և պրուսական
զօրքի թուից, և նրանք սկսան ընդարձակ զինուորա-
կան բարենորոգումն, որ պէտք է գործող բանակի կազ-
մութիւնը դրեթէ կրկնապատկէր [2]։ Բայց այդ առթիւ
նրանք հանդիպեցան պրուսական պատգամաւորների
ժողովի լուրջ դիմադրութեան։ Նրա մէջ մեծամասնու-
թիւնը բաղկացած էր ազատամիտներից կամ յառաջա-
դիմականներից, որոնք շատ աւելի քիչ չափով, քան
թէ կառավարութեան ներկայացուցիչները, գտնւում
էին Օլմիւցի տպաւորութեան տակ, առաւելապէս մտա-
ծում էին քաղաքացիական ազատութեան զարգացման
մասին, վախենում էին զինուորական ոգու զօրանա-
լուց և չէին հասկանում, թէ նուիրական երազի—գեր-
մանական միութեան—իրագործումն ինչքան կախուած
է սպառազինուած կռուից։ Նրանք քննադատում էին

[1]) Ֆրիդրիխ Վիլհելմ Դ. մեռաւ 1861 թուին, և նրա եղբայրը թագաւորեց Վիլհելմ Ա. անուամբ։

[2]) Փոխանակ 40,000 մարդու սկսան ամեն տարի 60,0000 մարդ զէնքի կոչել, եւ, բացի դրանից, զօրացրին գործող բանակի պահեստը։

կառավարութեան զինուորական ծրագիրներն և մերժում էին դրամը, որ անհրաժեշտ էր դրանց իրագործման համար։ Թագաւորը սակայն տեղի չը տուաւ։ Նա նախարարութեան նախագահ կարգեց «իւնքեր»-ների այսինքն՝ ազնուականների կուսակցութեան անդամներից մէկին, Բիսմարկին, և սա յանդուգն կերպով կռուի դուրս եկաւ մեծամասնութեան դէմ—պատգամաւորների ժողովում, մերկացնելով պատգամաւորների տգիտութիւը միջազգային ու զինուորական խնդիրներում, ցոյց տալով, որ «ժամանակի մեծ խնդիրները» պիտի լուծուին ոչ թէ ճառերով ու քուէարկութիւններով, այլ «արիւնով և երկաթով»։ Ընդհարումն (կոնֆլիկտ) այն աստիճանի սուր կերպարանք առաւ, որ խորհրդարանն յընթացս մի քանի տարուան մերժեց նախահաշիւն հաստատելու։ Կառավարութիւնն այսուամենայնիւ ժողովումէր հարկերն ու շարունակումէր իւր զինուորական վերակազմութիւնը։ Տարէ ցտարի սակայն ընդհարումն աւելի վտանգաւոր էր դառնում, և լարուած ներքին դրութիւնը ստիպում էր Բիսմարկին ինչքան կարելի է շուտով գործ դնել զինուորական ոյժը, որի մասին էր խսկ վէճը, և իրապէս ցոյց տալ, որ միջազգային դրութիւնը արտասովոր զինուորական ջանքեր էր պահանջում։

Դանիական պատերազմը։ 1863

Վճռական գործողութիւն սկսելու համար յարմար առիթ ներկայացաւ 1863 թուին։ Մեռաւ դանիական թագաւոր Ֆրիդրիխ Է., և նրա մահուամբ ընդհատուեցաւ Օլդենբուրգեան տան թագաւորութիւնը Դանիմարքայում։ Դանիական թագն անցաւ նրա կանացի շառաւղի մերձաւորագոյն ազգականին, Քրիստիան Թ-ին, բայց Հոլշտայնի դքսութիւնը, որ գտնուում էր գերմանական դաշնակցութեան մէջ, պէտք է, ժառանգութեան հին կարգով, հասնէր գերմանական իշխաններից մէկին, աւգուստենբուրգեան դքսին, արական

շառաւղի մերձաւորագոյն ներկայացուցչին։ Դրացի Շլեզուիգի դքսութիւնը ԺԱ.. դարուց պատկանում էր Դանեմարքային, բայց նրա բնակիչների մէջ կային շատ գերմանացիք, և Գերմանիայում ցանկանում էին Դա Հոլշտայնի հետ միասին բաժանել Դանիմարքայից։ Մեծ պետութիւնները Լոնդոնի դեսպանաժողովում (1852 թ.) յայտարարել էին, որ իրենք դանիական տիրապետութեան կողմն են, և այդ վճռին միացել էին Աւստրիան և Պրուսիան. բայց Բիսմարկն համոզուած էր, որ մեծ պետութիւններից և ոչ մէկը Դանիմարքային չի պաշտպանել ուժով, և խօսքը մէկ արաւ աւստրիական կառավարութեան հետ պաշտպանելու աւգուստենբուրգեան դքսի իրաւունքները։ Լոնդոնի դաշնագրութեան խախտման համար պատրուակ գտնուեցաւ—այն քանի մի ձեռնարկութեանց մէջ, որ դանիացիք Շլեզվեգումն սկսել էին, և Աւստրիայի ու Պրուսիայի զօրքերը մտան դքսութեան երկիրը։ Այս առթիւ բացուեցաւ դիւանագիտական մի ջերմ թղթակցութիւն, իսկ մինչ այդ, պրուսիացիք ու աւստրիացիք յետ մղեցին դանիացոց իրենց առաջին պաշտպանողական գծից և յարձակմամբ առին երկրորդի ամրացրած պատուարներն [1]) (1864)։ Դանիմարքան ոյժ չ'ունէր կռուելու դաշնակիցների դէմ, և շուտով ստիպուեցաւ յետ կենալու իւր իրաւունքներից այդ դքսութիւնների վրայ։ 1852 1864

Դանիացոց դէմ արշաւանքը սակայն միայն նախաբան էր շատ աւելի լուրջ իրողութիւնների։ Տիրելով դքսութիւններին, դաշնակից պետութիւնները պէտքէ որոշէին դրանց վիճակը։ Աւստրիացիք պատրաստ էին աւգուստենբուրգեան դքսին տալու, բայց Պրուսիան մոռացաւ նրա իրաւունքներն, հէնց այն ժամանակ, երբ դա իւր ծառայութիւնը մատոյց վերջացրեց Դանիմարքայի

Աւստրիական պատերազմ։

[1]) Դիւպպելեան և ալզենեան ամրոցները։

հետ վիճելու համար. պրուսական կառավարութիւնը վճռեց իւր կալուածներին միացնել, գոնէ, Շլեզուիգը, իսկ իւր այս յափշտակութեան մի տեսակ բարեձեւութիւն տալու համար, խնդիր յարոյց Գերմանիոյ դաշնակցական կազմութեան բարեկարգութեան մասին և Շլեզուիգի տիրապետութեան տուաւ հայրենասիրական գործի կերպարանք, իբրև հզօր Գերմանիոյ առաջին քայլը դէպի գիտակցութիւն։ Բիսմարկը ձեռք բերաւ Աւստրիոյ նախնի թշնամի Իտալիոյ դաշնակցութիւնը. Ռուսիոյ շնորհը ձեռք ձգեց նա այն եռանդուն աջակցութեամբ, որ ցոյց տուաւ նրան 1863 թուին լեհական ապստամբութիւնը ճնշելու ժամանակ. վտանգաւոր արևմտեան դրացուն, Նապոլէոն Գ.-ին յուսադրեց, որ կարող է Հռենոսի ձախ ափին երկրներ ձեռք բերել. բայց այս դէպքում հնար գտաւ որոշ խոստումներից փախուստ տալու։ Ապահովելով իրեն մի առ ժամանակ գործողութեան ազատութեամբ. նա ընթացք տուաւ զինուորական ուժին։ Պրուսական մի զօրագունդ գրաւեց Հոլշտայնը, պրուսական լիազօրը Ֆրանկֆուրտում պահանջեց գերմանական դաշնակցութեան նոր կազմակերպութիւն, հանելով նրա միջից Աւստրիային
1866 (1866)։ Աւստրիոյ կողմը բռնեց ներկայ դաշնակցութիւնը. Հաննովերը, Սաքսոնիան, Բաւարիան և այլ երկրորդական տէրութիւնները զինուեցան Պրուսիոյ ընդդէմ։ Բայց նրանց գնդերին շատ ժամանակ էր պէտք միանալու և գործողութեան յատակագիծ մշակելու, իսկ պրուսացիք չը տուին նրանց այդ ժամանակը, մի քանի շաբաթուան մէջ պրուսական այն բանակը, որ ուղարկուած էր երկրորդական տէրութիւնների դէմ, բաժանեց ու յաղթեց նրանց ուժերին։ Գործի վճիռն այս ընդհարումներից չէր կախուած, այլ Բոհեմիայում տեղի ունեցող իրողութիւններից, ուր դիմեցին պրուսիացոց գլխաւոր ուժերն և ուր նրանց հանդիպեցին աւս-

տրիացիք սաքսոնացոց հետ միասին։ Պրուսական զօրագնդերը Բոհեմիան շրջապատող լեռներից անցնելով՝ առանձին առանձին էին դուրս գալիս, Նապոլէոն Ա.-ի պէս մի ձեռներից զօրագլուխ լաւ առիթ կ'ունենար նրանց մի առ մի ջարդելու, բայց աւստրիական գլխաւոր հրամանատար Բենեդիկը ձեռքից թողեց այդ առիթը և, ընդհակառակն, հնար տուաւ պրուսացոց, գերակշռող ուժով յաղթելու իւր յառաջապահ գնդերին։ Մի ամբողջ շարք անյաջողութիւններ մասամբ բացադրուումեն պրուսացոց կատարելագործուած սպառազինութեամբ—նրանք առաջին անգամ ներմուծեցին ասեղնաւոր եւ լցարանաւոր հրացանը—փոխանակ լուցկաւորների (պիստոնաւոր) և երեք անգամ աւելի արագ էին կրակում, քան աւստրիացիք։ Աւստրիական բանակը, վերջապէս, կենդրոնացաւ Կէօնիգգրեցի (այլ անուամբ—Սադովայի) մօտ։ Ֆրիդրիխ Կարլ արքայազնի պրուսական բանակը յարձակուեց թշնամու վրայ չը նայելով նրա աւելի բազմաթիւ լինելուն և ամուր դիրքին, ճակատամարտի վիճակն այնու վճռուեցաւ, որ երեկոյեան դէմ աւստրիական թևի վրայ յարձակուեցաւ պրուսական երկրորդ բանակը թագաժառանգ Ֆրիդրիխի առաջնորդութեամբ։ Բենեդիկի պարտութիւնը կատարեալ էր. նա կորցրեց 40,000 մարդ, որոնք կամ սպանուած կամ վիրաւորուած կամ գերի էին ընկած և կամ անյայտացել էին։ Այս խորտակումից յետոյ նշանակութիւն չ'ունէին աւստրիացոց յաջողութիւններն Ապենինեան թերակղզում, ուր արքիդուքս Ալբրեխտը յաղթեց իտալացոց Կուստոցցայի մօտ, իսկ ծովակալ Տեգետհոֆը ջարդեց իտալական նաւատորմիղը Լիսսայի մօտ։ Աւստրիան Կէօնիգգրէցից յետոյ անկարող էր այլ ևս դէմ դնել պրուսիացոց, որոնք սակայն արևմտեան դրացու վերաբերութեամբ պէտք է զգոյշ լինէին։ Նապոլէոն կայսրն ամենևին չէր սպասում պրուսացոց զէնքի

այսպիսի արագ և վճռական յաջողութեանց և վերին աստիճան դժգոհ էր դրանից: Նա յոյս ունէր գերակշռող զօրութեամբ հանդէս դուրս գալու և գերմանական վէճը վճռելու իւր կամեցածին պէս, երբ հակառակորդները միմեանց թուլացրած կը լինէին երկար պատերազմով. իսկ արդ, ընդհակառակն, այնպէս էր դուրս գալիս, որ գերմանական գործերն էլ ճիշդ այնպես էին խուսափում նրա ձեռքից, ինչպես իր ժամանակին սահել, խուսափել էին իտալականները: Ֆրանսիան դեռ պատրաստ չէր միջամտելու, և Բիսմարկն ստիպուած էր օգուտ քաղել դրանից, որ վերջացնէ պատերազմը Աւստրիոյ հետ: Համեմատաբար թեթև հաշտութեան պայմաններ դրուեցան Աւստրիային. նա պահպանեց իւր բոլոր երկրները բացի Վենետկեան նահանգից, որ տրուեցաւ Նապոլէոն Գ-ին, իսկ սա յանձնեց իտալացոց: Բայց գերմանական հին դաշնակցութիւնն հրատարակուեցաւ լուծուած, Աւստրիոյ և Գերմանիոյ կապը խզուեցաւ, և կազմուեցաւ նոր «Հիւսիսային-գերմանական» դաշնակցութիւն, որին մասնակցում էին Մայն գետի գծից դէպի հիւսիս գտնուող տէրութիւնները, ընդամէնը քսան եւ երկու տէրութիւն, Պրուսիայի գերիշխանութեան տակ. սա իւր տիրապետութիւնները բաւական ընդարձակեց Գերմանիայում միացնելով իւր հետ Շլեզուիգը, Հոլշտայնը, Հաննովերը, Հեսսին-Կասսէլն և այլն: Հարաւային գերմանական տէրութիւնները մնացին անկախ և առանձնացած, բայց դրանցից նշանաւորները Պրուսիոյ հետ դաշինք դրին, որի համաձայն պատերազմի դիպուածում սրանք պարտական էին իրենց զօրքերը Պրուսիոյ տրամադրութեան յանձնելու: Մաքսերի վերաբերութեամբ բոլոր գերմանական տէրութիւնները կազմում էին մի դաշնակցութիւն, և մաքսային գործերը վճռելու համար հիւսիսային-գերմանական աւագաժողովին պատգամաւորներ էին աւելանում հարաւային Գերմանիայից:

Աւստրիոյ համար 1866 թիւն եղաւ նոյնպէս նոր դարագլուխ: Աւստրիական կառավարութիւնը 1860 թուից հրաժարուեցաւ բացարձակ միապետութիւնից և սկսաւ առ սակաւ սակաւ սահմանադրականութեան անցնել: Բայց նրա պետական անձանց չէր յաջողում այն դժուարութիւններից մի գոհացնող ելք գտնել, որոնք ծագում էին բոլոր ցեղերի ու նահանգների դէպի անկախութիւն ունեցած ձգտումից: Մի քանի տարուան մէջ Աւստրիայում փորձեցին ամենատեսակ եղանակներ—և կենդրոնացած պաշտօնէավարութիւն, մեղմացրած «անուանի մարդկանց» ժողովով, և ընդհանուր աւստրիական սահմանադրութիւն, և դաշնակցականութիւն, բայց բոլորն էլ անյաջող: 1866 թուի պարտութիւնից յետոյ կանգ առան երկուորեան վրայ. միապետութիւնը բաժանուեցաւ երկու մասի—աւստրէյտանեան, գերմանական երկրներից. Բոհեմիայից, Մորաւիայից և Գալիցիայից, և անդրլէյտանեան՝ Հունգարիայից, Տրանսիլուանիայից, Խրուատիայից և Դալմատիայից: Մասերից իւրաքանչիւրըն ունի իւր առանձին կառավարութիւնն, յատուկ ազգային ժողովը, յատուկ նախարարութիւնը, բայց արտաքին քաղաքականութիւն վարելու, զինուորական կազմակերպութեան և ելևմտական միջոցների համար, ինչքան այդ պահանջում են զինուորական ծախքերը, գումարուում են երկու խորհրդարանների պատգամաւորութիւններն ընդհանուր խորհրդածութեան համար: Առանձին նահանգներն ստացան բացի դրանից, նշանաւոր ինքնավարութիւն, բայց որպէս զի զանազանսեռ տէրութիւնը չը լուծուի, քաղաքական գերակշռութիւն ստացան աւստրէյտանեան բաժնում գերմանացիք, անդրլէյտանիանում—մաճառները: Աւստրիական ժողովրդներից ամենից բազմաթիւն—սլաւները—դրուած էին հպատակութեան վիճակի մէջ. և սլաւ ժողովրդներից միայն մէկը—լեհերն են միայն գոհ այս

Աւստրիայի վերակազմութիւնը. 1866 1860

տարօրինակ վիճակից, որովհետև շնորհիւ դրա ապահովուած է լեհերի իշխանութիւնը Գալիցիայում ռուսինների վրայ։ Չեխերը, մորաւացիք, սլովաքները, սլովենցիք, խռուատները, սերբերն, ռուսները—բոլորն էլ քիչ թէ շատ վիրաւորուած են գերմանացոց և մաճառների գերիշխանութեամբ և իրենց ուժը ներածին չափ պաշտպանում են իրենց ազգային շահերն և իրաւունքները, բայց նրանց մէջ միաբանութիւն չը կայ. նրանք բաժին բաժին են եղած իրենց լեզուով, պատմութեամբ, քաղաքակրթութեան աստիճանով, աշխարհագրական դիրքով, տնտեսական պայմաններով և նրանց բաժան բաժան լինելուն մէջ է գերմանացոց եւ մաճառների ոյժը:

Ֆրանսիայի և Պրուսիայի ընդհարումը: Հիւսիսային-գերմանական հզօր դաշնակցութեան ստեղծումը շատ անհաճոյ էր Նապոլէոն Գ-ին: Մինչդեռ նա Ֆրանսիայի միջոցները զուր վատնումէր և նուազեցնում էր նրա հեղինակութիւնն անյաջող ձեռնարկութիւնների մէջ—փորձ արաւ պաշտպան կանգնելու ապստամբ լեհացոց, բայց Ռուսիային անօգուտ սպառնալիքներ անելուց առաջ չը գնաց, արշաւանք ուղարկեց Մեքսիկա, որ այնտեղ կայսր դարձնէ աւստրիական արքիդուքս Մաքսիմիլեանին և ստիպուեցաւ զօրքերը յետ կանչելու Միացեալ Նահանգների հետ պատերազմի չը բռնուելու համար,—իւր կողքին ծնեց մի ահեղ զօրութիւն, որ ընդունակ էր խոչընդոտ լինելու Ֆրանսիացոց ամէն մի փորձին գերմանական երկրները գրաւելու։ Ներսում զօրանում էր ընդդիմադիր կուսակցութիւնն, և կայսրը մինչև իսկ անհրաժեշտ համարեց հասարակութիւնը խաղաղացնելու համար ծերակուտին և օրէնսդիր մարմնին, սահմանադրական ժողովներին զանազան իրաւունքներ շնորհելու և նախարարութիւն ընտրելու օրէնսդիր ժողովի մեծամասնութիւնից (Օլլիվիէի նախարարութիւնը)։ Թէպէտև

զինուորական գործին հմուտները պնդում էին, որ ֆրանսիական կայսրութեան մէջ շատ բան անապահով է, կայսրն ու իւր մերձաւորները վստահ էին, որ գերմանական երիտասարդ դաշնակցութիւնը չէր կարող դիմանալ ֆրանսիական յաղթական կայսրութեան, և պատրուակ էին որոնում, պատերազմը սկսելու համար:

1870 Պատրուակ երևան եկաւ 1870 թուին։ Սպանիացիք վռընդեցին իրենց Իզաբելլա թագուհուն և վճռեցին թագն առաջարկել պրուսական թագաւորի հեռաւոր ազգական, իշխան Լէոպոլդ Հոհենցոլեռնին։ Սա սկիզբն համաձայնեց, բայց Ֆրանսիական կառավարութիւնն ամենաեռանդուն կերպով դէմ կացաւ այս «Կարլոս Ե-ի կայսրութեան վերականգնման փորձին»։ Այն ժամանակ իշխան Լէօպոլդն հրաժարուեցաւ թագից, բայց Ֆրանսիական դեսպանը Բեռլինի արքունիքում Վիլհէլմ թագաւորից պահանջեց, որ նա հանդիսաւոր կերպով յայտարարէ, որ այսուհետև էլ երբէք թոյլ չի տալ այդ թեկնածութիւնը։ Թագաւորն հրաժարուեցաւ այդ վիրաւորական պահանջը կատարելուց, որ նա պատճառանք էր համարում։ Այս մերժման անմիջապէս հետևեց դեսպանի յետս կոչումն և պատերազմական գործողութիւնների սկիզբը։

1870—1871 թ. պատերազմը: Գերմանական տէրութիւնները հնար ստացան կենդրոնացնելու իրենց բոլոր ուժերն ընդդէմ Ֆրանսիայի, շնորհիւ այն բարեկամական դիրքին, որ Ռուսիան բռնել էր նրանց վերաբերութեամբ. սա ոչ միայն թոյլ տուաւ նրանց արևելեան նահանգներն առանց պաշտպանութեան թողնելու, բայց և կաշկանդեց Աւստրիային, որ շատ տրամադիր էր իւր քիչ առաջուան հակառակորդին Կէօնիգգգրեցի փոխարէնն հատուցանելու։ Պրուսական գլխաւոր զինուորական դիւանատունը Մոլտքէ ստալապետի առաջնորդութեամբ ճարտարութեամբ նախապատրաստուել էր պատերազմի համար, և օգտ-

տոսի սկզբին պատերազմի յայտարարութիւնից երեք շաբաթ յետոյ, երեք աՀագին բանակներ, ընդամենն 500,000 մարդուց բաղկացած կազմուեցան և սաՀմանագլուխը տեղափոխուեցան։ Ֆրանսիական կառավարութիւնը, չը նայելով իւր մարտաՀրաւէրին, անպատրաստ էր։ Փութով ժողովեցին Էլզասումն ու Լոթրինգիայում եօթն զօրագնդեր, շուրջ 250,000 մարդուց բաղկացած, բայց բոլոր գնդերի զինուորները դեռ Համախմբուած չէին, բանակի աղխն ողբալի վիճակի մէջ էր, պատերազմի Համար ոչ մի որոշ յատակագիծ չըկար։ Փոխանակ յարձակուելու, Ֆրանսիացիք ստիպուած եղան պաշտպանուել ընդդէմ գերակշիռ ուժերի ու ճարտար զօրավարների։ Հարաւային գերմանական բանակը պրուսական թագաժառանգի Հրամանատարութեան ներքոյ ջախջախեց Մակ-ՄաՀոնի զօրագունդն, չը նայելով նրա դիւցազնական դիմադրութեան [1]։ Պրուսացիք Ֆրիդրիխ Կարլ իշխանի Հրամանատարութեան տակ երեք ճակատամարտից յետոյ Բազէնի բանակի շուրջը պատեցին, նրան դէպի Մեց քշեցին և փակեցին այդ ամրոցում [2]։ Մինչ այդ Մակ-ՄաՀոնը ժողովեց նոր բանակ այն զօրքերից, որոնք առաջին կարգին չէին Հասել, և դրանով դիմեց Բազէնին ազատելու. այս բանակին միացաւ և ինքը կայսրը։ ՆաՀապարՀ ընտրեցին Հիւսիսային սաՀմանի երկարութեամբ, բայց Մոլտքէն ժամանակին իմացաւ այդ շարժման մասին և ուղղեց նրա դէմ մի ճնշիչ բազմութիւն։ Սեդանի մօտ, Բելգիական սաՀմանին մերձ, գերմանական զօրքերն ամեն կողմից շրջապատեցին Մակ-ՄաՀոնի բանակը. և պատերազմից վերջը, որ ամբողջ օրը տեւեց, Ֆրանսիական բանակն ստիպուեցաւ անձնատուր լինելու (2 սեպտեմբերի). 80,000 մարդուց աւելի զէնքերը վայր դրին, դրանց մէջ և Նապոլէոն Գ.։

[1] Վայսենբուրգ և Վէօրթ։

[2] Գլխաւորները—Ռոզենվիլի և Գրավելոտտի մօտ։

Այս սոսկալի լուրը յեղաշրջումն յառաջ բերաւ Փարիզում. կայսրուՀին փախաւ. Հանրապետութիւն Հրատարակուեցաւ. դիմադրութեան գլխաւոր կազմակերպողն եղաւ դիմադիր կուսակցութեան ճարտարախօս առաջնորդներից մին, փաստաբան Գամբետտան։ Բայց դըժուարին էր գործերն ուղղելը բոլոր կանոնաւոր զօրքի գրեթէ ջնջումից յետոյ։ Բազէնը, փակուած Մեցում, ունէր դեռ ևս իւր Հրամանի տակ ընտիր գնդեր, բայց նա չը կարողացաւ, կամ չուզեց օգուտ քաղել դրանից, ինչպէս պէտք էր, ոչ մի լուրջ փորձ չարաւ պաշարողների շարքերը պատռելու և գործն Հասցրեց մինչև 175,000 մարդուց բաղկացած բանակի ամօթալի կերպով անձնատուր լինելուն։ Այս անձնատուր լինելն իսկապէս վճռեց և Փարիզի ճակատագիրն, որ չորս ամսից աւել պաշարուած էր գերմանական գլխաւոր բանակից—սեպտեմբերից մինչև յունուարի վերջը։ Ամեն կողմերում սկսան Ֆրանսիական մեծ բանակներ կազմուել։ Լուարա, Սոմմ և Ռոնա գետերի վրայ նրանք քաջութեամբ պատերազմ մղեցին գերմանական գնդերի դէմ, որոնք պաշտպանումէին Փարիզը պաշարող բանակը. բայց չընայելով իրենց քաջութեան և անձնազոՀութեան այդ բանակների նորակոչ զինուորները կարող չէին դիմանալ գերմանական զինուորների դէմ կռուելու. քիչ անգամ յաջողում էր գերմանական մէկ կամ միւս գունդն յետ մղել, բայց վերջ ի վերջոյ բանն աւարտւում էր Ֆրանսիացոց նորանոր պարտութիւններով։ Փարիզի բերդապաՀ գունդն ևս բաղկացած էր երիտասարդ զինուորներից, և նրա Հրամանատարների մէջ չը կային աչքի ընկնող զօրավարներ. բայց թէ զինուորներն ու թէ քաղաքացիք արին, ինչ կարող էին, և Փարիզն անձնատուր լինելու ստիպեց ոչ թէ անզուլթ ումբակոծութիւնն, այլ ուտելիքի պակասութիւնը։ Քաղաքն անձնատուր եղաւ, երբ Հաց էր մնացել

ընդամէնը միայն 8 և ձիու միս 14 օրուան։ Փարիզու անկումից յետոյ ֆրանսիացիք ստիպուեցան խաղաղութեան դաշը կապել, որ տեղի ունեցաւ Ֆրանկֆուրտում հետևեալ պայմաններով. Ֆրանսիան զիջանում է Գերմանիային Էլզասն ու արևելեան Լոթրինգեան Մեց ամրոցով և վճարում է պատերազմական ծախք հինգ միլլիարդ ֆրանկ։

Գերմանական կայսրութիւն. Գերմանացոց համար պատերազմիս գլխաւոր արդիւնքն այս տիրապետութիւնները չէին, այլ այն նպատակին հասնելը, որին ձգտում էին նրանք ամբողջ ԺԹ. դարու ընթացքում—այն է՝ *Գերմանիոյ միութեան*: Դեռ ևս Փարիզի պաշարման ժամանակ Վիլհէլմ թագաւորը կայսր հռչակուեցաւ Վերսալլի պալատի դահլիճներից մէկի մէջ, որ կառուցել էր Լուդովիկոս ԺԴ. Ֆրանսիայի մեծութեան և հզօրութեան ու Գերմանիոյ

1870—71 ստորացման շրջանում։ Այս 1870—71 թուականների յաղթութիւնները ստիպեցին գերմանական մանր իշխաններին առանձնականութեան ձգտումները խոնարհեցնել։ Հիւսիսային-գերմանական դաշնակցութեան մէջ նոր կայսրութիւնն ունէր արդէն պատրաստի հիմունք իւր նոր պետական կարգի համար. իւրաքանչիւր տէրութիւն վարում է առանձին իւր ներքին գործերի մեծագոյն մասը, իսկ ընդհանուր գործերի ղեկավարութիւնը յանձնուած է կայսեր, դաշնակցական խորհրդին, որ բաղկացած է տէրութիւնների ներկայացուցիչներից, և կայսերական պատգամաւորների ժողովին (ռայխստագ), որի անդամներն ընտրուում էին ընդհանուր ձայնտուութեամբ։ Այս կարգը ծագեցաւ ո՛չ միայն շնորհիւ հանգամանքների բախտաւոր բարդութեան և յաղթական տարիների բարձր ոգևորութեան. այլ *նրա գլխաւոր նեցուկն էր վաղուց հետէ հասարակութեան մէջ պատրաստուած ազգային միութեան հասուն գիտակցութիւնը*։

Ֆրանսիական հանրապետութիւն. Ֆրանսիայի վերակազմութիւնը բոլորովին այլ տըխուր հանգամանքներում տեղի ունեցաւ։ Պարտութիւններից ու կորուստներից առաջացած խորին ստորացման միացաւ աղգամիջեան շփոթութեան մի սոսկալի բռընկումն։ Փարիզի գործաւոր դասակարգը զայրացած էր ոչ միայն բոնապարտեանների դէմ, որոնք երկիրն հասցրին խայտառակութեան, այլ ընդդէմ բոլոր հարուստ դասակարգերի։ Փարիզն անձնատուր լինելուց յետոյ գործաւորները խզեցին իրենց կապը Ֆրանսիայի հետ և հրատարակեցին «Հասարակավարութիւն» (կոմմիւն), յեղափոխական վարչութեան Փարիզի, որ պիտի վերջ դնէր ստացուածքի և հասարակական անհաւասարութեան և օրինակ տար ազգայնական պետութիւնների ինքնուրոյն տեղական համայնքների բաժանման։ Այսպիսի ինքնուրունութիւն ձեռք բերելու առաջին քայլն եղաւ *ազգամիջեան պատերազմն եւ սարսափը*, և այդ քայլերն արուեցան. ֆրանսիական կառավարութիւնը ստիպուեցաւ երկրորդ անգամ Փարիզը պաշարելու և քաղաքըն առնելու յարձակմամբ, որ չորս օր տևեց։ Հասարակավարութեան անկումն նշանաւոր դարձաւ յուսահատութեան և զայրութի վայրենի ժայթքմամբ. հասարակավարներն այրեցին մայրաքաղաքի հոյակապ շէնքերն —Տիւյլրեան պալատը, քաղաքային խորհրդարանն, հաշուարարութեան պալատն և այլն—և սպանեցին իրենց ձերբակալած քաղաքացիական դասակարգի աչքի ընկնող ներկայացուցիչներին, օր. Փարիզի արքեպիսկոպոսին. կառավարութեան զօրքերն էլ ոչ ոքի չէին խնայում։

Չը նայելով ֆրանս-գերմանական պատերազմի այս սոսկալի վերջաբանին, Ֆրանսիան այս անգամ ևս ցոյց տուաւ ամենածանր փորձութիւններից յետոյ *ոտքի կանգնելու իր անսովոր ընդունակութիւնը*: Կառավարութեան եղանակն հանգամանքներն արդէն մատնանիշ էին արել. առաջին ազգային ժողովում մեծամասնու-

թիւնը բաղկացած էր միապետականներից, որովհետև երկիրը դրանց աւելի պահպանողական էր համարում, քան թէ հանրապետականներին, բայց միապետութիւնը վերականգնելն անհնարին երևեցաւ. օրինականների (լեժիտիմիստ), օռլեանականների եւ բոնապարտականների երեք միապետական ձգտումները փոխադարձաբար չեզոքում էին միմեանց: Ստիպուած եղան փոքր առ փոքր հանրապետական հաստատութիւններ մշակել. պատգամաւորների ժողովի կողքին, որ ընտրւում էր ընդհանուր ձայնատւութեամբ, որոշուեցաւ ծերակուտի հաստատութիւնը, որի անդամներն ընտրւում էին նահանգներում առանձին ժողովներով. նախագահին, որին ընտրում էին երկու խորհրդարաններն ի միասին կազմած նստի մէջ, յանձնուեցաւ գործադրական իշխանութիւնն եօթը տարով: Ազգաբնակութիւնն, որ սկզբան վստահութիւն չ՚ունէր դէպի հանրապետութիւնը, տարէ ցտարի աւելի եւ աւելի համոզուեցաւ հանրապետութեան անհրաժեշտ լինելուն, և միապետական կուսակցութիւնները հետ զհետէ կորցրին իրենց նշանակութիւն: Ֆրանսիայի հարստութիւնը, որ արգասիք է ազգի ամսովոր աշխատասիրութեան եւ եռանդին, հնարաւոր դարձրեց երկրի համար դիւրութեամբ վճարելու հսկայական պատերազմական տուգանքն և տնտեսական վերաբերութեամբ առաջնակարգ ազգերի շարքում իւր տեղը գրաւելու: Ազգային աշխոյժ զգացմունքըն և պարտութիւնների վրէժխնդրութեան և կորստի վերադարձնելու յոյսը ստիպեցին յատուկ ուշադրութիւն դարձնել բանակի վրայ, և նրա վերակազմութիւնը հանրապետական Ֆրանսիան դարձրեց մի ահեղ զօրութիւն միջազգային յարաբերութեանց մէջ:

Իտալիան և պապը: 1870—71

Պատերազմը 1870—71 թուին ունեցաւ մի այլ կողմնակի հետևանք ևս: Դրա սկսելուց քիչ առաջ Պիոս Թ. պապը Հռովմում «տիեզերական» ժողով գումարեց կաթոլիկ եկեղեցականների, ուր, չը նայելով 119 եպիսկոպոսների [1]) ընդդիմութեան, հրատարակուեցաւ պապի անսխալականութեան նոր վարդապետութիւնը: Մեծամասնութիւնը վճռեց, որ ամէն մի վարդապետութիւն, որ պապը կը յայտարարէ վարդապետական կամ բարոյական խնդիրների վերաբերութեամբ, անհերքելի ճշմարտութիւն է, որ պապը, իբրև եկեղեցու վարդապետ, անսխալական է և կարօտ չէ նոյն իսկ եկեղեցու աջակցութեան: Անմիջապէս պապի հեղինակութեան այս անպայման ճանաչման հետևեց նրա աշխարհական իշխանութեան կորուստը, որ պապերն ունէին սկսած Պիպին Կարճահասակից: Պապի աշխարհական իշխանութիւնը կանգուն էր մնում վերջին ժամանակները բացառապէս Նապոլէոն կայսեր օգնութեան, և երբ 1870 թուականի իրողութիւնները պատճառ եղան ֆրանսիական զօրքի Հռովմից կոչուելուն, Վիկտոր Էմմանուէլն անմիջապէս գրաւեց «յաւիտենական քաղաքը» և այդու աւարտեց, վերջապէս, Իտալիոյ միացումը: Պապի բարոյական ազդեցութիւնը կաթոլիկ աշխարհի վրայ, թէպէտ և, միայն զօրացաւ դրանից, որ պապը դադարեց մանր իտալական իշխան լինելուց և դարձաւ «վատիկանեան բանդարկեալ»:

Միջին Եւրոպայի մէջ տեղի ունեցած յեղաշրջումը կողմնակի կերպով ազդեց և արևելեան Եւրոպայի ճակատագրի վրայ: Աւստրիան, կորցնելով իւր ազդեցութիւնն ու երկրները Գերմանիայում և Իտալիայում, սաստիկ ուշադրութիւն սկսաւ դարձնել արևելեան գործերի վրայ և կարող էր հանդէս գալ իբրեւ բացարձակ ախոյեան Ռուսիոյ Բալկանեան թերակղզու վրայ փոխանակ Ռուսիային ծածուկ դիմագործելու: Աւստրիան իւր այս դերի մէջ կարող էր յոյս դնել նոր Գերմանիոյ աջակցութեան վրայ, որ ուղղակի շահա- Արևելեան խնդիր:

[1]) Այս եկեղեցական ժողովին մասնակցողների բոլորի թիւն րէ 750:

գրգռուած չէր բալկանեան գործերով, բայց չէր ցան-
կանում Ռուսիոյ զօրանալն ու վախենում էր նրա ազ-
դեցութիւնից։ Գերմանական յաղթութիւնների այս հե-
տեւանքներն արտայայտուեցան, թէեւ, միայն աստիճա-
նաբար. ռուսաց կառավարութիւնն երկար ժամանակ
մոլորութեան մէջ էր. վերաբերութեամբ իւր այս արեւ-
մտեան հարեւանների նպատակների ու շահերի, յոյս էր
դրել Գերմանիայի երախտագիտութեան վրայ Ռուսիայի
1870—71 կողմից 1870—71 թ. ստացած աջակցութեան համար,
որն այնքան էական կերպով դիւրացրեց գերմանացոց
գործերն, և նոյն իսկ մերձաւոր դաշնակցութեան մէջ
մտաւ Գերմանիայի և Աւստրիայի հետ,—որով կազմուե-
ցաւ երեք կայսրների դաշնակցութիւնը։ Այս դաշնակ-
ցութեան իսկական գինն երևեցաւ հէնց առաջին լուրջ
փորձուլթեան ժամանակ, որ պատրաստեց դրա համար
Բալկանեան թերակղզու գործերի ընթացքը։

Տաճկական երկրների վիճակը քիչ էր փոխուել դէ-
պի լաւն այն դասերից յետոյ, որ ԺԹ. դարում տուել
էին տաճիկներին։ Այստեղ ևս երևեցաւ երիտասարդ-
տաճիկների կուսակցութիւն, որ երազում էր արևմը-
տեան տէրութիւնների բարեփոխութիւնների նման բա-
րենորոգումներ, բայց այս չնչին խմբակի գոյութիւնն
աւելի ևս բարդեց Կոստանդնուպոլսոյ պալատական խար-
դաւանքներն և հնար տուաւ տաճիկ նախարարներին,
երբ եւրոպական պետութիւնները նրանից բարենորո-
գումներ էին պահանջում, որևէ նահանգի համար, խոս-
տանալ մեծ բարենորոգումներ ամբողջ Տաճկաստանի
համար և մերժել պահանջուած գործնական բարեփո-
խութիւնները։ Թշուառ քրիստոնեայ ազգաբնակութեան
մնում էր ապստամբութիւններով ձեռք բերել աշխա-
տել պետութիւնների ուշադրութիւնն և միջամտութիւ-
նը։ Այս ապստամբութիւններն յանգում էին ընդհա-
նուր կոտորածի և աւերմունքի տաճիկների կողմից։

Մանր տէրութիւնները, որոնք աստիճանաբար բաժա-
նուել էին տաճկական կայսրութիւնից, ամենքն էլ ի-
րենց անյարմար վիճակի մէջ էին զգում և որոնում էին
յարմար առիթներ, իրենց վիճակը բարւոքելու համար։
Յոյները 1862 թուին վռնդեցին Օտտոն թագաւորին, որ 1862
չը կարողացաւ ոչինչ անել Յունաստանի համար Խրիմի
պատերազմի ժամանակ, նոր ընտրուած Գէորգ թագա-
ւորը, Դանիմարքայի Քրիստիան Թ-ի որդին, Անգլիայից
պարգև ստացաւ Յոնիական կղզիք, բայց երբ նա կա-
մեցաւ օգտուել Կրետէի ապստամբութիւնից, որ այդ
կղզին էլ միացնի Յունաստանին, ստիպուեցաւ յետ քա-
շուիլ Բ. Դրան սպառնալիքների առաջ։ Մոլդաւիան և
Վալախիան միացան և կազմեցին ռումինական թա-
գաւորութիւնը, որի թագաւոր ընտրուեցաւ, տեղացի
իշխան Կուզայի կարճատև տիրապետութիւնից յետոյ,
արքայազն Կարլոս Հոհէնցոլեռնը (1866). մնում էր 1866
միայն Դրնից վասսալական կախումը դէն ձգել։ Սեր-
բիայում իշխան Միքայէլ Օբրենովիչին յաջողուեցաւ
հասնելու այն բանին, որ իւր երկրի մէջ տաճիկ բեր-
դապահ զօրքերից գրաւուած ամրոցները մաքրուին,
բայց սերբերին, ինչպէս և ռումիններին մնում էր դեռ
ևս պատերազմով ձեռք բերելու իրենց կատարեալ ան-
կախութիւնը սուլթանի գերիշխանութիւնից։ Բալկա-
նեան մանր իշխանների մէջ սկսուեցան արդէն մրցումն
ու թշնամութիւնք, բայց ընդհանուր վտանգը, որ
սպառնում էր տաճկից, դեռ ևս յետ էր պահում այդ
զգացումները. ամէնքին էլ քիչ թէ շատ գրգռում էր
իրենց ցեղակիցների և հաւատակիցների ողորմելի դրու-
թիւնը տաճկական նահանգներում և այդ լուծը թօ-
թափելու փորձերը։

Ապստամբութիւնները սկսան 1875 թ. Բոսնիայում
և Հերցեգովինիայում, ապա Բուլղարիայում։ Թէ ինչպէս
էին գործում տաճիկները, յայտնի է նրանից, որ հա-

Հերցոգովի-
նեան ապս-
տամբութիւն
և սերբիա-

կան պատերազմ 1875։ մաձայն անգլիական յանձնակատարների արած քննութեան, մի միայն Ֆիլիպպոպոլի գաւառում Տաճկաստան գաղթած չերքեզները (բաշիբուզուկ) կոտորել էին 12,000 մարդ։ Եւրոպական տէրութիւնները պահանջեցին բարենորոգութիւններ և դեսպանաժողով գումարեցին, ուր Անգլիան սակայն առանձին դիրք բռնեց դրդուած աւանդական երկիւղից, որ կարող է Ռուսիային նպաստած լինել։ Ապստամբները խնդրում էին, որ նրանց տաճկական բարենորոգութեանց փոխարէն տան քրիստոնեայ կառավարութիւն, իսկ Դուռն հրաժարւում էր «Եւրոպայի» պահանջները կատարել, յոյսը դնելով ամենին յայտնի պետութիւնների փոխադարձ ոսոխութեան վրայ: Սերբիան և Չեռնոգորիան, սլաւեան երկրներից, գլխաւորապէս Ռուսիայից, հասած համակրութեան ցոյցերով և օգնութեամբ, դուրս եկան սպասողական դրութիւնից և պաշտպան կանգնեցին բոսնեակներին ու հերցոգովինացիներին, բայց երկու մանր իշխանութիւնների գործը չէր կռուել Տաճկաստանի հետ։ Չեռնոգորցիք կամ Սեւլեռնեցիք իրենց լեռներում մի քանի յարձակումներ յետ մղեցին, բայց իրական օգնութիւն անել չը կարողան իրենց դաշնակիցներին։ Սերբիացոց սակայն, չը նայելով ռուս ազատակամների օգնութեան զօրավար Չեռնիայեվի առաջնորդութեամբ, տաճիկները յաղթեցին յամառ կռուում։ Ալէքսանդր Նիկոլայեվիչ կայսրը Սերբիան ազատեց կատարեալ աւերումից Դիւնիշի մօտ պարտուելուց յետոյ, հեռագրով պահանջելով սուլթանից պատերազմական գործողութիւնները դադարեցնել։ Բայց յետագայ դիւանագիտական բանակցութիւնները ոչ մի բաւարար հետեւանք չ'ունեցան, և ռուսաց կայսրն, չը նայելով իւր մեծ խաղաղասիրութեան, ստիպուեցաւ սուրը մերկացնել և Ռուսիայի վրայ բարձել այն գործի կատարումը, որի մասին Եւրոպան այնքան երկար խօ-
1877 սում էր (1977)։

Ռուս-տաճկական պատերազմ։ Չէին սպասում, որ տաճիկները մեծ ընդդիմութիւն անեն, և փոխանակ միանգամից գերադաս ոյժերը դաշտ հանելու, ռուսները սահմանափակուեցան հնար եղածին չափ քչով։ Ասիական բանակը շուտով յառաջ անցաւ, դանուբեան բանակն անցաւ Դանուբը, գրաւեց Նիկոպոլն ու, մի կողմը թողնելով հիւսիսային Բուլղարիոյ բերդերի քառակուսին (Ռուսչուք, Սիլիստրիա, Շումլա, Վառնա), յառաջախաղ զօրախումբը մղեց Բալկանների միւս կողմը։ Բայց երբ տաճիկները վերջացրին իրենց զօրքերի դանդաղ կենդրոնացումը, երեւեցաւ, որ ռուսաց զօրութիւնը բոլորովին անբաւարար է ձեռնարկուած գործողութիւնների համար։ Դանուբեան բանակի աջ թեւի վրայ Օսման-փաշան Պլեւնիայի մօտ ամրացրած դիրք գռնեց, որ չը կարողացան ռուսները գրաւել, չընայելով երկու խիստ յարձակումների (յուլիսի 18-ին և օգոստոսի 30-ին)․ առաջակողմում Շիպկայի կրճի հերոսական պաշտպանութիւնը ռուսաց ութերորդ զօրախմբի (զօրավար Ռադեցկու) կանգ առնել տուաւ Սուլէյման-փաշայի բանակի յարձակումն, բայց դրութիւնը ճգնաժամի հասաւ վեց շաբաթուն ընթացքում, մինչև Ռուսիայից օգնական զօրքերի գալուստը։ Պատերազմի ասիական դաշտում ռուսաց զօրքերը նոյնպէս յետ քաշուել ստիպուեցան դէպի Ալէքսանդրոպոլ։ Պատահական այս յաջողութիւնն, որ ունեցան տաճիկները շնորհիւ ռուսաց աւելորդ խնայողութեան, փոխուեցաւ անմիջապէս կատարեալ կործանման, երբ գործ մէջ մտան բաւարար ոյժեր։ Պլեւնայի դիրքերն, ամենայն կողմերից պաշարուեցան, և Օսման-փաշան անձնատուր եղաւ պաշարման շղթան պատռելու անյաջող փորձեց յետոյ։ Չը նայելով վրահաս ձմրան, Գուրկօ զօրավարի բանակն անցաւ արեւմտեան Բալկանների ձիւնապատ լեռներն և ոչնչացրեց իւր դէմ ուղարկուած տաճկական զօրախումբն։ Ռադեցկին և Սկոբելեւը ջարդեցին և գերի

բռնեցին տաճկական կենդրոնական բանակն, որ կանգնած էր Շիպկայի դիմացը։ Միաժամանակ Միխայել Նիկոլայեվիչ մեծ իշխանի ասիական բանակը ջարդեց Մուխթար փաշային Աւլիարի մօտ, գրաւեց Ղարսն ու Հայաստանը մինչև Էրզրում։

Բեռլինի վեհաժողովը։

Ռուսաց զօրքերը մօտեցան բոլորովին Կոստանդնուպոլսին, և, մայրաքաղաքն ազատելու համար, Դուռն ստիպուեցաւ խաղաղութեան դաշը կռելու Սան-Ստեֆանոյում, որով Ռուսիան գոհանում էր ձեռք բերելով Բաթումը, Արդահանը, Ղարսն ու Դոբրուջան, որ ապա փոխանակուեցաւ Փարիզի խաղաղութեամբ Ռումինիային հասած Բեսարաբիոյ մի կտորի հետ։ Բայց Սերբիան, Չեռնոգորիան և Ռումինիան ստանում էին անկախութիւն, իսկ Բոլղարիան Բալկաններից դէպի հիւսիս և դէպի հարաւ կազմեց մի վասսալական իշխանութիւն, որի կազմակերպութիւնն յանձնուեցաւ Ռուսիային։ Երկարաձիգ պատերազմն ու միջազգային աննպաստ դրութիւնը ցոյց տուին սակայն իրենց ազդեցութիւնը վէճի այս լուծման վրայ։ Դիզրայելու (լորդ Բիկոնսֆիլդի) անգլիական պահպանողական կառավարութիւնը զգալով, որ կըգտնէ Աւստրիոյ աջակցութիւնն, սկսաւ ռուսաց պատերազմ սպառնալ, իսկ երեք կայսրների դաշնակցութիւնն արգելք չեղաւ աւստրիացոց նոյնպէս հակառակելու Սան-Ստեֆանոյի դաշնագրութեան և սպառազինուիլ սկսելու, կատարելապէս համոզուած լինելով, որ պարտութեան դիպուածում պաշտպանութիւն կը գտնէ Գերմանիայից։ Ալէքսանդր Բ. կայսրը չը կամեցաւ մի երկրորդ արիւնահեղ պատերազմ սկսել և համաձայնեց Սան-Ստեֆանոյի դաշնագրութիւնն եւրոպական վեհաժողովի քննութեան տակ ձգելու։ Այս վեհաժողովը տեղի ունեցաւ Բեռլինում իշխան Բիսմարկի նախագահութեամբ։ Վեհաժողովիս վճիռների զօրութեամբ Աւստրիան գրաւեց Բոսնիան և Հերցոգովինան,

Անգլիան Կիպրոսը [1]), Բոլղարիան սակայն բաժանուեցաւ երկու մասի, դրանցից միայն հիւսիսայինը (Դանուբի և Բալկանների մէջ տեղը) մտաւ բոլղարական իշխանութեան մէջ, իսկ հարաւայինը, այսպէս կոչուած Արևելեան Ռումելիան, մնաց տաճկական նահանգ քրիստոնեայ ընդհանուր-նահանգապետի վարչութեան տակ։ Այս արհեստական բաժանումն հաստատուն չը մնաց, երկու մասերը ձուլուեցան ու կազմեցին մի իշխանութիւն, բայց արդէն այն ժամանակ, երբ Ռուսիայի ազդեցութիւնն այդ տէրութեան մէջ, որ ստեղծուած էր ռուսաց զոհողութիւններով և ջանքերով, խախտուած էր։

Անգլիա։

Անգլիական քաղաքականութիւնը վերաբերութեամբ արևելեան և գաղութների խնդիրների պահպանեց իւր հին պատերազմական եղանակն ու դիրքը, բայց եւրոպական գործերում նա շատ չափաւոր եղաւ շնորհիւ այն հանգամանքի, որ Անգլիան չէր ներմուծել ընդհանուր զինուորագրութիւն, այլ պահպանելէր ազատակամներ վարձելու նախկին ձևն ու չէր կարող մեծ պետութիւնների հետ մրցել իւր ցամաքային թոյլ զինուորական ուժերով։ Մինչև անգամ գաղթավայրերումն էլ նրա բանակի անբաւարար լինելն, որ ցրուած էր փոքրիկ գնդերով ամբողջ աշխարհիս երեսին, երբեմըն զգալի էր լինում։ Յատուկ վտանգաւոր ճգնաժամի դիմացան անգլիացիք Հնդկաստանում 1858 և 1859 թուականներին։ 1858—1859 Այս ահագին երկիրս գտնուում էր Արևելեան-Հնդկաստանի վաճառականական ընկերութեան վարչութեան տակ, որի պաշտօնեաներն օգտուում էին երկրից զուտ առևտրական տեսակէտով և գրգռում էին բնիկների ատելութիւնն իրենց գոռոզութեամբ և տեղական կարիքների չը հասկանալովը։ Ապստամբութիւնն առանձնապէս սպառնական էր այն պատճառաւ, որ դրան գլուխ էին կանգնել բնիկ սիփայների զօրագըն-

[1]) Անգլիացիք 1879 թուին, բացի դրանից, գրաւեցին Եգիպտոսը՝

դերը։ Մի քանի տեղերում, օրինակ՝ Դելհիում, անգլիա-
կան գաղթականներին մինչև վերջին մարդը կոտորեցին։
Բնիկները սակայն չը կարողացան միանալ և միաբան
գործել, և անգլիական կառավարութիւնը, որ ընկերու-
թիւնից առաւ երկրի վարչութիւնը, ճնշեց ապստամ-
բութիւնն և խիստ վրէժ լուծեց դրա համար։

1860 Անգլիացոց գլխաւոր ուշադրութիւնը 1860 թուա-
կանին հետևող շրջանում նուիրուած էր երկրի ներքին
զարգացման։ Այդ ժամանակ ազատականներին պարա-
գլուխ կանգնեց արդարութեան ու մարդասիրութեան
ազնիւ պաշտպանը, Գլադստոն, պահպանողական առաջ-
նորդն էր խորամանկ ու փայլուն, բայց անմօթ Դիզ-
րայելին (Բիկոնսֆիլդ)։ Գլադստոնի պետական գործու-
նէութիւնն սկսաւ զարմանալի ելևմտական ձեռնարկու-
թիւններով, որոնք հիմունք եղան անգլիական արդի
ելևմտական դրութեան։ Բայց Գլադստոնը կանգ չ՛առաւ
այս մասնաւոր խնդիրների վրայ. նա ընտրական իրա-
ւունքի ընդլայնացումն առաջարկեց, և թէպէտ այդ
ընդունել տուաւ Դիզրայելիի նախարարութիւնը, որ
այս զիջմամբ յոյս ունէր հակառակորդին զրկել հասա-
րակութեան համակրութիւնից, բայց բարենորոգու-
թեանս իսկական նախապատճառն ազատականներն
1885 էին, և 1885 թուին նրանք էլ աւելի լայնացրին ընտրա-
կան իրաւունքն, այնպէս, որ այժմ Մեծ Բրիտանիայում
հաշւում են 6,000,000-ի չափ ընտրողներ և միայն
2,000,000 չափահաս տղամարդիկ չեն մասնակցում ըն-
1869 տրութիւններին։ Գլադստոնը 1869 թուին ազատեց կա-
թոլիկ իռլանդացոց «իշխող» եպիսկոպոսական եկեղեցին
պահպանելու պարտաւորութիւնից, այդ եկեղեցու քա-
հանայք ծխականներ չ՛ունէին, բայց օգտւում էին լաւ
եկամուտներով ի հաշիւ կաթոլիկ իռլանդացոց։ Այդ
ժամանակից Գլադստոնն աւելի և աւելի համոզւում էր,
որ ամենալաւ միջոցն Իռլանդացոց զինաթափ անելու և

նրանց Մեծ-Բրիտանիոյ հաւատարիմ քաղաքացի դարձ-
նելու համար, է իրանց կրօնական ու քաղաքական
դրութեան բարենորոգումն. նա 1881 թուին խորհըր- 1881
դարանին ընդունել տուաւ մի օրէնք, որ պաշտպա-
նում է Իռլանդայի վարձակալ երկրագործներին անգլիա-
ցի հողատէրերի չափից դուրս պահանջների և կամայա-
կան արտաքսման դէմ. վերջապէս, 1886 թուին նա հան- 1886
դէս դուրս եկաւ այսպէս կոչուած home rule-ի ծրա-
գրով, այսինքն՝ Իռլանդիայում ինքնուրոյն վարչութիւն
և առանձին խորհրդարան հիմնելու, Անգլիային և Իռ-
լանդիային վերաբերեալ ընդհանուր խնդիրների վճիռը
թողնելով մեծբրիտանական խորհրդարանին Ուեստմինս-
տրում։ Այս համարձակ առաջակարկութիւնը հերձուած
յառաջ բերաւ ազատական կուսակցութեան մէջ և ցարդ
անգլիական քաղաքականութեան շրջանում վիճելի խըն-
դիրներից մեծագոյնն է դա։

Նոր Աշխարհի մեծ տէրութիւնը, հիւսիսային-ամե- Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգնե-րը։
րիկական Միացեալ Նահանգները, իւր յատուկ զարգաց-
ման ընթացքն ունի, թէպէտ և գտնւում է Եւրո-
պայի հետ շարունակ փոխադարձ ներգործութեան մէջ։
Բնական ու հասարակական պայմանները բաժանել էին
նրան մեր դարու առաջին կիսում երկու խիստ միմեան-
ցից զանազանուող շերտերի։ Հարաւային նահանգնե-
րում տնտեսութիւնն հիմնուած էր ծխախոտի, շաքարի,
բրնձի և մանաւանդ բամբակի մշակութեան վրայ։ Բո-
լոր այս մշակութիւնները պահանջում են ոչ այնքան
հասկացողութիւն, ուշադրութիւն և եռանդ առանձին
մշակների կողմից, որչափ խմբովին, միատեսակ և պարզ
աշխատութիւն և բանուորների շոգին դիմանալու ըն-
դունակութիւն։ Այս պատճառաւ հարաւում կազմուե-
ցաւ տնկարանական տնտեսութիւնը, հողային սեփակա-
նութիւնը կենդրոնացաւ սակաւաւորների ձեռքում, իսկ
մշակութեան համար գործ էին դնում ստրուկներին

—նեգրերին։ Հիւսիսային նահանգներում զարգացան հացաբոյսերի մշակութիւնն ու արդիւնագործութիւնը հում նիւթերի եւրոպական ձեւով, բոլոր աշխատանքները կատարում էին ազատ մարդիկ, եւ չը նայելով այն բանին, որ քանի մի ճարպիկ ձեռնարկուներ աչագին կարողութիւն էին դիզում, գոյութիւն չունէր ամենեւին հասարակութեան սպիտակների ու սեւերի, տէրեր եւ ստրուկների, բաժանման նման մի բան, արդիւնատու գործի առատութեան եւ բնակիչների եռանդեան շնորհիւ նիւթական բարեկեցութեանը լայն ծաւալ ունէր հասարակութեան մէջ, եւ ամէնքի համար ճանապարը բաց էր դէպի այն։ Դաշնակցութեան սահմանադրութիւնը տալիս էր առանձին նահանգներին գրեթէ կատարեալ ինքնուրոյնութիւն, եւ հարաւային նահանգները կարողանում էին անարգել օգտուել իրենց «յատուկ հաստատութիւնով»—ստրկութիւնով, բայց նրանք վախենում էին, որ մարդասիրական գաղափարների զարգացումն եւ հիւսիսի աճող գերակշռութիւնը վաղ թէ ուշ առաջ կը բերէն դաշնակցութեան կողմից վճիռ ընդդէմ ստրկութեան։

Հարաւայիններին այսպիսի միջամտութեան դէմ միակ երաշխաւորութիւն էր թւում այն կարգը, որով ստրկութիւն ունեցող նահանգների թիւն հաւասար լինէր ստրկութիւնից ազատ նահանգների թւին, որովհետեւ այդպիսի հաւասարութիւնը տնկարանների տէրերին ապահովում էր ձայների կէսը ծերակուտի մէջ, եթէ ոչ պատգամաւորների ժողովում։ [1]) Ուստի եւ հասունացած տերրիտորիաները [2]) նահանգների թւի մէջ ընդունելու ժամանակ առաջ այն բանի վրայ էին հսկում, որ դրանք հերթով մտնեն նահանգների մէջ, ամէն մի ազատ նահանգի դիմաց մի ստրկատէր նահանգ։ Ապա 29-ական թւականների սկզբում, վճռուեցաւ, որ բոլոր նահանգներում հիւսիսային լայնութեան 36° 30′ սկսած դէպի հարաւ գոյութիւն պիտի ունենայ ստրկութիւնը. վերջապէս, սահմանեցին, որ իւրաքանչիւր նոր ընդունուող նահանգ ինքը կարող է որոշել, ցանկանում է՞ ստրկութիւն մտցնել իւր մէջ, թէ՞ ոչ։ Այս վերջին վճռի նպատակն էր ստրկատէրերին ճանապարհ բանալ 36° 30′ դէպի հիւսիս եւ նրանք ջերմեռանդութեամբ քարոզում էին ստրկութիւն մտցնել նոր ընդունուող տերրիտորիաներում։ Բայց հիւսիս արեւմուտքումը նրանց դէմ էին ոչ միայն քաղաքացոց հայեացքներն ու զգացումներն այլ եւ բնական պայմանները. դէպի այստեղ դիմում էր անխափանելի կերպիւ սպիտակամորթ բնակչութիւնը, որոնց հետ չէին կարող մրցել սեւամորթ ստրուկները։ Հողագործ արեւմուտքի արագ աճումը մի նոր գործօն եղաւ, որ վճռեց հիւսիսի ու հարաւի միջի վէճը յօգուտ հիւսիսի։

[1]) Պատգամաւորների ժողովի անդամներն ընտրւում են բնակչաց թւին համեմատ. ծերակոյտն իւրաքանչիւր նահանգ երկու ներկայացուցիչ է ուղարկում, բնակչաց թւից անկախ։

[2]) Տերրիտորիա կոչւում են Միացեալ նահանգներում նուազ բնակիչներ ունեցող երկրները, որոնք նահանգների շարքը չեն ընդունուած, դրանց կառավարութիւնը գտնւում է կոնգրեսի անմիջական հսկողութեան տակ։ Երբ տերրիտորիայի բնակչաց թիւն հասնում է 60,000, նա իրաւունք ունի խնդրելու, որ իրեն նահանգների շարքն ընդունեն։

Դեռ եւս 1832 թուին ստրկատէր նահանգներից 1832
մին, Հարաւային Կարոլինան, սպառնաց դուրս գալու դաշնակցութիւնից։ Ինչքան աւելի աչքի ընկնող էր դառնում հիւսիսայինների գերազանցութիւնն ազգաբնակութեան թւով ու հասարակական բարեկեցութեամբ, այնքան աւելի անհաշտելի էին դառնում հարաւայինները։ Երբ 1860 թւականին նախագահական ընտրու- 1860
թիւններին Աբրահամ Լինկոլն ընտրուեցաւ, որ հակառակ էր հարաւայիններին ոչ եւ է զիջումն անելու, եօթը նահանգ յայտնեցին, որ դաշնակցութիւնից դուրս են գալիս, կազմեցին «դաշնաւորութիւն» (կոնֆեդերսսիօն) իրենց ատագաժողովով ու նախագահով (Ջեֆֆերսոն Դեւիս)։

Հարաւայինք ոչ միայն խզեցին դաշնակցութեան Հիւսիսային-
կապն, այլ նաեւ պատերազմի նշան տուին, գրաւելով ամերիկական պատե-
դաշնակցութեան ամրոցներից մէկը. հակառակորդների րազմ
ուժերը շատ անհաւասար էին։ Ապստամբ դաշնաւորութիւնն ունէր միայն 10 միլլիոն բնակիչ, որոնցից մեր-

ձաւորաւորապէս կէսը ստրկութեան մէջ էր. դաշնակ-
ցութեան մէջ մնացել էին 20 միլլիոն քաղաքացիք։
Այսուամենայնիւ առաջին ժամանակ պատերազմական
գերակշռութիւնն անպայման հարաւայինների կողմն
էր. հարուստ տնկարանատէրերն աւելի պատերազմասէր
երևեցան, աւելի ճարտար մարտիկներ քան հիւսիսային
հողագործներն ու առևտրականները։ Հարաւային զօրա-
վարներն, որոնցից յատկապէս աչքի էր ընկնում Լի զօ-
րավարը, հիւսիսայիններին պարտութիւն պարտութեան
1861, 1862 և 1863. յետևից էին հասցնում 1861, 1862 և 1863 թուական-
ների արշաւանքներում։ Բայց հէնց այդ դժուար ժա-
մանակում կատարելապէս երևան եկաւ ամերիկական
ժողովրդի մեծ բարոյական ուժն։ Նա չէր ցանկա-
նում պատերազմ և անպատրաստ էր դրա համար. նրա
կազմակերպութեան մէջ գոյութիւն չ՚ունէին այն ստի-
պողական միջոցներն, որոնցով եւրոպական պետութիւն-
ներն ստեղծում են իրենց բանակները. չը կար ոչ զի-
նուորակոչ, ոչ ընդհանուր զինուորագրութիւն, ոչ մըշ-
տական հսկողութիւն և առաջնորդութիւն ուժեղ կենդ-
րոնական իշխանութիւնից—դաշնակցութեան միլլիոնա-
ւոր զօրքերը կրկին ու կրկին լրանում էին ազատակամ-
ներով. զինուորները, սպաները, զօրավարներն պատե-
րազմի դաշտ էին դուրս գալիս ուղղակի մաճը ձեռքից
թողնելով, գրասենեակներից, խանութներից. յաջողու-
թիւններն հազուագիւտ էին, երկար ժամանակ ստի-
պուեցան արիւնալի դասեր առնուլ ճարտար թշնամուց։
Եւ այսու ամենայնիւ նոր ոյժերի հոսանքը դէպի բա-
նակը չէր նուազում, ազատակամներն առ սակաւ սա-
կաւ դառնում էին փորձուած ու բովից ելած զինուոր-
ներ, յառաջ էին անցնում զօրագլուխներ, որոնք ըն-
դունակ էին յաղթանակներ կանգնելու։ Պատերազմիս
յեղաշրջման կէտ կարող է համարուիլ Հիտտեսբուրգի
մօտ տրուած ճակատամարտը, ուր Միդ զօրավարը երեք-

օրեայ պատերազմից յետոյ յետ մղեց Լի զօրավարին, որ
արդէն մտել էր Պենսիլվանիա (1863 թ. ամառը)։ Հա- 1863
րաւայինները բոլոր իրենց քաջութեամբ ու զինուորա-
կան ընդունակութիւններով հանդերձ չ՚ունէին այնքան
անհատնում միջոցներ, ինչքան հիւսիսայինները. իրենց
սեփական կալուածներում նրանք ստիպուած էին իրենց
ատող ստրուկներից զգուշանալու, որոնց Լինկոլն նա-
խագահն ազատ էր հրատարակել։ Հարաւայինների կա-
պերները [1]) մեծ վնաս էին հասցնում հիւսիսային ա-
ռևտրին, որի համար նրանց օգնում էին անգլիացիք,
բաց անելով դրանց համար իրենց նաւահանգիստները.
բայց, միւս կողմից, հարաւայինների նաւահանգիստնե-
րի շրջափակումն հիւսիսայինների նաւատորմղով խան-
գարեց հարաւի տնտեսութեան, ընդհատելով բամբա-
կի արտահանութիւնն և նրա այլ արդիւնքների Եւրո-
պա հասցնելը։ Դաշնաւորութիւնն ընկճեցին 1864 և 1864
1865 թուականների պատերազմները։ Մինչդեռ, զօրա- 1865
վար Գրանտը հիւսիսային գլխաւոր բանակով աւելի և
աւելի նեղն էր ձգում Լի զօրագլխին, և, վերջապէս,
դուրս քշեց նրան Պետերսբուրգի ամուր դիրքից, որ
դաշնաւորութեան մայրաքաղաք Ռիչմօնդն (Վերգի-
նիայում) էր պաշտպանում, Շերմանն աւերեց հարա-
ւային նահանգներն և դուրս եկաւ Լի զօրավարի բա-
նակի թիկունքը։ Սա այլ հնար չ՚ունէր, բացի անձնա-
տուր լինելուց, իսկ նրա պարտութիւնից յետոյ դաշնա-
ւորներն ստիպուեցան հպատակիլ։

Քայքայուած դաշնակցութեան կարգի բերելը դիւ- Նահանգները պատերազմից յետոյ
րին գործ չէր, և, դժբախտաբար, Աբրահամ Լինկոլ-
նին, որ այնքան հաստատամտութեամբ և հմտու-
թեամբ կռիւ մղեց ապստամբութեան դէմ, չը վիճա-
կուեցաւ ղեկավարելու այս գործը—նա սպանուեցաւ
մի խելացնոր դերասանի (Բուտ) ձեռքով, որ նրան բըռ-

[1]) Զինուած նաւեր, որոնք յարձակւում են թշնամու առևտրա-
կան նաւերի վրայ։

նակալ էր համարում։ Նրան յաջորդող նախագահ Ջակսոնը շատ աւելորդ հոգսեր պատճառեց իւր հայրենակիցներին, որովհետև անձնական իշխանասիրութիւնից դրդուած բռնեց յաղթուածների կողմն և այնպէս դըժուարացրեց աւագաժողովի գործունէութիւնն, որ նրան մինչև անգամ դատի մատնեցին ծերակուտի առաջ։ Բայց այս բոլոր ժամանակաւոր արգելքներն ու բարդութիւնները չը կարողացան ջնջել պատերազմի հետևանքը։ Ստրկութիւնը վերջնական կերպով ջնջուեցաւ, Նեգրերն ստացան քաղաքացիական իրաւունք սահմանադրութեան աւելացրած մի յօդուածի զօրութեամբ, և ապստամբ նահանգներն հետ զհետէ յետ ընդունուեցան կրկին դաշնակցութեան մէջ, երբ հըպատակեցին այս վճռին։

ՅԱՒԵԼՈՒԱԾ·

ՀԱՅՈՑ ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԼԾԻՑ ԱԶԱՏՈՒԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԻ ՇՐՋԱՆԸ·

Ընդհանուր հայոց վիճակն ԺԶ.—ԺԹ. դարերում։

Երկու մեծ մահմետական պետութիւնների (պարսից ու տաճկաց) բարբարոս լծի տակ հեծում էին հայերն այն ժամանակ, երբ եւրոպական ազգերը հոգեկան բարիքների համար էին մաքառում։ Խաղաղ ժամանակի նեղութիւններից զատ, պատերազմի արհաւիրքներն աստուածային խարազան էին դարձել Հայաստանի բնակիչների համար, որովհետեւ տաճիկներն ու պարսիկներն անընդհատ կերպով պատերազմ էին վարում միմեանց հետ այդ երկրի տիրապետութեան համար ամբողջ տասնեւվեցերորդ ու տասնեւօթներորդ դարերի ընթացքում։ Այս պատերազմներին յաջորդող բռնի գերեվարութիւնները, պարբերական դարձած սովն ու ժանտախտը բոլորովին աւերեցին ու ամայացրին երկիրը։ Համեմատաբար բարեկեցիկ վիճակ ունէին գաղթավայրերի հայերն, որոնք վաճառականութեան շնորհիւ հարստացան եւ զօրացան։ Հայկական գաղութներն այս շրջանում ծաղկում էին նախ Լեհաստանում, Խը-

րիմում եւ Կ.-Պոլսում, ապա Պարսկաստանում եւ Հնդկաստանում, որ տեղերից հայ վաճառականներն հաղորդակցութիւն էին պահպանում հեռաւոր Ասիայի եւ Եւրոպայի հետ։ Հայ վաճառականները Պարսկաստանից ու Հնդկաստանից նաւում էին Իտալիա, հարաւային Ֆրանսիա եւ Հոլլանդիա, ուր եւ մանր գաղթավայրեր հիմնեցին Վենետկում, Մարսելում եւ Ամստերդամում։ Ծաղկեալ վիճակի մէջ էր Խրիմու հայ գաղութն, որ յարաբերութիւն էր պահում Ասիայի եւ հիւսիսային ու արեւելեան Եւրոպայի հետ։ Շահ Աբբասի բռնի կերպով Պարսկաստան վարած հայերն առեւտրական արտօնութիւնների շնորհիւ հարստացան եւ տարածուեցան դէպի արեւելք, Աֆղանիստան ու Հնդկաստան, որտեղից հաղորդակցում էին Եւրոպայի հետ ծովով, իսկ Ռուսիայի հետ Թուրքեստանի վրայով եւ Կասպից ծովով։

Բուն Հայաստանում մնացածների համար գաղթավայրերի հայերը նեցուկ էին, այսպէս Կ.-Պոլսի ամիրաները Տաճկահայոց, իսկ Ջուղայի խօջաներն պարսկահայոց համար։ Սրանք առանձին ջերմեռանդութիւն էին ցոյց տալիս դէպի Էջմիածինն ու հայոց հայրապետները, որոնք պանդուխտ հայերի առատ նուէրներով վերաշինեցին Ս. Էջմիածինն ու իրենց ազդեցութիւնը բարբարոս իշխանների մէջ պահպանեցին։ Հայրապետութեան եւ գրուած հայութեան մէջ անքակտելի կապ էին պահպանում նուիրակները, որոնք շրջում էին վիճակներն ու հայրապետական օրհնութիւն եւ միւռոն բաժանելով՝ առատ տուրքեր էին ժողովում Մայր Աթոռի համար։ Յարաբերութիւնների զարգացմամբ չփումն տեղի ունեցաւ հայոց եւ այլ քրիստոնեայ ազգերի մէջ, որից եւ ազատութեան մի աղօտ յուսոյ նշոյլ ծագեցաւ հայոց մէջ։

Ս. Էջմիածնի գաղտնի ժողովը 1678թ.։

Յակոբ Դ. կաթողիկոսի ժամանակ 1678 թուին Ս. Էջմիածնում մի գաղտնի ժողով տեղի ունեցաւ, որի մէջ մասնակցում էին վեց աշխարհական եւ վեց հոգեւորական։ Այս ժողովում վճռուեցաւ պատգամաւորների միջոցով օգնութիւն խնդրել արեւմտեան քրիստոնեայ պետութիւններից։ Աշխարհականների մէջ էին Սիւնեաց աշխարհի տիրապետող հայ իշխանների ներկայացուցիչներն, որոնցից միայն մէկի, Պռոշ իշխանի, որդուն, Իսրայէլ Օրիին յաջողուեցաւ դեսպանութեան գործը, որովհետեւ կաթուղիկոսի մահուամբ գործը խափանուեցաւ։ Սկսած այդ ժամանակից Իսրայէլ Օրին մինչեւ իւր կեանքի վերջը գործեց Եւրոպայում եւ Ռուսիայում, աշխատելով որ եւ է քրիստոնեայ իշխանի զօրութեամբ ազատել Հայաս-

տանը պարսից լծից, սա իւր նպատակների իրագործումը հնա-
րաւոր տեսաւ մի միայն ռուսաց կայսեր, Պետրոսի Մեծի ձեռ-
քով, որին եւ ծառայեց մինչեւ իւր մահն անդադար տեղեկու-
թիւններ հաղորդելով Պարսկաստանի մասին, ուր նա իբրեւ կայ-
սեր դեսպան գնաց, բայց վերադարձին յանկարծ մեռաւ Աստրա-
1711 խանում (1711 Թ.) եւ չը տեսաւ իւր ըղձերի իրագործումը։

Հայոց ազատումը մահմետական լծից ռուսաց ձեռքով։

Մահմետական լծից ազատման գաղափարն արդէն մար-
մնացումն էր առել Պետրոս Մեծի խոստումների շնորհիւ, ուս-
տի եւ Սիւնեաց աշխարհում հայերն այնքան պատրաստ էին
այդ գործի համար, որ մի կողմից անդադար բանակցութիւն-
ներ էին անում ռուսաց արքունիքի հետ, միւս կողմից սերտ
կապ հաստատում թէ միմեանց եւ թէ վրաց հետ։ Ս. Էջմիա-
ծնի կաթուղիկոսներն աւելի ենթակայ լինելով բռնակալների
իշխանութեան եւ աւելի մեծ հսկողութեան տակ գտնուելով՝
բարոյապէս էին միայն աջակցում գործին, մինչ բոլոր միաբա-
նութեան հոգին էր Գանձասարու կաթուղիկոսը։ Պետրոս Մեծը
1721 պարսից դէմ արշաւանքն սկսաւ 1721 Թուին եւ հայոց ու
վրաց միացեալ բանակը պատրաստ էր նրա հետ միանալու,
սակայն ռուսների յետս նահանջելը կրկին միայնակ թողեց հա-
յոց եւ նրանք ամբողջ մի դարի կռիւ մղեցին ամենայն քաջու-
թեամբ իրենց բարբարոս հարեւանների եւ պարսից տէրու-
թեան դէմ։ Այս շրջանում գործող քաջերից անուանի է Դա-
1725--1728։ ւիթ բէգ սիւնեցին, Հալիձորի դիւցազնը (1725—1728)։

Ռուսներն ստիպուած լինելով թողնելու Պետրոս Մեծի
գրաւած երկիրը Պասկաստանում, չը հրաժարուեցան Անդր-
կովկասին եւ Կասպից ծովի եզերքներին տիրելուց, այլ յետա-
ձգեցին գործը։ Այս միջոցին չարունակ բանակցութիւններ էին
տեղի ունենում հայերի եւ ռուսաց կառավարութեան մէջ։ Կա-
տարինէ Բ. կայսրուհու ժամանակ պարսկական արշաւանքը
յետաձգուեցաւ տաճկական պատերազմի պատճառաւ, յուսա-
կտուր հայերից շատերը սկսան օգտուիլ իրենց եղած առաջար-
կութիւնից եւ գաղթեցին Ռուսաստան, ուր հիմնեցին Ս. խաչ
քաղաքը, գաղութներ հաստատեցին Ղզլարում, Մոզդոկում եւ
Աստրախանում։ Մի այլ հայկական գաղութ հաստատուեցաւ
Դոն գետի ափերին Ղրիմից եկած հայերից, որոնք հիմնեցին
Նոր-Նախիջեւան քաղաքն իւր շրջակայ գիւղերով։ Վրաց ու
հայոց յոյսը մահմետական լծից ազատուելու բոլորովին կորաւ
1795 Աղա-Մահմէտ խանի արշաւանքից (1795) եւ ապա Կատարինէ
1796 Բ. կայսրուհու մահուանից յետոյ (1796)։ Միայն չորս տարուց

յետոյ տեղի ունեցաւ Վրաստանի միացումը Ռուսիայի հետ
(1800), որով Անդրկովկասի քրիստոնեայք շունչ առնել սկսան։

Տասնեւիններորդ դարու առաջին տարիներից սկսած,
ռուսները քայլ առ քայլ խլեցին մահմէտականներից Վրաստանն
ու նախկին Հայաստանը մինչեւ Երասխ գետը դէպի հարաւ եւ
մինչեւ Ղարս, 1828 Թ. պարսից պատերազմից յետոյ Երեւանն 1828
ու Նախիջեւանը դարձան ռուսաց նահանգներ, որով եւ Ս. Էջ-
միածնի հայրապետութիւնն անցաւ ռուսաց հովանաւորութեան
տակ։ Պարսկահայքից, խաղաղութեան դաշը կռելուց յետոյ,
40,000 հայք գաղթեցին Ռուսիա, որով պարսկահայոց թիւը
նուազեցաւ։ Յաջորդ տարուան տաճկական պատերազմի հետե-
ւանքն եղաւ Տաճկահայքի մի մասի ռուսաց ձեռքն ընկնելն ու
Կարնոյ հայոց գաղթը դէպի Ախալցխա եւ նրա շրջակայքը։
Վերջին ռուս-տաճկական պատերազմից (1876—1878) յետոյ 1876—1878։
եւս մի քանի հայկական գաւառներ անցան ռուսաց ձեռքն եւ
բազմաթիւ հայեր գաղթեցին Ռուսիա։ Հայոց ազատութեան
գործին լրումն պիտի տար 1878 Թուականի Սան-Ստեֆանոյի
դաշնագրի 16 յօդուածը, որով պէտք է բարենորոգումներ մըտ-
ցուէին հայկական գաւառներում մինչեւ ռուսաց զօրքի այն-
տեղից ելնելը, սակայն Բեռլինի վեհաժողովը փոխեց այն յօ-
դուածը (§ 61. Բեռլինի վեհաժ.), որով բարենորոգութիւնները
մնացին միայն իբրեւ ցանկութիւն, որի փոխարէն 1894—1896
Թ. մի սոսկալի հալածանք բրդաւ հայոց դէմ եւ 300,000 հայք
զոհ եղան մահմեդական մոլեռանդութեան.—սրանով է փա-
կւում հայոց պատմութեան ԺԹ. դարը...

Մտաւոր կեանք։

Տասնեւութ եւ տասնեւիններորդ դարերը հայոց համար
մտաւոր վերածնութեան դարեր էին. անցեալ դարում շնորհիւ
հայ եւ հայ կաթոլիկ (Մխիթարեանք) հոգեւորականութեան
լոյս աշխարհ հանուեցաւ մեր հին գրականութիւնը, իսկ մեր
դարու սկզբներից գրաբար գրականութեան տեղն սկսաւ բըռ-
նել աշխարհաբարը, որի երկու ճիւղերն (արեւմտեան եւ արե-
ւելեան) եւս ինքնուրոյն զարգացումն ունեցան։ Քաղաքակըր-
թութեան եւ գրականութեան մեծապէս նպաստեցին հայ դըպ-
րոցները, թէ Տաճկաստանում եւ թէ մանաւանդ Ռուսաստա-
նում։ Գրականութեան զարգացման հետ առաջ եկաւ եւ բար-
գաւաճեց նա եւ հայ մամուլը։

ՎՐԻՊԱԿՆԵՐ.

Երես.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
3.	17.	Նպաստից	Նպաստեց։
4.	24.	Գէրհարդ-դէ-Գրոստից	Գէրհարդ դէ Գրոտից։
»	32.	Նշանակութեանը	Նշանակութիւնը։
8.	8.	առողջութեանը	առողջութիւնը։
10.	31.	դպրոցականներ	դպրոցականների։
12.	Ծանօթ.	bas... springl	das... springt.
23.	6.	ււառութիւններով	ււարպառութիւններով։
25.	9.	հակառում է	հակառակում է։
29.	25.	աքսորից	աքսորեց։
40.	8.	ձնշման	ձնշմամբ։
41.	3.	հաղորդութեան	հաղորդութիւնն։
72.	22.	Թագաւորեց	Թագաւորից։
74.	4.	գնգերը	գնդերը։
75.	25.	միութեանը	միութիւնը։
85.	19.	Նշանաւորէ եւ առաք...	Նշանաւոր է Քրիստոսի եւ առաքեալների...
88.	16.	ամենից Կարլոս	Կարլոս Մեծի... ամենից գլուցաղնական։
89.	18.	էնտուտխատ	էնտուզիաստ։
91.	7.	Դեզեգմոնա	Դեզդէմոնա։
100.	1.	ալդ	այդ։
145.	1.	ուսները	ուսները։
155.	17.	Ռայլպոլը	Ուալպոլը։
160.	Ծանօթ. 1.	Ռոզ Ալյանդ	Գէորգիա։
175.	21.	սակաւ սկսա	սակայն սկսաւ։
195.	1.	քաղաքանութիւնը	քաղաքականութիւնը։
197.	15.	ու	որ։
207.	27.	այս նա	նա այս։
234.	25.	փախստականներին	փախստականները։
328.	15.	համաժողն	համաժողովն։
330.	26.	վճռականութիւն	վճռականութիւն։
342.	5.	սաթրինիի	սատրինջի։
372.	10.	բարեկիցութեանը	բարեկեցութիւնը։

119

2013